

ՆՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ
ՆԱԽԱԼՍԱՐԱՆ

ԱՐՄԱԿԱՆ ԿԻՐԱԿՈՍՅԱԿԱՆ

ԱՄԵՐԻԿՅԱԿԱՆ

ԴԻԿԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ

ԵՎ ՀԱՅՈՇ

ՃԵՂԱՍԴԱՆՈՒԹՅՈՒՆԸ

(1915-1917)

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԱՐՄԱՆ ԿԻՐԱԿՈՍՅԱՆ

**ԱՍԵՐԻԿՅԱՆ ԳԻՎԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ
ԵՎ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ
(1915-1917)**

**ԵՐԵՎԱՆ
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ
2019**

ՀՏԴ 94
ԳՄԴ 63.3
Կ 530

*Հրատարակության է երաշխավորվել
Երևանի պետական համալսարանի միջազ-
գային հարաբերությունների ֆակուլտետի
գիտական խորհրդի կողմից:*

Կիրակոսյան Արման

Կ 530 Ամերիկյան դիվանագիտությունը և Հայոց ցեղասպանությունը
(1915-1917)/Կիրակոսյան Ա.: -Եր., ԵՊՀ հրատ., 2019, 394 էջ:

Պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Արման Ջոնի Կիրակոսյանի աշխատության մեջ փորձ է կատարված վերլուծելու ԱՄՆ-ի և Օսմանյան կայսրության հարաբերություններն Առաջին համաշխարհային պատերազմի նախաշեմին և ընթացքում, ամերիկյան դիվանագետների և միսիոներների գործունեությունը Հայոց ցեղասպանության տարիներին, լուսաբանելու նրանց վկայություններն արևմտահայության տեղահանությունների և կոտորածների մասին, Միացյալ Նահանգների պետական շրջանակների, հասարակայնության ու մամուլի արձագանքը և վերապրած հայերի համար դրամահավաքի ու օգնության կազմակերպման աշխատանքը: Նախատեսված է պատմաբանների, քաղաքագետների, դիվանագետների, ուսանողների, ինչպես նաև հանրապետության և Սփյուռքի ընթերցող լայն շրջանակների համար:

Գիրքը տպագրվել է հետմահու:

ՀՏԴ 94
ԳՄԴ 63.3

ISBN 978-5-8084-2388-6

© ԵՊՀ հրատ., 2019
© Կիրակոսյան Ա., 2019

**ՆՎԻՐՎՈՒՄ Է
ՁՈՆ ԿԻՐԱԿՈՍՅԱՆԻ
ԾՆՆԴՅԱՆ 90-ԱՄՅԱ ՀՈՐԵԼՅԱՆԻՆ**

ԱՌԱՋԱԲԱՆ

Ընթերցողին ներկայացվող աշխատությունը մեր՝ 2014 թ. հրատարակված «ԱՄՆ-ի արտաքին քաղաքականությունը և արևմտահայությունը (19-րդ դար – 1914 թ.)»¹ գրքի տրամաբանական շարունակությունն է: Ամերիկայի Միացյալ Նահանգների քաղաքականությունն Օսմանյան կայսրության և Հայոց ցեղասպանության նկատմամբ Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին, ամերիկյան դիվանագիտության և միսիոներների գործունեությունը 1915-1917 թթ. լուրջ դերակատարություն են ունեցել արևմտահայության ճակատագրում: Այս խնդիրների ուսումնասիրությունն ունի քաղաքական և պատմագիտական կարևոր նշանակություն:

Գլխավորապես ամերիկյան դիվանագիտական մամուլագրության, արխիվային և հրատարակված փաստաթղթերի, ամերիկյան այլ աղբյուրների ու գրականության հիման վրա փորձ է կատարված վերլուծելու ԱՄՆ-ի և Օսմանյան կայսրության հարաբերություններն Առաջին համաշխարհային պատերազմի նախաշեմին և ընթացքում, ամերիկյան դիվանագետների և միսիոներների գործունեությունը Հայոց ցեղասպանության տարիներին, լուսաբանելու նրանց վկայություններն արևմտահայության տեղահանությունների և կոտորածների մասին, Միացյալ Նահանգների պետական շրջանակների, հասարակայնության ու մամուլի արձագանքը և վերապրած հայերի համար դրամահավաքի ու օգնության կազմակերպմանն առնչվող գործունեությունը: Ներկա աշխատությունը գալիս է ամբողջացնելու Միացյալ Նահանգների քաղաքականությունը, դիվանագիտական և միսիոներական գործունեությունը Հայոց ցեղասպանության տարիներին:

Հեղինակն աշխատել է ԱՄՆ-ի ազգային արխիվում, Կոնգրեսի գրադարանում, Վաշինգտոնի հայկական ազգային ինստիտուտում, Միչիգան-Դիարբորն համալսարանի հայկական հետազոտությունների կենտրոնում:

Գիրքը կազմված է առաջաբանից, յոթ գլուխներից, ենթագլուխներից, ամփոփումից, օգտագործված գրականության ցանկից և անվանացանկից:

¹ **Կիրակոսյան Արման**, *ԱՄՆ-ի արտաքին քաղաքականությունը և արևմտահայությունը (19-րդ դար - 1914 թ.)*, Երևան, ԵՊՀ հրատարակչություն, 2014, 399 էջ:

Առաջին՝ «Միացյալ Նահանգների հարաբերություններն Օսմանյան կայսրության հետ Առաջին համաշխարհային պատերազմի նախաշեմին և պատերազմի սկզբնական շրջանում» գլխում վերլուծվում են ԱՄՆ-ի արտաքին քաղաքականությունն Առաջին համաշխարհային պատերազմի նախաշեմին և չեզոքության սկզբունքի որդեգրումը, թուրք-ամերիկյան հարաբերությունների զարգացման ընթացքն ու դեսպանության գործունեությունը Օսմանյան կայսրության՝ պատերազմի մեջ ներքաշման, գերմանա-թուրքական մերձեցման և արտոնությունների ռեժիմի վերացման պայմաններում:

Երկրորդ՝ «Միացյալ Նահանգները, դեսպան Հենրի Մորգենթաուն, միսիոներները և Հայկական հարցը» գլխում ուսումնասիրվում են ԱՄՆ-ի պաշտոնական դիրքորոշումն Օսմանյան կայսրության ոչ թուրք ժողովուրդների, մասնավորապես՝ հայերի վատթարացող վիճակի, Հայկական հարցի և արևմտահայության տեղահանության ու կոտորածների վերաբերյալ, հակահայկական քաղաքականությունը դադարեցնելու խնդրում դեսպան Մորգենթաուի գործունեությունը, այդ ուղղությամբ երիտթուրք դեկավարների ու Գերմանիայի դեսպանի հետ նրա ունեցած հանդիպումներն ու զրույցները: Լուսաբանվում են Առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում ամերիկյան միսիոներների գործունեությանը և իրավիճակին առնչվող խնդիրները, մասնավորապես՝ Հայոց ցեղասպանության ականատես ու վկա դառնալու և վերապրած հայերին օգնություն ցուցաբերելու հանգամանքը:

Երրորդ գլխում բնութագրվում են Միացյալ Նահանգների արխիվներում պահպանվող Հայոց ցեղասպանությանը վերաբերող նյութերը, լուսաբանվում են ամերիկյան դիվանագիտական փաստաթղթերի նշանակությունն ու կարևորությունը Հայոց ցեղասպանության ուսումնասիրման և միջազգային ճանաչման գործում, Միացյալ Նահանգների յուրահատուկ դերակատարությունը՝ դիվանագետների, հյուպատոսների և միսիոներների միջոցով դիտարկելու և արձանագրելու երկրում կատարվող իրադարձությունները մինչև 1917 թ. ապրիլ ամիսը:

Աշխատության ամենածավալուն՝ չորրորդ գլխում ժամանակագրական կարգով ներկայացվում է ամերիկյան դիվանագիտության գործունեությունը տարբեր նահանգների քաղաքներում և գյուղերում

արևմտահայության տեղահանության ու կոտորածների ժամանակաշրջանում՝ դեսպան Հենրի Մորգենթաուի պաշտոնավարման ընթացքում: 1915 թ. փետրվարից մինչև 1916 թ. փետրվարն ընկած ժամանակահատվածում Կոստանդնուպոլսից Վաշինգտոն ներկայացվող նամակագրությունը տեղեկատվություն էր պարունակում թուրք պաշտոնյաների հետ դեսպանի և հյուպատոսների հանդիպումների, երկրի տարբեր շրջաններում տեղի ունեցող ողբերգական իրադարձությունների, ինչպես նաև Վանի հերոսամարտի վերաբերյալ հյուպատոսների, հյուպատոսական գործակալների, միսիոներների և ականատեսների վկայությունների մասին:

Հինգերորդ՝ «Ամերիկյան արձագանքն ու օգնության կազմակերպումը ցեղասպանությունից տուժած արևմտահայությանը» գլխում լուսաբանվում են դեսպան Մորգենթաուի, Արտաքին առաքելությունների ամերիկյան խորհրդի և միսիոներների նախաձեռնությամբ Միացյալ Նահանգներում նպաստամատույց կազմակերպության հիմնադրումը, ցեղասպանությունը վերապրած հայերին օգնություն ցուցաբերելու նպատակով դրամահավաքի կազմակերպումը, այդ կապակցությամբ Կոնգրեսում տեղի ունեցած քննարկումներն ու նախագահ Վուդրո Վիլսոնի ընդունած որոշումը: Վերլուծվում է Միացյալ Նահանգների հասարակայնության և մամուլի արձագանքը:

Աշխատության վեցերորդ գլխում կրկին ժամանակագրական կարգով լուսաբանվում են ամերիկյան դիվանագիտության գործունեությունը գործերի ժամանակավոր հավատարմատար Հոֆման Ֆիլիպի և դեսպան Աբրամ Էլկուսի պաշտոնավարման ընթացքում, Կոստանդնուպոլսում դեսպանության, հյուպատոսությունների և Պետքարտուղարության միջև նամակագրությունն արևմտահայության նկատմամբ շարունակվող տեղահանությունների և կոտորածների քաղաքականության վերաբերյալ, ցեղասպանությունը վերապրածներին ցուցաբերվող օգնության կազմակերպմանը վերաբերող հարցերը, թուրք պաշտոնյաների հետ տեղի ունեցած հանդիպումները:

Յոթերորդ՝ «Միացյալ Նահանգների կողմից Թուրքիային պատերազմ հայտարարելու հարցի շուրջ» գլխում վերլուծվում են 1917 թ. ապրիլին Միացյալ Նահանգների կողմից Գերմանիային պատերազմ հայտարարելուն, ամերիկյան հասարակայնության շրջանում Թուրքիայի հետ պատերազմի մեջ մտնելու կողմնակիցների և ընդդիմա-

դիրների պայքարին, այդ կապակցությամբ նախագահ Վուդրու Վիլսոնի, կառավարության և միախոնրական կազմակերպությունների դիրքորոշմանը, թուրք-ամերիկյան հարաբերությունների խզմանն ու ամերիկյան դիվանագետների՝ Միացյալ Նահանգներ վերադարձին առնչվող խնդիրները:

Գիրքն ունի համապատասխան ծանոթագրություններ, որոնց միջոցով ընթերցողն անհրաժեշտ տեղեկություններ կարող է քաղել օգտագործված աղբյուրների և գրականության, ինչպես նաև Միացյալ Նահանգների, Օսմանյան կայսրության պետական և քաղաքական գործիչների, դիվանագետների, հասարակական և կրոնական գործիչների կյանքի ու գործունեության մասին:

ԳԼՈՒԽ 1

Միացյալ Նահանգների հարաբերություններն Օսմանյան կայսրության հետ Առաջին համաշխարհային պատերազմի նախաշեմին և պատերազմի սկզբնական շրջանում

Մինչև Առաջին համաշխարհային պատերազմի սկիզբը Օսմանյան կայսրությունը կախվածության մեջ էր Եվրոպայի մեծ տերությունների քաղաքականությունից և որոշ առումով մեկուսացված էր Միացյալ Նահանգներից եվրոպական տերությունների շահերի ու հակասությունների, ինչպես նաև ԱՄՆ-ի անմիջական քաղաքական հետաքրքրությունների բացակայության հետևանքով: Սովորաբար Օսմանյան կայսրությունը հայտնվում էր ամերիկացիների ուշադրության կենտրոնում, երբ մամուլում լուրեր էին տարածվում հայերի, բուլղարների և այլ քրիստոնյաների ջարդերի մասին: Ավանդաբար Միացյալ Նահանգները խուսափում էր Արևելյան հարցում որևէ միջամտությունից: ԱՄՆ-ի շահերը սահմանափակվում էին միսիոներների գործունեությանը ցուցաբերվող աջակցությամբ և համեմատաբար ոչ մեծ ծավալի առևտրով: Այսպես՝ Թուրք-խտալական և Բալկանյան պատերազմների ընթացքում Միացյալ Նահանգները հրաժարվեց միջնորդական որևէ դերակատարություն ստանձնելու առաջարկներից: Դեռևս 1911 թ. դեկտեմբերին պետական քարտուղար Ֆիլանդեր Նոքսը² գրում էր նախագահ Ուիլյամ Տաֆտին³, որ Օսմանյան կայսրության ներքին գործերին միջամտել հնարավոր չէ. Միացյալ Նահանգները չի կարող ոչ միայն ճնշում գործադրել, այլև նույնիսկ որևէ խորհուրդ տալ օսմանյան իշխանություններին: Նրա համոզմամբ՝ Միացյալ Նահանգների քաղաքականությունն Օսմանյան կայսրության նկատմամբ կարող էր սահմանափակվել միմիայն ամերիկյան շահերի պաշտպանությամբ:⁴

² **Ֆիլանդեր Նոքս** (1853-1921)՝ ԱՄՆ-ի պետական գործիչ, գլխավոր դատախազ (1901-1904), պետքարտուղար (1909-1913), սենատոր՝ Փենսիլվանիա նահանգից (1904-1909, 1917-1921):

³ **Ուիլյամ Տաֆտ** (1857-1930)՝ ԱՄՆ-ի պետական գործիչ, Ֆիլիպինների նահանգապետ (1901-1903), ռազմական քարտուղար (1904-1908), 27-րդ նախագահ՝ հանրապետական կուսակցությունից (1909-1913), գերագույն դատարանի նախագահ (1921-1930):

⁴ Տե՛ս **Evans Laurence**, *United States Policy and the Partition of Turkey, 1914-1924*, Baltimore, The Johns Hopkins Press, 1965, էջ 21-22:

Եթե յուրաքանչյուր եվրոպական գաղութատիրական տերություն մրցում էր Թուրքիայում ազդեցության ոլորտների համար, ապա Միացյալ Նահանգները քաղաքական շահ չէր հետապնդում Հայկական հարցում՝ ճգնաժամերի ժամանակ արձագանքելով միայն մարդասիրական օգնությամբ: Միացյալ Նահանգները Մերձավոր Արևելքում որևէ տարածքային նկրտում չունեին: Թուրքիայում եվրոպական տնտեսական և ֆինանսական ներգրավվածության մակարդակի հետ համեմատած՝ ԱՄՆ-ի գործարար շահերը համեստ էին: Եթե ԱՄՆ-ի կառավարությունը ողջ տարածաշրջանը դիտարկում էր որպես մեկ ընդհանուր բաց տարածք ամերիկյան առևտրի համար, ապա եվրոպական տնտեսական քաղաքականությունն Օսմանյան կայսրությունում կենտրոնացած էր աշխարհագրական որոշակի շրջանների կամ տնտեսական հատուկ ոլորտների վրա:⁵

Օսմանյան կայսրության հետ ԱՄՆ-ի հարաբերությունների «հատուկ բնույթը» այն էր, որ վերջինս որևէ վտանգ չէր ներկայացնում թուրքական պետության ինքնիշխանության ու տարածքային ամբողջականության համար ինչպես աշխարհագրորեն հեռու գտնվելու, այնպես էլ եվրոպական «ուժի հավասարակշռության» մրցակցային քաղաքականության մեջ ներգրավված չլինելու պատճառով: Համաշխարհային պատերազմում ԱՄՆ-ի չեզոքությունը երաշխավորեց ամերիկյան դիվանագիտական ներկայությունն Օսմանյան կայսրությունում մինչև 1917 թ. ապրիլ ամիսը: Այս ներկայությունը նշանակում էր ԱՄՆ-ի պաշտոնյաների՝ օսմանյան իշխանությունների հետ շփումների հնարավորություն, ինչպես նաև դիվանագիտական գործառնությունների կատարում, մասնավորապես՝ ներքին զարգացումների մասին տեղեկատվության փոխանցում՝ օգտագործելով դիվանագիտական անձեռնմխելիության իրավունքը: Այսպիսով՝ Առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում Գերմանիան, Ավստրո-Հունգարիան և Միացյալ Նահանգները դարձան երկրի ներքին զարգացումների հիմնական վկաները:⁶ Թեև Միացյալ Նահանգների հնարավորությունները սահմանափակ էին Օսմանյան կայսրության ներքին

⁵ Տե՛ս **Adalian Rouben Paul**, *American Diplomatic Correspondence in the Age of Mass Murder: the Armenian Genocide in the US Archives* // In: *America and the Armenian Genocide of 1915* / Edited by Jay Winter, Cambridge, Cambridge University Press, 2003, էջ 146-147:

⁶ Տե՛ս նույն տեղը, էջ 147-148:

խնդիրների կարգավորման հարցերում, սակայն ամերիկյան կառավարությունը չէր կարող չհետաքրքրվել Մերձավոր և Միջին Արևելքում տեղի ունեցող զարգացումներով: Միացյալ Նահանգների անհանգստությունը գնալով ավելի էր աճում, սակայն տեղի ունեցող իրադարձությունները շարունակում էին հեռու մնալ ամերիկյան շահերից, իսկ ավանդական արտաքին քաղաքականությունն անկարող էր նշանակալից ազդեցություն ունենալու Մերձավոր Արևելքի զարգացումների և եվրոպական մեծ տերությունների քաղաքականության վրա:

ԱՄՆ-ի պետքարտուղարությունը մշտապես մանրամասն հաղորդագրություններ էր ստանում Մերձավոր Արևելքում տեղի ունեցող իրադարձությունների մասին տարածաշրջանում գործող դիվանագիտական և հյուպատոսական ներկայացուցչությունների միջոցով: Տեղեկություններ ներկայացնելով Օսմանյան կայսրությունում տիրող իրավիճակի մասին՝ Միացյալ Նահանգների արտակարգ և լիազոր դեսպան Հենրի Մորգենթաուն գրում էր, որ իրական իշխանությունը Կոստանդնուպոլսում գտնվում էր ոչ թե սուլթանի, որը բացարձակապես զուրկ էր իշխանության որևէ լծակից, այլ «Միություն և առաջադիմություն» կուսակցության պարագլուխների, մասնավորապես՝ Էնվեր⁷, Թալեթ⁸ և Ջեմալ⁹ եռյակի ձեռքում, թեև իրականում երիտթուր-

⁷ **Իսմաիլ Էնվեր փաշա** (1881-1922)՝ թուրք պետական և ռազմական գործիչ, «Միություն և առաջադիմություն» կուսակցության կենտկոմի անդամ, 1908 թ. երիտթուրքական հեղաշրջումն իրականացնողներից, 1913 թ.-ից՝ ռազմական նախարար, գլխավոր սպայակույտի պետ, երիտթուրքական «եռապետության» անդամ, հայերի ցեղասպանության գլխավոր կազմակերպիչներից: Փախել է Գերմանիա: 1919 թ. Կոստանդնուպոլսի ռազմական ատյանի կողմից հեռակա կարգով դատապարտվել է մահվան՝ իբրև պատերազմի հանցագործ և հայերի տեղահանության ու ջարդերի կազմակերպիչ: Միջին Ասիայում դեկավարել է բասմաչների գործողությունները: Սպանվել է խորհրդային զորքերի հետ բախման ժամանակ:

⁸ **Մեհմեդ Թալեթ փաշա** (1874-1921)՝ թուրք պետական գործիչ, «Միություն և առաջադիմություն» կուսակցության պարագլուխներից, երիտթուրքական «եռապետության» անդամ, 1908 թ. երիտթուրքական հեղաշրջումից հետո՝ Մեջլիսի պատգամավոր: Եղել է ներքին գործերի, փոստի և հեռագրատան նախարար, 1913 թ. հեղաշրջման գլխավոր կազմակերպիչներից, դարձյալ ներքին գործերի նախարար և կուսակցության կենտկոմի նախագահ, հայերի ցեղասպանության գլխավոր կազմակերպիչներից: Փախել է Գերմանիա: 1919 թ. Կոստանդնուպոլսի ռազմական ատյանի կողմից հեռակա կարգով դատապարտվել է մահվան՝ իբրև պատերազմի հանցագործ և հայերի տեղահանման ու ջարդերի կազմակերպիչ: Սպանվել է Բեռլինում Մողոմոն Թեհլերյանի կողմից:

⁹ **Ահմեդ Ջեմալ փաշա** (1872-1922)՝ թուրք պետական գործիչ, «Միություն և առաջա-

քերը ժողովրդի մեջ սակավաթիվ կողմնակիցներ ունեին¹⁰: «...Երիտթուրքերը կառավարություն չէին,- եզրակացնում էր դեսպանը,- նրանք իրականում մի անպատասխանատու խումբ էին, մի տեսակ գաղտնի ընկերություն, որը բանասարկության, ասիականության և սպանության միջոցով ձեռք էր բերել պետության հաստատությունների մեծ մասը»:¹¹

Դեռևս 1913 թ. փետրվարին՝ Բալկանյան պատերազմի ժամանակ, երբ երիտթուրքերը վերակեսցին պատերազմական գործողությունները բալկանյան դաշնակիցների դեմ, Մորգենթաուն հաղորդում է Պետքարտուղարությանը, որ Կոստանդնուպոլսում հնարավոր են քրիստոնյաների և արտասահմանցիների դեմ ուղղված բռնություններ: Նա նշում է, որ մինչև Միացյալ Նահանգները ռազմաճակատ ուղարկի Կոստանդնուպոլիս, Թուրքիայում գտնվող ամերիկյան քաղաքացիները պետք է ապավինեն նեղուցներում գտնվող արտասահմանյան մավերի պաշտպանությանը: Պետքարտուղարությունը պատասխանում է, որ միջամտությունն օսմանյան ներքին գործերին քիչ հավանական է, իսկ ամերիկյան ռազմաճակատի ներկայությունն ու համագործակցությունն այլ տերությունների հետ այս հարցում կարող են այլ կերպ ընկալվել օսմանյան իշխանությունների կողմից: Սակայն եթե դեսպանը համարի, որ ԱՄՆ-ի քաղաքացիներին վտանգ է սպառնում, կարող է դիմել Բարձր Դռանը՝ ամերիկյան ռազմաճակատի համար նեղուցներ մուտք գործելու թույլտվություն ստանալու խնդրանքով:¹²

Ինչ վերաբերում է Օսմանյան կայսրության նկատմամբ մեծ տերությունների վարած քաղաքականությանը, ապա դեռևս 1913 թ. մարտի 24-ին Մորգենթաուն Պետքարտուղարությանն էր ներկայացնում իր գնահատականները նրանց քաղաքական և տնտեսական նպա-

դիմություն» կուսակցության պարագլուխներից, երիտթուրքական «եռապետության» անդամ, ծովային մախարար, Սիրիայում գործող 4-րդ բանակի հրամանատար, հայերի ցեղասպանության գլխավոր կազմակերպիչներից: Ճնշել է հայերի՝ Ուրֆայի ինքնապաշտպանությունը, արաբների ազատագրական շարժումները: 1919 թ. Կոստանդնուպոլսի ռազմական ատյանի կողմից հեռակա կարգով դատապարտվել է մահվան՝ իբրև պատերազմի հանցագործ և հայերի տեղահանման ու ջարդերի կազմակերպիչ: Սպանվել է Թիֆլիսում հայ վրիժառուների կողմից:

¹⁰ Տե՛ս **Howard Harry N.**, *Turkey, the Straits and U.S. Policy*, Baltimore and London, The Johns Hopkins University Press, 1974, էջ 30:

¹¹ **Morgenthau Henry**, *Ambassador Morgenthau's Story*, Garden City, NY, Doubleday, Page, 1918, p. 11.

¹² Տե՛ս **Evans Laurence**, նշվ. աշխ., էջ 22-23:

տակների մասին: Նա գրում էր, որ բրիտանացիները ցանկանում էին շատ ավելի մեծ հնարավորություններ ստանալ կառավարությանը պարտքով դրամական միջոցներ տրամադրելու հարցում, ինչպես նաև նրանց հետաքրքրում էին թուրք-պարսկական սահմանի կարգավիճակն ու ազդեցության ընդլայնումը Հարավային Միջագետքում: Գերմանացիների նպատակները, ըստ դեսպանի, ուղղված էին շատ ավելի նպաստավոր պայմաններով երկաթգծի կոնցեսիաներ ձեռք բերելուն և նրանց շահագործմանը: Ռուսներն ավելի հետաքրքրված էին Օսմանյան կայսրության հետ իրենց ունեցած ավանդական տարածքային և սահմանային խնդիրներով, իսկ ֆրանսիացիները ցանկանում էին կոնցեսիաներ և Սիրիայում իրենց շահերի ճանաչում:¹³

Առաջին համաշխարհային պատերազմի բռնկումից անմիջապես հետո՝ 1914 թ. հուլիսի 28-ին, ԱՄՆ-ի նախագահ Վուդրո Վիլսոնի¹⁴ վարչակազմը չեզոքություն հայտարարեց հիմնականում 1916 թ. նախագահական ընտրություններից առաջ ներքին քաղաքական դժվարություններից խուսափելու, ինչպես նաև արտասահմանում ամերիկյան շահերը պաշտպանելու նպատակով: Ամերիկյան հասարակայնությունն իր մտահոգությունն էր հայտնում նոր պատերազմական իրավիճակի ստեղծման կապակցությամբ, որի հետևանքով 1914 թ. օգոստոսին Միացյալ Նահանգների կառավարությունն ութ միլիոն դոլար արժողությամբ ոսկիով բեռնված «Tennessee» և «North Carolina» ռազմանավերն ուղարկեց դեպի Եվրոպա՝ պատերազմի մեջ հայտնված հազարավոր ամերիկացիներին օգնություն ցուցաբերելու նպատակով: Վստահություն չունենալով օսմանյան բանկերի նկատմամբ՝ Պետքարտուղարությունը միաժամանակ դիմել էր «Standard Oil» ընկերությանը՝ այդ գումարն ԱՄՆ-ի քաղաքացիներին, ինչպես նաև ամերիկյան ընկերություններին ու առաքելություններին տրա-

¹³ Տե՛ս նույն տեղը, էջ 23-24:

¹⁴ **Վուդրո Վիլսոն** (1856-1924)՝ ԱՄՆ-ի պետական գործիչ, պատմաբան և փիլիսոփա, Պրինստոնի համալսարանի դասախոս, 28-րդ նախագահ՝ դեմոկրատական կուսակցությունից (1913-1921), «Տասնչորս կետեր» խաղաղության ծրագրի հեղինակ, Խաղաղության նոբելյան մրցանակի դափնեկիր (1919), անկախ հայկական պետության ստեղծման, Հայաստանի մանդատը ստանձնելու կողմնակից, որով Ազգերի լիգայի հանձնարարությամբ հանձն առավ 1920 թ. Սևրի հաշտության պայմանագրով ստեղծվող հայկական պետության սահմանները որոշողի դերը:

մադրելու նպատակով:¹⁵

Օսմանյան կայսրության նկատմամբ ամերիկյան քաղաքականությունն էական փոփոխությունների չենթարկվեց: Մինչև կենտրոնական տերություններին միանալը Թուրքիան երեք ամիս մնացել էր չեզոք: Թեև Միացյալ Նահանգները մտահոգ էր «քշնամության աշխարհագրությունը» չընդլայնելու հարցում, սակայն որևէ էական փորձ Թուրքիային տարհանողելու ուղղությամբ ամերիկյան դիվանագիտության կողմից չարվեց: 1914 թ. օգոստոսի 7-ին Մորգենթաուն հաղորդում է Պետքարտուղարությանը, որ թուրքական կառավարության անդամների կարծիքները պատերազմի մեջ ներքաշվելու հարցում տարբեր են: Օգոստոսի 2-ին Գերմանիայի հետ ստորագրված գաղտնի պայմանագրի մասին կառավարության անդամներից շատ քչերն էին տեղյակ: Այսպես, եթե պատերազմի նախարար Էնվերը Գերմանիայի հետ դաշինք կազմելու հիմնական կողմնակիցն էր, ապա ներքին գործերի նախարար Թալեաթն իբր ցանկանում էր որդեգրել չափավոր և չեզոք քաղաքականություն: Միաժամանակ երիտթուրքական ղեկավարների շրջանում հետզհետե գերիշխող էր դառնում պատերազմի մեջ մտնելու պարագայում Կովկասը գրավելու գրավիչ գաղափարը:¹⁶

Նախագահ Վիլսոնն ու պետքարտուղար Ուիլյամ Բրայանը¹⁷ հույս ունեին, որ Թուրքիան, «մարդկության շահերից ելնելով», չեզոք է մնալու պատերազմում և չի մասնակցելու Գերմանիայի կողմից մշակված պատերազմական ծրագրերին: Դեռևս Մորգենթաուն փորձում էր համոզել երիտթուրք ղեկավարներին, մասնավորապես՝ մեծ վեզիր Մաիդ Հալիմ փաշային¹⁸, պատերազմի նախարար Իսմաիլ Էնվերին, ներքին գործերի նախարար Մեհմեդ Թալեաթին, սակայն նրա ջան-

¹⁵ Տե՛ս **Payaslian Simon**, *United States Policy Toward the Armenian Question and the Armenian Genocide*, New York, Palgrave Macmillan, 2005, էջ 46-47:

¹⁶ Տե՛ս **Evans Laurence**, նշվ. աշխ., էջ 25-26:

¹⁷ **Ուիլյամ Բրայան** (1860-1925)՝ ԱՄՆ-ի քաղաքական և պետական գործիչ, դեմոկրատական կուսակցության ղեկավարներից, պետական քարտուղար (1913-1915):

¹⁸ **Սաիդ Հալիմ փաշա** (1865-1921)՝ թուրք պետական գործիչ, մեծ վեզիր (1913-1917), արտաքին գործերի նախարար (1913-1915), երիտթուրքերի պարագլուխներից, հայերի ցեղասպանության կազմակերպիչներից: Պատերազմից հետո ձերբակալվել է և մեղադրվել իբրև պատերազմի հանցագործ և հայերի տեղահանության ու կոտորածների կազմակերպման մասնակից: Աքսորվել է Մալթա և արձակվել 1921 թ.: Նույն թվականին սպանվել է Հռոմում հայ վրիժառու Արշավիր Շիրակյանի կողմից:

քերն արդյունք չունեցան: Երիտթուրքերի պարագլուխները, որոնց գայրացրել էր Հունաստանին նավերի վաճառքի փաստը, տեղեկացնում էին պաշտոնական Վաշինգտոնին, որ «այս տարածաշրջանում խաղաղություն ապահովելու միակ ճանապարհը Թուրքիայի կողմից իրավիճակի վերահսկումն էր»:¹⁹

1914 թ. օգոստոսի 11-ին Մորգենթաուն գրում է Բրայանին, որ «Goeben» և «Breslau» ռազմանավերի ժամանումը բավականին հավանական է դարձնում կայսրության մասնակցությունը պատերազմին:²⁰ Նա համոզված էր, որ գերմանական ռազմանավերի ժամանումը նշանակում էր դեռևս 1913 թ. դեկտեմբերին Կոստանդնուպոլիս ժամանած գերմանական զեներալ Օտտո Լիման ֆոն Սանդերսի²¹ ռազմական առաքելության ուժեղացում:²²

Օգոստոսի 25-ին Մորգենթաուն գրում է Բրայանին, որ Թուրքիայի չեզոքությունը պատերազմում համապատասխանում է ամերիկյան շահերին, և ինքը կարող է հորդորել պատերազմի և ներքին գործերի նախարարներին պահպանել երկրի չեզոքությունը: Դեսպանը հարցնում է Պետքարտուղարությանը, թե արդյոք հարկավո՞ր չէ փորձել համոզել պատերազմի և ներքին գործերի նախարարներին, որ Թուրքիան չեզոք մնա պատերազմում: Նա համոզված էր, որ Թուրքիայի՝ ֆինանսական, տնտեսական և ռազմական առումով պատերազմին պատրաստ չլինելու, Անտանտի կողմից Միջերկրականի ամբողջական վերահսկման և նրանց կողմից Չմյուռնիայի, Բեյրութի և այլ ծովափնյա քաղաքների հնարավոր գրավման փաստարկների օգտագործումը կարող էր համոզել երիտթուրք իշխանություններին չեզոք մնալ պատերազմում: Սակայն անմիջապես հաջորդ օրը պետքարտուղարը հանձնարարում է Մորգենթաունին նախաձեռնություն հանդես չբերել

¹⁹ Տե՛ս US Department of State. *Papers Relating to the Foreign Relations of the United States, 1914, The World War*, Washington D. C., Government Printing Office, 1922, էջ 9-10:

²⁰ Տե՛ս US Department of State. *Papers Relating to the Foreign Relations of the United States, 1914, Supplement, The World War*, Washington D. C., Government Printing Office, 1928, էջ 62; **Evans Laurence**, նշվ. աշխ., էջ 25-26:

²¹ **Օտտո Լիման ֆոն Սանդերս** (1855-1929)՝ Գերմանիայի ռազմական գործիչ, զեներալ, Առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում Օսմանյան կայսրությունում ռազմական խորհրդատու և զորամիավորումների հրամանատար Սինայում և Պաղեստինում:

²² Տե՛ս **Trumpener Ulrich** *Germany and the Ottoman Empire, 1914-1918*, Princeton N. J.: Princeton University Press, 1968, Chapters 1-3.

այս հարցում և պաշտոնապես կամ ոչ պաշտոնապես Թուրքիայի կառավարության անդամներին խորհուրդներ չտալ պատերազմում չեզոքություն որդեգրելու վերաբերյալ: Սակայն եթե թուրքական կառավարությունն իր նախաձեռնությանը խորհուրդ հարցնի դեսպանից կամ հետաքրքրվի Միացյալ Նահանգների դիրքորոշման մասին, վերջինս կարող է պատասխանել, որ, ելնելով ոչ թե քաղաքական մտտեցումներից, այլ միմիայն «մարդկության շահերից», ԱՄՆ-ի կառավարությունը «քավարարված կլինի, եթե Թուրքիան չեզոք մնա» և չընդլայնի պատերազմի աշխարհագրությունը:²³

1914 թ. օգոստոսի 8-ին՝ Գերմանիայի հետ գաղտնի դաշնագիր ստորագրելուց վեց օր անց, օսմանյան կառավարությունը տեղեկացրեց Միացյալ Նահանգների կառավարությանն իր չեզոք մնալու մտադրության մասին:²⁴

Օգոստոսի 27-ին Գերմանիայի դեսպան Հանս ֆոն Վանգենհայմն²⁵ ասում է Մորգենթաուին, որ գերմանական կառավարությունը նույնպես ցանկանում է, որ Օսմանյան կայսրությունը չեզոքություն պահպանի, սակայն մտադիր է «թույլ չտալ Ռուսաստանի կողմից Կոստանդնուպոլսի գրավումը»: Գերմանիայի համոզմամբ՝ Ռուսաստանի հաղթանակի դեպքում վերջինս կպահանջի Կոստանդնուպոլիսը: Այնուամենայնիվ, «Goeben» և «Breslau» ռազմանավերի հետ ժամանած ծովակալ Վիլիելմ Մուշոնը²⁶ համոզված էր, որ ներուցները շատ լավ ամրացված են և անառիկ են անգլո-ֆրանսիական նավատորմի հնարավոր հարձակման դեպքում, և մինչև հարձակում տեղի չունենա, դրանք բաց են մնալու առևտրի համար: Մորգենթաուն այս ամենի մասին տեղյակ էր պահել Բրիտանիայի դեսպանին, որի հետևանքով վերջինս խնդրել էր ԱՄՆ-ի դեսպանին հայտնել գեր-

²³ Տե՛ս US Department of State. *Papers Relating to the Foreign Relations of the United States, 1914, Supplement, The World War*, էլ 75, 77; **Trask Roger R.**, *The United States Response to Turkish Nationalism and Reform, 1914-1939*, Minneapolis, The University of Minnesota Press, 1971, էջ 18:

²⁴ Տե՛ս US Department of State. *Papers relating to the Foreign Relations of the United States, 1914, Supplement, The World War*, էջ 52:

²⁵ **Հանս ֆոն Վանգենհայմ** (1859-1915)՝ գերմանացի դիվանագետ, 1912-1915 թթ.՝ դեսպան Օսմանյան կայսրությունում:

²⁶ **Վիլիելմ Մուշոն** (1864-1946)՝ Գերմանիայի ռազմական գործիչ, ծովակալ, Առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում Միջերկրական նավատորմի հրամանատար, 1917 թ.-ից՝ թուրքական նավատորմի ծովակալ:

մանացիներին, որ Բրիտանիան մտադրություն չունի հարձակվելու Չմյուռնիայի վրա, սակայն ուժ կգործադրի Գարդանելի նկատմամբ, եթե այն փակվի առևտրի համար: Երբ Մորգենթաուն տեղեկություն ստացավ այն մասին, որ օսմանյան նավատորմում ծառայելու համար Գերմանիայից Թուրքիա էին ժամանել 50 ռազմածովային սպաներ և 700 նավաստիներ, թույլություն հայցեց թուրքական իշխանություններից՝ «North Carolina» ռազմանավի՝ Կոստանդնուպոլիս մուտք գործելու համար:²⁷

Գարդանելը փակվեց սեպտեմբերի 27-ին, և անմիջապես հաջորդ օրը բրիտանական նավատորմը ստիպեց թուրքական ականակիր նավերին վերադառնալ դեպի նեղուցներ: Գրա հետևանքով նեղուցների գերմանացի պարետ Վեբեր փաշան հրաման արձակեց լրացուցիչ ականներ տեղադրելու Գարդանելի մուտքի շրջանում՝ ամբողջապես փակելով նեղուցները: Սեպտեմբերի 28-ին մեծ վեզիր Հալիմ փաշան պաշտոնապես տեղեկացրեց Մորգենթաուին նեղուցների փակման մասին՝ միաժամանակ նշելով, որ Օսմանյան կայսրությունը չի ցանկանում ընդգրկված լինել պատերազմում: Դեսպանը պատասխանեց մեծ վեզիրին, որ Միացյալ Նահանգները չի կարող ճանաչել օսմանյան կառավարության իրավունքը խաղաղ ժամանակաշրջանում նեղուցները փակելու հարցում: Թեև մեծ վեզիրը հույս էր հայտնել, որ միջադեպը շուտով կարգավորվելու է, և Գարդանելը կրկին բացվելու է նավարկության համար, սակայն Մորգենթաուն իրավիճակը համարում էր «ծայրաստիճան ճգնաժամային»:²⁸

Չնայած Միացյալ Նահանգների, ինչպես նաև բրիտանական, ֆրանսիական և ռուսական կառավարությունների ընդդիմությանը՝ Օսմանյան կայսրությանը պատերազմի մեջ ներքաշելու և գերմանական ռազմական ու ծովային առաքելություններին Գերմանիա հետ կանչելու կապակցությամբ, երիտթուրքական կառավարությունը որոշում կայացրեց վերացնելու օտարերկրյա պետությունների հետ կապիտուլյացիոն (արտոնությունների) ռեժիմը: Դեռևս 1914 թ. սեպտեմբերին երիտթուրքական կառավարությունը հասարակական շար-

²⁷ Տե՛ս նույն տեղը, էջ 79-80; **Howard Harry N.**, նշվ. աշխ., էջ 28-29:

²⁸ Տե՛ս US Department of State. *Papers Relating to the Foreign Relations of the United States, 1914, Supplement, The World War*, էջ 113-114; **Howard Harry N.**, նշվ. աշխ., էջ 28-29:

ժում էր սկսել արտասահմանյան երկրների հետ ստորագրված համապատասխան պայմանագրերի դեմ: Մեպտեմբերի 9-ի երեկոյան Կոստանդնուպոլսում նույնիսկ ցույցեր տեղի ունեցան օտարերկրյա պետությունների արտոնությունների դեմ, և անմիջապես հաջորդ օրը կառավարությունը պաշտոնապես տեղեկացրեց բոլոր դեսպանություններին հոկտեմբերի 1-ից սկսած արտոնությունների վերացման մասին: Արտոնությունների ռեժիմից օգտվող տերություններին ուղղված հայտագրում Հալիմ փաշան նշում էր, որ կապիտուլյացիոն (արտոնությունների) համակարգն այլևս չի համապատասխանում 20-րդ դարի իրավական կանոններին ու ազգային ինքնիշխանության սկզբունքին և դարձել է Օսմանյան կայսրության առաջադիմության ու զարգացման խոչընդոտ: Այնուհետև փաստաթղթում ասվում է, որ, հոկտեմբերի 1-ից սկսած, Թուրքիայի հարաբերությունները մյուս պետությունների հետ հիմնված են լինելու միջազգային օրենքի ընդհանուր սկզբունքների վրա:²⁹

Վիլսոնի վարչակազմն անմիջապես բողոքարկեց արտոնությունների վերացումը: Պետքարտուղար Բրայանը հրահանգեց Մորգենթաուին տեղեկացնել օսմանյան կառավարությանը, որ Միացյալ Նահանգները հրաժարվում է արտոնությունները միակողմանիորեն վերացնելու Բարձր Դռան որոշումը ճանաչելուց, ինչը տրված էր արտասահմանյան պետություններին՝ ստորագրված պայմանագրերի համաձայն:³⁰

Թեև այդ որոշումը կարող էր բացասական ազդեցություն ունենալ թուրք-ամերիկյան երկկողմ հարաբերությունների վրա, սակայն երկու կառավարությունները շարունակեցին հայտարարել բարեկամական հարաբերությունները պահպանելու ցանկության մասին: Հալիմը, Էնվերը և Թալեաթը վստահեցնում էին ԱՄՆ-ի դեսպանին, որ թուրքական իշխանությունները որևէ մտադրություն չունեն վատ վերաբերմունք հանդես բերելու ամերիկյան դպրոցների և միսիոներների հանդեպ:³¹ Մեպտեմբերի 21-ին Օսմանյան կայսրության առևտրի նա-

²⁹ Տե՛ս **Trask Roger R.**, նշվ. աշխ., էջ 19-20:

³⁰ Տե՛ս US Department of State. *Papers Relating to the Foreign Relations of the United States, 1914, The World War*, էջ 1092-1093:

³¹ Տե՛ս Library of Congress, Division of Manuscripts, Papers of Henry Morgenthau, Sr., Diary, 1914, August 25:

խարար Սուլեյման Բուստանին³² խնդրում էր Մորգենթաուիին պարզել, թե արդյոք ԱՄՆ-ի կառավարությունը կարո՞ղ է ներկայացնել Թուրքիայի շահերը Մեքսիկայում և Հարավային Ամերիկայի հանրապետություններում: Պետքարտուղարությունն անմիջապես պատասխանեց, որ պատրաստ է ներկայացնելու Թուրքիայի շահերն այդ երկրներում: Բուստանին նաև ցանկություն էր հայտնել այցելելու ԱՄՆ՝ վարկի պայմաններ քննարկելու և Չեսթերի նախագիծը վերսկսելու նպատակով:³³

Ըստ պատմաբան Սիմոն Պայասլյանի՝ արտոնությունների վերացումը թուրքական ազգայնականության ծայրահեղ արտահայտություն էր և նպատակ ուներ զրկելու օտարերկրյա պետություններին իրավական լծակներից Օսմանյան կայսրության ներքին գործերին միջամտելու պատրվակով, մասնավորապես՝ նախապատրաստվող տեղահանությունների և կոտորածների պարագայում: Համաձայն Պայասլյանի՝ երիտթուրքերը պատրաստվում էին նման քայլերով վերջնականապես լուծելու Հայկական հարցը:³⁴

Միացյալ Նահանգները չկարողացավ փոխել թուրքական կառավարության դիրքորոշումը մինչև 1923 թ.: Ավելին՝ 1915 թ. սեպտեմբերին վերջինս հայտագրով տեղեկացրեց ԱՄՆ-ի դեսպանությանը, որ թուրքական կողմն այսուհետ անտեսելու է այս հարցի վերաբերյալ ամերիկյան կողմի դիմումները: Բանն այն էր, որ պետքարտուղար Ռոբերտ Լանսինգը³⁵ հրահանգել էր Մորգենթաուիին կրկին զգուշացնել թուրքական կողմին, որ 1830 թ. երկկողմ պայմանագրի պայմանները չեն կարող վերացվել, քանի դեռ կողմերը համաձայնության չեն եկել: Լանսինգը հրահանգել էր նախազգուշացնել թուրքական կողմին, որ ԱՄՆ-ի քաղաքացիների արտերկրյա (էքստերիտորիալ) իրավունքների յուրաքանչյուր ոտնահարման փաստի պատասխանատվությունն ընկնելու է թուրքական կողմի վրա: Թեև ամերիկյան դպրոցների

³² **Սուլեյման Բուստանի** (1856-1925)՝ Օսմանյան կայսրության պետական գործիչ, ազգությամբ արաբ, մարոնիտ, բանաստեղծ, լրագրող, 1913-1914 թթ.՝ առևտրի նախարար: Պատերազմի սկսվելուց հետո ապրում էր Շվեյցարիայում և ԱՄՆ-ում:

³³ Տե՛ս նույն տեղը, 1914, September 9, 20, 21, 23, October 22:

³⁴ Տե՛ս **Payaslian Simon**, նշվ. աշխ., էջ 49-50:

³⁵ **Ռոբերտ Լանսինգ** (1864-1928)՝ ԱՄՆ-ի պետական գործիչ, իրավաբան, 1915-1920 թթ.՝ պետքարտուղար: Ղեկավարել է ամերիկյան պատվիրակությունը Փարիզի Խաղաղության կոնֆերանսում:

վերահսկման և հարկման որոշ դեպքեր էին արձանագրվել, սակայն դիվանագիտական լուրջ միջադեպեր տեղի չէին ունեցել: 1916 թ. ապրիլին թուրքական նահանգային իշխանությունները հրահանգ էին ստացել հնարավորինս խուսափելու ամերիկացիների հետ խնդիրներ ստեղծելուց և ամեն դեպքի առնչությամբ դիմելու մայրաքաղաք:³⁶

Միաժամանակ ԱՄՆ-ի կառավարությունը մտահոգված էր Օսմանյան կայսրության հետ առևտրական հաշվեկշռի հնարավոր անկումով: Թուրքիան կարևոր առևտրական գործընկեր էր համարվում ԱՄՆ-ում, և խաղաղության հաստատումից հետո այդ երկրի հետ առևտրական հարաբերությունների վերականգնումն ուներ կարևոր նշանակություն: ԱՄՆ-ի առևտրի քարտուղարության տվյալներով՝ 1914 թ. ԱՄՆ-ն ներմուծել էր Թուրքիայից 295.017 ԱՄՆ դոլարի արժողությամբ սուրճ (1915 թ.՝ 66.337), 519.132 ԱՄՆ դոլարի արմավ (1915 թ.՝ 278.209), 119.046 ԱՄՆ դոլարի չամիչ (1915 թ.՝ 51.969), 44.012 ԱՄՆ դոլարի նուշ (1915 թ.՝ 14.080), 290.050 ԱՄՆ դոլարի ընկույզ (1915 թ.՝ 2.875), 4.800.284 ԱՄՆ դոլարի թութունի տերև (1915 թ.՝ 1.847.617), 1.404.987 ԱՄՆ դոլարի գորգ (612.360) և այլն: 1914 թ. ԱՄՆ-ն դեպի Թուրքիա էր արտահանել 67.530 ԱՄՆ դոլարի օսլա (1915 թ.՝ 5.517), 321.773 ԱՄՆ դոլարի միս և կաթնամթերք (1915 թ.՝ 45.465), 384.836 ԱՄՆ դոլարի հազուստ (1915 թ.՝ 39.889), 110.721 ԱՄՆ դոլարի կոշկեղեն (1915 թ.՝ 2.221), 619.506 ԱՄՆ դոլարի լուսավորության յուղ (1915 թ.՝ 219.773), 32.649 ԱՄՆ դոլարի պոմպեր (1915 թ.՝ 4.266) և այլն:³⁷ Եթե 1913 թ. երկու երկրների միջև առևտրի հաշվեկշիռը կազմել էր 25 մլն ԱՄՆ դոլար, ապա 1915 թ. այն նվազեց մինչև 13 մլն:³⁸

Մինչև 1914 թ. հոկտեմբերի 29-ը Թալեաթը գերմանական ռազմա-նավերի ժամանման մասին լուրերի էր սպասում: Ժամանման մասին նորությունը ստանալուն պես Թալեաթն անմիջապես տեղեկացրեց Մորգենթաուին, «որ իրենք որոշում են կայացրել, ինչ էլ պատահի, կանգնելու գերմանացիների կողքին»: Գերմանիան ու Թուրքիան և

³⁶ Տե՛ս US Department of State. *Papers Relating to the Foreign Relations of the United States, 1915*, Washington D. C., Government Printing House, 1924, էջ 1304-1306; **Trask Roger R.**, նշվ. աշխ., էջ 19-20:

³⁷ Տե՛ս **Payaslian Simon**, նշվ. աշխ., էջ 101-102:

³⁸ Տե՛ս US Department of Commerce, Bureau of Foreign and Domestic Commerce. *Foreign Commerce, Navigation of the United States*, Washington D. C., Government Printing Office, 1917, էջ xii-xiii, Table 3, էջ 293 and Table 5, էջ 766:

Թալեաթն ու Վանգենհայմն այդուհետ միմյանց կապվեցին շատ ավելի ամուր կապերով: Մորգենթաուի համար հոկտեմբերի 29-ին գերմանացիները հաջողեցին, իսկ Վանգենհայմն իրական հաղթանակ տարավ: Թալեաթը, Էնվերն ու Վանգենհայմը դարձան Կոստանդնուպոլսի ամենաազդեցիկ մարդիկ:³⁹ Ըստ Մորգենթաուի, ի համեմատությամբ Գերմանիայի դեսպանի, Բրիտանիայի դեսպան Լուիս Մալլետը⁴⁰ դրամ չէր առաջարկում թուրք պաշտոնյաներին, ինչպես դա անում էր Գերմանիայի դեսպան Վանգենհայմը, չէր կաշառում թուրքական մամուլին, չէր պաշտպանում միջազգային օրենքը երիտթուրքական իշխանությունների մշտական խախտումներից, չէր եղբայրանում քաղաքական գործիչների հետ:⁴¹

Դեսպան Մորգենթաուի համար Թուրքիայում գերմանական բանակի ներկայությունը ոչ այլ ինչ էր, քան վկայություն այն մասին, որ Գերմանիան ցանկանում էր ամբողջությամբ «անեքսիայի» ենթարկել թուրքական բանակին: Դեսպանը շարունակելով գրում էր, որ դա պատահական չէր, քանի որ Էնվեր փաշան 1909 թ. ռազմական կցորդ աշխատելու ընթացքում համապատասխան ուսում էր ստացել Բեռլինում: Մորգենթաուի համոզմամբ՝ նա երկրպագում էր գերմանական մշակույթն ու «անիվի ստամ էր դարձել պրուսական համակարգում»:⁴²

Ըստ Մորգենթաուի՝ գերմանացի սպաները «անսահման հպարտ էին», որ կարողացել էին դեռևս 1914 թ. հունվարին «դժբախտ թուրք զինվորներին» դարձնել «կոկիկ հագնվող, եռանդուն քայլող, հրաշալի մանևրող զորք»:⁴³ Մորգենթաուն հիշում էր, որ 1914 թ. ամռան ամիսներին գերմանացի սպաները «ամեն օր երթևեկում էին փողոցներով մեծ ավտոմեքենաներով» և գիշերներն անցկացնում ռեստորաններում ու գվարճանքի վայրերում՝ օգտագործելով մեծ քանակությամբ շամպայն: Այսպես, օրինակ, գեներալ Կոլմար ֆոն դեր Գոլցը⁴⁴, որին

³⁹ Տե՛ս **Kiezer Hans-Lukas**, *Talaat Pasha. Father of Modern Turkey, Architect of Genocide*, Princeton, Oxford, Princeton University Press, 2018, էջ 213-214:

⁴⁰ **Լուիս Մալլետ** (1864-1936)՝ բրիտանացի դիվանագետ, 1913-1914 թթ.՝ դեսպան Օսմանյան կայսրությունում:

⁴¹ Տե՛ս **Morgenthau Henry**, *Ambassador Morgenthau's Story*, էջ 129:

⁴² Տե՛ս նույն տեղը, էջ 41:

⁴³ Տե՛ս նույն տեղը, էջ 47:

⁴⁴ **Կոլմար ֆոն դեր Գոլց, Գոլց փաշա** (1843-1916)՝ գերմանական ռազմական գոր-

շնորհիվ էր փաշայի տիտղոս, մայրաքաղաքի փողոցներով երթևեկում էր «աչքի զարնող» ավտոմեքենայով, որի երկու կողմերին գերմանական արծիվներ էին նկարված:⁴⁵

Օսմանյան կայսրությունը վերջնականապես մտավ պատերազմի մեջ, երբ հոկտեմբերի 28-29-ին գերմանա-օսմանյան նավատորմը ռմբակոծեց ռուսական սևծովյան ափերը Օդեսայի շրջակայքում:⁴⁶ Անտանտի տերությունները պատերազմ հայտարարեցին Թուրքիային ռմբակոծությունից անմիջապես հետո: Պատերազմի սկիզբը նոր մարտահրավերներ ստեղծեց դեսպան Մորգենթաուի և դեսպանության համար: Գերմանիայի քաղաքականության նպատակների համաձայն՝ Թուրքիան պետք է դառնար վասալ պետություն: Ինչպես դեսպանության աշխատակիցներն էին այդ օրերին նշում, Թուրքիայում գործում էր «Գերմանիան ալլահից բարձր է» («Deutschland über Allah») կարգախոսը:⁴⁷

Նկատի առնելով իր ռազմավարական դիրքը՝ Թուրքիան անմիջապես դարձավ Գերմանիայի արժեքավոր դաշնակիցը: Այդ քաղաքականության իրականացման գործում Մորգենթաուն մեծ նշանակություն էր տալիս Կոստանդնուպոլսում Գերմանիայի դեսպան Վանգենհայմի գործունեությանը: Թուրքիայի բանակն ու հրամանատարությունը վերակառուցվեցին գերմանականի օրինակով:⁴⁸ Մորգենթաուն այն համոզմանն էր, որ կրոնական ատելության օգտագործման գաղափարը նույնպես պատկանում էր Գերմանիային: Ըստ դեսպանի՝ այն սկսվեց կրքերի բորբոքումից, որն այնուհետև ուղղվեց հայերի և կայսրության մյուս ենթակա ազգերի դեմ:⁴⁹

Ժիչ, գեներալ-ֆելդմարշալ: Եղել է Օսմանյան կայսրությունում գերմանական ռազմական առաքելության ղեկավարը: Նրա գլխավորությամբ իրականացվել էր թուրքական բանակի վերակազմումը: 1909 թ.-ից՝ բարձրագույն ռազմական խորհրդի փոխնախագահն էր, 1914 թ.-ից՝ սուլթանի գեներալ համհարը: 1915 թ.-ից գլխավորել էր թուրքական 1-ին և 6-րդ բանակները, որոնք գործում էին Սիրիայում և Սիջազետքում:

⁴⁵ Տե՛ս նույն տեղը, էջ 63-64:

⁴⁶ Տե՛ս US Department of State. *Papers Relating to the Foreign Relations of the United States, 1914, Supplement, The World War*, էջ 120:

⁴⁷ Տե՛ս **Einstein Lewis**, *Inside Constantinople: A Diplomat's Diary during the Dardanelles Expedition*, London, Gomidas, 2014, էջ 2:

⁴⁸ Տե՛ս **Trumpener Ulrich**, նշվ. աշխ., էջ 13:

⁴⁹ Տե՛ս **Morgenthau Henry**, *Ambassador Morgenthau's Story*, էջ 161-170, 195; **Peterson Merrill D.**, “*Starving Armenians*”. *America and the Armenian Genocide, 1915-1930 and*

Մեկ տարի անց՝ 1915 թ. նոյեմբերի 18-ին, ԱՄՆ-ի պետքարտուղար Լանսինգին ուղղված գաղտնի մամակում Մորգենթաուն գրում էր, որ երբ 1914 թ. օգոստոսին սկսվեց առաջին համաշխարհային պատերազմը, Թուրքիան գտնվում էր «բացարձակապես անպատրաստ վիճակում»: Գանձարանը դատարկ էր, պաշտոնյաների աշխատավարձերը չէին վճարվում երեքից չորս ամիս: Չնայած այդ ամենին՝ իշխանություններն անմիջապես գորահավաք կազմակերպեցին՝ ապահովելով բանակն անհրաժեշտ միջոցներով: Ըստ դեսպանի՝ բրիտանական, ֆրանսիական և ռուսական դիվանագիտական ներկայացուցչություններն օգտագործեցին բոլոր հնարավոր միջոցներն ու խոստումները, որպեսզի Թուրքիան չեզոք մնա պատերազմի ընթացքում: Միաժամանակ Գերմանիայի դեսպանը, օգտագործելով այն հանգամանքը, որ չեզոքության կոչը նշանակում էր, որ Անտանտի պետությունները վախենում էին Թուրքիայի և Գերմանիայի դաշինքից, կարողացավ համոզել թուրքական իշխանություններին մասնակցել պատերազմին որպես Գերմանիայի դաշնակից:

Ըստ դեսպանի՝ մինչև 1914 թ. հոկտեմբերի վերջը Թուրքիայի կառավարության մեծամասնությունը դեմ էր պատերազմին. միայն Թալեթն ու Էնվերն էին Գերմանիայի հետ դաշինք կազմելու մոլի կողմնակիցներ: Մորգենթաուն նշում էր, որ կասկած չկար, որ նրանք շատ լավ գիտակցում էին, թե ինչ է տեղի ունենալու Օդեսան ռմբակոծելու հետևանքով: Գրեթե բոլոր նշանավոր թուրքերը գիտակցում էին, որ Թուրքիան պատրաստ չէր նոր պատերազմի, քանի որ դեռ չէր ապաքինվել Բալկանյան պատերազմներից: Միաժամանակ նրանք լավ գիտակցում էին, որ, չմտնելով պատերազմի մեջ, երկիրը կարող էր բաժանվել տարբեր պետությունների միջև, մանավանդ որ Անգլիան, Ֆրանսիան, Ռուսաստանն ու Իտալիան արդեն իսկ որոշել էին, թե որ տերությանը պետք է հասնեն կայսրության այս կամ այն հատվածները: Իսկ Գերմանիան, հետաքրքրություն հանդես չբերելով Թուրքիայի մասնատման ծրագրերի նկատմամբ, ոչ միայն «Goeben» և «Breslau» ռազմանավերը տրամադրեց Թուրքիային, այլև խոստացավ հետ վերադարձնել Եգիպտոսն ու պատերազմի ծախսերը հոգալու համար վարկ տրամադրել իր հետ պատերազմի մեջ մտնելու դեպքում:⁵⁰

After, Charlottesville and London, University of Virginia Press, 2004, էջ 4:

⁵⁰ St և NA Microfilm Publications, Microcopy No. 353, Records of the Department of State

1914 թ. նոյեմբերի 15-ին Մորզենթաուն քննարկեց պատերազմին վերաբերող խնդիրներն Էնվերի հետ: Հանդիպման ժամանակ դեսպանը զգուշացնում էր, որ շեյխ-ուլ-իսլամի կողմից հայտարարված ջիհադը կարող է մոլեռանդության մեծ ալիք բարձրացնել երկրում, ինչը կարող է դուրս գալ հսկողությունից և վերածվել ոչ մահմեդական բնակչության դեմ ուղղված հարձակումների: Նա նախազգուշացնում էր, որ եթե տեղի ունենան կոտորածներ, Թուրքիան հնարավոր է կորցնի Միացյալ Նահանգների բարեկամական վերաբերմունքը: Դա մաս կարող էր հանգեցնել նրան, որ Միացյալ Նահանգներն անցնեի Անտանտի կողմը:⁵¹

Նոյեմբերի 24-ին Պետքարտուղարությունը կրկին նախազգուշացնում է Մորզենթաուն չխոսել երիտթուրք պարագլուխների հետ ԱՄՆ-ի կողմից պատերազմում որևէ կողմի հարելու և մշտապես շեշտել չեզոքություն պահպանելու մասին:⁵²

Էնվերի հետ հանդիպման ժամանակ քննարկվել են մաս Թուրքիայում աճող բռնություններն արտասահմանցիների և քրիստոնյաների հանդեպ: Մորզենթաուն տեղեկացնում էր Էնվերին, որ զգուշացրել է Գերմանիայի դեսպանին, որ հնարավոր ջարդերի պարագայում Գերմանիան կրելու է պատասխանատվության իր բաժինը:⁵³

Նոյեմբերի 28-ին Մորզենթաուն գրում է Պետքարտուղարությանը, որ թուրքական իշխանությունները խուզարկություններ են իրականացրել բրիտանական և ֆրանսիական դեսպանություններում, առգրավել դաշնակիցների առաքելություններին պատկանող դպրոցները, արտաքսել դաշնակիցների քաղաքացիներ հանդիսացող ուսուցիչներին՝ «թուրքացման» ենթարկելով ուսման գործընթացը: Նա ավելացնում է, որ կառավարությունը սատարում և ոգեշնչում է ամբոխի գործողությունները:⁵⁴

Ըստ ամերիկյան դեսպանության տեղեկատվության՝ Օսմանյան կառավարությունը խմբերի էր բաժանված պատերազմի մեջ մտնելու հարցում: Ընդդիմադիրների կազմում էին ֆինանսների նախարար

Relating to Internal Affairs of Turkey, 1910-1929, Roll 6, NA/RG 59/867.00/798.2, էջ 1-16:

⁵¹ Տե՛ս **Evans Laurence**, նշվ. աշխ., էջ 26-27:

⁵² Տե՛ս նույն տեղը, էջ 26-27:

⁵³ Տե՛ս նույն տեղը, էջ 26-27:

⁵⁴ Տե՛ս նույն տեղը, էջ 26-27:

Մեհմեդ Ջավիդ բեյը⁵⁵, հասարակական աշխատանքների նախարար Մահմուդ փաշան⁵⁶, առևտրի նախարար Բուստանին և փոստի ու հեռագրատների նախարար (1913) Օսկան Մարդիկյան էֆենդին: Ծայրահեղ ազգայնականները, պատրաստվելով համախմբելու իշխանությունը ջիհադ հայտարարելուց առաջ, պնդեցին ընդդիմության հրաժարական տալը: Մեծ վեգիրին նույնպես առաջարկվել էր հրաժարական տալ, սակայն նա շարունակեց պաշտոնավարել: Թուրքիայի՝ պատերազմի մեջ մտնելուց անմիջապես հետո՝ նոյեմբերի 14-ին, կառավարությունը ջիհադի կոչ ուղղեց ողջ մահմեդական բնակչությանը: Մահմեդականները պետք է թողնեին իրենց առևտուրն ու գործերը և զենքն ուղղեին թշնամիների դեմ, քանի որ դա էր դրախտ հասնելու միակ ճանապարհը: Գնահատելով կառավարության՝ անհավատների դեմ ուղղված ջիհադի կոչը՝ Մորգենթաուն գրում էր, որ այն կարող էր օգտագործվել ոչ միայն թշնամի պետությունների դեմ, այլև կայսրության հեռավոր շրջաններում, որտեղ մոլեռանդությունը շատ ավելի ուժեղ էր և իրապես կարող էր ստեղծել «անկարգություններ»:⁵⁷

Թուրք-գերմանական դաշինքը փորձում էր Մերձավոր Արևելքում հակադրել դաշնակից տերություններին և կառուցել իր ռազմավարությունը մահմեդական համերաշխության վրա:⁵⁸ Իր հուշերում Մորգենթաուն նշում է, որ, ի լրումն ջիհադի հայտարարության, թուրքական կառավարությունը տարածել էր գաղտնի պամֆլետ մահմեդականների շրջանում, որը համապատասխան հրահանգներ էր պարունակում հավատացյալների համար: Այսպես, օրինակ, առաջարկվում էր կիրառել երեք տեսակի միջոցառումներ՝ անհատական գործողություններ, սպանությունների իրագործում կազմակերպված խմբերի կող-

⁵⁵ **Մեհմեդ Ջավիդ բեյ** (1875-1929)՝ Օսմանյան կայսրության քաղաքական և պետական գործիչ, տնտեսագետ, ծագումով հրեա, «Միություն և առաջադիմություն» կուսակցության անդամ, 1909-1914, 1917-1918 թթ.՝ ֆինանսների նախարար: Մեղադրվել է Մուստաֆա Քեմալ Աթաթուրքի սպանության փորձի կազմակերպման մեջ, կախաղան է հանվել 1926 թ.:

⁵⁶ **Չուրուկսուլու Մահմուդ փաշա** (1864-1931)՝ Օսմանյան կայսրության պետական և ռազմական գործիչ, ծագումով չերքեզ, «Միություն և առաջադիմություն» կուսակցության անդամ, ղեկավարել է հասարակական աշխատանքների և ռազմածովային նախարարությունները:

⁵⁷ Տե՛ս US National Archives (այնուհետև՝ NA), Record Group (այնուհետև՝ RG) 59/867 00/766.

⁵⁸ Տե՛ս **Payaslian Simon**, նշվ. աշխ., էջ 65-66:

մից, այդ թվում՝ ռազմական գործողությունների ընթացքում:⁵⁹

1914 թ. նոյեմբերի 15-ին՝ ջիհադի հայտարարության անմիջապես հաջորդ օրը, ԱՄՆ-ի դեսպանությունում թեյի սեղանի շուրջ Էնվերը վստահեցնում է Մորգենթաուիին, որ ջիհադի հայտարարությունը որևէ վնաս չի պատճառելու ամերիկացիներին կամ ամերիկյան հաստատություններին, և «ընդհանրապես որևէ կոտորած տեղի չի ունենալու»: Ջրույցի ժամանակ դեսպանի քարտուղարը մտնում և զեկուցում է վերջինիս, որ քաղաքում ցույցեր են սկսվել օտարերկրյա հաստատությունների դեմ, մասնավորապես՝ ամբոխը թալանել է ֆրանսիական «Bon Marché» և անգլիական հագուստ վաճառող ավստրիական խանութները: Էնվերը կրկին հավաստիացնում է, որ որևէ վտանգ չկա: Նրա մեկնելուց հետո դեսպանին զեկուցեցին, որ այս անգամ ամբոխը թալանել է ևս մի ֆրանսիական խանութ և շարժվել դեպի բրիտանական դեսպանություն: Այնուհետև ամբոխը գնացել է դեպի «Կոստանդնուպոլսում ամենահայտնի Թոքթաթյանների ռեստորանը», որը մի քանի լոպչեների ընթացքում «ամբողջությամբ վերածվեց ավերակի»:⁶⁰

Թուրքիայում տեղի ունեցող զարգացումների կապակցությամբ Պետքարտուղարությունը փորձում էր հանգստացնել ամերիկյան հասարակական կարծիքը՝ վստահեցնելով, որ «Tennessee» և «North Carolina» ռազմանավերը գտնվում են թուրքական ջրերում:⁶¹ Բեյրութում ԱՄՆ-ի հյուպատոս Սթենլի Հոլլիսն իր գոհունակությունն էր հայտնում, երբ հոկտեմբերին ռազմանավերը մտել էին Բեյրութի նավահանգիստ: Սակայն արագ վատթարացող իրավիճակի առնչությամբ նոյեմբերին նա առաջարկում էր, որ արտասահմանցիների և ոչ մահմեդականների պաշտպանության համար հարկավոր է Բեյրութում ունենալ մի քանի փոքր հաժանավեր և հրետանավակներ:⁶²

Պետքարտուղարին ուղղված գաղանի հուշագրում Մորգենթաուն գրում է, որ Բեյրութում ԱՄՆ-ի հյուպատոսը գտնվում է «շատ նյարդայնացած» վիճակում և խնդիրներ ունի ծովային նախարար Ահմեդ Ջենալի հետ, որի հրամանատարության տակ գտնվող օսմանյան

⁵⁹ Տե՛ս **Morgenthau Henry**, *Ambassador Morgenthau's Story*, էջ 162-166:

⁶⁰ Տե՛ս նույն տեղը, էջ 169-170:

⁶¹ Տե՛ս NA RG59/367.116/219:

⁶² Տե՛ս NA RG59/86.00/724:

4-րդ բանակը տեղակայված էր Միրիայում: Երբ Հոլլիսը հերթական անգամ քննադատում է Ջեմալ փաշային, վերջինս պատասխանում է, որ հյուպատոսն իրավունք չունի միջամտելու երկրի ներքին գործերին և պետք է լուծի իր հարցերը Կոստանդնուպոլսում ԱՄՆ-ի դեսպանության հետ:⁶³ Մորզենթաուն առաջարկում էր, որ Թուրքիայի ջրերում գտնվող ռազմանավերի հրամանատարները չենթարկվեն հյուպատոսներին և խուսափեն որևէ միջամտությունից ներքին գործերին, զբաղվեն միմիայն փախստականներին օգնելու և բարոյական օժանդակություն ցուցաբերելու խնդիրներով:⁶⁴

Նկատի առնելով այն հանգամանքը, որ Գերմանիան «բացարձակ հսկողություն» էր հաստատել օսմանյան նավատորմի և բանակի նկատմամբ, դեկտեմբերի 19-ին Մորզենթաուն խորհուրդ է տալիս պետքարտուղար Բրայանին նախագրուշացնելու գերմանական կառավարությանը, որ վերջինս պատասխանատվություն է կրելու, եթե Օսմանյան կայսրությունում տեղի ունենան քրիստոնյաների կոտորածներ: Մինչ այդ դեսպան Վանզենհայմը հայտարարել էր, որ եթե Ռուսաստանի խնդրանքով Բրիտանիան հարձակվի Դարդանեղի վրա և գրավի Կոստանդնուպոլիսը, քրիստոնյաների ջարդը դառնալու է «անխուսափելի»:⁶⁵

Թալեսթի շրջապատը ցանկանում էր օգտագործել Ֆրանսիայի և Բրիտանիայի քաղաքացիներին որպես «կենդանի վահան» Անտանտի պետությունների կողմից հնարավոր ծովային հարձակումների դեմ: Թալեսթն ակնարկում է այդ մասին Մորզենթաունի 1914 թ. նոյեմբերի 11-ին, որպեսզի վերջինս փորձի ապահովել երկրի նավահանգիստների անվտանգությունը դաշնակիցների ռմբակոծություններից: Հակառակ պարագայում երիտթուրքական իշխանությունները կարգելեն ֆրանսիացիների և անգլիացիների ելքը երկրից: Մորզենթաուն նշում է, որ ամերիկացիներն այն կարծիքին էին, որ երիտթուրքերի ղեկավարները «բավականին պարկեշտ են», որպեսզի չսպառնան կոտորածներով: Թալեսթը պատասխանում է. «Ի՞նչ է մեզ պետք

⁶³ Տե՛ս NA RG 59/86.00/723:

⁶⁴ Տե՛ս NA RG 59/86.00/723; **Payaslian Simon**, նշվ. աշխ., էջ 50-51:

⁶⁵ Տե՛ս US Department of State. *Papers Relating to the Foreign Relations of the United States, 1914, Supplement, The World War*, էջ 136-143; **Howard Harry N.**, նշվ. աշխ., էջ 29-30:

անել ապացուցելու համար, որ մենք հենց դա էլ նկատի ունենք»: Մորգենթաուն համոզվել էր, որ Թալեաթը նկատի ուներ հենց կոտորածների կազմակերպումը: Թալեաթը նկատի ուներ նաև ջիհադի հայտարարությունը, որը կարևոր գործիք էր մահմեդական պետության համար: Դրա վկայությունն է Թալեաթի նոյեմբերի 20-ի հեռագիրը՝ ուղղված սաուդյան ղեկավարին՝ օսմանյան ջիհադին միանալու համար:⁶⁶

Թալեաթ փաշայի հետ շփման հետևանքով Մորգենթաուն եկել էր հետևյալ համոզմանը. «Ես կարող եմ անձնապես վկայել, որ նա [Թալեաթը], ինչպես նաև իր կուսակցության ղեկավարների մեծամասնությունը չէին հոգում մահմեդականության մասին, նա ծաղրում էր բոլոր կրոնները»: «Ես ատում եմ քահանաներին, ռաբբիներին և հաջաներին», - ասել էր Թալեաթը Մորգենթաուին: Ըստ դեսպանի՝ իրականում նրանք գրեթե բոլորն արեհատներ էին:⁶⁷

Ամերիկյան միսիոներական կազմակերպությունների հարցումներին ԱՄՆ-ի վարչակազմը պատասխանում էր, որ իրավիճակը Թուրքիայում կայուն է, իսկ ամերիկյան քաղաքացիների և շահերի պաշտպանությունն ապահովված է: Բրայանն առաջարկում էր Արտաքին առաքելությունների հանձնակատարների ամերիկյան խորհրդի (այսուհետ՝ Ամերիկյան խորհուրդ) քարտուղար Ջեյմս Բարտոնին⁶⁸ տեղեկացնել միսիոներական համայնքին, որ ԱՄՆ-ի դեսպանը, սերտորեն համագործակցելով թուրք պաշտոնյաների հետ, շարունակում է ապահովել ամերիկացիների պաշտպանությունը, և կյանքն ընթանում է բնականոն հունով: Միաժամանակ պետքարտուղարի պաշտոնակատար Լանսինգը հրահանգել էր ԱՄՆ-ի հյուպատոսներին ամեն կերպ աջակցել ամերիկյան միսիոներներին, որոնք ցանկանում էին մեկնել Թուրքիայից:⁶⁹

⁶⁶ Տե՛ս **Kiezer Hans-Lukas**, *Talaat Pasha. Father of Modern Turkey, Architect of Genocide*, էջ 216:

⁶⁷ Տե՛ս **Morgenthau Henry**, *Ambassador Morgenthau's Story*, էջ 20, 323:

⁶⁸ **Ջեյմս Բարտոն** (1855-1936)՝ ԱՄՆ-ի հասարակական և կրոնական գործիչ, միսիոներ, 1885-1892 թթ. աշխատել է Խարբերդում, ղեկավարել է Եփրատի ամերիկյան քոլեջը, 1892-1927 թթ.՝ եղել Արտաքին առաքելությունների հանձնակատարների ամերիկյան խորհրդի քարտուղարը: Մեծ դերակատարություն է ունեցել Հայոց ցեղասպանության պատճառով տուժած հայերին օգնության ցուցաբերման կազմակերպման գործում: 1915 թ. հիմնել է Հայկական նպաստամատույց կոմիտեն, ղեկավարել է Մերձավոր Արևելքի նպաստամատույց կազմակերպության աշխատանքները:

⁶⁹ Տե՛ս NA RG59/367.116/205; **Payaslian Simon**, նշվ. աշխ., էջ 51-52:

Ըստ Մորգենթաուի՝ թուրքական մամուլը ցուցում էր ստացել հրապարակելու գերմանամետ հողվածներ, Ռուսաստանին ներկայացնելու որպես Թուրքիայի գլխավոր թշնամի, որը պատասխանատու էր Թուրքիայի տարածքային կորուստների համար, իսկ Գերմանիային՝ որպես Թուրքիայի դաշնակից: Գերմանիայի «կայսրը հանկարծակի դարձավ Հաջի Վիլիելմ»:⁷⁰

Պատերազմի սկսվելուն պես գերմանական մամուլն ու բարձրաստիճան պաշտոնյաներն իրենց հերթին սկսեցին մեծարել երիտթուրքական իշխանություններին և նրանց «կարկառուն» առաջնորդ Թալեաթին: Թեև այս փառաբանումը որևէ ճշմարիտ հիմք չուներ և ընդամենը պատերազմական քարոզչության մաս էր կազմում, շատ և շատ գերմանացիներ հայտնվել էին այս «քայքայիչ քարոզչության» ազդեցության տակ:

Երիտթուրքերի մասին գովասանական հրապարակումների ակնառու ներկայացուցիչներից էր նաև գրող, քանդակագործ և Գերմանիայի արտաքին գերատեսչության հետ համագործակցող, ծագումով հրեա Ալֆրեդ Նոսսիզը⁷¹, որը 1908 թ. հուլիսին հիմնադրեց Հրեական գաղութացման ընդհանուր կազմակերպությունը (Allgemeine Jüdische Kolonisationsorganisation), որի նպատակն էր երիտթուրքերի հետ համագործակցությունը հրեաների հայրենադարձության հարցում: 1915 թ. օգոստոս-սեպտեմբերին Նոսսիզը գտնվում էր Կոստանդնուպոլսում, որտեղ նրան ընդունեցին երիտթուրք բոլոր հայտնի դեկավարներն ու սուլթանը, ինչպես նաև գերմանացի դիվանագետները: Այցի կապակցությամբ Նոսսիզի կողմից հրատարակված հողվածներում և գրքում Թալեաթը ներկայացվում էր որպես «Երիտասարդ Թուրքիայի հզորագույն մարդ», «ինքնակալ սուլթան»: 1917 թ. սկզբին Նոսսիզը նույնիսկ քանդակեց Թալեաթի դիմանկարը՝ ցանկանալով այն մվիրել մեծ վեզիրին ապրիլին Բեռլին կատարելիք նրա այցի ժամանակ:

Արևելյան Եվրոպայի հրեաների ներգաղթը կազմակերպելու նպա-

⁷⁰ Տե՛ս **Morgenthau Henry**, *Ambassador Morgenthau's Story*, էջ 101:

⁷¹ **Ալֆրեդ Նոսսիզ** (1864-1943) սիոնիստական շարժման գործիչ, հրապարակախոս, բանաստեղծ, քանդակագործ: Ապրել է Լեհաստանում, 1943 թ. հրեական կազմակերպության կողմից մեղադրվել է նացիստների հետ համագործակցության մեջ և դատապարտվել մահվան:

տակով Նոսսիզն ու Կոստանդնուպոլսում սիոնիստական կազմակերպության ներկայացուցիչ Ռիխարդ Լիխտհայմը հանդիպումներ էին ունեցել նաև ԱՄՆ-ի դեսպանությունում: Քանի որ երիտթուրք ղեկավարները չէին ցանկանում Պաղեստինում «հրեաների կուտակում» տեսնել, սիոնիստները ձևավոյխեցին իրենց նախնական ծրագիրը՝ ցանկանալով ներգաղթը կազմակերպել դեպի Օսմանյան կայսրության ողջ տարածք, մասնավորապես՝ Փոքր Ասիայի հայերին փոխարինել հրեաներով: Հետագայում Մորգենթաուն գրել է Նոսսիզի հետ իր հանդիպման մասին. «Որպես հրեա եղբայր՝ նա խնդրում էր ինձ դադարեցնել հայերի օգտին իմ կողմից իրականացվող գործունեությունը, քանի որ այն առաջացնում է թուրքերի դժգոհությունը»: Մորգենթաուն մերժել էր այդ առաջարկը:⁷²

Սակայն ոչ բոլոր հրեաներն ու հրեական կազմակերպություններն էին համամիտ Նոսսիզի կարծիքին: Երիտասարդ սիոնիստներն ու նրանց «The Eternal One of Israel will not lie» կազմակերպությունը Պաղեստինում իրենց համերաշխությունն էին հայտնում հայ գոհերին և փորձում միջազգային հանրությանը փոխանցել տեղեկատվություն կատարվածի մասին: Նրանք հայտարարում էին, որ Պաղեստինի հրեաների հերթն էլ կարող է հասնել: Ջեմալ փաշան միաժամանակ զգուշացնում էր, որ «Պաղեստինը կարող է երկրորդ Հայաստանը դառնալ», եթե ցանկանա ինքնավարություն ստանալ:⁷³ Կազմակերպության անդամները համոզված էին, որ հռոմեական գեներալ Տիտուսի⁷⁴ կողմից կազմակերպված հրեաների համընդհանուր կոտորածները պատմության ընթացքում արձանագրված միակ դեպքն են, որ կարող է համեմատվել հայերի համընդհանուր կոտորածների հետ: Հրեաները նշում էին, որ ինչպես այն ժամանակ, այնպես էլ այժմ այդ հանցագործությունները կառավարական ծրագրեր էին:⁷⁵

⁷² Library of Congress, Division of Manuscripts, Papers of Henry Morgenthau, Sr., Diary, 1915, September 17, էջ 332; October 7, էջ 351; October 28, էջ 368; **Kiezer Hans-Lukas, Talaat Pasha. Father of Modern Turkey, Architect of Genocide**, էջ 285-287:

⁷³ Տե՛ս **Auron Yair, The Banality of Indifference: Zionism and the Armenian Genocide**, New Brunswick: Transaction, 2000, էջ 162:

⁷⁴ **Տիտոս Ֆլավիոս Վեսպասիանոս** (41-81)՝ Հռոմի Վեսպասիանոս կայսրի որդին, գեներալ: 70 թ. գրավել և ավերել է Երուսաղեմը: 79-81 թթ. եղել է կայսր:

⁷⁵ Տե՛ս **Kiezer Hans-Lukas, Talaat Pasha. Father of Modern Turkey, Architect of Genocide**, էջ 289-290:

1914 թ. նոյեմբերի վերջին և դեկտեմբերին ԱՄՆ-ի վարչակազմը զբաղված էր Չմյուռնիայի ճգնաժամով, երբ թուրքական ափամերձ թնդանոթները կրակ բացեցին Չմյուռնիայի նավահանգստում կանգնած «Tennessee» ռազմանավի ուղղությամբ: Բրայանը հրահանգեց Մորգենթաուին բողոք ներկայացնել Բարձր Դռանն այս միջադեպի կապակցությամբ: Դեսպանը հանդիպեց Թալեաթին ու Էնվերին և զգուշացրեց նրանց, որ նման միջադեպերը կարող են զայրույթի ալիք բարձրացնել ԱՄՆ-ի հասարակայնության շրջանում:⁷⁶

1914 թ.՝ իր պաշտոնավարության առաջին տարվա վերջին, Մորգենթաուն, որն արդեն շատ լավ պատկերացնում էր Օսմանյան կայսրությունում տիրող քաղաքական իրավիճակն ու չէր թաքցնում իր հիասթափությունը, զգուշացնում էր, որ թուրքական կառավարությունն «արագորեն շարժվում է դեպի կիսասանարխիսիայի, խոստումներ են արվում մի օր, իսկ հաջորդ օրը չեն կատարվում, հատակ քաղաքականություն զոյություն չունի, և պաշտոնյաներն այլևս չեն կարողանում հույս դնել թուրքական կառավարության լիարժեք պաշտպանության վրա»:⁷⁷ Միաժամանակ նա ԱՄՆ-ի արտաքին քաղաքականության փոփոխության վերաբերյալ որևէ առաջարկ չէր ներկայացնում:

Դեկտեմբերի 16-ին նախագահ Վիլսոնն ու նրա խորհրդատու Էդվարդ Հաուզը⁷⁸ քննարկեցին Մորգենթաուի կողմից Թուրքիայի իրավիճակի մասին ստացված տեղեկատվությունը: Որոշում կայացվեց զգուշացնելու Թուրքիայում գտնվող ԱՄՆ-ի քաղաքացիներին վտանգի դեպքում մեկնել Թուրքիայից: Դեկտեմբերի 20-ին Բրայանը հրահանգում է Մորգենթաուին խորհուրդ տալ ամերիկացիներին այն մասին, որ վտանգի դեպքում նրանք կարող են մեկնել Թուրքիայից և պետք է զաղտնի պահեն այդ տեղեկատվությունն ԱՄՆ-ում գտնվող իրենց ազգականներից և ընկերներից՝ հասարակայնության շրջանում

⁷⁶ Տե՛ս **Bryson Thomas A.**, *American Diplomatic Relations with the Middle East, 1784-1975*, Metuchen, NJ: Scarecrow Press, 1977, էջ 59:

⁷⁷ **Morgenthau Henry**, *All in a Life-Time*, Garden City, NY, Doubleday, 1922, p. 196; NA RG 59/867.00/723.

⁷⁸ **Էդվարդ Հաուզ** (1858-1938)՝ ԱՄՆ-ի քաղաքական գործիչ և դիվանագետ: Եղել է նախագահ Վուդրո Վիլսոնի գլխավոր խորհրդատուն Առաջին համաշխարհային պատերազմի և Փարիզի Խաղաղության կոնֆերանսի ընթացքում: Հայտնի էր որպես «զնրապետ Հաուզ», թեև ռազմական ծառայության հետ որևէ առնչություն չէր ունեցել:

աղմուկ չբարձրացնելու նպատակով: Մորզենթաուն պատասխանում է, որ միսիոներները այս պահին վտանգի մեջ չեն և ցանկանում են մնալ երկրում:⁷⁹

Մտնելով պատերազմի մեջ Գերմանիայի կողմից` Թուրքիայի զինվորական հրամանատարությունը նպատակադրվել էր պաշտպանել Կովկասյան ճակատը Ռուսաստանի հարձակումից: 1914 թ. վերջին Կովկասում Թուրքիայի ռազմավարության հիմնական նպատակը նավթի պաշարների նկատմամբ հսկողության սահմանումն էր:⁸⁰ Թուրքական ներխուժումը Կովկաս հնարավորություն կտար հսկողություն հաստատելու նավթի հանքերի վրա, դարձնելու Կովկասը թուրք-գերմանական ազդեցության տարածաշրջան, իսկ Բաքվի և Կենտրոնական Ասիայի գրավումով իրականացնելու թուրքական ազգերի միավորումը և այդպիսով իթթիհադական ռեժիմի պանթուրքիստական ձգտումները:⁸¹

1914 թ. նոյեմբերի սկզբին Էնվերը հրաման տվեց Արաքս գետի մոտ տեղակայված թուրքական զորքերին հարձակում սկսելու Ռուսաստանի դեմ: Թեև թուրքական առաջխաղացումը կասեցվեց ռուսների կողմից, սակայն նոյեմբերի ընթացքում արձանագրվեցին ռազմական որոշ հաջողություններ: Դեկտեմբերին թուրքական 95 հազարանոց բանակն Էնվերի հրամանատարությամբ հարձակում սկսեց 65 հազարանոց ռուսական բանակի վրա Կովկասյան ճակատում:⁸² Վատ կազմակերպման և մատակարարման հետևանքով Էնվերի ռազմական գործողությունն ավարտվեց ջախջախիչ պարտությամբ: Դրան նպաստեցին մաս ձմռան պայմանները: Դեկտեմբերի 29-ին տեղի ունեցած Սարիղամիշի մարտը որոշիչ նշանակություն ունեցավ. Էնվերի բանակը գրեթե ամբողջությամբ ջախջախվեց, փրկվեցին շուրջ 18 հազար զինվորներ, իսկ ռուսները կորցրին շուրջ 16 հազար զինվոր:⁸³ Պարտությանը մեծապես նպաստեց մաս հայ կամավորների` ռուսա-

⁷⁹ Տե՛ս NA RG 59/367.116/261a; **Payaslian Simon**, նշվ. աշխ., էջ 52-53:

⁸⁰ Տե՛ս **Nowell Gregory P.**, *Mercantile States and the World Oil Cartel, 1900-1939*, Ithaka and London, Cornell University Press, 1994, էջ 127:

⁸¹ Տե՛ս **Payaslian Simon**, նշվ. աշխ., էջ 53:

⁸² Տե՛ս **Allen W. E. D. and Muratoff Paul**, *Caucasian Battlefield: A History of the Wars on the Turco-Caucasian Border, 1828-1921*, Cambridge, Cambridge University Press, 1953, էջ 247, 250-252:

⁸³ Տե՛ս նույն տեղը, էջ 253, 261-262, 270, 271, 284:

կան բանակին ցուցաբերած օգնությունը, ինչը նաև կանխեց թուրքական առաջխաղացումը դեպի Ադրբեջան: Այս հանգամանքը «խոր հետք» թողեց Թալեսթի ու Էնվերի վրա և «մեծագույն թշնամություն» առաջ բերեց հայերի նկատմամբ: Միաժամանակ Կոստանդնուպոլիս տեղեկատվություն էր հասնում Սվազ (Մեքաստիա), Շապին Գարահիսար, Էրզրում (Կարին), Վան, Բիթլիս և Դիարբեքի (Ամիդ, Տիգրանակերտ) քաղաքների մոտ գտնվող հայկական գյուղերի վրա թուրք զինվորների և ոչ կանոնավոր խմբերի կողմից հարձակումների կազմակերպման մասին:⁸⁴

Կոստանդնուպոլիս վերադառնալուց անմիջապես հետո Էնվերը հրապարակայնորեն ճանաչեց Սարիդամիշի ճակատամարտում հայերի կողմից ցուցաբերած հավատարմությունն ու քաջությունը:⁸⁵ Էնվերի հետ հանդիպման ժամանակ Կոստանդնուպոլիս պատրիարք Ջավեն Տեր-Յեղիայանը⁸⁶ թույլտվություն էր խնդրում հրապարակելու հայ զինվորների քաջության մասին նախարարի գրած նամակները: Էնվերը համաձայնել էր և նույնիսկ ավելացրել, որ եթե չլինեք սերժանտ Հովհաննեսի «չլիազորված գործողությունը», ինքը կարող էր գերության մեջ հայտնվել: Եվ այդ «խիզախ գործողության» համար Էնվերը նրան անմիջապես կապիտանի կոչում էր շնորհել:⁸⁷

Միաժամանակ Էնվերն ամեն գնով փորձում էր թաքցնել իր «կործանարար արկածախնդրությունը»: Երբ 1915 թ. հունվարի 15-ին Էնվերը հանդիպել էր Մորգենթաուին, խոսել էր 1914 թ. լավ բերքի, Անգորայից Էրզրում երկաթգիծ կառուցելու ծրագրի, Էրզրումում երկու հազար ռուս զինվոր գերի վերցնելու մասին: Սակայն Սարիդամիշի գործողության անհաջողությունը թաքցնելու ուղղությամբ նրա գործադրած ջանքերն ապարդյուն էին. լուրերն այդ մասին շատ արագ

⁸⁴ Տե՛ս նույն տեղը, էջ 245-247; NA Microfilm Publications, Microcopy No. 353, Records of the Department of State Relating to Internal Affairs of Turkey, 1910-1929, Roll 6, NA/RG 59/867.00/798.2, էջ 1-16:

⁸⁵ Տե՛ս **Hovannisian R.**, *Armenia on the Road of Independence, 1918*, Berkeley, University of California Press, 1967, էջ 53:

⁸⁶ **Ջավեն Տեր-Յեղիայան** (1868-1947)՝ հայ կրոնական գործիչ: Ծառայել է Դիարբեքիում՝ որպես առաջնորդ: 1913 թ. ընտրվել է Պոլսո հայոց պատրիարք: 1916 թ. արքայազն է Բաղդադ, վերադարձել է 1918 թ.: Պաշտոնը վարել է ինչև 1922 թ.:

⁸⁷ Տե՛ս **Der Yeghiyan Zaven**, *My Patriarchal Memoirs*, Barrington, RI, Mayreni Publishing, 2002, էջ 63:

տարածվեցին մայրաքաղաքում:⁸⁸

Էնվերը ճնշված հոգեկան վիճակում էր և հրաժարական ներկայացնելու տրամադրվածություն ուներ: Սակայն շատ շուտով նա համոզվեց, որ իր երիտթուրք գործընկերներն իրեն չեն մեղադրում պարտության համար: Կառավարությունն ինքն էր գտնվում ծանր վիճակում դաշնակիցների կողմից Դարդանելում սպասվող հնարավոր գործողության պատճառով: Որոշում էր կայացվել սուլթանին, կառավարությանը և իրենց դաշնակից պետությունների դեսպանություններին գնացքներով Էսքիշեհիր տեղափոխելու մասին: Այդ նպատակով Էսքիշեհիրում կառավարության կողմից 200 շինություններ էին բռնագրավվել: Օգտվելով այդ իրավիճակից՝ Էնվերը խորհրդակցություններ էր վարում Լիման ֆոն Սանդերսի հետ, որոնց արդյունքում որոշվել էր բոլոր ուժերը կենտրոնացնել Դարդանելի պաշտպանության ուղղությամբ:⁸⁹

Էնվեր փաշան կարողացավ հասնել նրան, որ երիտթուրքերը նշանակեցին նրան օսմանյան 4-րդ բանակի հրամանատար, որը տեղակայված էր Սիրիայում: 1914 թ. նոյեմբերի սկզբին բրիտանական բանակը հարձակվեց Պարսից ծոցի թուրքական դիրքերի վրա, գրավեց Շատ-ալ-Արաբը և մեկ ամսվա ընթացքում ցամաքային հարձակում սկսեց Բասրան հսկողության տակ առնելու նպատակով: 1915 թ. հունվարի վերջին օրերին սկսվեց Սինայի թերակղզու և Սուեզի ջրանցքի համար մղվող ճակատամարտը: 20 հազարանոց թուրքական բանակը նպատակադրվել էր ներխուժել Եգիպտոս: 70 հազարանոց բրիտանական ուժերը կարողացան վստահորեն պաշտպանվել և տապալեցին երիտթուրքերի ծրագիրը: Ջեմալ փաշայի և նրա գերմանացի խորհրդականների՝ բրիտանական ռազմական կարողությունների մասին հաշվարկները չարդարացան, և, փաստորեն, երկու շաբաթվա ընթացքում Սիրիայի հրամանատարը կրեց հերթական պարտությունը:⁹⁰

⁸⁸ Տե՛ս Library of Congress, Division of Manuscripts, Papers of Henry Morgenthau, Sr., Diary, 1915, January 23; **Allen W. E. D. and Muratoff Paul**, նշվ. աշխ., էջ 286:

⁸⁹ Տե՛ս NA Microfilm Publications, Microcopy No. 353, Records of the Department of State Relating to Internal Affairs of Turkey, 1910-1929, Roll 6, NA/RG 59/867.00/798.2, էջ 1-16:

⁹⁰ Տե՛ս **Keegan John**, *The First World War*; New York: Knopf Doubleday Publishing Group, 1998, էջ 219-221; **McCale Donald M.**, *War by Revolution: Germany and Great Britain in the Middle East in the Era of World War I.*, Kent, OH: Kent State University Press, 1998, էջ

Երիտթուրքերի ռազմական այս պարտությունները ցույց տվեցին իթթիհադական ռեժիմի քաղաքական լեգիտիմության սնանկությունը: Հեղաշրջման միջոցով իշխանությունն ուզուրպացնելով՝ նրանց ղեկավարները կասկածամիտ էին դարձել նույնիսկ իրենց պետական հաստատությունների և բնակչության նկատմամբ: Այսպես՝ 1914 թ. դեկտեմբերին Մորզենթաուն իր օրագրում նշում էր, որ Կոստանդնուպոլսի ոստիկանության պետ Իբրահիմ Բեդրին քաղաքից վտարել էր բոլոր գործազուրկ երիտասարդներին, որպեսզի նրանք չմիանան ռեժիմի դեմ հնարավոր ապստամբությանը: Այս իրավիճակը հետևանքների ունեցավ մաս արևելյան մահանգների հայ բնակչության համար: Ռուսաստանի և Եվրոպայի թշնամի պետությունների դեմ ուղղված ռեժիմի «մոլեռանդ զայրույթը» զգալի պարտություն կրեց մարտադաշտում, իսկ երկրի ներսում այն ուղղվեց անգլե հայերի դեմ, որոնք, ըստ թուրքական իշխանությունների, դարձել էին իսլամի և օսմանյան հասարակության օտարերկրյա քաղաքականության գործիքը: Միաժամանակ եվրոպական անտարբերությունը նախկինում տեղի ունեցած կոտորածների հանդեպ վստահություն էր ներշնչել թուրքական իշխանություններին, որ մեծ տերությունները չեն միջամտելու հայերի անվտանգությանն առնչվող հարցերին:⁹¹

Վիլսոնի վարչակազմի համար 1915 թ. սկսվեց աշխարհում քաղաքական տարբեր խնդիրների բարդացումով: Այսպես, օրինակ, պետքարտուղար Բրայանը նշում էր Մեքսիկայում տիրող իրավիճակն ու Եվրոպայի պատերազմը: Միացյալ Նահանգների հասարակական կարծիքը մտահոգված էր պատերազմի հետևանքով երկրում սկսված տնտեսության անկումով, սակայն միաժամանակ սատարում էր պատերազմում չեզոքություն պահպանելու Վիլսոնի քաղաքականությունը: Վերջինս օգտագործում էր այդ հանգամանքը հիմնականում երկրորդ անգամ նախագահ ընտրվելու համար:⁹²

Առաջին համաշխարհային պատերազմը Վիլսոնի մոտ համոզմունք ձևավորեց, որ ներքին բարենորոգումների ծրագիրը հնարավոր է իրականացնել միմիայն միջազգային նոր մթնոլորտում, որին կարելի

86, 97-98, 100:

⁹¹ Տե՛ս **Langer William L.**, *The Diplomacy of Imperialism, 1890-1902, 2-nd edn.*, New York: Alfred A. Knopf, 1951, էջ 162, 202-210; **Payaslian Simon**, նշվ. աշխ., էջ 55:

⁹² Տե՛ս **Payaslian Simon**, նշվ. աշխ., էջ 55-56:

է հասնել ինչպես պատերազմում, այնպես էլ խաղաղության պայմանների քննարկման ընթացքում ամերիկյան ղեկավար դերակատարության միջոցով: Չնայած ներքին ճնշումներին՝ Վիլսոնը կարողացավ իրականացնել ճկուն և գործուն արտաքին քաղաքականություն: Այն պայմանավորված էր հիմնականում Վիլսոնի անձնական «հիանալի» հատկություններով: Քաղաքականության մասն անձնականացումը դարձավ շատ կարևոր, քանի որ Վիլսոնն այդպես էլ չկարողացավ կառուցել գաղափարների ու որոշումների փոխանցման և քննարկման արդյունավետ մի համակարգ, որը կկարողանար այդ գործում ընդգրկել երկրի համապատասխան պետական հաստատությունները: Վիլսոնը երբեք չէր վստահում Պետքարտուղարությանը, իսկ պետքարտուղար Ուիլյամ Բրայանին համարում էր «քաղաքական անհրաժեշտություն», բայց և «մտավոր և դիվանագիտական խայտառակություն»: Միաժամանակ Վիլսոնը չփորձեց ստեղծել արտաքին հարաբերություններով զբաղվող իրավասու կառույց: Դրա փոխարեն նա շրջանցում էր Պետքարտուղարությունն ու կարևոր խնդիրների շուրջ խորհրդակցում Էդվարդ Հաուզի հետ, ինչի հետևանքով Պետքարտուղարությունը շատ հաճախ տեղյակ չէր լինում նախագահի նախաձեռնությունների մասին: Բրայանին փոխարինեց ավելի լավ ղեկավար համարվող Ռոբերտ Լանսինգը, սակայն նա մույնպես չկարողացավ շահել Վիլսոնի վստահությունը: Վիլսոնը համարում էր Լանսինգին նեղմիտ փաստաբան, որն անկարող էր հասկանալ միջազգային հարաբերությունների նրբությունները: Վիլսոնը շարունակում էր անտեսել Պետքարտուղարությունը Լանսինգի օրոք, մինչև որ 1920 թ. հեռացրեց նրան պաշտոնից:⁹³

⁹³ Տե՛ս **Coogan John W.**, *Wilsonian Diplomacy in War and Peace* // In: *American Foreign Relations Reconsidered, 1890-1993* / Edited by Gordon Martel, London and New York, Routledge, 1994, էջ 73-74:

ԳԼՈՒԽ 2

Միացյալ Նահանգները, դեսպան Հենրի Մորգենթաուն, միսիոներները և Հայոց ցեղասպանությունը

1. ԱՄՆ-ի արտաքին քաղաքականությունը և Հայոց ցեղասպանությունը

Այն ժամանակ, երբ եվրոպական տերությունները զբաղված էին պատերազմով, իսկ Վիլսոնի վարչակազմը՝ պատերազմում «չեզոքության» սկզբունքի խիստ կիրառմամբ, Օսմանյան կայսրության հայերը հայտնվեցին «համընդհանուր ոչնչացման վտանգի առջև»՝ Միջերկրականի ափին գտնվող Կիլիկիայից մինչև պատմական Հայաստանի հյուսիս-արևելյան սահմանները կազմող Էրզրումի դաշտավայրը, Մարմարա ծովի Ռոդոստո նավահանգիստ-քաղաքից մինչև Վանա լճի ավազանը և Սևծովյան նավահանգիստ Տրապիզոնից մինչև Սվազ, Խարբեռո, Դիարբեքիր ու Միջագետքի անապատը:⁹⁴ Տեղի ունեցավ «սարսափելի եղեռնագործություն, ...երբ զոհվեցին միլիոն ու կես հայեր»:⁹⁵

Համաձայն Գորդոն Հիթի՝ Առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում «թուրքական կառավարությունն ագրեսիվ կերպով հետապնդեց ցեղասպանության քաղաքականություն հայերի դեմ», որի հետևանքով մահացան մեկ միլիոնից մինչև մեկուկես միլիոն հայեր: Տեղի ունեցան նաև սիրիացիների և Իրաքի ուղղափառ քրիստոնյաների համատարած սպանություններ, որոնց թիվը կազմեց շուրջ 500 հազար:⁹⁶

Ըստ Ռեբեկա Ֆռայի՝ 1915-1923 թթ. հայկական ցեղասպանությունը հաճախ ներկայացվում է որպես առաջին ժամանակակից ցեղասպանությունը՝ նկատի առնելով կատարվածի ծավալն ու կենտրոն-

⁹⁴ Տե՛ս **Payaslian Simon**, նշվ. աշխ., էջ 71:

⁹⁵ Տե՛ս **Lewis Bernard**, *The Emergence of Modern Turkey*, London, Oxford University Press, 1961, էջ 350:

⁹⁶ Տե՛ս **Heath Gordon L.**, “*The Accursed Partnership of Turk and Teuton*”. *American Churches and the Armenian Genocide* // In: *American Churches and the First World War* / Edited by Gordon L. Heath, Eugene, Oregon, Pickwick Publications, 2016, էջ 183:

նական կառավարության կողմից ծրագրված լինելու հանգամանքը: Յեղասպանությունը վրդովմունքի ալիք բարձրացրեց Արևմուտքում, որին հետևեցին վայրագությունների մասին փաստերի հրապարակումը, միջամտելու փորձերը, մարդու իրավունքների պաշտպանության առաջին մեծ շարժումը Միացյալ Նահանգներում, ցեղասպանությունը պատժելու ուժ ունեցող միջազգային կազմակերպության ստեղծման պահանջն ու պատերազմի հանցանքների քննության համար կազմակերպվող հետպատերազմական դատավարությունները:⁹⁷

Արտաքին աշխարհը լավատեղյակ էր, որ հայերը լուրջ վտանգի առջև էին գտնվում նույնիսկ մինչև Թալեաթի և երիտթուրքերի ղեկավարության կողմից տեղահանության մասին որոշման վերջնական կայացումը: Երբ Թուրքիան մտավ Առաջին համաշխարհային պատերազմի մեջ՝ որպես Գերմանիայի դաշնակից Բրիտանիայի, Ֆրանսիայի և Ռուսաստանի դեմ, թուրքական իշխանությունները բացահայտեցին իրենց մտադրությունը կայսրության քրիստոնյաներին թիրախ դարձնելու վերաբերյալ:

Դեռևս 1914 թ. սեպտեմբերի 8-ին Վաշինգտոնի «*Evening Star*»-ում հրապարակվեց ԱՄՆ-ում Օսմանյան կայսրության դեսպան Ահմեդ Ռուստեմի հայտարարությունը, որում վերջինս քննադատում էր ամերիկյան մամուլը՝ Թուրքիային քննադատելու, մասնավորապես՝ հայերի հանդեպ թուրք իշխանությունների վերաբերմունքի համար: Նա «բավականին ոչ դիվանագիտական կերպով» հարց էր տալիս ընթերցողին, թե ինչ կարող էր տեղի ունենալ, եթե սևամորթ բնակչությունը գործարքի մեջ մտներ ճապոնացիների հետ Միացյալ Նահանգներ ներխուժելու պարագայում: Դեսպանը հարցնում էր ընթերցողին, թե նրանցից քանիսը ողջ կմնային այդ բանից հետո: Այն բանից հետո, երբ դեսպանը հրաժարվեց իր հայտարարությունը հետ կանչելուց, նա վերադարձավ Թուրքիա:⁹⁸

1915 թ. հունվարին «*New York Times*»-ում հրապարակված իր մեկնաբանություններում Թալեաթն ասում էր, որ Թուրքիայում տեղ չկա

⁹⁷ Տե՛ս **Frey Rebecca Joyce**, *Genocide and International Justice*, New York, Facts on File, 2009, էջ 73-74:

⁹⁸ Տե՛ս US Department of State, *Papers Relating to the Foreign Relations of the United States, The Lansing Papers, 1914-1920*, Vol. 1, Washington D. C., Government Printing Office, 1939, էջ 70-71; **Trask Roger R.**, նշվ. աշխ., էջ 18-19:

քրիստոնյաների համար, և որ «իրենց աջակիցները խորհուրդ են տալիս մաքրվելու»:⁹⁹ Մարտի վերջին թուրքական իշխանությունները սկսեցին զինաթափել օսմանյան բանակում ծառայող հայ տղամարդկանց: 1915 թ. ապրիլի 24-25-ին, երբ դաշնակիցները փորձեցին ներխուժել Թուրքիա, Թալեաթը հրաման արձակեց ձերբակալելու և մահապատժի ենթարկելու Կոստանդնուպոլսի 250 առաջատար հայ մտավորականների: Թուրքիայի վեց նահանգներում տեղական հայ մտավորականներն արժանացան մույն բախտին: Հայ տղամարդկանց աքսորում էին անասունների պես, ինչպես որ ճակատի բանակն էր մատակարարվում, սակայն փոխադրման այդ միջոցը համարվեց «չափազանց արժանապատիվ դավաճան քրիստոնյաների համար»: Եկեղեցիները պղծվեցին, հայկական դպրոցները փակվեցին, իսկ իսլամ չընդունած ուսուցիչները սպանվեցին: Ամենուրեք տեղական իշխանությունները հայտարարում էին, որ աքսորված հայերի համար ճամբարներ էին տրամադրվելու Սիրիայի անապատում, սակայն իրականում որևէ հարմարություն չէր ապահովվել, և ի վերջո աքսորված հայերի կեսը մահացավ ճանապարհին: «Շարունակելով որբերի աքսորը դեպի իրենց նպատակակետերը սաստիկ ցրտի պայմաններում,- գրում էր Թալեաթը,- մենք ապահովում ենք նրանց հավերժ հանգիստը»:¹⁰⁰

Իր հուշերում դեսպան Մորգենթաուն գրում է, որ Թալեաթի հետ ունեցած զրույցներից մեկի ժամանակ վերջինս բացատրություններ էր տալիս երկրի ազգային քաղաքականության իր պատկերացումների մասին: Նա համարում էր, որ թուրքական կայսրության կազմում գոյություն ունեցող ազգային «տարբեր միավորները» մշտապես դավեր էին հյուսում Թուրքիայի դեմ: Թալեաթն այնուհետև նշում էր, որ բնիկ ազգերի թշնամության պատճառով Թուրքիան կորցնում էր նահանգը նահանգի հետևից՝ Հունաստանը, Սերբիան, Ռումինիան, Բուլղարիան, Հերցեգովինան, Եգիպտոսը և Տրիպոլին: Ըստ Թալեաթի՝ թուրքական կայսրության տարածքը կրճատվել էր և հասել «անհետացման եզրին»: Նա ընդգծում էր, որ եթե այն, ինչ մնացել էր Թուրքիայից,

⁹⁹ *She Says Turks Advise Christians to Flee // New York Times*, 1915, January 11, էջ 2:

¹⁰⁰ *A People Killed Twice // Guardian Weekend*, 2001, January 27, p. 35; **Power Samantha**, “A Problem from Hell”. *America and the Age of Genocide*, New York, Basic Books, 2002, p. 1-2.

պետք է պահպանվի, ապա «պետք է ազատվել այդ օտար ժողովուրդներից»: «Թուրքիան թուրքերի համար»՝ սա էր Թալեաթի հիմնական կարգախոսը:¹⁰¹

Մտադրվելով պահպանել և կոնսոլիդացնել իրենց իշխանությունը՝ երիտթուրքերը որպես հիմնական թիրախ դարձրին հայերին, որոնց համարում էին «հակաիթթիհաղական հեղափոխական ցնցումների պոտենցիալ աղբյուր»: 1915 թ. փետրվարի 12-ին իշխանություններն աշխատանքից ազատեցին հայ պաշտոնյաների, էմվերի հրամանով փակվեց ՀՅԴ գլխավոր օրգան «Ազապրանսարյ» թերթը: Միաժամանակ Թալեաթը վստահեցնում էր Մորգենթաուին, որ անհանգստանալու որևէ պատճառ չկա. քրիստոնյաների անվտանգությունը «պատշաճ կերպով ապահովվելու է»:¹⁰²

Փետրվարի 14-ին Թալեաթն ու Ջիյա Գոյբալփը¹⁰³ Կոստանդնուպոլսի Նուրի Օսմանիեի կենտրոնակայանում նախազահեցին երիտթուրքերի կենտրոնական կոմիտեի ժողովը, որի ընթացքում որոշում կայացվեց պատերազմի ընթացքում «ջնջելու» Հայկական հարցն օսմանյան քաղաքական համակարգից: Այսպիսով, թուրքական կառավարությունը գերմանական «հովանավորների» լիարժեք աջակցությամբ համընդհանուր պատերազմ հայտարարեց ոչ միայն իր արտաքին թշնամիների, այլև ներքին՝ «հին թշնամիներ» համարվող հայերի

¹⁰¹ Տե՛ս **Morgenthau Henry**, *Ambassador Morgenthau's Story*, էջ 51:

¹⁰² Տե՛ս US Department of State, *Papers Relating to the Foreign Relations of the United States, 1915, Supplement, The World War*; Washington D. C., Government Printing Office, 1928, էջ 979-980; **Payaslian Simon**, նշվ. աշխ., էջ 58-59:

¹⁰³ **Ջիյա Գոյբալփի** (1876-1924)՝ թուրք բանաստեղծ, գրող, սոցիոլոգ և քաղաքական գործիչ, պանթուրքիզմի և պանթուրանիզմի գաղափարախոս: Վեր է դասել ազգային արժեքները կրոնականից՝ գտնելով, որ իսլամը սպառել է իրեն և արգելակում է թուրք հասարակության առաջընթացը: Թուրք ազգը, ըստ Գոյբալփի, պետք է զարգանա ազգային մշակույթի վրա հենվելով: Այդ գաղափարախոսությունն ուղղված էր Օսմանյան կայսրության քրիստոնյա ժողովուրդների դեմ, որոնք առաջատար դեր ունեին երկրի տնտեսական և մշակութային կյանքում: Նա գտնում էր, որ երկրի առաջադիմությունը կարելի է ապահովել թուրք գործարարներ պատրաստելով, արտասահմանում մեքենաներ և սարքավորումներ գնելով և ոչ թուրք բուրժուազիային տնտեսական կյանքից դուրս մղելով: Հետագայում դարձել է Թալեաթ փաշայի տեղակալն ու ձեռնամուխ եղել սեփական գաղափարների իրականացմանը: Գոյբալփի գաղափարները տեսական հիմք հանդիսացան երիտթուրքերի համար՝ իրագործելու հայերի ցեղասպանությունը: 1919 թ. արտրվել է Մալթա, 1921 թ.-ից ապրել է Դիարբեքիում:

դեն: Երիտթուրքական ռեժիմը քիրախավորեց ողջ հայ բնակչությանը՝ նրա արտաքսումը պատճառաբանելով բոլոր հնարավոր միջոցներով ռազմական անվտանգության անհրաժեշտությամբ: Կառավարությունը ծրագրում էր հարձակումներ սկսել հայերի վրա կայսրության երկու շրջանում՝ թուրք-ռուսական-պարսկական սահմանի տարածքում գտնվող Ուրմիա լճի մոտ և Չեթուն-Մարաշ-Այնթապի շրջանում:¹⁰⁴

Այդ կապակցությամբ ցեղասպանագետ Դոնալդ Բլոքսենը գրում է, որ 1915 թ. հայերի շրջանում ազգային միասնություն գոյություն չուներ, ուստի և չկար քաղաքացիական պատերազմի իրավիճակ, ինչպես երիտթուրքերի գաղափարախոսներն էին ներկայացնում: 1914-1915 թթ. «հայ ազգայնականների գործողությունները» շատ ավելի սակավաթիվ էին, քան 1894-1896 թթ. ընթացքում: Սակայն այս հանգամանքը որևէ ազդեցություն չունեցավ երիտթուրքերի քաղաքականության հետագա «արմատականացման» վրա:¹⁰⁵

Միաժամանակ Միացյալ Նահանգներում պատերազմը որոշակի «քաղաքական իրապաշտություն» հաղորդեց կոտորածների խնդրին, քանի որ ոչ պատերազմական ժամանակաշրջանում այդպես էլ չհասնողվեց կանգնեցնել Աբդուլ Համիդի¹⁰⁶ կողմից կազմակերպված հայերի ջարդը: Թեև 1896 թ. Կոնգրեսը բանաձև ընդունեց, որը կոչ էր անում նախագահ Գրովեր Կլիվլենդին¹⁰⁷ դատապարտելու սուլթանի կողմից կազմակերպված կոտորածները, իսկ որոշ սենատորներ նույնիսկ կոչ էին անում միջամտելու և ստեղծելու անկախ Հայաստան, այնուամենայնիվ, այդ ժամանակ որևէ «հրատապ քաղաքական հանգամանք» գոյություն չունեի թուրքական գործերին միջամտելու

¹⁰⁴ Տե՛ս **Payaslian Simon**, նշվ. աշխ., էջ 60:

¹⁰⁵ Տե՛ս **Bloxam Donald**, *The Great Game of Genocide. Imperialism, Nationalism, and the Destruction of the Ottoman Armenians*, New York, Oxford University Press, 2005, էջ 91:

¹⁰⁶ **Աբդուլ Համիդ 2-րդ** (1842-1918) Օսմանյան կայսրության սուլթան (1876-1909): 1878 թ. արձակել է խորհրդարանը, հաստատել դաժան վարչակարգ («զոլում»), դաժանորեն ճնշել բուլղարների, մակեդոնացիների, արաբների, հայերի ազատագրական շարժումները: 1894-1896 թթ. կազմակերպել է կայսրության հայ բնակչության ջարդ, որի համար ստացել է «կարմիր սուլթան» մականունը: 1908 թ. երիտթուրքական հեղաշրջումից հետո վերականգնել է սահմանադրությունը: 1909 թ. հեղաշրջման անհաջող փորձից հետո գահընկեց է արվել և արքայվել:

¹⁰⁷ **Գրովեր Կլիվլենդ** (1837-1908)՝ ԱՄՆ-ի պետական գործիչ, Նյու Յորք նահանգի նահանգապետ, 22-րդ (1885-1889) և 24-րդ (1893-1897) նախագահ՝ դեմոկրատական կուսակցությունից:

համար: Առաջին համաշխարհային պատերազմը փոխեց այդ իրավիճակն ու ուժեղացրեց հասարակայնության որոշ շրջանակների ճնշումն ԱՄՆ-ի կառավարության վրա, քանի որ Թուրքիան պատերազմում հանդես եկավ որպես Գերմանիայի դաշնակից: Իրավիճակը սրեցին Վիլսոնի չեզոքության քաղաքականությունն ու Միացյալ Նահանգների՝ պատերազմի մեջ մտնելու մասին բռուն քննարկումները, որոնց անբաժան մաս էին կազմում հայերի նկատմամբ իրագործված հանցագործությունները:¹⁰⁸

Որևէ ամերիկացի այնպիսի խորությամբ չէր առնչվել Հայոց ցեղասպանությանը, ինչպես Կոստանդնուպոլսում Միացյալ Նահանգների դեսպան Հենրի Մորգենթաուն: Ինչպես իր պաշտոնավարության ընթացքում, այնպես էլ Միացյալ Նահանգներ վերադառնալուց հետո Մորգենթաուն համարձակ կերպով և համառորեն փորձում էր ոչնչացումից փրկել Օսմանյան կայսրության հայ բնակչությանը: Հնարավոր է, որ դա գալիս էր իր դաստիարակությունից, կրթությունից և բարոյական հատկանիշներից:

Ռուբեն Ադալյանի կարծիքով, եթե Մորգենթաունի փոխարեն Թուրքիայում այլ անձ աշխատեր, հնարավոր է, որ, ելնելով պատերազմական իրավիճակից և ԱՄՆ-ի չեզոքության սկզբունքից, նա հետաքրքրություն հանդես չբերեր և հեռավորություն պահեր ստեղծված իրավիճակից: Սակայն Մորգենթաուն իրականում անհատականություն էր, որը նշանակվել էր նախագահ Վիլսոնի կողմից՝ 1911 թ. նախագահական ընտրությունների ընթացքում ցուցաբերած ֆինանսական աջակցության համար: Նախագահի հետ մտերիմ լինելու հանգամանքը նրան հնարավորություն էր տալիս ազատորեն արտահայտելու իր տեսակետները քաղաքական և դիվանագիտական խնդիրների վերաբերյալ:¹⁰⁹

Հենրի Մորգենթաուն Միացյալ Նահանգներ էր ժամանել 1868 թ. Գերմանիայի Մաննհայմ քաղաքից ինը տարեկան հասակում իր ծնողների՝ Լազարոս և Բարթե Մորգենթաունների հետ, որոնք հարուստ

¹⁰⁸ Տե՛ս **Balakian Peter**, *From Ezra Pound to Theodore Roosevelt: American intellectual and cultural responses to the Armenian Genocide* // In: *America and the Armenian Genocide of 1915* / Edited by Jay Winter, Cambridge, Cambridge University Press, 2003, էջ 245:

¹⁰⁹ Տե՛ս **Adalian Rouben Paul**, *American Diplomatic Correspondence in the Age of Mass Murder: the Armenian Genocide in the US Archives*, էջ 149:

հրեաներ էին: Ընտանիքի 12 երեխաներից Հենրիին ամենաշնորհալին էր: Իր երիտասարդության ընթացքում նա ձեռք էր բերել կարգապահության և պատասխանատվության ուժեղ զգացում, որը խարսխված էր հավատքի վրա: Հայրը հրեական հավատքի արմատական ռեֆորմի կողմնակից էր և Նյու Յորքում դարձավ ազատական ռաբբի Գեյվիդ Այնհորնի մոտ բարեկամը: Բողոքական աղանդ քվակերիզմը, ռաբբի Այնբորնի ազատական հրեականությունն ու «էթիկական մշակույթի ընկերություն» (Society of Ethical Culture) կազմակերպության հիմնադիր, աշխարհիկ հրեականության կողմնակից Ֆելիքս Ադերի գաղափարները զգալի ազդեցություն ունեցան Հենրի Մորգենթաուի աշխարհայացքի և գործելաոճի ձևավորման վրա: Նա եկել էր այն համոզմունքին, որ պետք է անի այն, ինչ որ իր խիղճն է հուշում, այլ ոչ թե այն, ինչն իր հպարտությունն է թելադրում:¹¹⁰

Մորգենթաուն խոստովանել է, որ թեև իրեն մտահոգում էին Թուրքիայի տարբեր շրջաններում աշխատող ամերիկյան միսիոներների գործունեությանն առնչվող բոլոր խնդիրները, մասնավորապես՝ Պաղեստինում երիտթուրքական իշխանությունների կողմից իրականացվող հակասեմիտական քաղաքականությունը, սակայն նա ավելի խոտորյաճը զբաղվում էր Հայկական հարցով:¹¹¹

Հայերի տեղահանությունների և կոտորածների մասին առաջին եական վերլուծությունը հրատարակվել էր 1918 թ. 1913-1916 թթ. Օսմանյան կայսրությունում ԱՄՆ-ի դեսպան Հենրի Մորգենթաուի կողմից: Որպես պատերազմում չեզոք պետության դեսպանի, որը նույնիսկ ոչ թե քրիստոնյա էր, այլ հրեա, Մորգենթաուին չէր կարելի մեղադրել քաղաքական օրակարգ ունենալու մեջ: Թեև նա նկարագրում էր ընթերցողին «թուրքի» կերպարը «հնաոճ» նախապաշարմունքի ոճով, այնուամենայնիվ, նա ներկայացնում էր ամերիկյան դիվանագիտությունը, որը «դժվար» հարաբերություններ ուներ «հեղափոխական» երիտթուրքական կառավարության հետ: Մորգենթաուի հուշերի ամենաբացահայտող հատվածներն իր զրույցներն են երիտթուրքերի ղեկավարների՝ Թալեթի և Էնվերի հետ: Նա գրում է. «Երբ թուրք

¹¹⁰ Տե՛ս **Balakian Peter**, *The Burning Tigris. The Armenian Genocide and America's Response*, New York, Harper Collins Publishers, 2003, էջ 219-220:

¹¹¹ Տե՛ս **Morgenthau III Henry**, *Mostly Morgenthau*, New York, Ticknor & Fields, 1991, էջ 122:

իշխանությունները հրամաններ էին արձակում տեղահանություններին վերաբերյալ, նրանք մի ամբողջ ժողովրդի մահվան դատավճիռ էին տալիս: Նրանք նաև հասկանում էին դա, երբ ինձ հետ ունեցած զրույցներում առանձնապես չէին էլ թաքցնում այդ փաստը»:¹¹² «Եթե ես պետք է նահատակվեմ տառապանքի միջոցով,- շարունակում է Մորգենթաուն,- ես չեմ կարող մտածել շատ ավելի լավ նպատակի մասին, որի համար կարելի է զոհաբերվել: Իրականում ես կողջունեմ այն, քանի որ չեմ կարող մտածել ավելի մեծ պատվի մասին, քան կանչվել այն բանի համար, որ ես, լինելով հրեա, զործադրեցի իմ բոլոր ջանքերը՝ հարյուր հազարավոր քրիստոնյաներ փրկելու համար»:¹¹³

Հայոց ցեղասպանության ուսումնասիրման հարցում անկողմնակալ գիտնականները մեծ կարևորություն են տալիս գերմանացի և ավստրիացի դիվանագետների ու միսիոներների, ամերիկյան հյուպատոսական հեռագրերին և զեկույցներին: Սակայն որոշ հեղինակներ ԱՄՆ-ի դեսպան Մորգենթաուի հուշերը համարում են «կասկածելի աղբյուր», քանի որ նա «չարախոսում էր» թուրքերի հասցեին՝ նախագահ Վիլսոնի կողմից պատերազմի մեջ մտնելու վերաբերյալ որոշում կայացնելու նպատակով: Համարվում է, որ Թալեսթ փաշայի հետ նրա ունեցած զրույցների գրառումներն իր՝ պատերազմից հետո հրատարակված հուշերում բացակայում են կամ չեն համապատասխանում Պետքարտուղարությանը ներկայացված իր հեռագրերին: Սակայն, ըստ Ջեֆֆրի Ռոբերտսոնի, Մորգենթաուի տեղեկատվությունը շարունակում է մնալ ամենակարևոր աղբյուրներից մեկը, քանի որ վերջինս ճշմարիտ տեղեկատվություն էր ստանում Անատոլիայում և Հալեպում աշխատող հյուպատոսներից ու միսիոներներից: Այդ զեկույցներն ու հեռագրերը կասկած անգամ չեն հարուցում, որ երիտթուրքական իշխանությունն ուներ «ցեղասպանական մտադրություն» (genocidal intent):¹¹⁴ Իր եզրակացությունը Մորգենթաուն ամփոփել է գրքի գլուխներից մեկի վերնագրում՝ «Ազգի սպանությունը»: Ցեղասպանությունը ժխտողները նաև նշում են, որ որոշ դեպքերի նկարագ-

¹¹² **Morgenthau Henry**, *Ambassador Morgenthau's Story*, p. 213; **De Waal Thomas**, *Great Catastrophe. Armenians and Turks in the Shadow of Genocide*, Oxford, New York, Oxford University Press, 2015, pp. 43-44:

¹¹³ **Morgenthau Henry**, *Ambassador Morgenthau's Story*, p. 379:

¹¹⁴ Տե՛ս **Robertson Geoffrey**, *An Inconvenient Genocide. Who now remembers the Armenians*, London: Biteback Publishing, 2014, էջ 140:

ության ընթացքում նա կոպտորեն սխալվել է, իսկ իր հուշերում, որոնք գրվել են լրագրողի օգնությամբ, փաստերը չափազանցված կամ ծաղկեցված են: Միաժամանակ նաև փաստ է, որ Մորզենթաուի վկայությունների հիմնական տարրերը կրկնվում և հաստատվում են նաև նրա հետնորդների՝ Պետքարտուղարությանն ուղղված փաստաթղթերում: Սակայն հարձակումները Մորզենթաուի վկայությունների դեմ շարունակվում են: Գիտակցելով, որ Մորզենթաուի հուշերը Հայոց ցեղասպանության հիմնական վկայություններից մեկն են, Հիթ Լուրին իր գրքում հարցականի տակ է առնում Մորզենթաուի՝ իրադարձությունների ճշմարիտ աղբյուր լինելու հանգամանքը՝ «ցեղասպանության հայերի տեսությունը հերքելու նպատակով», մեղադրելով նրան գրպարտության մեջ:¹¹⁵

Մորզենթաուն, նրա շատ ժամանակակիցներ ու դեպքերի վկաները «հաստատուն կերպով» համոզված էին, որ «հայ ժողովրդի սպանությունը» «բոլոր ժամանակների մեծագույն հանցագործություններից է»: Կոստանդնուպոլսում ԱՄՆ-ի դեսպանի տեղակալ Լյուիս Այնշթայնը¹¹⁶ հայերի ճակատագրի մասին գրում էր. «Այս պատերազմի բոլոր սարսափների շարքում այն ամենամեծն է: Ոչինչ չի կարող համեմատվել մի ազգի՝ լուռ կերպով ծրագրված ոչնչացման հետ... Հայկական ազգը Փոքր Ասիայում գրեթե վերացված է»:¹¹⁷ 1965 թ. Այնշթայնը գրում էր, որ այդ հանցագործությունները, թեև ավելի փոքր ծավալով, «նման էին Հիթլերի հակահրեական միջոցառումներին»:¹¹⁸

Օսմանյան բանակի գլխավոր սպայակույտի աշխատակազմի ղեկավար, գերմանացի գեներալ Ֆրից Բրոնսարտ ֆոն Շելլենդորֆը, որն իրականում գլխավոր հրամանատարն էր, մտերիմ հարաբերությունների մեջ էր Էնվեր փաշայի հետ և իրավունք ուներ միջամտելու

¹¹⁵ Տե՛ս **Dadrian Vahakn N.**, *The Key Elements in the Turkish Denial of the Armenian Genocide: A Case Study of Distortion and Falsification*, Cambridge, MA, Toronto, The Zoryan Institute, 1999, էջ 40-41:

¹¹⁶ **Լյուիս Այնշթայն** (1877-1967) ամերիկացի դիվանագետ, 1903 թ. նշանակվել է Կոստանդնուպոլսում ԱՄՆ-ի դեսպանության 3-րդ քարտուղար, երիտթուրքական հեղափոխության տարիներին աշխատել է որպես գործերի հավատարմատար, դեսպան Կոստա Ռիկայում (1911-1912), 1915 թ.-ից՝ դեսպանի տեղակալ Կոստանդնուպոլսում, դեսպան Չիխապոլվակիայում (1921-1930):

¹¹⁷ **Einstein Lewis**, *The Armenian Massacre* // *Contemporary Review*, 1917, January 1.

¹¹⁸ **Einstein Lewis**, *Inside Constantinople: A Diplomat's Diary during the Dardanelles Expedition*, p. xi.

կայսրության ներքին գործերին: Իր հուշերում վերջինս չարությամբ էր արտահայտվում ԱՄՆ-ի և նրա դեսպան Մորգենթաուի մասին՝ անվանելով նրան «հրեա Մորգենթաու», իսկ նրա ներկայացրած երկիրը՝ «կոռունպացված Միացյալ Նահանգներ»: Հիմնական պատճառն այն էր, որ ԱՄՆ-ի դեսպանը փորձում էր միջամտել հայերի օգտին: Պատճառներից մյուսն էլ այն էր, որ իր հուշերում Մորգենթաուն զեներալ Շելլենդորֆին անվանել է «չար ոգի», որը միջամտում էր Թուրքիայի ներքին գործերին՝ ազդելով կառավարության ընդունած որոշումների վրա: Նա ոչ միայն անմիջական մասնակցություն էր ունեցել հայերի տեղահանությունների իրագործման ծրագրին, այլև ձգտում էր այն կիրառելու նաև հույն բնակչության նկատմամբ: Շելլենդորֆը հայերին համարում էր «քարոզիչներ», որոնց Թուրքիայում ավելի շատ էին առում, քան նույնիսկ «ամենավատ հրեաներին»: Հայերի մասին գրում էր, որ հայը շատ նման է հրեայի, որն «փր հայրենիքի սահմաններից դուրս ապրող մակաբույժ է և ծծում է ընդունող երկրի ժողովրդի ոսկրածուծը»: Տարիների ընթացքում հայերը հեռացել են իրենց բուն հայրենիքից, ինչպես որ Լեհաստանի հրեաները գաղթել են Գերմանիա և ընդգրկվել վաշխաառուական գործունեության մեջ:¹¹⁹

Երիտթուրքերի հետ համագործակցող երեք գերմանացի ծովակալներից մեկը՝ Գվիլդո ֆոն Ուսեդոմը, ապահովում էր նեղուցների պաշտպանությունը: Սկզբնական շրջանում նա նշանակվել էր ծովափնյա հրետանու և ականապատման գլխավոր տեսուչ, իսկ հետագայում դարձավ նեղուցների պաշտպանության հատուկ ծովային ուժերի հրամանատարը: Ծովակալի հետ ունեցած մի շարք հանդիպումներից մեկի ժամանակ, որը տեղի էր ունեցել պատերազմի սկսվելուց առաջ, դեսպան Մորգենթաուն բարձրացրեց Էզեյան ծովի ծովափնյա շրջաններից հարյուր հազար հույների տեղահանության հարցը: Ծովակալը խոստովանում էր, որ դա տեղի է ունեցել գերմանացիների խորհրդով: Իսկ ինչ վերաբերում է հայերի տեղահանություններին, դեսպանը գրում է. «Ուսեդոմը քննարկում էր այդ հարցն այնպիսի սառնասրտությամբ, որ որևէ մեկը նույնիսկ չէր կարող կռահել նրա ասածներից, որ խոսքը միլիոնավոր մարդկային էակների կյանքի մա-

¹¹⁹ Տե՛ս **Dadrian Vahakn D.**, *The History of the Armenian Genocide. Ethnic Conflict from the Balkans to Anatolia to the Caucasus*, Providence, RI: Berghahn Books, 1995, էջ 259-260:

սին է, այլ ոչ թե ռազմական խնդրի»: Ծովակալն ասում էր Մորգենթաուին, որ հայերը «խոչընդոտ էին գերմանական հաջողության ճանապարհին», և նրանց «տեղահանությունը» անհրաժեշտություն էր:¹²⁰

1914 թ. գարնան սկզբին Արևմտյան Անատոլիայում սկսված ոչ մահմեդական բնակչության «մաքրման գործողությունները», հատկապես՝ օսմանյան հույների արտաքսումը, զգալի ընդհանրություններ ունեին հետագայում՝ Առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում, «անատոլիական հայերի մաքրման» հետ: Թեև ուղղակի ապացույց գոյություն չուներ, որ այդ «առանձին մաքրման գործողությունները» մի ընդհանուր ծրագրի մաս էին կազմում, սակայն կարելի էր «շարունակականություն» նկատել երկու իրադարձությունների միջև, մասնավորապես՝ կազմակերպման ընդհանուր գծերի և նույն մարդկանց ընդգրկվածության առումով: Իր հուշերում Մորգենթաուն գրում է, որ Կոստանդնուպոլսի ոստիկանապետ Բեդրին ասում էր դեսպանի քարտուղարներից մեկին, որ «թուրքերն այնպիսի հաջողությամբ արքայազնի հույներին, որ որոշեցին նույն միջոցը կիրառել կայսրության մյուս ազգությունների նկատմամբ»:¹²¹ Մորգենթաուն նշում է, որ Եվրոպական տերությունների անտարբերությունը զգալի դեր խաղաց թուրքական կառավարության կողմից տեղահանություններն արևմտահայության հանդեպ ավելի ընդգրկուն և ավելի վայրագ ձևերով իրականացնելու գործում:¹²² Միացյալ Նահանգների դեսպանը «ամեն կերպ աշխատում է այս հարցում փոքրացնել ԱՄՆ-ի լռության դերը, չի հիշատակում այդ մասին և միայն խոսում է Եվրոպայի անտարբերության մասին», որը զգալի դերակատարություն էր ունեցել «թուրքական կառավարողներին նոր ոճրագործությունների քաջալերելու գործում»:¹²³

Ըստ Թաներ Աքչամի՝ ինչպես հույների, այնպես էլ հայերի դեպքում իշխանություններն օգտագործում էին նույն մեթոդները. արքայն ու տեղահանություններն իրականացվում էին ոչ միայն «օրինական», այլև ոչ պաշտոնական միջոցներով, երբ «սովերային» կազմակեր-

¹²⁰ Տե՛ս նույն տեղը, էջ 263:

¹²¹ **Morgenthau Henry**, *Ambassador Morgenthau's Story*, p. 323.

¹²² Տե՛ս նույն տեղը, էջ 323-325:

¹²³ Տե՛ս **Կիրակոսյան Ջ. Ս.**, *Առաջին համաշխարհային պատերազմը և արևմտահայությունը, 1914-1916 թթ.*, Եր., «Հայաստան» հրատարակչություն, 1967, էջ 280:

պուրջումը հարձակումներ էր գործում և սհաբեկում կայսրության քրիստոնյաներին: Հույների և հայերի նկատմամբ իրագործված դաժանությունների միջև գոյություն ունեին «զարմանալի գուգահեռներ», ինչպիսիք են հատուկ գործողություններ իրականացնելու միավորների ստեղծումն ու զորակոչիկների հավաքագրումն աշխատանքային ջոկատներում:¹²⁴ Դեսպան Մորգենթաուն իր զեկույցներում նշում էր, որ երիտթուրքական կառավարությունն օգտագործել է նույն մեթոդները 1913 ու 1914 թթ. հույների և 1915 թ. հայերի տեղահանությունների ընթացքում: Իշխանությունները սկսեցին հույների զորակոչից, այնուհետև նրանց քշեցին աշխատանքային ջոկատներ. աշխատեցնում էին նրանց ճանապարհների շինարարության համար Կովկասում և մյուս ճակատներում: Ինչպես և հայերը, այդ հույները ևս հազարներով մահացան ցրտից, սովից և այլ տանջանքներից: Նրանց հավաքում էին և խմբերով տեղափոխում ներքին շրջաններ: Թեև մեթոդները նույնն էին, սակայն հույները չենթարկվեցին համատարած կոտորածների, ինչպես դա տեղի ունեցավ հայերի պարագայում:¹²⁵

Դեռևս 1913 թ. հայկական բարենորոգումների բանակցությունների ժամանակ Օսմանյան կայսրությունում Գերմանիայի դեսպան Վանգենհայմն ասում էր Ավստրո-Հունգարիայի ռազմական ներկայացուցիչ, փոխմարշալ Յոզեֆ Պոմյանկովսկուն, որ Թուրքիայում հայերի միակ փրկությունը նրանց կողմից իսլամի ընդունումն էր: Մորգենթաունի հետ ունեցած զրույցների ընթացքում Վանգենհայմը սովորաբար արտահայտվում էր հայերի դեմ՝ սկսած «ընդամենը հակակրանքից» մինչև «բացահայտ ատելություն»: Կրկնելով երիտթուրքերի մեղադրանքները հայերի դեմ՝ Վանգենհայմն ասում էր Մորգենթաունին, որ «հայերը պարզապես դավաճան մակաբույծներ են»: Փորձելով սիրաշահել Մորգենթաունին՝ նա խոստովանում էր, որ կօգնի սիոնիստներին, սակայն ոչինչ չի անի հայերի համար: Նշում էր, որ Միացյալ Նահանգները միակ երկիրն էր, որը հետաքրքրված էր ու միջնորդում էր հայերի համար՝ հանդիսանալով միակ պատասխանատուն նրանց բախտի համար: Նա նաև նշում էր, որ քանի որ Միացյալ

¹²⁴ Տե՛ս **Akcam Taner**, *The Young Turks' Crime against Humanity. The Armenian Genocide and Ethnic Cleansing in the Ottoman Empire*, Princeton and Oxford, Princeton University Press, 2012, էջ 95-96:

¹²⁵ Տե՛ս **Morgenthau Henry**, *Ambassador Morgenthau's Story*, էջ 324-325:

Նահանգները ռազմամթերք է վաճառում Անգլիային և Ֆրանսիային, Գերմանիան որևէ բան չի կարող անել հայերի համար: Թեև Մորգենթաուն փորձում էր ազդել Գերմանիայի դեսպանի զգացմունքների վրա՝ ասելով, որ հարյուր հազարավոր հայ կանանց և երեխաների վրա հարձակումները չեն կարող լինել «ռազմական անհրաժեշտություն», այլ ներկայացնում են միմիայն «մարդկային խնդիր», Վանզենհայնը կրկնում էր, որ չի միջամտելու, քանի որ «մեր նպատակն այս պատերազմը հաղթելն է»:¹²⁶

Մորգենթաուն շարունակ փորձում էր համոզել Վանզենհայնին համագործակցել իր հետ հայերի պաշտպանության հարցում: Գերմանիայի դեսպանը պատասխանում էր, որ մյան վտանգ չի տեսնում և, փոխելով խոսակցության թեման, նշում, որ վերջին յոթ ամիսների ընթացքում Միացյալ Նահանգների կառավարությունը 290 միլիոն դոլարի ռազմական սարքավորումներ է առաքել Անտանտի պետություններին: Նա շեշտում էր, որ «Կոստանդնուպոլսի ռմբակոծությանը հավանաբար կհետևեն կոտորածներ»:¹²⁷

Դեսպան Մորգենթաունի հետ ունեցած գրույցների ընթացքում Հայկական հարցի վերաբերյալ նույնպիսի «անկեղծությամբ և դաժանությամբ» էր արտահայտվում Գերմանիայի դեսպանության ռազմածովային կցորդ, դեռևս Բեռլինից Էնվեր փաշայի մտերիմ բարեկամ Հանս Հումանը: Հիմնվելով թուրքերի և Թուրքիայի մասին իր «գիտելիքների» վրա՝ նա եզրակացնում էր. «Հայերն ու թուրքերը չեն կարող միասին ապրել այս երկրում: Այս ազգերից մեկը պետք է հեռանա: Եվ ես թուրքերին չեմ մեղադրում այն բանի համար, թե ինչ են իրենք անում հայերի հետ: Ես կարծում եմ, որ այդ գործողություններն ամբողջովին արդարացված են: Ավելի թույլ ազգը պետք է մահանա»:¹²⁸

Երբ 1915 թ. հունվարի սկզբին Մորգենթաուն իր մտահոգությունն է արտահայտում երիտթուրքական ղեկավարներին հայերի նկատմամբ տարվող քաղաքականության վերաբերյալ, վերջիններս իրենց զայրույթն են հայտնում դեսպանի՝ կայսրության քրիստոնյաների հար-

¹²⁶ Տե՛ս **Dadrian Vahakn D.**, *The History of the Armenian Genocide. Ethnic Conflict from the Balkans to Anatolia to the Caucasus*, էջ 270-271:

¹²⁷ Տե՛ս Library of Congress, Division of Manuscripts, Papers of Henry Morgenthau, Sr., Diary, 1915, March 26:

¹²⁸ **Morgenthau Henry**, *Ambassador Morgenthau's Story*, pp. 375-376.

ցերին միջամտելու, ինչպես նաև նրանց պաշտպանության համար ամերիկյան ռազմաճակատներն օգտագործելու կապակցությամբ: Իրականում Մորգենթաուն ասել է Ավստրո-Հունգարիայի դեսպան Յոհան ֆոն Պալավիչիին¹²⁹, որ եթե գերմանացիները խրախուսեն կոտորածները, և եթե դրանք տեղի ունենան, «վախենում եմ, որ Միացյալ Նահանգները նավեր կուղարկի դրանք կանխելու համար»:¹³⁰

Մշտապես ցանկություն արտահայտելով լավ հարաբերություններ պահպանել Միացյալ Նահանգների և Վիլսոնի վարչակազմի հետ՝ երիտթուրքական ռեժիմը միաժամանակ չարաշահում էր ամերիկյան չեզոքությունը՝ սպառնալով փակել Օսմանյան կայսրությունում տեղակայված ամերիկյան հաստատությունները: Թալեաթ փաշայի հետ իր հանդիպումների ժամանակ Մորգենթաուն պարբերաբար խնդրում էր, որ թուրքական իշխանությունները շարունակեն վերաբերվել ամերիկյան հաստատություններին այնպես, ինչպես ԱՄՆ-ի կառավարությունն էր վերաբերվում Միացյալ Նահանգներում գործող օտարերկրյա հաստատություններին:¹³¹

Թուրքական իշխանություններին անհանգստացնում էին ամերիկացիների և հայերի միջև հաստատված մտերիմ հարաբերությունները: Թուրք ազգայնականների համոզմամբ՝ ամերիկյան կրթական և միսիոներական հաստատությունների աշխատանքը հայ համայնքների հետ վտանգում էր ազգային ինքնիշխանությունը, մասնավորապես՝ Սարիղամիշի և Սիմայի պարտությունների ֆոնի վրա: Ըստ Մորգենթաունի և դեսպանության իրավական խորհրդատու հայազգի Արշակ Շմավոնյանի¹³², սկսած 1915 թ. հունվարից, Թալեաթը դեպրեսիայի մեջ էր պատերազմի մեջ մտնելու կապակցությամբ ժողովրդական դժգոհության պատճառով: Այն խորացավ փետրվարին, երբ Կոս-

¹²⁹ **Յոհան ֆոն Պալավիչիին** (1848-1941)՝ Ավստրո-Հունգարիայի դիվանագետ, 1906-1918 թթ.՝ դեսպան Օսմանյան կայսրությունում:

¹³⁰ Տե՛ս **Payaslian Simon**, նշվ. աշխ., էջ 55:

¹³¹ Տե՛ս Library of Congress, Division of Manuscripts, Papers of Henry Morgenthau, Sr., Diary, 1915, January 23:

¹³² Մորգենթաուն Արշակ Շմավոնյանին նշանակել էր իր թարգմանիչ, քանի որ նա երկար տարիներ աշխատում էր դեսպանությունում՝ որպես իրավական խորհրդատու, և բավականին լավ էր տիրապետում Թուրքիայում ամերիկյան շահերի իրավական հարցերին (տե՛ս **Balakian Peter**, *The Burning Tigris. The Armenian Genocide and America's Response*, էջ 222-223):

տանդնուպոլսում տեղի ունեցած ցույցերի ժամանակ, տարածված լուրերի համաձայն, ավտոմեքենայից դուրս գալու պահին սպանվեց նրա թիկնապահը: Անձնական խնդիրներ կային նա երիտթուրքերի ղեկավարների՝ գերմանաձեռ էնվերի և Գերմանիայի թշնամիներին համակրող Ջեմալի միջև, ինչը կարող էր հանգեցնել իշխանության կորստի:¹³³

1915 թ. ապրիլի 26-ին պատրիարքարանում գումարված արտակարգ ժողովը որոշում կայացրեց հանդիպելու մեծ վեզիր Սաիդ Հալիմի և Թալեաթի հետ: Մերժելով պատրիարքի ղեկավարած պատվիրակության հայտարարությունն այն մասին, որ թուրքական կառավարությունը չի վստահում հայ ժողովրդին, Սաիդ Հալիմը պնդում է, որ տեղի ունեցած ձերբակալությունների հիմնական պատճառն անվտանգությունն է: Թալեաթի հետ հանդիպումը նույնպես ապարդյուն անցավ: Պատվիրակության մեկնումից անմիջապես հետո Թալեաթի հետ հանդիպում է ունեցել Մորգենթաուն: Նախարարը համոզված հայտարարել է, որ «որոշել է ոչնչացնել բոլոր այն ընկերություններն ու կազմակերպությունները», որոնք վտանգ են ներկայացնում պետության համար: Թալեաթը նշում էր, որ, ժամանակին լինելով հեղափոխականների առաջնորդ, լավ գիտի մնան շարժումների հնարավորությունները: Մորգենթաուն իր հուշերում գրում է, որ, «զգալիորեն վախեցած լինելով հնարավոր հեղափոխությունից», երիտթուրքերը նպատակադրվել էին բոլոր միջոցներով կանխել այն:¹³⁴

Ներկայացնելով չեզոք տեղություն՝ Մորգենթաուն մնում էր միակ դեսպանը, որը հետաքրքրություն էր ցուցաբերում հայերի պաշտպանության հարցի նկատմամբ: Պատրիարքը մշտապես իր վստահությունն էր արտահայտում Միացյալ Նահանգների դեսպանին՝ միաժամանակ նշելով, որ «նա իրեն զգուշավոր է պահում և չի ցանկանում ուղիղ կապի մեջ մտնել [պատրիարքարանի հետ]՝ կասկածների տեղիք չտալու նպատակով»:¹³⁵ Մայիսի 17-ին Կոմիտաս վարդապետը, որը կարողացել էր վերադառնալ Կոստանդնուպոլիս, այցելել է Մոր-

¹³³ St' u Library of Congress, Division of Manuscripts, Papers of Henry Morgenthau, Sr., Diary, 1915, January 18; February 22, 23, 27; March 15:

¹³⁴ St' u Library of Congress, Division of Manuscripts, Papers of Henry Morgenthau, Sr., Diary, 1915, April 26, 27:

¹³⁵ St' u **Der Yeghiayan Zaven**, նշվ. աշխ., էջ 58:

գենթաուին, շնորհակալություն հայտնել վերջինիս միջամտության համար և տեղեկացրել, որ մայրաքաղաքում ձերբակալվածներից և արտրվածներից միայն իրեն և ևս մի քանիսին են միայն ազատել:¹³⁶

Ըստ Մորգենթաուի՝ 1915 թ. հուլիսի վերջին կայսրության կյանքը խաղաղ չէր ո՛չ արտաքին աշխարհում, ո՛չ էլ իր ներքին շրջաններում. լուրջ հակասություններ էին սկսվել երիտթուրքերի կառավարության անդամների միջև: Մորգենթաուն նկատում էր, որ հարաբերությունները լարվել էին նույնիսկ Թալեաթի և Էնվերի միջև: Էնվերը վստահեցնում էր Գերմանիայի և Ավստրո-Հունգարիայի դեսպաններին, որ Թալեաթը պատասխանատու է հայերի դեմ իրագործած «ծայրահեղ միջոցների» համար, և ինքը դրանց դեմ է հանդես եկել: Ըստ Էնվերի՝ Թալեաթն իր «կամակատարներին» է նշանակել նահանգների ուժային պաշտոններում, որոնք անտեսում էին կառավարության տարբեր գերատեսչությունների հրահանգները՝ բացի իր հրամաններից: Ի վերջո, նրանք սկսեցին անտեսել նաև ներքին գործերի նախարարության հրամանները: Նման «չնախատեսված» ապակենտրոնացումն Էնվերը համարում էր «վնասակար» կենտրոնական կառավարության շահերի համար:¹³⁷

Ըստ Մորգենթաուի՝ թուրք ղեկավարները հասկացել էին նաև իրենց քաղաքականության «վնասակար հետևանքները» երկրի տնտեսության համար: «Նրանք հանել էին դաշտերից տղամարդկանց և այդպիսով քանդել իրենց գյուղատնտեսական համայնքները: Նրանք ոչնչացրել էին կամ տեղահանել հայկական բնակչության առնվազն երկու երրորդը և այդպիսով զրկվել շատ խելացի... և օգտակար ազգից»:¹³⁸

1915 թ. հունվարին և փետրվարին Մորգենթաուն սկսեց «պատկերավոր, սակայն հատվածական» տեղեկատվություն ստանալ Օսմանյան կայսրությունում աշխատող ԱՄՆ-ի հյուպատոսներից: Սկզբում նա մտածում էր, որ հայերի նկատմամբ տեղի ունեցած վայ-

¹³⁶ Stú Library of Congress, Division of Manuscripts, Papers of Henry Morgenthau, Sr., Diary, 1915, May 15, 16, 17; **Thomas Patrick**, *Remembering the Armenian Genocide, 1915*, Orsaf: Gwazg Carreg Gwalch, 2015, էջ 94:

¹³⁷ Stú Library of Congress, Division of Manuscripts, Papers of Henry Morgenthau, Sr., Diary, 1915, July 24:

¹³⁸ NA Microfilm Publications, Microcopy No. 353, Records of the Department of State Relating to Internal Affairs of Turkey, 1910-1929, Roll 6, NA/RG 59/867.00/797.5, pp. 1-8.

րագությունները բացատրվում են պատերազմական շրջանին բնորոշ վայրագությամբ: Այդ կարծիքն ամրապնդվում էր Թալեաթի հավաստիացումներով այն մասին, որ տեղի ունեցածը «անհսկելի տարրերի» կողմից կազմակերպված բռնություններ են, որոնց շուտով վերջ է դրվելու: Երբ կոտորածները սկսվեցին, թուրքական իշխանությունները միջոցներ ձեռնարկեցին Մորգենթաուի փոստային կապն իր հյուպատոսների հետ խափանելու ուղղությամբ և գրաքննության ենթարկեցին նրանց նամակները: Միաժամանակ դեսպանը չէր ցանկանում տեղեկություններ տրամադրել Պետքարտուղարությանը, որոնք հիմնված չէին իրական փաստերի վրա, սակայն երբ համեմատեց հայերի և միսիոներների վկայությունները հյուպատոսների՝ տարբեր եղանակներով իրեն հասած զեկույցների հետ, հանգեց այն եզրակացությանը, որ Թուրքիայում տեղի է ունենում «ազգասպանություն» (race murder):¹³⁹

Նկատելով թուրքերի զգայունությունն արտաքին աշխարհի կարծիքի հանդեպ՝ Մորգենթաուն «խնդրում էր» իր ղեկավարներին մի կողմ դնել դիվանագիտական ձևականություններն ու ուղիղ դիմել թուրքական կառավարությանը՝ «մարդկության անունից» դադարեցնելու սպանությունները: Նա նույնպես հորդորում էր ԱՄՆ-ի կառավարությանը՝ համոզելու Գերմանիայի կայսրին կանգնեցնել «քրիստոնյա ազգի ոչնչացումը» թուրքերի կողմից: Նա կոչ էր անում Վաշինգտոնին ճնշում գործադրելու թուրքերի վրա, որպեսզի նրանք թույլ տան օգնություն ցուցաբերել տեղահանված հայերին, որոնք գտնվում էին անապատում՝ սովամահության վտանգի առջև:¹⁴⁰ Սակայն քանի որ ամերիկացիների կյանքը վտանգված չէր տեղի ունեցող սարսափների պատճառով, իսկ ամերիկյան չեզոքությունը պատերազմի ընթացքում պահպանվում էր, Վաշինգտոնն այդպես էլ չարձագանքեց Մորգենթաուի առաջարկներին:

Ինչպես գրում է Սամանթա Փաուերը¹⁴¹, Կոստանդնուպոլսում ԱՄՆ-ի դեսպան Հենրի Մորգենթաուն գործունե կերպով արձագանքեց

¹³⁹ Տե՛ս **Power Samantha**, նշվ. աշխ., էջ 5-6:

¹⁴⁰ Տե՛ս **Morgenthau Henry III.**, *Mostly Morgenthau: A Family History*, New York, Ticknor&Fields, 1991, էջ 170:

¹⁴¹ **Սամանթա Փաուեր** (ծնվել է 1970 թ.)՝ ԱՄՆ-ի դիվանագետ, քաղաքագետ և լրագրող, 2013-2017 թթ.՝ ՄԱԿ-ում մշտական ներկայացուցիչ, Պուլիցերյան մրցանակի դափնեկիր (2003):

Թուրքիայի կողմից արևմտահայության տեղահանությանն ու սպանողին՝ հորդորելով պաշտոնական Վաշինգտոնին դատապարտել Թուրքիային և այդ հարցով ճնշել նրա՝ պատերազմում դաշնակից Գերմանիային: Մորզենթաուն նաև փորձեց մի կողմ դնել դիվանագիտական սկզբունքներն ու անձնապես սկսեց բողոքել վայրագությունների դեմ, դատապարտել իշխանություններին և դրամահավաք կազմակերպել մարդասիրական օգնություն ցուցաբերելու նպատակով: Հետագայում նա միացավ նախկին նախագահ Թեոդոր Ռուզվելտին¹⁴²՝ պահանջելով Վուդրո Վիլսոնի վարչակազմին մտնել համաշխարհային պատերազմի մեջ և ուժով կանգնեցնել սպանող: Սակայն Միացյալ Նահանգները, հարազատ մնալով չեզոքության սկզբունքին, այդպես էլ չմիջամտեց Թուրքիայի ներքին գործերին:¹⁴³

Միացյալ Նահանգների չեզոքության քաղաքականությունը սկսեց որոշակի փոփոխությունների ենթարկվել դեսպան Մորզենթաուի՝ Հայկական հարցում «դիվանագիտական միջամտություն քարոզելու» հետևանքով, չնայած Պետքարտուղարությունն իր հրահանգներով սահմանափակում էր վերջինիս դիվանագիտական ակտիվությունը: Նրա գործունեությունը սահմանափակվում էր երկու հիմնական պատճառներով: Առաջին՝ Վիլսոնի վարչակազմը որոշում էր կայացրել չներքաշվելու Առաջին համաշխարհային պատերազմի մեջ: Երկրորդ՝ որպես դեսպան՝ նա իրավունք չունեւր միջամտելու ընդունող երկրի ներքին գործերին, եթե ԱՄՆ-ի շահերը վտանգված չէին: Թեև նա տեղեկացնում էր պետքարտուղարին, որ Թուրքիայում զոյություն ունի «հայ ազգը ջախջախելու համակարգված ծրագիր», սակայն թուրքական իշխանությունները մշտապես զգուշացնում էին, որ դեսպանն իրավունք չունի միջամտելու երկրի ներքին գործերին:¹⁴⁴

1915 թ. հունիսին պետքարտուղարի պաշտոնում նշանակված Ռոբերտ Լանսինգն արդարացնում էր ԱՄՆ-ի «չմիջամտողականության» քաղաքականությունը հայերի օգտին՝ հիմնվելով երկու իրավական սկզբունքների վրա: Առաջին՝ Միացյալ Նահանգները չէր կարող

¹⁴² Թեոդոր Ռուզվելտ (1858-1919)՝ ԱՄՆ-ի քաղաքական գործիչ, գրող, պատմաբան, Նյու Յորքի մահանգապետ, 26-րդ նախագահ (1901-1909)՝ հանրապետական կուսակցությունից:

¹⁴³ Տե՛ս Power Samantha, նշվ. աշխ., էջ XIX:

¹⁴⁴ Տե՛ս նույն տեղը, էջ 6-7:

միջամտել Թուրքիայի ներքին գործերին, մինչև ԱՄՆ-ի քաղաքացիների կյանքն ու ունեցվածքը վտանգված չլինեին: Հայերն օսմանյան հպատակներ էին, և Միացյալ Նահանգները կարող էր միայն բողոքել թուրքական իշխանությունների ու բնակչության կողմից նրանց նկատմամբ դրսևորած վերաբերմունքի դեմ: Միաժամանակ Լանսինգը վստահ էր, որ միայն բողոքների միջոցով հնարավոր չէ «մեղմել իրավիճակը»: Լանսինգը նաև համարում էր, որ ազգային անվտանգությունը, շահն ու ինքնիշխանությունը գերիշխող էին միջազգային իրավունքի և սկզբունքների, ինչպես նաև համամարդկային և մարդասիրական արժեքների նկատմամբ: Ազգային անվտանգության և ինքնապաշտպանության անվան տակ կազմակերպված վայրագություններն այդպիսով կարող էին արդարացվել ինքնիշխանության հիմքի վրա: Լանսինգը համոզված էր, որ Թուրքիայի հայերին ուղիղ աջակցության ցուցաբերումը դժվար է, քանի որ «հայերի զգալի հատված գտնվում է զինված ապստամբության մեջ թուրքական կառավարության դեմ», և թուրքական կառավարությունն արդարացված է համարում անհրաժեշտ միջոցների կիրառումն իր ինքնապաշտպանության համար:¹⁴⁵

Սակայն ոչ բոլորն էին համամիտ Լանսինգի հետ: Էդվարդ Հաուզը նշում է, որ «Լանսինգն արտահայտում էր հետաքրքիր մի միտք. նա հավատացած էր, որ նույնիսկ դաժանության որևէ տեսակ թույլատրելի է, եթե առնչվում է ազգային անվտանգությանը», և որ «դաժանություններ իրագործող ազգի զինվորական իշխանությունները» իրենք պետք է որոշեն, թե նման միջոցներն անհրաժեշտ են ազգային անվտանգության համար:¹⁴⁶

Ալնհայտ է, որ Վիլսոնի վարչակազմի չեզոքության քաղաքականության սկզբունքները լիովին համընկնում էին երիտթուրքական իշխանությունների՝ Օսմանյան կայսրության հայ բնակչության ոչնչացման ծրագրերին: Քանի դեռ ամերիկացիները Թուրքիայում վտանգված չէին, Լանսինգն առանձնապես հետաքրքրված չէր Հայկական

¹⁴⁵ Տե՛ս U.S. Department of State. *Papers Relating to the Foreign Relations of the United States, 1915, Supplement, The World War*, էջ 984-985:

¹⁴⁶ Տե՛ս **Willis James F.**, *Prologue to Nuremberg: The Politics and Diplomacy of Punishing War Criminals of the First World War*, Westport, CT: Greenwood Press, 1982, էջ 41:

հարցով:¹⁴⁷

Միաժամանակ Միացյալ Նահանգների հայ համայնքի ներկայացուցիչները դիմումներ էին ներկայացնում Վիլսոնի վարչակազմին և Կոնգրեսին՝ «ավելի մեծ ուշադրություն դարձնելու իրենց հայրենիքում ընտանիքների և հայրենակիցների նկատմամբ իրագործված դաժանություններին»: Այս շարժման ղեկավար դեմքերից էր Սան Ֆրանցիսկոյի՝ 1915 թ. համաշխարհային ցուցահանդեսում Թուրքիայի տաղավարի ներկայացուցիչ Վահան Քարդաշյանը, որը հետագայում Միհրան Սվազլյանի (Սվազլի) հետ Բոստոնում հիմնեց Ամերիկայի հայ ազգային պաշտպանության միությունը (Armenian National Defense Union of America): Պետքարտուղար Լանսինգին ուղղված մամակում Քարդաշյանը գրում էր, որ երիտթուրքերը, օգտվելով պատերազմական իրավիճակից, պատմական Հայաստանի տարածքում կազմակերպեցին հայերի տեղահանությունն ու կոտորածները՝ նպատակադրվելով լուծել Հայկական հարցն ազգի ոչնչացման միջոցով: Քարդաշյանն առաջարկում էր Լանսինգին կոտորածը դադարեցնելու նպատակով դիմել Բեռլինին՝ համոզված լինելով, որ եթե նախագահ Վիլսոնը դիմի Գերմանիայի կայսրին այս հարցով, ապա հնարավոր է, որ զարգացումներն ընթանան «ճիշտ ուղղությամբ»:¹⁴⁸

Լանսինգը փոխանցել էր այդ մամակը Վաշինգտոնում Գերմանիայի դեսպան կոմս Բեռնարդոֆին¹⁴⁹: Մեկ ամիս անց Գերմանիայի դեսպանը պատասխանել էր Լանսինգին, որ, չնայած տարբեր նահանգներում հայերի պաշտպանությունն ապահովելու վերաբերյալ նահանգապետերի կողմից տրված խոստումներին, իշխանությունների քաղաքականությունը շարունակվում է: Որպես օրինակ նա ներկայացնում էր Տրասպիզոնում Գերմանիայի հյուպատոսի զեկուցագիրը, որի համաձայն՝ նահանգապետի խոստումը չէր կատարվել: Իր հերթին Մորգենթաուն զեկուցում էր, որ նույնիսկ գերմանական կառավարությունն էր բողոքում հայերի դեմ ուղղված «միջոցառումների» առնչությամբ, սակայն բոլոր այդ փորձերը մատնվում էին անհաջողության: Գերմանիայի դեսպանությունը հանձնարարություն էր

¹⁴⁷ Տե՛ս Payaslian Simon, նշվ. աշխ., էջ 77-78:

¹⁴⁸ Տե՛ս NA/RG 59/867.4016/81:

¹⁴⁹ **Յոհան ֆոն Բեռնարդոֆ** (1862-1939)՝ Գերմանիայի քաղաքական գործիչ և դիվանագետ, դեսպան ԱՄՆ-ում (1908-1917) և Օսմանյան կայսրությունում (1917-1918):

ստացել դիմելու Բարձր Դռանը՝ դադարեցնելու «սարսափելի տեղահանություններն» ու կատարելու «հնարավոր փոխհատուցումներ»:¹⁵⁰

1915 թ. սեպտեմբերի 23-ին կոնգրեսմեն Ռիչարդ Օսթինը¹⁵¹ Պետքարտուղարությանն է փոխանցում Ամերիկայի հայ ազգային պաշտպանության միության գործադիր կոմիտեի նամակը՝ Օսմանյան կայսրությունում «հայ ժողովրդի ոչնչացման» մասին: Նամակում նշվում է, որ Միացյալ Նահանգները միակ մեծ չեզոք տերությունն է, որ կարող է փրկել ոչնչացումից մի ողջ ժողովրդի:¹⁵² Պետքարտուղարի պաշտոնակատար Ֆրենկ Փոլկը¹⁵³, կրկնելով Միացյալ Նահանգների դիրքորոշումը, պատասխանում է, որ թուրքական կայսրության հայ քրիստոնյաների հարցում Պետքարտուղարությունը շարունակելու է հանդես բերել չեզոք երկրի քաղաքականություն:¹⁵⁴ Իսկ Էլվի Էյդին¹⁵⁵ պատասխանում է Սվազլանդին, որ դեսպան Մորգենթաուն առաջին իսկ օրերից համոզում է թուրքական կառավարությանը կանգնեցնել հայերի հանդեպ իրագործվող քաղաքականությունը, որի շնորհիվ հնարավոր եղավ որոշ չափով մեղմել կառավարության կողմից տրվող հրահանգների կատարումը: Էյդին կրկնում էր Փոլկի հայտարարությունները Միացյալ Նահանգների չեզոքության մասին՝ միաժամանակ նշելով, որ Մորգենթաուն հանձնարարություն է ստացել Պետքարտուղարությունից զգուշացնելու Բարձր Դռանը, որ հայերի նկատմամբ իրականացվող քաղաքականությունը դժգոհություն և քննադատություն է առաջացրել ամերիկյան հասարակայնության շրջանում, ինչը բացասական ազդեցություն է ունենալու Թուրքիայի հանդեպ ամերիկյան ժողովրդի ունեցած վերաբերմունքի վրա:¹⁵⁶

Օսմանյան կայսրությունում հայերի վիճակի մասին Պետքարտու-

¹⁵⁰ Տե՛ս NA/RG 59/867.4016/81:

¹⁵¹ **Ռիչարդ Օսթին** (1857-1919)՝ ԱՄՆ-ի Ներկայացուցիչների պալատի անդամ Թենեսի նահանգից, հանրապետական կուսակցության անդամ:

¹⁵² Տե՛ս NA/RG 59/867.4016/141:

¹⁵³ **Ֆրենկ Փոլկ** (1871-1943)՝ ԱՄՆ-ի դիվանագետ, իրավաբան, պետքարտուղարի պաշտոնակատար (1919-1920), պատվիրակության ղեկավար Փարիզի խաղաղության կոնֆերանսի աշխատանքների ընթացքում՝ նախագահ Վիլսոնի և պետքարտուղար Լանսինգի մեկնումից հետո:

¹⁵⁴ Տե՛ս NA/RG 59/867.4016/144:

¹⁵⁵ **Էլվի Էյդի** (1842-1924)՝ ԱՄՆ-ի դիվանագետ, 1886-1924 թթ.՝ պետքարտուղարի օգնական:

¹⁵⁶ Տե՛ս NA/RG 59/867.4016/151:

ղարությանն ուղղված քաղաքացիների հարցումների թիվն այնքան էր մեծացել, որ 1915 թ. հոկտեմբերի 26-ին Լանսինգը պատասխանի օրինակ էր ներկայացրել նախագահ Վիլսոնի անձնական քարտուղար Ջոզեֆ Թամպլիին: Օրինակելի այդ նամակում նշվում էր, որ իրադարձությունների սկզբից դեսպան Հենրի Մորգենթաուն շարունակաբար բողոքում էր թուրքական կառավարությանը հայերի հանդեպ իրագործվող քաղաքականության պատճառով, որի շնորհիվ հնարավոր եղավ որոշ չափով մեղմել կառավարության կողմից նախկինում տրված արտաքսմանը վերաբերող հրահանգները: Նշվում էր, որ դեսպանը շարունակելու է չեզոքության քաղաքականությանը համապատասխան թուրքական կայսրության հայերի օգտին իրականացվող գործունեությունը: Նամակում գրված էր, որ Պետքարտուղարությունը հանձնարարել է դեսպանին տեղեկացնել թուրքական կառավարությանը, որ հայերի նկատմամբ իրականացվող քաղաքականության մասին տեղեկությունները համընդհանուր և անբարենպաստ քննադատություն են առաջացրել ամերիկյան ժողովրդի շրջանում, ինչը փչացնում էր ԱՄՆ-ի ժողովրդի դրական վերաբերմունքը Թուրքիայի հանդեպ:¹⁵⁷

Կարծիքներ էին հնչում նաև, որ ԱՄՆ-ի կառավարությունը պետք է ավելի խիստ միջոցներ ձեռնարկի թուրքական կառավարության նկատմամբ: Հոկտեմբերի 1-ին Հաուզը գրում է նախագահ Վիլսոնին, թե արդյոք կառավարությունը ինչ-որ կերպ չի՞ բողոքելու հայկական կոտորածների առիթով:¹⁵⁸

1915 թ. սեպտեմբերի վերջին Նյու Ջերսիի հայկական պատվիրակությունը ցանկություն էր հայտնել հանդիպելու նախագահ Վիլսոնին և քննարկելու հայկական կոտորածներին ու փախստականներին օգնություն տրամադրելուն վերաբերող հարցեր: Վիլսոնը սկզբում համաձայնել էր, սակայն այնուհետև՝ մերժել հանդիպել պատվիրակության հետ: Հայտնի գործարար, նախկինում Նյու Յորքում Պարսկաստանի գլխավոր հյուպատոս Հայկազուն Թովասյանը Վիլսոնին գրած նամակում խնդրում էր օգտագործել նախագահի հնարավորությունները

¹⁵⁷ St'u Library of Congress, Division of Manuscripts, Papers of Woodrow Wilson, Presidential Papers, 1915, October 26:

¹⁵⁸ St'u *The Papers of Woodrow Wilson*, 69 vols. / Ed. Arthur S. Link, Princeton, Princeton University Press, 1966-1994, vol. 35, էջ 3-4:

«մեծագույն եղեռնագործության» ենթարկվածներին օգնություն ցուցաբերելու հարցում: Մեկ շաբաթ անց իր գրած պատասխան նամակում Վիլսոնը, օգտագործելով Լանսինգի պատրաստած օրինակելի նամակի արտահայտությունները, նշում էր, որ Պետքարտուղարությունը գործադրում է դիվանագիտական բոլոր հնարավոր միջոցները՝ թուրքական կառավարության քաղաքականությունը փոփոխության ենթարկելու համար:¹⁵⁹

1915 թ. դեկտեմբերի 7-ին Կոնգրեսին ուղղված իր ուղերձում նախագահ Վիլսոնը վերահաստատեց իր չեզոքության քաղաքականությունը, պանամեթիկանիզմի գաղափարներն ու իր հաստատականությունը՝ զարգացնելու արտաքին աշխարհի հետ առևտրական հարաբերությունները՝ երկրի տնտեսական դժվարությունները հաղթահարելու նպատակով:¹⁶⁰

Երբ 1915 թ. Օսմանյան Թուրքիայում սկսվեց հայերի ցեղասպանությունը, ամերիկյան հասարակայնության մեծամասնությունը դեմ էր պատերազմին: Թուրքիայում կամ այլուր ամերիկյան միջամտությունը պաշտոնական Վաշինգտոնի օրակարգից դուրս էր: 1916 թ. Վուդրո Վիլսոնը կրկին շահեց նախագահական ընտրությունները, քանի որ կարողացավ չներքաշել երկիրը համաշխարհային պատերազմի մեջ: Թեև հետագայում նա ստիպված եղավ պատերազմ հայտարարել Գերմանիային, սակայն եվրոպական խնդիրներից «մեկուսացված» մնալու սկզբունքը շարունակում էր ուժեղ մնալ Միացյալ Նահանգներում, որի հետևանքով նախագահը չկարողացավ ապահովել Վերսալի պայմանագրի վավերացումը Մենատի կողմից: Թեև ԱՄՆ-ն շարունակում էր իր իմպերիալիստական քաղաքականությունն արևմտյան կիսագնդում, սակայն «Անատոլիան գտնվում էր այլ աշխարհում»: Միաժամանակ 1915 թ. ցեղասպանությունը բացեց ամերիկյան ազատականության սահմանները: Մի կողմից ազատականները քննադատում էին «ռազմածովային դիվանագիտությունն» ու միջազգային ոստիկանի գործառույթներ ստանձնելու հանգամանքը՝ որպես «ավազակություն» կամ հատուկ շահերի պաշտպա-

¹⁵⁹ St'u Library of Congress, Division of Manuscripts, Papers of Woodrow Wilson, Presidential Papers, 1915, October 22; 1915, October 28:

¹⁶⁰ St'u *The Papers of Woodrow Wilson*, 69 vols. / Ed. Arthur S. Link, Princeton, Princeton University Press, 1966-1994, vol. 35, էջ 293-310:

նություն: Սակայն մյուս կողմից ամերիկյան ազատականները միջամտություն էին պահանջում ցեղասպանական գործողությունների կանխարգելման կամ տեղի ունեցած ցեղասպանության վկայությունների հետևանքով: Ըստ Ջեյ Վինթերի՝ դա ճշմարտություն էր ինչպես Հայոց ցեղասպանության, այնպես էլ Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիների և հետագայում նաև Կամբոջայի, Ռուանդայի և Բոսնիայի համար:¹⁶¹

Այսպիսով, մինչև Առաջին համաշխարհային պատերազմի վերջը ԱՄՆ-ի կառավարությունը հետևողականորեն շարունակեց Օսմանյան կայսրության ներքին գործերին չմիջամտելու քաղաքականությունը՝ ավանդական դիրքորոշում, որը համբերատարությամբ կիրառվել էր նաև 1894-1896 և 1909 թթ. հայկական կոտորածների ընթացքում: Միացյալ Նահանգների դիվանագիտական գործողություններն առաջին հերթին ուղղված էին ամերիկյան միսիոներական և տնտեսական շահերի պաշտպանությանը: Գիվանագիտական խնդրահարույց հարց էր նաև 19-րդ դարի վերջում հայերի՝ կայսրությունից դեպի Միացյալ Նահանգներ գաղթելու հանգամանքը, որոնք մնում էին ԱՄՆ-ում այնքան ժամանակ, մինչև որ չէին ստանում ամերիկյան քաղաքացիություն: Հետագայում նրանք վերադառնում էին Օսմանյան կայսրություն և օգտվում ամերիկյան քաղաքացիների ու հաստատությունների համար գործող համապատասխան արտոնություններից: Այդ հանգամանքը խնդիրներ էր հարուցում, քանի որ թուրքական իշխանությունները չէին ճանաչում ԱՄՆ գաղթած օսմանյան հպատակների ամերիկյան քաղաքացիությունը: Ըստ Գոնալդ Բլոքսեմի՝ Միացյալ Նահանգների հասարակայնության՝ մերձավորարևելյան հարցերի վերաբերյալ հետաքրքրության աճը արտահայտվեց «տառապյալ քրիստոնյաներին» օգնելու նպատակով լայնածավալ դրամահավաքի կազմակերպմամբ:¹⁶²

Չնայած 1915-1917 թթ. ընթացքում ամերիկյան դիվանագիտության, միսիոներության և հասարակական կարծիքի կողմից թուրքական իշխանությունների նկատմամբ բարձրաձայնված քննադատությանն

¹⁶¹ Stéu **Winter Jay**, *Introduction. Witness to Genocide* // In: *America and the Armenian Genocide of 1915* / Edited by Jay Winter, Cambridge, Cambridge University Press, 2003, էջ 3:

¹⁶² Stéu **Bloxam Donald**, նշվ. աշխ., էջ 186:

ու մեղադրանքներին՝ Միացյալ Նահանգների քաղաքականությունը հավատարիմ մնաց «չմիջամտողականության» ընդհանուր սկզբունքին: Միաժամանակ, ըստ Դոնալդ Բլոքսհեմի, նման քաղաքականությունն ընտրողական էր և համապատասխան շահերից բխող: Հայաստանի և Թուրքիայի հանդեպ ամերիկյան քաղաքականությունը բացահայտ «կապիտալիստական» էր, այսինքն, «փոքր և ոչ անվտանգ» Հայաստանին սատարելու փոխարեն, այն հետագայում նախընտրեց տարածաշրջանային մեծ հնարավորություններ ունեցող «հակաբոլշևիկյան» ուժին՝ Թուրքիային: Ամերիկյան քաղաքական գործիչներն ու դիվանագետները կարողացան նսեմացնել Հայկական հարցի դերը, հակադրվել ներքին քարոզչությանը և հասարակական քարոզարշավ սկսել օսմանյան պատմությունը թուրքերի օգտին վերափոխելու նպատակով, ինչն ի վերջո ուղղված էր հայերի դեմ: Միաժամանակ թուրք ազգայնականներն արագորեն սովորեցին հաջողությամբ ճնշում գործադրել Պետքարտուղարության վրա Հայկական հարցի առնչությամբ: Ժամանակի ընթացքում «ընտրողական» ամերիկյան «չմիջամտողականության» քաղաքականությունը վերածվեց 1916-1916 թթ. դեպքերի «աղավաղման և չճանաչման հաճույակատար քաղաքականության»:¹⁶³

Ամերիկյան չեզոքության շրջանում Միացյալ Նահանգների և Թուրքիայի պաշտոնական հարաբերությունները վկայում են այն մասին, որ Միացյալ Նահանգները ձգտում էր «խիստ անկողմնակալություն» պահպանելու պատերազմի ընթացքում: Մի կողմից Միացյալ Նահանգները հրաժարվեց Թուրքիայի կողմից արտոնությունների ռեժիմի միակողմանի չեղյալ հայտարարումը ճանաչելուց, իսկ մյուս կողմից չճանաչեց Բրիտանիայի հայտարարությունը՝ Եգիպտոսի նկատմամբ խնամակալության և Եգիպտոսի խեղիվին սուլթանի կոչում շնորհելու մասին: Չճանաչված ամերիկյան կողմը պահանջել էր թուրք դեսպանին հեռանալ Միացյալ Նահանգներից հրապարակայնորեն Օսմանյան կայսրության փոքրամասնությունների հանդեպ ամերիկյան քաղաքականությունը քննադատելու և Ֆիլիպինների անկախության կողմնակիցների ու սևամորթերի հանդեպ քաղաքականությունը դատապարտելու համար, երկու երկրների միջև հաստատված դիվա-

¹⁶³ Տե՛ս նույն տեղը, էջ 24:

նագիտական հարաբերություններում պատերազմի ընթացքում լուրջ միջադեպեր չգրանցվեցին: 1917 թ. սկզբին հարաբերությունները դարձան առանձնակի ջերմ, եթե հաշվի չառնվի 1916 թ. մայիսին ԱՄՆ-ի խիստ բողոքը՝ թուրքական զինվորական հրամանատարության կողմից ամերիկյան միսիոներական առաքելությունների շինությունների բռնագրավման կապակցությամբ:¹⁶⁴

2. Ամերիկյան միսիոներության գործունեությունը և Հայոց ցեղասպանությունը

Այժմ անդրադառնանք Առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում ամերիկյան միսիոներների գործունեությանը և իրավիճակին առնչվող խնդիրներին: Որպես քրիստոնեական եկեղեցու ներկայացուցիչներ՝ ամերիկյան միսիոներները հարյուր տարուց ավելի ապրում էին հայերի մեջ, ակնատես էին դարձել վերջիններիս հանդեպ գործադրված ճնշումներին, հարստահարություններին և ցեղասպանությանը:

Ի սկզբանե ամերիկյան կրոնական առաքելությունների ռազմավարությունը Մերձավոր Արևելքում կենտրոնացված էր հրեաներին «Պաղեստինն ու Հիսուսին վերադարձնելու նպատակի ուղղությամբ»: Այս հանգամանքը պետք է դառնար «մերձավորարևելակենտրոն համընդհանուր խաղաղության թագավորության» ստեղծման նախապայմանը: Ամերիկյան ավետարանչական գործակալների կամ միսիոներների առաքելության գաղափարական հենքերն էին պուրիտանների հետապնդումներն ու արտաքսումը Հին աշխարհից: Գլխավոր նպատակներն էին Միացյալ Նահանգների օրինակով ժողովրդավարության կառուցումը Հին աշխարհում Եվրոպայում և Մերձավոր Արևելքում բռնապետությունների վերացման միջոցով և «օրհնված Ամերիկայի հաշտեցման առաքելությունը դեպի բիբլիական սրբավայրերը»: Այդ ճանապարհին ամերիկյան միսիոներների գործունեությունը պետք է հանգեցներ իսլամի, կաթոլիկ եկեղեցու և Եվրոպայի իշխանության համակարգի անկմանը: Նրանք գտնում էին, որ

¹⁶⁴ St'u Evans Laurence, նշվ. աշխ., էջ 27-28:

այս պատմական քայլերն անհրաժեշտ էին երկրում Աստծո քաղա-
վորության հաստատման համար: Այդ առաքելության հաջողության
շնորհիվ աշխարհը պետք է շատ ավելի լավ տեղ դառնար և պատ-
րաստվեր Հիսուսի իշխանության համար: Սակայն, իրատեսական
պատճառներից ելնելով, միսիոներները սահմանափակվեցին Փոքր
Ասիայի քրիստոնյաների, մասնավորապես՝ հայերի հետ տարվող աշ-
խատանքով, որոնց հետ հաստատվեցին բավականին ջերմ հարաբե-
րություններ: 19-րդ դարի կեսերին ամերիկյան միսիոներների հիմնա-
կան նպատակն է դառնում հայերի և արևելյան մյուս քրիստոնյաների
«վերակենդանացումը», որի հետևանքով արևելյան քրիստոնյաները
պետք է դառնային ավելի եկեղեցակենտրոն և պակաս «հեղափոխա-
կան»:¹⁶⁵

Ավետարանականները սովորեցնում էին ամերիկացիներին մտա-
ծել միջազգայնորեն: Նրանք տուն էին բերում գիտելիքներ Մերձա-
վոր Արևելքի՝ աշխարհի մի տարածաշրջանի մասին, որի վերաբերյալ
շատ քիչ բան գիտեին: Միսիոներների օգնության քարոզչությունը մեծ
հետք թողեց հայերի մասին ամերիկացիների ընկալման վրա. հայերը
դարձան «սարսափելի» թուրքերի անմեղ գոհերը:¹⁶⁶

Ամերիկյան միսիոներները մեծ հույսեր էին կապում երիտթուրքա-
կան շարժման հետ, քանի որ վերջինս ուղղված էր համիդյան հետա-
դիմական համակարգի և «մոլեռանդ իսլամի» դեմ, որը 1894-1896 թթ.
աղետի հիմնական պատճառն էր: Սակայն կուսակցության ղեկա-
վարների «ցանկությամբ» պատերազմի մեջ մտած Թուրքիան դառ-
նում է Ամերիկյան խորհրդի «խոր հակառակորդը»: Պատերազմի ըն-
թացքում երիտթուրքական իշխանությունը «ոչնչացրեց քրիստոնեու-
թյունը», մասնավորապես՝ հայկական քրիստոնեությունն Անատոլիա-
յում: Այս կործանումը սպանեց «1908 թ. ամերիկյան սոցիալական
ուտոպիան», ոչնչացրեց 19-րդ դարի «վերածնված քրիստոնեության»
գաղափարը, կոտրեց «ֆիզիկական հողերում հազարամյա խաղաղ
կյանքի մեկդարյա ամերիկյան երազը»: Այսպիսով, միսիոներական
Ամերիկյան լուրջ վնաս կրեց պատերազմի ընթացքում, կորցրեց իր

¹⁶⁵ Տե՛ս **Kiezer Hans-Lukas**, *Nearest East. American Millennialism and Mission to the Middle East*, Philadelphia, Temple University Press, 2010, էջ 5, 9, 16:

¹⁶⁶ Տե՛ս **Moranian Suzanne E.**, *The Armenian Genocide and American missionary relief efforts* // In: *America and the Armenian Genocide of 1915* / Edited by Jay Winter, Cambridge, Cambridge University Press, 2003, էջ 213:

«հիմնական ընկերներին և հաճախորդներին, ինչպես նաև իր գաղափարախոսությունը»:¹⁶⁷

Գեռնա 1911 թ. առաջատար երիտթուրք լրագրողներից մեկը գրում էր, որ ամերիկյան միսիոներները «օսմանյան և մահմեդական ինքնության հիմնարար թշնամիներն են» ու «մշտապես աշխատում են այդ ինքնության դեմ»: Գեռնա 1910 թ. հունիսին կայացած Համաշխարհային միսիոներական համաժողովի ընթացքում որոշակի հռետեսություն էր արտահայտվել երիտթուրքական շարժման առաջադիմության մասին: Նշվում էր, որ երիտթուրքերի «եվրոպական աթեիզմը» «գրահապատված է հակաքրիստոնեական իսլամիզմով»:¹⁶⁸ Էդիրնեի Ֆահրեդդին մուֆտին այդ օրերին գրում էր, որ «թուրքականությունն ու իսլամը միաձուլված են: Եթե իսլամը վերանա, որևէ մեկն այլևս չի կարող խոսել [թուրք] ազգության մասին: Միսիոներները խոլերայի բացիլներ են, որոնք թունավորում են մեր ազգի գոյությունը»:¹⁶⁹

Այսպիսով, ըստ Հանս-Լուկաս Կիզերի, «օսմանցիներն ու ամերիկացիներն անկարող գտնվեցին կյանքի կոչել շարունակական փոխգործակցությունը»: Մշակութային տարբերությունները, իմպերիալիզմի շրջանի միջազգային քաղաքականությունն ու «կատաղի ազգայնականության» զարթոնքն իրենց ճակատագրական նշանակությունն ունեցան: Թեև միսիոներական կազմակերպությունների «ամերիկյան միլլեննիալիզմի» (Հայտնությանը վերաբերող հավատք, համաձայն որի՝ Հիսուս Քրիստոսն ու իր սրբերը հազար տարի իշխելու են աշխարհի վրա) կամ «ամերիկյան մեսսիանիզմի կամ բացառիկության» գաղափարները պահպանեցին իրենց ազդեցությունը, սակայն ենթարկվեցին որոշակի փոփոխության: Ինչպես հայտարարել էր ԱՄՆ-ի նախագահ Վուդրո Վիլսոնն Առաջին համաշխարհային պատերազմի ավարտին, «Ամերիկյան անսահման արտոնություն ունի իրագործելու իր ճակատագիրն ու փրկելու աշխարհը»: Վիլսոնը նկատի ուներ Եվրոպայի և Օսմանյան կայսրության «փչացած» աշխարհը:¹⁷⁰

Ամերիկյան արտաքին քաղաքականությունն ու բողոքական առա-

¹⁶⁷ Տե՛ս **Kiezer Hans-Lukas**, *Nearest East. American Millennialism and Mission to the Middle East*, էջ 63-64:

¹⁶⁸ Տե՛ս նույն տեղը, էջ 77-78:

¹⁶⁹ Տե՛ս նույն տեղը, էջ 81:

¹⁷⁰ Տե՛ս նույն տեղը, էջ 4:

քելությունները Մերձավոր Արևելքում սկսեցին շրջադարձի ենթարկվել Վուդրո Վիլսոնի նախագահության շրջանում: Առաջին համաշխարհային պատերազմում Միացյալ Նահանգների ներգրավման հետ ԱՄՆ-ի շատ քաղաքացիների շրջանում համոզմունք էր հաստատվել, որ իրենց երկիրը կարիք ունի նոր ճանապարհի, որը կտարբերվի Հին աշխարհի «անկարգություններին» չմիջամտելու քաղաքականությունից: Նոր քաղաքականության եռանդուն կողմնակիցների շարքում էին Օսմանյան կայսրությունում և Պարսկաստանում գործող առաքելությունների, եկեղեցիների և դպրոցների պրեսբիտերական ղեկավարները, որոնք պահանջում էին ԱՄՆ-ի մանդատային համակարգի հաստատումը Թուրքիայի ողջ տարածքի կամ մի մասի նկատմամբ: Նրանք ցանկաբույս էին, որ Միացյալ Նահանգները սատարի կայսրության հպատակ ժողովուրդների, մասնավորապես՝ հայերի և արաբ քրիստոնյաների ինքնավարության կամ անկախության ձգտումները, որոնց հետ նրանք կապել էին իրենց գործունեությունը: «Երբ նախագահ Վուդրո Վիլսոնը հայտարարեց արտասահմանում ազգային խմբերի ինքնորոշման մասին,- գրում էր Ջոզեֆ Գրաբիլը,- Փոքր Ասիայում և Սիրիայում գործող միսիոներները հավատացին, որ իրենք կատարյալ թեկնածուներ ունեն, որոնց նկատմամբ Ամերիկյան պետք է կիրառի Վիլսոնի սկզբունքը»: Սկսած 1810-ական թթ.-ից՝ Միջերկրականի արևելյան շրջանում աշխատող միսիոներները ԱՄՆ-ի կառավարության ուղեկիցներն էին Թուրքիայի և Պարսկաստանի հայերի, արաբների և նեստորականների հետ «սիրալիր» հարաբերություններ հաստատելու գործում:¹⁷¹

1915 թ. ապրիլի 24-ին Թալեաթի հետ ունեցած գրույցից երկու օր անց Մորգենթաուն հայերի վիճակը քննարկելու նպատակով հանդիպում ունեցավ «Ռոբերտ» քոլեջում աշխատող միսիոներ Քալեր Գեյքսի և Թուրքիայում Ամերիկյան խորհրդի գանձապահ Ուիլյամ Փիթի հետ: Նրանք որոշեցին միջոցներ ձեռնարկել օսմանյան կառավարության քաղաքականությունը հայերի հանդեպ փոփոխության ենթարկելու նպատակով:

Մորգենթաուի հարաբերությունները միսիոներների հետ նոր չէին: Դեռևս 1913 թ. նոյեմբերին, երբ դեսպանը նոր էր ժամանել Կոստանդ-

¹⁷¹ Տե՛ս **Grabill Joseph L.**, *Protestant Diplomacy and the Near East. Missionary Influence on American Policy, 1810-1927*, Minneapolis, University of Minnesota Press, 1971, էջ 3-4:

նուպոլիս, նա այն կարծիքին էր, որ միսիոներների մտածելակերպը «աղանդավորական է և նեղմիտ»: Սակայն շատ շուտով նրա կարծիքը փոխվեց. նա հայտնաբերեց, որ Թուրքիայում աշխատող քրիստոնյա միսիոներները «հոյակապ» աշխատանք են կատարում սոցիալական, կրթական, բարեգործական, բժշկական և հոգևոր ոլորտներում ու լավագույնս ներկայացնում են «ամերիկյան ոգին»: Նա հանգել էր այն եզրակացությանը, որ միսիոներների գործունեությանն ամեն կերպ պետք է աջակցել: Իր հուշերում միսիոներ Գեյթսը գրում է, որ միսիոներները «բախտավոր էին», որ Կոստանդնուպոլսում դեսպան էր նշանակվել Մորգենթաուն, ով լավագույնս պաշտպանում էր ամերիկյան շահերն Օսմանյան կայսրությունում: Գեյթսը ամերիկյան միսիոներների վետերանն էր Թուրքիայում: Նա ավարտել էր Չիկագոյի աստվածաբանական ճեմարանը, 1881 թ.՝ մեկնել Թուրքիա և աշխատել Մարդինում: 1894-1902 թթ. Խարբերդի «Եփրատ» բուլեջի նախագահն էր:¹⁷²

Ոգեշնչված հայտնի միսիոներ Սայրուս Համլինի գրքերից՝ Ուիլյամ Փիթը նույնպես որոշել էր իրեն նվիրել միսիոներական գործունեությանը: Նա նույնպես Կոստանդնուպոլիս էր ժամանել 1881 թ.: Ու. Փիթը մանրամասնորեն ուսումնասիրել է օսմանյան օրենքներն ու միջազգային իրավունքը և մինչև 1900 թ. դարձել Թուրքիայում գործող ամերիկյան միսիոներական առաքելության հաստատությունների, դիվանագիտական կորպուսի և Բարձր Դռան միջև գլխավոր միջնորդը: ԱՄՆ-ի նախագահներ Բիլվեյնդն ու Ռուզվելտն անձնապես շնորհակալություն են հայտնել Փիթին Կոստանդնուպոլսում դեսպանությանը ցուցաբերած օժանդակության համար:¹⁷³

Համակարգված հակահայկական քաղաքականության սկիզբը «արտակարգ իրավիճակ» ստեղծեց երիտթուրքական կառավարության հանդեպ Ամերիկյան խորհրդի վերաբերմունքում: Մովորաբար միսիոներական առաքելությունների և կառավարությունների միջև հարաբերությունների հիմնական սկզբունքը «երկրի օրենքներին բացարձակ հնազանդությունն էր», սակայն նոր պայմաններում այն դրվեց հարցականի տակ. փախստականների վիճակի հետ կապված «քաղաքացիական անհնազանդության» իրավիճակը դարձավ լեզիտիմ: Օրինակ՝ 1915 թ. հունիսին Մամուրեթ-ուլ-Ազիզի հիվանդանո-

¹⁷² Տե՛ս նույն տեղը, էջ 65:

¹⁷³ Տե՛ս նույն տեղը, էջ 66-67:

ցի փորձառու բուժքույր, միսիոներուի Թեյսի Ատկինսոնն ածելի էր անցկացրել բանտ, որի միջոցով քաղաքից դուրս տարված և մահվան դատապարտված հայերից մի քանիսը կարողացան կտրել պարաններն ու փախչել Գերսիմ:

Երիտթուրքերի ղեկավարներն ասելուքյամբ էին լցված Ամերիկյան խորհրդի և Օսմանյան կայսրությունում նրա առաքելությունների հանդեպ: Թեև միսիոներների գործունեությունը վիրավոր թուրք զինվորների բուժման հարցում հայտնի էր, իսկ Էնվեր փաշան մասնակցում էր միսիոներների միջոցառումներին, այնուամենայնիվ, վերջինս համարում էր նրանց «հիմնարար թշնամիներ»: 1916 թ. կեսերին Մանուրեթ-ուլ-Ազիզ կատարած այցի ընթացքում Էնվերը հետմահու պատերազմի մեղալ է շնորհել հիվանդանոցի հիմնադիր Հենրի Ատկինսոնին, որը մահացել էր 1915 թ. աշնանը՝ այն բանից հետո, երբ շուրջ տասը հազար հայ կանանց և երեխաների դիակներ էր հայտնաբերել Ծովք (Գյուլշուկ) լճի ափերին: Նրա կինը՝ Թեյսի Ատկինսոնը, գրել է, որ «նրա սիրտը հիվանդ էր, քանի որ այլևս չէր ցանկանում ապրել այս չար աշխարհում»:¹⁷⁴

Եղեռնի ընթացքում բողոքական միսիոներները տարբեր ձևով էին արձագանքում տեղի ունեցող իրադարձություններին: Շատ փորձառու միսիոներներ, մասնավորապես՝ Ամերիկյան խորհրդի հին անդամները, որևէ կասկած չունենալով երիտթուրքերի «հանցավոր բնույթի» մասին, միաժամանակ կարողանում էին օգտագործել իրենց հեղինակությունն ու պաշտպանվել ստեղծված իրավիճակում, դառնալ կատարվող իրադարձությունների վկաները և այնտեղ, որտեղ հնարավոր էր, մարդասիրական օգնություն ցուցաբերել կարիքավորներին: Այդպիսիք էին Փիթըր Կոստանդնուպոլսում, Քլերենս Աշերը¹⁷⁵ Վանում, Մերի Գրաֆամը¹⁷⁶ Սվազում և Ջեկոր Կյունցլերը¹⁷⁷ Ուրֆայում:

¹⁷⁴ Տե՛ս **Kiezer Hans-Lukas**, *Nearest East. American Millennialism and Mission to the Middle East*, էջ 87-88; *Ցեղասպանությունը Օսմանյան Թուրքիայում. Վերապրածների վկայություններ. Փաստաթղթերի ժողովածու*, հատոր III, Էրզրումի, Խարբերդի, Դիարբեքի, Սեբաստիայի, Տրապիզոնի նահանգներ, Պարսկահայք, Եր., Հայաստանի ազգային արխիվ, 2012, էջ 288:

¹⁷⁵ **Քլերենս Աշեր** (1870-1955)՝ ամերիկացի բժիշկ, միսիոներ, Հայոց ցեղասպանության ականատես և կարևոր վկա: 1889 թ. Ամերիկյան խորհրդի կողմից գործուղվել է Խարբերդ՝ միսիոներական աշխատանքի, մեկ տարի անց տեղափոխվել է Վան:

¹⁷⁶ **Մերի Գրաֆամ** (1871-1921)՝ ամերիկացի միսիոներ, ուսուցչուհի, դպրոցի տնօրեն, Հայոց ցեղասպանության ականատես:

¹⁷⁷ **Ջեկոր Կյունցլեր** (1871-1949)՝ շվեյցարացի միսիոներ, Հայոց ցեղասպանության

Գերմանացի միսիոներների շարքում էր Էհմանը, ով վստահում էր երիտթուրքական իշխանություններին և հավատարիմ էր Թուրքիայի դաշնակից Գերմանիային, սակայն երբ 1915 թ. հունիսին սկսվում է հայկական ողբերգությունը, նա «իր հավատքի ողբերգական անկում է ապրում» և այդպես էլ չի կարողանում վերականգնվել: Չոհեբի հետ մտերիմ կապեր ունեցող երիտասարդ միսիոներների շարքում կային ինքնասպան եղածներ (Ֆրենսիս Լեսլին Ուրֆայում), հուսահատությունից մահացածներ (գերմանացի միսիոներներ Հելեն Լասկան Խարբերդից և Մարթա Կլայսը Բիթլիսում), հոգեկան հիվանդություն ստացածներ (շվեյցարացի ուսուցչուհի Բեստրիս Ռոհները) և այլք:¹⁷⁸

Միսիոներները սերտորեն համագործակցում էին ԱՄՆ-ի հյուպատոսների հետ: Միասին նրանք փրկել են 150 հազար հայերի Սիրիայում և մի քանի հարյուր հազարի Կովկասում: Միայն Հալեպում նրանց կողմից կազմակերպվել է 1.350 որբ երեխաների խնամք: Ամերիկյան խորհրդի անդամ, բժիշկ Ուիլյամ Չամբերսը գրում էր, որ պատերազմի ընթացքում միսիոներներն ու սիրիացի բնակչությունը մեծ օգնություն էին ցուցաբերում Բեյրութում տեղակայված ճամբարի արքայալ հայերին: Նա նշում էր, որ ճամբարի 5-6 հազար հայերից 1.500-ը գտնվում էին ծայրաստիճան աղքատության մեջ: Խորհրդի մյուս անդամներից Ջոն Ուորդը պատերազմի տարիներին աշխատել է Երուսաղեմում և համագործակցել Ամերիկյան կարմիր խաչի հանձնաժողովի հետ Պաղեստինում: Ուորդը գեկուցում էր, որ Դամասկոսում և Հալեպում հավասարապես բաշխված շուրջ 60 հազար արքայալ հայեր կային, շուրջ 30 հազարը ցրված էին Սիրիայի, Պաղեստինի և Եգիպտոսի տարածքում: Ըստ Ուորդի՝ դեպի Հալեպ արտաքսված 400 հազար հայերից փաստորեն ողջ էին մնացել 90 հազարը, որոնցից 10 հազարը գտնվում էին ծայրահեղ աղքատության պայմաններում:¹⁷⁹

Ամերիկյան միսիոներները կարևոր վկաներն էին ցեղասպանության ինչպես առաջին, այնպես էլ երկրորդ փուլի՝ Հյուսիսային Սի-

ականատես:

¹⁷⁸ Տե՛ս **Kiezer Hans-Lukas**, *Nearest East. American Millennialism and Mission to the Middle East*, էջ 89; *A Missionary Poisoned // The New York Times*, 1915, November 13; Kiezer, Hans-Lukas. *Beatrice Rohner's Work in the Death Camps of Armenians in 1916* // In: *Resisting Genocide: The Multiple Forms of Rescue* / Ed. Jacques Semelin, Claire Andrieu, and Sarah Gensburger, Published to Oxford Scholarship Online, December, 2014:

¹⁷⁹ Տե՛ս **Moranian Suzanne E.**, նշվ. աշխ., էջ 193-194:

րիայի համակենտրոնացված ճամբարներում: Ամերիկյան խորհրդի համար սկսվեց գործունեության նոր՝ հայ փախստականներին օգնություն ցուցաբերելու փուլը: Այդ աշխատանքը համադրում էր Կոստանդնուպոլսում Ամերիկյան խորհրդի գանձապահ Ուիլյամ Փիթը: Նա տեղեկատվություն էր ստանում տարբեր նահանգներից, կապի մեջ էր ինչպես ԱՄՆ-ի, այնպես էլ Գերմանիայի դեսպանությունների հետ, նրա խնդրանքների և առաջարկների հիման վրա Ամերիկյան խորհուրդը Բոստոնում ֆինանսական միջոցներ էր հայթայթում՝ հայ փախստականներին օգնություն հասցնելու նպատակով: Այդ գործունեության հետևանքով ստեղծվեց Մերձավորարևելյան նպաստամատույց (Near East Relief) կազմակերպությունը, որը հնարավորություն ընձեռեց այդ գործունեության մեջ ընդգրկելու տարբեր երկրներում գործող բարեգործական միություններին, մասնավորապես՝ գերմանական «Hilfsband für christliches Liebeswerk im Orient»-ին: Որբերի հետ տարվող աշխատանքը Սիրիայում համակարգում էր ուսուցչուհի Բեստրիս Ռոհները, ով Փիթի կողմից ստացվող գումարներով կազմակերպում էր որբանոցների գործունեությունը: Նրա կողմից ստեղծված որբանոցը փակվեց իշխանությունների կողմից 1917 թ. փետրվարին. բոլոր որբ երեխաները տեղափոխվեցին կառավարական որբանոցներ:¹⁸⁰

Նույնիսկ երբ Միացյալ Նահանգները մտավ պատերազմի մեջ, ամերիկացի միսիոներների մեծ մասը մնաց Թուրքիայում և, չնայած դժվարին պայմաններին, մեկուսացված վիճակին և հիվանդությունների վտանգին, շարունակեց օգնության ցուցաբերման աշխատանքը: Նրանք համագործակցում էին շվեյցարական ներկայացուցչության հետ, որը ներկայացնում էր ԱՄՆ-ի շահերը Թուրքիայում:¹⁸¹

Հայկական ցեղասպանությունը «աղետ և տառապանքի ալեկոծություն» բերեց բողոքականությանը Մերձավոր Արևելքում: Սիրիայում առաքելությունների և ավետարանական կազմակերպությունների համար սկսվեց համատարած գրկանքի ժամանակաշրջան: Ամերիկյան խորհուրդը, որը շուրջ քսան միլիոն դոլարի ներդրում էր կատարել Օսմանյան կայսրությունում և մինչև պատերազմն ուներ 150 անդամներից բաղկացած կազմ, մինչև 1915 թ. դեկտեմբերը կորցրեց

¹⁸⁰ Տե՛ս **Kiezer Hans-Lukas**, *Nearest East. American Millennialism and Mission to the Middle East*, էջ 90-91:

¹⁸¹ Տե՛ս **Moranian Suzanne E.**, նշվ. աշխ., էջ 194:

ունեցվածքի և մարդկանց շուրջ կեսը: Համաճարակներից մահացան միսիոներներ, փակվեցին դպրոցներ: Սակայն ամերիկացիներից շատերը շարունակեցին իրենց գործունեությունը՝ նվիրված կերպով փորձելով օգնել և փրկել ողջ մնացած հայերին:¹⁸² Միաժամանակ որոշ հեղինակներ քննադատում էին միսիոներներին հայ ազգային ազատագրական շարժման հանդեպ բացասական դիրքորոշում ունենալու համար, ինչը բացատրվում էին ոչ թե նրանով, որ հայերը «անկարող էին զենքի դիմել», և նրանց պակասում էին «գոհողության զգացումն ու քաջության ոգին», այլ այս ամենի մեջ տեսնում էին «Ռուսաստանի մատը»: Միսիոներները վախենում էին, որ Ռուսաստանի ռազմական հաջողությունը պատերազմի ընթացքում «վերջակետ կոներ» միսիոներական գործին: Միսիոներության հետևում, ըստ Մանուկ Ճիզմեճյանի, կանգնած էր այն ուժը, որի «նպատակը նյութական շահն էր»:¹⁸³

Օսմանյան կայսրությունում տեղի ունեցած ողբերգական իրադարձությունների հետևանքով Փոքր Ասիայում հայերի թվաքանակը նվազեց կիսով չափ, ողջ մնացածներին աքսորեցին: Պատերազմող կողմերը «ուղղակիորեն նպաստեցին» շուրջ երեք միլիոն քրիստոնյաների՝ հայերի, հույների և ասորիների վերացմանը Փոքր Ասիայում: Ամերիկյան խորհուրդը վերջ դրեց հարյուր տարվա իր հետաքրքրություններին Թուրքիայում և փաստորեն դուրս եկավ այդ «ղաշտից»: 1914 թ. Թուրքիայում աշխատում էին 150 միսիոներներ, 1.200 տեղացի աշխատողներ, և գործում էին 137 եկեղեցիներ, կրոնական և կրթական նպատակների համար տարեկան ծախսվում էր 200 հազար դոլար: Պատերազմի ավարտից հետո Թուրքիայում մնացել էին ընդամենը 36 միսիոներներ, իսկ տեղացի աշխատողներից ողջ էին մնացել 200-ը: Եկեղեցիները, դպրոցներն ու հիվանդանոցները, բացի Կոստանդնուպոլսի և Ջնյունիայի եկեղեցիներից, դպրոցներից ու հիվանդանոցներից, փակվել էին կամ դադարել գոյություն ունենալուց: 1925 թ. ավյալներով Թուրքիայում և Հունաստանում գործում էին 15, Սիրիայում՝ շուրջ քսան հայ բողոքական եկեղեցիներ:¹⁸⁴

¹⁸² Տե՛ս **Grabill Joseph L.**, նշվ. աշխ., էջ 64:

¹⁸³ Տե՛ս **Ճիզմեճյան Մանուկ Գ.**, *Պատմություն ամերիկահայ քաղաքական կուսակցության, 1890-1925*, Ֆրեզնո, «Նոր Օր», 1930, էջ 542-543:

¹⁸⁴ Տե՛ս **Arpee Leon**, *A Century of Armenian Protestantism, 1846-1946*, New York, The Armenian Missionary Association of America, Inc., 1946, էջ 84-85:

ԳԼՈՒԽ 3

Ամերիկյան դիվանագիտական փաստաթղթերի նշանակությունն ու կարևորությունը Հայոց ցեղասպանության ուսումնասիրման և միջազգային ճանաչման համար

Մինչև համաշխարհային պատերազմի սկիզբն արևմտահայության ճակատագրում կամ Հայկական հարցում ներգրավված հիմնական տերություններն էին Մեծ Բրիտանիան, Ֆրանսիան և Ռուսաստանը: Պատերազմի բռնկումից հետո Միացյալ Նահանգները մնաց հիմնական արևմտյան պետություններից միակը, որը՝ որպես չեզոք, սակայն միաժամանակ միսիոներների գործունեության միջոցով արևմտահայության խնդիրներում ներգրավված պետություն, շարունակեց իր դիվանագիտական ներկայությունն Օսմանյան կայսրությունում:

Միացյալ Նահանգների ազգային արխիվում և Կոնգրեսի գրադարանում պահվում են Հայոց ցեղասպանությանը վերաբերող 4.500 վավերագրեր, որոնց ընդհանուր ծավալը կազմում է 37 հազար էջ: Այս հսկայաժավալ արխիվային նյութն ունի ուղեցույց, որը կազմել է Վաշինգտոնի Հայկական ազգային ինստիտուտի տնօրեն, պատմաբան Ռուբեն Ադալյանը: Հայոց ցեղասպանությանը վերաբերող այս վավերագրերի հավաքածուն համարվում է աշխարհում ամենաձավալունը: Փաստաթղթերի զգալի մասը պատկանում է ԱՄՆ-ի պետքարտուղարությանը և նրա դիվանագիտական ու հյուպատոսական կառույցներին: Ամերիկյան արխիվների փաստաթղթերը գալիս են ապացուցելու, որ Օսմանյան կայսրության հայ բնակչությունը դարձել է «ռասիստական քաղաքականության» զոհը, որն ուղղված էր «Հայաստանում և Անատոլիայում նրա գոյության բոլոր հետքերի ոչնչացմանը»: Ամերիկյան փաստաթղթերում ամփոփված են ցեղասպանության բոլոր փուլերն ու բնորոշ զծերը՝ տեղահանության քաղաքականությունն ու մեթոդները, կանանց և երեխաների հանդեպ վերաբերմունքը, ստրկական աշխատանքի կիրառումը, մպատակային թերսնումը, հարկադիր կրոնափոխությունը, ունեցվածքի բռնագրավումը, դիմադրության դեպքերը, կոտորածները, որբանոցները, փախստականների ճամբարները, ողջ մնացածների վերաբնակեցումը և մարդասիրական մի-

ջամառությունը:¹⁸⁵

Միացյալ Նահանգները հյուպատոսական լայն ցանց ուներ պատերազմական շրջանի Օսմանյան Թուրքիայում: ԱՄՆ-ն հյուպատոսներ ուներ Չնյուտնիայում, Խարբերդում, Տրապիզոնում, Հալեպում, Բեյրութում, Մերսինում, Երուսաղեմում և Օսմանյան կայսրության մայրաքաղաքում՝ Կոստանդնուպոլսում: Տարբեր ժամանակամիջոցներում Ուրֆայում, Սամսունում և Էրզրումում աշխատում էին Միացյալ Նահանգների հյուպատոսական գործակալներ: Այսպիսով, Միացյալ Նահանգները յուրահատուկ հնարավորություն ուներ իր դիվանագետների և պաշտոնյաների միջոցով դիտարկելու և արձանագրելու երկրում կատարվող իրադարձությունները մինչև 1917 թ. ապրիլի ամիսը, երբ ԱՄՆ-ն միացավ Անտանտի դաշնակիցներին՝ ընդդեմ կենտրոնական տերությունների, և հետևաբար խզեց դիվանագիտական հարաբերություններն Օսմանյան Թուրքիայի հետ:

ԱՄՆ-ի՝ երեք տարվա չեզոքության փաստը մեծապես կարևորում է ամերիկյան արխիվների նշանակությունն արևմտահայության տեղահանությունների և կոտորածների ուսումնասիրման գործում: Այս ընթացքում կայսրության տարբեր անկյուններում աշխատող ԱՄՆ-ի ներկայացուցիչներն անգնահատելի աղբյուր դարձան չեզոքության սկզբունքի հովանու ներքո երիտթուրքական իշխանությունների կողմից կազմակերպված համատարած սպանությունների դեպքերը փաստագրելու, ցեղասպանության պատճառներն ու միտումները վերլուծելու գործում: Այդ իսկ պատճառով Հայոց ցեղասպանության փաստը, հետևաբար նաև ամերիկյան արխիվների փաստաթղթերի իսկությունը մերժողները մեղադրում են հիմնականում ամերիկյան դիվանագետներին և միսիոներներին պատերազմի տարիներին տեղի ունեցած իրադարձությունների փաստերը զիտակցաբար կեղծելու և Վաշինգտոնի իրենց ղեկավարներին մոլորության մեջ զգելու համար:¹⁸⁶

Օսմանյան կայսրությունում ԱՄՆ-ի արտակարգ և լիազոր դես-

¹⁸⁵ Տե՛ս **Adalian Rouben Paul**, *Documentation of Armenian Genocide in US Archives* // In: *Encyclopedia of Genocide* / Edited by Israel W. Charny, Santa Barbara, CA: ABC-CLIO, Vol. 1, 1999, էջ 97:

¹⁸⁶ Տե՛ս **Dadrian Vahakn N.**, *The Key Elements in the Turkish Denial of the Armenian Genocide: A Case Study of Distortion and Falsification*, էջ 37-38:

պան Հենրի Մորգենթաուի կողմից ստորագրված նամակներն ու հեռագրերը ներկայացնում են Օսմանյան կայսրությունում կատարված վայրագությունների մասին տեղեկատվության ամենակարևոր ժամանակահատվածը՝ 1915 թ. գարնան և ամռան ամիսները, որը համընկավ նրա պաշտոնավարության շրջանի հետ: 1916 թ. օգոստոսին Մորգենթաուին փոխարինեց Աբրամ Էլկուսը¹⁸⁷: Որպես Օսմանյան կայսրությունում դեսպան՝ վերջինս աշխատեց մեկ տարուց պակաս և վերադարձավ ԱՄՆ 1917 թ. ապրիլին, երբ Գերմանիային պատերազմ հայտարարելուց անմիջապես հետո օսմանյան կառավարությունը խզեց դիվանագիտական հարաբերություններն ԱՄՆ-ի հետ: Նրա դերակատարությունը հայկական խնդրի առնչությամբ հատուկ ուշադրության չի արժանացել, ոչ էլ ինքն է հետազայում գրել այդ մասին: Սակայն Էլկուսը դարձավ երիտթուրքական կառավարության «շատ ավելի սուր քննադատ», քան Մորգենթաուն: Նա «վրդովմունքի արտահայտություններ չէր խնայում» երիտթուրքերի հասցեին, երբ նրանք մշտապես միջամտում և արգելակում էին մարդասիրական օգնության բաշխման աշխատանքը: Մորգենթաուի հայտարարությունները, Էլկուսի հայտարարությունների հետ համեմատած, երիտթուրքական իշխանությունների հանդեպ շատ ավելի մեղմ էին: Իր կարճատև պաշտոնավարության ընթացքում Էլկուսը փաստորեն կառավարում և կազմակերպում էր օգնության բաշխման աշխատանքը, ինչը շատ դժվարին խնդիր էր թուրք պաշտոնյաների կողմից այն խոչընդոտելու պայմաններում:¹⁸⁸

Թեև Կոստանդնուպոլսում ԱՄՆ-ի դեսպանության կազմը շատ մեծ չէր, սակայն Օսմանյան Թուրքիայի տարբեր վայրերում աշխատող հյուպատոսական կազմը բավականին բազմանդամ էր: Այդ կազմում ընդգրկված էին Կոստանդնուպոլսում գլխավոր հյուպատոս Գերրիել Բի Ռեվնդալը, Չմյուռնիայում գլխավոր հյուպատոս Ջորջ Հորտոնը¹⁸⁹

¹⁸⁷ **Աբրամ Էլկուս** (1867-1947)՝ ԱՄՆ-ի դիվանագետ, փաստաբան, 1916-1917 թթ.՝ դեսպան Օսմանյան կայսրությունում, միաժամանակ ներկայացրել է Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի, Ռուսաստանի, Իտալիայի և Բելգիայի շահերը: 1920 թ.-ից որպես Ազգերի լիգայի համձնակատար մասնակցել է Ալանդյան կղզիների հակամարտության կարգավորման բանակցություններին:

¹⁸⁸ Տե՛ս **Adalian Rouben Paul**, *American Diplomatic Correspondence in the Age of Mass Murder: the Armenian Genocide in the US Archives*, էջ 152-153:

¹⁸⁹ **Ջորջ Հորտոն** (1859-1942)՝ ամերիկացի դիվանագետ, լրագրող և բանաստեղծ,

և փոխհյուպատոս Լիլանդ Մորրիսը¹⁹⁰, Ադրիանապոլսում հյուպատոսական գործակալ Չարլզ Ալլենը, Մերսինում հյուպատոս Էդվարդ Նաթանը, Ալեքսանդրեթում հյուպատոսական գործակալ Գորդեն Բրաունը, Տրապիզոնում հյուպատոս Օսկար Հայզերը¹⁹¹, Սամսունում հյուպատոսական գործակալ Ու. Փիթերը, Խարբերդում հյուպատոս Լեսլի Դեյվիսը¹⁹², Հալեպում հյուպատոս Ջեսսի Ջեքսոնը¹⁹³, Դամասկոսում հյուպատոսական գործակալ Ջորջ Յանգը, Բեյրութում գլխավոր հյուպատոս Սթենլի Հոլլիսը և փոխհյուպատոս Ռալֆ Չեզբրունը, Երուսաղեմում հյուպատոս Օտիս Գլեյզբրուկը, Հայֆայում հյուպատոս Թեոդոր Սթրավը, Բաղդադում հյուպատոս Չարլզ Բրիստելը և Երուսաղեմում փոխհյուպատոս Սեմուել Էդելմանը: Վերջինս 1915 թ. մայիս և հունիս ամիսներին ժամանակավորապես աշխատանքի նշանակվեց Հալեպում: Հյուպատոսական անձնակազմին պետք է ավելացնել նաև դեսպան Մորգենթրաուի մեկնումի և դեսպան Էլյուսի ժամանան միջև ընկած ժամանակահատվածում ԱՄՆ-ի դեսպանության հավատարմատարի պաշտոնը ստանձնած Հոֆման Ֆիլիպին¹⁹⁴:

Կարևոր նշանակություն ուներ ԱՄՆ-ի հյուպատոսությունների տեղակայման վայրը: Հյուպատոսությունները հիմնականում տե-

հյուպատոս Աթենքում (1893-1898, 1905-1906), գլխավոր հյուպատոս Սալոմիկում (1910-1911), Ջնյունիայում (1911-1917, 1919-1922): 1926 թ. հրատարակվել է նրա «Ասիայի խայտառակությունը» գիրքը՝ գրված Ջնյունիայի 1922 թ. դեպքերի մասին:

¹⁹⁰ **Լիլանդ Մորրիս** (1886-1950)՝ ամերիկացի դիվանագետ, փոխհյուպատոս Ջնյունիայում, գլխավոր հյուպատոս Երուսաղեմում (1936-1938), Վիեննայում (1938-1940), հավատարմատար Բեռլինում (1940-1941), դեսպան Իսթանբուլում (1942-1944), Իրանում (1944-1945):

¹⁹¹ **Օսկար Հայզեր** (1869-1956)՝ ամերիկացի դիվանագետ, գլխավոր հյուպատոս Տրապիզոնում, Երուսաղեմում: Ջնյունիայի 1922 թ. աղետից հետո ղեկավարել է փախստականների օգնության կառավարական հիմնադրամը: Հայոց ցեղասպանության ականատես է և վկա, փրկել է շատ հայերի:

¹⁹² **Լեսլի Դեյվիս** (1876-1960)՝ ամերիկացի փաստաբան և դիվանագետ, 1914-1917 թթ.՝ հյուպատոս Խարբերդում, աշխատել է Բաթումում, Արլյանգելսկում և Հելսինկիում, Հայոց ցեղասպանության ականատես է և վկա:

¹⁹³ **Ջեսսի Ջեքսոն** (1871-1947)՝ ամերիկացի դիվանագետ, հյուպատոս Հալեպում, աշխատել է Իտալիայում և Կանադայում, Հայոց ցեղասպանության ականատես է և վկա:

¹⁹⁴ **Հոֆման Ֆիլիպ** (1872-1951)՝ ԱՄՆ-ի դիվանագետ, գլխավոր հյուպատոս Եթովպիայում (1908-1910), հավատարմատար Օսմանյան կայսրությունում (1916), դեսպան Կոլումբիայում (1917-1922), Ուրուգվայում (1922-1925), Իրանում (1925-1928), Նորվեգիայում (1930-1935), Չիլիում (1935-1937):

ղակայված էին Օսմանյան կայսրության հիմնական առևտրական նավահանգիստներում, որոնք նաև հայկական համայնքների կենտրոնացման վայրերն էին: Հայ բնակչության և ամերիկյան ներկայության մեկ քաղաքում կամ վայրում գտնվելու հանգամանքը պարտադրում էր հյուպատոսներին շատ ավելի մոտիկից հետևելու տեղի ունեցող քաղաքական և տնտեսական զարգացումներին:

Միաժամանակ ԱՄՆ-ի հյուպատոսությունները միմյանցից գտնվում էին բավականին մեծ հեռավորության վրա, և պատերազմի պայմաններում կապը նրանց միջև գրեթե բացակայում էր, որի հետևանքով հյուպատոսությունների՝ ցեղասպանության մանրամասների մասին զեկուցագրերը բավականին անկախ բնույթ էին կրում: Դա հնարավորություն էր տալիս Կոստանդնուպոլսում ԱՄՆ-ի դեսպանությանն իր վերլուծությունը կատարելու երկրում տիրող ընդհանուր վիճակի մասին:

Խարբերոյն ու Հալեպը, որոնք գտնվում էին Հայաստանից դեպի Սիրիա աքսորվող հայերի ճանապարհին, տեղի ունեցող իրադարձությունների կենտրոնական դիտարկման կենտրոններն էին: Խարբերոյն ոչ միայն հայ բնակչության տեղահանության, այլև արտաքսված հայերի տրանզիտի հիմնական կենտրոններից մեկն էր: Ըստ ԱՄՆ-ի հյուպատոս Լեսլի Դեյվիսի՝ Խարբերոյի հյուպատոսական տարածքը շատ մեծ էր. այն ընդգրկում էր «գրեթե ողջ Թուրքահայաստանը»: Խարբերոյում չկար ուրիշ հյուպատոսական ներկայացուցչություն. ամբողջ շրջանում գործում էին Դիարբեքիում Բրիտանիայի փոխհյուպատոսը, որը մեկնեց պատերազմի սկսվելուն պես, և Էրզրումում Գերմանիայի հյուպատոսը: Մոտակա հյուպատոսությունները գտնվում էին Հալեպում և Տրապիզոնում: Թեև ԱՄՆ-ի ներկայացուցչությունը պաշտոնապես կոչվում էր Խարբերոյում հյուպատոսություն, սակայն այն տեղակայված էր շատ մոտ գտնվող Մամուրեթ-ուլ-Ազիզ քաղաքում: Պատերազմի սկսվելուն պես հյուպատոսությունն իրականացնում էր միմիայն ԱՄՆ-ի քաղաքացիների և նրանց ունեցվածքի պաշտպանությանը, սոցիալական ապահովարությանն ու բարեգործությանը վերաբերող գործունեություն. առևտրա-տնտեսական բնույթի որևէ աշխատանք չէր կատարվում: Անցած երեք տարիների ընթացքում Խարբերոյից Կոստանդնուպոլիս նամակները հասնում էին փոստով երեք շաբաթվա ընթացքում, ինչը երկու

անգամ ավելի երկար էր, քան նամակների՝ Կոստանդնուպոլսից Նյու Յորք հասնելու ժամանակահատվածը: Կոստանդնուպոլսից Խարբերդ ուղարկված հեռագրերը հասնում էին երկու օրից մինչև երկու շաբաթվա ընթացքում: Ընդհանուր վիլայեթում ապրում էր շուրջ կես միլիոն մարդ, որոնցից 150 հազարը հայեր էին, իսկ մնացածը՝ թուրքեր և քրդեր: Խարբերդը հիմնականում մահմեդական քաղաք էր, սակայն Մամուրեթ-ուլ-Ազիզի և շրջակա գյուղերի բնակչության մեծամասնությունը հայեր էին: Խարբերդի դաշտավայրում հարյուրից ավելի գյուղեր կային (յուրաքանչյուրում՝ 50-ից մինչև 500 տուն), որոնք ամբողջությամբ կամ հիմնականում բնակեցված էին հայերով:¹⁹⁵

Խարբերդի կարևորությունը նաև այն է, որ այն Ամերիկյան խորհրդի՝ Օսմանյան կայսրությունում ամենահին միսիոներական կենտրոնն էր, որը հիմնադրվել էր 60 տարի առաջ: 1876 թ.-ից սկսած՝ Խարբերդում գործում էր Ամերիկյան խորհրդի քոլեջը, որը սկզբում կոչվեց «Հայաստան», սակայն հետագայում վերանվանվեց «Եփրատ»: Խարբերդի հյուպատոսական տարածքում Ամերիկյան խորհուրդն ուներ ևս հինգ միսիոներական կայան՝ տեղակայված Սվազում, Բիթլիսում, Վանում, Մարդինում և Դիարբեքիրում:¹⁹⁶

Երկու ամերիկացի վկաներ ամբողջական զեկույցներ էին գրել Խարբերդում տեղի ունեցած ցեղասպանության մասին: Հեղինակներից մեկը Հենրի Ռիզզ¹⁹⁷ էր՝ Խարբերդում աշխատող միաբանության քահանան, որը նախկինում «Եփրատ» քոլեջի տնօրենն էր: Նա իր զեկույցը գրել էր Միացյալ Նահանգներ վերադառնալուն պես, իսկ հետագայում այն հիմք էր հանդիսացել իր «Ողբերգության օրերը Հայաստանում»¹⁹⁸ հիշողությունների գրքի համար, որը հրատարակվել է 1997 թ.:

¹⁹⁵ Տե՛ս *Unites States Official Records on the Armenian Genocide, 1915-1917* /Compiled with an introduction by Ara Sarafian/, Princeton and London, Gomidas Institute, 2004, էջ 611-612 (NA/RG 59/867.4016/392):

¹⁹⁶ Տե՛ս նույն տեղը, էջ 613 (NA/RG 59/867.4016/392):

¹⁹⁷ **Հենրի Ռիզզ** (1875-1943)՝ ամերիկացի միսիոներ, Հայոց ցեղասպանության ակամատես և վկա: Ծնվել է Սվազում՝ միսիոներ Էդվարդ Ռիզզի ընտանիքում: ԱՄՆ-ում ուսում ստանալուց հետո՝ 1902 թ., վերադարձել է Օսմանյան կայսրություն: 1903-1910 թթ. ղեկավարել է Խարբերդի «Եփրատ» քոլեջը: միսիոներական գործունեությունը շարունակել է Խարբերդում:

¹⁹⁸ Տե՛ս **Riggs Henry H.**, *Days of Tragedy in Armenia. Personal Experiences in Harpoot, 1915-1917*, Ann Arbor, MI: Gomidas Institute, 1997:

Մյուս զեկույցը գրել էր 1914-1917 թթ. Խարբերդում ԱՄՆ-ի հյուպատոս Լեսլի Գեյվիսը, ով փաստաբան էր Նյու Յորքում, աշխատել էր Բաթումի հյուպատոսությունում, հետո՝ նշանակվել հյուպատոս Խարբերդում: Գիտնական Սյուզան Բլերը հայտնաբերել է զեկույցը 1989 թ. արխիվում և հրատարակել այն «Նահանգի սպանդանոցը»¹⁹⁹ անվամբ:

Թեև այդ երկու հիշողությունների մեջ կան որոշ անհամապատասխանություններ, սակայն դրանք լրացնում են մեկը մյուսին:²⁰⁰

ԱՄՆ-ի հյուպատոսների անհատական զեկույցները մանրամասն տեղեկություններ են ներկայացնում Օսմանյան կայսրության ներքին իրավիճակի մասին: Ողջ հավաքածուի վերլուծությունն ուրվագծում է օսմանյան կառավարության որդեգրած քաղաքականությունը: Որպես վկա և հայերի հետ տեղի ունեցող իրադարձությունների արձանագրող՝ յուրաքանչյուր հյուպատոս անկախորեն հանգել է այն եզրակացությանը, որ օսմանյան պետությունը հայ բնակչության դեմ օգտագործել է իր բոլոր հնարավորությունները, ինչն արտահայտվել է համատարած հալածանքների մեջ, որոնք չի կարելի համարել ո՛չ ճնշման միջոց, ո՛չ ամբոխի գործողություն, ո՛չ սոցիալական պայթյուն, ո՛չ էլ վրեժխնդրություն: Կատարված գործողության ծավալն ու մեթոդները նպատակ ունեին կազմալուծելու օսմանյան հասարակությունը, արմատախիլ անելու պատմականորեն համապատասխան բնակավայրերում հաստատված որոշակի էթնիկ խմբի համատարած կերպով կյանքի պայմաններից զրկելու միջոցով:²⁰¹

Հայկական ողբերգության մասին տեղեկատվություն էին տրամադրում նաև Օսմանյան կայսրության հարևան պետություններում հավատարմագրված ամերիկյան հյուպատոսները: Նրանց թվում էին Կահիրեում Փոլ Քնաբեհնուն²⁰², Ալեքսանդրիայում Արթուր Գարրելզը, Սարոնիկում Յան Քեիլը, Օդեսայում Ջոն Ռոյը և Թիֆլիսում Ֆելիքս

¹⁹⁹ Տե՛ս **Davis Leslie A., Blair Susan**, *The Slaughterhouse Province: An American Diplomat's Report on the Armenian Genocide, 1915-1917*, New Rochelle, NY: Aristide D. Caratzas, Orpheus Pub., 1989:

²⁰⁰ Տե՛ս **Peterson Merrill D.**, նշվ. աշխ., էջ 35:

²⁰¹ Տե՛ս **Adalian Rouben Paul**, *American Diplomatic Correspondence in the Age of Mass Murder: the Armenian Genocide in the US Archives*, էջ 182:

²⁰² **Փոլ Քնաբեհնուն**՝ ամերիկացի դիվանագետ, Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին՝ հյուպատոս Կահիրեում, 1932-1942 թթ.՝ հավատարմատար Իրաքում:

Սմիթը: Հայկական հարցով էին զբաղվում նաև Պետրոզբաղում, Փարիզում, Հռոմում և Լոնդոնում ԱՄՆ-ի դեսպաններ Գեյվիդ Ֆրենսիսը²⁰³, Ուիլյամ Շարպը²⁰⁴, Թոմաս Փեյջը²⁰⁵ և Ուոլտեր Փեյջը²⁰⁶: Հայերի մասին Վաշինգտոն տեղեկություններ էին փոխանցում նաև Բեռնում և Թեհրանում գտնվող ԱՄՆ-ի ներկայացուցչությունները:

ԱՄՆ-ի դեսպաններ Մորգենթաուն և Էլկուսը տեղեկատվություն էին ստանում երկրի շրջաններում տեղի ունեցող իրադարձությունների մասին երկու աղբյուրից: Տեղեկատվության հիմնական աղբյուրը Օսմանյան կայսրության կարևոր քաղաքներում գործող հյուպատոսական ցանցն էր: Տեղեկատվության երկրորդ աղբյուրը երկրի խոշոր քաղաքներում՝ Սվազում, Կեսարիայում, Մարաշում, Հաճնում, Ադանայում, Այնթապում, Ուրֆայում, Խարբերդում, Բիթլիսում, Էրզրումում և Վանում գործող միսիոներական կայաններն էին:

Այդ շրջանի ամերիկյան հասարակայնությունն այն կարծիքին էր, որ միսիոներները Օսմանյան կայսրությունում տեղի ունեցող «դաժանությունների» հիմնական վկաներն էին: Այդ տպավորության տակ էին գտնվում նաև այդ դեպքերի մասին գրող պատմաբանները: Պատճառն այն էր, որ որպես անկախ քաղաքացիներ՝ միսիոներներն ազատ էին հաղորդելու և հրապարակելու իրենց վկայությունները գրքերում, պարբերականներում և օրաթերթերում, որոնք դարձան Հայոց ցեղասպանության մասին այն ժամանակահատվածի համար հիմնական աղբյուրը: Պետքարտուղարության արխիվները, որոնք գաղտնի մնացին մինչև 1960-ական թթ., ապացուցում են հակառակը, այսինքն՝ այն, որ միսիոներների զեկույցները լրացնում էին հյուպատոսների կողմից պատրաստված տեղեկատվությունը:²⁰⁷ Գեսպանությանն ու

²⁰³ **Գեյվիդ Ֆրենսիս** (1850-1927)՝ ԱՄՆ-ի քաղաքական գործիչ և դիվանագետ, Միսուրի նահանգի նահանգապետ, ներքին գործերի քարտուղար (1896-1897), դեսպան Ռուսաստանում (1916-1917):

²⁰⁴ **Ուիլյամ Շարպ** (1859-1922)՝ ԱՄՆ-ի քաղաքական գործիչ, դիվանագետ, իրավաբան և արդյունաբերող, Կոնգրեսի ներկայացուցիչների պալատի անդամ (1909-1914), դեսպան Ֆրանսիայում (1914-1919):

²⁰⁵ **Թոմաս Փեյջ** (1853-1922)՝ ԱՄՆ-ի իրավաբան, գրող և դիվանագետ, 1913-1919 թթ.՝ դեսպան Իտալիայում:

²⁰⁶ **Ուոլտեր Փեյջ** (1855-1918)՝ ԱՄՆ-ի դիվանագետ, լրագրող և հրատարակիչ, 1913-1918 թթ.՝ դեսպան Լոնդոնում:

²⁰⁷ Տե՛ս **Adalian Rouben Paul**, *Armenian Genocide, Missionaries and // In: Encyclopedia of Genocide / Editor in chief Israel W. Charney. Santa Barbara, CA: ABC-CLIO, Inc., vol.*

Պետքարտուղարությանն ուղղված հյուպատոսների կողմից պատ-
րաստված զեկուցագրերին կցվում էին նաև միսիոներներից և այլ
աղբյուրներից ստացվող վկայությունները, իսկ դեսպանները ողջ տե-
ղեկատվությունն իրենց կից նամակներով փոխանցում էին Վաշինգ-
տոնին: Դեսպանությունը տեղեկություններ էր ստանում և մայրաքա-
ղաք ուղարկում նաև չեզոք պետությունների՝ Շվեդիայի, Գանիայի և
Շվեյցարիայի քաղաքացիներից, ինչպես նաև ողջ մնացած հայերից
և հայկական կազմակերպություններից:

ԳԼՈՒԽ 4

Արևմտահայության տեղահանություններն ու կոտորածները ամերիկյան աղբյուրների լուսաբանմամբ և ԱՄՆ-ի ղիվանագիտության գործունեությունը դեպքի Մորգենթաուի պաշտոնավարման ընթացքում

1. Ամերիկյան զիվանագետների հաղորդագրությունները Եղեռնին նախորդող ամիսներին արևմտահայության վիճակի մասին

Կայսրության քրիստոնյա բնակչության վիճակին վերաբերող ամերիկյան զիվանագիտական նամակագրության առաջին ուշագրավ փաստաթղթերից է Ջոյուռնիայում հյուպատոս Ջորջ Հորտոնի՝ Կոստանդնուպոլսում հավատարմագրված ԱՄՆ-ի դեսպանությանն ու Պետքարտուղարությանն ուղղված հաղորդագրությունը: 1915 թ. փետրվարի 4-ին նա գրում էր, որ շրջանում զգալիորեն մեծացել էր թուրք ավագակախմբերի թիվը, որոնք ահ ու սարսափ էին տարածում բոլոր քրիստոնյաների շրջանում: Տարբեր լուրեր էին շրջում ավագակախմբերի կազմի մասին: Մի մասն ասում էր, որ դրանք հիմնականում կազմված էին թուրք բանակի դասալիքներից, իսկ մյուսները խոսում էին, որ այս խմբերի հատուկ կազմված էին երիտթուրքական կոմիտեի կողմից՝ քրիստոնյա բնակչությանն ահաբեկելու և երկրից քշելու նպատակով:²⁰⁸

1915 թ. փետրվարի 25-ին Ամերիկայի Հայ առաքելական եկեղեցու առաջնորդ (Ամերիկայի հայոց առաջնորդարանը գտնվում էր Մասաչուսեթս նահանգի Վուստեր քաղաքում) Արսեն Վեհունին խնդրում է պետքարտուղար Ուիլյամ Բրայանին, որ Պետքարտուղարությունն օգնի ԱՄՆ-ում բնակվող քաղաքացի կամ ոչ քաղաքացի հայերին թուրքիայում ապրող իրենց ազգականներին անխափան կերպով դրամական միջոցներ փոխանցելու հարցում: Բանն այն էր, որ, պատերազմական իրավիճակից ելնելով, դրամատներն ու «American

²⁰⁸ See *United States Official Records on the Armenian Genocide, 1915-1917* /Compiled with an introduction by Ara Sarafian/, էջ 1-2 (NA/RG 59/867.00/739):

Express Company» ընկերությունը հրաժարվում էին Թուրքիայում վճարվելիք չեկերը դուրս գրելուց: Խնդիրը լուծելու նպատակով Կոստանդնուպոլսում հայոց պատրիարքարանի և «American Standard Oil Co.» ընկերության ներկայացուցչի միջև համապատասխան պայմանավորվածություն էր ձեռք բերվել: Առաջնորդ Վեհունին խնդրում է ԱՄՆ-ի պետքարտուղարության և դեսպանության միջոցով Կոստանդնուպոլսի պատրիարքարանին փոխանցել Միացյալ Նահանգներից դրամը փոխանցողների և ստացողների ցուցակները:²⁰⁹

1915 թ. մարտի 10-ին Ամերիկյան խորհրդի քարտուղար Ջեյմս Բարտոնը գրում է պետքարտուղարին, որ Լոնդոնում «American Express Company»-ի միջոցով 4.230 ֆունտ ստեռլինգ գումար Հակոբ Ջանջիզյանի անունով Թուրքիա փոխանցելու կապակցությամբ Լոնդոնում ԱՄՆ-ի գլխավոր հյուպատոսությունը հարցում է արել Պետքարտուղարությանը: Բարտոնն իր նամակում հավաստիացնում է, որ այդ գումարն օգտագործվելու է «քաղցած» քրիստոնյա հայերին օգնելու նպատակով: Նա իր կազմակերպության պատրաստակամությունն է հայտնում մինչև պատերազմի ավարտը նման միջոցները Թուրքիա փոխանցելու և քրիստոնյա հայերին օգնություն ցուցաբերելու հարցում:²¹⁰

Խարբերդում հյուպատոս Լեսլի Դեյվիսը ստանձնել էր իր պարտականությունները 1914 թ. հունիսին: Նրա տպավորությունների համաձայն՝ այդ ժամանակ երկրում խաղաղություն էր տիրում, մարդիկ հույս ունեին, որ ֆրանսիական վարկով կառուցվող երկաթգիծը, որի կառուցումն արդեն իսկ սկսվել էր Սամսունում, Խարբերդ պետք է հասներ մեկ կամ երկու տարում՝ նպաստելով շրջանի տնտեսության առաջընթացին: Առաջին միջոցառումը, որին մասնակցել էր Դեյվիսը, «Եփրատ» քոլեջի ավարտական արարողությունն էր: Քոլեջի ուսուցիչների և աշակերտների մեծամասնությունը հայեր էին: Միջոցառմանը ներկա էին նահանգապետն ու այլ թուրք պաշտոնյաներ: Ըստ հյուպատոսի՝ թուրքերի և հայերի հարաբերություններն այդ օրերին շատ բարեկամական էին, և որևէ մեկը չէր կարող նույնիսկ պատկերացնել, որ մեկ տարի անց այս երկրում տեղի էր ունենալու «համաշ-

²⁰⁹ Տե՛ս NA Microfilm Publications, Microcopy No. 353, Records of the Department of State Relating to Internal Affairs of Turkey, 1910-1929, Roll 51, NA/RG 59/867.48/71:

²¹⁰ Տե՛ս նույն տեղը, NA/RG 59/867.48/77:

խարհային պատմության մեջ ամենասարսափելի ողբերգությունը»:²¹¹

Դեյվիսը գրում էր, որ 1915 թ. մարտին իշխանությունների կողմից ամերիկյան դպրոցների փակումը դարձավ Խարբերդում և կայսրության այլ շրջաններում տեղի ունեցած ողբերգության նախերգանքը: Շուտով ձերբակալվեց «Եփրատ» քոլեջի ամենատարեց և հեղինակավոր դասախոս Թենեկեջյանը: Հյուպատոսն այդ հարցով հանդիպում էր ունեցել նահանգապետի հետ, սակայն այդպես էլ չէր հասկացել ձերբակալման պատճառը: Դեյվիսի խնդրանքով նրան ազատեցին, սակայն ավելի ուշ կրկին ձերբակալեցին, դաժանորեն տանջեցին և սպանեցին: Ապրիլին և մայիսին տեղի ունեցան հայերի նոր ձերբակալություններ: Շուտով լուրեր տարածվեցին այն մասին, որ հայկական հեղափոխական կազմակերպությունների անդամ հայերի մոտ հայտնաբերվել են ռուսներ և հրացաններ: Դեյվիսը գրում էր, որ, նկատի առնելով այն հանգամանքը, որ այդ զինամթերքը գտնվել է նույն օրերին կայսրության տարբեր շրջաններում, շատ հավանական է, որ դա կազմակերպված լինի իշխանությունների կողմից: Դեպքեր էին եղել, ըստ Դեյվիսի, որ երբ հայերից զենք էին պահանջել, մարտիկ նույնիսկ զենեկ և ոստիկաններին էին հանձնել կամ կաշառք վճարել հին հրացանների և ատրճանակների համար: Հյուպատոսը գրում էր, որ այդ օրերին ամերիկյան հիվանդանոցում աշխատող բժիշկ Ատկինսոնը հայտնաբերել էր մի քանի ատրճանակ և փամփուշտներ, որոնք պատկանում էին իշխանությունների կողմից ձերբակալված և բանտում գտնվող մի հայ երիտասարդի: Քանի որ բժիշկը վախենում էր, որ ոստիկանությունը կարող է խուզարկել հիվանդանոցն ու հայտնաբերել այդ զենքը, իսկ ինքը հիվանդության պատճառով չէր կարողանում դուրս բերել զենքը հիվանդանոցի տարածքից, այդ պատճառով այդ մասին տեղեկացրել էր հյուպատոսին: Դեյվիսն ու «Եփրատ» քոլեջի նախագահ Էռնեստ Ռիզզոն²¹² անձամբ դուրս էին բերել զենքը քաղաքից և կորցրել այն:²¹³

Դեյվիսն այնուհետև նշում է, որ այդ նույն օրերին 1913 թ.-ից

²¹¹ Տե՛ս *United States Official Records on the Armenian Genocide, 1915-1917* /Compiled with an introduction by Ara Sarafian/, էջ 613 (NA/RG 59/867.4016/392):

²¹² **Էռնեստ Ռիզզոն**՝ ամերիկացի միսիոներ, Հենրի Ռիզզոնի եղբայրը, 1910-1921 թթ.՝ «Եփրատ» քոլեջի նախագահը:

²¹³ Տե՛ս նույն տեղը, էջ 620-621 (NA/RG 59/867.4016/392):

Դիարբեքիրում աշխատող միսիոներ Ֆլոյդ Սմիթը հեռագրում է Խարբերդի միսիոներական առաքելությունում աշխատող Հենրի Ռիզզին՝ խնդրելով վերջինիս անհապաղ այցելել իրեն: Ռիզզը վերադարձավ Խարբերդ Սմիթի կնոջ և երեխայի հետ: Նա Դիարբեքիրում ստեղծված իրավիճակը բնութագրում էր որպես իշխանությունների կողմից իրագործված «ծայրահեղ անաբեկչություն»․ հայերը չէին կարողանում դուրս գալ փողոց, զինվորները հսկում էին իրավիճակը շենքերի կտուրներից, շատ հայեր ձերբակալվել էին և գտնվում էին բանտում, տղամարդկանց մեծ մասն արտաքսվել էր անհայտ ուղղությամբ: Իշխանությունները մեղադրում էին Սմիթին հայերին իր մոտ պահելու և նրանց զենքը տանը թաքցնելու մեջ: Ռիզզի և Սմիթի ընտանիքի՝ Խարբերդ հասնելուց մի քանի օր անց ոստիկանները շրջապատել էին միսիոներների տները՝ խուզարկելու նպատակով: Ոստիկաններն առգրավեցին միսիոներներից և, մասնավորապես, տիկին Սմիթից հին թերթեր, ամսագրեր, մանկական գրքեր, անձնական նամակներ և վերջինիս փոքր ատրճանակը: Դեյվիսը այդ հարցի կապակցությամբ հանդիպել էր քաղաքագլխին՝ խնդրելով նրան վերադարձնել տիկին Սմիթի անձնական իրերը, մասնավորապես՝ նամակները: Վերջինս պատասխանել էր, որ նամակները, հասցեատետրն ու այլ թղթեր պետք է ուղարկվեն Դիարբեքիրի նահանգապետարան, որից հետո կվերադարձվեն: Երկու-երեք օր անց Դեյվիսը տեղեկատվություն էր ստացել այն մասին, որ միսիոներ Սմիթին երկրից արտաքսելու որոշում է կայացվել:²¹⁴

Ֆլոյդ Սմիթը քաղաքում տեղի ունեցած իրադարձությունների կարևոր վկաներից մեկն էր: Նա նշում էր, որ հայերի համատարած ձերբակալությունների, բանտերում տեղի ունեցող սարսափելի կտտանքների հիմնական կազմակերպիչն էր 1915 թ. մարտին նահանգապետ նշանակված Մեհմեդ Ռեշիդը: Ըստ Սմիթի՝ հայերի «ընդհանուր ապատամբության» մասին խոսք անգամ լինել չէր կարող: Սարսափելի կտտանքների պայմաններում բանտ նետված հայերը կեղծ վկայություններ էին տալիս ոչ միայն հայրենակիցների, այլև Ամերիկյան խորհրդի անդամների մասին: Այսպես՝ ամերիկյան միսիոներների հետ մտերիմ հարաբերություններ ունեցող հայերը կտտանքների

²¹⁴ Տե՛ս նույն տեղը, էջ 621-622 (NA/RG 59/867.4016/392):

տակ անհեթեթ փաստաթուղթ էին ստորագրել առ այն, թե իբր Ամերիկյան խորհուրդն ապստամբություն է նախապատրաստում Դիարբեքիում, իսկ նրա գործակալ Մմիթն ազգությամբ հայ է: Դրա հետևանքով իշխանությունները վտարեցին Մմիթին երկրից, իսկ Ամերիկյան խորհրդի ողջ ունեցվածքը քաղաքում առգրավվեց: 1915 թ. մայիսի 25-ի լքված ունեցվածքի մասին օրենքի համաձայն՝ Մեհմեդ Ռեշիդը ստեղծեց հայկական ունեցվածքը տնօրինող հանձնաժողով, որի նպատակը ոչ թե ունեցվածքի պաշտպանությունն էր, այլ նրա տրամադրումը մահմեդականներին:²¹⁵

1915 թ. մարտի 30-ին Կոստանդնուպոլսում դեսպան Հենրի Մորգենթաուն հեռագրում է Պետքարտուղարին, որ, Հալեպում հյուպատոս Ջեսսի Ջեքսոնից ստացված տեղեկատվության համաձայն, Ջեյթունում և շրջանում տեղի են ունեցել ընդհարումներ թուրքական բանակի և հայերի միջև: Ըստ կառավարության հաղորդագրության՝ բախումը տեղի էր ունեցել բանակի և դասալիք հայերի միջև, սակայն որևէ վտանգ չկար, որ անհանգստությունը կարող է տարածվել նաև հարևան շրջանների վրա: Սակայն դեսպանը նշում էր, որ հայերի հետ կապված անհանգստությունների մասին լուրեր էին ստացվում նաև Բիթլիսի մահանգից: Դեսպանը տեղեկացնում էր, որ մյուս երկրների դեսպանների հետ նախագրուշացնում է Բարձր Դռանը «անկարգությունները» կանխելու նպատակով «խիստ կանխարգելիչ» գործողությունների կիրառման չափազանց կարևորության մասին:²¹⁶

Երեք տարի անց՝ 1918 թ. մարտի 4-ին, Վաշինգտոնում գտնվող նախկին հյուպատոս Ջեքսոնը Պետքարտուղարությանն է ներկայացրել «Հայկական դաժանությունները» տեղեկանքը: Նա գրում է, որ 1915 թ. փետրվարին թուրքական կառավարությունը որոշեց զինաթափել Ջեյթոնի հայերին, ինչը նախակարապետը դարձավ «ավելի կործանարար իրադարձությունների, երբ հայ ազգը դարձավ հիմնական տառապյալը»: Ըստ Ջեքսոնի՝ թուրքերը մեծ դժվարությամբ կարողացան ստիպել հայերին զինաթափվել, քանի որ վերջիններս, իրենց փորձից ելնելով, զիտակցում էին, որ զինաթափումը կարող է

²¹⁵ Տե՛ս **Kiezer Hans-Lukas**, *Nearest East. American Millennialism and Mission to the Middle East*, էջ 89-90:

²¹⁶ Տե՛ս NA Microfilm Publications, Microcopy No. 353, Records of the Department of State Relating to Internal Affairs of Turkey, 1910-1929, Roll 6, NA/RG 59/867.00/746:

վտանգել այդ շրջանում մեծամասնություն կազմող հայ բնակչության անվտանգությանը: Նման գործողություններ թուրքական իշխանություններն իրակացրին նաև Այնթապում, Ալեքսանդրեթում, Մարաշում, Ուրֆայում, Բիրեջիկում և բազմաթիվ այլ փոքր քաղաքներում ու գյուղերում: Ըստ Ջեքսոնի՝ թուրք իշխանություններն ու իրենց գերմանացի դաշնակիցներն իբր «վախեցնում էին հին օրերի» կոտորածների փորձից, երբ թուրքերը բացահայտ կերպով հարձակվում էին հայերի վրա:

Ջեքսոնը նշում էր, որ Հալեպում Գերմանիայի հյուպատոս Վալտեր Ռյոպերը, որը մեծ հեղինակություն էր վայելում շրջանում, բանակցություններ է վարել իշխանությունների հետ՝ արյունահեղությունը կանխելու նպատակով: Ջեքսոնը շարունակում էր, որ փաստ է, որ այդ բանակցությունների հետևանքով սկսվեցին իշխանությունների համար հայերի «հաջողված» արտաքսումները շրջանից, որոնք այնուհետև նույնպիսի «հաջողությամբ» իրագործվեցին կայսրության ողջ տարածքում: Դա տեղի ունեցավ նաև անմիջապես այն բանից հետո, երբ Գերմանիայի կողմից գրավված Հյուսիսային Ֆրանսիայում գերմանացիներն արտաքսեցին 60 հազարից ավելի ֆրանսիացիների՝ հիմնականում ծեր մարդկիկ, կանայք և երեխաներ: Ըստ Ջեքսոնի՝ ինչպես ինքը, այնպես էլ շատ շատերը ենթադրում էին, որ կան գերմանացիներն են առաջարկել թուրքերին կիրառել այդ ծրագիրը, կան էլ երիտթուրքական կառավարությունն է ընդօրինակել հայերին մեկընդմիջտ արտաքսելու մեթոդը գերմանացիների թողտվության պայմաններում: Այն բանից հետո, երբ ամերիկյան միսիոներներն ու ամերիկյան մամուլը մեղադրական նյութեր հրապարակեցին Գերմանիայի հյուպատոսի գործունեության մասին, վերջինս այցելեց Ջեքսոնին և առաջարկեց գրավոր հայտարարությամբ հանդես գալ այն մասին, որ Ռյոպերն իր հնարավորությունների սահմաններում ամեն ինչ արել է իշխանությունների կողմից հայերի հետապնդումները կանխելու համար: Երբ Ջեքսոնը հրաժարվում է նման հայտարարություն անելուց և ասում, որ, իր համոզմամբ, եթե ոչ ուղիղ, բայց անուղղակի կերպով գերմանացիները պատասխանատվություն են կրում այս հարցում, գերմանացի հյուպատոսը ջղայն կերպով պատասխանում է, թե իբր ԱՄՆ-ի դեսպանությունը համաձայնել է այդ գաղափարին: Ռյոպերի մեկնելուց անմիջապես հետո Ջեքսոնը հեռագրում է Կոստանդնուպոլիս և պարզում, որ դեսպան Մորգենթաուն նույնպես հրա-

ժարվել է նման առաջարկից:²¹⁷

1915 թ. ապրիլի 1-ին Բաղդադում ԱՄՆ-ի հյուպատոս Չարլզ Բրիստելը զեկուցում է, որ քրիստոնյա բոլոր փոքրամասնությունների վիճակը հյուպատոսական տարածքում լավ չէ, քանի որ օրեցօր լուրեր էին տարածվում կրոնական հողի վրա կայսրության տարբեր վայրերում կատարվող հետապնդումների մասին: Ըստ հյուպատոսի՝ վերջերս Բաղդադում տեղակայված զորամասում բոլոր հայ զինվորներից առգրավվել էր զենքը, քանի որ իբր «վերջերս Հայաստանում հայ զինվորներ էին հանձնվել ռուսներին»: Հայ զինվորներին չափազանց վատ պայմաններում օգտագործում էին երկաթգծի շինարարության վրա: Ըստ հյուպատոսի՝ շրջանի քրիստոնյաները հիմնականում վատ էին տրամադրված թուրքերի հանդեպ, սակայն սովորաբար զգուշությամբ էին հանդես բերում՝ նկատի առնելով արտակարգ իրավիճակի առկայությունը: Բրիստելը նշում էր, որ դրա հիմնական պատճառն այն էր, որ տեղական իշխանությունները որևէ համակրանք չէին տաժում ոչ մահմեդական բնակչության նկատմամբ: Դժվար էր կանխատեսել, թե ինչ տեղի կունենա ապագայում, սակայն փաստն այն էր, որ որքան Թուրքիայի հանդեպ աճեեր էր արտաքին ճնշումը, զուգահեռաբար կխստանար քրիստոնյաների նկատմամբ վերաբերմունքը: Ըստ հյուպատոսի՝ եթե թուրքական բանակը շարունակեր պարտություններ կրել, զուգահեռաբար կաճեր նաև մուլեռանդությունը քրիստոնյաների հանդեպ, ինչն իր հետ կարող էր բերել «զուրջ խնդիրներ»:²¹⁸

Ապրիլի 8-ին հյուպատոս Ջեքսոնը դեսպան Մորգենթաուին ներկայացնում է Գերմանիայի քաղաքացու կողմից Հալեպում տարածված արաբներենով հրատարակված պարսավագրի պատճենը: «Իսլամի բոլոր ժողովուրդներին» ուղղված «համընդհանուր հռչակագրում» մասնավորապես ասվում էր. «Մահմեդականները պետք է իմանան, որ իսլամական հողերին տիրող անհավատների սպանությունը՝ զաղտնի կամ բացահայտ կերպով, դարձել է սուրբ պարտականություն...»:²¹⁹ «Եվ թող ամեն անհատ մահմեդական, որտեղ էլ որ նա լինի, երդում տա սպանելու առնվազն երեք կամ չորս անհավատների՝ Աստծո և կրոնի թշնամիների»: Պարսավագրում կոչ էր արվում նաև բարեկա-

²¹⁷ Տե՛ս նույն տեղը, Roll 46, NA/RG 59/867.4016/373, էջ 706-708:

²¹⁸ Տե՛ս նույն տեղը, Roll 6, NA/RG 59/867.00/760, էջ 1-3:

²¹⁹ Նույն տեղում, Roll 6, NA/RG 59/867.00/762, p. 12.

մություն չանելու հրեաների ու քրիստոնյաների հետ և «քշելու նրանց իրենց բնիկ հողերից»:²²⁰

Ըստ հյուպատոսի՝ փաստաթուղթը պարունակում է թեզեր, որոնք «մեծ սարսափ էին առաջացրել ոչ մահմեդականների շրջանում»:
«Ինչպես որ երևում է,- շարունակում էր հյուպատոսը,- գոյություն ունի վճռական ցանկություն քաղաքացիական բնակչության շրջանում արյունահեղություն հրահրելու ուղղությամբ»:
Ջեքսոնը պարսավագիրը ցույց էր տվել նահանգապետին, սակայն երբ վերջինս պարզել էր այն տարածողների անունները, հրաժարվել էր որևէ միջոց կիրառելուց:
Հյուպատոսը ստույգ տեղեկատվություն ուներ այն մասին, որ գրքույկը տարածել էին Գերմանիայի հպատակներ տեր և տիկին Կոխերը:
Որոշ տեղեկությունների համաձայն՝ այդ հարցում նրանց օգնել էր Գերմանիայի մեկ այլ քաղաքացի Օսկար Ֆլեխսիզը:
Ըստ Ջեքսոնի՝ գոյություն ուներ նաև տեղեկատվություն այն մասին, որ պարսավագիրը հրատարակվել է Կոստանդնուպոլսում Բաղդադի երկաթգծի գլխավոր ինժեներ, պարոն Գյունտերի օժանդակությամբ:
Կար նաև վարկած, որ գրքույկը հրատարակվել է Հալեպում՝ տիկին Կոխի վերահսկողության ներքո:
Ջեքսոնը համոզված էր, որ գերմանացիները «անմիջականորեն պատասխանատու են» ջարդ հրահրելու գործում:
Ըստ հյուպատոսի՝ գերմանական ազդեցությունն այնքան մեծ էր կառավարական պաշտոնյաների վրա, որ վերջիններս որևէ հակադարձ գործողության չէին կարող դիմել, մինչև որ Կոստանդնուպոլսից հրահանգ չստանային:
Ամերիկացի հյուպատոսը համոզված էր, որ անհրաժեշտ էր ինչ-որ բան ձեռնարկել այս քարոզչությունը դադարեցնելու ուղղությամբ, քանի որ այն կարող էր «գժբախտության» հասցնել:
Ջեքսոնը խոսել էր այդ հարցի շուրջ գլխավոր ռաբբիի հետ, որն իր մտահոգությունն էր հայտնել ինչպես հրեաների, այնպես էլ քրիստոնյաների անվտանգության վերաբերյալ:²²¹

1915 թ. ապրիլի 21-ին Ջեքսոնը գրում է դեսպան Մորգենթաուին, որ Այնթապի Կենտրոնական Թուրքիայի քոլեջի նախագահ պատվելի Ջոն Մերրիլը հատուկ ժամանել է Հալեպ՝ Մարաշում, Ջեթրոնում, Այնթապում և շրջակա գյուղերում տիրող իրավիճակի մասին տեղեկություններ փոխանցելու նպատակով:
Մերրիլը զեկուցում է հյուպատոս-

²²⁰ Տե՛ս նույն տեղը, Roll 6, NA/RG 59/867.00/762, էջ 16:

²²¹ Տե՛ս նույն տեղը, Roll 6, NA/RG 59/867.00/762, էջ 1-2:

սին, որ Հալեպի նահանգապետ Ջելալ բեյի հետ գրույցից հետո եկել է այն համոզման, որ վերջինս հնարավորություն չուներ բարելավելու իրավիճակը: Մերիլը հանդիպել էր նաև Գերմանիայի հյուպատոսի հետ, քանի որ վերջինս, հանդիսանալով պատերազմում Թուրքիայի դաշնակից տերության ներկայացուցիչ, իրավունք ուներ, ի տարբերություն չեզոք պետությունների ներկայացուցիչների, զաղտնագրեր ուղարկելու իր կառավարությանը: Մերիլը խնդրել էր Գերմանիայի հյուպատոսին նաև տեղեկացնել նահանգում տիրող իրավիճակի մասին Կոստանդնուպոլսում ԱՄՆ-ի դեսպանությանը: Ջեքսոնը նշում է, որ նման միջոցներով էր միայն հնարավոր ճնշում գործադրել օսմանյան կառավարության վրա, որպեսզի վերջինս հրաժարվի «սարսափելի միջոցների» կիրառումից: Հյուպատոսը կից ներկայացնում էր Մերիլի հաղորդագրությունը՝ Մարաշում տիրող իրավիճակի վերաբերյալ:²²²

Մերիլի հաղորդագրությունը հիմնականում կազմված էր Այնթապում գործող ամերիկացի միսիոներներ Կարոլայն Համիլտոնի և Կ. Ֆ. Ռեննիի զեկուցագրերի հիման վրա, որոնք վերադարձել էին Մարաշից ապրիլի 16-ին: Հաղորդագրության մեջ նշվում էր, որ Մարաշի նահանգապետ Իսմայիլ Քեմալ փաշան թեև մահմեդական էր, սակայն հայտնի էր քրիստոնյաների հանդեպ ունեցած իր համակրանքով:²²³ Ըստ զեկուցագրերի՝ երկու շաբաթ առաջ զինվորական հանձնաժողով էր մեկնել Մարաշ՝ իրավիճակն ուսումնասիրելու նպատակով, սակայն հայերին մեղադրող որևէ վկայություն չէր հայտնաբերվել: Միաժամանակ հանձնաժողովը 30 հայերի և նրանց հաստատությունների ցանկ էր ներկայացրել Մարաշի ղեկավար մահմեդականներին, որի հետևանքով նրանց տներն ու ունեցվածքը ենթարկվել էին խուզարկության, մարդկանց ձերբակալել էին, իսկ նրանց գրքերն ու փաստաթղթերը բռնագրավել: Հարցաքննությունից հետո հայերին ազատել էին, իսկ գրքերի մի մասը՝ վերադարձրել: Ապրիլի 9-11-ը Մարաշի

²²² Տե՛ս նույն տեղը, Roll 6, NA/RG 59/867.00/761, էջ 1-2:

²²³ Այդ մասին իր հուշերում վկայում է նաև Մարաշի երեք հայ ավետարանական եկեղեցիներից մեկի քահանա Աբրահամ Հաթունյանը: Նա գրում է, որ նահանգապետ Իսմայիլ Քեմալ փաշան «բարի և արդարություն սիրող մարդ էր», որը համակրում էր հայերին, դեմ էր արտահայտվում կառավարության՝ հայերին արտաքսելու ծրագրին և շատ հայերի կյանք էր փրկել (Տե՛ս **Hartunian Abraam H.**, *Neither to Laugh nor to Weep. A Memoir of the Armenian Genocide*, Boston, Beacon Press, 1968, էջ 62):

բնակիչներին զենքը գրանցելու կարգադրություն էր տրվել, թեև այն կիրառվեց միայն քրիստոնյաների նկատմամբ: Մինչև կարգադրության մեջ նշված ժամանակի լրանալը խուզարկություն էր կատարվել քրիստոնյաների տներում: Ով չէր հասցրել գրանցել իր զենքը, ձերբակալվել էր: Ձեկուցազրերում նշվում էր, որ մահմեդականները տեղեկություններ էին տալիս իրենց հարևան քրիստոնյաների մասին, նրանց տները խուզարկվում էին, առգրավվում էին նրանց դրամական միջոցներն ու ունեցվածքը: Ավելին, երբ Գերմանիայի հյուպատոսն այցելել էր Մարաշ, քաղաքի ղեկավար մահմեդականներից մեկն ասել էր նրան, որ Մարաշի հայերին²²⁴ չի կարելի վստահել, քանի որ նրանք Գերմանիայի և նրա կառավարության թշնամիներն են: Նրան ասվել էր նաև, որ Մարաշում խաղաղություն չի կարող հաստատվել, մինչև ոմանք կախաղան չհանվեն, բանտ չնետվեն, իսկ շատերը խստորեն չպատժվեն:²²⁵

Համիլտոնն ու Ռեննին շարունակում էին տեղեկացնել, որ մինչև Ձեյթունում կրակոցների ու վանքի շրջակայքում մարտական գործողությունների սկսվելը Մարաշից այնտեղ հանձնաժողով մեկնեց, որի կազմում էին բողոքական մի քահանա և առաքելական եկեղեցին ներկայացնող երկու հայեր: Նրանք թույլտվություն էին ստացել տեղական իշխանություններից զեյթունցիների հետ վարելու բանակցություններ՝ խաղաղ հանգուցալուծման հասնելու նպատակով: Սակայն հանձնաժողովն այդպես էլ իր նպատակին չհասավ, քանի որ զեյթունցիները չհամաձայնեցին հանձնվել իշխանություններին:

Համաձայն միսիոներների հաղորդած տեղեկատվության՝ ավելի ուշ Ձեյթունի իշխանությունները համոզեցին հայ բնակչությանը

²²⁴ Մարաշի ավետարանական եկեղեցու քահանա Աբրահամ Հարթունյանի տվյալների համաձայն՝ քաղաքում ապրում էին 40 հազար հայեր, որոնցից 3.500-ը բողոքականներ էին: Մոտավորապես 40 հազար հայեր էլ ապրում էին շրջակա գյուղերում և քաղաքներում՝ ներառյալ Ձեյթունը: Մարաշում գործում էին վեց հայ առաքելական, երեք հայ ավետարանական և երկու հայ կաթոլիկ եկեղեցիներ: Բացի բազմաթիվ հայ տարրական և մեկ բարձրագույն դպրոցներից՝ քաղաքում գործում էին նաև ամերիկյան աստվածաբանական ճեմարանը, օրիորդաց քոլեջը, հինգ գերմանական, բրիտանական ու ամերիկյան որբանոցները և գերմանական հիվանդանոցը: Մարաշում աշխատում էին 30 գերմանացի, բրիտանացի և ամերիկացի միսիոներներ (Տե՛ս **Hartunian, Abraam H.**, նշվ. աշխ., էջ 51-52):

²²⁵ Տե՛ս NA Microfilm Publications, Microcopy No. 353, Records of the Department of State Relating to Internal Affairs of Turkey, 1910-1929, Roll 6, NA/RG 59/867.00/761, էջ 2-4:

հանձնել ապստամբներին այն պայմանով, որ քաղաքը և նրա բնակիչները չեն տուժելու: Ի վերջո, նրանք դասալիք զինվորներին հանձնեցին իշխանություններին, որոնց ուղարկեցին Այնթապ և Հալեպ: Սակայն, չնայած տված խոստումին, 1915 թ. ապրիլի 9-ին իշխանություններն ասացին Ձեյթունի հայ բնակչության ներկայացուցիչներին, որ հայ բնակչությունը ենթարկվելու է տեղահանության: Հանդիպմանը մասնակցող հայերին մույնիսկ թույլ չտվեցին վերադառնալ իրենց տները. 35 ընտանիքներ անմիջապես արքարվեցին դեպի Մարաշ: Նրանց մեջ էին նաև Ձեյթունի որբանոցի տնօրենը, նրա կինն ու երկու զավակները: Քանի որ որբանոցը գտնվում էր ամերիկյան հովանավորության ներքո, միսիոներներ Լայմանն ու Վուդլին փորձեցին հանդիպել նրանց հետ, սակայն իշխանությունները թույլ չտվեցին: Մարաշում գտնվող տեղահանվածների հետ այդպես էլ ոչ ոք չկարողացավ հանդիպել, նրանց չէին ապահովել սնունդով, տղամարդկանց և կանանց բաժանել էին իրարից և ուղարկել արքարի մեկ ժամ տարբերությամբ: Առաջին խմբին ուղեկցող սպան զինվորներին բացահայտ կերպով հրահանգել էր, որ նրանք կարող են ցանկացած բան անել կանանց և աղջիկների հետ:

1915 թ. ապրիլի 12-ին Ձեյթունից ժամանեց երկրորդ խումբը, որի կազմում էին երեք առաքելական եկեղեցու քահանաներ: Այս խումբն ավելի լավ էր պատրաստվել տեղահանմանը, քան նախորդը: Համաձայն Համիլտոնի տեղեկատվության՝ տեղահանվածների այս խմբին ուղարկեցին դեպի Իրաք:

Ըստ միսիոներների տեղեկատվության՝ Ֆռնուզ գյուղի բնակչությունը մույնպես տեղահանվեց, թեև նրանց մույնպես խոստացել էին ձեռք չտալ իշխանություններին ցուցաբերած հավատարմության համար: Գեբինի և Մարաշի շրջանի այլ գյուղերի բնակչությանը հավաքեցին Մարաշ քաղաքում, որտեղից էլ արքարեցին: Այնթապում տեղակայված մահմեդական փախստականներին անմիջապես թույլ տվեցին բնակվել քրիստոնյաների տներում: Ըստ Համիլտոնի և Ռեննիի՝ կառավարությունը հրահանգ էր տվել տեղահանելու Մարաշի գյուղերի ողջ հայ բնակչությանը:²²⁶

Համաձայն Համիլտոնի և Ռեննիի տեղեկատվության՝ քրիստոն-

²²⁶ See NA Microfilm Publications, Microcopy No. 353, Records of the Department of State Relating to Internal Affairs of Turkey, 1910-1929, Roll 6, NA/RG 59/867.00/761, էջ 3-5:

յաների նկատմամբ Մարաշում իրագործվելու էր հետևյալ ծրագիրը. սկզբում 32-37, իսկ հետո 37-45 տարեկան տղամարդկանց տանելու էին բանակ, իսկ նրանց ընտանիքներին աքսորելու էին: Հալեայի նահանգապետն այդ օրերին չէր ժխտել, որ հայերի հանդեպ նման ծրագիր էր իրագործվելու, ինչպես նաև չէր ժխտել, որ Ձեյթունից տեղահանվածներն աքսորվելու էին Մոսուլի և Բաղդադի ուղղությամբ: Մարաշի հայերն այդ կապակցությամբ ասում էին, որ ավելի կնախընտրեին կոտորածը, սակայն երևում էր, որ իշխանությունները փորձում էին խուսափել աչքի ընկնող արյունալի ծրագրից և որոշել էին կիրառել տեղահանության այս ծրագիրը, որը պատերազմի ընթացքում կարող էր համարվել օրինական: Ըստ միսիոներների՝ Հալեայի նահանգապետն իբր փորձել էր ընդդիմանալ այդ ծրագրին, սակայն հսկողությունն ամբողջությամբ վերցվել էր իր ձեռքից:

Ամփոփելով Համիլտոնի և Ռեյնիի կողմից ստացված տեղեկատվությունը՝ պատվելի Մերրիլը եզրակացնում է.

1. Կեղծ զեկույցներ են փոխանցվել Մարաշից Կոստանդնուպոլիս այն մասին, որ տեղահանության որոշման ընդունման մեղավորները քրիստոնյաներն են: Նույնը տեղի էր ունեցել 1895-1896 թթ. ժամանակ:

2. Մարաշի մահմեդականները կեղծ մեղադրանքներ են ներկայացրել զինվորական հանձնաժողովին հայերի դեմ:

3. Իշխանությունները խաբել են Ձեյթունի և Ֆռնուզի հայ բնակչությանը, ինչն արել էին հայերի հետ նաև 1909 թ.: Այն ժամանակ հայերը սպանվեցին, իսկ ներկայումս տեղահանվում են:

4. Իրականում մեղավորները մի քանիսն են, սակայն պատժվում են մեծ թվով անմեղ տղամարդիկ, կանայք և երեխաներ:

5. Հայ ընտանիքների տեղահանությունը կոտորածի, քրիստոնյա բնակչության դերն ու ազդեցությունը թուլացնելու մի նոր ձև է:

6. Կանանց բռնաբարությունը, ընտանիքների բաժանումը, ունեցվածքի բռնագրավումը վրդովմունք են առաջացրել որոշ թուրք ղեկավարների շրջանում, սակայն նրանք անկարող են որևէ բան անելու:

7. Մարաշի կրթված հայերի տեղահանությունն ուղղված է ամերիկյան միսիոներության շահերի, նրանց 50 տարվա գործունեության արդյունքների դեմ:²²⁷

²²⁷ Տե՛ս նույն տեղը, էջ 6-8:

Շուրջ մեկ տարի անց՝ 1916 թ. փետրվարի 5-ին, «*Saturday Evening Post*»-ը հրապարակել էր հայերի տեղահանության մասին կառավարության հռչակագիրը, որի օրինակն ամերիկուհի Էլեոնոր Իգանը Միացյալ Նահանգներ էր կարողացել բերել՝ շրջանցելով թուրքական իշխանությունների խստագույն գրաքննության համակարգը: 1915 թ. հռչակագիրը փակցվել էր բոլոր այն քաղաքներում և գյուղերում, որտեղ հայեր էին ապրում: Փաստաթղթի նախաբանում նշվում էր, որ տարիներ շարունակ հայերն արտասահմանցիներից ընդօրինակել էին «հասարակական կարգը խանգարելու կեղծ գաղափարներ», որոնք վնասակար էին պետության խաղաղության և կարգուկանոնի համար: «Ավելին՝ ներկայումս նրանք թշնամու կողմն են անցել»,- ասված էր հռչակագրում: Այդ իսկ պատճառով «հայերը պետք է քստրվեն ներքին նահանգներում պատրաստված վայրեր»»: Այնուհետև հռչակագրում հայտարարվում էր հետևյալը. առաջին՝ բոլոր հայերը, բացի հիվանդներից, պարտավորվում են հինգ օրվա ընթացքում լքել իրենց գյուղերն ու թաղամասերը ժանդարմների ուղեկցությամբ. երկրորդ՝ ճանապարհի համար նրանք կարող են վերցնել շարժական ունեցվածք, սակայն չեն կարող վաճառել իրենց հողն ու արժեք ունեցող ունեցվածքը, քանի որ նրանց արտաքսումը միայն ժամանակավոր է. երրորդ՝ նրանց խոստանան անվտանգություն. չորրորդ՝ ճանապարհին նրանց չեն անհագստացնելու. հինգերորդ՝ հրահանգից խուսափումը կամ դիմադրության ցուցաբերումն արգելված է:²²⁸

2. 1915 թ. Վանի հերոսամարտը և հայ բնակչության կոտորածները ամերիկյան աղբյուրների լուսաբանմամբ

Երիտթուրքական ղեկավարները խրախուսում էին հայերի ջարդերը կովկասյան տարածաշրջանի հայաշատ քաղաքներում և դեպի Ուրմիա ձգվող շրջանում, որտեղ թուրքական և ռուսական ռազմական գործողությունների հետևանքով հազարավոր փախստականներ էին կուտակվել:²²⁹ Մարտի վերջին թուրքական բանակն ամրապնդեց իր

²²⁸ Տե՛ս *The Armenian Genocide. News Accounts from the American Press: 1915-1922* / Ed. Richard D. Kloeian, Berkeley, CA: Anto Printing, 1985, էջ 130-131:

²²⁹ Տե՛ս *Chronology of the War // Current History*, 1915, April, No. 2, էջ 197:

դիրքերը Մուշ-Բիթլիս շրջանում՝ դեպի արևմուտք, իսկ ապրիլին թուրքական զորքերը Հալիլ բեյի հրամանատարությամբ շարժվեցին Վանա լճի հարավից դեպի Ուրմիա:

Թուրքերը բռնի կերպով ներխուժել էին ամերիկյան առաքելության շենք, սպանել մի քանի ասորի փախստականների, հարձակվել և վիրավորել միսիոներներին: Սակայն մի քանի օրից ռուսական բանակը ստիպեց թուրքերին նահանջել դեպի Վան, որի հետևանքով շուրջ 50 հազար քրիստոնյաներ դարձան փախստականներ, հազարավոր մարդիկ սպանվեցին:²³⁰ Էնվերի աներձագը՝ Ջոզեֆ բեյը²³¹, որը պարտություն կրեց ռուսներից Խոյում, իր ողջ վրեժը լուծեց անգն բնակիչներից՝ սպանելով շուրջ 800 հոգի Սալմաստի շրջանում դեպի Վան նահանջի ընթացքում: Երևանի նահանգ փախած Ուրմիայի մահմեդական օրիորդաց ամերիկյան դպրոցի տնօրենի Մերի Լյուիսը գրում էր, որ տեղի ունեցածը շատ նման էր ջիհադի, քանի որ ծրագրված բնույթ էր կրում: Միաժամանակ որոշ մահմեդականներ բարեկամաբար էին տրամադրված և փրկել էին շատ քրիստոնյաների:²³²

Ամերիկյան միսիոներական առաքելություններն առանձնակի խնդիրներ չէին ունեցել Օսմանյան կայսրության տարածքում մինչև այն պահը, երբ 1915 թ. ապրիլին երիտթուրքական իշխանությունները հարձակում սկսեցին Վան քաղաքի շրջակա բնակավայրերի հայ բնակչության դեմ, որոնց համարում էին դավաճաններ՝ Ռուսաստանին համակերելու և օգնելու պատճառաբանությամբ: Ինչպես նշում էր Ջոզեֆ Գրաբիլը, Վանը համարվում էր Օսմանյան կայսրության «հայկականության» (armenianism) կենտրոնը, որի 50 հազարանոց բնակչության 60%-ը հայեր էին: Վանում տեղակայված էին «ուժեղ» ավետարանական կազմակերպությունն ու ամերիկյան քոլեջը. այստեղ աշխատում էին 11 ամերիկացի միսիոներներ:²³³

Քանի որ Միացյալ Նահանգները հյուպատոսություն չունեին Վանում, քաղաքում և շրջանում տեղի ունեցած դեպքերի կարևոր վկաներ

²³⁰ Տե՛ս *Current History*, 1915, May, No. 2, էջ 405:

²³¹ **Ջոզեֆ բեյ**՝ թուրք պաշտոնյա, Վանի վիլայեթի նահանգապետ, Էնվեր փաշայի աներձագը: Վանի պաշարման ընթացքում պատասխանատու էր Վանում և շրջակա բնակավայրերում տասնյակ հազարավոր հայերի կոտորածի կազմակերպման համար:

²³² Տե՛ս **Payaslian Simon**, նշվ. աշխ., էջ 61:

²³³ Տե՛ս **Grabill Joseph L.**, նշվ. աշխ., էջ 60:

են համարվում ամերիկյան միսիոներները, որոնց շարքում առանձնանում է 1917 թ. իր հուշերում ամենամանրամասն տեղեկություններ ներկայացրած Քլերենս Աշերը: Կրոնական գործիչ և բժիշկ Աշերը կրթություն էր ստացել Ֆիլադելֆիայի աստվածաբանական ճեմարանում, այնուհետև՝ շարունակել իր ուսումը Կանգաս քաղաքի բժշկական քոլեջում: 1898 թ. Ջեյմս Բարտոնի կոչով նա մեկնել էր Օսմանյան կայսրություն՝ միսիոներական աշխատանքի: Իր կյանքն ու գործունեությունն այդ երկրում մշտապես առնչվել էին օսմանյան իշխանությունների կողմից կազմակերպված հայերի կոտորածներին: Այսպես՝ արդեն իսկ Թուրքիայի սահմանն անցնելիս մաքսատան աշխատողները նրանցից առգրավել էին իր բառարանը, որը պարունակում էր «ազատություն» և «հեղափոխություն» բառերը, որոնք կառավարությունը համարում էր «վնասակար»:²³⁴

Մեկ տարի Խարբեղում աշխատելուց հետո Աշերը մեկնել էր Վան, քանի որ այնտեղ աշխատող միսիոներ, բժիշկ Ջորջ Ռեյնոլդսն օգնության կարիք ուներ: Վանում Աշերն ամենուրեք հանդիպում էր հայերի նկատմամբ նախկինում կազմակերպված կոտորածների հետևանքների՝ ավերված տներ և տուժած բնակչություն: Ռեյնոլդսն ու իր կինը ղեկավարում էին 400 երեխաներ խնամող որբանոցը, որը հատկացումներ էր ստանում «Հայաստանի բրիտանական ընկերներ» (British Friends of Armenia), «Գերմանական կոմիտե» և «Շվեյցարական կոմիտե» կազմակերպություններից:²³⁵

Աշերը նշում է, որ Վանի նահանգապետ Ջոզեֆ Բեյրը կազմակերպել էր «դաժան արշավ» Վանի շրջակա հայկական գյուղերի հանդեպ՝ պահանջելով հանձնել իրենց տներում եղած զենքը: Չերբակավել էին հազարավոր հայեր, շատերը ենթարկվել էին կտտանքների և մահացել: Նահանգում հաստատվել էր հակահայկական տեռորի մթնոլորտ, նահանգապետը պահանջում էր, որ հայերը տրամադրեն չորս հազար հայ երիտասարդ՝ բանվորական ջոկատներում ծառայելու համար: Հայերը չէին ցանկանում ենթարկվել, քանի որ նման ջոկատներ մեկնած հայերը երկրի տարբեր վայրերում ենթարկվել էին

²³⁴ Տե՛ս **Ussher D. Clarence**, *An American Physician in Turkey*, Boston: Houghton Mifflin & Co., 1917, էջ 5:

²³⁵ Տե՛ս **Balakian Peter**, *The Burning Tigris. The Armenian Genocide and America's Response*, էջ 202:

կոտորածների: Երբ նրանք պահանջեցին, որ հայ երիտասարդներն անցնեն սովորական զինվորական ծառայության, իշխանությունները նրանց մերժեցին:

Աշերն ու ամերիկացի մյուս միսիոներները տեղյակ չէին նահանգում տեղի ունեցող հայ մտավորականների և գործիչների ձերբակալությունների և ջարդերի մասին, մինչև որ հայտնի դարձավ Վան քաղաքի հարավում գտնվող Շատախից ստացված լուրը՝ հայկական դպրոցի ուսուցչին սպառնացող կախաղանի մասին: Շատախի հայերը շրջապատել էին կառավարական շենքերը՝ պահանջելով ազատ արձակել ուսուցչին: Ապրիլի 17-ին նահանգապետը փորձել էր օսմանյան խորհրդարանի պատգամավոր Արշակ Վռամյանի²³⁶ միջոցով լուծել խնդիրը: Աշերը նույնպես փորձել էր օգտակար լինել ստեղծված լարվածությունը բուլացնելու հարցում: Նա մեկնել էր նահանգապետի մոտ, սակայն գրույցի ժամանակ ներս էր մտել նախկին բանտարկյալ հանցագործներից կազմված հատուկ, ինչպես այն անվանում էին, «մսագործ զնդի» հրամանատարը և տեղում ցուցում ստացել անմիջապես մեկնելու Շատախ ու «ոչնչացնելու» հայ բնակչությանը: Շրջվելով դեպի Աշերը՝ նա սառնասրտորեն ասել էր. «Ես ոչ մեկին ողջ չեմ թողնելու՝ այս հասակից բարձր ոչ մեկին», և ցույց տվել իր ծունկը՝ փաստորեն ակնարկելով, որ, փոքր երեխաներից բացի, բոլորը ոչնչացվելու են: Ըստ Աշերի՝ այդ հրահանգով «մսագործ» գունդը ոչնչացրեց վեց գյուղ՝ ջարդի ենթարկելով բոլոր բնակիչներին: Աշերը դժվարանում է նկարագրել, թե ինչ վիճակում էին գտնվում ամերիկյան հիվանդանոց բերված մեծ թվով վիրավորները:²³⁷

Աշերն այնուհետև նշում է, որ ճիշտ այն պահին, երբ Վռամյանը պատրաստվում էր համոզելու հայերին իշխանություններին հանձնել չորս հազար երիտասարդների, գյուղերում տեղի ունեցած կոտորածի լուրը տարածվեց Վան քաղաքի հայերի շրջանում: Երիտասարդներին հանձնելը նշանակում էր նրանց դատապարտել մահվան, իսկ մերժումը կարող էր հանգեցնել համատարած ջարդի: Աշերն ու նրա

²³⁶ **Արշակ Վռամյան (Օնիկ Գերձակյան, 1870-1915)**՝ հայ ազգային-ազատագրական շարժման գործիչ, ՀՅԳ կուսակցության անդամ: Խմբագրել է «*Գրոշակ*» թերթը, մասնակցել է Միացյալ Նահանգներում ՀՅԳ կազմակերպությունների ստեղծման աշխատանքներին, հիմնադրել է «*Հայրենիք*» թերթը: 1908 թ.-ից Օսմանյան խորհրդարանի պատգամավոր էր: 1915 թ. ապրիլին դարձել է դավադրության զոհ:

²³⁷ Տե՛ս **Ussher D. Clarence**, նշվ. աշխ., էջ 236-238, 241:

միսիոներ գործընկեր Էռնեստ Յարրոու²³⁸ կրկին հանդիպեցին Ջևդեթ Բեյին: Վերջինս պահանջեց, որ միսիոներների կենտրոնակայանում, որը գտնվում էր քաղաքի հայկական թաղամասի բլուրի վրա, տեղակայվեն հիսուն թուրք զիվորներ: Նահանգապետը պնդում էր, որ դա առաջին հերթին անհրաժեշտ է ամերիկացիներին՝ հայերից նրանց պաշտպանելու համար: Միսիոներները պատասխանել էին, որ հայերից որևէ վտանգ իրենց չի սպառնում, և եթե նահանգապետը ցանկանում է «անպայման գորք ուղարկել դեպի հայկական կողմը», ամերիկացիները չեն կարող ապահովել զինվորների անվտանգությունը: Միաժամանակ Աշերը նշել էր, որ ամերիկյան միսիոներների և ունեցվածքի միակ պաշտպանն ամերիկյան դրոշմ է:²³⁹

Չայրանալով այդ առաջարկից, որի նպատակն էր զինվորներին հայկական թաղամաս բերելը, Աշերը դիմել էր Իտալիայի հյուպատոսի օժանդակությամբ: 1915 թ. ապրիլի 18-ին նրանք միասին փորձեցին բողոքարկել Ջևդեթ Բեյի պահանջը, ինչը կարող էր խորացնել լարվածությունն ու նոր սպանությունների առիթ դառնալ: Սակայն նահանգապետը շարունակում էր սպառնալ ինչպես հայերի, այնպես էլ ամերիկացիների հանդեպ նոր դաժանությունների կիրառմամբ: Թեև հետագայում նահանգապետը թույլ տվեց հայերին բացել իրենց խանութներն ու շարունակել բնականոն աշխատանքը, սակայն միաժամանակ ողջ նահանգի տեղական իշխանություններին հրահանգ էր տրվել հետևյալ բովանդակությամբ. «Հայերը պետք է ոչնչացվեն: Եթե որևէ մահմեդական պաշտպանի քրիստոնյայի, առաջին հերթին պետք է հրդեհել նրա տունը, այնուհետև քրիստոնյան պետք է սպանվի նրա աչքի առջև, որից հետո՝ նրա [մահմեդականի] ընտանիքն ու ինքը»:²⁴⁰

²³⁸ **Էռնեստ Յարրոու** (1876-1939)՝ ամերիկացի միսիոներ, Հայոց ցեղասպանության ակնամուտես և վկա: 1904 թ.-ից աշխատել է Վանի միսիոներական առաքելությունում: 1914 թ.-ից Վանի ամերիկյան քոլեջի նախագահն էր: 1916-1920 թթ. զբաղվել է Հայաստանում տեղավորված հայ փախստականներին օգնություն ցուցաբերելու հարցերով, պարզևատրվել է Ռուսաստանի և Հայաստանի կառավարությունների կողմից: 1920 թ.-ից Մերձավոր Արևելքի նպատաստանայց կազմակերպության տնօրենն էր: 1924 թ. դիմել է Պետքարտուղարությանը՝ Թուրքիայի կողմից գրավված հայկական տարածքները Հայաստանին վերադարձնելու պահանջով:

²³⁹ Տե՛ս **Ճիզմեճեան Մանուկ Գ.**, նշվ. աշխ., էջ 318-319:

²⁴⁰ Տե՛ս **Ussher Clarence D.**, նշվ. աշխ., էջ 239-244:

Ամերիկյան բուժքույրեր Գրիզել Մակլարենը և Մայրալ Շեյնը, որոնք հետագայում մանրակրկիտ գրել են Վանի և Բիթլիսի ավերման մասին, վկայում էին, որ հայերի հիմնական կոտորածը ծրագրված էր իրականացնել 1915 թ. ապրիլի 19-ին: Այդ օրը զինվորներն ու քրդերը, օգտագործելով մաս թնդանոթներ, հարձակում գործեցին նահանգի փոքր քաղաքների և գյուղերի վրա: Նրանք հիմնականում դիմադրության չէին հանդիպում, քանի որ տղամարդկանց մեծ մասն արդեն գտնվում էր օսմանյան բանակում, իսկ ուլքեր մնացել էին, զինամթերքի պակաս ունեին: Ջարդի ենթարկվեցին 55 հազար հայ տղամարդիկ, կանայք և երեխաներ:²⁴¹

Ապրիլի 20-ին թուրք զինվորները պաշարեցին Վանի հայկական թաղամասը, որի պաշտպանությունը շարունակվեց շուրջ մեկ ամիս: Թեև Ջևդեթ բեյն ամեն բանում մեղադրում էր հայ ապստամբներին, սակայն ամերիկացի և եվրոպացի ականատեսները համոզված էին, որ Վանի անկարգությունները նախաձեռնել էին թուրք իշխանությունները: Տիկին Աշերն իր օրագրում գրել է, որ «իրականում կատարվածը հայերի կյանքն ու տները պաշտպանելու փորձ էր», իսկ գյուղերում տեղի ունեցածը ոչ այլ ինչ էր, քան «համակարգված և համատարած կոտորած»: Վախենալով ջարդից՝ հայերը դիմեցին ինքնապաշտպանության. հրացաններով զինված 300 և ատրճանակներով ու հինավուրց զենքերով զինված 1.000 տղամարդիկ և երեխաներ պաշտպանում էին Այգեստան անվանվող հայկական թաղամասի 30 հազար հայ բնակիչներին: Ըստ Աշերի՝ հայ պաշտպանների շրջանում տարածվել էր «ավելի լավ է լինել տասն օր ազատ, քան մահանալ որպես ստրուկներ» կարգախոսը: Պաշտպանվողներին օգնող երեխաների շարքում էր հետագայում ամերիկահայ աշխարհահռչակ նկարիչ Արշիլ Գորկին (Վոստանիկ Ադոյանը):²⁴²

Հաստատելով Վանի հայերի «գուտ պաշտպանական և գրեթե անհուսալի վիճակը»՝ Մորգենթաուն գրում է, որ թեև մարտնչող հայերի թիվը կազմում էր շուրջ 1.500 հոգի, և նրանք ունեին ընդամենը 300 հրացաններ ու սահմանափակ քանակի զինամթերք, այնուամենայնիվ, նրանք մարտնչում էին հերոսաբար՝ փորձելով պաշտպանվել թուրքե-

²⁴¹ Տե՛ս **Knapp Grace H.**, *The Tragedy of Bitlis*, New York, London, Chicago: F. H. Revell, 1919, էջ 15:

²⁴² Տե՛ս **Ussher Clarence D.**, նշվ. աշխ., էջ 247-253:

րից այնքան ժամանակ, մինչև որ ռուսական զորքը կժամաներ Վան:²⁴³

Նահանգի գյուղերում տեղի ունեցած կոտորածների հետևանքով շատերն ապաստան էին գտել ոչ միայն շրջակա անտառներում և քարանձավներում, այլև Վան քաղաքի հայկական թաղամասում: Վերջինս դարձել էր «քառսի, մահվան և համաճարակի վայր»: Բժիշկ Աշերը, իր կինը և նրանց աշխատակազմն աշխատում էին օր ու գիշեր՝ հիվանդ փախստականների կյանքը փրկելու համար: Ելնելով ստեղծված հուսահատ իրավիճակից՝ միսիոներներ Աշերն ու Յարրոուն տասնյակ սուրհանդակների միջոցով ռուսական և պարսկական սահմանի ուղղությամբ հետևյալ բովանդակությամբ իրենց կողմից ստորագրված ուղերձ էին ուղարկել. «Ամերիկացիներին կամ օտարերկրյա հյուպատոսներին: Ներքին հուզմունքներ Վանում: Կառավարությունը սպառնում է ռմբակոծել ամերիկյան շինությունները: Տեղեկացրե՛ք ամերիկյան կառավարությանը, որ ամերիկացիների կյանքը վտանգի մեջ է»:²⁴⁴

Աշերը զարմանում էր, թե ինչպես էին հայերը շարունակում պաշտպանվել թաղամասը պաշարած բանակից: Միսիոներն ու իր կինն իրենց պատուհանից դիտում էին, թե ինչպես են այրվում դիմացի սարի լանջին գտնվող Շուշանց գյուղն ու Վարազավանքը, որը հայտնի էր իր հնագույն ձեռագրերով: Թաղամասի վրա հարձակումները դառնում էին շատ ավելի բուռն. թուրքերն օգտագործում էին թունավորված և պայթուցիկ փամփուշտներ: Մայիսի 16-ին ռումբեր պայթեցին միսիոներական կենտրոնակայանի տարածքում. Աշերի տունն ավերակների վերածվեց, վնասվեց նաև հիվանդանոցը: Թեև ամերիկացիներից որևէ մեկը չէր վիրավորվել, սակայն Աշերը գրում էր, որ հայերին ուղղված վտանգը սպառնում էր նաև իրենց. «Թուրքերը կրակում էին ամերիկյան դրոշի վրա, և այն այլևս չէր կարող մեզ փրկել. ի՞նչ է լինելու մեզ հետ»:²⁴⁵ Միաժամանակ ամերիկյան առաքելության խորհուրդը, չցանկանալով խախտել ԱՄՆ-ի չեզոքությունը, արգելում էր հայ մարտիկներին մտնել առաքելության շենք, «մինչև որ նրանք չթողնեին իրենց զենքը դրսում»:²⁴⁶

²⁴³ Տե՛ս **Morgenthau Henry**, *Ambassador Morgenthau's Story*, էջ 299:

²⁴⁴ Տե՛ս **Ussher Clarence D.**, նշվ. աշխ., էջ 274:

²⁴⁵ Նույն տեղում, էջ 275, 279, 266-288, 296-299:

²⁴⁶ Տե՛ս **Barby Henry**, *Au pays de l'épouvante: L'Arménie martyre*, Beirut: Association

Մայիսի 8-ին Բրայանը գրում է Մորզենթաուին, որ, վստահելի աղբյուրից ստացված տեղեկատվության համաձայն, իբր Վանում ԱՄՆ-ի հյուպատոսը հաղորդել է, որ քաղաքում տեղի է ունեցել ապստամբություն, և թուրքերը սպառնում են ռմբակոծել քաղաքը, որի պատճառով ամերիկյան համայնքին կարող է մեծ վտանգ սպառնալ: Բրայանը հանձնարարում է դեսպանին հայտնել թուրքական կառավարությանը միջոցներ ձեռնարկել ամերիկացիների կյանքն ու ունեցվածքը պաշտպանելու համար: Մորզենթաուս պատասխանում է քարտուղարին, որ ԱՄՆ-ն Վանում հյուպատոս չունի, սակայն ինքը քննարկել է հարցը ներքին գործերի նախարարի հետ, որը խոստացել է «ձեռնարկել բոլոր հնարավոր միջոցներն ամերիկյան քաղաքացիներին և հաստատությունները պաշտպանելու համար»:²⁴⁷

Այդ ընթացքում Հալիլ բեյի հրամանատարությամբ 10 հազարանոց թուրքական բանակը մայիսի սկզբին ճնշեց ռուսական զորքերին Ուրմիայի և Դիմանի ուղղությամբ՝ ավերելով ճանապարհին հայկական գյուղերը: Էնվերը տեղեկացնում է Մորզենթաուին, որ, Հալիլից ստացված լուրերի համաձայն, Ուրմիայում «ամեն ինչ լավ է»:²⁴⁸ Սակայն մի քանի շաբաթ անց իրավիճակը փոխվում է: Գեներալ Ի. Տրոխիմի դեկավարած ռուսական զորքն անցնում է հարձակման և Համազասպ Սրվանձոյանի, Անդրանիկ Օզանյանի ու Դրաստամատ Կանայանի հայ կամավոր ջոկատների հետ մայիսի 10-ին մտնում Վան: Վանում ձևավորվեց հայկական կառավարություն՝ Արամ Մանուկյանի գլխավորությամբ:²⁴⁹

Համաձայն Աշերի տվյալների՝ իրենց ուղերձներից մեկն անցել էր պարսկական սահմանն ու հայտնվել Ռուսաստանի հյուպատոսի ձեռքում. վերջինս այն փոխանցել էր ռուսական իշխանություններին: Մի քանի օրվա ընթացքում լուրը հրապարակվել էր ռուսական և ամերիկյան մամուլի էջերում: Շուտով ռուս-հայկական ջոկատը հայտնվեց Վանում, իսկ քաղաքի բանալին հանձնվեց ռուս զեներալ Անդրեյ Նիկոլակին: Աշերի տեղեկությունների համաձայն՝ ռուսական հրամանատարությունը հաստատեց ամերիկյան միսիոներների տվյալներն այն մասին, որ քաղաքում և նահանգի քաղաքներում ու գյուղերում կո-

Culturelle Arménienne, 1972, էջ 237-238, 252, 263, 277-279, 286:

²⁴⁷ Տե՛ս Payaslian Simon, նշվ. աշխ., էջ 67; NA/RG 59/367.11/569a; NA/RG 59/367.11/570:

²⁴⁸ Տե՛ս Allen W. E. D. and Muratoff Paul, նշվ. աշխ., էջ 299:

²⁴⁹ Տե՛ս Payaslian Simon, նշվ. աշխ., էջ 67:

տորվել էր շուրջ 55 հազար հայ:

Ամերիկացիները շարունակում էին իրենց աշխատանքը հիվանդ և վիրավոր հայերի հետ ծանր համաճարակի պայմաններում: Հուլիսի կեսերին Աշեր գույզն ու Յարրոուն հիվանդանում են բժավոր տիֆով: Էլիզաբեթ Աշերը մահանում է, իսկ Քլերենս Աշերն ու Էռնեստ Յարրոուն ողջ են մնում:²⁵⁰

Գերագնահատելով օսմանյան երրորդ բանակի կարողությունները՝ զեներալ Նիկոլասի գունդը, որը տասը շաբաթ շարունակ գտնվում էր Վանում և Բիթլիսում, հուլիսի վերջին որոշեց նահանջել դեպի Թիֆլիս: Նիկոլասը տեղեկացրել էր հայերին, որ նրանք պետք է անմիջապես հեռանան ռուս զինվորների հետ: Նահանջի ընթացքում հազարավոր հայեր սպանվում են թուրքերի և քրդերի հարձակումների պատճառով: Ըստ Աշերի՝ օգոստոսի կեսերին ավելի քան 300 հազար հայեր անցնում են ռուսական սահմանը: Նրանց մեծ մասը չափազանց ծանր վիճակում էր. հյուծված և սոված մարդիկ ապաստան էին գտել Երևանի դաշտավայրում:²⁵¹

Ըստ Աշերի՝ հայերի կոտորածը կազմակերպել էր երիտթուրքերի կառավարությունը, այլ ոչ թե թուրք ժողովուրդը: Ավելին՝ կառավարությունը «փորձում էր մոլորության մեջ գցել իր մահմեդական ենթականերին և ատելություն արթնացնել նրանց մեջ քրիստոնյաների նկատմամբ»: Վանի նահանգապետը կեղծ հայտարարություն էր տարածել այն մասին, որ իրականում քրիստոնյաները կոտորել էին տասնյակ հազարավոր մահմեդականների:²⁵² Փիթեր Բալաքյանի կարծիքով՝ մնան կեղծիքը դեռևս Աբդուլ Համիդի կողմից որդեգրած քաղաքականության շարունակությունն էր:²⁵³

Երիտթուրքական կառավարությունը համոզված էր, որ օտարերկրյա հաստատությունները, մասնավորապես՝ ամերիկյան միսիոներական շինությունները, իրականում քաղաքական և կրոնական քարոզչության կենտրոններ են, և պարբերաբար սպառնում էր փակել դրանք: Օրինակ, թեև Վանում ամերիկյան հիվանդանոցը

²⁵⁰ Տե՛ս **Ussher Clarence D.**, նշվ. աշխ., էջ 275, 279, 266-288, 296-299; **Grabill Joseph L.**, նշվ. աշխ., էջ 60:

²⁵¹ Տե՛ս **Ussher Clarence D.**, նշվ. աշխ., էջ 314:

²⁵² Տե՛ս նույն տեղը, էջ 328-329:

²⁵³ Տե՛ս **Balakian Peter**, *The Burning Tigris. The Armenian Genocide and America's Response*, էջ 208-209:

բուժօգնություն էր ցուցաբերում նաև վիրավոր թուրք զինվորներին, այնուամենայնիվ, իշխանությունների ոտնձգությունները շատ ավելի հաճախակի էին դարձել: Այսպես՝ դեռևս 1914 թ. աշնանը տեղական իշխանությունները փորձել էին առգրավել ամերիկյան միսիոներական առաքելության ղեղամիջոցների պաշարը: Քլերենս Աշերը հանդիպել էր Վանի՝ այն ժամանակվա նահանգապետ Հասան Թահսին բեյին և բողոքել ամերիկյան հաստատության դեմ կատարվածի համար՝ նշելով, որ այդ փաստը կարող էր բացասական ազդեցություն ունենալ թուրք-ամերիկյան հարաբերությունների վրա: Նահանգապետը պատասխանել էր, որ թուրք իշխանությունները չեն վախենում Միացյալ Նահանգներից, որը բանակ չունի այս տարածաշրջանում՝ իր շահերը պաշտպանելու համար: Ի վերջո, նահանգապետը ներողություն էր խնդրել զինվորների պահվածքի համար:

Իր հուշերում Աշերը քննադատում է նաև Օսմանյան կայսրությունում ԱՄՆ-ի հյուպատոսներին, որոնք նախաձեռնություն հանդես չէին բերում ամերիկյան շահերի պաշտպանության ուղղությամբ:²⁵⁴

Քանի որ Վանում հյուպատոսություն չկար, դեսպան Մորգենթսոնը ճշգրիտ տեղեկություններ չէր կարողանում ստանալ քաղաքում և շրջանում տիրող իրավիճակի մասին: Ավելի ուշ՝ մայիսի 25-ին պետքարտուղարին ներկայացված գաղտնի նամակում նա գրում է, որ «սակավ և ոչ վստահելի» լուրեր էին ստացվում Վանում հայերի կողմից կազմակերպված ապստամբության մասին՝ ռուսական առաջխաղացմանը նպաստելու նպատակով: Այսպես՝ նախկին պատգամավոր Գարեգին Փաստրմաճյանը (Արմեն Գարո), որը մի քանի տարի առաջ օգնել էր ամերիկացիներին երկաթգծի կոնցեսիա ստանալու հարցում, ներկայումս հայ կամավորների հետ մարտնչում է թուրքերի դեմ: Տեղեկություններ կան նաև, որ Վանի մի մասը գտնվում է հայերի ձեռքում: Ինչպես են նրանք կազմակերպված և ինչ հաջողությունների կարող են հասնել, ըստ դեսպանի, դեռևս անհնար էր ասել: Նրա կարծիքով՝ հայերի թիվը կազմում էր 10-25 հազար: Ըստ Մորգենթսոնի՝ թուրք իշխանությունները կասկածանքով էին վերաբերվում ողջ «խաղաղ» հայ բնակչությանը՝ համոզված լինելով, որ նրանք կապված են ապստամբների հետ:²⁵⁵

²⁵⁴ Տե՛ս **Clarence Ussher D.**, նշվ. աշխ., էջ 221, 221-226:

²⁵⁵ Տե՛ս NA Microfilm Publications, Microcopy No. 353, Records of the Department of State

3. Արևմտահայության ցեղասպանությունը և ամերիկյան դիվանագիտությունը (1915 թ. ապրիլ – 1916 թ. փետրվար)

1915 թ. ապրիլի 24-ին Թալեաթը հրահանգեց բանտարկել Կոստանդնուպոլսի հայ մտավորականության ներկայացուցիչներին: Ըստ Մորգենթաուի՝ իրականում նա կասկածանքով էր վերաբերվում բոլոր այն ոչ մահմեդական ազգերին, որոնք ունեին քաղաքական ծրագրեր, այդ թվում՝ հրեաներին: Նույն օրը դեսպանի հետ տեղի ունեցած ճաշի ընթացքում Թալեաթն իր համոզվածությունն էր հայտնում առ այն, որ սիոնիստները «վնասակար» են, և որ երիտթուրքերի դեկավարների «պարտավորությունն է ազատվել նրանցից»: Երբ Մորգենթաուն հարցրեց Թալեաթին հայերի մասին, վերջինս պատասխանեց, որ բանտարկել է նրանցից շատերին՝ ներքին շրջաններ աքսորելու նպատակով: Ըստ Թալեաթի՝ հայերին վերաբնակեցնելու էին հիմնականում թուրքերով բնակեցված ներքին շրջաններում, որտեղ նրանք այլևս կգրկվեին վնաս հասցնելու որևէ հնարավորությունից:²⁵⁶ Երեք օր անց Գերմանիայի դեսպան Վանգենհայմն ասաց Մորգենթաուին, որ «հինքն օգնելու է սիոնիստներին, սակայն ոչ հայերին»:²⁵⁷ Իրականում այդպես էլ եղավ. Գերմանիան պաշտպանեց հրեաներին, այլ ոչ թե հայերին:

Ապրիլի 27-ին պետքարտուղար Բրայանը տեղեկացնում է Մորգենթաուին, որ Ռուսաստանի արտաքին գործերի նախարար Սերգեյ Սազոնովի²⁵⁸ հանձնարարությամբ Վաշինգտոնում Ռուսաստանի դեսպան Գեորգի Բախմետևը²⁵⁹ Պետքարտուղարությանն է փոխանցել Հայ առաքելական եկեղեցու կաթողիկոսի նամակը: Վերջինս խնդրում էր ամերիկյան կառավարությանը բարեխոսել թուրքական իշխանությունների առջև՝ Թուրքիայում «չմարտնչող» հայերի կոտորածը կանխելու համար: Խնդրելով ԱՄՆ-ի կառավարությանը միջամ-

Relating to Internal Affairs of Turkey, 1910-1929, Roll 43, No. 310, 867.4016/71:

²⁵⁶ Տե՛ս **Thomas Patrick**, նշվ. աշխ., էջ 92:

²⁵⁷ Տե՛ս **Morgenthau Henry**, *United States Diplomacy on the Bosphorus: The Diaries of Ambassador Morgenthau, 1913-16*, Princeton, NJ: Gomidas Institute, 2004, էջ 215, 217:

²⁵⁸ **Սերգեյ Սազոնով** (1860-1927)՝ Ռուսաստանի պետական գործիչ և դիվանագետ, 1910-1916 թթ.՝ արտաքին գործերի նախարար:

²⁵⁹ **Գեորգի Բախմետև** (1847-1928)՝ ռուս դիվանագետ, Ռուսաստանի դեսպան Բուլղարիայում (1897-1905), Ճապոնիայում (1906-1908), ԱՄՆ-ում (1911-1917):

տել՝ ռուս դեսպանը միաժամանակ նշում էր, որ Ռուսաստանում շատ մահմեդականներ են ապրում, որոնք պատերազմի ընթացքում պաշտպանված են կրոնական ճնշումներից: Ի վերջո, պետքարտուղարը հրահանգում է դեսպան Մորգենթաուիին տեղեկացնել այդ մասին Թուրքիայի կառավարությանը և պահանջել, որ վերջինս արդյունավետ միջոցներ ձեռնարկի «այլ հավատամքի պատկանողների հայե-րին պաշտպանելու համար»:²⁶⁰

Սակայն նույն օրը ԱՄՆ-ի դեսպանը գաղտնի հեռագիր էր հղել պետքարտուղարին այն մասին, որ բարձր դասակարգի հարյուրից ավելի հայեր են ձերբակալվել մայրաքաղաքում՝ իբր հեղափոխական քարոզչությունը կանխելու նպատակով: Ձերբակալվածների թվում էր նաև նախկինում Պարսկաստանի, իսկ ներկայումս ԱՄՆ-ի քաղաքացի Լևոն Շիրինյանը: Ըստ Մորգենթաուի՝ հնարավոր էր, որ ձերբակալվածների կյանքը վտանգի ենթարկվեր, քանի որ նրանց արտաքսել էին դեպի երկրի կենտրոնական նահանգները: Հայերի դեմ իրագործվող ծրագիրը, ըստ դեսպանի, ոչ թուրք ժողովուրդների և «Միություն և առաջադիմություն» կուսակցության «թշնամիների» դեմ ուղղված «համաձայնեցված ծրագրի» մի մասն էր կազմում: Կային նշաններ, որ այն ուղղվելու էր նաև հրեաների դեմ: Ամերիկյան դեսպանությունը ստանում էր նաև «ոչ դրական» զեկույցներ՝ ներքին նահանգներում ապրող հայերի վիճակի մասին: «Ես և իմ գործընկերները, - եզրակացնում էր դեսպանը, - ամեն կերպ փորձում ենք կանխել ծայրահեղականությունն ու կանգնեցնել այդ շարժումը»:²⁶¹

Ապրիլի 29-ի իր պատասխան հեռագրում պետքարտուղար Բրայանը հանձնարարում էր «համոզել» թուրքական կառավարությանը ապահովել ինչպես հայերի, այնպես էլ հրեաների պաշտպանությունը:²⁶² Միաժամանակ նա տեղեկացնում էր ռուս դեսպանին, որ արդեն իսկ հանձնարարել է Կոստանդնուպոլսում ԱՄՆ-ի դեսպանին կիրա-

²⁶⁰ Տե՛ս NA Microfilm Publications, Microcopy No. 353, Records of the Department of State Relating to Internal Affairs of Turkey, 1910-1929, Roll 43, 867.4016/58a; *Միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828-1923)* / Պրոֆ. Ջ. Ս. Կիրակոսյանի խմբագրությամբ, Եր., «Հայաստան» հրատարակչություն, 1972, էջ 368-369:

²⁶¹ NA Microfilm Publications, Microcopy No. 353, Records of the Department of State Relating to Internal Affairs of Turkey, 1910-1929, Roll 43, No. 608, NA/RG 59/867.4016/58.

²⁶² Տե՛ս նույն տեղը, No. 633, NA/RG 59/867.4016/58:

նել բոլոր հնարավոր միջոցները՝ հայերի դեմ գործադրվող կրոնական բռնությունները կանխելու համար:²⁶³

Այդ օրերին Մորզենթաուն զգուշացնում է Ավստրո-Հունգարիայի դեսպան Պալավիչինիին, որ «վատ տպավորություն է կստեղծվի», եթե Ավստրո-Հունգարիայի և Գերմանիայի դաշնակից Թուրքիայում տեղի ունենան հայկական կոտորածներ: Նա փորձում է համոզել դեսպանին օգտագործել իր ազդեցությունն ու համոզել մեծ վեզիրին «խուսափել սադրանքներից և լուրջ հետևանքներից»: Պալավիչինին զեկուցում է Վիեննայի արտգործնախարարությանը (29 ապրիլի), որ չի պատրաստվում միջամտելու, քանի որ դաշնակից Թուրքիայի կողմից այդ քայլը կհամարվի «տհամ» և կդիտարկվի որպես միջամտություն երկրի ներքին գործերին:²⁶⁴

Հաջորդ օրը Մորզենթաուն գրում է պետքարտուղարին, որ կայսրության տարբեր վայրերից տեղեկություններ են ստացվում հայերի հալածանքների, թալանի և ջարդի մասին: Դեսպանն այդ կապակցությամբ անմիջապես խիստ բողոք էր ներկայացրել երիտթուրքական կառավարությանը: Նրան միացել էին նաև Կոստանդնուպոլսում հայ պատրիարքը, Իտալիայի դեսպանն ու Բուլղարիայի դեսպանորդնախարարը:

Հայերի դեմ ուղղված քաղաքականությունն արդարացնելու նպատակով Օսմանյան կայսրության պատերազմի նախարարն ասել էր ԱՄՆ-ի դեսպանին, որ ռուսահայերը պատասխանատու էին Վանում պետական շինություններն ու փոստի հիմնարկը պայթեցնելու համար: Նա նաև նշել էր, որ քաղաքը 12 օր մնացել է հայերի ձեռքում, և իշխանությունները, վախենալով դաշնակների հետագա հարձակումներից, արտաքսել են որոշակի թվով հայերի: Մորզենթաուն գրում էր, որ քանի որ ճամփորդությունները դեպի արևելյան շրջաններ գրեթե արգելված էին, իսկ նամակագրությունը գտնվում էր խիստ գրաքննության տակ, դժվար էր հաստատել որևէ փաստ:

Միաժամանակ, Հալեպում ԱՄՆ-ի հյուպատոսից ստացված հարողագրության համաձայն, Չեյթունի և Մարաշի հայերը գտնվում

²⁶³ Տե՛ս նույն տեղը, No. 111, NA/RG 59/867.4016/58:

²⁶⁴ Տե՛ս **Ohandjanian Artem**, *Armenia, 1915. Austro-Hungarian Diplomatic Reports Prove the Genocide*, Vienna, Society for Promotion of Armenian History and Culture, 2011, էջ 129-130:

էին «անհավատալի խստությունների» պայմաններում, և մի քանի դասալիքների գործողությունների հետևանքով անմեղ բնակչությունը ենթարկվել էր տեղահանությունների և դաժանությունների: Գեսպանը հերթական անգամ կրկնում էր, որ, ըստ երևույթին, այս միջոցներն ուղղված էին «ոչ թուրք և ոչ իթթիհադական տարրերի ու կազմակերպությունների դեմ» և կառավարության ընդհանուր քաղաքականության մաս էին կազմում: Հեռավոր շրջաններում այս քաղաքականությունը կարող էր կիրառվել շատ ավելի դաժան միջոցներով, քան կառավարությունը կցանկանար: Գեսպանը գրում էր, որ մեծ վեզիրը, պատերազմի և ներքին գործերի նախարարներն իրեն խոստացել էին, որ երկրում համատարած կոտորած չի լինելու, և այն հայերը, որոնք դաշնակցականներ չեն և ձերբակալվել են սխալմամբ, ազատ են արձակվելու:²⁶⁵

1915 թ. մայիսի 2-ին ԱՄՆ-ի դեսպանը զեկուցում է պետքարտուղարին, որ Իտալիայի դեսպանի հետ հայերի վիճակի առնչությամբ խիստ բողոք է ներկայացրել Բարձր Դռանը՝ խստորեն պահանջելով ձեռնարկել համապատասխան միջոցներ՝ հայերի և այլ ոչ մահմեդականների պաշտպանությունն ապահովելու նպատակով: Ներքին գործերի նախարարը պատասխանել է, որ Բարձր Դռուը հրահանգել է մահանգային իշխանություններին «պաշտպանել անմեղ մարդկանց ճնշումներից», և եթե որևէ պաշտոնյա չենթարկվի, կպատժվի: Ըստ Մորգենթաուի՝ ինչպես Ավստրո-Հունգարիայի, այնպես էլ Գերմանիայի դեսպանները հրաժարվում էին իրենց դաշնակցի ներքին գործերին միջամտելուց, սակայն ավստրիացի գործընկերը համաձայնել էր հեռագրել իր կառավարությանը, որ ոչ մահմեդականների հնարավոր կոտորածը կարող է բացասաբար անդրադառնալ թուրքական կառավարության հեղինակության վրա:²⁶⁶ Միաժամանակ դեսպան Պալալիչինին հանդիպել էր Թալեաթ փաշային և զգուշացրել նրան թույլ չտալ, որ «ընդդիմադիրներն օգտագործեն կանանց և երեխաների հալածանքներն իր դեմ»: Վերջինս խոստովանել էր, որ «անկարգությունների» ընթացքում սպանվել էին մի քանի հազար հայեր, ինչ-

²⁶⁵ St'u NA Microfilm Publications, Microcopy No. 353, Records of the Department of State Relating to Internal Affairs of Turkey, 1910-1929, Roll 43, No. 614, 867.4016/59:

²⁶⁶ St'u US Department of State. *Papers Relating to the Foreign Relations of the United States, 1915, Supplement, The World War*, էջ 981:

պես նաև թուրքեր, սակայն ժխտել էր կանանց և երեխաների սպանությունների փաստը:²⁶⁷

Մայիսի 3-ին Բրիտանա-հայկական կոմիտեի նախագահ Անևրին Ուիլյամսի²⁶⁸ և Լոնդոնի Հայկական միացյալ ընկերակցության ներկայացուցչի՝ ԱՄՆ-ի պետքարտուղարին ուղղված հեռագրում նշվում էր, որ, ստացվող տեղեկատվության համաձայն, Թուրքիայում հայերի նոր կոտորած է տեղի ունենում: Հեռագրի հեղինակները խնդրում էին պետքարտուղարին հրահանգել Կոստանդնուպոլսում ամերիկյան դեսպանին համապատասխան բողոք ներկայացնել Բարձր Դռանը: Ամմիջապես հաջորդ օրը Բրայանը համձնարարում է Մորգենթաուին օգտագործել իր «վավ հարաբերությունները» երիտթուրքական կառավարության հետ և պահանջել «կանխել հետագա վայրագությունների» կրկնությունը:²⁶⁹ Դեսպանը պատասխանում է, որ ջիհադի հայտարարությունից ի վեր իշխանությունները շարունակում են հորդորել թուրքերին և կայսրության այլ մահմեդականների «սպանել հնարավորինս շատ անհավատների»:²⁷⁰

Կոնիայի ամերիկյան հիվանդանոցում աշխատող միսիոներ Ուիլյամ Դոդդը մայիսի 6-ին գրում է դեսպան Մորգենթաուին, որ շուրջ երկու հազար հայ փախստականներ են քաղաք բերվել Ջեյթունից և շրջակա գյուղերից: Դոդդը թույլտվություն էր ստացել ոստիկանությունից միայն մեկ անգամ այցելելու նրանց: Ելնելով նրանց վիճակից՝ միսիոներն առաջարկել էր Ամերիկյան կարմիր խաչի կողմից նրանց օգնության ցուցաբերում, սակայն նահանգապետը մերժել էր՝ ասելով, որ արքայալուսինն շուտով տեղափոխելու են այլ վայրեր: Միսիոների տեղեկությունների համաձայն՝ այդ պահին Կոնիայում երեք հազարից ավելի փախստականներ կային:²⁷¹

²⁶⁷ Տե՛ս **Ohandjanian Artem**, նշվ. աշխ., էջ 130:

²⁶⁸ **Անևրին Ուիլյամս** (1859-1924)՝ բրիտանական քաղաքական և հասարակական գործիչ, 1912 թ.-ից՝ խորհրդարանի անդամ՝ լիբերալ կուսակցությունից, 1913 թ.-ից՝ Բրիտանա-հայկական կոմիտեի, միաժամանակ՝ հայ գաղթականների «Լորդ Մեյորդի հիմնադրամի» նախագահ:

²⁶⁹ Տե՛ս NA Microfilm Publications, Microcopy No. 353, Records of the Department of State Relating to Internal Affairs of Turkey, 1910-1929, Roll 43, 867.4016/61:

²⁷⁰ Տե՛ս NA/RG 59/867.4016/64; NA/RG 59/867.00/766:

²⁷¹ Տե՛ս *Unites States Official Records on the Armenian Genocide, 1915-1917* /Compiled with an introduction by Ara Sarafian/, էջ 36 (LC/HM(Sr.)/Reel 7/555):

Քանի որ Դոդոը վստահ չէր, որ փոստով ուղարկված իր նամակը հասնելու է դեսպանություն, նա ավելի մանրամասն գրված նամակ էր ուղարկել վստահելի սուրհանդակի միջոցով: Հայերը, ըստ միսիոներին, ամեն գիշեր քաղաք էին ժամանում գնացքներով. օրական զալիս էին մի քանի հարյուր հոգի: Աքսորյալները հիմնականում կանայք և երեխաներ էին. Նրանց մի մասն ուներ հագուստ և անկողին, սակայն ճաշ եփելու հնարավորություններ նրանք չուներին: Նրանք ճանապարհ էին ընկել շուրջ մեկ ամիս առաջ և ուտելու գրեթե ոչինչ չուներին՝ բացի հացի, ձիթապտղի և պանրի չնչին պաշարից: Կառավարությունը նրանց օրական մեկ կտոր հաց էր տալիս, սակայն հինգ տարեկանից փոքր երեխաները համապատասխան սնունդ չէին ստանում: Նոր տվյալների համաձայն՝ նրանց թիվը հասել էր արդեն չորս հազարի: Դոդոը պարզել էր պաշտոնյաներից, որ հայ կանանց և երեխաներին հետագայում բաժանելու են տարբեր գյուղերի մահմեդական բնակիչների միջև՝ ամեն գյուղին մի քանի ընտանիք հաշվարկով: Միսիոների համոզմամբ՝ սա նշանակում էր հայերի ոչնչացում՝ կոտորածի մեկ այլ ձև: Ըստ Դոդոյի, տեսնելով հայերի քարավանները շուկայի միջով անցնելիս, թուրքերը բղավում էին. «Այս գյավուրները դեռ չե՞ն մահացել»: Նախորդ գիշեր գնացքում երեխա էր ծնվել, սակայն մայրը նրան դուրս էր նետել գնացքից, որպեսզի նա զրկանքների չենթարկվի: Դոդոյի տվյալների համաձայն՝ տեղահանվածների թվում Ձեյթունից 70 ընտանիք կար, իսկ մյուսները շրջակա գյուղերից էին:²⁷²

1915 թ. մայիսի 12-ին Հալեպում հյուպատոս Ջեքսոնը գրում է Մորգենթաուին Ձեյթունի և Մարաշի հայերի տեղահանության մասին: Նրա տեղեկությունների համաձայն՝ 4.300-4.500 ընտանիք՝ մոտավորապես 28 հազար հոգի, կառավարության հրահանգով արտրվել էր տարբեր ուղղություններով՝ դեպի «հեռավոր ոչ քրիստոնյա համայնքներ»: Հազարավոր մարդիկ արտաքսվել էին հյուսիսարևմտյան ուղղությամբ՝ դեպի Կոնիայի, Կեսարիայի և Կաստամունիի նահանգներ, իսկ մնացածը՝ հարավարևելյան ուղղությամբ՝ դեպի Դեյր-էզ-Ջոր և Բաղդադ: Հյուպատոսը գրում է, որ դժվար է պատկերացնել, թե ինչ զրկանքների էին ենթարկվում այս մարդիկ: Արտաքսումից անմիջապես հետո կառավարությունը մահմեդականներին էր տրամադրում

²⁷² Տե՛ս նույն տեղը, էջ 37-38:

հայերի աները, որոնք փաստորեն տիրանում էին նրանց ողջ ունեցվածքին:

Ըստ Ջեքսոնի՝ բոլոր հայերը՝ հարուստներն ու աղքատները, բողոքականները, առաքելականներն ու կաթոլիկները, արժանանում էին նույն բախտին: Միայն մի քանիսին էր թույլատրվել հեծնել եզ կամ էշ, հիվանդներին թողնում էին ճանապարհին, իսկ ծննդաբերող կանայք իրենց նորածին մանուկներին թողնում էին ճանապարհին կամ խեղդում ջրում: Տղամարդիկ արտաքսվել էին մեկ ուղղությամբ, կանայք՝ այլ, աղջիկներն ու երեխաները՝ մեկ այլ: Ստացվող տեղեկությունների համաձայն՝ ժանդարմներին թույլ էր տրվել կանանց և աղջիկների հետ անել այն ամենը, ինչ որ նրանք կցանկանային:

Միայն Մարաշում գործում էին վեց հայ առաքելական, հայ ավետարանական, հայ կաթոլիկ և լատինական կաթոլիկ եկեղեցիներ, շուրջ 12 հայկական դպրոցներ, մեկական ամերիկյան և գերմանական դպրոցներ, մեկական հայ օրիորդաց ու գերմանական որբանոցներ և մեկ գերմանական հիվանդանոց: Ըստ հյուպատոսի՝ այս բոլոր հաստատությունները մնացել էին առանց ծուխի, աշակերտների, որբերի և հիվանդների:

Ջեքսոնի տվյալների համաձայն՝ շուրջ 300 հայ տղամարդ էր բանտարկվել Մարաշում, որոնցից 50-ը Ջեյթունից էին, և 50-ը՝ Օսմանիեից: Ջեյթունից շուրջ 350 ընտանիք կամ շուրջ երկու հազար հայ արտաքսվել էր դեպի Մարաշ, իսկ այնտեղից՝ Այնթապ: Նրանք Հալեպ պետք է ժամանեին մոտավորապես մայիսի 15-ին և այստեղից էլ մեկնեին Մեսքենե, իսկ շուրջ 250 կամ ավելի ընտանիք էլ պետք է ժամաներ մայիսի 20-ին: 71 ընտանիք արտաքսվել էր դեպի Կոնիա ապրիլի 25-ին: Կոստանդնուպոլսից ժամանած մի ճամփորդ հանդիպել էր շուրջ 4.500 հոգանոց մի քարավանի, որը շարժվում էր դեպի Կոնիա: Ըստ հյուպատոսի՝ հայ աքաղաղների վիճակը ծայրահեղ ծանր էր. նրանք ասում էին, որ կնախնարեին անմիջապես կոտորվել, քան ենթարկվել այս տանջանքներին:²⁷³

Մայիսի 16-ին Ադանայում ամերիկյան միսիոներական առաքելության տնօրեն պատվելի Ռիլյան Չամբերսը գրում է Մերսինում ԱՄՆ-ի հյուպատոս Էդվարդ Նաթանին երկու հարցի կապակցությամբ

²⁷³ St'u NA Microfilm Publications, Microcopy No. 353, Records of the Department of State Relating to Internal Affairs of Turkey, 1910-1929, Roll 43, No. 276, 867.4016/72:

յամբ: Առաջին՝ նա խնդրում էր հյուպատոսին խոսել նահանգապետի հետ, որպեսզի ճեմարանում ուսանող հայ աղջիկները, որոնց ընտանիքներն արքայազն էին, մնան միսիոներների խնամքի ներքո: Չամբերսը հավատացած էր, որ դա խնդրահարույց չէր լինի, քանի որ դպրոցն ամերիկյան էր, իսկ «ամեն ամերիկյանը սովորաբար բարեկամաբար է ընդունվում կառավարության կողմից»՝ նկատի առնելով ամերիկյան ժողովրդի բարեգործական առաքելությունն այս երկրում:

Մյուս հարցը վերաբերում էր հայերի տեղահանություններին: Ըստ Չամբերսի՝ «դա մի սոսկալի չափերի հասնող նախաձեռնություն է, որի մասին մտածելը միայն սրտի տրոփում է առաջացնում»: Նա առաջարկում էր ԱՄՆ-ի դիվանագիտական և հյուպատոսական ներկայացուցիչներին իրենց ազդեցությունը գործադրել գործընթացը կանգնեցնելու նպատակով: Նա նշում էր, որ ողջ ամերիկյան ժողովուրդը բավարարված և հպարտ կլինի, եթե ԱՄՆ-ի ներկայացուցիչներին հաջողվի կանգնեցնել տեղահանությունը:²⁷⁴

Մայիսի 18-ին Նաթանը հաղորդում է Մորգենթաուին, որ Ադանայի շուրջ 70 հայտնի հայ ընտանիքներ տեղեկացվել են իշխանությունների կողմից, որ պատրաստվեն արքայի մեկնելու համար: Նման բախտի էին արժանանալու նաև ընտանիքներ Մերսինից և Տարսուսից: Ամերիկյան միսիոներները, որոնք փորձել էին այցելել տեղահանվածների ճամբարը, սակայն մերժում էին ստացել, դիմել էին հյուպատոսին՝ հայերի հանդեպ իրականացվող այդ գործողությունները կանխելու նպատակով: Նաթանը պատասխանել էր նրանց, որ խնդիրը «շատ նուրբ է», և հյուպատոսը իրավունք չունի որևէ քայլ ձեռնարկելու այդ գործողությունների դեմ, քանի որ «ամերիկյան շահերը որևէ կերպ ուղղակիորեն վտանգված չեն»: Երբ հյուպատոսը խոսել էր հայերի տանջանքների մասին տեղական պաշտոնյաների հետ, նրանք նույնիսկ համակրանք էին արտահայտել նրա տեսակետների նկատմամբ: Սակայն ավելիև հյուպատոսն անել չէր կարող: Միաժամանակ նա առաջարկում էր դեսպանին, հաշվի առնելով տեղի ամերիկացիների «նյարդային վիճակը», մոտ ապագայում ամերիկյան ռազմաճակատը կհարկել Մերսին:²⁷⁵

²⁷⁴ Տե՛ս *United States Official Records on the Armenian Genocide, 1915-1917* /Compiled with an introduction by Ara Sarafian/, p. 45. LC/HM(Sr.)/Reel 7/565:

²⁷⁵ Տե՛ս նույն տեղը, էջ 43-44 (LC/HM(Sr.)/Reel 7/573):

Մայիսի 25-ին դեսպան Մորզենթաուն խիստ գաղտնի նամակ էր ներկայացրել պետքարտուղարին թուրքական կառավարության կողմից կայսրության հայ բնակչության հանդեպ իրականացվող քաղաքականության վերաբերյալ: Նրա կարծիքով՝ սկսած թուրքական հեղափոխության շրջանից հայերի հանդեպ կիրառվող «խիստ փոփոխական» վերաբերմունքը պատերազմի ընթացքում վերածվեց «նշանակալիորեն անբարենպաստ գործընթացի»: Մորզենթաուն գրում էր՝ փաստն այն է, որ ներկայիս օսմանյան կառավարությունը հայերին այլևս հավատարիմ չի համարում: Վերջին տարիներին հայերի հանդեպ կիրառվող «դժվարություններն ու ճնշումները» չէր կարելի համեմատել Ռուսաստանում հայերի հանդեպ գոյություն ունեցող բարենպաստ վերաբերմունքի հետ: Ըստ դեսպանի՝ սահմանադրական շրջանի «հմայքը» հայերն այլևս չէին հիշում, սակայն նրանց հիշողության մեջ մնացել էր 1909 թ. Ադանայի հայերի ջարդի փաստը:

Մորզենթաուն շարունակում էր, որ Ջեյթունում, որտեղ մի խումբ հայեր փորձել էին խուսափել զինվորական ծառայությունից, սկսվել էր «վայրենի ճնշման շարժում» հայերի դեմ: Ամբողջությամբ ոչնչացվել էին գյուղեր՝ ջարդեր, բռնաբարություններ և թալան: Սկսել էր իրագործվել շատ ավելի համակարգված քաղաքականություն, քան սովորաբար տեղի էր ունեցել անցյալում, ինչն «արտահայտվում էր բնակչության համատարած արտաքսումով»:

Այդ քաղաքականության արդյունքն էին նաև մի քանի հարյուր հայերի ձերբակալությունն ու արտաքսումը Կոստանդնուպոլսից: Նույն վիճակը տիրում էր երկրի տարբեր քաղաքներում և գյուղերում: Գեսպանը դեռևս չէր հավատում, որ երկրում տեղի էր ունենում մեծ ծավալի կոտորած: Սակայն միևնույն ժամանակ անհնար էր ստանալ հավաստի տեղեկություններ, քանի որ շրջանների հետ նամակագրություն գրեթե գոյություն չուներ: Մորզենթաուն գրում էր, որ թեև իշխանությունները զինաթափել էին բանակում ծառայող բոլոր հայերին, հույներին, ինչպես նաև ոչ թուրք բնակչությանը, սակայն մահմեդականներին թույլ էր տրված կրել զենք:²⁷⁶

Մայիսի 25-ին «Associated Press» գործակալության թղթակից Ջորջ Շռայները զեկուցագիր էր ներկայացրել Կոստանդնուպոլսում ԱՄՆ-ի

²⁷⁶ St'u NA Microfilm Publications, Microcopy No. 353, Records of the Department of State Relating to Internal Affairs of Turkey, 1910-1929, Roll 43, No. 310, 867.4016/71:

դեսպանությանը Պոզանթիից Տարսոն ընկած ճանապարհին արտրված հայերի հանդիպելու մասին: Լրագրողը շուրջ 250 հայերի էր հանդիպել Բաղդադի երկաթգծի Պոզանթի կայարանում, որոնց տեղափոխում էին դեպի Կոնիա: Նրանց 90%-ը կանայք և երեխաներ էին: Նրանք շատ վատ էին հագնված և սննդի կարիք ունեին: Ֆրանսերեն խոսող մի հայ կնոջից Շռայները պարզել էր, որ հայերի խումբն արտաքսվել էր Չեյթունից: Նրանց մեծ մասին տեղավորել էին երրորդ կարգի, իսկ մնացածին՝ բեռնատար վագոններում:

Տարսոնի ճանապարհին՝ Պոզանթիից 80 մղոն հեռավորության վրա, Շռայները հանդիպել էր տարբեր տարիքի շուրջ 40 հայ տղամարդկանց, որոնց ուղեկցում էր ընդամենը մեկ ոստիկան: Թղթակցին զարմացրել էր այն հանգամանքը, որ տղամարդկանցից ոչ մեկը կապանքների մեջ չէր, և նրանք հեշտությամբ կարող էին ազատվել ու փախչել դեպի մոտակա սարերը:

Դեպի Կիլիկյան Դարպասներ տանող ճանապարհին Շռայները հանդիպել էր շուրջ 2.500 հայերի, որոնց մեծ մասը կանայք և երեխաներ էին: Հայերը ջրի, սննդի և հագուստի կարիք ունեին: Աքսորյալների մյուս խմբին տեղափոխում էին սայլերով: Անգլերեն խոսող մի հայից Շռայները պարզել էր, որ հայերը դրամ էին վճարել թուրք գյուղացիներին սայլերի համար: Որոշ հայերի թույլ էին տվել իրենց հետ տեղափոխել նաև անասուններին:

Ըստ Շռայների՝ թուրք իշխանությունների ներկայացուցիչների վերաբերմունքը հայերի հանդեպ տարբեր էր: Նա տեսել էր, օրինակ, որ մի դեպքում թուրք սպան կոպտորեն հրել է հաց մուրացող հայ կնոջը, իսկ մյուս դեպքում՝ նկատել, թե ինչպես է մեկ այլ սպա պատժում թուրք զինվորին հայ կնոջ և քահանայի նկատմամբ ցուցաբերած կոպտությունների համար: Լրագրողի վկայությամբ՝ հույներն ու այլ ազգերի ներկայացուցիչները պատասխանում էին նրան, որ հայերի հետ կատարվող դեպքերն իրենց գործը չեն: Իսկ Մերսինի, Տարսոնի և Ադանայի երկաթգծի աշխատողներին ցուցում էր տրված ընդհանրապես չքննարկելու այդ թեման:

Չորս օր անց Շռայներն Ադանայում տեսել էր երկու զնացք, որոնք տեղափոխում էին Չեյթունի հայերին անասուններ տեղափոխող վագոններով: Աքսորյալ հայերի ընտանիքներին, որպես կանոն, բաժա-

նում էին:²⁷⁷

Մայիսի 28-ին Ամերիկայի Հայ առաքելական եկեղեցու առաջնորդ Վեհունին շնորհակալություն է հայտնում ԱՄՆ-ի պետքարտուղար Բրայանին՝ նախագահ Վուդրո Վիլսոնին հայ համայնքի խնդրագիրը ներկայացնելու համար: Միացյալ Նահանգների հայությունը խնդրում էր նախագահ Վիլսոնին և Պետքարտուղարությանը «իրենց կարողությունների չափով ամեն ինչ անել պատերազմական գոտում ապրող հայերի անհրաժեշտ պաշտպանությունն ապահովելու համար»:²⁷⁸

Մայիսի 28-ին Ֆրանսիայում ԱՄՆ-ի դեսպան Ուիլյամ Շարպը ներկայացնում է հայերի ջարդի մասին հայտնի դաշնակից պետությունների՝ մայիսի 24-ի հայտարարությունը:²⁷⁹

Հայտարարությունը ներկայացվել էր օսմանյան կառավարությանը անձամբ Մորգենթաուի կողմից:²⁸⁰ Երիտթուրք ղեկավարները պատասխանել էին այդ հայտարարությանը՝ ընդգծելով երկրի ազգային ինքնիշխանության և ինքնապաշտպանության իրավունքը: Նրանք պնդում էին, որ Անտանտի տերությունները պատասխանատվություն էին կրում հայ հեղափոխականներին կազմակերպելու և աջակցելու համար:²⁸¹ Երբ Մորգենթաուն հանդիպել էր մեծ վեզիրին հայերի տեղահանությունների կապակցությամբ, վերջինս իր «ծայրագույն զայրույթն էր» արտահայտել Անտանտի տերությունների պահվածքի առնչությամբ:²⁸²

Ըստ Սամանթա Փաուերի՝ Միացյալ Նահանգները, հարազատ մնալով պատերազմի ընթացքում իր չեզոքության սկզբունքին, հրաժարվեց դաշնակիցների հայտարարությանը միանալուց: Նախագահ Վիլսոնը որոշում էր կայացրել ճնշում չգործադրելու թուրքերի և

²⁷⁷ Տե՛ս *United States Official Records on the Armenian Genocide, 1915-1917* /Compiled with an introduction by Ara Sarafian/, էջ 46-47 (LC/HM(Sr.)/Reel 22/474):

²⁷⁸ Տե՛ս NA Microfilm Publications, Microcopy No. 353, Records of the Department of State Relating to Internal Affairs of Turkey, 1910-1929, Roll 51, NA/RG 59/867.48/129:

²⁷⁹ Տե՛ս նույն տեղը, Roll 43, No. 796, 867.4016/67:

²⁸⁰ Տե՛ս **De Waal Thomas**, նշվ. աշխ., էջ 259:

²⁸¹ Տե՛ս **Gilbert Martin**, *First World War: A Complete History*, New York, Henry Holt, 1994, էջ 166:

²⁸² Տե՛ս Library of Congress, Division of Manuscripts, Papers of Henry Morgenthau, Sr., Diary, 1915, June 7:

նրանց աջակցող գերմանացիների վրա: Ընտրվեց վայրագություններին զնահատական չտալու քաղաքականություն, քանի որ հասարակական կարծիքը կարող էր միջամտություն պահանջել ԱՄՆ-ի կառավարությունից: Մինչև որ թուրքերը չէին խախտում ամերիկացիների իրավունքները, Վիլսոնը պաշտոնապես չէր ցանկանում բողոք ներկայացնել:²⁸³

1915 թ. մայիսի 28-ին Մերսինում հյուպատոս Նաթանը զեկուցում է Մորզենթաուլին Ադանայի նահանգում տիրող քաղաքական իրավիճակի մասին: Ըստ Նաթանի՝ հայերին վերաբերող հարցն Ադանայում «բարենպաստ» լուծում էր ստացել: Թեև Ադանայից մի քանի հարյուր հայ ընտանիքներ աքսորվել էին, սակայն ներկայումս գործընթացը կանգնեցվել էր Տարսոնում և մի քանի այլ վայրերում: Շատ դեպքերում հայերին թույլ էին տվել վերադառնալ Ադանա: Անորոշ ժամանակով տեղահանությունների դադարեցման հանգամանքը մեղմացրել էր լարված իրավիճակն Ադանայում: Տարսոնում տեղահանությունները մեծապես կատարվել էին պատգամավոր Սադիկ փաշայի միջամտության հետևանքով: Տեղահանման ենթակա հայ ընտանիքների մասին որոշում ընդունող Մերսինում ստեղծված «ականավոր մահմեդականների» հանձնաժողովը ժամանակավորապես կասեցրել էր իր գործունեությունը: Ըստ Նաթանի՝ հայերի տեղահանությունների դադարեցման հիմնական պատճառն Ադանայի նահանգապետ Հաքքի փաշայի մարդասիրական դիրքորոշումն էր, ինչը տարածայնություններ և բողոք էր առաջացրել երիտթուրքական կուսակցության անդամների շրջանում, որոնց մեծամասնությունը հայերի արտաքսման կողմնակից էր:

Նաթանն այնուհետև նշում էր, որ թեև Հաննի հայ բնակչության մեծ մասն աքսորվել էր, սակայն այստեղ ևս տեղահանության գործընթացը դադարեցվել էր: Միաժամանակ տեղահանությունները Դյուրք Յոլում շարունակվում էին. այստեղ ընդամենը մի քանի հայ ընտանիք էր մնացել: Նաթանը դա բացատրում էր նրանով, որ այստեղ մեծ թվով փախստականներ էին ժամանել Մակեդոնիայից, որոնք զբաղեցնում էին տեղահանված հայերի տները:²⁸⁴

²⁸³ Տե՛ս **Power Samantha**, նշվ. աշխ., էջ 5:

²⁸⁴ Տե՛ս NA Microfilm Publications, Microcopy No. 353, Records of the Department of State Relating to Internal Affairs of Turkey, 1910-1929, Roll 6, No. 438, NA/RG 59/867.00/768,

1915 թ. մայիսի 31-ին Գերմանիայի դեսպան Վանգենհայնը գրում է արտաքին գործերի նախարարությանը, որ «հայկական լրտեսությունը խափանելու և հայկական նոր համընդհանուր ապստամբությունը կանխելու նպատակով» Էնվեր փաշան պատերազմական դրությամբ է հայտարարել երկրում, որի հետևանքով փակվելու են մեծ թվով հայկական դպրոցներ, արգելվելու են հայկական օրաթերթերի հրատարակությունն ու հայերի փոստային թղթակցությունը: Ըստ դեսպանի՝ «հայկական ապստամբ կենտրոններից» անվտանգության համարվող ընտանիքները «վերաբնակեցվելու» էին Միջագետքում: Այդ կապակցությամբ Էնվեր փաշան խնդրում էր գերմանական կողմին չխոչընդոտել իրեն այդ հարցում: Դեսպանը նշում էր, որ «թշնամիների շրջանում» թուրքական այդ գործողությունները կրկին պատճառ են դառնում «մեծ հուզումների» և օգտագործվելու են Գերմանիայի դեմ: Վանգենհայնն այնուհետև գրում էր, որ մասնավորապես բազմաթիվ հայկական դպրոցների փակման հետևանքով տուժելու են Միացյալ Նահանգների շահերը: Այդ գործողությունները, ըստ դեսպանի, «վտանգաբար նշանակում էին մեծ զրկանքներ հայ բնակչության համար»: Սակայն, Վանգենհայնի կարծիքով, «մենք պետք է չափավորենք այդ գործողություններն իրենց տեսակի մեջ, սակայն հիմնականում չխոչընդոտենք դրանց իրականացումը»: «Հայերի այդ քայքայիչ գործողությունները,- շարունակում էր դեսպանը,- որոնց աջակցում էր Ռուսաստանը, այնպիսի չափերի էին հասել, որ կարող էին վտանգել Թուրքիայի գոյությունը»:²⁸⁵

Հունիսի 5-ին Հալեպում հյուպատոս Ջեքսոնը զեկուցում է դեսպան Մորգենթաուին, որ Մարաշից, Ջեյթունից, Հասանբեյից, Օսմանիեից, Բաղչեից, Ադանայից, Դյուրք Յուից, Հաննից և այլ քաղաքներից և գյուղերից Հալեպ են ժամանում լավ զինված ուղեկցողներով շրջապատված հայերի 300-500 հոգանոց խմբեր, որոնք հիմնականում կազմված էին մեծահասակներից, կանանցից և երեխաներից: Ըստ հյուպատոսի՝ նրանց թույլ էին տվել տներից վերցնել միայն հագուստ. նրանք իրենց հետ չէին տեղափոխում անասուններ, հիմնական մասը ոտքով էր ճամփորդել մինչև Հալեպ: Հայերի մի քանի քարավաններ

Էջ 1-2:

²⁸⁵ Տե՛ս *The Armenian Genocide. Evidence from the German Foreign Office Archives, 1915-1916* / Edited by Wolfgang Gust, New York, Oxford, Berghahn, 2014, էջ 194-195:

մի քանի օր մնացել էին Հալեպում: Նրանց օգնություն էին ցուցաբերել քաղաքի հայերը: Նրանք գիշերել էին եկեղեցիներում և դպրոցներում: Հալեպից նրանց աքսորել էին այնպիսի վայրեր, որոնք գտնվում էին Բաղդադից հինգ-վեց օրվա ճանապարհին: Ականատեսների վկայությունների համաձայն՝ նրանք հազարներով հայտնվել էին անապատում, որտեղ մահանում էին քաղցից, հիվանդություններից և արևահարությունից: Հյուպատոսի տեղեկության համաձայն՝ Հալեպում մնացել էին շուրջ 2.600 աքսորված հայեր, իսկ 25 հազարից ավելի հայերի տարել էին տարբեր ուղղություններով:

Ըստ Ջեքսոնի՝ հավաստի տեղեկություններ էին ստացվում նաև Դիարբեքիից, որտեղ հայերը ենթարկվում էին դաժան հալածանքների. նրանց տները խուզարկում էին զենք և հակաիշխանական պահվածքի ապացույցներ որոնելու պատրվակով: Քաղաքում ձերբակալվել էին 300-1000 հայեր:

Ըստ հյուպատոսի՝ Հալեպի ակնառու մարդիկ դիմում էին իշխանություններին՝ հայերի հանդեպ հալածանքները դադարեցնելու նպատակով, սակայն նրանց դիմումները մերժվում էին: «Կասկած չկա, գրում էր Ջեքսոնը, - որ իրագործվում է ճշգրտորեն մտածված ծրագիր՝ հայ ազգը հիմնովին բնաջնջելու նպատակով»:²⁸⁶

1918 թ. Պետքարտուղարությանը ներկայացրած իր տեղեկանքում Ջեքսոնը գրում էր, որ, սկսած 1915 թ. փետրվարից, Կոստանդնուպոլսի իշխանությունները բազմիցս փորձեր էին կատարել Հալեպի հայկական բնակչությանն արտաքսելու ուղղությամբ, սակայն նահանգապետ Ջելալ բեյը, որը տարիների ընթացքում բարեկամական հարաբերություններ էր հաստատել հայերի հետ, առաջին շրջանում անտեսում էր մայրաքաղաքից ստացված հրահանգները, իսկ այնուհետև ընդհանրապես «հրաժարվեց այդ սուսկալի նախաձեռնության գործիք դառնալուց»: Ի վերջո, 1915 թ. հուլիսին Ջելալ բեյի փոխարեն նահանգապետ նշանակվեց Բեյրութի նահանգապետ Բեքիր Սամի Կունդուխը²⁸⁷: Սակայն նոր նահանգապետը նույնպես «անգործուն-

²⁸⁶ Տե՛ս NA Microfilm Publications, Microcopy No. 353, Records of the Department of State Relating to Internal Affairs of Turkey, 1910-1929, Roll 43, No. 289, 867.4016/77:

²⁸⁷ **Բեքիր Սամի Կունդուխ** (1865-1933)՝ Թուրքիայի քաղաքական և պետական գործիչ, դիվանագետ: Եղել է Տրապիզոնի, Վանի, Բեյրութի, Բուրսայի, Հալեպի նահանգապետ, 1920-1921 թթ.՝ Անկարայի կառավարության առաջին արտաքին գործերի նախարարը: 1920 թ. նոյեմբերին գլխավորել է թուրքական պատվիրակությունն Ալեքսանդրոպոլի

յա» գտնվեց արտաքսման կազմակերպման գործում, որի հետևանքով երկու ամիս անց այդ պաշտոնում նշանակվեց Մուստաֆա Աբդուլհալակ բեյը, որը ներքին գործերի նախարար Թալեաթ փաշայի «բարեկամն էր ու պրոտեժեն»։ Այդ ժամանակ էր, որ Կոստանդնուպոլսից կրկին հրահանգներ ստացվեցին Հալեայի հայ բնակչությանը՝ ներառյալ առաքելականներին, կաթոլիկներին և բողոքականներին, արտաքսելու վերաբերյալ։ Ըստ Ջեքսոնի, թեև ԱՄՆ-ի հյուպատոսության և դեսպանության գործուն քայլերի շնորհիվ հաջողվեց սկզբում կաթոլիկներին և ապա բողոքականներին հանել արտաքսվողների ցանկերից, սակայն, սկսած օգոստոսից, թուրքերն այլևս դադարեցին ամերիկացիներին լսելուց։ Այդ ընթացքում Հալեայի 22 հազարի հասնող հայերը շատ չտուժեցին. արտաքսման ենթարկվեցին միայն վեց կամ յոթ ընտանիքներ։

Համաձայն Ջեքսոնի տեղեկատվության՝ Այնթապում ապրում էին 24 հազար, Մարաշում՝ 35 հազար, Ուրֆայում՝ 14 հազար, Ալեքսանդրեթում՝ 2 հազար, Բիրեջիկում՝ 1.200 հայեր։ Տեղահանության հետևանքով Այնթապում մնացին 12 հազար, Մարաշում՝ 14 հազար հայեր։ Հայերին արտաքսեցին դեպի Միջագետքի անապատը։ Նրանցից միայն հինգ հազարը կարողացան ուղեկցող ոստիկաններին կաշառելու միջոցով հասնել Հալեա։²⁸⁸

Ջեքսոնն այնուհետև գրում էր, որ միաժամանակ Հալեպում սկսեցին լուրեր տարածվել «սարսափելի դաժանությունների» մասին, որոնք տեղի էին ունեցել Սվազից, Երզնկայից, Խարբերդից, Տրապիզոնից, Մամուռնից, Էրզրումից, Մուշից, Բիթլիսից, Դիարբեքրից, Մարդինից, Մալաթիայից, Կեսարիայից, Թալասից, Կոնիայից, Անգորայից, Բրուսայից, Ադանայից, Մերսինից, Հաճնից և Օսմանյան կայսրության հարյուրավոր այլ քաղաքներից և գյուղերից համատարած կերպով քրիստոնյաների արտաքսման ընթացքում։ Ժամանակ առ ժամանակ Հալեա ժամանող արտաքսված հայերը պատմում էին իրենց ընտանիքներից տղամարդկանց բաժանելու, նրանց սպանությունների, ճանապարհներին համատարած թալանի, կանանց և երե-

հայ-թուրքական բանակցություններում։

²⁸⁸ St'u NA Microfilm Publications, Microcopy No. 353, Records of the Department of State Relating to Internal Affairs of Turkey, 1910-1929, Roll 46, NA/RG 59/867.4016/373, էջ 708-711։

խաների հանդեպ դաժան վերաբերմունքի և մահացածության համատարած դեպքերի, գեղեցիկ կանանց և երիտասարդ աղջիկների նկատմամբ ոստիկանների, քրդերի և թուրքերի դաժան վերաբերմունքի, բռնաբարությունների բազմաթիվ դեպքերի մասին:

Ըստ Ջեքսոնի՝ 1915 թ. հուլիսին Խարբերդից արտաքսված շուրջ հազար կանանց և երեխաների Դիարբեքիից արևելք գտնվող Վերին Չուխուրի մոտ թուրք ուղեկցողները հանձնեցին քուրդ հրոսակախմբի: Գեղեցիկ աղջիկներին, կանանց և երեխաներին ընտրելուց հետո նրանք սպանեցին դիմադրողներին, իսկ մնացած կանանց մերկացրին և կրկին ոտքով ճանապարհի հանեցին: Նրանցից միայն 300-ը հասան Ռաս-ու-Այն գրեթե մերկ և սարսափելի այրված: Մի քանի օր անց նրանցից շատերը ժամանեցին Հալեպ, իսկ մի քանիսը եկան հյուպատոսություն:

Հալեպ երկու խմբով ժամանեցին հինգ հազարի հասնող կանանց և երեխաների քարավաններ, որոնց վիճակը, ինչպես վկայում է Ջեքսոնի, սարսափելի էր: Ըստ Ջեքսոնի՝ այս մարդիկ Սվազի նահանգում ապրող 300 հազար հայերից ողջ մնացածներն էին և պատմում էին նույն փաստերի մասին՝ ընտանիքների բաժանում, տղամարդկանց բանտարկում և տարհանում, տղամարդկանց սպանություն կանանց և երեխաների աչքերի առջև, քուրդ հրոսակախմբերի հարձակումներ և քարավանների թալան, գեղեցիկ աղջիկների, կանանց և երեխաների առևանգում:²⁸⁹

Հունիսի 7-ին Մերսինում հյուպատոս Նաթանը գրում էր, որ տեղահանված շատ հայ ընտանիքների թույլ էին տվել վերադառնալ Ադանա: Ըստ հյուպատոսի՝ անցյալ շաբաթ Ջեյթունից արքտրված վերջին ընտանիքները, լինելով սարսափելի վատ վիճակում, անցան Տարսունով: Նրանց որոշակի օգնություն ցուցաբերեցին տեղի ամերիկացի միսիոներները: Ադանայի միսիոներական առաքելությունում աշխատող տիկին Վեբը մեկնել էր Դյորթ Յոլ և ականատես դարձել այնտեղ տեղահանված հայերի ծանր վիճակին: Միաժամանակ իշխանությունները շարունակաբար մահմեդական փախստականներ՝ մոհաջիրներ էին ուղարկում Ջեյթուն՝ տեղահանված հայերի տներում բնա-

²⁸⁹ Տե՛ս NA Microfilm Publications, Microcopy No. 353, Records of the Department of State Relating to Internal Affairs of Turkey, 1910-1929, Roll 46, NA/RG 59/867.4016/373, էջ 711-712:

կեցնելու նպատակով:²⁹⁰

Հունիսի 14-ին ամերիկյան միսիոներ, պատվելի Մերրիլը զեկուցում է ԱՄՆ-ի դեսպանությանը Չեյթուն-Մարաշում տիրող իրավիճակի մասին: Ըստ միսիոների՝ Չեյթունի և շրջակա գյուղերի գրեթե ողջ հայ բնակչությունը ենթարկվել էր տեղահանության: Հայերի տները բնակեցվում էին փախստական բոսնիացի մահմեդականներով: Մերրիլը ճշմարտություն էր համարում այն հանգամանքը, որ Չեյթունը «մեծ սադրանքի տեղիք է տվել կառավարությանը»: Ըստ միսիոների՝ նախկինում Չեյթունում ապստամբության 37 դեպք էր արձանագրվել, սակայն այս անգամ այն դարձավ ճակատագրական հայ բնակչության համար: Միսիոները միաժամանակ գտնում էր, որ քաղաքի բնակչության մեծ մասը «հնազանդ էր» կառավարությանը, սակայն վերջինիս չհաջողվեց ապահովել «հանցագործ» ապստամբների «հնազանդությունը»: Ըստ միսիոների՝ Չեյթունի շրջակա գյուղերից միայն երկուսն էին կամավոր օգնություն ցուցաբերել ապստամբներին: Մնացած գյուղերի բնակչությունը սատարում էր ապստամբներին՝ գտնվելով վերջիններիս կողմից սպառնալիքի տակ: Ապստամբները հուժկու պայքար մղեցին և զգալի վնաս հասցրին թուրքական բանակին: Չեյթունի վանքում պատսպարված 17 ապստամբները կարողացան սպանել 101 և վիրավորել 110 թուրք զինվորի: Սպանվել էր միայն երկու ապստամբ: Հետագայում ապստամբները դիրքեր զբաղեցրին բարձրունքի վրա գտնվող ժայռերի հետևում, ինչն էլ ավելի դժվարացրեց նրանց ճնշելու բանակի փորձերը: Մերրիլը նշում էր, որ ապստամբներն իրականում 25 հոգի էին, սակայն իշխանությունները մեծապես չափազանցված թիվ էին ներկայացնում:

Ըստ Մերրիլի՝ իշխանությունները նախօրոք չէին զգուշացրել տեղահանության ծրագրի մասին, և բնակչությունը հիմնականում անպատրաստ էր հետագայում իրեն հասած տանջանքներին: Մա հատուկ արվում էր բացառելու համար հայերի կողմից փախուստը, ընդդիմությունն ու օտարների կողմից հնարավոր միջամտությունը: Մարաշում հնարավոր դարձավ, որ ամերիկյան որբանոցի հայ երեխաները չաքստրվեն, իսկ բողոքական համայնքի քահանան և ուսուցիչը կարողացան խուսափել տեղահանությունից, քանի որ զեյթունցիներ

²⁹⁰ Տե՛ս *United States Official Records on the Armenian Genocide, 1915-1917* /Compiled with an introduction by Ara Sarafian/, էջ 59 (LC/HM(Sr.)/Reel 7/587):

չէին:²⁹¹

Մերրիլը այնուհետև գրում էր, որ «տանջանքների սև պատմությունը», որին կառավարությունը ենթարկեց հայերին, չի կարող ունենալ բացատրություն կամ արդարացում: Չկարողանալով պատժել «անեղավոր հանցագործներին»՝ կառավարությունը վրեժխնդիր եղավ անպաշտպան տղամարդկանցից, կանանցից և երեխաներից: Միսիոներն անգամ չէր լսել մեկ դեպքի մասին, երբ տեղահանվածները «անհնազանդության փորձ» դրսևորած լինեին ողջ Ջեյթունի շրջանում: Մեծ թվով տեղահանվածների ուղեկցում էին ընդամենը մի քանի զինվորներ: Կանայք և երեխաները քայլում էին ժամերով, երեխաները մահանում էին զինվորների դաժանության պատճառով, ծնողները նետում էին երեխաներին Գիլոն գետը, Բերտիսի բնակիչներն ու մահմեդական փախստականները սպասում էին տեղահանվածների քարավանների հայտնվելուն և կողոպտում մարդկանց ունեցվածքն ու անասուններին: Ըստ Մերրիլի՝ զինվորներն այդ ընթացքում չէին միջամտում, հայերը փորձում էին վաճառել իրենց ունեցվածքը չնչին գնով, Մարաշից դեպի Այնթապ տանող ճանապարհին քարավանին ուղեկցող զինվորները բռնաբարում էին կանանց, եղել էին ծննդաբերության դեպքեր, երբ և՛ մայրերը, և՛ երեխաները մահացել էին:

Մերրիլը գրում էր, որ Մարաշի հայ բնակչությունը սարսափահար վիճակում էր հնարավոր տեղահանության պատճառով: Իշխանությունը զտնվում էր այնպիսի մարդկանց ձեռքում, որոնց նկատմամբ բնակչությունը որևէ վստահություն չուներ: Կաշառակերությունը քաղաքում մեծ չափերի էր հասնում: Մարդիկ այնպիսի վիճակում էին, որ պատրաստ էին տրամադրելու ամեն ինչ՝ ընտանիքների անվտանգության դիմաց: Ջեյթունից 26 տղամարդ դատապարտվել էր մահապատժի, սակայն նրանք կարողացել էին ազատ արձակվել կաշառքի միջոցով: Մայիսի 16-ին չորս կամ հինգ հայ տղամարդիկ պետք է կախաղան բարձրացվեին Մարաշում, սակայն նրանք նույնպես կարողացել էին ազատվել կաշառք տալու միջոցով: Միաժամանակ, ըստ միսիոների, մեծ հավանականություն կար, որ հայ ապստամբները կփորձեին հարձակում գործել Ջեյթունում բնակեցված մահմեդական փախստականների վրա:²⁹²

²⁹¹ Տե՛ս նույն տեղը, էջ 67 (NA/RG 59/867.4016/80):

²⁹² Տե՛ս նույն տեղը, էջ 68-69 (NA/RG 59/867.4016/80):

Մինչև հունիսի կեսերը Մորգենթաուն վստահ չէր, որ պետք է ամբողջական մի զեկուցագիր ներկայացնի Պետքարտուղարությանը հայկական կոտորածների մասին: Հունիսի 17-ին դեսպանն ու դեսպանության իրավական խորհրդատու Արշակ Շամվոնյանը քննարկեցին զեկուցագիր ներկայացնելու անհրաժեշտությունը և համաձայնեցին, որ «դա լավ բանի չի բերելու ու կարող է վնասել, և ուստի պետք չէ ամբողջական հեռագիր ուղարկել»:²⁹³ Կրկին խորհրդակցելով Շամվոնյանի հետ՝ դեսպանը հեռագրում է Վաշինգտոն կոտորածների մասին: Մորգենթաուն զեկուցում էր հայերի նկատմամբ աճող թշնամության մասին, այն մասին, որ նրանց ղեկավարները բանտարկվել էին և կախաղան հանվել «անջատողական դավադրություն» կազմակերպելու մեղադրանքով: Դեսպանի փորձերը հայերին օգնելու ուղղությամբ որոշ դեպքերում մեղմացրել էին իրավիճակը, սակայն իշխանությունները շարունակում էին արյունահեղությունը:²⁹⁴

Հունիսի 18-ին Մորգենթաուն տեղեկացնում է պետքարտուղարին, որ մեծ վեզիրը «ափսոսանք է հայտնել, որ անձնապես պատասխանատու է համարվում տեղի ունեցածի համար և իր զայրույթն է արտահայտել օտար պետությունների կողմից հայերի հարցում թուրքական կառավարության սուվերեն իրավունքներին միջամտելու կապակցությամբ»: Դեսպանը նշում էր, որ միաժամանակ հայերի նկատմամբ խիստ քաղաքականությունը շարունակվում էր: Խորհրդարանի երեք նշանավոր հայ անդամներ էին ձերբակալվել, և քսան հայեր կախաղան էին հանվել «անջատողական դավադրության» մեղադրանքով: Ըստ դեսպանի՝ սպասվում էին նոր պատիժներ: «Առիթից առիթ, թեպետ և ոչ պաշտոնապես, սակայն հաճախակի և համառորեն,- գրում էր նա,- ես փորձել եմ մեղմել որոշ դեպքերում դժվար իրավիճակները, սակայն ձոխողվել եմ նրանց [իշխանություններին] ընդհանուր քաղաքականությունը փոփոխության ենթարկելու հարցում, որը նրանք փորձում են հիմնավորել զինվորական անհրաժեշտությամբ»:²⁹⁵

Հունիսի 19-ին Էնվեր փաշան ներկայացնում է Մորգենթաունին կո-

²⁹³ St' u Library of Congress, Division of Manuscripts, Papers of Henry Morgenthau, Sr., Diary, 1915, June 19:

²⁹⁴ St' u Library of Congress, Division of Manuscripts, Papers of Henry Morgenthau, Sr., Diary, 1915, June 18:

²⁹⁵ NA Microfilm Publications, Microcopy No. 353, Records of the Department of State Relating to Internal Affairs of Turkey, 1910-1929, Roll 43, No. 778, NA/RG 59/867.4016/70.

տորածների վերաբերյալ իշխանությունների փաստարկները: Պատերազմի նախարարը հայտարարում է, որ երեք ամիս առաջ զգուշացրել է հայ պատրիարքին, որ եթե հայերն ընդգրկվեն հեղափոխական գործունեության մեջ կամ միանան ռուսական պատերազմական ծրագրերին, կառավարությունը ունակ չի լինի կանխելու նրանց դեմ ուղղված թշնամությունը: Էնվերը նշում է, որ կառավարությունը չի հանդուրժելու ներքին անկարգություններն այն օրերին, երբ զբաղված է լինելու Դարդանեի պաշտպանությամբ, և կիրառելու է բոլոր անհրաժեշտ միջոցները՝ իրավիճակը հսկողության տակ պահելու նպատակով: Նա ասում է, որ թեև դեմ չէ հայ ժողովրդին և «մեծագույն հիացմունք ունի նրա աշխատասիրության և այլ հատկանիշների հանդեպ...», այն պետք է ոչնչացվի», քանի որ դաշինք է կազմել թշնամիների հետ, ինչպես տեղի էր ունեցել Վանում: Էնվերն այնուհետև նշում է, որ, սատարելով հայերին, Ռուսաստանը, Ֆրանսիան, Բրիտանիան և Միացյալ Նահանգները նրանց «բարություն» չեն անում: Միաժամանակ նա խոստանում էր, որ այլևս հայերի կոտորածներ չեն լինելու:²⁹⁶

Հունիսի 19-ին Բաղդադում ամերիկյան հյուպատոս Բրիսսելը հեռագրում է դեսպան Մորգենթաուին, որ Բաղդադի հայ համայնքի ներկայացուցիչները շարունակ տեղեկացնում են հյուպատոսությանը Վանում ու Դիարբեքիում տեղի ունեցած հայերի կոտորածների մասին և խնդրում Միացյալ Նահանգների դեսպանությանը միջոցներ ձեռնարկել, որպեսզի նման կոտորած տեղի չունենա Բաղդադում: Ըստ հյուպատոսի՝ Բաղդադի նահանգապետը դեմ էր նման քաղաքականությանը: Բրիսսելը նաև տեղեկացնում էր Մորգենթաուին, որ Դիարբեքիի ներկայիս գլխավոր նահանգապետ Ռեշիբ բեյը մինչ այդ Բաղդադի նահանգապետի պաշտոնակատարն էր, որի պաշտոնավարման ընթացքում մի խումբ հայեր տեղահանվել էին քաղաքից:²⁹⁷

Համաձայն միսիոներներից ստացված տվյալների՝ հունիսի 23-ին Բիթլիսի իշխանությունները բանտ են նետում քաղաքի տղամարդկանց և տասը տարեկանից բարձր տղաների: Հայերը որևէ դիմադրություն

²⁹⁶ St' u Library of Congress, Division of Manuscripts, Papers of Henry Morgenthau, Sr., Diary, 1915, June 19:

²⁹⁷ St' u *Unites States Official Records on the Armenian Genocide, 1915-1917* /Compiled with an introduction by Ara Sarafian/, էջ 70 (LC/HM(Sr.)/Reel 7/593):

չէին ցուցաբերում՝ հավատացած լինելով, որ շուտով նրանց ազատ են արձակելու: Երկու օր անց Բիթլիս է ժամանում Ջուզեպ Բեյն իր ութհազարանոց մարդասպանների ջոկատներով: Նրանք առգրավում են հարուստ հայերից հինգ հազար ֆունտ ոսկի, շատերին կախաղան հանում, իսկ մնացած տղամարդկանց և տղաներին խմբերով դուրս են բերում քաղաքից դեպի մոտակա սարերն ու կոտորում: Հավաստի տեղեկությունների համաձայն՝ մեկ օրվա ընթացքում Բիթլիսում և շրջակա գյուղերում կոտորվել է շուրջ 15 հազար հայ:²⁹⁸

Հունիսի 28-ին Տրապիզոնում հյուպատոս Հայզերը տեղեկացնում է դեսպան Մորգենթաուին այն մասին, որ քաղաքի հասարակական վայրերում իշխանությունների կողմից փակցվել է հայտարարություն, ըստ որի՝ քաղաքի և շրջակա գյուղերի բոլոր հայերը՝ տղամարդիկ, կանայք և երեխաները, պետք է կառավարությանը հանձնեն իրենց այն ողջ ունեցվածքը, որը նրանք չեն կարող իրենց հետ վերցնել դեպի Մոսուլ ճանապարհի համար: Ըստ նույն այդ հայտարարության՝ հայերը մնալու էին այդ շրջաններում մինչև պատերազմի ավարտը, որից հետո վերադառնալու էին, և նրանց վերադարձվելու էին իրենց իրերը: Հյուպատոսը նկարագրում էր հայ բնակչության շրջանում հայտարարության հետևանքով ստեղծված ասի ու սարսափի վիճակը: Շատերը մտածում էին իրենց փոքր երեխաներին թողնել պարսիկ և թուրք հարևանների մոտ: Ըստ հյուպատոսի՝ քաղաքի բոլոր հնարավոր փոխադրամիջոցները այդ պահին առգրավված էին զինվորական նպատակներով, և տեղահանվածները ստիպված քայլելու էին շուրջ 60 օր՝ նշված շրջաններ հասնելու համար: Հյուպատոսի կարծիքով՝ նույնիսկ առողջ տղամարդը չէր կարող կլիմայական դաժան պայմաններում իրականացնել այդ ուղևորությունը: Հայզերը այդ թեմայով խոսել էր իր ավստրո-հունգարական գործընկերոջ հետ՝ խնդրելով նրան Ավստրո-Հունգարիայի կառավարության և դեսպանության միջոցով ազդեցություն գործել թուրք իշխանությունների վրա՝ տվյալ հրահանգի իրագործումը չեղյալ համարելու կամ ծայրահեղ դեպքում խնայելու ծեր մարդկանց, կանանց և երեխաներին: Հյուպատոսն իր հերթին հանդիպում էր ունեցել նահանգապետի հետ և խնդրել հնարավորության դեպքում բացառություն անել որոշ հայերի համար: Նահանգապետն

²⁹⁸ Տե՛ս Patrick Thomas, նշվ. աշխ., էջ 115-116:

ընթերցել էր հյուպատոսին հայտարարության տեքստը և հանձնել փաստաթղթի պատճենը՝ նշելով, որ թեև բացառություն հնարավոր չէ անել, սակայն հեռագիր է հղել Կոստանդնուպոլիս՝ առաջարկելով բացառություն անել հայ պետական պաշտոնյաների համար: Հյուպատոսը հույս էր հայտնել, որ ամերիկյան հյուպատոսության երեք հայ աշխատակիցներ նույնպես կհայտնվեն այդ ցանկում:²⁹⁹

Երկու օր անց Հայզերը հայտնում է դեսպանին, որ, նահանգապետից ստացված տեղեկատվության համաձայն, որոշում է կայացվել բացառություն անելու ծեր տղամարդկանց և կանանց, այրի և երեխա սպասող մայրերի, ինչպես նաև հայազգի կառավարական աշխատողների համար: Նահանգապետը խոստացել էր նաև չանհանգստացնել հյուպատոսության հայ աշխատակիցներին: Հյուպատոսը տեղեկացնում էր նաև, որ իր գերմանացի և ավստրո-հունգարացի գործընկերներն իրենց դեսպանությունների միջոցով փորձում էին ամեն ինչ անել կառավարության հրահանգի կատարման գործընթացում որոշակի փոփոխություններ մտցնելու ուղղությամբ, մասնավորապես՝ այն հարցերում, որոնք վերաբերում էին կանանց և երեխաներին:³⁰⁰

Հունիսի 28-ին Հալեպում հյուպատոս Ջեքսոնը հաղորդում է Մորգենթաուին պատվելի Ֆրենսիս Լեսլիի³⁰¹, Ուրֆայից ստացված տեղեկատվության մասին: Լեսլին հայտնում էր Ուրֆայում իշխանությունների կողմից հայերի դեմ սկսված բռնությունների մասին: Ոստիկանությունը հայերի տների համատարած խուզարկություն էր սկսել՝ զենք գտնելու նպատակով: Իշխանությունները բանտ էին նետել քաղաքի շուրջ հարյուր հեղինակավոր հայերի: Նրանցից և հայ եպիսկոպոսից պահանջում էին հանձնել հայերի մոտ եղած զենքն ու

²⁹⁹ Տե՛ս NA Microfilm Publications, Microcopy No. 353, Records of the Department of State Relating to Internal Affairs of Turkey, 1910-1929, Roll 43, NA/RG59/867.4016/85:

³⁰⁰ Տե՛ս NA Microfilm Publications, Microcopy No. 353, Records of the Department of State Relating to Internal Affairs of Turkey, 1910-1929, Roll 43, NA/RG59/867.4016/105:

³⁰¹ Ուրֆայում միսիոներական առաքելության ղեկավար Ֆրենսիս Լեսլին քաղաքի միակ ամերիկացին էր: Նրա պատասխանատվության տակ էին գտնվում ավետարանչական եկեղեցին, մի քանի արհեստագործական դպրոցներ, կույրերի դպրոցը, ինչպես նաև ընդհանուր բարեգործական աշխատանքների կազմակերպումը: Հալեպում ԱՄՆ-ի հյուպատոս Ջեսսի Ջեքսոնը պաշտոնապես դիմել էր թուրքական իշխանություններին՝ Լեսլիին փոխհյուպատոս ճանաչելու նպատակով, սակայն որևէ պատասխան այդպես էլ չէր ստացել (Տե՛ս **Glockler H. W.**, *Interned in Turkey, 1914-1918*, Beirut, Sevan Press, 1969, էջ 23):

հայ հեղափոխականներին: Հակառակ պարագայում իշխանությունները սպառնում էին տեղահանության ենթարկել Ուրֆայի ողջ հայությանը, ինչպես տեղի էր ունեցել Ջեյթունի հայ բնակչության հետ: Ըստ Լեսլիի՝ չորս շաբաթ առաջ 15 հայ ընտանիքներ արդեն իսկ տեղահանվել էին դեպի Ռաքքա: Նրանց թվում էր նաև 20 տարի անընդմեջ ամերիկյան առաքելությանը ծառայած, իշխանությունների հանդեպ մշտապես հավատարիմ վերաբերմունք ունեցող Սողոմոն Կնաջյանը: Ըստ Լեսլիի՝ Ուրֆայի հայերի մեծամասնությունը նախընտրում էր մնալ սեփական տներում և կոտորվել, քան ենթարկվել տեղահանության: Միաժամանակ հայերը չէին ցանկանում հանձնել իրենց ունեցած զենքը, քանի որ հիշում էին, թե ինչպես 1895 թ. իշխանությունները զինաթափեցին հայերին, որից հետո մահմեդականները, որոնց զենքն առգրավված չէր, երկու օրվա ընթացքում կոտորեցին վեց հազար հայերի: Ըստ Լեսլիի՝ Ուրֆայի հայությունը երբեք չէր դիմադրել և միշտ հնազանդ էր իշխանություններին. քաղաքում հեղափոխական կազմակերպություն չկար: Լեսին այնուհետև նշում է, որ հնարավոր է, որ հեղափոխական գաղափարներ կրող 30-40 մարդիկ կային, սակայն նրանք քարոզչությամբ չէին զբաղվում: Պատվելին դիմում էր հյուպատոսին՝ փոխանցելու այդ տեղեկատվությունը Կոստանդնուպոլիս՝ հույս հայտնելով, որ Գերմանիայի և ԱՄՆ-ի դեսպանությունները ճնշում կգործադրեն կենտրոնական իշխանության վրա՝ քրիստոնյաների նկատմամբ նրանց քաղաքականությունը փոփոխության ենթարկելու նպատակով:³⁰²

Հունիսի 30-ին Խարբերդում հյուպատոս Լեսլի Գեյվիսը զեկուցում է դեսպան Մորգենթաուին երիտթուրքական կառավարության կողմից «գործադրված խստագույն միջոցների և ամբողջ պատմության ընթացքում տեղի ունեցած մեծագույն ողբերգության մասին»: Ըստ Գեյվիսի՝ օսմանյան կառավարությունը հայտնաբերել էր «որոշ հայերի կողմից կազմակերպված հեղափոխական գործունեության» փաստեր և կիրառել էր համատարած «խիստ միջոցներ»՝ խտրականություն չդնելով անմեղ ժողովրդի և շարժման մասնակիցների միջև: Գործնականորեն բոլոր հայ տղամարդիկ այստեղ ձերբակալվել էին

³⁰² St' u *Unites States Official Records on the Armenian Genocide, 1915-1917* /Compiled with an introduction by Ara Sarafian/, էջ 84-85 (NA/RG 59/867.4016/92); **Glockler H. W.**, նշվ. աշխ., էջ 27-31:

և նետվել բանա: Նրանց մեծ մասը ենթարկվել էր «ամենադաժան կտտանքների», որոնցից շատերը մահացել էին: Մի քանի հարյուր առաջատար դիրքեր զբաղեցնող հայեր աքսորվել էին, և, հավանաբար, նրանց մեծ մասը սպանվել էր: Լուրեր էին տարածվել, որ հայերի հերթական կտտորած է սպասվում, սակայն հայ ազգը «կործանելու այլ մեթոդ է գտնվել»: Այն նախատեսում էր, Դեյվիսի կարծիքով, հայ բնակչության արտաքսում ոչ միայն տվյալ վիլայեթից, այլև «Հայաստանը կազմող բոլոր վեց վիլայեթներից»: Ըստ հյուպատոսի՝ Մամուրեթ-ուլ-Ազիզի վիլայեթում ապրում էին շուրջ 60 հազար, և վեց վիլայեթներում՝ շուրջ մեկ միլիոն հայեր: Այս բոլոր մարդիկ աքսորվելու էին, այսինքն՝ իրագործվելու էր միջոցառում, որն իր նախատիպը չէր ունեցել ողջ պատմության ընթացքում:

Դեյվիսի տվյալների համաձայն՝ հունիսի 28-ին հրապարակայնորեն հայտարարվել էր, որ բոլոր հայերն ու սիրիացիները պետք է քեն իրենց տները հինգ օրվա ընթացքում: Մամուրեթ-ուլ-Ազիզ քաղաքի և Խարբեթի բերդաքաղաքի յուրաքանչյուր տուն ծանուցում էր ստացել մեկնելու օրերի մասին, որոնք էին համապատասխանաբար հուլիսի 1-ը, հուլիսի 3-ը և հուլիսի 4-6-ը: Երկու քաղաքներում ապրում էին, ըստ Դեյվիսի, ընդհանուր առմամբ 40 հազար հոգի, որոնցից 15-18 հազարը հայեր էին՝ շուրջ երեք հազար ընտանիք: Շրջակա գյուղերում ապրում էր հայ բնակչության մեծ մասը, որը պետք է աքսորվեր մի քանի օր հետո: Ըստ Դեյվիսի, ինչքան էլ «սարսափելի» էր հնչում «կոտորած» բառը, այն ավելի «մարդկային» երևույթ էր, քան այն, ինչը պետք է տեղի ունենար: Կոտորածների ժամանակ շատերը կարող էին փրկվել, սակայն «համատարած արտաքսման» դեպքում գրեթե բոլորին սպասվում էր «տանջալից և սոսկալի մահ»: Հյուպատոսը կրկնում էր, որ կառավարության կողմից ընտրված այս մեթոդը շատ ավելի արդյունավետ էր, քան կոտորածը: Աքսորյալների անվտանգության մասին նահանգապետին ուղղված Դեյվիսի հարցին վերջինս պատասխանել էր, որ նրանց պաշտպանության համար նախատեսված էր խմբերին կցել մեծ թվով ոստիկանների: Ըստ Դեյվիսի՝ վատ նշան էր նաև այն, որ նահանգապետը հրաժարվում էր ամերիկացիներին աքսորյալներին ուղեկցել թույլ տալուց. նա առաջարկում էր միսիոներներին այցելել նրանց, երբ նրանք տեղ կհասնեին: Սակայն Դեյվիսը համոզված էր, որ ճանապարհին նրանց վրա քրդեր են հարձակվե-

լու, որոնք լավ հարաբերությունների մեջ էին իշխանությունների հետ: Հյուպատոսը հստակ գիտեր, որ փրկվելու է ոչ թե հարյուրից, այլ հազարից մեկը: Նա նաև չէր հավատում, որ արքայալուսի ուղևորության վերջնակետը Ուրֆան էր: Նա համոզված էր, որ նրանց տանելու են Միջագետքի շրջանները, որոնք բնակելի չեն ոչ միայն մարդու, այլև կենդանիների համար: Դեյվիսը համոզված էր նաև, որ արտաքսված մարդիկ քայլելու էին 15-20 օր՝ Ուրֆա հասնելու համար, քանի որ բավարար տրանսպորտային միջոցներ հնարավոր չէր գտնել: Հյուպատոսը նաև գտնում էր, որ եթե արքայալուսի վերջնական հանգրվանը լիներ Ուրֆան, այնտեղ հնարավոր կլիներ օգնություն կազմակերպել ամերիկյան առաքելության միջոցով: Սակայն շատ դժվար կամ անհնարին էր լինելու նրանց օգնության ձեռք մեկնել Միջագետքի անապատներում:

Ըստ հյուպատոսի՝ հայ բնակչության շրջանում մեծ խուճապ և տագնապ էր տիրում, մարդիկ փորձում էին վաճառել իրենց ունեցվածքն իրական գնի 5-10%-ի չափով, ինչի հետևանքով թուրք տղամարդիկ և կանայք ազատորեն մտնում էին բոլոր հայերի տներն ու չնչին գումարով գնում ցանկացած իր: Փողոցները լցված էին բազմաթիվ բեռնակիրներով, որոնք թուրքերի տներ էին տեղափոխում հայերի ունեցվածքը: Դեյվիսը տեղի ունեցածը բնութագրում էր որպես «համատարած թալան ու կողոպուտ»:

Տեսնելով, թե ինչ դժվարություններ են մարդիկ կրում՝ կարճ ժամանակամիջոցում իրենց տները լքելու համար, Դեյվիսն այցելեց նահանգապետին և խնդրեց, որ վերջինս հնարավորինս երկարաձգի հայերին արքայելու ժամկետը: Նահանգապետը հրաժարվեց հյուպատոսի խնդրանքը կատարելուց, սակայն թույլ տվեց, որ միսիոներները գնեն հայերի ունեցվածքը՝ գումարը ճանապարհին սննդի համար օգտագործելու նպատակով, ինչպես նաև ապահովեն նրանց դեղամիջոցներով և այլ անհրաժեշտ իրերով: Այդ օրերի ընթացքում բազմաթիվ մարդիկ էին այցելում հյուպատոսություն. ոմանք դրամ էին խնդրում, ոմանք՝ հանձնում իրենց փաստաթղթերը, զարդեղենն ու այլ իրեր: Դեյվիսը խոստովանում էր, որ երբեք կյանքում չէր հանդիպել նման «սրտաճմլիկ և ողբերգական տեսարանների»: Ըստ հյուպատոսի՝ այդ մարդիկ համոզված էին, որ իրենց մահ է սպասվում ճանապարհին: Նա գրում էր, որ հայերի ողջ անշարժ գույքն առգրավվելու

էր կառավարության կողմից: Նա մաս համոզված էր, որ տնտեսությունը միջնադար էր վերադառնալու, քանի որ շրջանի առևտրի և բիզնեսի գրեթե 90%-ը դրամատների միջոցով իրականացնում էին հայերը: «Չեն մնալու դրամատներ, քրիստոնեական դպրոցներ, քրիստոնյա եկեղեցիներ,- նշում էր Դեյվիսը և շարունակում,- մեկ հարվածով երկիրը ետ է մնալու 200-300 տարով»:

Նույնը, ըստ Դեյվիսի, տեղի էր ունենալու Գիարբեքիում և ողջ հյուպատոսական տարածքում: Այդ դեպքում շատ և շատ միսիոներներ ստիպված էին լինելու մեկնել երկրից: Ըստ հյուպատոսի՝ միսիոներների՝ 60 տարվա աշխատանքը մոտենում էր իր վերջնակետին, իսկ այդ պարագայում հյուպատոսությունը նույնպես գրկվելու էր իր գործունեության նպատակից:

Հյուպատոսը գրում էր մաս, որ բանակցում է նահանգապետի հետ Միացյալ Նահանգների՝ շրջանում գտնվող քաղաքացիների անվտանգությունն ապահովելու հարցի շուրջ: Ըստ Դեյվիսի՝ կային մաս ընտանիքներ, որոնցում ամուսինները գտնվում էին ԱՄՆ-ում, իսկ կանայք և երեխաները՝ Խարբեքում:³⁰³

1918 թ. փետրվարի 9-ին ԱՄՆ վերադարձած Լեսլի Դեյվիսը ծավալում հաշվետվություն է ներկայացնում Պետքարտուղարությանը իր կատարած աշխատանքի մասին՝ հավելյալ տեղեկություններ տալով հայ բնակչության հետ կատարվածի մասին: Նա գրում էր, որ 1915 թ. մայիսին Խարբեքում տիրող «ահաբեկչության իշխանությունը» շատ ավելի վատթարացավ: Իշխանությունները ձերբակալել և բանտ էին նետել հեղինակություն ունեցող բոլոր հայ տղամարդկանց: Համաձայն «Շփրատ» քոլեջի դասախոս Լուիջյանի վկայությունների, որին կարճ ժամանակով ազատ էին արձակել, գրեթե բոլոր բանտարկված հայ տղամարդիկ ենթարկվում էին սարսափելի կտտանքների: Հունիսի 23-ի գիշերը մի քանի հարյուր ամենից ճանաչված հայ տղամարդկանց եզան սայլերով արտաքսել էին տեղի բանտից անհայտ ուղղությամբ: Նրանց մեջ էին Խարբեքի ու Մամուրեթ-ուլ-Ազիզի Հայ առաքելական եկեղեցու եպիսկոպոսը, «Շփրատ» քոլեջի գրեթե բոլոր դասախոսները³⁰⁴ ու աշխատակիցները, առաջատար առևտրական-

³⁰³ Տե՛ս *United States Official Records on the Armenian Genocide, 1915-1917* /Compiled with an introduction by Ara Sarafian/, էջ 455-460 (NA/RG 59/867.4016/269):

³⁰⁴ Եղեռնի գոհ դարձան «Շփրատ» քոլեջի դասախոսների Կարապետ Լուիջյանը,

ներն ու արհեստավորները: Դեյվիսն այդ մասին գաղտնի հեռագիր էր ներկայացրել դեսպանություն, սակայն այդպես էլ պատասխան չէր ստացել՝ համոզված լինելով, որ այն այդպես էլ տեղ չէր հասել: Հետագայում նա պարզել էր, որ բոլոր այդ մարդկանց կոտորել էին Արդնա-Մադենի մոտ, որը գտնվում էր Խարբերդի և Դիարբեքի միջև:

Հունիսի 26-ին իշխանությունները մուսուլման Մահմուդ Չավուշի միջոցով հայտարարեցին Խարբերդի, Մամուրեթ-ուլ-Ազիզի ու շրջակա գյուղերի բոլոր հայերի տեղահանության մասին: Արտաքսումը պետք է տեղի ունենար Մամուրեթ-ուլ-Ազիզից հուլիսի 1-ին և հուլիսի 3-ին, Խարբերդից՝ հուլիսի 5-ին, շրջակա գյուղերից՝ մի քանի օր անց: Իշխանությունների հայտարարության համաձայն՝ արտաքսված հայերը մեկնելու էին Ուրֆա, թեև Դեյվիսը համոզված էր, որ նրանց քշելու էին դեպի Միջագետքի անապատը:

Նահանգապետի հետ ունեցած առաջին հանդիպման ժամանակ Դեյվիսը խնդրում է տեղահանության չենթարկել ԱՄՆ-ի քաղաքացիներին, թեև թուրքական իշխանությունները չէին ճանաչում օսմանյան հպատակների կողմից ստացված ամերիկյան քաղաքացիությունը: Նահանգապետը խոստանում է հետաձգել հյուպատոսի կողմից ներկայացված մարդկանց արտաքսումը: Երկրորդ անգամ Դեյվիսը հանդիպել է նահանգապետին Մամուրեթ-ուլ-Ազիզում գերմանական առաքելության ղեկավար պատվելի Յոհաննես Էհմանի, Մամուրեթ-ուլ-Ազիզի Օտոմանյան բանկի տնօրենի օգնական, Ավստրո-Հունգարիայի քաղաքացի Չարլզ Պիկիտտոյի և երեք ամերիկացի միսիոներների հետ: Նրանք խնդրում էին նահանգապետին հետաձգել արտաքսումը, քանի որ մարդկանց դժվար էր կարճ ժամկետում թողնել և հեռանալ իրենց տներից: Դեյվիսը հույս ուներ, որ հետաձգման միջոցով հնարավոր կլիներ ժամանակ շահել, քանի որ դեսպանությունը տեղեկացվել էր իշխանությունների որոշման մասին և աշխատում էր այդ ուղղությամբ: Մակայն նահանգապետը պատասխանում է, որ հստակ հրահանգ է ստացել Կոստանդնուպոլսից արտաքսումը ժամանակին կազմակերպելու մասին: Նա մերժում է նաև միսիոներների

Հովհաննես Բուջիկանյանը, Միչշտիչ Վարպենյանը և Նիլոս Թենեքչյանը (St u Stone Frank Andrews, *Academies for Anatolia. A Study of Rationale, Program and Impact of the Educational Institutions sponsored by the American Board in Turkey: 1830-1980*, Lanham, University Press of America, 1984, էջ 180):

ցանկությունը՝ արտաքսվածներին ուղեկցելու և ճանապարհին նրանց բժշկական օգնություն ցուցաբերելու վերաբերյալ: Նա հավաստիացնում է, որ արտաքսյալներից ուղեկցելու են մեծ թվով փորձառու թուրք բժիշկներ:³⁰⁵

Դեյվիսը նշում էր, որ այդ մեկ շաբաթվա ընթացքում քաղաքում տիրող իրավիճակը «վշտալից էր». հայերը նախապատրաստվում էին թողնել իրենց տները, հողը, ունեցվածքը: Նրանք ամեն կերպ փորձում էին վաճառել իրենց ունեցվածքը: Փողոցներում մեծ թվով թուրք կանայք և տղամարդիկ էին շրջում՝ չափազանց ցածր գներով գներով հայերից երաժշտական գործիքներ, կարի մեքենաներ, կահույք, գորգեր և այլն: Օրինակ՝ մեկ հայ կին երկու հազար դոլարի արժողությամբ երգեհոնը վաճառել էր հարևանին հինգ դոլարով: 25 դոլար արժողությամբ կարի մեքենաները վաճառում էին 50 ցենտով, իսկ բարձրարժեք գորգերը՝ մեկ դոլարից պակաս: Գործարարները մի քանի օր ժամանակ ունեին՝ լուծելու իրենց հարցերը՝ քաղաքում թողնելով իրենց խանութները, ապրանքն ու մնացած ունեցվածքը: Որոշ մարդիկ ունեցած դրամը վերցնում էին իրենց հետ, մյուսներն այն հեռազրատան միջոցով փոխանցում էին ազգականներին կամ բարեկամներին, շատերը թողնում էին ամերիկացի և գերմանացի միսիոներներին, ինչպես նաև ԱՄՆ-ի հյուպատոսությանը: Սակայն իշխանություններն առգրավեցին հեռազրատանն ու դրամատներում թողնված դրամը, հայերի տների և խանութների ողջ ունեցվածքը, որը դրվեց լքված գույքի հանձնաժողովի տրամադրության տակ: Վերջինս պաշտոնապես պետք է ապահովեր դրամի և ունեցվածքի անձեռնմխելիությունը, դրամի կամ ունեցվածքի վաճառքի միջոցով վճարեր հայ տների պարտքերը և, վերջապես, գումարը կամ ունեցվածքը տրամադրեր արդեն իսկ նոր տեղերում հաստատված հայերին:

Սակայն, ըստ Դեյվիսի, տեղահանության ընթացքում դրամն իրենց հետ տեղափոխող հայերը թալանվեցին և սպանվեցին, իսկ ողջ մնացածներն այդպես էլ որևէ բան հանձնաժողովից չստացան: Հյուպատոսը որպես օրինակ էր բերում հետևյալ փաստը: Չարսանջակում թուրքերը սպանել էին հայ տղամարդկանց, որոնց թվում էր նաև ամերիկյան քաղաքացիություն ունեցող Կարապետ Ուրֆայանը:

³⁰⁵ Տե՛ս *United States Official Records on the Armenian Genocide, 1915-1917* /Compiled with an introduction by Ara Sarafian/, էջ 623-625 (NA/RG 59/867.4016/392):

Նրա այրին և երկու փոքր երեխաները կարողացել էին հասնել Մամուրեթ-ուլ-Ազիզ և օգնություն հայցել հյուպատոսությունից: Պարզվել էր, որ նրա՝ Օտոմանյան բանկում պահվող դրամական միջոցները փոխանցվել էին հանձնաժողովի հաշվին: Դեյվիսը վեց ամիս փորձել էր հանձնաժողովի նախագահի և նահանգապետի միջոցով հասնել նրան, որ հանձնաժողովը վերադարձնի գումարը Ուրֆայայանի ընտանիքին, սակայն նրա բոլոր ջանքերն ապարդյուն էին անցել:³⁰⁶

Դեյվիսը գրում է, որ «արտաճմլիկ» պահեր է ապրել, երբ արտաքսումից առաջ հայերը հյուպատոսություն և միսիոներներին էին բերում իրենց ունեցած դրամը, զարդեղենը, փաստաթղթերը: Հյուպատոսը հիմնականում փաստաթղթեր էր ի պահ վերցնում, ինչպես նաև դրամ այն հայերից, ովքեր ազգականներ ունեին ԱՄՆ-ում: Քանի որ միսիոներները դրամը պահելու ապահով տեղ չուներին, նրանք հյուպատոսությանն էին հանձնել հայերի կողմից ի պահ տրվածը: Այդ պատճառով հյուպատոսի չհրկիզվող պահարանում կար 200 հազար դոլարի արժողությամբ ոսկի: Քանի որ թուրք պաշտոնյաներն ինչ-որ կերպ իմացել էին հյուպատոսությունում պահվող դրամական միջոցների մասին, 1915 թ. վերջին նահանգապետը պահանջեց Դեյվիսից հանձնել այն թուրքական կառավարությանը: Դեյվիսը կարողացել էր մինչև իր մեկնումը 1917 թ. մայիսին վերադարձնել գրեթե ողջ գումարը հայերին, իսկ մնացածը հանձնել դանիացի միսիոներներին:³⁰⁷

Դեյվիսը գրում էր, որ 1915 թ. հուլիսի 1-ի առավոտյան հազարավոր հայեր «առանց նույնիսկ չնչին դիմադրության» պատրաստ էին լքելու քաղաքը: Նա նշում էր, որ ճիշտ է, որ հեղինակավոր հայերին արդեն իսկ արտաքսել էին, իսկ մնացած մարդիկ գտնվում էին «անտրամադիր և հուսահատ» վիճակում և որևէ դիմադրություն ցույց

³⁰⁶ Նույն տեղում, էջ 625-627 (NA/RG 59/867.4016/392):

³⁰⁷ Տե՛ս նույն տեղը, էջ 628-629 (NA/RG 59/867.4016/392): Ըստ հայկական աղբյուրների՝ հայերի՝ Խարբերդի միսիոներներին ի պահ տրված արժեքավոր իրերն ու դրամական միջոցներն իշխանություններին հանձնելու նահանգապետ Մաթթիբ բեյի պահանջից խուսափելու նպատակով Էռնեստ Ռիզզը երկու պարկով այն բերել էր ԱՄՆ-ի հյուպատոսություն, սակայն հյուպատոս Դեյվիսը հրաժարվել էր այն ընդունելուց: Միսիոները ստիպված այն հանձնել էր Օտոմանյան բանկ, սակայն իշխանություններն այն անմիջապես առգրավել էին (Տե՛ս **Վահէ Հայկ**, *Խարբերդ և անոր ոսկեղէն դաշարը: Հուշամատենան ազգային-պարմական-մշակութային և ազգագրական*, Նիւ Եորք, 1959, էջ 1430-1431):

չէին տվել: Այդ օրը Մամուրեթ-ուլ-Ազիզը լքեցին 3 հազար հայեր: Նրանցից միայն մի քանիսն ունեին եզան սայլեր, մի քանիսն էլ բարձել էին իրենց բեռն ավանակների, կովերի և ջորիների վրա, սակայն ժողովրդի մեծամասնությունը մեկնում էր ոտքով՝ իր բեռը տանելով ուսերին դրած: Կառավարության կողմից տրամադրված ավանակներն ու ջորիները շուտով վերադարձրին, ինչը վկայում էր այն մասին, թե ինչ կարող էր պատահել մարդկանց հետ:

Քաղաքից մեկնած առաջին քարավանից հետո Մամուրեթ-ուլ-Ազիզ ժամանեցին Էրզրումից արտաքսված մի քանի հարյուր հայեր: Նրանց տեղավորել էին քաղաքից դուրս գտնվող լքված դպրոցի շենքում «գրեթե թշվառ» վիճակում: Նրանք ճանապարհ էին ընկել մեկ ամիս առաջ ձիերով, ջորիներով՝ իրենց հետ ունենալով դրամ և անձնական իրեր: Ճանապարհին քրդերը սպանել էին բոլոր տղամարդկանց և թալանել կանանց: Վերջիններս գրեթե մերկ էին մնացել, սակայն նրանց ուղեկցող ոստիկանները կարողացել էին նրանց ապահովել հագուստով: Արտաքսվածներին թույլ չէին տալիս դուրս գալ շենքից: Չնայած նրանց և հյուպատոսության կողմից ներկայացված բազմաթիվ խնդրանքներին՝ նրանց այդպես էլ թույլ չտվեցին մնալ քաղաքում:

Դեյվիսը գրում էր, որ հուլիսի 3-ին Մամուրեթ-ուլ-Ազիզից արտաքսվեց հայերի երկրորդ խումբը, որն ավելի մեծ էր, քան առաջինը: Եթե առաջին խմբին ուղարկեցին Ուրֆա Դիարբեքիի վրայով, ապա երկրորդը մեկնեց Մալաթիա, որտեղից նույնպես պետք է ուղևորվեր դեպի Ուրֆա: Ըստ Դեյվիսի՝ դա արվում էր նրա համար, որ երկրորդ խումբը տեղեկություններ չստանար այն մասին, թե ինչ էր տեղի ունեցել ճանապարհին նախորդ քարավանի հետ:³⁰⁸

Հուլիսի 4-ին և հաջորդող օրերին հայերն արտաքսվել էին Խարբերդից և շրջակա գյուղերից: Մի խումբը մեկնեց մի ուղղությամբ, մյուսը՝ այլ: Ըստ Դեյվիսի՝ իշխանությունները փորձում էին որքան հնարավոր է արագ ուղարկել բոլորին, և դա նրանց հաջողվել էր: Մի երեկո բժիշկ Ատկինսոնը հարցրել է Դեյվիսին, թե արդյոք հյուպատոսը կցանկանա՞ գրուցել կոտորածից փրկված մի հայ երիտասարդի հետ: Վերջինիս առանց մեղադրանք ներկայացնելու ձեռքակալել

³⁰⁸ Տե՛ս նույն տեղում, էջ 630-631 (NA/RG 59/867.4016/392):

էին Խարբերում հուլիսի 5-ին և բանտ նետել Մամուրեթ-ուլ-Ազիզում: Այդ օրը Խարբերում, Մամուրեթ-ուլ-Ազիզում և շրջակա գյուղերում ձերբակալել էին շուրջ 800 հայ տղամարդու: Հուլիսի 6-ի առավոտյան նրանց կապել էին իրար 14 հոգանոց խմբերով և դուրս բերել քաղաքից: Նրանց մի զիշեր պահել էին քրդական մի գյուղում, որից հետո՝ տարել հովիտներից մեկն ու զնդակահարել: Մեծ մասին սպանելուց հետո ոստիկանները սկսել էին սվիմներով կոտորել մյուսներին: Հայ երիտասարդը կարողացել էր արձակել կապն ու փախչել, վերադառնալ Մամուրեթ-ուլ-Ազիզ, թաքուն կերպով մտնել ամերիկյան հիվանդանոց և հանդիպել Ատկինսոնին: Բացի նրանից՝ այդ օրը կարողացել էին փրկվել ևս 15-20 հայեր, որոնց պատմություններն ամբողջությամբ համընկնում էին:

Երբ հայ տղամարդկանց մեծ մասն արտաքսվել էր, և մնացել էին հիմնականում կանայք և երեխաները, Դեյվիսն այցելում է նահանգապետին և խնդրում, որ նրանց թույլ տրվի մնալ: Քննարկվում են նաև նրանց օգնություն ցուցաբերելուն առնչվող հարցեր: Քանի որ որբ երեխաների թվում կային նաև ԱՄՆ-ում ծնվածներ և ամերիկյան քաղաքացիություն ստացած տղամարդկանց զավակներ, միսիոներները մտածում էին որբանոց բացելու մասին: Հուլիսի 10-ին Դեյվիսը քննարկում է այդ հարցը նահանգապետի հետ, սակայն ստանում հստակ մերժում: Վերջինս պատասխանում է, որ կառավարությունն ինքն է ձեռնամուխ եղել որբանոցների բացմանը: Նահանգապետի հետ հանդիպումից մեկ ժամ անց հայտարարվեց, որ մնացած բոլոր հայերը, այդ թվում՝ կանայք և երեխաները, պետք է արտաքսվեն:³⁰⁹

Դեյվիսը գրում էր, որ, օգտվելով այն հանգամանքից, որ հյուպատոսությունը մեծ էր, ուներ բազմաթիվ սենյակներ, մեծ այգի, նրան հաջողվել էր բազմաթիվ հայերի, հիմնականում՝ կանանց և երեխաների, պատսպարել իր մոտ:³¹⁰

Հյուպատոսը շարունակում էր, որ տեղահանության չենթարկվելու բացառություններն արվում էին «արևելյան նենգությամբ» և հիմնականում անօգուտ էին: Երբ գրեթե բոլոր հայերն արտաքսվել էին, կառավարությունը հայտարարություն արեց այն մասին, որ «որոշ դասակարգերի» պատկանող մարդիկ տեղահանության չեն ենթարկվելու:

³⁰⁹ Տե՛ս նույն տեղը, էջ 632-634 (NA/RG 59/867.4016/392):

³¹⁰ Տե՛ս նույն տեղը, էջ 634-638 (NA/RG 59/867.4016/392):

Առաջին բացառությունը կազմում էին կաթոլիկները, թեև իրականում նրանք արդեն իսկ արտաքսվել էին: Այնուհետև նման բացառություն արվեց նաև բողոքականների համար, թեև նրանք նույնպես հիմնականում արտաքսվել էին: Դեյվիսն անմիջապես բողոքականների ցանկ էր կազմել և ներկայացրել նահանգապետին՝ տեղահանվածներին հետ կանչելու նպատակով, սակայն որևէ մեկը նրանցից այդպես էլ չվերադարձավ:³¹¹

Հուլիսի վերջին, երբ Մամուրեթ-ու-Ազիզում և Խարբերդում գրեթե հայ չէր մնացել, նահանգապետը ճանապարհ էր դրել հիմնականում իր բարեկամ հայերից կազմված խմբի, որոնց թվում էին հայ կաթոլիկ արքեպիսկոպոս Իսրայելյանն իր ծխականներով և ֆրանսուհի Մարգարիտ Գամատը: Վերջինս հրաժարվել էր ֆրանսիացի միսիոներների հետ մնալուց և ցանկություն էր հայտնել մեկնելու հայերի հետ: Նահանգապետը մի քանի անգամ հետաձգել էր նրանց ճամփորդությունը՝ ճանապարհների անվտանգ չլինելու պատրվակով: Սակայն այդ խումբը նույնպես արժանացավ մյուս արտաքսյալների ճակատագրին. նրանք ընկան քրդերի ձեռքը, որոնք կոտորեցին գրեթե բոլորին, այդ թվում նաև՝ ֆրանսուհուն: Ողջ էին մնացել երեք կին և երկու կամ երեք երեխա:³¹²

Հենրի Ռիզզը իր հուշերում գրում է, որ տեղի նահանգապետը մահվան էր դատապարտում քարավաններով քաղաք ժամանած հազարավոր հայ տղամարդկանց: Նա գրում է. «Էրզրումից և Երզնկայից որոշ քարավաններ Խարբերդ էին ժամանել համեմատաբար ապահով վիճակում, և նրանց կազմում տղամարդիկ մեծամասնություն էին կազմում: Սակայն մեզ հասած ամենահուսալի տեղեկությունը ցույց էր տալիս, որ տղամարդիկ շատ հազվադեպ էին ողջ դուրս գալիս նահանգից: Հայտնվելով Սաբիթ բեյի իրավասության ներքո՝ հայ տղամարդիկ ենթարկվում էին բռնի մահվան»:³¹³

Ռիզզը գրում է, որ, չունենալով որևէ պաշտպանություն և մատնված ոստիկանների դաժան քմահաճույքներին, առաջին հերթին տու-

³¹¹ Երբ ցանկը ներկայացվեց նահանգապետին, վերջինս հայտարարեց, որ կառավարությունից ստացված հրամանը վերաբերում է միայն քաղաքում մնացած բողոքական հայերին (Տե՛ս **Վահե Հայկ**, նշվ. աշխ., էջ 1433):

³¹² Տե՛ս *United States Official Records on the Armenian Genocide, 1915-1917* /Compiled with an introduction by Ara Sarafian/, էջ 639 (NA/RG 59/867.4016/392):

³¹³ Տե՛ս **Riggs Henry**, նշվ. աշխ., էջ 138-139:

ժում էին կանայք և երիտասարդ աղջիկները: Բռնաբարություններից փրկված կանայք զալիս էին օգնություն ստանալու միսիոներներից և պատմում հայ կանանց՝ Եփրատ գետն ինքնակամ նետվելու բազմաթիվ դեպքերի մասին:³¹⁴

Ռիզզը շարունակում է գրել, որ, վստահելի վկաների տվյալների համաձայն, մահմեդականներն ընտրում և իրենց տներն էին տանում կանանց ու երեխաներին՝ ենթարկելով նրանց կրոնափոխության: Որոշ մահմեդականներ դա անում էին նրանց փրկելու, սակայն մեծամասնությունը՝ սեռական ստրկացման ենթարկելու նպատակով: Որոշ դեպքերում աղջիկները դառնում էին թուրքական ընտանիքների անդամներ և համակերպվում իրենց նոր կյանքի հետ, սակայն մյուսները ենթարկվում էին աննկարագրելի տանջանքների և խեղազարվում:³¹⁵ Հետագայում՝ Թուրքիայի՝ պատերազմում պարտվելուց հետո, որոշ դեպքերում երիտասարդ կանայք և երեխաներն ազատ են արձակվել, սակայն մյուսները շարունակել են իրենց կյանքը նոր մահմեդական ընտանիքներում: Շատ հայեր կարողացան փրկվել որոշ թուրքերի և քրդերի կողմից ցուցաբերված քաջության ու մարդկայության շնորհիվ:³¹⁶ Ռիզզը նաև նշում է, որ շատ «թուրքերի իրական առատաձեռնության և քաջության» շնորհիվ հնարավոր դարձավ փրկել մեծ թվով հայերի: Նա որպես վառ օրինակ էր բերում Խարբերդում մի թուրք գործարարի պատմությունը, որը, վտանգելով իր կյանքը, կարողացել էր փրկել իր հայ գործընկերոջը³¹⁷:

1915 թ. հուլիսի 3-ին Տրապիզոնում հյուպատոս Հայզերը գրում էր դեսպան Մորգենթաուին, որ քաղաքի իշխանություններն արագորեն հավաքագրում էին հայերին՝ բացառությամբ կաթոլիկների, կառավարական հիմնարկներում աշխատողների, ծերերի, այրիների, հղի կանանց, և ուղարկում նրանց դեպի Գյումուշխանե: Ամերիկյան դպրոց այցելող, ինչպես նաև տեղահանված ծնողների կողմից այստեղ թողնված հայ երեխաներին տեղավորել էին նահանգապետի և հույն մետրոպոլիտի կողմից բացված դպրոցում: Ըստ հյուպատոսի՝

³¹⁴ Տե՛ս նույն տեղը, էջ 137:

³¹⁵ Տե՛ս նույն տեղը, էջ 98-99:

³¹⁶ Տե՛ս **Miller Donald E. and Miller Lorna Touryan**, *Survivors: An Oral History of the Armenian Genocide*, Berkeley and Los Angeles, University of California Press, 1999, p. 186:

³¹⁷ Տե՛ս **Riggs Henry**, նշվ. աշխ., էջ 98:

այդ դպրոցում փաստորեն մնացել էին մինչև 15 տարեկան աղջիկներ և մինչև 10 տարեկան տղաներ. ավելի բարձր տարիքի երեխաները տեղահանվել էին ծնողների հետ: Հայզերը գրում էր, որ «քաղաքի տարբեր թաղամասերի՝ հայերից մաքրման աշխատանքը հնարավոր է, որ կավարտվի վաղը»:³¹⁸

Օսմանյան կայսրությունում ԱՄՆ-ի դեսպանն ու ամերիկյան հյուպատոսական ներկայացուցիչները պարբերաբար բանակցում էին գերմանական դիվանագետների հետ՝ հայերի տեղահանությունների և կոտորածների հարցում Բարձր Դռան վրա ճնշում գործադրելու համար: Հուլիսի 4-ին Կոստանդնուպոլսում Գերմանիայի դեսպանությունը հուշագիր է ներկայացնում Օսմանյան կայսրության մեծ վեզիրին հայ բնակչության տեղահանությունների մասին: Փաստաթղթում նշվում էր, որ Արևելյան Անատոլիայի նահանգների հայ բնակչության նկատմամբ կայսերական կառավարության կողմից հաստատված «ճնշման միջոցները» թելադրված են «պատերազմական պայմաններով ու պաշտպանության օրինական միջոցներ» են, և գերմանական կառավարությունը դեմ չէ դրանց գործադրմանն այնքան ժամանակ, որքան դրանք անհրաժեշտ են Թուրքիայի ներքին վիճակի ամրապնդման ու ապստամբության փորձերից խուսափելու համար: Սակայն մյուս կողմից գերմանական կառավարությունը չի կարող թաքցնել այն վտանգները, որոնք կարող են առաջանալ այդ «խիստ միջոցների» կիրառումից, մասնավորապես՝ համատարած արտաքսումից, որոնց կարող են ենթարկվել ինչպես մեղավորները, այնպես էլ անմեղները, ինչպես նաև տեղահանությունների ընթացքում բռնությունների, օրինակ՝ կոտորածների և թալանի կիրառումից: Հուշագրում նշվում էր, որ, դժբախտաբար, դեսպանությունը տեղեկատվություն է ստանում այն մասին, որ տեղական իշխանություններն ի վիճակի չեն կանխելու նման դեպքերը:

Հուշագրում նշվում էր, որ այս հանգամանքն օգտագործվելու է թշնամի պետությունների կողմից հայերի, ինչպես նաև չեզոք պետությունների հասարակայնության շրջանում քարոզչություն տարածելու նպատակով, մասնավորապես՝ Միացյալ Նահանգներում, որի ներկայացուցիչներն արդեն իսկ որոշ ժամանակ է, ինչ հետաքրքրություն

³¹⁸ St'u NA Microfilm Publications, Microcopy No. 353, Records of the Department of State Relating to Internal Affairs of Turkey, 1910-1929, Roll 43, NA/RG 59/867.4016/94:

են հանդես բերում Թուրքիայում հայերի ճակատագրի նկատմամբ: Փաստաթղթում ասվում էր, որ «որպես բարեկամ տերություն և Թուրքիայի դաշնակից»՝ գերմանական կառավարությունը Բարձր Դռան ուշադրությունն էր հրավիրում այն հանգամանքի վրա, որ ինչպես պատերազմի ընթացքում, այնպես էլ ապագայում՝ խաղաղության բանակցությունների ընթացքում, Հայկական հարցը կարող է օգտագործվել որպես պատրվակ՝ Թուրքիայի ներքին գործերին միջամտելու նպատակով: Գերմանական կառավարությունն առաջարկում էր անհապաղ հրահանգել նահանգային իշխանություններին՝ տեղահանված հայերի կյանքի և ունեցվածքի պաշտպանության ուղղությամբ միջոցներ ձեռնարկելու համար:³¹⁹

1915 թ. հուլիսի 6-ին Բեյրութում գլխավոր հյուպատոս Սթենլի Հոլիսը Պետքարտուղարությանն ու Կոստանդնուպոլսում դեսպանությանն է ներկայացնում ԱՄՆ-ի քաղաքացու և դեպքերի ականատեսի՝ հունիսի 20-ի զեկուցագիրը՝ շրջանում հայ տեղահանվածների իրավիճակի մասին: Համաձայն այդ փաստաթղթի՝ հայերի տեղահանությունը սկսվել էր վեց շաբաթ առաջ. Չեյթունից տեղահանվել էին 180 ընտանիքներ: Այդ ժամանակվանից սկսած՝ տեղահանվել էր Չեյթունի և շրջանի բոլոր քաղաքների և գյուղերի, այդ թվում՝ Ալբիստանի, Հաճնի, Սիսի, Կարս Պազարի, Հասանբեյլիի և Դյուրթ Յոլի հայ բնակչությունը: Ըստ ականատեսի՝ ընդհանուր առմամբ այդ շրջանից տեղահանվածների թիվը կազմում էր 26.500 հոգի, որոնցից 5 հազարը տեղահանվել էին Կոնիայի շրջան, 5.500-ը՝ Հալեպ և շրջակա քաղաքներ ու գյուղեր, մնացածը գտնվում էին Դեյր-էզ-Չորում, Ռաքքայում և Միջագետքի տարբեր վայրերում: Տեղահանության գործընթացը, ըստ փաստաթղթի, դեռ շարունակվում էր: Այս շրջան կարող էին տեղահանել մինչև 32 հազար հայերի: Այնթապից դեռևս չէին արքայրել, իսկ Մարաշից և Ուրֆայից արտաքսել էին դեռևս շատ քչերի:

Ականատեսն այնուհետև նշում էր, որ, կառավարության հրահանգի երկրորդ հոդվածի համաձայն, «բանակի, անկախ բանակի կորպուսների և դիվիզիաների հրամանատարները կարող են ռազմական նպատակահարմարության և լրտեսության կամ դավաճանության կասկածի դեպքերում անհատապես կամ խմբերով տեղափոխել գյու-

³¹⁹ Տե՛ս *The Armenian Genocide. Evidence from the German Foreign Office Archives, 1915-1916* /Edited by Wolfgang Gust, էջ 231-232:

ղերի կամ քաղաքների բնակիչներին դեպի այլ վայրեր»։ Հրամանատարների հրամանները կարող էին լինել մարդկային, սակայն դրանց կատարումը շատ դեպքերում բիրտ էր. մասնավորապես կանանց, երեխաների, հիվանդների և ծերերի նկատմամբ իրագործվում էին «սարսափելի դաժանություններ»։ Մեկ ժամվա ընթացքում տեղահանում էին գյուղերի ողջ հայ բնակչությանը։ Շատ դեպքերում ծնողներին չէին թողնում իրենց հետ վերցնել փոքր երեխաներին։ Շատ դեպքերում էլ տղամարդկանց կապում էին պարաններով կամ շղթաներով, կանանց և երեխաների հետ վարվում էին, ինչպես անասունների հետ։ Եղել են դեպքեր, երբ հողի կանաչք ծննդաբերել և մահացել են կամ թողել ծնված երեխաներին ճանապարհին, շատ կանանց և աղջիկների բռնաբարել են։ Եղել է դեպք, երբ ոստիկանության հրամանատարն ասել է իր ենթականերին անել կանանց հետ այն ամենը, ինչ կցանկանան։

Ըստ զեկուցագրի՝ տարբեր վայրերում տեղահանվածների նկատմամբ տարբեր վերաբերմունք էր ցուցաբերվել։ Մեկ վայրում կառավարությունն էր կերակրում տեղահանվածներին, մեկ ուրիշ վայրում թույլ էր տալիս բնակչությանը նրանց կերակրել։ Մյուս վայրերում տեղահանվածներին ընդհանրապես չէին կերակրում, և այդ պարագայում այդ վայրերում տիրում էին քաղց, հիվանդություն և մահ։ Այս մարդկանց տեղավորում էին փոքր խմբերով, որոնք սովորաբար ընդգրկում էին երեք-չորս ընտանիք և հայտնվում էին տարբեր ազգությունների և հավատամքի մարդկանց շրջանում։ Ըստ փաստաթղթի հեղինակի, եթե մի քանի ամսվա ընթացքում այս մարդկանց օգնություն չցուցաբերվի, նրանցից երկու երրորդը կամ երկու չորրորդը կմահանա քաղցից և հիվանդություններից։³²⁰

Հուլիսի 7-ին Տրապիզոնում հյուպատոս Հայգերը գրում է դեսպան Մորգենթաուին, որ վիլայեթի հայերի թիվը կազմում է 36 հազար, իսկ Տրապիզոն քաղաքին և շրջակա գյուղերինը՝ 10 հազար, որոնցից 5.200-ն արդեն իսկ տեղահանվել են։ Շատ ծնողներ թողել էին իրենց երեխաներին քաղաքում։ Այդ պահին երեք հազար մման երեխաներ կային, որոնք տեղավորված էին քաղաքի տարբեր վայրերում գտնվող տներում, որոնք թուրքերն անվանում էին «որբանոցներ»։ Որոշակի

³²⁰ St'u NA Microfilm Publications, Microcopy No. 353, Records of the Department of State Relating to Internal Affairs of Turkey, 1910-1929, Roll 43, No. 1130, NA/RG 59/867.4016/97:

թվով հայ կանայք և երիտասարդ աղջիկներ էին խնամում այդ երեխաներին, հաստատությունները հսկում էին ոստիկանները, յուրաքանչյուր որբանոց ուներ իր տնօրենը: ԲԺՀյ կ Բրոուֆորդն ու իր կինը 300 երեխա էին խնամքի տակ վերցրել աքսորված ծնողներից: Որոշ դեպքերում ծնողները փող կամ զարդեղեն էին թողել՝ երեխաների հետագա խնամքն ու անվտանգությունն ապահովելու նպատակով: Մակայն նահանգապետը պահանջել էր Բրոուֆորդից իշխանություններին հանձնել երեխաներին, ինչպես նաև հայերի դրամն ու զարդեղենը:³²¹

Հուլիսի 10-ին Մորգենթաուն գրում է պետքարտուղարին, որ «հայերի հանդեպ իրականացվող հալածանքները» հասնում են «աննախադեպ չափերի»: «Տարբեր շրջաններից ստացվող զեկույցները վկայում են խաղաղ հայ բնակչությանը արմատախիլ անելու համակարգված փորձի մասին...»: Նրանց կյանքի «ավերումն ու զրկանքները» տեղի էին ունենում «քմահաճ ձերբակալությունների, սարսափելի կտտանքների, համատարած արտաքսումների ու կայսրության մեկ ծայրից մյուսը տեղահանությունների միջոցով, որոնք հաճախ ուղեկցվում էին բռնություններով, թալանով և կոտորածների վերածվող սպանություններով»: «Այս գործողությունները ոչ թե հանրային կամ մոլեռանդության պահանջի պատասխան են, այլ բացառապես բռնապետական են ու ղեկավարվում են Կոստանդնուպոլսից ռազմական անհրաժեշտության անվան տակ և հաճախ իրականացվում են շրջաններում, որտեղ դժվար թե տեղի ունենան ռազմական գործողություններ»: «Մահմեդական բնակչությունը և հայ բնակչությունն ապրում էին համերաշխ կյանքով, սակայն հայ կամավորների, որոնք հիմնականում ռուսահպատակներ էին և ընդգրկվել էին Կովկասում ռուսական բանակի կազմում...», ինչպես նաև հեղափոխական շարժման մեջ ներգրավված և Վանի գրավման ընթացքում ռուսներին օգնություն ցուցաբերած հայերի պատճառով սկսվեց «սարսափելի վրեժխնդրություն»: «Տառապյալների մեծ մասն անմեղ է և հնազանդ օսմանյան կառավարությանը: Գրեթե բոլորը մեծահասակ տղամարդիկ են և կանայք, քանի որ 20-45 տարեկան տղամարդիկ գտնվում են թուրքական բանակում»: Ջոհերը հիմնականում ոտքով տեղահանվել

³²¹ Տե՛ս նույն տեղը, NA/RG 59/867.4016/103:

էին դեպի հեռավոր շրջաններ՝ առանց որևէ ապրուստի միջոցի և սննդի: Դեսպանը նշում էր, որ որոշ տեղերում ամերիկացիների կողմից փորձեր են կատարվել օգնելու հայերին, սակայն նրանք այդպես էլ թույլատվություն չեն ստացել իշխանություններից: Օրինակներ կան, որ հայերը փորձել են դիմադրել այդ միջոցառումների իրագործմանը, զենք են օգտագործել կամ փախել սարերը, ինչն ավելի է կատաղեցրել իշխանություններին:³²²

Մորզենթաուն նշում էր, որ «շատ հայեր դառնում են մահմեդականներ՝ հալածանքներից խուսափելու նպատակով»: Մարդասիրական նպատակներից բացի՝ ամերիկացիները հետապնդում էին իրական շահեր, քանի որ. առաջին՝ աքսորված հայերի մեջ կային մաս ԱՄՆ-ի հպատակներ, երկրորդ՝ դադարեցվել էր Ամերիկյան խորհրդի բարեգործական և կրթական գործունեությունը:

Մորզենթաուն մաս նշում էր, որ միակ դեսպանությունը, որը կարող էր ազդեցություն ունենալ «դաժանությունների» նվազեցման հարցում, Գերմանիայի ներկայացուցչությունն էր, սակայն այն սահմանափակվում էր միմիայն խորհուրդներ տալով և ձևական բողոքներ ներկայացնելով՝ հնարավոր է ապագայում պատասխանատվությունից խուսափելու համար: Դեսպանը նշում էր, որ ապարդյուն աշխատանք է տարել Գերմանիայի դեսպանի հետ, սակայն վերջինս վեց շաբաթով մեկնում է արձակուրդի, և ինքը «Հերկուլեսյան փորձեր» պետք է կատարի դեսպանին փոխարինողի համակրանքն այդ հարցում շահելու համար: Ավստրո-Հունգարիայի դեսպանն իր հերթին խոստացել էր օգտագործել ներքին գործերի նախարարի վրա ունեցած ազդեցությունը: Ըստ Մորզենթաուի՝ նա մշտապես խոսում էր մեծ վեզիրի հետ, ինչպես մաս փորձում էր «ըջորեն միջնորդել» ներքին գործերի և պատերազմի նախարարների առաջ՝ հալածանքները դադարեցնելու նպատակով: Սակայն նրա բոլոր փորձերն ապարդյուն էին անցնում: Նա նշում էր, որ իշխանության ղեկին կանգնածները հեղափոխականներ էին, որոնք հեռացրել էին համիդյան կառավարությունը հայ հեղափոխականների հետ համագործակցելով: Վերջիններս շատ լավ տեղյակ էին երիտթուրքերի մեթոդների մասին, ինչը վախեցնում էր իշխանություններին, որոնք նույնիսկ ընդունում էին,

³²² Տե՛ս նույն տեղը, No. 841, NA/RG 59/867.4016/74:

որ դիմելու են յուրաքանչյուր միջոցի՝ կառավարությունը չկորցնելու համար: Նրանք հայտարարում էին նաև, որ որևէ փոփոխության չեն ենթարկելու իրենց ազգայնական քաղաքականությունը, նույնիսկ երբ Ռուսաստանը, Ֆրանսիան և Մեծ Բրիտանիան կատարվածի համար պահանջեն անհատապես պատախաճանատվության ենթարկել օսման-յան կառավարության անդամներին: Երիտթուրքերը դարձել էին շատ ավելի վստահ, քանի որ առանց իրենց հիմնական դաշնակիցների՝ Գերմանիայի և Ավստրո-Հունգարիայի օգնության կարողացել էին պաշտպանվել Դարդանեյի հարձակումից:

Մորգենթաուն իրավիճակը քննարկել էր Մարզվանում, Բեյրութում, Պարտիզակում և Կոստանդնուպոլսում աշխատող միսիոներների հետ: Նրանք եկել էին համաձայնության, որ տվյալ պահի ճգնաժամը շատ ավելի ծանր է, քան 1895-1896 թթ. կոտորածների ընթացքում: Միսիոներները չէին կարողանում որևէ առաջարկ անել՝ բացի այն քայլերից, որոնք ձեռնարկում էր Միացյալ Նահանգների դեսպանությունը: Նրանք վախենում էին, որ որևէ բան չի կարող փոխել կառավարության ներկայիս քաղաքականությունը: Թուրք իշխանավորները միանշանակ զգուշացնում էին դեսպանին, որ Միացյալ Նահանգներն իրավունք չունի միջամտելու երկրի ներքին գործերին: Մորգենթաուն դիրքորոշում էր խնդրում պետքարտուղարից ստեղծված իրավիճակում:³²³

Այդ օրերին Թալեաթի հետ տեղի ունեցած հանդիպումից հետո Մորգենթաուն նշում է իր օրագրում, որ երիտթուրքերը «ակնհայտորեն մտադրվել են իսլամացնել երկիրը և ոչնչացնել ու ջախջախել բոլոր ոչ մահմեդականներին»: Երբ դեսպանն ասում է նրան, որ «աշխարհը դատապարտելու է նրանց» կատարվածի համար, վերջինս պատասխանում է, որ «իրենք գիտեն, թե ինչպես է պետք պաշտպանվել»:³²⁴

Հուլիսի 10-ին ամերիկյան հյուպատոսական ծառայության աշխատակից Վ. Պիթերը հաղորդում էր Սամսունից, որ շուրջ 150 հայ ընտանիքներ իսլամ էին ընդունել, իսկ շուրջ 5 հազար հայեր՝ հիմնականում կանայք և երեխաներ, արքայրվել էին սայլերով: Ըստ մյութեսարիֆի՝ նույնիսկ կրոնափոխ հայերին թույլ չէր տրվել մնալ Սամսունում.

³²³ Տե՛ս նույն տեղը, No. 841, NA/RG 59/867.4016/74:

³²⁴ Տե՛ս Library of Congress, Division of Manuscripts, Papers of Henry Morgenthau, Sr., Diary, 1915, July 10:

նրանց տեղափոխելու էին դեպի Տրապիզոն, Կերասուն, Մարզվան, Բաֆրա և այլուր: Տեղահանվածների մեծ մասը նույնպես ցանկություն էր հայտնել ընդունելու իսլամ՝ Մամսուն վերադառնալու ակնկալիքով, սակայն իշխանություններն ուշացած էին համարում այդ քայլն ու թույլ չէին տալիս նրանց վերադառնալ: Հայերի տները, խանութներն ու պահեստներն առգրավվել ու կնքվել էին, և այնուհետև սկսվել էր ունեցվածքը մահմեդական փախստականներին բաժանելու գործընթացը: Պիթերը նշում էր, որ հարց էր առաջացել օտարերկրյա ընկերություններին հայ առևտրականների ունեցած պարտքերի վերաբերյալ: Որպես օրինակ էր բերվում շվեյցարական «Hochstrasse & Co.» ընկերությունը, որն աշխատում էր հայ առևտրականների հետ և գտնվում ամերիկյան հովանավորության ներքո:³²⁵

Նույն օրը Տրապիզոնում հյուպատոս Հայգերը գրում է դեսպան Մորգենթաուիին, որ քաղաքի կաթուղի հայերը, մեծահասակ մարդիկ և այրիները նույնպես արքորվեցին: Միակ բացառությունը կազմել էին պետական պաշտոնյաները, երեխաները, հղի կանայք և հիվանդանոցներում գտնվող հիվանդ մարդիկ: Հյուպատոսը նաև տեղեկացնում էր դեսպանին, որ դեպի Տրապիզոն հոսող գետն իր հետ հայերի դիակներ է բերել. մեծ թվով դիակներ տեսնողներ են եղել շրջակա անտառներում:³²⁶

Հուլիսի 11-ին Մամուրեթ-ուլ-Ազիզում հյուպատոս Գեյվիսը մանրամասնորեն զեկուցում է Կոստանդնուպոլսում ամերիկյան դեսպանությանն ու Պետքարտուղարությանը շրջանից հայերի արքորին առնչվող հարցերի մասին: Հուլիսի 1-ին մեծ թվով հայեր էին արքորվել, երկու օր անց մի քանի հազար հոգի մեկնել էին, իսկ մնացած հայերն արքորվելու էին մոտակա օրերին: Ըստ Գեյվիսի՝ իշխանությունների կողմից հայտարարվել էր, որ մնացած հայերը, առանց բացառության, մեկնելու էին հուլիսի 13-ին: Հայերի շրջանում սարսափելի խուճապ էր տիրում, քանի որ նրանք բոլորը շատ լավ պատկերացնում էին, թե ինչ է իրենց սպասվում: Գա ակնհայտորեն երևաց, երբ քաղաք ժամանեց Էրզրումից և Երզնկայից արքորված հայերի մի մասը: Գեյվիսը մի քանի անգամ այցելել և գրուցել էր տեղահանվածների հետ

³²⁵ Տե՛ս *United States Official Records on the Armenian Genocide, 1915-1917* /Compiled with an introduction by Ara Sarafian/, 62 (LC/HM(Sr.)/Reel 7/619):

³²⁶ Տե՛ս նույն տեղը, էջ 145 (NA/RG 59/867.4016/114):

և նրանց վիճակը գնահատում էր որպես «աներևակայելի խղճալի»: Նրա խոսքերով՝ դժվար էր պատկերացնել, որ նրանք երբևիցե «մարդկային էակներ են եղել»: Ճամբար մտնելուն պես հայ կանայք իրենց երեխաներին առաջարկում էին անձանոթ մարդկանց՝ նրանց փրկելու նպատակով: Թուրքերն իրենց հերթին զբաղված էին երեխաների, մասնավորապես՝ աղջիկների ընտրությամբ: Շատ հաճախ թուրքերը ճամբար էին գալիս բժիշկների ուղեկցությամբ՝ հիմնականում առողջ և զեղեցիկ աղջիկներ ընտրելու համար: Աքսորվածների թվում շատ քիչ տղամարդ կային, քանի որ, ըստ նրանց պատմածի, ճանապարհին քարավանի վրա հարձակումներ էին գործում քրդերը, սպանում տղամարդկանց, թալանում հայերին: Շատերը մահանում էին սովից և հիվանդություններից:

Դեյվիսը հանդգնում էր, որ այս ծրագիրը «ամենակատարյալ կերպով կազմակերպված և իրականացվող կոտորած է, որն այս երկիրը երբևիցե տեսել է»: Ըստ հյուպատոսի՝ վերջին մի քանի շաբաթվա ընթացքում մի քանի հազար հայ տղամարդ էր բանտարկվել, իսկ, սկսած հունիսի 23-ից, նրանցից կազմելով մի քանի հարյուր հոգուց բաղկացած քարավաններ, արքորում էին շրջանից: Նրանց շարքում էին ամերիկյան քոլեջի դասախոսներն ու այլ հայտնի հայեր, ինչպես նաև Խարբերդի Հայ առաքելական եկեղեցու քահանան: Դեյվիսի տեղեկությունների համաձայն՝ հայ տղամարդկանց հերթական ձերբակալությունները Խարբերդում ու Մեզիբեում և նրանց արքորը տեղի էին ունեցել հուլիսի 5-ին: Երկու օր անց նրանց արքորել էին, ցերեկը՝ բերել մի քողական գյուղ և տեղավորել մզկիթում ու այլ շինություններում: Իշխանությունները նրանց ջուր և սնունդ չէին տրամադրել, նրանցից առգրավել էին եղած դրամական միջոցներն ու հագուստը: Այնուհետև քարավանը շարժվել էր դաշտավայրով, որտեղ և ոստիկանները կրակ էին բացել ու սպանել գրեթե բոլոր տղամարդկանց: Փամփուշաներից չմահացած վիրավորների սպանել էին սվիններով: Սպանվածների թվում էր, ըստ հյուպատոսի, ամերիկյան քոլեջի զանձապահը: Դեյվիսը գրում էր, որ այդ ամենն արվում էր «որպես հայկական ցեղը վերացնելու ընդհանուր ծրագրի մի մաս»: Նույնը, ըստ Դեյվիսի, տեղի էր ունենում շրջակա գյուղերում: Մի քանի շաբաթ առաջ շուրջ 300 հայ տղամարդ էին հավաքել քաղաքից 4-5 ժամ հեռավորության վրա գտնվող գյուղերից, տարել դեպի սարերն ու կոտորել:

Ըստ Դեյվիսի՝ Խարբերում գտնվող ամերիկյան միսիոներները սկսել էին քննարկել քաղաքում մնացած հայ կանանց և երեխաներին օգնություն ցուցաբերելու ծրագրեր, մտածում էին նաև հիմնել որբանոցներ այն երեխաների համար, որոնք ծնվել էին Միացյալ Նահանգներում, կամ որոնց ծնողներն ինչ-որ կերպ կապված էին ամերիկյան հաստատությունների հետ: Հյուպատոսը հանդիպել էր նահանգապետի հետ և քննարկել որբանոց հիմնելու առաջարկը: Սակայն վերջինս մերժել էր այդ առաջարկը՝ պատասխանելով, որ կառավարությունն արդեն իսկ զբաղվում է որբանոցներ բացելու ծրագրով և չի կարող հանդուրժել նման այլ ծրագրի իրականացում: Հանդիպումից մեկ ժամ հետո իշխանությունները հայտարարեցին, որ քաղաքում մնացած հայերը պետք է պատրաստվեն մեկնելու քաղաքից հուլիսի 13-ին:

Դեյվիսը համոզված էր, որ կառավարությունն այլևս թույլ չէր տալու արտասահմանցի միսիոներներին զբաղվել կրթական և կրոնական աշխատանքով: Որոշ հայ կանայք դարձել էին մահմեդականների ամուսիններ, իսկ երեխաներին վերցնում էին մահմեդական ընտանիքներ: «Երկիրը դառնալու է բացառապես մահմեդական...», - գրում էր հյուպատոսը: Որոշ միսիոներներ մտածում էին մնալ երկրում և աշխատել մահմեդականների հետ, սակայն հյուպատոսը համոզված էր, որ նրանց ոչ միայն թույլ չի տրվելու շարունակել իրենց գործունեությունը, այլև շուտով նրանց ստիպելու են լքել երկիրը: Նա նաև համոզված էր, որ նրանց ոչ միայն թույլ չի տրվելու բացել դպրոցներ և հիվանդանոցներ, այլև հնարավոր է, որ կառավարությունն ուղղակի ազգայնացնի ամերիկյան հաստատություններին պատկանող շինությունները: Դեյվիսի կարծիքով՝ միսիոներները պետք է առնվազն ժամանակավորապես լքեն երկիրը, եթե իհարկե հնարավոր լիներ դա ապահով կերպով կազմակերպել: Հյուպատոսը խոսել էր այդ մասին նահանգապետի հետ, սակայն վերջինս պատասխանել էր, որ տվյալ պայմաններում դա ապահով չէ, և առաջարկել էր սպասել մի քանի շաբաթ: Մյուս կողմից հյուպատոսը նման դիրքորոշումը բացատրում էր այն հանգամանքով, որ իշխանությունները չէին ցանկանում դուրս թողնել Թուրքիայում տեղի ունեցող իրադարձությունների ամերիկացի ակնառեսներին և վկաներին, որոնք կարող էին ազատորեն պատմել և գրել կատարվածի մասին: Նա միաժամանակ նշում էր, որ այդ պահին անհնար էր որևէ կերպով օգնություն տրամադրել տուժած

հայերին:³²⁷

Հուլիսի 12-ին Տրապիզոնում հյուպատոս Հայգերը տեղեկացնում է դեսպան Մորգենթաուին, որ քաղաքում լուրեր են շրջում այն մասին, որ, հայերից բացի, շուտով տեղահանության և արտրի են ենթարկվելու նաև քաղաքում բնակվող «բոլոր թշնամի երկրների» քաղաքացիները: Նշելով, որ քաղաքում ապրող այլ երկրների քաղաքացիները խաղաղ կյանքով ապրող և օրենք հարգող մարդիկ են, հյուպատոսն առաջարկում էր դեսպանությանը դիմել թուրքական կառավարությանը՝ այդ մարդկանց արտրի չենթարկելու պահանջով: Իրական իշխանությունը շրջանում գտնվում էր Նայիլ բեյի կողմից ղեկավարվող կոմիտեի ձեռքում, որը հրահանգներ էր ստանում ոչ թե նահանգապետից, այլ Կոստանդնուպոլսից:³²⁸

Հուլիսի 13-ին Մորգենթաուն հեռագրում է պետքարտուղարին, որ, իր կողմից ստացված տեղեկությունների համաձայն, սկսած 1915 թ. մայիսից, թուրքական իշխանությունները 40 հազարից ավելի հույներ են արտրել կղզիներից և Մարմարայի ծովափնյա շրջանների գյուղերից դեպի կայսրության ներքին շրջանների թուրքական գյուղերը: Իշխանությունները բնակեցնում էին դատարկված հունական գյուղերը մահմեդական փախստականներով: Կոստանդնուպոլսի հույն պատրիարքը փորձել էր խնդրել Ավստրո-Հունգարիայի և Գերմանիայի դեսպանների օգնությունն այդ հարցում, սակայն պատասխան էր ստացել թուրքական իշխանություններից, որ նրանք չեն հանդուրժելու օտար տերությունների միջամտությունը երկրի ներքին գործերին: Մորգենթաուն եզրակացնում էր, որ թուրքական ազգայնական քաղաքականությունն ուղղված էր ոչ միայն հայերի, այլև այլ քրիստոնյաների դեմ:³²⁹

Թաներ Աքչամը գրում է, որ, ըստ բազմաթիվ աղբյուրների, շատ հայեր դառնում էին մահմեդական՝ հետապնդումներից խուսափելու համար: Անհանգստանալով որոշ վայրերում տեղահանությունների ուշացումներից և կրոնափոխության առնչությամբ նահանգային իշխանություններից ստացվող հարցումներից՝ կառավարությունը շրջաբերական էր հղել տեղական իշխանություններին՝ արգելելով

³²⁷ Տե՛ս նույն տեղը, էջ 172-176 (NA/RG 59/867.4016/127):

³²⁸ Տե՛ս նույն տեղը, էջ 146 (NA/RG 59/867.4016/114):

³²⁹ Տե՛ս նույն տեղը, էջ 54 (NA/RG 59/867.4016/75):

կրոնափոխությունը:³³⁰ Այսպես, հուլիսի 13-ին Կեսարիա ուղարկված հրահանգի համաձայն, կրոնափոխությունը չպետք է պատճառ հանդիսանար հայերի արքայի ուշացման համար, քանի որ դա միջոց էր արքայից խուսափելու համար: Սակայն շատ նահանգներում կրոնափոխությունը շարունակվում էր տեղական պաշտոնյաների օժանդակությամբ: Ամերիկյան միսիոներների զեկույցների համաձայն, չնայած արգելող հրահանգին, կրոնափոխությունը տեղի էր ունենում հիմնականում ունևոր հայ մարդկանց շրջանում:³³¹

Ամերիկյան միսիոներ Կ. Կլարկի տվյալների համաձայն՝ Մվազի 25 հազար հայերից հազարը նախընտրել էին իսլամ ընդունել: Ըստ տարբեր հյուպատոսական հաղորդագրությունների՝ կրոնափոխ հայերն արքայի չէին ենթարկվում, սակայն որոշ վայրերում նրանց թույլ չէին տալիս մնալ իրենց տներում: Կայսերիում աշխատող ամերիկյան միսիոներուհի Ստելլա Լուդրիջի զեկույցի համաձայն՝ առաքելության շենքում գտնվող հայ կանանց արքայիցին, քանի որ նրանք իսլամ չէին ընդունել, իսկ կրոնափոխ եղածներին իշխանությունները թույլ տվեցին մնալ, սակայն տեղափոխեցին շրջակա գյուղերը:³³²

Հուլիսի 15-ին Ամերիկյան խորհրդի գանձապահ Փիթը փոխանցում է դեսպան Մորգենթաուին տարբեր վայրերից, մասնավորապես՝ Տրապիզոնից, Մվազից, Թալասից, Կոնիայից, Մարզվանից, Հաճնից, Էրզրումից, 1915 թ. հունիս-հուլիս ամիսների ընթացքում ստացված ամերիկացի միսիոներների նամակների և հեռագրերի քաղվածքները՝ հայկական բնակչության կոտորածների և տեղահանությունների մասին: Ըստ Փիթի՝ հայերին տեղահանում էին մարդկային կյանքի համար ոչ բարենպաստ վայրեր հիմնականում՝ Հալեպից դեպի հարավ-արևելք:³³³

1915 թ. հուլիսի 16-ին Մորգենթաուն հեռագրում է պետքարտուղարին, որ «խաղաղ հայերի տեղահանությունն ու անկարգություններն ավելի են սաստկանում, և սարսափահար ականատեսների վկայությամբ»

³³⁰ Տե՛ս **Akçam Taner**, նշվ. աշխ. էջ 294:

³³¹ Տե՛ս *Turkish Atrocities»: Statements of American Missionaries on the Destruction of Christian Communities in Ottoman Turkey, 1915-1917* / Comp. James L. Barton, Ann Arbor, MI: Gomidas Institute, 1998, էջ 117:

³³² Տե՛ս նույն տեղը:

³³³ Տե՛ս *Unites States Official Records on the Armenian Genocide, 1915-1917* / Compiled with an introduction by Ara Sarafian/, էջ 71-74 (LC/HM(Sr.)/Reel 7/633):

յունները հաստատում են այն, որ ազգի բնաջնջման քաղաքականությունն իր ընթացքի մեջ է: Հետապնդումների միջոցները գործադրվում են ապստամբության ճնշման պատրվակի տակ»: Գեսպանն անօգուտ էր համարում բողոքներն ու սպառնալիքները և կարծիք հայտնում, որ հնարավոր է, որ նման ճնշումը վիրավորում է օսմանյան կառավարությանն ու ավելի սաստկացնում նրա կողմից կիրառվող միջոցները: Քանի որ, Մորզենթաուի համոզմամբ, այդ իրավիճակում Միացյալ Նահանգները որևէ բան անել չէր կարող, նա առաջարկում էր, որ համապատասխան աշխատանք տարվի Թուրքիայի դաշնակիցների և նրանց դիվանագիտական ներկայացուցչությունների հետ:³³⁴

Իր պատասխան հեռագրում ԱՄՆ-ի պետքարտուղար Լանսինգը գրում է Մորզենթաուին, որ հաստատում է դեսպանի կողմից տարվող միջնորդական աշխատանքը ներքին գործերի և պատերազմի նախարարների հետ՝ ուղղված «հայկական հալածանքների» դադարեցմանը, ինչպես նաև այդ հարցում Գերմանիայի և Ավստրո-Հունգարիայի դեսպանների համակրանքը շահելու փորձերը: Պետքարտուղարությունը լրացուցիչ որևէ առաջարկ չունեի ներկայացնելու այս «չափազանց դժվարին իրավիճակում»՝ բացի դեսպանի կողմից իրականացվող գործունեությունից:

Պետքարտուղարը հարցնում էր նաև, թե արդյոք դեսպանությունը տեղեկություններ ունի³³⁵, թե ԱՄՆ-ում ծնված կամ հպատակություն ստացած քաղաքացիներից քանիսն են տուժել դեպքերի ընթացքում:³³⁵ Հուլիսի 20-ին Մորզենթաուն պատասխանում է պետքարտուղարին, որ որևէ տեղեկություն չունի Միացյալ Նահանգների տուժած քաղաքացիների մասին:³³⁶

Հուլիսի 18-ին Ամենայն հայոց կաթողիկոս Գևորգ Ե-ն³³⁷ հեռագիր էր հղել Միացյալ Նահանգների նախագահ Վիլսոնին, որում տեղեկացնում էր, որ, Կիլիկիայից ստացվող տեղեկությունների համաձայն, հայ ժողովրդի դեմ իրագործված դաժանություններն ու կոտորածները

³³⁴ Տե՛ս NA Microfilm Publications, Microcopy No. 353, Records of the Department of State Relating to Internal Affairs of Turkey, 1910-1929, Roll 6, NA/RG 59/867.4016/76:

³³⁵ Տե՛ս նույն տեղը, No. 565, NA/RG59/867.4016/74:

³³⁶ Տե՛ս *Unites States Official Records on the Armenian Genocide, 1915-1917* /Compiled with an introduction by Ara Sarafian/, էջ 64 (NA/RG 59/867.4016/79):

³³⁷ **Գևորգ Ե Տիդիսեցի Սուրենյանց** (1847-1930)՝ հայ եկեղեցական և հասարակական գործիչ, 1912 թ.-ից՝ Ամենայն հայոց կաթողիկոս:

հետևանք էին երիտթուրքական կառավարության կողմից տեղական իշխանություններին տրված հրահանգների: Նա դիմում էր ԱՄՆ-ի նախագահին՝ «մարդկության և քրիստոնյա հավատքի» անունով միջամտելու և դադարեցնելու «դաժանություններն ու կոտորածները»:³³⁸

Քաջի ԱՄՆ-ի հյուպատոսություններից և ամերիկյան միսիոներներից ստացվող տեղեկատվությունից՝ Միացյալ Նահանգների դեսպանությունը հայկական կոտորածների և տեղահանությունների մասին տեղեկություններ էր ստանում նաև այլ աղբյուրներից: Այսպես՝ 1915 թ. հուլիսի 20-ին դեսպան Մորգենթաուն պետքարտուղարին է ներկայացնում դեսպանությանն ուղղված Սոֆիայի Գաշնակցության կոմիտեից ստացված տեղեկատվական չորս նամակները (1915 թ. հունիս-հուլիս), ինչպես նաև Տարսուսի քոլեջի ուսուցիչ, շվեյցարացի Ի. Բրիքեյի և Էվերեկից գերմանուհի Հունեկեի հաղորդած տեղեկությունները՝ տվյալ քաղաքներում տիրող իրավիճակի մասին: Գեսպանը նշում է, որ չի կարող վստահ լինել այդ հաղորդագրություններում բերված փաստերի ճշգրտության հարցում, սակայն նպատակահարմար է գտնում փոխանցել նամակները պետքարտուղարին՝ տեղեկատվության, ինչպես նաև Պետքարտուղարության արխիվի համար:³³⁹

Հուլիսի 24-ին Մամուրեթ-ուլ-Ազիզում հյուպատոս Դեյվիսը դեսպան Մորգենթաունին ուղղված իր հերթական նամակում գրում էր, որ այլևս գաղտնիք չէր, որ կառավարությունը ծրագրել է «ուչնացնել հայերին որպես ազգ, սակայն կիրառված մեթոդները շատ ավելի սառնարյուն և բարբարոսական են, եթե ոչ ավելի արդյունավետ, քան սկզբում պատկերացնում էր»: Եվ ակնհայտ էր, որ տարվա այդ ժամանակահատվածում շատ քչերն էին ողջ մնալու Ուրֆա կամ այլուր հասնելու ճանապարհին: Նա նշում էր, որ արդեն իսկ հաստատված փաստ էր, որ Մամուրեթ-ուլ-Ազիզից և Խարբերդից քարտրվածները գրեթե բոլորը սպանվել էին մեկ-երկու օրվա ընթացքում: Այդ սպանություններն իրականացրել էին ոչ միայն քոլերը, այլև քարավաններին ուղեկցող ոստիկաններն ու բանտերից հատուկ այդ նպատակով ազատված հանցագործները: Սպանել էին գրեթե բոլոր տղամարդկանց, գեղեցիկ կանանց և աղջիկներին տարել էին քոլերն ու

³³⁸ Տե՛ս NA/RG 59/867.4016/78.

³³⁹ Տե՛ս *United States Official Records on the Armenian Genocide, 1915-1917* /Compiled with an introduction by Ara Sarafian/, էջ 91-116 (NA/RG 59/867.4016/95):

նստիկանները, իսկ ճանապարհը հիմնականում շարունակում էին մեծահասակ կանայք և երեխաները, որոնք շուտով մահանալու էին քաղցից, հիվանդություններից և հյուծվածությունից: Դեյվիսը գրում էր, որ երբևիցե նման ջարդ չէր եղել մարդկության պատմության ընթացքում, որն իրագործված լիներ նման «համատարած», «դժոխային և սատանայական ծրագրով»: Երկրի նահանգներից հայերին պաշտոնական հրահանգների համաձայն աքսորի ենթարկելը կարող էր «ժամանակավորապես մոլորեցնել արտաքին աշխարհին», «սակայն այդ միջոցը ոչ այլ ինչ էր, քան ամենատեսակի տեսակի կոտորած»: Ըստ հյուպատոսի՝ կասկած չկար, որ այդ կոտորածը տեղի էր ունենում կառավարության հրահանգով:³⁴⁰

Դեյվիսի տվյալներով՝ Մամուրեթ-ուլ-Ազիզից և Խարբերդից աքսորվել էր 12-15 հազար հայ: Նա գրում էր, որ հնարավոր է՝ հազար կամ 1.500 հայեր դեռ մնացած լինեին քաղաքներում իշխանությունների կողմից տրված հատուկ թույլտվություն ստանալու կամ կաշառք տալու միջոցով: Հնարավոր է՝ որոշ հայեր էլ թաքնվել էին: Հազարավոր հայեր էին աքսորվել նաև հարևան գյուղերից: Հավանաբար աքսորի էր ենթարկվել շրջանի ողջ բնակչության մեկ երրորդը:

Հյուպատոսը նշում էր, որ ստեղծված իրավիճակի հատկանշական փաստն այն էր, որ հայերն անօգնական էին, և նրանց կողմից որևէ դիմադրություն չէր կազմակերպել՝ «բացառությամբ երկու կամ երեք աննշան դեպքերի»: Ըստ Դեյվիսի՝ այս հանգամանքը մասամբ գալիս էր հայ ազգի մոտ «ոգու պակասությունից», սակայն հիմնականում այն «խելացիորեն իրագործված ծրագրի արդյունք էր»: Հյուպատոսը վստահ էր, որ ամեն ինչ ծրագրվել էր ամիսներ առաջ: Նախ և առաջ բանտարկվեցին մի քանի հոգի, որոնք մեղադրվեցին «հեղափոխական դավադրության» մեջ, այնուհետև գտան թաքցված ռումբեր, հետևեցին նոր ձերբակալություններ: «Դաժան կտտանքների» պատճառով շատերը ստիպված էին ընդունել մեղքը կամ «ծախել» շատ անմեղ մարդկանց: Այնուհետև հրահանգ էր տրվել ողջ զենքը հանձնելու մասին: Ոստիկանները շրջապատում էին քաղաքներն ու գյուղերը և խուզարկում հայերի տները: Շատ հայեր կամավոր հանձնում էին իրենց հրացաններն ու ատրճանակները՝ որևէ առնչություն

³⁴⁰ Տե՛ս նույն տեղը, էջ 461-462 (NA/RG 59/867.4016/269):

չունենալով հեղափոխական շարժման հետ: Ըստ Դեյվիսի, թե ինչքան ռուսը և զենք էին ուստիկաններն իրենք «քաբցրել ու հայտնաբերել» և մեղքը զցել հայերի վրա, մնում էր անհայտ: Ի վերջո, իշխանությունները ձերբակալում և բանտ էին նետում հարյուրավոր հայ մտավորականների՝ մեղադրելով նրանց հեղափոխական գործունեությամբ զբաղվելու մեջ: Եվ այս ամենն արվում էր հրապարակայնորեն՝ համապատասխան հակահայկական մթնոլորտ ստեղծելու նպատակով: Այնուհետև բոլոր այդ տղամարդկանց աքսորում էին քաղաքից: Հյուպատոսը համոզված էր, որ նրանց բոլորին սպանել էին քաղաքից մի քանի ժամ հեռավորության վրա: Այն բանից հետո, երբ գրեթե բոլոր հայ տղամարդիկ աքսորվել էին, և հայերի մոտ զենք այլևս չէր մնացել, հայտարարվեց արդեն բոլոր հայերի արտաքսման մասին:

«Որևէ արդյունավետ դիմադրություն այլևս անհնար էր», - նշում էր Դեյվիսը: Այս ծրագիրն այնպես էր մտածված, որ ուստիկաններին որևէ վտանգ չէր սպառնում. իշխանությունների փոքրաթիվ ներկայացուցիչները կարողանում էին հեշտությամբ աքսորել և ուղեկցել 15-20 հազար հայերի: Ըստ հյուպատոսի՝ ծրագիրը նույնությամբ իրագործվել էր մյուս վիլայեթներում: Դեյվիսի կարծիքով՝ սպանված հայերի թիվը ընդհանուր առմամբ կարող էր հասնել մեկ միլիոնի:³⁴¹

Դեյվիսը գրում էր, որ Էրզրումից և Երզնկայից Մամուրեթ-ուլ-Ազիզ ժամանած աքսորված հայերից այդտեղ էին մնացել մահամերձ վիճակում գտնվող մի քանի հարյուր հոգի, որոնք այլևս անկարող էին շարունակել ճանապարհը: Ըստ հյուպատոսի՝ «անկարելի է պատկերացնել ավելի մեծ տառապանք». մարդիկ՝ հիմնականում ծերեր, կանայք և երեխաներ, սպասում էին իրենց մահկանացուն կնքելուն: Օրական բազմաթիվ մարդիկ էին մահանում, ամենուրեք կարելի էլ հանդիպել դիակների և ծնողի դիակի շուրջ հավաքված լաց եղող երեխաների: Համաձայն հարևան գյուղերից եկող տեղեկությունների՝ ճանապարհներին հարյուրավոր դիակների կարելի էր հանդիպել: Ըստ Դեյվիսի՝ ողջ երկիրը վերածվել է սպանդանոցի:³⁴²

Դեյվիսը նշում էր, որ մանրամասնորեն նկարագրում է ստեղծված իրավիճակը ոչ այն բանի համար, որ ինքը «հայ ազգի պաշտպանն է»: «Սա այն ազգը չէ, որով ես հիանում եմ կամ որոշել եմ ապրել նրանց

³⁴¹ Տե՛ս նույն տեղը, էջ 462-463 (NA/RG 59/867.4016/269):

³⁴² Տե՛ս նույն տեղը, էջ 464 (NA/RG 59/867.4016/269):

հետ»։ Սակայն որոնք էլ լինեին հայ ժողովրդի սխալները, որքան էլ ապացուցված լիներ այն փաստը, որ նրանք մասնակցել են «հեղափոխական դավադրությանը», այնուամենայնիվ, ըստ հյուպատոսի, «այս մարդկանց հանդեպ կիրառված պատիժն այնքան խիստ է, ողբերգությունը՝ այնքան դաժան», որ որևէ մեկը չի կարող անտարբերությամբ վերաբերվել այս երևույթին։ Եթե որևէ մեկն ականատես էր դառնում, թե ինչպես են 70 կամ 80 տարեկան տղամարդկանց և կանանց՝ կաղ, կույր և հիվանդ, անմեղ կանանց և երեխաներին, անօգնական մանուկներին ուղարկում սպանության, թե ինչպես են նրանք մահանում, նրա համար այլևս «անհնար էր որևէ արդարացում գտնել»։

Միաժամանակ իշխանությունները փորձում էին արդարացում գտնել կատարվածին։ Այսպես՝ ոստիկանության ղեկավարը դիմել էր հյուպատոսին, որպեսզի վերջինս հեռագիր հղեր Միացյալ Նահանգների դեսպանությանն առ այն, որ հայերը երկու կամ երեք ժանդարմ են սպանել ինչ-որ մի գյուղում, ինչպես նաև հանդես գար մնան փաստերի մասին հայտարարությամբ։ Հյուպատոսը մերժել էր մնան առաջարկները, քանի որ դա կնշնակեր միջամտել երկրի ներքին գործերին։³⁴³

Հուլիսի 26-ին Մերսինում հյուպատոս Նաթանը տեղեկացնում է դեսպան Մորգենթաուին, որ, «ըստ երևույթին, հայերի դեմ ուղղված մեծ ծավալի տեղահանության գործողություններ են տեղի ունենալու Ադանա, Տարսոն և Մերսին քաղաքներում»։ Ադանայում 250-ից ավելի ընտանիքների հրահանգվել էր պատրաստվել մեկնելու քաղաքից։ Մեծ թվով ընտանիքներ Տարսոնից արդեն իսկ տեղահանվել էին, մնացած հայերին հրահանգել էին պատրաստ լինել նույնպես լքելու քաղաքը։ Ըստ հյուպատոսի՝ նրանց անշարժ գույքն ու անձնական իրերը, որոնք նրանք չէին կարող իրենց հետ վերցնել, գրանցվելու էին և ազգայնացվելու կառավարության կողմից։ Մերսինում շուրջ 200 հայեր նախազգուշացվել էին տեղահանության ենթարկվելու մասին։ Տեղահանության էր ենթարկվելու քաղաքի ողջ հայ բնակչությունը՝ անկախ բնակիչների դասակարգային պատկանելությունից։ «Տեղահանության հատուկ հանձնաժողովի» անդամ էր ժամանել քաղաք՝ հարցը վերահսկելու նպատակով։ Նշված հանձնաժողովի նախագահ

³⁴³ Տե՛ս նույն տեղը, էջ 466-467 (NA/RG59/867.4016/269)։

հը այդ ժամանակ գտնվում էր Հանճում՝ տեղահանությունը քաղաքում ավարտելու նպատակով: Ըստ հյուպատոսի՝ անցյալ շաբաթ հարյուր հայերից կազմված քարավանն անցավ քաղաքի միջով՝ ուղևորվելով Կեսարիայից դեպի Սիրիա:

Նաթանը վստահ էր, որ հայերի տեղահանությունը բացասական ազդեցություն էր ունենալու տնտեսության զարգացման, նույնիսկ շրջանում գործող օտարերկրյա, մասնավորապես՝ «Singer», ինչպես նաև նավթային ընկերությունների գործունեության վրա: Ըստ հյուպատոսի՝ տեղահանությունը նաև իր բացասական ներգործությունը կարող էր ունենալ ամերիկյան միսիոներական հաստատությունների գործունեության վրա:³⁴⁴

Նույն օրը դեսպան Մորգենթաուն պետքարտուղարին է ներկայացնում Մարզվանի ամերիկյան քուլեջի ամերիկացի ուսուցիչներից մեկի զեկույցը՝ քաղաքի հայ բնակչության տեղահանության մասին: Վերջինս չէր ցանկացել նշել իր անունը: Ըստ զեկույցի՝ քաղաքի հայերի խնդիրները սկսվեցին զինվորների հավաքագրումով: Հարյուրավոր տղամարդիկ զինակոչվեցին բանակ՝ թողնելով իրենց կանանց և երեխաներին առանց ապրուստի միջոցների: Ունևոր հայերի զգալի մասը կարողացավ վճարել բանակից ազատվելու հարկը և մնաց քաղաքում: Ըստ հեղինակի, երբ թուրք և հայ զինվորները մեկնեցին, ստեղծվեց մի իրավիճակ, երբ հայ բնակչությունը մեծամասնություն կազմեց, ինչը «կասկածների և վախի» առիթ դարձավ իշխանությունների համար: Գրա արդյունքն այն եղավ, որ մայիս ամսին իշխանությունները ձերբակալեցին, տարան Սվազ և բանտարկեցին հայկական ազգային քաղաքական կուսակցությունների շուրջ քսան ներկայացուցիչների: Հունիսին հայերից պահանջվեց հանձնել զենքը, սկսվեցին խուզարկություններ, զենքի առգրավում և բանտարկություններ: Հունիսի 26-ի գիշերվա ժամը մեկին ոստիկանները սկսեցին տներից դուրս բերել «ծեր և երիտասարդ, հարուստ և աղքատ, հիվանդ և առողջ» հայերի և տեղավորել նրանց զինանոցներում, որից հետո՝ երկու օրվա ընթացքում, 150 հոգուց կազմված խմբերով տանել դեպի Սվազ: Չենթարկվելու դեպքում իշխանությունները սպառնում էին սպանել հայերին կամ հրդեհել նրանց տները: Հայ հոգևորականները տնից տուն էին

³⁴⁴ Տե՛ս նույն տեղը, էջ 89-90 (LC/HM(Sr.)/Reel 7/639):

այցելում և համոզում մարդկանց ենթարկվել իշխանությունների պահանջին: Ամերիկյան քոլեջի ղեկավարությունը պայմանավորվել էր վճարել իշխանություններին 275 թուրքական լիրա՝ հայ ուսուցիչներին և աշխատակիցներին չտանելու դիմաց, սակայն թուրքերը հրաժարվեցին խոստումը կատարելուց: Բոլոր հայերին տեղափոխում էին ուտքով, ճանապարհին նրանց հագուստն ու եղած ունեցվածքը թալանում էին: Վկայություններ գոյություն ունեն, ըստ հեղինակի, որ շատերն այդպես էլ տեղ չէին հասնում: Արդյունքն այն եղավ, որ մի քանի օրվա ընթացքում քաղաքում այլևս հայ տղամարդ չէր մնացել:

Հուլիսի 3-ին և 4-ին իշխանությունները հրահանգ տվեցին կանանց և երեխաներին արտրելու մասին: Յուրաքանչյուր ընտանիքի համար կառավարությունը խոստացել էր տրամադրել մեկական եզան սայլ: Տեղահանվողներն իրավունք ունեին իրենց հետ վերցնելու միայն մեկ օրվա աննդի պաշար և մեկ կապոց հագուստ: Մարդիկ ստիպված էին մինչև մեկնումը վաճառել իրենց տների ունեցվածքն իրական գնի 10%-ի չափով: Ըստ զեկուցագրի՝ այդ օրերին քաղաքի շրջակա գյուղերի բնակիչները եկել էին քաղաք՝ օգտվելու ունեցվածք ձեռք բերելու հնարավորությունից: Շատ դեպքերում հայերին ուղղակի թալանում էին:

Հուլիսի 5-ին ամերիկյան քոլեջում աշխատող միսիոներ Մարդենը «մարդկության անուճից» բողոքում է քաղաքի պարետին նման իրավիճակի ստեղծման համար: Նրան պատասխանում են, որ, առանց բացառության, քաղաքի ողջ հայ բնակչությանը արտրելու մասին որոշումը եկել է կենտրոնական կառավարությունից: Միաժամանակ պարետը խոստանում է, որ քոլեջի հայերը կաքսորվեն վերջում: Դրանով պայմանավորված՝ քոլեջում շուրջ 300 հայեր էին պատսպարվել, որոնք այս կամ այլ կերպ առնչություն ունեին ամերիկյան հաստատությունների հետ: Ամերիկացիները փորձում էին հեռագրեր ուղարկել դեսպանություն կամ մոտակա հյուպատոսություն, սակայն իշխանությունները հրաժարվում էին հեռագրերը ընդունելուց: Կարմիր խաչի հիվանդանոցում, որը սպասարկում էր հիմնականում թուրքական բանակին, հիմնականում հայեր էին աշխատում: Նրանց արտրելով՝ իշխանությունները փաստորեն զրկվում էին հիվանդանոցից, սակայն հայերին չտանելու մասին բազմաթիվ խնդրանքները մնում էին անպատասխան: Տեղահանվող հայերին օգնելու նպատակով քոլեջը

սկսեց ամենաաղքատ հայերից իրեր և հագուստ գնել: Երբ հայտնի դարձավ, որ քոլեջը որոշ իրեր սկսել է գնել, հայերը համատարած կերպով սկսեցին գալ և իրենց ունեցվածքն առաջարկել, ինչն առաջացրեց իշխանությունների գայրույթը, և վերջիններս արգելեցին քոլեջին որևէ իր գնել հայերից:

Ըստ զեկուցագրի՝ բնակչությանն ասվել էր, որ նրանք մեկնելու էին չորեքշաբթի, սակայն երեքշաբթի օրը՝ գիշերվա ժամին, հայերի տնե-րի մոտ հայտնվեցին խոստացված սայլերը, և հայերին հրահանգվեց անմիջապես մեկնել քաղաքից: Մարզվանում սարսափելի խուճապ էր տիրում հայ կանանց շրջանում. լուրեր էին տարածվում, որ Անգոռա-յի և Չորումի բանտերից ազատված հանցագործները հավաքվել էին քաղաքի մերձակայքում և սպասում են ճանապարհներին հայերի քա-րավանների հայտնվելուն: Շատ կանայք իրենց հետ թույն էին վերց-րել՝ երեխաներին թունավորելու և ինքնասպան լինելու նպատակով: Միաժամանակ իշխանությունների կողմից հայտարարվել էր, որ իս-լամ ընդունող հայերը կարող էին մնալ քաղաքում, ինչի հետևանքով համապատասխան գրասենյակների առջև հսկայական հերթեր էին գոյացել: Սակայն շատ դեպքերում նույնիսկ կրոնափոխությունը չէր փրկում հայերին: Տեղահանության գործընթացը շարունակվեց շուրջ երկու շաբաթ: Մարզվանի շուրջ 12 հազար հայերից մնացին ընդամե-նը մի քանի հարյուր հոգի: Ըստ հեղինակի՝ այն կարծիքն էր իշխում քաղաքում, որ կառավարությունը նպատակադրվել է ընդհանրապես վերացնելու հայ ազգը. շատերն ասում էին, որ «այն, ինչ ներկայումս կատարվում է, շատ ավելի վատ է, քան կոտորածը»:³⁴⁵

Հուլիսի 29-ին Մորգենթաուն ու դեսպանության իրավական խորհրդատու Արշակ Շմավոնյանը հանդիպեցին Թալեսթ փաշային և փորձեցին համոզել նրան հեռագիր ուղարկել Մարզվան՝ ապահո-վելու Անատոլիայի քոլեջի³⁴⁶ ամերիկացիների անվտանգությունն ու «լավ վերաբերմունքը» հայերի նկատմամբ: Թալեսթը խոստացավ դեսպանին կատարել խնդրանքը: Միաժամանակ նա հարցրել էր, թե Մորգենթաուն կցանկանա՞ր արդյոք դուրս բերել բոլոր ամերիկացիներ-

³⁴⁵ Տե՛ս նույն տեղը, էջ 139-143 (NA/RG 59/867.4016/106):

³⁴⁶ 1916 թ. մայիսին թուրքական կառավարության որոշմամբ Անատոլիայի քոլեջը փակվեց և վերածվեց ռազմական հիվանդանոցի (Տե՛ս **Stone Frank Andrews**, նշվ. աշխ., էջ 194-195):

րին Թուրքիայից: Դեսպանը պատասխանել էր, որ նաև ցանկանում է «կազմակերպել հանգանակություն»՝ նոր բացված Պանամայի նեղուցով հայերին դեպի Կալիֆոռնիա տեղափոխելու համար: Թալեաթն առաջարկել էր քննարկել այդ հարցը պատերազմի նախարար Էմվերի հետ:³⁴⁷

Ի լրումն Մարզվանում տեղի ունեցող իրադարձությունների մասին վերը ներկայացված տեղեկատվության՝ 1916 թ. հուլիսի 3-ին Կոպենհագենում ԱՄՆ-ի դիվանագիտական ներկայացուցչության ղեկավար, նախարար Մորիս Իգանը³⁴⁸ (Կոստանդնուպոլսում դեսպանության՝ Վաշինգտոն ուղարկվող փաստաթղթերը փոխանցվում էին Կոպենհագենում ԱՄՆ-ի դեսպանության միջոցով) փոխանցում է պետքարտուղարին միսիոներ Մարդենի զեկույցը: Ըստ Մարդենի՝ Ամերիկյան խորհուրդը Մարզվանում ուներ քուլեջ, օրիորդաց դպրոց և հիվանդանոց: Ողջ ունեցվածքը կազմում էր 250 հազար դոլար: Քուլեջում ուսանում էին 400 տղաներ, օրիորդաց դպրոցում՝ 250 աղջիկներ, իսկ հիվանդանոցը միջինում ունենում էր 70-80 հիվանդ:

Ըստ Մարդենի՝ 1915 թ. հունիսի 28-ի գիշերվա ժամերին Մարզվանի ոստիկանությունը ձերբակալել էր շուրջ 150 հայ երիտասարդների: Որևէ մեկը չգիտեր այդ գործողության պատճառը, սակայն երկու օր անց հայտարարվեց այն մասին, որ այդ մարդիկ աքսորվելու են քաղաքից: Բանտարկվեցին նաև քուլեջի ուսուցիչները: Այնուհետև սկսվեց տղամարդկանց՝ քաղաքից 100-200 հոգանոց խմբերով աքսորելու գործընթացը: Ինչպես վկայում էին ականատեսները, նրանց դուրս էին բերում քաղաքից, մոտավորապես 12 մղոն հեռավորության վրա՝ հանում էին նրանց հագուստները, որից հետո դաշույններով ու կացիններով զինված գյուղացիների խմբերը սպանում էին նրանց և նետում նախօրոք փորված փոսերը: Այնուհետև սկսվում էր կանանց, երեխաների և ծերերի արտաքսումը: Ամեն մի ընտանիքի հատկացվում էր մեկ սայլ: Օրական զինվորականների ուղեկցությամբ արտաքսվում էր 200-500 ընտանիք: Հույն բնակիչները փորձել էին ուտելիք տրամադրել աքսորյալներին, սակայն նրանց դա արգելվեց: Քա-

³⁴⁷ St. u Library of Congress, Division of Manuscripts, Papers of Henry Morgenthau, Sr., Diary, 1915, July 29, August 2, 30.

³⁴⁸ **Մորիս Իգան** (1852-1924)՝ ամերիկացի գրող, լրագրող և դիվանագետ, 1907-1917 թթ.՝ դեսպանորդ-նախարար Կոպենհագենում:

ղաքից դուրս գալուց հետո կանանց և աղջիկներին հնարավորություն էր տրվել իսլամ ընդունելու և ամուսնանալու թուրքերի հետ: Հակառակ դեպքում նրանք կարող էին ենթարկվել թալանի և բռնաբարությունների ոստիկանների և զինված ցեղախմբերի կողմից: Ըստ խոսակցությունների՝ նրանց տարել էին դեպի Մոսուլ: Ճանապարհին շատերը մահանում էին, շատերին նետում էին գետերը, կանանց և երեխաներին տանում էին, մայրերը թողնում էին երեխաներին ճանապարհին: Երկու կամ երեք ամիս անց կենդանի մնացած ավերակները հասնում էին Հալեպի նահանգ՝ կորցնելով իրենց մոտ եղած ողջ ունեցվածքը: Շատերը մահանում էին տիֆի և դիզենտերիայի համաճարակներից:

Չնայած նրան, որ 1915 թ. օգոստոսի 10-ին դեսպան Մորզենթաուից հեռագիր էր ստացվել առ այն, որ ներքին գործերի նախարարի հավաստիացմամբ ամերիկյան ուսումնական հաստատությունների ուսուցիչներին և ուսանողներին ձեռք չեն տալու, նահանգապետը հայտարարել էր, որ դեսպանի հեռագիրը իր համար որևէ նշանակություն չունի. իրենք ստանում են իրենց հրահանգները: Այս կապակցությամբ Մարդենը գրում է, որ արտաքսման մասին պաշտոնական հրահանգներում նշվում էր ավերակների կյանքն ու ունեցվածքը հարգելու մասին, սակայն ամեն քաղաքի համար ստացվում էր առանձին գաղտնի հրահանգ՝ հայերի բնաջնջումն իրականացնելու մեթոդների վերաբերյալ: Որոշ առաջատար գործարարներ և արհեստավորներ մահմեդականություն ընդունելու առաջարկներ էին ստացել և ազատվել արտաքսումից: Մարզվանի 13 հազար հայերից արտաքսվել էին 11.500-ը, իսկ 1.500-ը իսլամ էին ընդունել:³⁴⁹

Հուլիսի 28-ին Տրապիզոնում հյուպատոս Հայգերը զեկուցում էր դեսպան Մորզենթաուին քաղաքում տեղի ունեցող իրադարձությունների մասին: Հյուպատոսը գրում էր, որ քաղաքի բոլոր հայերի ավերակի մասին հայտարարությունը փակցվել է փողոցներում հունիսի 26-ին: Արդեն հուլիսի 1-ին փողոցները սկսեցին հսկվել ոստիկանների կողմից, և սկսվեց հայերին իրենց տներից դուրս բերելու գործընթացը: Ուսերին կապոցներով բեռնված տղամարդկանց, կանանց և երեխաներին հավաքում էին հյուպատոսությունից ոչ հեռու գտնվող փողոցում, և երբ խմբերում ընդգրկվածների թիվն անցնում էր 100-ից, նրանց քշում

³⁴⁹ Տե՛ս *United States Official Records on the Armenian Genocide, 1915-1917* /Compiled with an introduction by Ara Sarafian/, էջ 524-525 (NA/RG 59/867.4016/292):

էին դեպի Գյումուշխանն և Երզնկա տանող ճանապարհը: Քաղաքից և շրջակա վայրերից վեց հազար հոգուց բաղկացած երեք մեծ խմբեր մեկնեցին երեք օրվա ընթացքում, և ավելի ուշ չորս հազար հոգի՝ ավելի փոքր խմբերով: Աքտրվածների կազմում էին տարբեր դասակարգի մարդիկ: Կային նաև հարուստներ, քահանաներ, առևտրականներ, դրամատների աշխատողներ, իրավաբաններ, արհեստավորներ, դերձակներ և այլ խավերի ներկայացուցիչներ:

Նահանգապետը հյուպատոսին ասել էր, որ հարուստ մարդկանց համար կարող էին բացառություններ արվել, սակայն, վկայությունների համաձայն, իշխանություններն այդ խոստումը նույնպես չէին կատարում: Այսպես՝ մի հարուստ առևտրական 66 դոլարի չափով վճարում էր կատարել՝ ընտանիքով դեպի Ջիզիկ ուղևորվելու համար, սակայն քաղաքից 10 րոպե հեռավորության վրա գտնվող կայարանում նրանց հանել էին վագոնից, իսկ գնացքը հետ ուղարկել քաղաք: Ըստ հյուպատոսի՝ «քաղաքի ողջ մահմեդական բնակչությունն ի սկզբանե գիտեր, որ այս մարդիկ դառնալու են իրենց զոհը, և վերաբերվում էր նրանց որպես հանցագործների»: Առաջին հերթին, համաձայն կառավարության հայտարարության, հայերն իրավունք չունեին իրեր վաճառելու, և որևէ մեկն իրավունք չուներ նրանցից որևէ բան գնելու: Շատերն իրենց իրերը շալակած էին տանում, հոգնում էին և չէին կարողանում շարունակել քայլել: Նրանց սվինահարում էին և նետում գետը: Շատ ականատեսներ տասնյակ մերկ դիակներ էին տեսել գետում կամ ծովափնյա շրջաններում: Հայգերի գեկուցագրի համաձայն՝ հուլիսի 6-ի դրությամբ Տրապիզոնի հայերի շուրջ հազար տներ դատարկվել էին իրենց բնակիչներից: Տներում եղած ամբողջ գույքն ու կահույքը դուրս էին բերվում ոստիկանության կողմից և տեղավորվում քաղաքի շրջակայքում գտնվող պահեստներում: Ըստ հյուպատոսի՝ իշխանությունների հայտարարությունն այն մասին, որ ողջ գույքն իբր վերադարձվելու է տերերին նրանց՝ քաղաք վերադառնալուն պես, «պարզապես ծիծաղաշարժ էր»: Տրապիզոնում Գերմանիայի հյուպատոսը համոզված էր, որ նույնիսկ պատերազմի ավարտից հետո ողջ մնացած հայերին թույլ չի տրվելու վերադառնալ քաղաք:

Սկզբնական շրջանում բացառություն էր արվել հիվանդանոցներում գտնվող մարդկանց համար, մինչև նրանք կկարողանային քայլել, այնուհետև՝ ծերերի, հղի կանանց, երեխաների, կառավարական

պաշտոնյաների և կաթոլիկ հայերի համար, սակայն, ի վերջո, նրանց նույաես աքստրեցին: Բացառություն չէր արվել նաև ռուսական, պարսկական և բուլղարական հպատակություն ունեցող հայերի համար: Մարդկանց բարձում էին նաև փոքր նավակների մեջ և տանում դեպի Մամսում, սակայն ընդհանուր կարծիք գոյություն ուներ, որ նրանց բուլղոին խեղդել են ծովում: Ըստ հյուպատոսի՝ նահանգապետի և հույն արքեպիսկոպոսի հովանավորությամբ հայ երեխաներին դպրոցներում և որբանոցներում տեղավորելու ծրագիրը նույնպես տապալվեց, քանի որ «Միություն և առաջադիմություն» կուսակցության կոմիտեի ղեկավար Նաիլ բեյը դեմ էր նման ծրագրի իրագործմանը: Երեխաների մեծ մասին հանձնեցին բացառապես մահմեդական ընտանիքներին, լավ տեսք ունեցող աղջիկներին պահեցին հատուկ սներում՝ կուսակցության տեղական կոմիտեի հաճույքները բավարարելու համար:³⁵⁰

Հուլիսի 30-ին Ձմյուռնիայում գլխավոր հյուպատոս Ջորջ Հորտոնը տեղեկացնում է Հենրի Մորգենթաուին, որ տեղի իշխանությունները հրահանգ են ստացել կախաղան հանելու հայ համայնքի հայտնի յոթ ներկայացուցիչների՝ ներկայացնելով նրանց անհիմն քաղաքական մեղադրանքներ: Այդ հանցանքը հայերն իբր գործել էին դեռևս 1909 թ., որն առնչվում էր երիտթուրքական կուսակցության որոշ անդամների: Ըստ հյուպատոսի՝ հայերը մեծ հարգանք էին վայելում, և այդ որոշման դեմ հանդես էին գալիս նույնիսկ որոշ հայտնի թուրքեր: Տվյալ հարցի շուրջ հյուպատոսը քննարկումներ էր ունեցել նահանգապետի, ինչպես նաև իր գերմանացի և ավստրիացի գործընկերների հետ: Ինչպես նահանգապետը, այնպես էլ զինվորական պարետը համոզված էր, որ այդ մարդիկ ընդհանրապես մեղավոր չեն: Հրահանգը ստանալուն պես տեղական իշխանությունները հեռագրել էին Կոստանդնուպոլիս, որ, համաձայն գործող օսմանյան օրենքի, այս մարդիկ իրավունք ունեն խնդրագիր ներկայացնելու՝ կայսերական ներման համար: Կոստանդնուպոլիսից ստացված պատասխանում ասվում էր. «Դա տեխնիկապես ճիշտ է, սակայն անմիջապես կախաղան հանե՛ք նրանց, իսկ խնդրագիրը ներկայացրե՛ք հետո»: Հյուպատոսը

³⁵⁰ St. u NA Microfilm Publications, Microcopy No. 353, Records of the Department of State Relating to Internal Affairs of Turkey, 1910-1929, Roll 44, No. 403, NA/RG 59/867.4016/126:

նշում էր, որ այս դեպքը գալիս էր ապացուցելու այն փաստը, որ երկրի իշխանությունները «մեծապես զայրացած են» հայերի վրա Կովկասում նրանց հայրենակիցների ցուցաբերած «ռուսամետ զգացմունքների» պատճառով, ինչի համար տեղի հայերը որևէ պատասխանատվություն չէին կրում: Հյուպատոսը բնութագրում էր քաղաքի հայ բնակչությանը որպես խաղաղասեր համայնք, որը երբևիցե չէր զբաղվել հակակառավարական գործունեությամբ: Հայերի հանդեպ նման պատժի կիրառումը կարող էր տպավորություն ստեղծել թուրք ցածր և անկիրթ դասակարգի շրջանում, որ հայերն իրապես զբաղված էին հակաիշխանական գործունեությամբ, ինչը կարող էր կոտորածների առիթ դառնալ:³⁵¹ Ի վերջո, դեսպանի կողմից Կոստանդնուպոլսում գործադրված միջոցների շնորհիվ յոթ հայերին սպառնացող պատժամիջոցը փոխարինվեց աքսորով: Չմյուռնիայի հայերի ներկայացուցիչները շնորհակալություն էին հայտնել հյուպատոսին՝ իրենց հայրենակիցների կյանքը փրկելու համար: Նահանգապետը հայտնել էր հայերի ներկայացուցիչներին, որ դա տեղի էր ունեցել ամերիկյան ազդեցության շնորհիվ:³⁵² Մեպտեմբերի 1-ին Մորգենթաուն գրում էր պետքարտուղարին, որ սուլթանի կողմից հայերին ներում շնորհելու հարցը հնարավոր եղավ լուծել պատերազմի նախարարի միջամտության շնորհիվ:³⁵³

Հուլիսի 31-ին Մորգենթաուն տեղեկացրեց պետքարտուղարին, որ, համաձայն Գերմանա-հայկական ընկերության նախագահ դոկտոր Յոհաննես Լեփսիուսի³⁵⁴ տեղեկատվության, Էրզրումի նահանգից տեղահանված հայերը՝ հիմնականում կանայք և երեխաներ, կոտորածի էին ենթարկվել Կամախի մոտակայքում, որը գտնվում էր Երզնկայի և Խարբերդի միջև: Գեսպանը հաղորդում էր, որ նման

³⁵¹ Տե՛ս *United States Official Records on the Armenian Genocide, 1915-1917* /Compiled with an introduction by Ara Sarafian/, էջ 185-186 (NA/RG59/867.4016/130):

³⁵² Տե՛ս նույն տեղը, էջ 183 (NA/RG 59/867.4016/130), էջ 189 (LC/HM(Sr.)/Reel 7/651):

³⁵³ Տե՛ս նույն տեղը, էջ 211 (NA/RG 59/867.4016/150):

³⁵⁴ **Յոհաննես Լեփսիուս** (1858-1926)՝ գերմանացի հասարակական գործիչ, միսիոներ, աստվածաբանության դոկտոր, հայ ժողովրդի պաշտպան, 1894-1896 թթ. կոտորածները, Հայոց ցեղասպանությունը դատապարտող աշխատությունների հեղինակ, հայ փախստականների համար օգնության կազմակերպիչ: 1914 թ. հիմնադրել և նախագահել է Գերմանա-հայկական ընկերությունը: Երիտթուրքերին դատապարտող ելույթ է ունեցել Ստրոմն Թեհլերյանի դատավարության ժամանակ:

տեղեկատվություն էր ստացվել նաև այլ վստահելի աղբյուրներից, համաձայն որոնց՝ տեղահանվածներից քչերն էին կենդանի մնացել: Լեփսիուսն առաջարկում էր այդ հարցով դիմել Կարմիր խաչի միջազգային կոմիտե՝ ստիպելով պահանջել Գերմանիայից նման միջոցների կիրառման դադարեցում: Լեփսիուսը խնդրում էր դեսպանին թույլ տալ այդ նպատակով օգտվել դեսպանության ունեցած փաստաթղթերից:³⁵⁵ Օգոստոսի 4-ի հեռագրով պետքարտուղար Լանսինգն իր համաձայնությունն էր տալիս, որպեսզի Լեփսիուսին հնարավորություն տրվի ուսումնասիրելու դեսպանության փաստաթղթերը:³⁵⁶

1915 թ. օգոստոսին Թալեաթը հանձնարարեց նահանգային և ռազմական իշխանություններին ներկայացնել հայերի հանդեպ կառավարության գործադրած քաղաքականությունն արդարացնող զեկուցագրեր: Կառավարությանը ներկայացված փաստաթղթերն իրականում «աղքատիկ կեղծիքներ» էին: Այսպես՝ Դիարբեքիի նահանգապետ Մեհմեդ Ռեշիդի զեկուցագիրը՝ «հայկական դավադրության», «գաղտնի ծրագրերի շրջաբերման», հայերի «գաղտնի համախմբման», «ամերիկյան միսիոներների կողմից հայերի հեղափոխության ղեկավարման» մասին, «բացարձակ անհեթեթություն էր»:³⁵⁷

1915 թ. օգոստոսի 3-ին Հալեպում հյուպատոս Ջեքսոնը «Հայերի արտաքսումը» վերնագրով զեկուցագիր էր ներկայացրել դեսպան Մորգենթաուին և Պետքարտուղարությանը: Հյուպատոսը գրում էր, որ այն բանից հետո, երբ ապրիլին Վանում հայերը «ավերեցին» մի քանի կառավարական շինություններ, թուրքական կառավարությունը սկսեց կայսրության բոլոր հատվածներում հայերի դեմ կիրառել «ամենախիստ» միջոցները: «Ուղիղ հարձակման և կոտորածի գաղափարը, որն իրագործվել էր նախկին ժամանակներում, ձևավոխության էր ենթարկվել»: մեծ թվով տղամարդիկ և տղաներ արտաքսվել էին իրենց տներից և «անհետացել ճանապարհին», իսկ ավելի ուշ նրանց բախտին էին արժանացել կանայք և երեխաները: Ճանապարհորդների

³⁵⁵ Տե՛ս նույն տեղը, էջ 75 (NA/RG 59/867.4016/83):

³⁵⁶ Տե՛ս NA Microfilm Publications, Microcopy No. 353, Records of the Department of State Relating to Internal Affairs of Turkey, 1910-1929, Roll 43, No. 893, NA/RG 59/867.4016/83:

³⁵⁷ Տե՛ս **Kiezer Hans-Lukas, Talaat Pasha. Father of Modern Turkey, Architect of Genocide**, էջ 238:

լուրերն այն մասին, որ հայ տղամարդիկ սպանվել են ճանապարհին, որ Եփրատ գետում մեծ թվով դիակներ են լողում, որ ոստիկանները քրդերին կանայք և աղջիկներ են տրամադրում, որ ոստիկաններն ու քրդերը «աներևակայելի դաժանություններ են» գործում, ըստ հյուպատոսի, սկզբում անհավատարի էին թվում, սակայն երբ փախստականները սկսեցին ժամանել Հալեպ, որևէ կասկած այդ լուրերի իսկությունը չուրջ այլևս չէր կարող լինել:

Օգոստոսի 2-ին 800 միջին տարիքի ու հասակավոր կանայք և 10 տարեկանից փոքր երեխաներ Դիարբեքիից ժամանեցին Հալեպ «ամենաողորմելի» վիճակում: Նրանք պատմում էին քրդերի կողմից երիտասարդ կանանց և աղջիկների բռնաբարությունների, ունեցվածքի թալանի, համատարած սովի, գրկանքների մասին: Համաձայն հյուպատոսի տեղեկատվության՝ 4.500 հայեր արքայազն էին Սղերդից դեպի Ռաս-ուլ-Այն, 2.000-ից ավելի՝ Մեզիբեից Դիարբեքի, հայ բնակչությունից ամբողջությամբ գրկվել էին Բիթլիս, Մարդին, Մոսուլ, Սևերեկ, Մալաթիա, Բեսնե և այլ քաղաքներ, մեծ թվով տղամարդիկ, տղաներ և կանայք սպանվել էին, մյուսները սփռվել էին երկրով մեկ և մահանալու էին «հոգնածությունից, սովից և հիվանդություններից»: Դեյր-էզ-Չորի մահանգապետը, որը, ըստ հյուպատոսի, գտնվում էր Հալեպում, հայտնել էր հյուպատոսին, որ Դեյր-էզ-Չոր քաղաքում 15 հազար հայ փախստականներ կան: Քանի որ կառավարությունը որևէ օգնություն չէր տրամադրում այդ մարդկանց, փախստականները ստիպված էին շատ դեպքերում վաճառել իրենց երեխաներին:

Ստորև ներկայացվում են հուլիսի 30-ի դրությամբ Հալեպ ժամանած հայ փախստականների մասին տվյալներ.

Որտեղից	Քանի ընտանիք	Քանի հոգի	Աքսորվել է
Դյորք Յոլ	400	2.109	734
Օջախլի	115	537	137
Յոզերլի	116	593	173
Հասանբեյլի	187	1.118	514
Գառնեն	84	528	34
Կարս Պազար	51	340	-
Հաճն	592	3.988	1.025
Ռումլու	51	388	296
Շար	150	1.112	357

Սիս	231	1.317	-
Բաղչե	13	68	-
Գեմգալա	126	804	-
Գրթաղի	12	104	-
Չեյթուն	5	8	-
Տարպուզ	22	97	-
Ալբիստան	10	44	-
Ընդամենը	2.165	13.255	3.270

Ըստ հյուպատոսի՝ մի քանի օրվա ընթացքում Հալեպ էին ժամանել ևս 2.100 հայեր:

Համաձայն Ջեքսոնի զեկուցագրի՝ Այնթապ, Մարդին, Քիլիս, Անտիոք, Ալեքսանդրեթ, Քեսաբ քաղաքների բոլոր հայերին աքսորելու հրահանգներ էին տրվել: Նրանց ընդհանուր թիվը կազմում էր 60 հազար: Հյուպատոսը համոզված էր, որ նրանք աքսորված հայերի բախտին էին արժանանալու: Հյուպատոսը նշում էր, որ կայսրության ներքին շրջանների առևտրի 90%-ը գտնվում էր հայերի ձեռքում: Այն վայրերում, որտեղից աքսորում էին հայերին, ըստ հյուպատոսի, չէին մնալու ոչ մի աղաղորդ, ձուլորդ, դարբին, դերձակ, ատաղձագործ, կավագործ, ջուլհակ, կոշկակար, ոսկերիչ, դեղագործ, բժիշկ, իրավաբան և առևտրական:

Ըստ Ջեքսոնի՝ շրջանի ամերիկյան կրոնական և կրթական կարևորագույն հաստատությունները գրկվելու էին իրենց դասախոսներից, ուսուցիչներից, բարեգործներից և ուսանողներից, և նույնիսկ որբանոցները դատարկվելու էին հարյուրավոր երեխաներից, ինչը 50 տարիների աշխատանքի արդյունք էր: Կառավարական պաշտոնյաները հարցնում էին ամերիկացիներին, թե ինչով են զբաղվելու ամերիկյան բոլոր հաստատությունները, երբ հայերն այլևս հեռացել են:

Ստեղծված այս իրավիճակի համար բոլորը մեղադրում էին գերմանացիներին եթե ոչ համատարած ջարդի, ապա առնվազն հայ ազգին ոչնչացնելու թույլտվություն տալու համար: Մասնավոր գերմանացի անհատները բացեիբաց արդարացնում էին իրականացվող ծրագիրն ու ամեն ինչի համար մեղադրում հայերին: Իր զեկուցագրում հյուպատոսն օրինակներ էր բերում, թե ինչպես էին իշխանությունները խուզարկել Դիարբեքիրի և Մարդինի ամերիկյան միսիոներների տները,

երկրից մեկնող ամերիկացիների ուղեբեռները:³⁵⁸

Օգոստոսի 4-ին Նյու Յորքի «Wise & Seligsberg» իրավական գրասենյակը գրում է ԱՄՆ-ի պետքարտուղարին այն մասին, որ Նյու Յորքի հայերի կոմիտեն շուրջ հազար դոլարի գումար է հավաքել՝ Թուրքիայի Երզնկա քաղաքի քրիստոնյա հայերի միջև բաշխելու նպատակով: Զանի որ այդ քաղաքի հայ բնակչությունն արտաքսվել էր թուրքերի կողմից, և նրանց գտնվելու վայրը հայտնի չէր, Նյու Յորքի հայերի կոմիտեն խնդրում էր Պետքարտուղարությանը Կոստանդնուպոլսում դեսպանության միջոցով պարզել նրանց գտնվելու վայրն ու տրամադրել այդ գումարը կարիքավոր փախստականներին: Օգոստոսի 9-ին պետքարտուղար Լանսինգը պատասխանում է, որ տվյալ պայմաններում Միացյալ Նահանգների դեսպանը դժվար թե կարողանա պարզել Երզնկայից արտրված հայերի գտնվելու վայրը և կազմակերպել այդ գումարի տրամադրումը նրանց: Այնուամենայնիվ, նա խոստանում է այդ խնդրանքը փոխանցել դեսպանությանը:³⁵⁹

Օգոստոսի 5-ին Մորգենթաուն տեղեկություն էր ստացել Թալեաթից, որ վերջինս պատրաստ է հանդիպելու և քննարկելու հայերին վերաբերող հարցերը, սակայն առանց Շմավոնյանի ներկայության:³⁶⁰ Մի քանի օր անց դեսպանը հանդիպել է Թալեաթին, որն ասել է, որ «նախընտրում է», որ այդուհետ՝ հայերին վերաբերող հարցերը քննարկելու ընթացքում, նրանք հանդիպեն առանց Շմավոնյանի: Թալեաթը ներկայացրել է երիտթուրքերի կողմից հայերի հանդեպ որդեգրած քաղաքականության պատճառները. առաջին՝ հայերը «հարստացել են թուրքերի հաշվին», երկրորդ՝ նրանք ցանկանում են գերիշխել թուրքերի վրա և ստեղծել անկախ պետություն, երրորդ՝ նրանք բացահայտորեն աստարում են երկրի թշնամիներին: Թալեաթը նշում է, որ, ի վերջո, երիտթուրքերը հանգել են մինչև պատերազմի ավարտը «նրանց անգոր դարձնելու անդառնալի որոշմանը»: Մորգենթաուն փորձում է բացատրել այդ գործողության բոլոր բացասական հետևանքները երկրի տնտեսության և առևտրի համար: Թալեաթը

³⁵⁸ St'u NA Microfilm Publications, Microcopy No. 353, Records of the Department of State Relating to Internal Affairs of Turkey, 1910-1929, Roll 44, No. 403, NA/RG 59/867.4016/126:

³⁵⁹ St'u նույն տեղը, Roll 51, NA/RG 59/867.48/164:

³⁶⁰ St'u Library of Congress, Division of Manuscripts, Papers of Henry Morgenthau, Sr., Diary, 1915, August 5:

պատասխանում է նրան, որ որևէ օգուտ չկա, իշխանությունները «արդեն արտաքսել են» հայերի 75%-ին՝ չքողներով որևէ մեկին Բիթլիսում, Վանում ու Էրզրումում, և պատրաստ են գործը հասցնելու իր ավարտին: Նա նշում է, որ կառավարությանը բացարձակ չեն հետաքրքրում արտաքսման տնտեսական հետևանքները: Իշխանությունները կհոգան հայերի մասին Դեյր-էզ-Չորում, սակայն «չեն ուզում նրանց Անատոլիայում»: Մորզենթաուն երեք անգամ հայտարարեց, որ թուրքական իշխանությունները լուրջ սխալ են գործում և փոշմանելու են կատարվածի համար: Թալեաթը պատասխանում է. «Մենք գիտակցում ենք, որ սխալներ ենք գործել, սակայն երբեք չենք ավստում»:³⁶¹ Նա նաև ասում էր, որ ռազմական պարտությունները Սարիղամիշում, Վանում և այլ վայրերում պայմանավորված էին ռուսական բանակի հայ կամավորներով:³⁶²

Օգոստոսի 6-ին Ուրֆայում ամերիկյան հյուպատոսական գործակալ նշանակված պատվելի Լեսլին զեկուցում է Հալեպում հյուպատոս Ջեքսոնին, որ իրավիճակը քաղաքում «շատ վտանգավոր է և օրեցօր վատանում է»: Մահմեդականների և քրիստոնյաների միջև հարաբերությունները չափազանց լարված էին և տվյալ պահին գտնվում էին բռնկման եզրին, երբ քաղաքում որևէ իշխանություն չկար: 14 «կամավորներ» էին ժամանել Ուրֆա Կոստանդնուպոլսից և Դիարբեքիից, որոնք ահաբեկել էին մահանգապետին, ոստիկանության հրամանատարին, ռազմական օրենքը հսկող հանձնաժողովին ու տեղական իշխանությունների մյուս պաշտոնյաներին: Որևէ մեկն այդ ժամանակ քաղաքում չէր կարող պաշտպանել քրիստոնյաներին: Այս «կամավորները» գիշերով ձերբակալում էին քաղաքի ամենահայտնի ու հեղինակավոր հայ քաղաքացիներին և որոշ ժամանակ բանտում պահելուց հետո ուղարկում Դիարբեքի: Վերջին վեց շաբաթների ընթացքում հազարավոր քստրյալ քրիստոնյաներ էին անցնում քաղաքով, որոնք ենթարկվում էին «սոսկալի դաժանությունների»: Աքսորյալները հիմնականում պատմում էին գրեթե նույն պատմությունները. տղամարդկանց սպանել էին քստրի առաջին իսկ օրերին, կանանց և աղջիկներին պարբերաբար թալանում ու բռնաբարում էին: Կանայք և երեխաները հազարներով մահանում էին ճանապարհին քաղ-

³⁶¹ Տե՛ս նույն տեղը, 1915, August 8:

³⁶² Տե՛ս նույն տեղը, 1915, August 17:

ցից, շուրջ 500 կանայք և աղջիկներ հայտնվել էին մահմեդականների տներում, շատերին բռնաբարում էին և կրկին շարտում փողոց: Աղջիկներին բռնաբարում էին փողոցներում՝ արտասահմանցիների աչքի առաջ:

Տեսնելով, թե ինչ է կատարվել արքայալուների հետ, Ուրֆայի հայերը որոշել էին չենթարկվել և պատրաստվել դիմադրության: Ըստ Լեսլիի՝ դիմադրությունը նշանակում էր ջարդ, որին կարող էին ենթարկվել նաև օտարները: Լեսլիին խնդրում էր հյուպատոսին Ուրֆա գործուղել փոխհյուպատոս Էդելմանին, ինչպես նաև Հալեպում Գերմանիայի հյուպատոսի հետ քայլեր ձեռնարկել քաղաքի քրիստոնյա բնակչությանն ու արտասահմանցիներին պաշտպանելու նպատակով: Ուրֆայում, ըստ Լեսլիի, ապրում էին 140 բրիտանացիներ, 157 ֆրանսիացիներ, 112 ռուսներ և 18 մոնտենեգրացիներ, որոնցից 42-ը կանայք էին, իսկ 60-ը՝ երեխաներ:³⁶³

Ի պատասխան Լեսլիի զեկուցագրի՝ Մորզենթաուն տեղեկացնում է պետքարտուղարին, որ Ուրֆա է գործուղել փոխհյուպատոս Էդելմանին, որն իր հետ դրամ էր տարել, սակայն թուրքական իշխանություններն արգելել էին այդ միջոցներն օգտագործել օգնության նպատակով: Ավելին՝ ներքին գործերի նախարարը խնդրել էր դեսպանին, որ Լեսլին և Էդելմանը հեռանան Ուրֆայից, սակայն դեսպանը հրաժարվել էր նախարարի խնդրանքը կատարելուց: Լեսլիի զեկուցագրերի համաձայն՝ թուրքերի վերաբերմունքը Ուրֆայով անցնող հայ տեղահանվածների քարավանների և ընդհանրապես քաղաքում գտնվող քրիստոնյաների նկատմամբ անցնում էր «պարկեշտության» բոլոր սահմանները: Մտահոգվելով ստեղծված իրավիճակով՝ Մորզենթաուն խնդրում էր պատերազմի նախարարին, որ երկրից հեռանալու թույլտվություն տրվի քաղաքում գտնվող 44 բրիտանացի, ֆրանսիացի և ռուս հպատակ կանանց ու երեխաներին: Նա նաև տեղեկացնում էր, որ Բեյրութում էին գտնվում 128 բրիտանացի հրեաներ, որոնք նավի էին սպասում՝ Թուրքիայից հեռանալու համար:³⁶⁴

Օգոստոսի 7-ին Մերսինում հյուպատոս Նաթանը գրում է դեսպա-

³⁶³ Տե՛ս *United States Official Records on the Armenian Genocide, 1915-1917* /Compiled with an introduction by Ara Sarafian/, էջ 198-200 (NA/RG 59/867.4016/139):

³⁶⁴ Տե՛ս NA Microfilm Publications, Microcopy No. 353, Records of the Department of State Relating to Internal Affairs of Turkey, 1910-1929, Roll 43, No. 947, NA/RG 59/867.4016/100:

նին, որ երկու օր առաջ Մերսինի իշխանությունները հրահանգ են ստացել անմիջապես տեղահանելու Մերսինի ողջ հայ բնակչությանը, որի թիվը կազմում էր 1.800 հոգի: Նախորդ օրը շուրջ 300 հոգի արդեն աքտորվել էին դեպի Ադանա: Ըստ հյուպատոսի՝ մնացած հայերը նույնպես պատրաստվում էին քելու քաղաքը: Հայերի շրջանում տիրող սարսափն անկարագրելի էր, քանի որ հազարավոր հայերի կոտորածի մասին լուրերը շրջում էին ամենուրեք: Նրանք շատ ցածր գներով վաճառում էին իրենց իրերն ու ունեցվածքը, քանի որ նրանց թույլատրված էր իրենց հետ տանել մեկ օրվա սնունդ և հագուստի փոքր պարկ: Տեղահանության պատճառը, ըստ պաշտոնական վարկածի, այն էր, որ հայ «հանցագործների» մի խումբ հարձակումներ էր գործել այս նահանգի և Մարաշի սահմանագծի մոտ գտնվող գյուղերի վրա: Հյուպատոսը տեղեկացնում էր, որ Հարունիեում իշխանությունները հրահանգել էին փակել գերմանական որբանոցը, և թեև իշխանությունները հարգանք էին ցուցաբերում ամերիկյան հաստատությունների նկատմամբ, այնուամենայնիվ հնարավոր էր, որ վերջիններս նույնպես կանգնեին փակման եզրին:³⁶⁵

1916 թ. մարտի 31-ին Սվազից ամերիկացի բժիշկ Կլարկը Կոստանդնուպոլսում ԱՄՆ-ի դեսպանությանն է փոխանցել իր զեկուցագիրը՝ 1915 թ. ընթացքում Սվազի հայերի հետ կատարվածի մասին: 1915 թ. ապրիլին Էրզրումից Սվազ վերադառնալու ընթացքում Կլարկը տեղեկացել էր, որ Էնդերեսի և Երզնկայի միջև գտնվող գյուղերում իշխանությունները պահանջել էին հանձնել իրենց մոտ եղած զենքն ու զինամթերքը: Սվազ հասնելուն պես Կլարկը պարզել էր, որ նույնը կատարվում էր քաղաքում: Այդ հանգամանքը սարսափեցրել էր հայերին, որոնք ընկալում էին կատարվածը որպես նոր կոտորածի սկիզբ: Մի քանի շաբաթ անց Երզնկայից ժամանած մարտիկ պատմում էին, որ քաղաքի ողջ հայ բնակչությունը, բացառությամբ երկու տան, ենթարկվել էր արտաքսման: Նույնը կատարվել էր նաև Սվազի մոտակա մի քանի գյուղերի հետ: 1915 թ. հուլիսի առաջին օրերին Երզնկայից Սվազ ժամանած գերմանուհի Էլվերսեն ու նորվեգուհի Վեդելը, որոնք աշխատում էին գերմանական հիվանդանոցում, պատմում էին, որ

³⁶⁵ Stü NA Microfilm Publications, Microcopy No. 353, Records of the Department of State Relating to Internal Affairs of Turkey, 1910-1929, Roll 43, No. 467, NA/RG 59/867.4016/124:

նրանց վտարել էին քաղաքից այն բանի համար, որ նրանք բողոքել էին կանանց և երեխաների նկատմամբ կիրառվող մեթոդների դեմ: Նրանք փորձել էին իրենց հետ տասը փոքր հայ տղաներ դուրս բերել, սակայն կառավարությունը թույլ չէր տվել: Ճանապարհին նրանք մեծ թվով դիակներ էին տեսել:

Կլարկը գրում էր, որ մշտապես տեղեկություններ էր ստանում այն մասին, որ քաղաքում ձերբակալում և բանտ էին նետում հայ տղամարդկանց: Գլխերները նրանց դուրս էին բերում սայլերով, սպանում և դիակներն այրում: Այնուհետև սայլերը հետ էին գալիս՝ բեռնված սպանված մարդկանց հագուստներով: Սկսած 1915 թ. հունիսի 16-ից՝ քաղաքի տղամարդկանց մի մասին՝ զուցե հազար հոգու, առանց նախազգուշացման ձերբակալել էին: Նրանց մեջ էր նաև ամերիկյան քոլեջի ուսուցիչներից մեկը: Մի քանի օր անց ձերբակալեցին ևս այդքան հայ տղամարդկանց: 1915 թ. հուլիսի 2-ին հայտարարվեց, որ բոլոր հայերը, առանց բացառության, պետք է արտրվեն քաղաքից հուլիսի 5-ին: Ըստ Կլարկի՝ իշխանություններն արտրեցին քաղաքի շուրջ 200 տների բնակիչների և 3-4 ոստիկանների ուղեկցությամբ քշեցին դեպի Մալաթիա տանող ճանապարհը:

Կլարկի խնդրանքի համաձայն՝ նահանգապետը հատուկ թույլտվություն էր տվել, որ բողոքականները, ինչպես նաև քոլեջի աշակերտներն ու ուսուցիչներն արտրվեին դեպի Մալաթիա միասին տիկին Մերի Գրեֆամի³⁶⁶ ուղեկցությամբ:³⁶⁷ Հայերն իրենց մոտ պահել էին դրան և զարդեղեն: Աքսորյալներին ուղեկցող տիկին Գրեֆամը

³⁶⁶ 1901 թ. օգոստոսին Վաշինգտոնի ազգային տաճարի օրիորդաց դպրոցի ուսուցչուհի **Մերի Լուիզ Գրեֆամը** (1871-1921) մեկնեց Բոստոն՝ Օսմանյան կայսրությունում որպես Ամերիկյան խորհրդի կրթական միսիոներ աշխատելու նպատակով: Նա նշանակվեց կանանց կրթության կազմակերպման ղեկավար Սվազում (Մեբաստիայում), որտեղ և անցկացրեց իր կյանքի քսան տարիները: Հայ բնակչության դեմ սկսված գործողությունների ընթացքում նա որոշեց շնչկնել ԱՄՆ և մնալ Սվազում՝ շարունակելով իր աշխատանքը: Մերի Գրեֆամի գործունեությունը հետագայում զնահատվել է որպես հերոսություն ինչպես միսիոներների, այնպես էլ պետական պաշտոնյաների, մասնավորապես՝ Հենրի Մորգենթաուի կողմից (Տե՛ս **Harper Susan Billington, Mary Louise Graffam: Witness to Genocide // In: America and the Armenian Genocide of 1915 / Edited by Jay Winter, Cambridge, Cambridge University Press, 2003, էջ 214-215):**

³⁶⁷ Տե՛ս *Unites States Official Records on the Armenian Genocide, 1915-1917 /Compiled with an introduction by Ara Sarafian/, էջ 509-510. NA/RG 59/867.4016/288:*

Մալաթիայից վերադառնալուն պես սկսեց զբաղվել տարբեր տեղերից Սվազ ժամանած հիվանդ հայերին և բանակից քստրի ենթարկված հայ զինվորներին օգնություն հասցնելու հարցով: Ըստ Կլարկի՝ Սվազում բնակվող շուրջ 25 հազար հայերից³⁶⁸ մնացել էին հազարից պակաս հայեր, որոնք հիմնականում իսլամ էին ընդունել: Չորս հազար հայ տղամարդիկ շարունակում էին աշխատել բանակի շինարարական ջոկատներում, իսկ նրանց ընտանիքներն քստրվել էին:³⁶⁹

Սվազում կատարվածի մասին Մերի Գրեֆամի վկայությունները չէին տարբերվում Թուրքիայի այլ բնակավայրերում տեղի ունեցած դեպքերի հաջորդականության նկարագրությունից՝ զենքը հանձնելու կոչ, այնուհետև՝ տղամարդկանց բանտարկություններ և շրջակա գյուղերում հայ բնակչության կոտորածների մասին լուրերի տարածում, համատարած քստրի մասին հրամաններ և մեկնումի հետ կապված քառասյին իրավիճակ, տրանսպորտային խուճապ և մահ անապատում: Գրեֆամն իր վկայություններում նշում է, որ երբ Սվազի հայերին հրամայեցին հանձնել իրենց մոտ եղած զենքը, կառավարական գրասենյակը հրավիրեց մի լուսանկարչի, որը պետք է լուսանկարեր առգրավված զենքը, սակայն քանի որ այն շատ փոքր քանակի էր, նրան խնդրեցին գալ նաև հաջորդ օրը: Լուսանկարիչը վկայել էր, որ իշխանությունները թուրքական զինամթերք էին ավելացրել՝ հայերի դեմ վկայություններ սարքելու նպատակով: Հիմնվելով այդ կեղծ լուսանկարների վրա՝ իշխանությունները սկսեցին բանտ նետել հայ տղամարդկանց, մասնավորապես՝ առևտրականներին, հարուստ մարդկանց և միսիոներական առաքելությունների ուսուցիչներին: Գրեֆամն ամեն ինչ արեց հայերին օգնելու համար. համոզել էր ոստիկանության ղեկավարին և այցելել նրանց բանտում, հանդիպել էր նահանգապետին և բանակի հրամանատարին՝ քստրը կանխելու նպատակով և այլն:³⁷⁰

³⁶⁸ Մինչև պատերազմի սկիզբը Սվազի բնակչությունը կազմում էր 75 հազար, որից 30 հազարը հայեր էին, իսկ մնացածը՝ թուրքեր, ղզրաշներ, չերքեզներ, քրդեր, քաղղեացիներ, աֆշարներ, չեչեններ և հույներ: Թուրք բնակչությունը լավ ներկայացված էր պետական ծառայության, իսկ հայերը՝ գործարարության, արհեստների և արդյունաբերության մեջ (Տե՛ս **Harper Susan Billington**, նշվ. աշխ., էջ 214-215):

³⁶⁹ Տե՛ս *United States Official Records on the Armenian Genocide, 1915-1917* /Compiled with an introduction by Ara Sarafian/, էջ 512-513 (NA/RG 59/867.4016/288):

³⁷⁰ Տե՛ս **Harper Susan Billington**, նշվ. աշխ., էջ 223-224:

Օգոստոսի 7-ին Մալաթիայից ուղարկված նամակում Գրեֆանը նկարագրում էր բողոքական հայերի հետ իր «ճանփորդությունը» Սվազից: Որոշ ժամանակ անց նա հեռագիր էր ստացել Սվազի նահանգապետից առ այն, որ իրեն արգելված է շարունակել ճանապարհը հայ աքսորյալների հետ: Նրա կարծիքով՝ դա շատ «մեծ սխալ էր» կառավարության կողմից, քանի որ հայերի շրջանում այնքան «կեղծ տեղեկատվություն էր» շրջում, որ անկախ ականատեսի վկայությունը կարող էր «արժեքավոր» լինել, եթե նա շարունակեր ճանապարհը հայերի հետ: Իսկ այժմ, ըստ Գրեֆամի, այլևս որևէ բան անհնար էր հերքել:

Երբ խումբը պատրաստվում էր մեկնելու Սվազից, կառավարությունը տրամադրեց 45 եզներով լծված սայլեր՝ 80 տներում բնակվող բողոքական հայերի համար: Ամերիկյան քոլեջի աշակերտների և ուսուցիչների համար սայլեր չէին տրամադրվել: Այդ պատճառով միսիոներները գնեցին հավելյալ տասը եզան սայլեր, երկու արաբա և հինգ կամ վեց ավանակներ: Ընդհանուր խմբի մաս էին կազմում քոլեջի բոլոր ուսուցիչները, քսան տղա-աշակերտ քոլեջից և երեսուն աղջկա-աշակերտ օրիորդաց դպրոցից: Քանի որ Սվազի հայերը որևէ հեղափոխական գործունեության մեջ ներգրավված չէին, նահանգապետը թույլ էր տվել, որ տղամարդիկ ճանապարհ ընկնեն իրենց ընտանիքների հետ: Առաջին գիշերն անցել էր առանց անախորժությունների, սակայն երկրորդի ժամանակ ոստիկանները սկսել էին բանակցել հերթական գյուղի բնակիչների հետ և թույլ էին տվել նրանց թալանել հայերին: Դրա հետևանքով գյուղացիները գողացել էին աքսորյալների ծածկոցներն ու ավանակներին: Շատերը կովեր էին տանում իրենց հետ, բայց շուտով մեկ առ մեկ անասուններն անհետացան: Կանգալում տղամարդկանց բաժանեցին իրենց ընտանիքներից, սակայն Գրեֆամը պայմանավորվեց կայմակամի հետ, և նրանց կրկին թույլ տվեցին միանալ ընտանիքներին: Որոշ հայեր իսլամ ընդունեցին և մնացին գյուղում: Հասան Չելբի գյուղում կայմակամն ու ոստիկանները կրկին բաժանեցին տղամարդկանց, վերցրին նրանց մոտ եղած դրամը, բանտարկեցին, որից հետո նրանց մասին այլևս որևէ տեղեկություն այդպես էլ չստացվեց: Տղամարդկանց հեռանալուց հետո թուրք «արաբաջիները» սկսեցին թալանել կանանց՝ ասելով. «Ձեզ բուլոբին նետելու են Թոխմա գետը, այնպես որ եթե դուք մեզ հանձնեք

ձեր իրերը, մենք կկանգնենք ձեր կողքին և կփորձենք ձեզ պաշտպանել»։ Հասնելով գետին՝ Գրեֆանը սկսեց տեսնել բազմաթիվ հայերի դիակներ ճանապարհին. քրդերը թալանում էին դիակներն ու դեռևս չմահացած հայերին։ Մի այլ վայրում քրդերը, քարեր նետելով հայերի վրա, փորձում էին նրանց նետել գետը։ Ըստ Գրեֆամի՝ քուլեջի աղջիկները հերոսաբար օգնում էին մահացող կանանց, պահում և խնամում երեխաներին։ Շուտով ոստիկանությանը սկսեց դուր չգալ հայերին օգնելու Գրեֆամի գործունեությունը, և նրանք պահանջեցին, որ միսիոներուհին թողնի խումբն ու մեկնի Մալաթիա։ Սկզբում նա փորձեց դիմադրել՝ հայտարարելով, որ նրան թույլատրված է մնալ հայերի հետ, սակայն ի վերջո ստիպված եղավ ենթարկվել։³⁷¹

Վերադարձի ճանապարհին նա նոր վկայություններ է հավաքում հայերի սպանությունների մասին։ Ըստ Գրեֆամի՝ աքսորյալների քարավանների ճանապարհին կային նախօրոք որոշված վայրեր, որտեղ հայերին պետք է կոտորեին։ Տեղի ունեցած սպանությունները պետք է գրանցվեին կառավարական ժամանակավոր կետերում։ Հանցագործություններին մասնակցած քրդերը ներկայանում էին այդ կետեր՝ սպանությունները գրանցելու և համապատասխան գումար ստանալու համար։³⁷²

Սվազ վերադառնալուն պես իշխանությունները Գրեֆամի առջև պայման էին դրել՝ կա՛ն նա պետք է մնար քաղաքում և խնամեր որբերին շվեյցարական որբանոցում, կա՛ն նրանց նույնպես պետք է աքսորեին։ Մերի Գրեֆամի՝ Սվազի հիմնական արտաքսումների սկսվելուն պես Միացյալ Նահանգներ մեկնած քրոջ և փեսայի համոզմամբ՝ իշխանությունները չէին ցանկանում, որ նա վերադառնար ԱՄՆ և պատմեր իր տեսած դաժանությունների մասին։ Գրեֆանը մնաց Սվազում և շարունակեց աշխատանքը մի քանի հարյուր որբերի հետ։ Միաժամանակ նա այցելելում էր քաղաքի բանտ, որտեղ մնացել էին շուրջ երկու հազար հայ տղամարդիկ։ Միսիոներուհին վկայում, որ զրեթե ամեն գիշեր 100-200 հայերի տանում էին քաղաքից դուրս, ստիպում

³⁷¹ Տե՛ս *Unites States Official Records on the Armenian Genocide, 1915-1917* /Compiled with an introduction by Ara Sarafian/, էջ 240-244 (NA/RG 59/867.4016/187); **Harper Susan Billington**, նշվ. աշխ., էջ 228-233; **Bryce James Viscount**, *The Treatment of Armenians in the Ottoman Empire: Documented Presented to Viscount Grey of Falladen*, Frankfurt, Textor Verlag, 2008, էջ 307:

³⁷² Տե՛ս **Harper Susan Billington**, նշվ. աշխ., էջ 235:

փոսեր փորել և, հարվածելով գլխներին, սպանում նրանց ու տեղում քաղում:

Գրեֆամն օգնում էր նաև դեռևս չսպանված և քաղաքի բանտում հայտնված հայ զինվորներին: Նա համոզել էր Գերմանիայի հյուպատոսին հեռագրել այդ մասին Կոստանդնուպոլիս, որտեղից պատասխան էր եկել, որ նրանց տեղափոխելու են մի այլ վայր, որտեղ զգացվում էր նրանց կարիքը: Սակայն Կոստանդնուպոլիսից ժամանած մի գերմանացուց նա տեղեկություն ստացավ այն մասին, որ շուրջ երկու հազար հայ զինվորի դուրս էին բերել քաղաքից և սպանել ճանապարհին: Նրանցից ոմանք իսլամ էին ընդունել, իսկ ոմանք՝ քաքնվել սարերում և քարանձավներում:³⁷³

Ըստ Սյուզան Հարպերի, թեև Մերի Գրեֆամի ողջ գործունեությունը դեռևս ուսումնասիրված չէ, սակայն իր հերոսական և անձնվեր գործողությունների շնորհիվ կարողացել է փրկել հազարավոր հայերի կյանքեր Սվազում ինչպես պատերազմի ընթացքում, այնպես էլ հետագայում: Պատերազմից հետո Մերի Գրեֆամը ստանձնեց «Մերձավոր Արևելքի օգնություն» կազմակերպության Սվազի մասնաճյուղի ղեկավարությունը:³⁷⁴

Միացյալ Նահանգների դեսպանությունը շարունակում էր Պետքարտուղարությանը փոխանցել հայկական կոտորածների և տեղահանությունների մասին այլ աղբյուրներից ստացված տեղեկություններ: Օրինակ՝ օգոստոսի 10-ին Մորգենթաուն պետքարտուղարին է ներկայացրել Բայբուրդում ապրող հայ այրի Վիկտորիա Բարութչիբաշյանի վկայությունները, ինչպես նաև Սոֆիայի Գաշնակցության կոմիտեից ստացված զեկուցագրերը՝ կայսրության տարբեր քաղաքներում տեղի ունեցող իրադարձությունների մասին:³⁷⁵

Օգոստոսի 11-ին պետքարտուղարին հասցեագրված հեռագրում Մորգենթաուն գրում էր, որ «թուրքական հակահայկական գործողություններն անդադար շարունակվում են»: Համաձայն ԱՄՆ-ի հյուպատոսներից և այլ աղբյուրներից ստացվող տեղեկությունների՝ նման քաղաքականության զոհ էին դառնում «այդ ազգության մեծ թվով

³⁷³ Տե՛ս նույն տեղը, էջ 236-237:

³⁷⁴ Տե՛ս նույն տեղը, էջ 238:

³⁷⁵ Տե՛ս *United States Official Records on the Armenian Genocide, 1915-1917* /Compiled with an introduction by Ara Sarafian/, էջ 156-163 (NA/RG 59/867.4016/122):

անմեղ և անօգնական մարդիկ»: Հայկական բնակչությունն արագորեն վերանում էր Ադաբազարից և Իզմիթից: Կոստանդնուպոլսից 50 միլիոն հեռավորության վրա գտնվող Պարդիզակի հայերին նույնպես ծրագրում էին տեղահանել, սակայն իշխանությունները երկու շաբաթով հետաձգել էին ծրագրի իրականացումը: Դեսպանը նշում էր, որ եթե որևէ բան չարվի «այս սուկալի ծրագիրը» դադարեցնելու ուղղությամբ, Պարդիզակի հայ բնակչությունը նույնպես կտեղահանվի և կենթարկվի կոտորածի կամ դանդաղ սովամահության, եթե, իհարկե, չընդունի մահմեդականություն: Ըստ Մորգենթաուի՝ ներքին գործերի նախարարը խոստացել էր դեսպանին թույլ տալ Կոստանդնուպոլսի հայությանը մեկնել երկրից այն պայմանով, որ նրանք այլևս չեն վերադառնա: Միաժամանակ ներքին գործերի նախարարն ասում էր դեսպանին, որ շատ լավ հասկանում է, որ «ներկայիս վերաբերմունքից հետո ոչ մի հայ չի կարող բարեկամաբար վերաբերվել թուրքական կառավարությանը, և ակնարկում, որ խիստ միջոցներ կձեռնարկվեն Կոստանդնուպոլսի բոլոր հայերի նկատմամբ, եթե կառավարության դեմ հարձակման որևէ փորձ կատարվի»: Այնուհետև դեսպանը նշում էր, որ Գերմանիայի և Ավստրո-Հունգարիայի դեսպանները խոստացել էին օգտագործել թուրքական կառավարության վրա իրենց ունեցած ազդեցությունը, սակայն կասկածում էր, որ նրանք որևէ կերպ կարող են օգտակար լինել, եթե իրենց կառավարությունները չպահանջեն դադարեցնել հազարավոր հայերի նկատմամբ կիրառվող քաղաքականությունը:

Ըստ Մորգենթաուի՝ Թուրքիայի տարբեր հաստատվածներում շարունակում էին ապրել զգալի թվով միսիոներներ, սակայն թեև իշխանությունների կողմից նրանց արգելված էր որևէ օգնություն ցուցաբերել գոհերին, նրանց վտանգ չէր սպառնում, և դեսպանությունն ամեն ինչ անում էր նրանց անվտանգությունն ապահովելու համար: Դեսպանի կարծիքով՝ միսիոներները պետք է շարունակեին մնալ իրենց տեղերում, մինչև որ հնարավորություն ստեղծվեր սկսելու օգնության աշխատանքները:

Մորգենթաուն նշում էր նաև, որ «փր համար շատ դժվար է գալվածություն ցուցաբերել և որևէ բան չանել՝ կանգնեցնելու ազգի ոչնչացման փորձը», սակայն «հասկանում է, որ դեսպան է այստեղ և պետք է հաշտվի այլ երկրի ներքին գործերին չմիջամտելու սկզբունքի հետ»,

եթե, իհարկե, ուղիղ հանձնարարություն չստանա Պետքարտուղարությունից՝ կառավարության անունից բողոք ներկայացնելու թուրքական իշխանություններին:

Մորզենթաուն այդ կապակցությամբ երեք առաջարկ էր ներկայացրել Պետքարտուղարության քննարկմանը: Համաձայն առաջին առաջարկի՝ «Միացյալ Նահանգների կառավարությունը մարդկության անունից պետք է շտապ խնդրի թուրքական կառավարությանը անմիջապես դադարեցնել ներկայիս ծրագիրն ու թույլ տալ ողջ մնացածներին վերադառնալ իրենց տները, եթե ոչ պատերազմական գոտիները, ապա այնտեղ, որտեղ նրանք կստանան պատշաճ վերաբերմունք»: Մորզենթաունի երկրորդ առաջարկի համաձայն, եթե տվյալ պահի հարաբերությունները թույլ էին տալիս, Միացյալ Նահանգները պետք է պաշտոնապես դիմեր Գերմանիայի կայսրին, որպեսզի վերջինս պահանջեր իր դաշնակից Թուրքիայից «կանգնեցնել քրիստոնյա ազգի ոչնչացումը»: Գեսպանն առաջարկում էր նաև պաշտոնապես պահանջել թուրքական իշխանություններից առանց հապաղելու ամերիկացիներին տրամադրել բոլոր հնարավորությունները՝ այցելելու համապատասխան շրջաններ և ֆինանսական ու այլ տեսակի օգնություն ցուցաբերելու «կառավարության կազմակերպած տեղահանություններից տուժած հայերին»: Գեսպանը հավատացած էր, որ երրորդ առաջարկը կարող էր ամենաընդունելին լինել:³⁷⁶

Պետքարտուղարին ուղղված օգոստոսի 12-ի հեռագրում դեսպան Մորզենթաուն տեղեկացնում էր, որ Գերմանիայի դեսպանը խիստ բողոք էր ներկայացրել Բարձր Դռանը: Գերմանիայի դեսպանը նաև հայտնել էր Մորզենթաունին, որ գերմանական կառավարությունը «լրջորեն ժխտում է թուրքերի կողմից ներքին շրջաններում արվող հայտարարություններն այն մասին, որ հակահայկական ձեռնարկումների գաղափարը ծնունդ է առել գերմանացիներից»:³⁷⁷ Ի պատասխան Մորզենթաունի հեռագրի՝ Պետքարտուղարության մերձավորարևելյան գործերի բաժինը գրում էր, որ մինչև դեսպանի առաջարկներին անդրադառնալը հարկավոր է սպասել և տեսնել, թե ինչ

³⁷⁶ Տե՛ս US Department of State. *Papers Relating to the Foreign Relations of the United States. 1915, Supplement, The World War*, էջ 985- 987:

³⁷⁷ Տե՛ս NA Microfilm Publications, Microcopy No. 353, Records of the Department of State Relating to Internal Affairs of Turkey, 1910-1929, Roll 43, No. 929, NA/RG 59/867.4016/91:

արդյունք է տալու Գերմանիայի դեսպանի բողոքը:³⁷⁸ Նույն օրը դեսպանությանն ուղղված հեռագրում պետքարտուղար Լանսինգը հարցնում էր, թե Գերմանիայի դեսպանի բողոքի հետևանքով բարելավում արձանագրվե՞լ է, թե՞ ոչ:³⁷⁹ Օգոստոսի 20-ին դեսպան Մորգենթաուն գեկուցում է պետքարտուղարին, որ Գերմանիայի դեսպանի բողոքը որևէ կերպ չի բարելավել կայսրության շրջաններում տիրող իրավիճակը: Նման բողոք էր ներկայացրել թուրքական կառավարությանը նաև Բուլղարիան:³⁸⁰

Օգոստոսի 14-ին Մարաշում գործող ամերիկյան առաքելության միսիոներ Ջեյմս Լայմանը տեղեկացնում է հյուպատոս Ջեքսոնին առաքելության՝ հայերի տեղահանությանը առնչվող խնդիրների մասին: Համաձայն Լայմանի՝ Մարաշում հայերի տեղահանությունը վերաբերելու էր նաև ամերիկյան որբանոցում գտնվող երեխաներին, քանի որ, ըստ հրահանգի, նրանք նույնպես աքսորվելու էին: Խնդիրը բարդանում էր նաև այն հանգամանքով, որ թեև որբանոցը համարվում էր ամերիկյան առաքելության սեփականությունը, բայց գրանցված էր Բրիտանիայի քաղաքացի, դոկտոր Մակկալլամի անունով: Մյուս խնդիրն այն էր, ըստ Լայմանի, որ եթե բոլոր հայերը մեկնեին Մարաշից, առաքելության աշխատանքը իմաստագրկվելու էր, և միսիոներները ստիպված էին լինելու փակել Մարաշում իրենց առաքելությունը, որն ուներ 50 հազար դուլարի արժողության սեփականություն:³⁸¹

Օգոստոսի 15-ին Կոնիայի ամերիկյան հիվանդանոցում աշխատող Ուիլյամ Դոդըրը գեկուցում է դեսպան Մորգենթաունին հայերի տեղահանության հետևանքով քաղաքում ստեղծված իրավիճակի մասին: Մեկ շաբաթ առաջ Ադաբազարից և շրջանից աքսորված հարյուրավոր հայերը սկսեցին զնացքներով ժամանել Կոնիա: Նրանց ստիպել էին մեկ հոգու համար վճարել 180 պիաստր՝ ապրանքատար վագոններով չորսից հինգ օր ճամփորդելու համար: Ամեն վագոնում տեղավորել էին 40-45 հայ աքսորյալների՝ տղամարդկանց, կանանց և երեխաների: Շատերը հիվանդ էին, սոված, կային մահացածներ,

³⁷⁸ Տե՛ս *Unites States Official Records on the Armenian Genocide, 1915-1917* /Compiled with an introduction by Ara Sarafian/, էջ 80 (NA/RG59/867.4016/91; NA/RG 59/867.4016/130):

³⁷⁹ Տե՛ս նույն տեղը, էջ 82 (NA/RG 59/867.4016/91):

³⁸⁰ Տե՛ս նույն տեղը, էջ 124 (NA/RG59/867.4016/101):

³⁸¹ Տե՛ս նույն տեղը, էջ 236-237 (NA/RG59/867.4016/186):

նորածին երեխաներ, ճանապարհին որոշ մայրեր նետել էին երեխաներին զնացքից: Ոմանց ժամանակավորապես տեղավորեցին մեդիտեսներում և կայարանի կողքին գտնվող դաշտում: Գնացքների ժամանելուն պես կայարանը վերածվում էր մեծ շուկայի, որտեղ հայերը փորձում էին վաճառել իրենց հետ բերած իրերը՝ հետագա «ճամփորդության» համար սնունդ հայթայթելու նպատակով: Նրանց ասվել էր, որ վերջին կանգառը Կոնիան է լինելու, սակայն բոլորն արդեն գիտակցում էին, որ իրենց «անապատ» են տանելու: Շատ տղամարդիկ իրենց դրամը ծախսել էին կանանց և երեխաներին զնացքով տեղափոխելու համար, իսկ իրենք ճանապարհ էին ընկել ոտքով: Թուրք կանայք հիմնական գնորդներն էին, սակայն վճարում էին յուրաքանչյուր ապրանքի զնի տասներորդ մասը: Ի վերջո, ամեն ինչ վերածվում էր թալանի: Դուրդը համոզված նշում էր, որ կառավարության բոլոր հայտարարություններն այն մասին, որ արքայազներն ապահովվելու էին սնունդով, բացարձակ սուտ էին. ովքեր դրամ ունեին, կարող էին սնունդ գնել, ովքեր էլ չունեին, դատապարտված էին սովի: Գիշերով թուրքերն ու ոստիկանները հայ աղջիկներ էին բռնաբարել: Ըստ Դուդի՝ անցյալ շաբաթ օրը հայտարարվել էր, որ մի քանի մեդիտեսներում տեղավորված շուրջ երկու հազար հայերը պետք է ճանապարհ ընկնեն գիշերով:

Այնուհետև Դուդը գրում էր, որ երկուշաբթի նոր արքայազներ էին ժամանել Կոնիա Իզմիրից: Հայերի հիմնական վախն իրենց աղջիկների բախտն էր: Որոշ հայեր աղաչում էին և դիմում Դուդին՝ հիվանդանոց ընդունելու իրենց աղջիկներին, հիվանդ և ծեր ծնողներին: Սկզբում ամերիկացիները մի քանի աղջիկ վերցրին որպես բուժքույրեր, այդ թվում՝ Իզմիրից պատվելի Հովիվյանի աղջիկներին: Վերջինս իր կնոջ և մյուս երկու աղջիկների հետ մեկնել էր հերթական քարավանի հետ: Մի գերմանական ընտանիք վերցրեց բժիշկ Աթանասյանի աղջկան, իսկ մի քանի հույն ընտանիքներ որդեգրեցին մի քանի աղջիկների և տղաների: Դուդը գրում էր, որ հնարավոր է, որ, տեղեկանալով, թե ինչ է կատարվում, տեղական իշխանությունները պահանջեցին, որ նման բոլոր երեխաներին հանձնեն միմիայն թուրք ընտանիքներին, և իրենք ստիպված էին այլևս հայերից երեխաներ չվերցնել:

Դուդը գեկուցում էր, որ Կոնիայի թուրքերն իրեն ասում էին, որ «հայերը պետք է մահանան, և այդ նպատակով ենք մենք նրանց դե-

պի ցած ուղարկում»։ Քաղաքի թուրք բնակչության մի մասը դեմ էր արտահայտվում նման միջոցների կիրառմանը, սակայն կառավարության քարոզչությունը հեշտությամբ փոխում էր իրավիճակը. հողվածներ էին հրապարակվում այն մասին, որ հայերը դավաճան էին, հեղափոխական, որ նրանք Վանում 60 հազար թուրքերի կոտորած էին կազմակերպել։ Դուրդը նշում էր, որ նույն քարոզչությունն իշխանությունն իրականացնում էր քսան տարի առաջ՝ համիդյան ջարդերի ընթացքում։ Դուրդի համոզմամբ՝ երկրում կատարվող «քողարկված կոտորած էր և շատ ավելի դժոխսային տեսակի, շատ ավելի սառնարյուն և հաշվարկված»։³⁸²

Օգոստոսի 16-ին Դուրդը տեղեկացնում էր դեսպանին, որ քաղաքում հայտարարվել է այն մասին, որ Կոնիայի հայերը պետք է քստրվեն օգոստոսի 23-ին։ Նա դիմում էր դեսպանին՝ քայլեր ձեռնարկելու՝ դադարեցնելու համար «այս սոսկալի հանցագործությունը»։ Ըստ իր տեղեկատվության՝ Պոզանթիի և Հալեպի միջև ընկած ճանապարհին շուրջ 50 հազար քստրյալներ կային, որոնք դարձել էին ավազակների և թալանչիների գոհր. ճանապարհին ամենուրեք հայերի դիակներ կային։³⁸³

Օգոստոսի 18-ին դեսպան Մորզենթաուն զեկուցում է պետքարտուղարին Օսմանյան կայրության ներքին գործերի նախարարի հետ իր հանդիպման մասին։ Նախարարը տեղեկացրել էր դեսպանին, որ երկրի շրջաններ ուղարկված հրահանգներում հատուկ նշվում է, որ տեղահանությունների չեն ենթարկվելու բոլոր բողոքական և կաթոլիկ հայերը։ Թեև մեծ թվով բողոքական և կաթոլիկ հայեր արդեն իսկ ենթարկվել էին տեղահանության, և շատերը սպանվել էին, սակայն եթե կառավարության այդ հրահանգները պատշաճ կերպով իրագործվեին, ըստ դեսպանի, հնարավոր կլիներ պահպանել ամերիկյան առաքելությունների հետ առնչություն ունեցող շատ հայերի կյանքեր։ Ըստ դեսպանի՝ բողոքական և կաթոլիկ հայերը կազմում էին Օսմանյան կայսրության հայ բնակչության տասը տոկոսը։ Մորզենթաուն խնդրել էր ներքին գործերի նախարարին տեղահանության չենթարկել նաև ամերիկյան հաստատությունների հետ առնչություն ունեցող

³⁸² Տե՛ս նույն տեղը, էջ 192-194 (NA/RG 59/867.4016/137):

³⁸³ Տե՛ս NA Microfilm Publications, Microcopy No. 353, Records of the Department of State Relating to Internal Affairs of Turkey, 1910-1929, Roll 44, NA/RG 59/867.4016/137:

հայ դասախոսներին, ուսուցիչներին, ուսանողներին, հիվանդներին, բուժքույրերին և այլոց: Թե՛ պատերազմի, թե՛ ներքին գործերի նախարարները, ըստ դեսպանի, հակված էին հարգելու այդ խնդրանքը: Տեղահանության չէին ենթարկվելու, ըստ դեսպանի, նաև ամերիկյան հյուպատոսություններում աշխատող հայ ծառայողները:³⁸⁴

Օգոստոսի 19-ին Հալեպում հյուպատոս Ջեքսոնը զեկուցում է դեսպան Մորգենթաուին հայերի տեղահանությունների նոր մանրամասների մասին: Ըստ հյուպատոսի՝ Այնթապ քաղաքն արագորեն հայաթափվում էր: Հայ բնակիչներից մի քանի հազար աքսորյալներ անցել էին Հալեպով դեպի հարավ: Այնթապի և Քիլիսի միջև ընկած ճանապարհին թալանի նպատակով մի քանի քարավանների վրա հարձակումներ էին տեղի ունեցել: Հայերի ողջ ունեցվածքը թալանվել էր մոտակա գյուղերի մահմեդական բնակիչների կողմից, չնայած քարավաններին կառավարության կողմից տրամադրված ոստիկաններ էին «հսկում»: Այնթապի հայ համայնքը կայսրության այս հատվածի ամենահարուստ զանգվածն էր. քաղաքի առևտրականների մեծ մասը հայեր էր: Գաղթի ճանապարհին նրանց ողջ ունեցվածքն անմիջապես սկսել էին թալանել: Ըստ հյուպատոսի՝ «սա հսկայական կողոպուտի մի ծրագիր էր, ինչպես նաև ազգի վերացման ուղղությամբ վերջնական հարված»: Օգոստոսի 1-ից սկսած՝ Բաղդադի երկաթգծով հայերով բեռնված ինը գնացք էր ժամանել Հալեպ՝ յուրաքանչյուրը 15 վագոններից կազմված: Ամեն մի վագոնում 34-40 մարդ կար: Ըստ հյուպատոսի՝ ոտքով ժամանած և գնացքներով Հալեպ հասած հայերի թիվը միասին կազմում էր շուրջ 20 հազար: Գնացքներն այնուհետև փոխել էին Գամասկոս-Համա գծի վրա, որոնք շարունակել էին իրենց ճանապարհը դեպի հարավ՝ եղած «մարդկային բեռն» արարների և դռուզների միջև բաժանելու նպատակով: Փոքր թվով հայերի թույլ էին տվել ժամանակավորապես մնալ Հալեպում: Համաձայն ճանապարհորդներից ստացված տեղեկությունների՝ Ուրֆայից դեպի Արաբվուճար ճանապարհին, որը կազմում էր ընդամենը 25 մղոն, 500 հայի դիակ կար:

Օգոստոսի 17-ին, ըստ Ջեքսոնի, ներքին գործերի նախարարից հրահանգ էր եկել, որ հայ բողոքականները պետք է մնային իրենց

³⁸⁴ St'u NA Microfilm Publications, Microcopy No. 353, Records of the Department of State Relating to Internal Affairs of Turkey, 1910-1929, Roll 43, No. 940, NA/RG 59/867.4016/99:

տներում, սակայն մյուս օրը նոր հրահանգ էր ստացվել, համաձայն որի՝ բոլոր հայերը, առանց բացառության, պետք է արտարվեին: Այս լուրը սարսափ էր առաջացրել հայ բողոքականների և կաթոլիկների շրջանում: Ըստ հյուպատոսի՝ Մարդինից կառավարությունն արտարել էր մեծ թվով սիրիացիների, կաթոլիկների, խալդեացիների և բողոքականների: Խոսակցություններ կային, որ հետագայում բացառություն չէին կազմելու մյուս քրիստոնյաներն ու նույնիսկ հրեաները: Քաղաքում ամենուրեք հնչում էր «Թուրքիան մահմեդականների համար» կարգախոսը: Ծովափնյա շրջանից լուրեր էին հասնում այն մասին, որ 10 հազար հայեր, որոնք պատասպարվել էին Մուսա լեռան վրա, կատաղի դիմադրություն էին կազմակերպել թուրքերի դեմ՝ սպասելով, որ ֆրանսիական և բրիտանական նավերը կգան իրենց օգնության: Ըստ հյուպատոսի՝ սա հայերի դիմադրության ամենահաջողված փորձն էր:

Համաձայն որոշ հավաստի աղբյուրների՝ մինչև օգոստոսի 15-ն ընկած ժամանակահատվածում մահացել էր 500 հազար հայ: Տեղահանություններն ու կոտորածներն ընդգկել էին հետևյալ նահանգները՝ Վան, Էրզրում, Բիթլիս, Դիարբեքիր, Մամուրեթ-ուլ-Ազիզ, Անգորա և Սվազ: Այս նահանգները գրեթե ամբողջությամբ զրկվել էին հայերից: Ըստ Ջեքսոնի՝ հնարավոր էր, որ շուտով հերթը կհասներ նաև Հալեպին և Ադանային:³⁸⁵ Տեղահանությունը շարունակվեց նաև Մարաշում: Ըստ Աբրահամ Հարթունյանի՝ օգոստոսի 19-ին 800-ից ավելի հայ բողոքականներ դուրս բերվեցին իրենց տներից և արտարվեցին հազարից ավելի առաքելական և կաթոլիկ հայերի հետ:³⁸⁶

Օգոստոսի 24-ին Լոնդոնում Միացյալ Նահանգների դեսպան Ուոլտեր Փեյջը պետքարտուղարին է ներկայացնում Կոստանդնուպոլսի հայոց պատրիարք Չավեն Տեր-Եղիայանի՝ հուլիսի 13-ին Բուլղարիայում Հայ առաքելական եկեղեցու առաջնորդին ուղղված նամակի պատճենը, որտեղ շեշտվում էր թուրքական դաժանությունների կապակցությամբ արևմտյան հասարակայնության կարծիքը «շարժելու» անհրաժեշտությունը: Երիտթուրքերի վերջնական նպատակը,

³⁸⁵ Տե՛ս *United States Official Records on the Armenian Genocide, 1915-1917* /Compiled with an introduction by Ara Sarafian/, էջ 207-208 (NA/RG 59/867.4016/148); NA Microfilm Publications, Microcopy No. 353, Records of the Department of State Relating to Internal Affairs of Turkey, 1910-1929, Roll 44, No. 267, NA/RG 59/867.4016/155:

³⁸⁶ Տե՛ս **Hartunian Abraam H.**, նշվ. աշխ., էջ 68:

ըստ պատրիարքի, «Հայաստանն առանց հայերի» սկզբունքի իրագործումն էր: Նա ընդգծում էր, որ եթե արտասահմանում ապրող հայերը չկարողանան «խթանել» չեզոք պետությունների «խիղճը», ապա Օսմանյան կայսրությունում կմնա ընդամենը մի քանի հայ, և «մեր ժողովրդի ոչնչացումն այդպիսով կդառնա անխուսափելի»:³⁸⁷ Նամակի պատճենը հանձնվել էր մաս Կահիրեում ԱՄՆ-ի գլխավոր հյուպատոս Օլնի Առնոլդին Եգիպտոսում Հայ առաքելական եկեղեցու առաջնորդ Թորգոմ Կուշակյանի կողմից: Պետքարտուղարին ուղղված կից նամակում գլխավոր հյուպատոսը գրում էր, որ նամակի նպատակը «մարդկության և արդարության անունից այդ սարսափելի իրավիճակը դադարեցնելու նպատակով» Միացյալ Նահանգների միջամտության ապահովումն էր:³⁸⁸

Օգոստոսի 25-ին դեսպան Մորգենթաուին ուղղված իր զեկուցագրում Հալեպում հյուպատոս Ջեքսոնը հղում էր կատարում Կենտրոնական Թուրքիայի քոլեջի նախագահ պատվելի Ջոն Մերրիլի օգոստոսի 17-ի նամակին, որում վերջինս գրում էր, որ Բիրեջիկում Հայ առաքելական եկեղեցուն պատկանող բոլոր քրիստոնյաներն ու հայ բողոքական համայնքի մեկ երրորդը, հավաստի տվյալների համաձայն, դարձել էին մահմեդականներ: Մերրիլը նշում էր, որ դրապատճառն այն էր, որ հայերը շատ լավ գիտեին, թե ինչ է կատարվել Ուրֆայի հայերի հետ, ինչ մեթոդներ են կիրառվել նրանց նկատմամբ, իսկ Բիրեջիկը գտնվում էր Ուրֆայի կառավարության հսկողության ներքո:³⁸⁹

Օգոստոսի 26-ին Հալեպում փոխհյուպատոս Էդելմանը զեկուցում էր հյուպատոս Ջեքսոնին Ուրֆայում տեղի ունեցած իրադարձությունների մասին: Թեև Ուրֆայի հայ բնակչությունը չէր ենթարկվել ընդհանուր տեղահանության, սակայն վիճակն այստեղ օրեցօր վտանգավոր էր դառնում: «Դժբախտ արտոյալների» հոսքը քաղաքի միջով վկայում էր այն մասին, թե ինչ ապագա էր սպասվում հայ ազգին: Այդ մասին էին վկայում կանանց և երեխաների բաժանումն իրարից, կանանց բռնաբարությունները թուրք պաշտոնյաների և «մո-

³⁸⁷ Տե՛ս NA/RG 59/867.4016/119:

³⁸⁸ Տե՛ս NA/RG 59/867.4016/158:

³⁸⁹ Տե՛ս *United States Official Records on the Armenian Genocide, 1915-1917* /Compiled with an introduction by Ara Sarafian/, էջ 234 (NA/RG59/867.4016/186):

լեռանդ» քուրդ գյուղացիների կողմից, ուժասպառության պատճառով մարդկանց մահն աքսորի ճանապարհին, տղամարդկանց «խորհրդավոր անհետացումը» ընտանիքներից նրանց բաժանումից հետո: Այս երևույթներն այդ ժամանակ «սովորական բան էին դարձել Թուրքիայի ներքին շրջաններում բոլոր աքսորյալների համար»:

Վառում հայերի կողմից կազմակերպված մահմեդականների ջարդի մասին տեղեկությունների տարածվելուն պես Ուրֆայի հայերի տներում գեներ փնտրելու պատրվակով սկսվեց խուզարկությունների գործընթացը: Հայտնի հայերի շարունակական ձերբակալություններն ու բանտարկություններն արթնացրին հայերի մեջ գոհ չդառնալու և դիմադրելու տրամադրությունները:

Էդելմանը գրում էր, որ օգոստոսի 19-ին, երբ ոստիկանությունը գեներ էր փնտրում հայերի տներում, մի քանի հայեր նրանց վրա կրակոցներ էին արձակել և սպանել երկու ոստիկանի: Այս դեպքն առիթ դարձավ, որ մահակներով և երկաթյա նիզակներով զինված քուրդ բնակչությունը հարձակում գործեր հայկական քաղամասի վրա: Նրանք կոտորեցին մեծ թվով հայերի, որից հետո անցան խանութների թալանին: Էդելմանը գրում էր, որ ինքն ու հյուպատոսական գործակալ պատվելի Լեալին միասին հանդիպում էին ունեցել նահանգապետի հետ՝ ամերիկյան միսիոներական հաստատություններն ու հակառակորդ պետությունների քաղաքացիներին պաշտպանության տակ առնելու խնդրանքով: Վերջիններս պատասպարվել էին ամերիկյան հաստատություններում: Ավելի ուշ Էդելմանը շնորհակալություն է հայտնում Լեալին՝ նրա կողմից ձեռնարկված «գործուն միջոցների» համար, որոնք կանխեցին հայ բնակչության հետագա ջարդը: Այդ ընթացքում հայ կանայք և երեխաները պատասպարվել էին բողոքական եկեղեցում: Փոխհյուպատոսն անձամբ ակնատես էր դարձել հայերի՝ փողոցում կատարված սպանությունների: Նա նաև նշում էր, որ սպանվել էին նաև շատ ոչ հայեր, այդ թվում՝ կարի մեքենաների «Singer» ընկերության տնօրենը, որն ազգությամբ հույն էր: Ըստ փոխհյուպատոսի՝ դժվար էր ասել, թե ինչքան մարդ էր կոտորվել այդ ընթացքում, սակայն շրջանառվող 250 թիվը «շատ պահպանողական էր թվում»:

Օգոստոսի 20-ի առավոտյան փողոցներում դեռ կարելի էր տեսնել բազմաթիվ դիակներ: Թեև, ըստ Էդելմանի, ոստիկանությունը «լավ

էր կատարել իր պարտականությունները», բայց նրանց փոքրաթիվ կազմը միաժամանակ անկարող էր կանգնեցնել ամբոխին: Ուրֆայի բնակչության թիվը կազմում էր 50 հազար, որից 20 հազարը հայեր էին, և համապատասխան պաշտպանություն ապահովելու համար հարկավոր էր այստեղ ունենալ մեծ կայազոր: Ըստ փոխխյուպատոսի՝ այդ դեպքից հետո հայերի ընդհանուր տեղահանությունն անխուսափելի էր դառնալու:³⁹⁰

Ուրֆայի դեպքերի վերաբերյալ հավելյալ տեղեկություն էր հարորդում հյուպատոս Ջեքսոնը 1918 թ. Պետքարտուղարությանը ներկայացրած իր տեղեկանքում: Նա գրում էր, որ, եվրոպացի վկաների հաղորդած տեղեկությունների համաձայն, 1915 թ. օգոստոսին թուրքերը որոշում էին կայացրել արտաքսելու Ուրֆայի 14 հազարանոց հայկական բնակչությանը դեպի անապատ: Քաջ գիտակցելով, որ իրենք արժանանալու էին նույն բախտին, որին արժանացել էր մյուս քաղաքների հայ բնակչությունը, Ուրֆայի հայերն ինքնապաշտպանություն էին կազմակերպել հայկական թաղամասում՝ ունենալով բավականաչափ զենք ու զինամթերք: Քանի որ քաղաքի մնացած բնակչության մեծամասնությունը կազմում էին քրդերը, թուրքական իշխանությունները համոզեցին նրանց հարձակվել հայերի վրա: Այն բանից հետո, երբ քրդերը կորցրին 800 հոգի առաջին և 1200 հոգի երկրորդ հարձակումների ընթացքում, զինվորական իշխանությունները թնդանոթներ տեղադրեցին հայկական թաղամասը ռմբակոծելու նպատակով: Ըստ Ջեքսոնի՝ այդ գործողության ղեկավարն էր օսմանյան 4-րդ բանակի սպայակույտի պետն ու հայերի արտաքսման գործընթացը ղեկավարող, գերմանացի կոմս Էբերհարդ ֆոն Վոլֆսկեյելեն, որին հյուպատոսն անձամբ էր ճանաչում:

Ռմբակոծության տակ հայտնված ամերիկյան առաքելությունը ղեկավարում էր պատվելի Ֆրենսիս Լեալին, որին հայերը մինչ այդ պահում էին որպես պատանդ՝ թաղամասի ռմբակոծությունը կանխելու նպատակով թուրքերի վրա ճնշում գործադրելու համար: Թուրքական իշխանությունները ստիպեցին հայերին հանձնել թաղամասը քաղաքից ազատ դուրս գալու պայմանով, սակայն թուրքերն իրենց խոսքն այդպես էլ չպահեցին. կախաղան հանվեցին 42 և ձորը նետվե-

³⁹⁰ St'u NA Microfilm Publications, Microcopy No. 353, Records of the Department of State Relating to Internal Affairs of Turkey, 1910-1929, Roll 44, No. 271, NA/RG 59/867.4016/203:

ցին 300 հայ տղամարդիկ: Երեք հազար կանանց և երեխաների երկու քարավաններով արտոնեցին քաղաքից դեպի հարավ ոստիկանների ուղեկցությամբ: Ըստ Ջեքսոնի՝ արտաքսված հայերից որևէ տեղեկություն այդպես էլ չստացվեց:

Տեսած սարսափներից ծանր հոգեկան վիճակում հայտնված պատվելի Լեսլին մի քանի օր անց ինքնասպանություն գործեց:³⁹¹ Եղեռնը վերապրած Փ. Ֆաբրիքթոյանը վկայում էր, որ Ուրֆայի հայերի դիմադրության վերջում պատվելի Լեսլին, չդիմանալով հայերի հանդեպ կիրառված չարչարանքներին և հայտնվելով գրեթե խելագարված վիճակում, թունավորեց իրեն և մահացավ գերմանական հիվանդանոցում:³⁹² Հետագայում՝ 1917 թ. հուլիսին, նրա այրին և երեխան Ջեքսոնի հետ վերադարձան Միացյալ Նահանգներ:³⁹³

Մի քանի ամիս անց՝ 1916 թ. հունվարի 15-ին, Ջմյունհիայում հյուպատոս Ջորջ Հորտոնը պետական քարտուղարին փոխանցեց «պատվարժան» մի անհատի գեկուցագիրը՝ Հայկական հարցի վերաբերյալ, որը վերջերս էր վերադարձել «հայկական հետապնդումների» շրջաններից, և որի անունը, անվտանգության հարցերից էլնելով նա չէր ցանկանում հիշատակել: Ձեկուցագիրը հիմնականում վերաբերում էր Ուրֆայում տեղի ունեցած իրադարձություններին: Հեղինակը նշում էր, որ օգոստոսի 19-ի ցերեկվա ժամին փողոցային մունետիկները սկսեցին կոչ անել թուրք բնակիչներին զինվելու և դուրս գալու փողոց: Շուտով փողոցներում հայտնվեցին տարբեր զինատեսակներով զինված հարյուրավոր թուրքեր, որոնք, առանց հաշվի առնելու սեռն ու տարիքը, սկսեցին կոտորել փողոցներում հայտնված անզեն հայերին: Օրվա վերջն էր, և վերջիններս հիմնականում փակում էին իրենց խամութներն ու գնում իրենց տները: Կոտորածը տևեց երկու օր, որից հետո շուրջ մեկ ամիս քաղաքում համենատաքար խաղաղություն էր

³⁹¹ Տե՛ս NA Microfilm Publications, Microcopy No. 353, Records of the Department of State Relating to Internal Affairs of Turkey, 1910-1929, Roll 46, NA/RG 59/867.4016/373, էջ 715-717:

³⁹² Տե՛ս Հայոց ցեղասպանությունը Օսմանյան Թուրքիայում. Վերապրածների վկայություններ. Փաստաթղթերի ժողովածու, Հատոր III. Էրզրումի, Խարբերդի, Գիարբեքիի, Մեբաստիայի, Տրապիզոնի մահանգներ, Պարսկահայք, էջ 302:

³⁹³ Տե՛ս NA Microfilm Publications, Microcopy No. 353, Records of the Department of State Relating to Internal Affairs of Turkey, 1910-1929, Roll 46, NA/RG 59/867.4016/373, էջ 715-717:

տիրում: Ջարդի պատճառն այն էր, որ հայերի տներում գենք փնտրելու ընթացքում սպանվել էին մեկ ոստիկան և երկու ժանդարն:

Մեպտեմբերի 29-ի կեսօրին սկսվեց թուրքերի դեմ հայերի ապստամբությունը: Քաղաքային մարտերը տևեցին 25-30 օր: Այդ ընթացքում թուրք իշխանությունները հայկական թաղամասի տներից դուրս էին բերում կանանց ու երեխաներին և 400-500 հոգանոց քարավաններով աքսորում քաղաքից անհայտ ուղղություններով: Ամեն մի քարավան իր հետևից թողնում էր 2-3 մահացած երեխաների, կանայք պատահական անցողիկներին էին առաջարկում իրենց երեխաներին: Մարտերի ընթացքում գերի ընկած հայ տղամարդկանց ձեռքերն ու ոտքերը կապում էին և բարձր վայրից նետում կիրճը: Ողջ մնացածներին սպանում էին սվիններով և դաշույններով՝ փամփուշտները խնայելու նպատակով: Որոշ հայեր՝ 8-10 հոգի, կարողացել էին մուտք գործել ամերիկյան առաքելության շենքը, պատանդ վերցնել պատվելի Ֆրենսիս Լեսլիին ու մի քանի միսիոներների և կրակ բացել շենքը պաշարած թուրք զինվորների վրա: Իշխանությունների վերջնագիրը չընդունելուց հետո զինվորները թնդանոթներից կրակ էին բացել շենքի ուղղությամբ, որի հետևանքով հայերն ու նրանց պատանդները դուրս էին եկել շենքից: Թուրքերն ազատ էին արձակել պատանդ միսիոներներին, որոնց մեջ կային նաև երկու բրիտանացի, երկու ֆրանսիացի և երկու ռուս հպատակներ: Միաժամանակ իշխանությունները Լեսլիին հայերին օգնելու մեղադրանք էին ներկայացրել: Հասկանալով, որ 60 հայերի հետ իրեն էլ կարող էին կախաղան հանել, Լեսլին ինքնասպանություն գործեց թույն խմելու միջոցով:

Ըստ հեղինակի զեկուցագրի՝ Արաբփունար կայարանում աշխատողները տեղեկացնում էին, որ գյուղ տանող ճանապարհին օրական 50 մետր հեռավորության վրա մահանում էր 100-150 հոգի: Հեղինակն այնուհետև գրում էր, որ Իսլահիե ճամբարում մահացածների թիվն այնքան մեծ էր, որ երկաթգծի շինարարության պատասխանատուն առաջարկում էր իր ղեկավարությանը մեկ զումարտակ զինվոր ուղարկել ճամբար՝ դիակները թաղելու համար: Իսլահիեի և Օսմանիեի միջև ընկած շուրջ 50-60 կիլոմետր ճանապարհն ամբողջությամբ վերածվել էր գերեզմանատան: Որֆայում և Հալեպում տիֆի համաճարակ էր սկսվել. առաջին քաղաքում օրական մահանում էր 20, իսկ երկրոր-

դում՝ 250 մարդ:³⁹⁴

Օգոստոսի 26-ին Բաղդադում հյուպատոս Չարլզ Բրիսսելը հաղորդում է դեսպան Մորգենթաուին, որ քաղաքի հայ բնակչությունը համոզված է, որ նույնպես ենթարկելու է աքսորի:³⁹⁵

Նույն օրը Սամսունում հյուպատոսական գործակալ Պիթերը գրում էր դեսպան Մորգենթաուին Մարզվան կատարած իր այցելության և հայերի տեղահանության մասին: Ըստ Պիթերի՝ թուրքական կառավարությունը բռնագրավել էր ամերիկյան առաքելությունից 31 եզան սայլ, ինչպես նաև աքսորել քոլեջում և հիվանդանոցում աշխատող հայերի մի մասին և օրիորդաց դպրոցից տարել 63 աղջիկների: Քոլեջի իրավաբանը զբաղվել էր այդ հարցով և առաջարկել կաշառել կայմակամին ու ոստիկանության հրամանատարին՝ հայերին հետ վերադարձնելու նպատակով: Սակայն թուրք պաշտոնյաները չէին կարողացել համաձայնել գումարը կիսելու հարցում, որի հետևանքով աղջիկներին աքսորել էին դեպի Ամասիա: Միաժամանակ աղջիկներին փորձել էին կրոնափոխել, սակայն նրանք չէին համաձայնել: Օրիորդաց դպրոցում աշխատող տիկնայք Քեյջը և Վիլյարդը, ինչպես նաև միսիոներ Ուայթը մեկնել էին Ամասիա՝ աղջիկներին վերադարձնելու նպատակով, սակայն Պիթերը կասկածում էր, որ նահանգապետը կկարողանա նման բան թույլ տալ: Աղջիկները 12-18 տարեկան էին, և Պիթերն այն կարծիքին էր, որ նրանց բաժանելու էին Սվազի և Մալաթիայի թուրք ընտանիքների միջև: Ըստ Պիթերի՝ քոլեջում և հիվանդանոցում մնացել էր 52 հայ, և, չնայած միսիոներների խնդրանքներին, որ նրանց ձեռք չտան, նրանց, միևնույն է, աքսորելու էին: Պիթերը համոզված էր, որ ամերիկյան հաստատությունները Թուրքիայում չէին կարողանալու աշխատել առանց քրիստոնյաների մասնակցության ու օգնության և ստիպված էին լինելու վերադառնալ Միացյալ Նահանգներ: Ըստ Պիթերի՝ Մարզվանում դեռ մնում էին թաքնված կամ կրոնափոխ եղած հայեր, սակայն եթե նրանց հայտնաբերեին, նրանք նույնպես կաքսորվեին:

³⁹⁴ Տե՛ս *United States Official Records on the Armenian Genocide, 1915-1917* /Compiled with an introduction by Ara Sarafian/, էջ 450-452 (NA/RG59/867.4016/268); **Glockler H. W.**, նշվ. աշխ., էջ 34-37:

³⁹⁵ Տե՛ս *United States Official Records on the Armenian Genocide, 1915-1917* /Compiled with an introduction by Ara Sarafian/, էջ 273 (NA/RG 59/867.4016/194):

Պետական տուրքի տեսուչ ունն Արդիքից ստացված տեղեկությունների համաձայն՝ Մամսունի և Մարզվանի հայերը ժամանել էին Ամասիա: Այստեղ տղամարդկանց բաժանել էին ընտանիքներից և շատերին սպանել Ամասիայի, Թոքատի և Թուրքալի ճանապարհին: Թոքատ հասածներին տարել էին դեպի Չիֆթլիկ և սպանել: Կանանց ու երեխաներին սայլերով տարել էին դեպի Մալաթիա և խեղդամահ արել Եփրատ գետում: Նույնը տեղի էր ունեցել Թոքատում, սակայն այն տարբերությամբ, որ բոլոր գեղեցիկ կանանց և երեխաներին թուրքական ընտանիքների էին հանձնել: Նույն բախտին էին արժանացել Էրբասայի, Նիքսարի, Մեսուդիեի, Շարոշլայի, Ազիզիեի, Գյուրունի, Գերենդեի, Սվազի, Դիվրիկի, Կանգալի, Ակնի, Արաբկիրի, Գեբինի, Խարբերդի, Մալաթիայի, Կարահիսարի, Չարայի, Երզնկայի, Կամախի հայերը: Մալաթիայում գործում էին Գերսիմի քրդերի զինված խմբերը, որոնք թալանում և սպանում էին հայ տղամարդկանց, իսկ կանայք և երեխաները բաժին էին հասնում թուրք ընտանիքներին:³⁹⁶

Օգոստոսի 29-ին Բաղդադում հյուպատոս Չարլզ Բրիստելը գեկուցում էր դեսպան Մորգենթաուին քաղաքում և շրջանում հայ բնակչության տեղահանության հետևանքով ստեղծված իրավիճակի մասին: Նա գրում էր, որ Մոսուլում վիճակը սկսում էր վատանալ, սակայն քաղաքի ազնվական բնակչության ներկայացուցիչները կարողանում էին համոզել նահանգապետին չձեռնարկել «անարդար գործողություններ» հայերի նկատմամբ: Միաժամանակ մեծ թվով քրիստոնյաներ ժամանել էին Մոսուլ կայսրության տարբեր հատվածներից, որոնք փրկվել էին կոտորածից և ներկայումս գտնվում էին տեղի քրիստոնյա համայնքի խնամակալության տակ: Վերջինս նաև հրահանգ էր ստացել նահանգապետարանից ապահովելու նրանց «ուչ միայն ապաստարանով, այլև սնունդով և հագուստով»: Թեև Մոսուլի քրիստոնյա համայնքը գտնվում էր պատերազմական շատ ծանր հարկերի տակ, սակայն փորձում էր հնարավորինը անել հայ արքայալների համար: Ըստ հյուպատոսի՝ միաժամանակ Մոսուլի վիլայեթի արևելյան շրջանների գյուղերի քրիստոնյա բնակչությունը, հիմնականում՝ նեստորական քրիստոնյաները, ենթարկվել էին քրդերի և թուրք զինվորների կողմից իրագործված բռնությունների և թալանի: Համաձայն

³⁹⁶ Տե՛ս նույն տեղը, էջ 321-324 (NA/RG 59/867.4016/220):

հյուպատոսության կողմից ստացված տեղեկատվության՝ Ռաս-ուլ-Այն քաղաքում էին հայտնվել հիմնականում Մարդիհից աքսորված հայերը, որոնց մի մասն արդեն ջարդի էր ենթարկվել իր ծննդավայրում և ճանապարհին, իսկ մյուս մասը հասնելուն պես նույնպես ենթարկվել էր կոտորածի: Դեյր-էզ-Չորում, ըստ հյուպատոսի, այդ պահին կային 3-5 հազար քրիստոնյաներ՝ հիմնականում հայ աքսորյալներ, որոնք այստեղ էին ժամանել Թուրքիայի տարբեր հատվածներից: Հյուպատոսը նշում էր, որ թուրքական իշխանությունները որևէ բան չէին ձեռնարկում այդ մարդկանց համար, և «տանելի գոյություն» կարող էին այստեղ ունենալ միայն ազգականները կամ դրան ունեցող մարդիկ: Գժվարությունն այն էր, որ ընտանիքները բաժանված էին, գտնվում էին տարբեր վայրերում, և իշխանությունները թույլ չէին տալիս, օրինակ, մայրերին և աղջիկներին շփվել միմյանց հետ:

Ինչ վերաբերում է Բաղդադին, մասնավորապես մի քանի օր առաջ սկսվել էր տղամարդկանց տեղահանությունը: Այս մարդիկ որևէ հակաիշխանական գործունեությամբ չէին զբաղվել, և նրանց չէր ներկայացվել որևէ մեղադրանք: Աքսորվածներից մեկը Բաղդադի քաղաքային խորհրդի անդամ էր, իսկ նրա եղբայրը՝ թուրքական կառավարության հանձնաժողովի անդամ, որը զբաղվում էր Բաղդադում քրիստանական ընկերությունների ունեցվածքի խնդիրներով: Ըստ հյուպատոսի՝ իշխանությունները հրահանգ էին ստացել կառավարությունից խստագույն միջոցներ ձեռնարկելու քրիստոնյաների նկատմամբ: Իշխանություններն օգտագործում էին այդ ճանապարհին «քրիստոնյաների հանդեպ մահմեդականների բնական թշնամությունը», ինչպես նաև հյուսիսում տեղի ունեցած «հայկական հեղափոխության» հանգամանքը:

Հրահանգ էր ստացվել, որ օգոստոսի 28-ին քաղաքի բոլոր քրիստոնյաները պետք է լքեն իրենց տները: Ըստ հյուպատոսի՝ տեղի քրիստոնյաների մեծ մասն աշխատում էր քրիստանական ընկերությունների համար, որոնք փակվել էին շուրջ մեկ տարի առաջ: Հրեաների նկատմամբ որևէ լուրջ գործողություն տեղի չէր ունեցել. նրանք շարունակում էին աշխատել, թեև պատերազմական վիճակը նույնպես իր ազդեցությունն էր ունեցել նրանց վիճակի վրա: Բաղդադում ստեղծված հակաքրիստոնեական գործողությունների հիմնական մեղավորներից էր, ըստ հյուպատոսի, նահանգապետի պաշտոնակա-

տար Շեֆիկ բեյը: Հյուպատոսը նաև իր զարմանքն էր հայտնում, որ քաղաքի «ազդեցիկ և հարգված» մահմեդական ազնվականությունը որևէ բան չէր ձեռնարկում քաղաքում իրավիճակը շտկելու ուղղությամբ: Հյուպատոսը խնդրում էր դեսպանին դիմել կառավարությանը՝ Բաղդադում իրավիճակը բարելավելու համար:³⁹⁷

Բաղդադում հյուպատոսի հաջորդ՝ սեպտեմբերի 1-ի նամակում նշվում էր, որ քաղաքում բանտարկվածների թիվը մեծանում է. վերջին ժամանակներում իշխանությունների կողմից բանտարկված 40 հայերի թվում էին նաև հյուպատոսությունում աշխատող թարգմանների ազգականները: Նրանցից որևէ մեկին մեղադրանք չէր ներկայացվել:³⁹⁸

1915 թ. օգոստոսի 29-ին Գերմանիայի կանցլեր Թեոբալդ ֆոն Բեթման-Հոլվեգին³⁹⁹ Դամասկոսից հասցեագրված զեկուցագրում Արևելքում գերմանական տեղեկատվական ծառայության ղեկավար Մաքս ֆոն Օպպենհայմը, հիմնվելով Ջեմալ փաշայի կողմից իրեն տրամադրված փաստաթղթերի և Ասիական Թուրքիա կատարած իր ուսումնասիրությունների վրա, գրում էր, որ մինչև համիդյան շրջանը հայերի վերաբերմունքը թուրքերի հանդեպ չէր տարբերվել Օսմանյան կայսրության մյուս քրիստոնյաների վերաբերմունքից: Ընդ հակառակը՝ հարաբերություններն այնպիսի մակարդակի վրա էին, որ հայերն աշխատում էին պետական հիմնարկներում և նույնիսկ հասնում նախարարական պաշտոնների: Հայերի և թուրքերի միջև «խոր պառակտումն ու ատելությունը» սկսվել էին վերջին շրջանում: Օպպենհայմի կարծիքով՝ այդ երևույթի առաջին և հիմնական պատճառն ամերիկյան և բրիտանական միսիոներական աշխատանքի արդյունքն էր, որի սկիզբը դրվել էր 19-րդ դարի կեսերին: Երկրորդ պատճառը ու-

³⁹⁷ Տե՛ս նույն տեղը, էջ 262-266 (NA/RG 59/867.4016/191):

³⁹⁸ Տե՛ս նույն տեղը, էջ 268 (NA/RG 59/867.4016/192):

³⁹⁹ **Թեոբալդ ֆոն Բեթման-Հոլվեգ** (1856-1921) Գերմանիայի պետական գործիչ, ներքին գործերի նախարար (1907-1909), կանցլեր (1909-1917): Մեծ դեր է խաղացել Առաջին համաշխարհային պատերազմի նախապատրաստման և սանձազերծման գործում, իր գործունեությամբ նպաստել է Գերմանիայի նվաճողական ծրագրերի իրականացմանը, խրախուսել թուրքական կառավարության՝ հայերի ցեղասպանության քաղաքականությունը, անտեսել գերմանական հասարակայնության բողոքի դիմումները՝ զրված Թուրքիայում հայերի կոտորածներն ու տեղահանությունը դադարեցնելու համար:

սական, բրիտանական և ֆրանսիական հյուպատոսների «սադրիչ» գործունեությունն էր: Այդ ամենի հետևանքով «կիսագրագետ» հայերը կրթության հնարավորություն էին ստանում Եվրոպայում և Միացյալ Նահանգներում, ծանոթանում «ժամանակակից քաղաքակրթությանը» և տարվում հեղափոխական գաղափարներով:⁴⁰⁰

1915 թ. ամռան վերջում Խարբերդի նահանգապետ Սաբիթ բեյի մոտ տեղի ունեցած ընդունելության ժամանակ հյուպատոս Դեյվիսն ասում է նրան, որ թուրքական կառավարությունը պետք է հայտարարի տեղահանության դադարեցման մասին, մանավանդ որ Խարբերդում մնացել էին անօգնական կանայք և երեխաներ: Նահանգապետը պատասխանում է հյուպատոսին «խկական թուրքական ձևով»՝ ասելով, որ շատ է ցավում այդ «խեղճ» ժողովրդի համար և «ուրախ» կլինի ինչ-որ բան անել նրանց համար:⁴⁰¹ Նա առաջարկում է Դեյվիսին խնդրանքը ներկայացնել նամակի տեսքով: Նույն օրը Դեյվիսին այցելեց ոստիկանության պետը, որն առաջարկեց հյուպատոսին նա-

⁴⁰⁰ Տե՛ս *The Armenian Genocide: Evidence from the German Foreign Office Archives, 1915-1916* /Edited by Wolfgang Gust, New York, Oxford, Berghahn, 2014, էջ 332:

⁴⁰¹ Խարբերդի նահանգապետ Սաբիթ բեյի մասին Դեյվիսը գրում էր, որ, բացի թուրքերենից, նա որևէ այլ լեզու չգիտեր, կրթություն չուներ, մինչ այդ զբաղեցրել էր միայն Դեբալիմի մյութեսարիֆի պաշտոնը, ծնունդով այդ քաղաքից էր, ծագումով՝ քուրդ: Ըստ Դեյվիսի՝ նա «բարի և զբառատ» մարդ էր, սակայն որպես թուրքական կառավարության «հիմնական գործակալներից» մեկը մաս էր կազմում «մարդկության դեմ կատարված սոսկալի հանցագործությունների»: Դեյվիսը նշում էր, որ դժվար էր հասկանում այն փաստը, թե ինչպես կարող էին բարի թվացող թուրք մարդիկ «խրեց կրոնի անունից» կամ կառավարության հրահանգներով մասնակցել տեղի ունեցող դաժանություններին: Նահանգապետի հրահանգների կատարման հետևանքով հարյուր հազարավոր մարդիկ դարձան անտուն, շատերը «բռնության կամ փորձությունների» գոհ դարձան: Դեյվիսը նշում է, որ հասկանալի է, որ որպես պաշտոնյա՝ նա չէր կարող չկատարել կառավարության հրահանգները: Միաժամանակ Սաբիթ բեյը թույլ էր տվել հազարավոր հայերի փախչել դեպի Ռուսաստան: Փաստեր կան նաև, որ ամենադաժան միջոցները հայերի դեմ կատարվել են նրա բացակայության ընթացքում նրան փոխարինողների կողմից: Ըստ Դեյվիսի՝ հնարավոր է, որ նա հատուկ էր բացակայում, որպեսզի իր վրա պատասխանատվություն չընկնի կատարվածի համար: Դեյվիսի կարծիքով՝ նա շատ ավելի մարդկային էր, քան շատ ուրիշ թուրք պաշտոնյաներ: Շատ դեպքերում նա օգնել էր հյուպատոսին անհատ հայերին փրկելու հարցում, սակայն երբ խոսվում էր հայ ժողովրդի հետ կատարվածի մասին, նա նշում էր, որ չի կարող չկատարել կառավարության հրահանգները: Ըստ Դեյվիսի՝ որևէ մեկը չէր կարող այդ օրերին կանգնեցնել թուրքական կառավարության հակահայկական ծրագիրը (Տե՛ս *Unites States Official Records on the Armenian Genocide, 1915-1917* /Compiled with an introduction by Ara Sarafian/, էջ 614-615, 674-675):

հանգապետին ուղղված նամակում պարտադիր նշել, որ արտաքսված բոլոր հայերը մեղադրվում են կառավարության դեմ դավեր նյութելու մեջ, իսկ նահանգում մնացածները նման գործունեությամբ չեն զբաղվել: Ոստիկանապետը փորձում էր համոզել հյուպատոսին նամակում նշել նաև այն մասին, որ հայերը զինված էին ռումբերով և զենքով, դիմադրություն էին ցուցաբերել, վիրավորել և սպանել թուրք սպաների: Միաժամանակ ոստիկանապետը նշում էր, որ ԱՄՆ-ի հյուպատոսի նամակը կարող էր փոխել իրավիճակը, քանի որ նա նոր ցուցումներ էր ստացել տեղահանությունը շարունակելու մասին: Դեյվիսը հրաժարվեց առաջարկից՝ համոզված լինելով, որ թուրքական կառավարությունն օգտագործելու էր նամակն իր շահերին համապատասխան:

Մի քանի շաբաթ անց ոստիկանապետն արդեն առաջարկեց զեկուցել Պետքարտուղարությանն այն մասին, որ հայերը դիմադրություն էին ցույց տվել իշխանություններին, և այդ իսկ պատճառով նրանց արտաքսել էին: Դեյվիսը «անհեթեթություն» էր համարում ոստիկանապետի ասածը, քանի որ հայտնի էր ընդամենը չորս կամ հինգ նման դեպքի մասին, երբ հայ երիտասարդներն իրարից անկախ զինված դիմադրություն էին ցույց տվել ոստիկաններին: Դեյվիսն իր վրա պատասխանատվություն էր վերցրել առանց ցուցում ստանալու հրաժարվելու նման առաջարկներից:⁴⁰²

Դեյվիսը նշում էր, որ 1915 թ. ամռան ընթացքում Օսմանյան կայսրության տարբեր քաղաքներից ժամանակ առ ժամանակ Խարբերդ և Մամուրեթ-ուլ-Ազիզ էին ժամանում հազարավոր արտաքսված հայեր: Հուլիսին ժամանած առաջին խումբը տեղավորեցին քաղաքից դուրս գտնվող բաց դաշտում՝ արևի տակ: Նրանք հիմնականում լաթերով էին, շատերը՝ գրեթե մերկ, բոլորն էլ հյուծված էին, հիվանդ, ցեխոտ, շատերի մարմինները պատված էին վերքերով: Ըստ Դեյվիսի՝ նրանք ավելի նման էին կենդանիների, քան մարդկային էակների: Նրանց քշում էին ճանապարհներով անասունների պես: Նրանց թվում ընդամենը մի քանի տղամարդ կար, մյուսներին քրդերը սպանել էին մինչև Խարբերդ հասնելը: Սովից և հիվանդություններից ճանապարհին մահացել էին նաև շատ կանայք և երեխաներ: Խարբերդ էր հասել արտաքսյալների միայն փոքր մասը: Կանայք առաջարկում էին իրենց

⁴⁰² Տե՛ս *United States Official Records on the Armenian Genocide, 1915-1917* /Compiled with an introduction by Ara Sarafian/, էջ 641-643 (NA/RG59/867.4016/392):

երեխաներին, թուրքերը հատուկ ճամբար էին գալիս իրենց բժիշկների հետ՝ առողջ երիտասարդ աղջիկներ ընտրելու համար: Հայերի խմբերը մնում էին այստեղ մի քանի օր և կրկին ճանապարհ ընկնում անհայտ ուղղություններով: Մեկնողներն ավելի փոքրաթիվ էին, քանի որ հետևում էին թողնում մահացածներին և ծանր հիվանդներին: Դեյվիսն իր տեսածը համեմատում էր Դանթեի «Դժոխքի» հետ:

Էրզրումից ժամանած հայերի խմբին Դեյվիսը հանդիպել էր Մամուրեթ-ուլ-Ազիզի մոտ գտնվող Հուլաքյոյ գյուղի մոտ: Նրանք ավելի լավ վիճակում էին, նրանց թվում շատ տղամարդիկ կային, նրանց ճանապարհին ո՛չ ծեծել էին, ո՛չ էլ կողոպտել, սակայն մի քանի օր անց նրանց նույնպես համատարած կերպով սպանեցին: Ամռան վերջին ժամանած խմբերին տեղավորել էին Մամուրեթ-ուլ-Ազիզի հայկական գերեզմանոցի տարածքում. մահացողներին այդտեղ էլ թաղում էին: Ըստ Դեյվիսի՝ այստեղ հայերին պահում էին երկու օր և կրկին քշում անհայտ ուղղություններով:⁴⁰³ Մինչև հայերը մնում էին ճամբարում, ոստիկանները բանակցում էին քրդերի հետ հայերին սպանելու և թալանվածի մի մասը կամ դրամի որոշակի տոկոս իրենց հատկացնելու հարցի շուրջ: Այս ծրագիրը գործում էր ամենուրեք՝ թե՛ այս նահանգում, թե՛ երկրի այլ մասերում:⁴⁰⁴

Երբ իրավիճակը «համեմատաբար խաղաղվում է», Դեյվիսը որոշում է այցելել հայերով բնակեցված շրջակա գյուղերը: Առաջին գյուղը, ուր նա այցելեց միսիոներ Ատկինսոնի հետ, Բազմաշենն էր: Շուրջ 300 տուն ունեցող և գրեթե ամբողջությամբ հայերով բնակեցված գյուղը ամբողջությամբ փլատակների էր վերածվել: Ամենամեծ տանը իշխանությունների կարգադրությամբ ոստիկանների կենտրոնակայանն էր տեղադրվել: Երկրորդ գրեթե ամբողջությամբ հայկական գյուղը Հուլաքյոյն էր: Նույն իրավիճակը տիրում էր ինչպես այստեղ, այնպես էլ հայերով բնակեցված և Դեյվիսի այցելած բոլոր գյուղերում: Նշելով ամենուրեք քանդված եկեղեցիների մասին՝ Դեյվիսը գրում էր, որ «իրենց մոլեռանդության մեջ մահմեդականները որոշել էին ոչ միայն բնաջնջել քրիստոնյա բնակչությանը, այլև ոչնչացնել նրա կրոնի հետքերը և նույնիսկ բնաջնջել քաղաքակրթության ստեղծածը»:

Ծովք (Գյուլյուկ) լիճ կատարած այցելության ժամանակ Դեյվիսն

⁴⁰³ Տե՛ս նույն տեղը, էջ 644-645 (NA/RG 59/867.4016/392):

⁴⁰⁴ Տե՛ս նույն տեղը, էջ 650 (NA/RG 59/867.4016/392):

ու Ատկինսոնը հազարավոր հայերի դիակներ էին հայտնաբերել: Շատերն այրված էին, քանի որ քրդերը հատուկ այրում էին դիակները՝ համոզված լինելով, որ հայերը կուլ էին տալիս իրենց ոսկեղենը:⁴⁰⁵

Մեպտեմբերի 3-ին Կոնիայի ամերիկյան հիվանդանոցում աշխատող բժիշկ Ուիլֆրիդ Փոստը Էսքիշեհիրում, Ալայունդում և Չայում գտնվող հայ աքսորյալների վիճակի մասին իր անձնական վկայություններն էր ներկայացնում դեսպան Մորգենթաուին: Ըստ Փոստի՝ Էսքիշեհիրի կայարանին հարող դաշտում 12-15 հազար հայ աքսորյալներ էին կուտակվել, որոնք չունեին համապատասխան հագուստ և ծածկոց: Կայարանի պետը, որին Փոստը ճանաչում էր երկար ժամանակ, վկայում էր, որ նրանց հետ վերաբերվում էին «դաժանաբար», ցերեկվա ժամերին ոստիկանները փորձում էին պաշտպանել այդ մարդկանց թուրք խաժամուժից, սակայն գիշերով նրանք միասին էին «անհանգստացնում» հայերին: Թեև ոստիկանները հավաքում էին երիտասարդ կանանց ու աղջիկներին մեծ խմբերում և «փորձում պաշտպանել» նրանց, սակայն շատ դեպքերում ոստիկաններն իրենք էին թույլ տալիս թուրքերին նրանց բռնաբարել: Իշխանությունները սնունդով չէին ապահովում աքսորյալներին, դրան ունեցողներն իրենք էին սնունդ առնում: Ամեն օր, ըստ Փոստի, մահանում էին 30-40 աքսորյալներ: Ճանապարհին Փոստը զրուցել էր մի քանի գերմանացիների հետ, որոնք հայերի հետ կատարվող բնութագրում էին որպես «ամենադաժան և սուկալի կերպով կազմակերպված մի ծրագիր»:

Ալայունդում, ըստ Փոստի գեկուցման, հավաքվել էին շուրջ հինգ հազար աքսորյալներ, որոնք եկել էին հիմնականում Բրուսայից և գտնվում էին զրեթե նույն պայմաններում: Երկու շաբաթվա ընթացքում իշխանություններն ընդամենը երկու անգամ էին հաց բաժանել աքսորյալներին, որը հազիվ թե մեկ օրվա բավականացներ: Փոստն անձամբ էր տեսել, թե ինչպես է ոստիկանությունը մտրակներով ծեծում աքսորյալ հայերին զնացքում իրար հետ խոսելու համար:

⁴⁰⁵ Տե՛ս նույն տեղը, էջ 646-648 (NA/RG 59/867.4016/392): Այդ մասին էր վկայում մաս ցեղասպանությունը վերապրած Միլիան Կարիպճանյանը (Տե՛ս *Հայոց ցեղասպանությունը Օսմանյան Թուրքիայում. Վերապրածների վկայություններ. Փաստաթղթերի ժողովածու*. Հատոր III. Էրզրումի, Խարբերդի, Դիարբեքի, Մեքաստիայի, Տրապիզոնի մահանգներ, Պարսկահայք, էջ 288):

Փոստը նշում էր, որ Չայում կային մի քանի հազար հայեր, որոնք գտնվում էին նույն պայմաններում: Սակայն այստեղ տղամարդիկ և կանայք դեռ միասին էին, ինչը որոշակիորեն խոչընդոտում էր թուրքերի կողմից բռնաբարությունների իրագործումը: Չայում հորդառատ անձրև էր սկսվել, որի պատճառով հիվանդացել էին շատ և շատ արտրյալներ:

Գնացքի աշխատողը Փոստին պատմել էր, որ թեև իշխանություններից հրահանգ էր ստացվել Իզմիթ վերադարձնելու 100-150 բողոքական և կաթոլիկ հայերի, բայց նրանց սկզբում ուղարկել էին Անգորա, որտեղից էլ՝ ցաք ու ցրիվ արել շրջանի թուրքական գյուղերով:

Ըստ Փոստի՝ Կոնիայում նույն վիճակն էր տիրում, թեև նա բարձր էր գնահատում նահանգապետի մարդկային հատկանիշները, որի շնորհիվ հնարավոր էր դարձել կանխել հակահայկական շատ ծրագրեր: Միաժամանակ նրա աշխատանքը սահմանափակում էին կոմիտեի մի քանի ազդեցիկ անդամներ՝ մեղադրելով նրան «չափազանց զթասրտություն» հանդես բերելու մեջ: Դեսպան Մորզենթաուի ջանքերի շնորհիվ Կոնիայի բողոքականները չէին արտրյվել և մնացել էին քաղաքում, սակայն կառավարությունը փակել էր նրանց բոլոր խանութներն ու վերացրել բիզնեսով զբաղվելու բոլոր հնարավորությունները: Երկաթուղու աշխատողների պատմածների համաձայն՝ գնացքներով ճամփորդող գրեթե բոլոր արտրյալներին որոշակի կետերում հանում էին գնացքից և ստիպում քայլել, որի հետևանքով Պոզանթիից դեպի Ադանա ընկած ճանապարհին նրանք ենթարկվում էին հարձակումների, կողոպուտի, սպանության և բռնաբարության:

Համաձայն վստահելի աղբյուրների՝ Անգորայում նույնպես տեղի էր ունեցել հայերի մեծ ջարդ: Ըստ Փոստի՝ այս ժամանակ Կոնիայում կուտակվել էին 5-10 հազար փախստականներ՝ եկած հիմնականում Բրուսայի, Իզմիթի և Պարտիզակի շրջաններից: Մի քանի հարյուր փախստականներ եկել էին Էսքիշեհիիից, Ակշեհիիից և մոտակա այլ վայրերից: Աքսորյալների ճամբարը գտնվում էր երկաթուղու կայարանին հարող դաշտերում: Մեծ մասը կողոպտվել էր. նրանք նույնիսկ արևից թաքնվելու ծածկոց չունեին: Շատերը հիվանդ էին. կային մալարիայով և դիզենտերիայով շատ հիվանդներ: Մինչև վերջին ժամանակները կառավարությունը որևէ բան չէր արել փախստականների համար: Վերջին օրերի ընթացքում իշխանությունները

սկսեցին դրան տալ նրանց. մեծահասակներին օրական տալիս էին մեկ պիաստր, երեխաներին՝ 20 փարա, ինչը չնչին գումար էր սնվելու համար: Շատ մտահոգված ծնողներ աղաչում էին, որ իրենց դուստրերին որպես բուժքույրեր տեղավորեն ամերիկյան հիվանդանոցում: Ըստ Փոստի՝ հիվանդանոցում տեղավորեցին այնքան աղջիկ, ինչքան կարողացան: Հիվանդանոցում հիմնականում բուժվում էին թուրքական բանակի զինվորները, ինչպես նաև արքայազնի հիվանդ հայերը:

Հիվանդանոցի բժիշկներ Ուիլֆրիդ Փոստը, տեր և տիկին Դոդդերն ու տիկին Քաշմանը 1894-1896 թթ. կոտորածների ակնառուներ էին, տեսել էին երկու հեղափոխություն, Ադանայի ջարդն ու Բալկանյան պատերազմները, սակայն երբևիցե նման իրավիճակի չէին հանդիպել: Փոստը նշում էր, որ, բացի բժշկական աշխատանքից, միսիոներները հիվանդներին ապահովում էին հացով և սրգերով: Միսիոներները հույս ունեին, որ կառավարությունը թույլ կտա նրանց խնամքի տակ վերցնել նաև քաղաքի հիվանդ մարդկանց, ինչպես նաև այդ նպատակով օգտագործել հայ բժիշկներին:

Փոստը համոզված էր, որ հայերին կարող էր փրկել միայն արտագաղթը դեպի Միացյալ Նահանգներ: Հակառակ պարագայում հայ ազգն այս երկրում կոչնչացվեր:

Փոստը գրում էր, որ վերջերս քաղաքի իշխանությունները պահանջել էին ամերիկյան միսիոներներից քանդել իրենց եկեղեցու զանգակատունը, սակայն վերջիններս հրաժարվել էին դա անելուց: Ի վերջո, իշխանություններն իրենք էին քանդել զանգակատունն ու այդ գործողության համար հաշիվ ներկայացրել ամերիկացիներին:⁴⁰⁶

Մեպտեմբերի 3-ին դեսպան Մորգենթաուն հեռագրում էր պետքարտուղարին, որ Թուրքիայի պատերազմի նախարարը խոստացել էր թույլ տալ Միացյալ Նահանգներ մեկնել այն հայերին, որոնց համար երաշխավորություն կտար դեսպանը: Մորգենթաուն գրում էր, որ «հայ ազգի բնաջնջումը Թուրքիայում արագորեն առաջ է գնում, Անգորայում և Բրուսայում կոտորածների մասին տեղեկություններ են ստացվում»: Դեսպանն առաջարկում էր պետքարտուղարին դիմել

⁴⁰⁶ See *United States Official Records on the Armenian Genocide, 1915-1917* /Compiled with an introduction by Ara Sarafian/, էջ 246-250 (NA/RG 59/867.4016/188):

Քլիվենդ Դոդջին⁴⁰⁷, Չարլզ Քրեյնին⁴⁰⁸, Ջոն Մոքսին⁴⁰⁹, Ստեֆեն Վայզին⁴¹⁰ և ուրիշներին՝ հիմնելու կոմիտե՝ որոշ հայերի Միացյալ Նահանգներ տեղափոխելու համար միջոցներ հավաքելու նպատակով: Մորզենթաուն առաջարկում էր հայերին նավերով տեղափոխել Կալիֆոռնիայի, Օրեգոնի և Վաշինգտոնի նահանգները:⁴¹¹ Մեպտեմբերի 8-ին Պետքարտուղարությունը դեսպանի առաջարկը փոխանցում է Ստեֆան Վայզին:⁴¹² Մեպտեմբերի 22-ին պետքարտուղարի պաշտոնակատարը հեռագրում է Մորզենթաուին, որ դեսպանի կողմից նշված մարդիկ գտնում են, որ հայերի համատարած գաղթի կազմակերպումը կարող է անհաղթահարելի դժվարությունների հետ կապված լինել: Միաժամանակ նրանք հարցնում էին, թե արդյոք հնարավոր կլինի՞ արդյունավետ կերպով օգտագործել 50-100 հազար դոլար՝ սննդի և հազուստի տեսքով ոչ մահմեդականներին անհապաղ օգնություն ցուցաբերելու, ինչպես նաև արտագաղթ կազմակերպելու համար:⁴¹³

Մեպտեմբերի 6-ին Միացյալ Նահանգների դեսպանությանն ու Պետքարտուղարությանը հասցեագրված նամակում Մամուրեթ-ու-

⁴⁰⁷ Քլիվենդ Դոդջ (1860-1926)՝ ամերիկացի մեծահարուստ գործարար և բարերար, «Phelps Dodge» հանրառայությանահանող ընկերության նախագահ: Եղել է ԱՄՆ-ի նախագահ Վուդրո Վիլսոնի խորհրդատուն և 1912 թ. ու 1916 թ. նախընտրական քարոզարշավների ֆինանսական աջակիցը, 1909-1926 թթ.՝ Կոստանդնուպոլսի «Ռոբերտո» քղեջի հոգաբարձուների խորհրդի նախագահը, Հայկական և սիրիական օգնության կոմիտեի հիմնադիրներից:

⁴⁰⁸ Չարլզ Քրեյն (1858-1939)՝ ամերիկացի մեծահարուստ գործարար, դիվանագետ, Հայկական և սիրիական օգնության կոմիտեի հիմնադիրներից, Վուդրո Վիլսոնի նախընտրական քարոզարշավների ֆինանսական աջակից, 1917-1918 թթ.՝ ԱՄՆ-ի նախագահի անձնական ներկայացուցիչ Ռուսաստանում, Առաջին համաշխարհային պատերազմում պարտված Թուրքիայում ազդեցությունների ոլորաներն ուսումնասիրող Քլեյզ-Քրեյնի հանձնաժողովի անդամ, 1920-1921 թթ.՝ դեսպան Չինաստանում:

⁴⁰⁹ Ջոն Մոքս (1865-1955)՝ ԱՄՆ-ի հասարակական և բողոքական գործիչ, «Երիտասարդ մարդկանց քրիստոնյա ընկերակցություն» (YMCA) և «Համաշխարհային ուսանողական քրիստոնյա դաշնակցություն» (WSCF) կազմակերպությունների ղեկավար, Եկեղեցիների համաշխարհային խորհրդի հիմնադիրներից և պատվավոր նախագահ:

⁴¹⁰ Ստեֆեն Վայզ (1874-1949)՝ ԱՄՆ-ի հասարակական գործիչ, ռաբբի, սլոնիստական ղեկավար, առաջադեմ հուդայականության կողմնակից:

⁴¹¹ Տե՛ս՝ NA Microfilm Publications, Microcopy No. 353, Records of the Department of State Relating to Internal Affairs of Turkey, 1910-1929, Roll 43, No. 1005, NA/RG 59/867.4016/117:

⁴¹² Տե՛ս՝ *United States Official Records on the Armenian Genocide, 1915-1917* /Compiled with an introduction by Ara Sarafian/, էջ 148 (NA/RG 59/867.4016/117):

⁴¹³ Տե՛ս նույնը տեղը, էջ 149 (NA/RG 59/867.4016/117):

Ազիզում հյուպատոս Լեսլի Դեյվիսը գրում էր, որ հյուպատոսության կողմից իրականացված հետաքննության միջոցով պարզվել էր, որ տեղական իշխանությունները բացում և ընթերցում էին փոստով դեսպանությանը հասցեագրված նամակները: Ավելին՝ հայտնաբերվել էր, որ հյուպատոսության կողմից դեսպանությանը հասցեագրված նամակներից մեկը ոչ միայն չէր հասել հասցեատիրոջը, այլև ընդհանրապես կորել էր:⁴¹⁴

Մեպտենբերի 8-ին Կոնիալի ամերիկյան հիվանդանոցում աշխատող միսիոներ Ուիլյամ Գոդդը գրում է դեսպան Մորգենթաուիին, որ հայերի տեղահանությունը շարունակվում է, սակայն ընթացքում տեղի են ունենում «անհասկանալի ընդհատումներ և ուշացումներ»: Գոդդի կարծիքով՝ բանն այն էր, որ հայ բնակչության տեղահանությունն այնպիսի չափերի էր հասել, որ գործադիր իշխանությունների հնարավորությունները թույլ չէին տալիս նրանց ապահովել աքսորյալների քարավանների անխափան տեղաշարժը: Գրա հետևանքով Էսքիշեիրիից մինչև Տավրոսի լեռներ ընկած ճանապարհին գտնվող բոլոր քաղաքներում աքսորյալների մեծ կուտակումներ կային:

Գոդդը գրում էր, որ նա ճշմարիտ տեղեկատվություն ունի Էրեզլիում տիրող իրավիճակի մասին, քանի որ այնտեղ աքսորված հայ բողոքականները վերադարձել էին Կոնիա: Համաձայն այդ տեղեկատվության՝ Էրեզլիում շուրջ 15 հազար աքսորյալ կային, որոնց թիվը գնալով աճում էր: Ինչպես ամենուրեք, աքսորյալներն այստեղ ևս գտնվում էին կայարանին հարող բաց դաշտում՝ առանց որևէ պաշտպանության և սանիտարական պայմանների: Դամբարում այնպիսի սանիտարական վիճակ էր ստեղծվել, որ շուրջ հինգ հազար աքսորյալների թույլ էին տվել քաղաքում վարձել տներ և սենյակներ: Սակայն շատ շուտով նոր հրահանգ էր ստացվել, համաձայն որի՝ այդ մարդիկ իրենց ունեցվածքով կրկին պետք է հայտնվեին փողոցում: Նրանցից 500-ին տեղավորել էին 100 վագոններում և ուղարկել դեպի Պոզանթի: Մյուսները շարունակում էին մնալ նույն պայմաններում, բայց դաշտում և քաղաքի փողոցներում: Այստեղ է, որ յուրաքանչյուր բողոքականից պահանջում էին ոստիկանությանը վճարել 50 լիրա՝ Կոնիա վերադառնալու համար: Ըստ Գոդդի՝ ոստիկանությունը

⁴¹⁴ Տես՝ նույն տեղը, էջ 283-284 (NA/RG 59/867.4016/204):

մշտապես «մտրակ և մահակ էր» օգտագործում անմեղ աքսորյալների նկատմամբ, ծեծում նույնիսկ կանանց և երեխաներին: Հայերի վրա հարձակումներ էին գործում նաև չերքեզները, որոնք թալանում և սպանում էին մարդկանց:

Դուրըը հաղորդում էր դեսպանին, որ Կոստանդնուպոլսից Կոնիա էր ժամանել «տարագրման հանձնաժողովը»: Սկզբում հայտարարվել էր (դրա մասին էին խոսում նաև Էնվեր փաշայի հեռագրերը), որ հանձնաժողովը ժամանել է աքսորյալներին այս նահանգում տեղավորելու նպատակով: Սակայն իրականում նրանք ժամանել էին, որպեսզի կազմակերպեին տարագիրների քարավանների ճանապարհային հոսքը Էրեզլիից և Պոզանթիից դեպի Ադանա, իսկ հետագայում՝ Արաբիա:

Դուրըը նշում էր, որ, վստահելի աղբյուրի համաձայն, երկու-երեք շաբաթ առաջ Անգորայում բանտարկել էին քաղաքի 200 ղեկավար հայերի, այնուհետև զիջերով նստեցրել էին վազոնները, տարել Կզլիրմակ և սպանել: Նրանց շարքում էին երկաթուղու 18 աշխատակիցներ և Օտոմանյան բանկի մասնաճյուղի տնօրենը: Անցյալ շաբաթվա ընթացքում Անգորայի բոլոր հայ տղամարդկանց, այդ թվում՝ բողոքականներին և կաթոլիկներին⁴¹⁵, աքսորել էին, և մինչև տվյալ պահը

⁴¹⁵ Քանի որ կաթոլիկներն օգտվում էին արտասահմանյան պաշտպանությունից, տեղահանության առաջին շրջանում հայ ազգային եկեղեցու անդամների և կաթոլիկների միջև տարբերակում գոյություն ուներ: Սակայն թուրք ոստիկանությունը հետագայում սկսեց տարբերություն չդնել նրանց միջև: Այսպես՝ Անգորայում, որտեղ ապրում էին 16 հազար կաթոլիկ հայեր, տեղահանության առաջին փուլի ժամանակ կաթոլիկների համար բացառություն արվեց, սակայն 1915 թ. օգոստոսին բոլոր կաթոլիկ տղամարդիկ ձերբակալվեցին, և նրանց սպառնում էր մահապատիժ, սակայն Կոստանդնուպոլսում Ավարո-Հունգարիայի դեսպանի միջամտության շնորհիվ նրանց հաջողվեց փրկվել: Հետագայում նրանց ստիպեցին լքել իրենց տներն ու քջեցին սկզբում դեպի Կոնիա, այնուհետև՝ Ադանա: Մինչև պատերազմի վերջը Անգորայի կաթոլիկ համայնքը դադարեց գոյություն ունենալուց: Տրապիզոնում Իտալիայի հյուպատոսը գրում էր, որ կաթոլիկ հայերի նկատմամբ որևէ տարբերակում չէր դրվում իշխանությունների կողմից: Մինչև պատերազմի ավարտն Օսմանյան կայսրությունում գտնվող գրեթե ողջ կաթոլիկ համայնքը դադարեց գոյություն ունենալուց: Սպանվել էին Ադանայի, Անգորայի, Արդվինի, Բուրսայի, Կայսերիի, Մարաշի և Տրապիզոնի եպիսկոպոսները, 130 քահանաներ, 47 կույսեր և 100 հազար հայ կաթոլիկներ: Ողջ մնացած 40 հազար հայ կաթոլիկներ աքսորվել էին Սիրիա և Լիբանան: Բացառություն կազմեց միայն Կոստանդնուպոլսի հայ կաթոլիկ համայնքը (Տե՛ս **Frazer Charles A., Catholics and Sultans. The Church and the Ottoman Empire. 1453-1923**, Cambridge, Cambridge University Press, 1983, էջ 272-273):

նրանցից որևէ տեղեկություն չկար: Կանանց և աղջիկներին բաժանում էին թուրքական գյուղերի միջև, ընդ որում՝ թուրքերն իրենք էին գալիս և ընտրում աղջիկներին: Թուրքերը կրտել էին 300 հայ տղայի: Դանապարհը «բռնությունների թատերաբեմ» էր, որտեղ տեղի էր ունենում նահանգի հայ բնակչության ամբողջական բնաջնջում:⁴¹⁶

Որպես շարունակություն օգոստոսի 29-ի իր գեկուցագրի՝ Բաղդադում հյուպատոս Բրիսսելը սեպտեմբերի 10-ին գրում էր, որ այդ ընթացքում, առանց որևէ մեղադրանք ներայացնելու, քաղաքի իշխանությունները ձերբակալել էին ևս 16 հայի, որոնք ունևոր և քաղաքում հարգանք վայելող մարդիկ էին: Թեև նրանք պատրաստակամություն էին հայտնել հանդես գալու ռազմական դատարանի առջև և ապացուցելու իրենց անմեղությունը, իշխանությունները ոչ միայն չէին պատասխանել, այլև աքսորել էին նրանց: Հյուպատոսը գտնում էր, որ այս մարդկանց նկատմամբ տեղի ունեցածը վկայում էր այն մասին, որ «կառավարության գործողությունները բռնապետական են և անարդար»: Եթե կառավարությունն իրապես պատճառ ուներ ձերբակալելու այս մարդկանց, նրանք պետք է կանգնեցվեին ռազմական դատարանի առջև: Հյուպատոսը նաև այս հարցը կապում էր նահանգապետի պաշտոնակատարի բիրտ դիրքորոշման հետ: Հյուպատոսը գրում էր, որ նաև գոյություն ուներ մի վարկած, համաձայն որի՝ աքսորվածներից մի քանիսը լավ հարաբերություններ էին ունեցել Բաղդադի նախկին նահանգապետ Սուլեյման Նաթիֆ բեյի հետ, որն այդ ժամանակ գտնվում էր Կոստանդնուպոլսում: Քանի որ աքսորված երկու հայերը հյուպատոսության թարգմանի եղբայրներն էին, հյուպատոսը խնդրում էր դեսպանին դիմել Նաթիֆ բեյին, որը, հնարավոր է, կկարողանար բարեխոսել այդ մարդկանց համար:⁴¹⁷

Սեպտեմբերի 11-ին Մերսինում հյուպատոս Նաթանը գեկուցում է դեսպան Մորգենթաուին, որ հազարավոր հայեր են ժամանել քաղաք հյուսիսից, որոնց այնուհետև քշեցին դեպի Հալեպի շրջան: Վերջին երկու շաբաթվա ընթացքում վեց հազարից ավելի հայեր էին աքսորել Ադանայից, որոնց թվում էին նաև կաթոլիկները և բողոքականները: Ըստ հյուպատոսի՝ հայերի հանդեպ առանձնահատուկ բռնություններ

⁴¹⁶ Տե՛ս *United States Official Records on the Armenian Genocide, 1915-1917* /Compiled with an introduction by Ara Sarafian/, էջ 252-256 (NA/RG 59/867.4016/189):

⁴¹⁷ Տե՛ս նույն տեղը, էջ 286-288 (NA/RG 59/867.4016/205):

սկսվեցին արտաքին գործերի նախարարության քարտուղարի տեղակալ Ալի Մյունիֆ բեյի ժամանելուց հետո, ով որոշում կայացրեց, որ տեղահանության ընթացքում որևէ բացառություն չպետք է լինի: Հյուպատոսի կարծիքով՝ նրա գործողությունները սատարում էր Ադանայի «Միության և առաջադիմության» կոմիտեն՝ «մոլեռանդ հակահայկական մի կազմակերպություն»:⁴¹⁸ Իշխանությունները որևէ զիջման չգնացին ամերիկյան դպրոցի և Տարսունի Ս. Պողոս քոլեջի ուսուցիչներին ու աշակերտներին բացառություն անելու և չտեղահանելու հարցում: Միաժամանակ ավելի հաջող արդյունք ունեցան Ադանայի օրիորդաց ճեմարանի հարցով իշխանությունների հետ հյուպատոսի վարած բանակցությունները:⁴¹⁸

Սեպտեմբերի 17-ին Մորզենթաուն պետքարտուղարին է ներկայացնում Բուխարեստի «Հայ հեղափոխական դաշնակցության» կոմիտեի՝ սեպտեմբերի 5-ին դեսպանության կողմից ստացված տեղեկանքը՝ Թուրքիայի տարբեր շրջանների հայ բնակչության տեղահանությունների մասին:⁴¹⁹

Սեպտեմբերի 20-ին Գամասկոսում ԱՄՆ-ի հյուպատոսական գործակալ Գրեգ Յանգը գրում էր դեսպան Մորզենթաունին, որ, սկսած օգոստոսի 12-ից, շուրջ 10 հազար քաղաքացի էր անցել քաղաքով: Միլիայի նահանգապետը տեղեկացրել էր իրեն, որ քաղաքայլները բոլորը հայեր էին, որոնք Վանի և Բիթլիսի նահանգներում «ապստամբություններ կազմակերպելու և իրենց կառավարությունները հիմնելու մեղադրանքով» քաղաքվել էին Գամասկոսի շրջան, որտեղ նրանց բաժանելու էին տարբեր քաղաքների և գյուղերի միջև: Յանգն իր պատրաստակամությունն էր հայտնում Կարմիր խաչի աջակցությամբ հավաքելու միջոցներ՝ այդ մարդկանց օգնելու նպատակով, սակայն նահանգապետը պատասխանում է, որ կառավարությունը չի կարող թույլ տալ նման գործողություններ, քանի որ «հնարավորինս ամեն ինչ անելու է նրանց սնունդով, վրաններով և այլ միջոցներով ապահովելու համար»: Յանգը նաև այցելում էր քաղաքի արվարձանում գտնվող Կաղան շրջանը, որտեղ տեղակայված էր քաղաքայլների ճամբարը: Ոստիկանները նրան ուղեկցում էին ճամբարի պատասխանատուի մոտ, որը տեղեկացնում էր, որ այդ պահին ճամբարում երկու հազար

⁴¹⁸ Տե՛ս նույն տեղը, էջ 270 (NA/RG 59/867.4016/193):

⁴¹⁹ Տե՛ս նույն տեղը, էջ 257-260 (NA/RG 59/867.4016/190):

հայ կար, թեև ընդհանուր առմամբ Գամասկոսով անցել էին շուրջ 20 հազար արտոյալներ, որոնք ժամանել էին տարբեր նահանգներից՝ բացի Վանից: Ընդհանուր առմամբ շուրջ 100 հազար հայեր պետք է բաշխվեին նահանգի քաղաքների և գյուղերի միջև: Ճամբարում մաս հիմնել էին ժամանակավոր հիվանդանոց, որտեղ այդ պահին կար ընդամենը 50 հոգի: Ճամբարի պատասխանատուն ասում էր մաս, որ մահացու դեպքեր գործնականում տեղի չէին ունենում. կառավարությունը բոլոր արտոյալներին ապահովում էր սնունդով: Սակայն Յանգին հնարավորություն չէին տվել հանդիպելու և գրուցելու արտոյալների հետ:

Սեպտեմբերի 11-ին Յանգն ու Իսպանիայի հյուպատոսն այցելել էին քաղաքի քրիստոնյա թաղամաս, որտեղ հանդիպել էին դեպի Կաղամ գնացող արտոյալներին: Ականատեսներից մեկը պատմել էր արտոյալ հայերի սարսափելի դժվարությունների, տարբեր վայրերում կազմակերպված ճամբարներում տիրող անմարդկային վիճակի մասին: Ըստ այդ վկայի՝ Օսմանիեում կար 8 հազար, իսկ Հալեպի մոտ գտնվող մի փոքր քաղաքում՝ 100 հազար արտոյալ: Նա նշում էր, որ Իզմիրից հարավ ապրող ողջ հայ բնակչությունն արտոյվել էր: Մի այլ աղբյուրից Յանգը տեղեկություն էր ստացել այն մասին, որ Մարաշից հյուսիս գտնվող շրջաններն ամբողջությամբ հայաթափվել էին, որ Հոմսի համակենտրոնացման ճամբարում այդ ժամանակ հավաքվել էին 30 հազար անապաստան հայեր, որ կոտորած էր տեղի ունեցել Դիարբեքիում, որ Կեսարիայի բնակչությանը բացառության կարգով Դեյր-էզ-Ջոր ուղարկելուց առաջ թույլ էին տվել վաճառել իրենց ունեցվածքը և այլն:⁴²⁰

Սեպտեմբերի 22-ին Մերսինում հյուպատոս Նաթանը զեկուցում էր դեսպան Մորգենթաուին, որ, տեղի իշխանությունների կողմից տարածված լուրերի համաձայն, շուտով Թուրքիայի «թշնամիները» գորք էին հանելու ցամաք, որի հետևանքով, սկսած սեպտեմբերի 19-ից, Մերսինում, մասնավորապես՝ Տարսոնում և Ադանայում, մահմեդականների շրջանում մեծ խուճապ էր սկսվել: Մերսինում տեղական իշխանությունները նույնիսկ հրահանգ էին տվել պաշտոնյաներին ընտանիքներին մոտակա անտառները տեղափոխելու վերաբերյալ:

⁴²⁰ Տե՛ս նույն տեղը, էջ 296-299 (NA/RG 59/867.4016/212):

Ըստ հյուպատոսի՝ նման զարգացումների դեպքում իշխանությունները նպատակադրվել էին նույնիսկ ամբողջությամբ հրդեհելու Մերսինը, Տարսոնն ու Ադանան: Այդ իսկ պատճառով իշխանությունները մտադրվել էին ավարտել հայերի տեղահանությունն Ադանայից: Ըստ հյուպատոսի՝ Ադանայից արքայազն հայերի թիվը հասնում էր 25 հազարի՝ զումարած քաղաքով մշտապես անցնող արքայազների բազմահազարանոց քարավանները: Նաթանը գրում էր, որ «այս ժողովրդի տառապանքը, տանջանքներն ու գրկանքներն աննկարագրելի են», «մահացածների թիվը՝ անհամար», ծնողների կողմից լքված երեխաների թիվը՝ հարյուրների հասնող: Սակայն այն, ինչ կատարվում էր Օսմանիեի և Հալեպի միջև ընկած ճանապարհին, անհամեմատելիորեն ավելի ծանր էր: Հյուպատոսը նաև նշում էր, որ իշխանությունները առանց բացառության շարունակում էին արքայազն կաթոլիկ և բողոքական հայերին, իսկ իր դիմումներն ու խնդրանքներն այդ կապակցությամբ մշտապես մերժվում էին: Նույնը վերաբերում էր ամերիկյան «Singer» ընկերությունում աշխատող հայերին: Միաժամանակ դեռևս որևէ հրահանգ չկար ամերիկյան անձնագրեր ունեցողների վերաբերյալ, բայց հյուպատոսն իր կասկածն էր հայտնում, որ իշխանությունները երբևիցե կարող էին զիջել այդ հարցում:⁴²¹

Ի պատասխան Պետքարտուղարության սեպտեմբերի 22-ի գրությամբ՝ Միրզենթաուն գրում էր պետքարտուղարին, որ եթե հնարավոր լիներ ճիշտ օգտագործել 100 հազար դոլարը, դա կարող էր լավ սկիզբ լինել, սակայն երբեք չէր կարող բավարարել: Դեսպանն առաջարկում էր «սոսկալի» վիճակում գտնվող, ամերիկյան կրթական հաստատություններն ավարտած հարյուր հազարավոր թափառական հայերին օգնություն ցուցաբերելու նպատակով օգտագործել Հալեպում և Դամասկոսում ԱՄՆ-ի հյուպատոսների ուժերը: Հակառակ պարագայում նրանք կմահանային քաղցից, հոգնածությունից և հիվանդություններից: Օգնությունը, ըստ դեսպանի, պետք է կազմակերպվեր անհապաղ և համակարգված ձևով, քանի դեռ ձմեռը չէր մոտեցել:⁴²²

1915 թ. սեպտեմբերի 24-ին «New York Times»-ի հրատարակած

⁴²¹ St'u NA Microfilm Publications, Microcopy No. 353, Records of the Department of State Relating to Internal Affairs of Turkey, 1910-1929, Roll 6, NA/RG 59/867.00/783, էջ 1-3:

⁴²² St'u *Unites States Official Records on the Armenian Genocide, 1915-1917* /Compiled with an introduction by Ara Sarafian/, էջ 202-203 (NA/RG59/867.4016/145):

«Ասում են 500 հազար հայեր են սպանվել. Վաշինգտոնից պահանջում են կանգնեցնել քրիստոնյաների սպանող թուրքերի և քրդերի կողմից» հոդվածում նշվում էր, որ Կոստանդնուպոլսի «Ռոբերտ» քոլեջի հոգաբարձուների խորհրդի նախագահ Չարլզ Քրեյնն ու Ամերիկյան խորհրդի քարտուղար Ջեյմս Բարտոնը սեպտեմբերի 23-ին այցելել էին ԱՄՆ-ի պետքարտուղարություն և խորհրդակցել պետքարտուղարի պաշտոնակատար Ֆրենկ Փոլկի և այլ պաշտոնյաների հետ Փոքր Ասիայում «թուրքերի և քրդերի կողմից հայերի սպանողի» կապակցությամբ: Մի քանի օրից Քրեյնն ու Բարտոնը մասնակցելու էին նաև Նյու Յորքում կայանալիք ընդհանուր կոմիտեի հավաքին, որի ընթացքում քննարկվելու էր ամերիկյան ժողովրդին կոչ ուղղելու ծրագիրը՝ «ղժբախտ հայերին» օգնություն ցուցաբերելու նպատակով միջոցներ հավաքելու համար: Պետքարտուղարությունում կայացած հանդիպման ժամանակ պարզվել էր, որ դեպի Մորզենթաուն ժամանակ առ ժամանակ հայերի հանդեպ մարդկային վերաբերմունք ցուցաբերելու նպատակով «ընդհանուր ներկայացումներ» է արել օսմանյան կառավարությանը: Սակայն, չնայած այդ բողոքներին, հայերի սպանող շարունակվում էր: Միաժամանակ պարզվել էր, որ Պետքարտուղարությունը մանրամասն զեկուցագրեր է ստացել նաև Փոքր Ասիայում գտնվող ԱՄՆ-ի հյուպատոսական գործակալներից, որոնք «ցավալի» պատմություններ էին ներկայացնում թուրքերի և քրդերի կողմից քրիստոնյա հայերի հանդեպ ցուցաբերված վերաբերմունքի մասին: Այս զեկույցները հասարակությանը դեռևս ծանոթ չէին: Դրանք վկայում էին այն մասին, որ «թուրքը հայերին բնաջնջելու պատերազմ է վարում»: Խոսքը մասնավորապես առաքելական եկեղեցուն պատկանող հայերի մասին է, որոնք կազմում էին հայ բնակչության 90%-ը: Իրականում թուրքական կառավարությունը հրահանգել էր արքայի բոլոր հայերին, սակայն որոշ ժամանակ անց, երբ Մորզենթաուն հատուկ խնդրանք էր ներկայացրել կառավարությանը, վերջինս հավաստիացրել էր, որ հրամանը փոփոխության էր ենթարկվելու. նրանում չէին ընդգրկվելու կաթոլիկ և բողոքական հայերը:

Թերթը գրում էր, որ Վաշինգտոն հասնող զեկույցները վկայում էին այն մասին, որ շուրջ 500 հազար հայեր կոտորվել էին կամ կորցրել իրենց կյանքը «տեղահանության թուրքական հրամանի» և նրանց բնաջնջմանն ուղղված պատերազմի հետևանքով: Թուրքական իշ-

խանությունները հանել էին հայերին իրենց սներից և քշել Բաղդադի ուղղությամբ՝ անապատի վրայով: Աքսորի ճանապարհին հայերն ընկել էին քրդերի ձեռքը, շատերը կոտորվել էին նրանց կողմից, կանանց և աղջիկների մի զգալի զանգված հայտնվել էր քրդերի սներում: Փոքր Ասիայի հյուպատոսություններից ստացված զեկուցագրերն ամբողջությամբ համընկնում էին նախկինում ԱՄՆ-ում Մեծ Բրիտանիայի դեսպան Ջեյմս Բրայսի⁴²³ ամերիկյան իշխանություններին ուղղված դիմումներին, որոնցում վերջինս կոչ էր անում միջոցներ ձեռնարկելու հայերի սպանող դադարեցնելու համար: Բրայսի զնահատականի համաձայն՝ հայերի ապրած ու տեսած սարսափներն իրենց նմանը չունեին պատմության նորագույն շրջանում:⁴²⁴

Մեպտեմբերի 25-ին Տրապիզոնում հյուպատոս Հայգերը զեկուցում է դեսպան Մորգենթաուին օգոստոսի 17-ին Էրզրում կատարած իր այցելության մասին: Այն տեղի էր ունեցել ամերիկյան միսիոներների՝ Էրզրումում ամերիկյան դպրոցների տնօրեն և առաքելության գանձապահ պատվելի Ռոբերտ Ստեպլտոնի և Կարմիր խաչի հիվանդանոցի բժիշկ Քեյսի խնդրանքով: Հյուպատոսն ամերիկյան միսիոներների հետ այցելել էր նահանգապետ Թահսին բեյին, որը «շատ ջերմ» էր ընդունել հյուրերին: Վերջինս տեղեկացրել էր հյուպատոսին, որ, ռազմական հրամանատարությունից նոր ստացված տեղեկատվության համաձայն, Վանից դուրս գալու ընթացքում ռուսները քանդել էին քաղաքի բոլոր շինությունները՝ ներառյալ ամերիկացիներին պատկանող անշարժ գույքը, որպեսզի թուրքական բանակը չկարողանար այնտեղ որևէ ապաստան գտնել ձմռան ամիսներին: Ըստ նահանգապետի՝ նրանք իրենց հետ Ռուսաստան էին տարել նաև ամերիկ-

⁴²³ **Ջեյմս Բրայս** (1838-1922)՝ Բրիտանիայի քաղաքական և հասարակական գործիչ, դիվանագետ, իրավաբան, պատմաբան, բրիտանական ակադեմիայի անդամ, խորհրդարանի անդամ լիբերալ կուսակցությունից, 1907-1913 թթ.՝ ԱՄՆ-ում դեսպան, Անգլո-հայկական ընկերության (1876) և ասոցիացիայի (1893) հիմնադիր: 1916 թ. Բրայսի խմբագրությամբ և ընդարձակ առաջաբանով Լոնդոնում լույս է տեսել «Հայերի վիճակը Օսմանյան կայսրությունում 1915-1916 թթ.» փաստաթղթերի ժողովածուն (Կապույտ գիրք), որտեղ զետեղված են բազմաթիվ հաղորդագրություններ և վկայություններ՝ հայկական կոտորածների ու տեղահանությունների վերաբերյալ: Բրայսը մեծ դերակատարություն է ունեցել հայ փախստականներին ցուցաբերվող օգնության կազմակերպման գործում:

⁴²⁴ Տե՛ս *500.000 Armenians said to have perished. Washington asked to Stop Slaughter of Christians by Turks and Kurds // The New York Times*, 1915, September 24:

յան միսիոներներին: Նա նույնպես տեղեկացրել էր հյուպատոսին, որ Բիթլիսի բոլոր ամերիկացիները մեկնել էին քաղաքից և տվյալ պահին գտնվում էին Գիարբեքիրում: Թահսին բեյը հյուպատոսին ասել էր նաև, որ, կատարելով հայերին քաղաքից արքորելու հրահանգները, նա «լավագույնս փորձել է» ապահովել նրանց անվտանգությունը ճանապարհին և նրանց տվել է 15 օր՝ համապատասխան պատրաստություններ տեսնելու համար: Նա չէր արգելել հայերին վաճառել իրենց ունեցվածքը: Որոշ ընտանիքներ նույնիսկ մեկնել էին Էրզրումից հինգրոց ավելի եզան սայլերով, որոնք բարձրված էին հագուստով և սնունդով: Ամերիկյան միսիոներները հաստատում էին նահանգապետի ասածները: Նահանգապետը նաև տեղեկացրել էր հյուպատոսին, որ հրահանգ է ստացել Կոստանդնուպոլսից առ այն, որ Էրզրումի բողոքական և կաթոլիկ հայերը կարող են մնալ քաղաքում:

Այնուհետև հյուպատոսը հանդիպել էր քաղաքի ոստիկանության մյուդիրի հետ, որը նույնիսկ չէր թաքցնում իր հակահայկական վերաբերմունքը: Ըստ հյուպատոսի, եթե չլիներ նահանգապետի հսկողությունն այդ մարդու նկատմամբ, հայերի վիճակը կարող էր շատ ավելի ծանր լինել:

Ստեպլտոնն ու Քեյսը նաև տեղեկացրել էին հյուպատոսին, որ քաղաքի հարյուրավոր հայեր իրենց ի պահ էին թողնում ոսկյա և արծաթյա զարդեղեն, արժեքավոր թղթեր, արտասահմանյան դրամ, ինչպես նաև անշարժ գույքի վկայականներ: Ստեպլտոնը նաև նշում էր, որ իր չիրկիզվող պահարանում պահված դրամի և զարդեղենի դիմաց որևէ ստացական չի տվել և, փաստորեն, որևէ պատասխանատվություն չի կարող կրել: Հայերից շատերը մեկնելուց առաջ վստահել էին կայսերական Օտոմանյան բանակին իրենց ողջ ունեցվածքը, որը գտնվում էր քաղաքի հայ առաքելական և հայ կաթոլիկ եկեղեցիներում: Բանկի տնօրեն Պիեր Բալլադյուրը թաքուն ասել էր հյուպատոսին, որ տեղական ոստիկանության ղեկավարությունը պահանջում էր իրենից հանձնել բանալիները՝ շուրջ 100 հազար թուրքական լիրա արժողությամբ հայերի ունեցվածքը պաշտպանելու պատրվակով, սակայն կենտրոնական գրասենյակը հրահանգել էր մերժել այդ առաջարկը:⁴²⁵

Քանի որ տեղական իշխանությունները շարունակում էին պահան-

⁴²⁵ Տե՛ս *United States Official Records on the Armenian Genocide, 1915-1917* /Compiled with an introduction by Ara Sarafian/, էջ 289-292 (LC/HM(Sr.)/Reel 7/718):

ջել իրենց հանձնել հայերի թողած ունեցվածքը, Ստեպլտոնը դիմեց ԱՄՆ-ի դեսպանությանը՝ Տրապիզոնում հավատարմագրված հյուպատոսին Էրզրում գործուղելու համար: Իշխանությունների հետ վերջինիս բանակցությունների ընթացքում որոշում ընդունվեց, որ միսիոները պետք է իրերը հանձնին իշխանություններին:⁴²⁶ Լսելով Խնուսի հայերի կոտորածի մասին՝ միսիոներ Ստեպլտոնը 30 ոսկի փորձեց ուղարկել տուժած հայերին, սակայն իշխանություններն այն առգրավեցին և բաժանեցին թուրքերի միջև:⁴²⁷

Վերապրած Եղիշե Խանամիրյանը Էրզրումի բնակչության տեղահանության և տղամարդկանց կոտորածի մասին իր վկայություններում գրում էր, որ թուրքական կառավարության ընդհանուր գորահավաքի պատճառով հայկական դպրոցները չբացվեցին, քանի որ բոլոր ուսուցիչները զինակոչվել էին: Միայն տեղի ամերիկյան միսիոներական դպրոցն էր բաց, քանի որ հայ աշխատակիցները դեռևս զինապարտի տարիքի չէին: Սակայն երկու ամիս անց Թուրքիան մտավ պատերազմի մեջ, և այս երիտասարդներին նույնպես ենթարկեցին զինակոչի: Ամերիկյան միսիոներները որոշեցին իրենց շինությունները տրամադրել վիրավոր զինվորների խնամքի համար այն պայմանով, որ ամերիկացի բժիշկը պետք է բուժօգնություն ցուցաբերեր զինվորներին իր կողմից ընտրված սանիտարների միջոցով: Գրանով իսկ ամերիկացիներն ազատեցին զինվորական ծառայությունից շուրջ քսան հայ երիտասարդների:

Սարիղամիշի պարտությունից հետո վիրավոր թուրք զինվորների թիվը եռապատկվեց: Ամերիկյան միսիոներներին միացավ նաև Ամերիկյան կարմիր խաչը, որը դրամ էր տրամադրում վիրավոր զինվորներին խնամելու համար: Զաղաքի հայ համայնքը նույնպես հիվանդանոց տրամադրեց իշխանություններին, և միսիոներ Ռոբերտ Ստեպլտոնը խոստացավ ամսական հարյուր ոսկի տրամադրել այդ նպատակով: Կարմիր խաչի տված այդ օգնությունը շարունակվեց չորս ամիս: Ամերիկացի միսիոներները նաև օգնություն էին ցուցաբերում զինակոչված հայերի թշվառ ընտանիքներին: Այդ օգնությունը

⁴²⁶ Տե՛ս Հայոց ցեղասպանությունը Օսմանյան Թուրքիայում. Վերապրածների վկայություններ. Փաստաթղթերի ժողովածու, հատոր III. Էրզրումի, Խարբերդի, Դիարբեքրի, Մերաստիայի, Տրապիզոնի մահանգներ, Պարսկահայք, էջ 69:

⁴²⁷ Տե՛ս նույն տեղը, էջ 65:

տրամադրվում էր առաջնորդարանի և եպիսկոպոս Սմբատի միջոցով:⁴²⁸

Ըստ Խանամիրյանի՝ Էրզրումի հայերի աքսորի ժամանակ ամերիկյան միսիոներին հաջողվեց նաև մի քանի հայ աղջիկ պահել իր շենքում: Կոստանդնուպոլսի կառավարությունը հրահանգել էր, որ քաղաքի բողոքական և կաթոլիկ հայերը, հայ արհեստավորները, անօգնական մարդիկ և բանակ մեկնածների ընտանիքները մնան քաղաքում, սակայն տեղի իշխանությունները թաքցրել էին այդ հանգամանքը բնակչությունից, մինչև որ ամերիկացի միսիոներն այդ մասին Կոստանդնուպոլսից տեղեկություն չստացավ:⁴²⁹

Իր հաջորդ նամակում (25 սեպտեմբերի) Հայզերը տեղեկացնում էր դեսպանին կայսրության պետական պարտքի տեսուչ Բեյլիկջյանի պատմության մասին: Ըստ հյուպատոսի զեկուցման՝ Էրզրումի հայերի տեղահանությունից առաջ Բեյլիկջյանին տեղափոխել էին Տրապիզոն և թույլ տվել շարունակել տեսուչի իր պարտականությունները: Սակայն օգոստոսի 13-ին նրան ձերբակալել էին դեպի հարավ աքսորելու նպատակով: Նա կարողացել էր այս անգամ թույլտվություն ստանալ նահանգապետից՝ իր կնոջ, 12 տարեկան տղայի և հայ սպասուհու հետ ծովով Կոստանդնուպոլիս մեկնելու համար: Սակայն Տրապիզոնից ոչ հեռու ոստիկանները նրանց բոլորին ծովն էին նետել:⁴³⁰

Սեպտեմբերի 27-ին հյուպատոս Նաթանը զեկուցում էր դեսպան Մորզենթաուին Մերսինից հայերի տեղահանությանը առնչվող խնդիրների մասին՝ հիմնված տարբեր հավաստի աղբյուրների վրա:

Ըստ Նաթանի՝ «տառապանքներ հարուցող ամենակարևոր գործոնը պատշաճ տրանսպորտային միջոցների պակասն էր»: Քանի որ հյուսիսում՝ Տարսոնի և Պոզանթիի կամ դեպի հարավ՝ Օսմանիեի և Ռաֆջուի միջև ընկած երկար տարածությունները կապող երկաթգիծ գոյություն չուներ, ինչպես նաև կար սայլերի և կառքերի պակասություն, աքսորյալների մեծամասնությունն անցնում էր այդ ճանապարհը ոտքով: Բացի այդ՝ կառքով երկուսից չորս օրվա ճանապարհ

⁴²⁸ Տե՛ս նույն տեղը, էջ 63-64:

⁴²⁹ Տե՛ս նույն տեղը, էջ 69:

⁴³⁰ Տե՛ս *United States Official Records on the Armenian Genocide, 1915-1917* /Compiled with an introduction by Ara Sarafian/, էջ 294 (NA/RG 59/867.4016/210):

անցնելու զինը կազմում էր 30-100 դուլար, ինչը ոչ բոլորի համար էր հասանելի: Նույնը վերաբերում էր մարդատար գնացքով ճամփորդելուն: Բաղդադի երկաթգիծը կարող էր արքայազների համար հիմնական տրասպորտային միջոցը լինել, սակայն այն հիմնականում օգտագործվում էր ռազմական նպատակներով:

Ըստ Նաթանի, թեև անցյալում հայերի հանդեպ կիրառված բռնություններն այս շրջանի համար հազվագյուտ էին, սակայն տվյալ շրջանում ճանապարհներին տեղի ունեցող թալանն ու կանանց և աղջիկների հանդեպ բռնությունները բազմաթիվ էին, և այդ դեպքերի մասին տեղեկությունները՝ բավականին լավ հիմնավորված: Նույնը վերաբերում էր հարկադիր կրոնափոխությանը: Այսպես՝ 1909 թ. Ադանայի կոտորածների պատճառով որք դարձած բազմաթիվ հայ երեխաներ գտնվում էին կառավարական որբանոցում, սակայն տվյալ շրջանում նրանց առջև իսլամ ընդունելու խնդիր էր դրված, այլապես նրանց կաքսորեին:

Նաթանի գեկուցման համաձայն՝ կառավարությունը որևէ քայլ չէր ձեռնարկել հազարավոր արքայազներին սնունդով ապահովելու ուղղությամբ: Սա վերաբերում էր ինչպես կայսրացիների մոտ գտնվող ճամբարներին, այնպես էլ քաղաքներում գտնվող արքայազներին: Այսպես՝ Օսմանիեում մշտապես կային 40-60 հազար արքայազներ, որոնց միայն մեկ երրորդն էր կարողանում ինչ-որ ձևով սնունդ ստանալ, իսկ մյուս մասը մատնված էր սովի: Այս հանգամանքը պատճառ էր դարձել հիվանդությունների և մեծ թվով մահացու դեպքերի համար: Շատ մայրեր լքում էին իրենց երեխաներին՝ չկարողանալով դիմանալ նրանց տանջանքներին: Այս ամենը, ըստ հյուպատոսի, իր ազդեցությունն էր թողել շրջանի տնտեսական վիճակի վրա: Շուկաների մեծ մասը փակ էր, իսկ հայերի խանութները կնքված էին: Նաթանը գրում էր, որ հայերի տեղահանությունը զգալի ազդեցություն էր ունենալու շրջանի տնտեսական զարգացման վրա, քանի որ բիզնեսը հիմնականում պատկանում էր նրանց:⁴³¹

Սեպտեմբերի 29-ին Հալեպում հյուպատոս Ջեքսոնը գեկուցում էր Մորգենթաուին, որ թուրքական կառավարության կողմից կազմակերպված հայերի տեղահանությունն իրենց բնակավայրե-

⁴³¹ Տե՛ս *United States Official Records on the Armenian Genocide, 1915-1917* /Compiled with an introduction by Ara Sarafian/, էջ 275-276 (NA/RG 59/867.4016/200):

րից շարունակվում էր «համառությամբ և կատարյալ ծրագրին» համապատասխան: Ըստ Ջեքսոնի՝ մինչև օգոստոսի 31-ը կայսրության տարբեր շրջաններից երկաթգծով Հալեպ էին ժամանել 32.751, իսկ ոտքով՝ 100 հազար քստրյալներ: Հյուպատոսը նշում էր, որ դժվար էր գտնել նույնիսկ մեկ հայի ընտանիք, որը տուժած չլիներ կամ կորուստ չունենար այս երկար ճանապարհի ընթացքում. շատերը կորցրել էին իրենց ընտանիքի անդամներին հիվանդություններից և հոգնածությունից, երիտասարդ աղջիկներին և տղաներին տարել էին «թշնամի ցեղերը», գրեթե բոլոր տղամարդկանց բաժանել էին իրենց ընտանիքներից և կոտորել: Հյուպատոսի ունեցած «ճշգրիտ հաշվարկների» համաձայն՝ բոլոր քստրվածների միայն 15%-ն էր ողջ մնացել: Հիմնվելով այդ տվյալների վրա՝ կարելի է ասել, որ մինչև սեպտեմբերի 21-ը ողջ էին մնացել 150 հազարից պակաս քստրվածներ, ինչը նշանակում էր, որ մինչև այդ ժամանակահատվածն իրենց կյանքն էին կորցրել շուրջ մեկ միլիոն մարդիկ: Նույնիսկ Հալեպի փողոցներում քարավաններին ուղեկցող զինվորները «գարհուրելի» վերաբերմունք էին դրսևորում հիվանդ կանանց և երեխաների նկատմամբ: Հյուպատոսը գրում էր, որ այդ վերաբերմունքը վկայում էր այն մասին, թե ինչ դաժանությունների միջով են անցել այդ մարդիկ իրենց «ճանապարհորդության» ընթացքում: Ըստ Ջեքսոնի՝ Հալեպ ժամանող հայերից հիվանդություններից օրական մահանում էր 100 կամ ավելի մարդ: Հալեպից քստրվածներին քշում էին դեպի Համա, Հոմս, Գամասկոս և Ամման:

Հալեպի հայերին տեղափոխելու կարգադրություն դեռևս չէր տրվել, սակայն հյուպատոսը վստահ էր, որ շուտով նրանք նույնպես հետևելու են անցած քարավաններին: Ըստ հյուպատոսի հաշվարկների՝ այդ ժամանակ քաղաքում գտնվող քստրյալներին օգնություն ցուցաբերելու համար հարկավոր էր ամսական առնվազն 150 հազար դոլար: Իր զեկուցագրին կից Ջեքսոնը ներկայացնում էր քստրյալների թվական տվյալների չորս ներդիր:⁴³²

Առաջին ներդիրում ներկայացվում էին տվյալներ երկրի ներքին շրջաններից դեպի Հալեպ երկաթգծով քստրված հայերի մասին.

⁴³² Տե՛ս նույն տեղը, էջ 307-308 (NA/RG 59/867.4016/219):

Անասքիվ	Չափահասներ	Երեխաներ
18 մայիսի 1915 թ.	69	25
18	102	42
19	9	3
21	58	19
22	162	79
24	250	80
24	30	7
25	14	5
25	57	21
26	53	19
30	72	22
3 հունիսի	400	-
3	160	66
5	178	55
7	92	31
10	271	90
12	74	18
15	260	64
17	133	55
20	261	96
24	215	65
29	181	84
30	696	385
3 հուլիսի	210	-
9	500	-
11	224	-
13	480	-
16	110	-
19	200	-
23	410	-
25	420	-
30	540	-
Ընդամենը՝	6.891	1 331

Ամսաթիվ	Մեծահասակներ	Երեխաներ	Կայարան
31 հուլիսի 1915 թ.	241	47	Աչի-Կոյունլի
3 օգոստոսի	206	250	Կաթմա
3	200	71	Աչի-Կոյունլի
4	525	315	Կաթմա
4	546	256	Սեր-Արար- Պունար
5	290	180	Կաթմա
6	505	162	Սեր-Արար- Պունար
7	316	134	Ջերաբլիս
8	542	255	Աչի-Կոյունլի
9	140	200	Կաթմա
11	505	195
12	1.400	600
12	442	55	Աչի-Կոյունլի
15	1.060	550	Կաթմա
15	708	95	Աչի-Կոյունլի
17	117	30	Ռասս-ուլ-Այն
18	649	140	Աչի-Կոյունլի
19	350	250	Կաթմա
20	670	395
23	1.240	900
26	500	300
28	500	300
31	239	-	Ռասս-ուլ-Այն
Ընդամենը`	12.029	5.930	
Հուլիսի 30-ի տվյալների հետ`	18.920	7.261	
Ճամփորդության զինը վճարած 25%-ի հետ`	4.755	1.815	
	23.675	9.076	

Այսպիսով, միայն երկաթգծով ժամանած մեծահասակների և երեխաների թիվը կազմում էր 32 751 հոգի:⁴³³

Երկրորդ ներդիրում ներկայացվում էին տվյալներ առաքելական հայերի տեղահանության մասին.

Վայրը	Թիվը	Այրիներ իրենց երե- խաների հետ	Որբա- նոցնե- րում գտնվող- ների թիվը	Կարի- քավոր ըն- տանիք- ների թիվը	Կարի- քավոր այրիներ ի թիվը	Ամսա- կան ան- հրաժեշտ գումարը
Հալեպ	17.150	6.500	1.100	7.000	14.600	\$ 19.360
Դեյր- էզ-Ջոր (շրջակա գյուղեր)	22.100	6.000	-	16.000	22.000	\$ 26.400
Ռաս- ուլ-Այն (ճանա- պարհնե- րի ճամ- բարնե- րում)	1.150	1.150	-	-	1.150	\$ 1.320
Հալեպի գյուղեր	10.150	4.000	-	6.150	10.150	\$ 15.400
Կաթնա (ճանա- պարհ- ների ճամ- բարնե- րում)	25.400	-	-	10.400	10.400	\$ 13.200

⁴³³ Տե՛ս նույն տեղում, էջ 309-310 (NA/RG 59/867.4016/219):

Աչի- Կոյունի (ճանա- պարհ- ների ճամ- բարնե- րում)	7.200	-	-	2.500	2.500	\$ 3.800
Դա- մասկոս (Հալե- պից ուղարկ- վածներ)	40.300	6.150	-	20.000	26.150	\$ 35.000
Ընդամե- նը՝	123.450	23.800	1.100	62.050	86.950	\$ 113.960

Նույն ներդիրում ներկայացվում էին մաս արևելյան մահանգների մի քանի բնակավայրերից արտրված հայերի և Հալեպ հասածների թվական տվյալները.

Բնակավայր	Արտրված մարդ- կանց թիվը	Հալեպ հասածների թիվը
Արդանի-Մադեն	400	32
Չեմիչգյուլֆակ	240	3
Սիանա	130	12
Դիբնե	520	150
Ընդամենը՝	1.290	197 /15.2 %/ ⁴³⁴

Երրորդ ներդիրում ներկայացվում էին բողոքական հայերի տեղա-
հանության տվյալները.

⁴³⁴ Տե՛ս նույն տեղը, էջ 311 (NA/RG 59/867.4016/219):

Բնակավայրեր	Բողոքական հայերի թիվը մինչև արքայը
Սվազի նահանգ	5.000
Վան	3.000
Մամուրեթ-ուլ-Ազիզ	12.000
և Խարբերդ	
Դիարբեքիրի նահանգ	12.000
Ադանա	6.000
Էրզրում	5.000
Հալեպ	7.000
Մալաթիայի սանջակ	2.000
Կեսարիա	7.000
Մարաշ	6.500
Ուրֆա	1.500
Ընդամենը՝	67.000

Հայ բողոքականներից արքայվել էին 46.900 հոգի, այսինքն՝ 70%-ը: Հալեպ էր հասել տեղահանվածների 25%-ը կամ 11.750 հոգի, որոնք գտնվում էին հետևյալ բնակավայրերում.

Հալեպ, այրիներ	500
....., երեխաներ	1.000
....., այլ ընտանիքներում ապրողներ	1.000
Դեյր-էզ-Չոր, անհատներ	1.200
Ռ-աս-ուլ-Այն և Մերուջ	1.000
Մուառնա	200
Մամբաջ	500
Աշի-Կույունլի	100
Կաթմա	2.250
Այստեղից դեպի հարավ մեկնածների թիվը	4.000
Ընդամենը՝	11.750

Բողոքականները հիմնել էին որբանոց, որտեղ այդ պահին գտնվում էին 43 այրիներ, որոնք աշխատում էին որպես խնամատարներ, 48 տղաներ, որոնք ունեին մայրեր, 132 տղաներ, որոնք ծնող չունեին, 46 աղջիկներ, որոնք ունեին մայրեր, 100 աղջիկներ, որոնք չունեին ծնողներ: Ընդամենը՝ 369 հոգի, որից 139-ը բողոքականներ էին, մնացածը՝ առաքելականներ:

Կարիքավորների թիվը շատ մեծ էր. նրանք կարիք ունեին սննդի,

ապաստարանի, հագուստի և բուժօգնության: Ըստ հյուպատոսության հաշվարկների՝ օգնության աշխատանքը սկսելու համար հարկավոր էր օրական 220 ամերիկյան դոլար:⁴³⁵

Չորրորդ ներդիրում ներկայացվում էին հայ կաթոլիկների տեղահանության արդյունքները.

Նահանգներ	Ընտանիքների թիվը		Ողջ մնացած ընտանիքների թիվը, գտնվելու վայրը և վիճակը	
	Մինչև	Հետո		
Հալեպ				
Այնթապ	75	0	20 հոգի՝ Հալեպում 55 հոգի՝ Բաբում	բավարար թշվառ
Քեսար	80	0	մասամբ՝ Համա- յում, մասամբ՝ Ամ- մանում	առանց միջոց- ների
Բեյլան	65	0	Հալեպում (ժամա- նակավոր)	մեծ կարիքի մեջ
Քիլիս	45	0	Հալեպում և շրջա- կա ճանապարհ- ներից	մեծ կարիքի մեջ
Մարաշ	1 200	-	մասամբ՝ Հալե- պում և ճանա- պարհներից	առանց միջոց- ների
Չեյթուն	60	0	Դիարբեքիր և Բար	չափազանց կարիքի մեջ
Ալբիստան	40	0	ցրված	չափազանց կարիքի մեջ
Որֆա	70	0	անհայտ	
Բիրեջիկ	40	0	Ստիպողաբար իսլամ են ընդունել կամ ցրված են:	

⁴³⁵ Տե՛ս նույն տեղը, էջ 312-313 (NA/RG 59/867.4016/219):

Ադանայի նահանգ

Ադանա	150	0	մասամբ՝ Հալեպում և ճանապարհներին	մեծ թշվառության մեջ
Միս	30	0	Հալեպում և այլուր	մեծ կարիքի մեջ
Դուրք Յոլ	130	0	-----	-----
Մերսին	30	0	-----	-----
Հաճն	100	0	-----	-----
Տարսոն	30	0	-----	-----
Ջահան	25	0	-----	-----

Անգորա նահանգ

Անգորա	3.000	անհայտ		
Կեսարիա	120	աքտորվել են տղամարդիկ	Ուղարկվել են Համա, Կերեկ և Աջլուն:	Մեծամասնությունը մեծ կարիքի մեջ էր:
Չեպնի	45	0	Հալեպ են ժամանել միայն կանայք:	կարիքի մեջ
Էսքիշեհիր	40	0	ցրված	անհայտ
Էրզրումի նահանգ				
Էրզրում	4 000	0	Մի քանի կանայք երեխաների հետ, առանց տղամարդկանց, չորս ամիս քայլելով, հասել են Հալեպ:	կարիքի մեջ

Սվազի նահանգ

Սվազ	120	0	Որոշ թվով ընտանիքներ են ժամանել Հալեպ, որոնց ունեցվածքը թալանվել է ճանապարհին:
Գյուրում	80	0	
Թոքատ	100	0	Տեղ են հասել հիմնականում կանաչք և երեխաներ: Եպիսկոպոսների, քահանաների, կույսերի և տղամարդկանց ճակատագիրը անհայտ է: Տոկատի կույսերը նետվել են ջրհորը, քանի որ նրանց մերկացրել էին:
Բրզնիկ	300	0	

Խարբերդի նահանգ

Խարբերդ	190	0	Եպիսկոպոսների, քահանաների, կույսերի և տղամարդկանց ճակատագիրն անհայտ է:
Մալաթիա	180	0	
Հուսնի	120	0	Քահանաների և տղամարդկանց ճակատագիրն անհայտ է: Մի քանի հարյուր այրիներ և երեխաներ են ժամանել Հալեպ ոտքով ճանապարհը կտրելուց հետո: Բոլորը գտնվում են թշվառության մեջ:
Մանսուր			
Բեհեսնի	130	0	
Արաբկիր	70	0	

Գիարբեքիի նահանգ

Գիարբեքիի	200	0	Կանանց և երեխաների մի մասն է միայն ժամանել Հալեպ:
Զնքուշ	70	0	-----
Վերանշեհիի	50	0	-----
Մարդին	4 000	0	Եպիսկոպոսը, քահանաները և տղամարդիկ անհայտ կորած են:
Թեյ-Արմեն	300	0	Որևէ մեկը տեղ չի հասել:

Հալեպում էին գտնվում շուրջ 3 հազար այրիներ, երիտասարդ աղ-ջիկներ, երեխաներ և կույսեր, որոնք տեղավորվել էին քաղաքի տար-բեր շրջաններում: Նրանց կերակրում էր տեղի եկեղեցական համայն-քը:

6-7 հազար կաթոլիկներ էին անցել Հալեպով. նրանց ուղարկել էին դեպի Դեյր-եզ-Չոք, Բաք, Մամբաջ, Դամասկոս և Հիջազ: Նրանք բո-լորն օգնության կարիք ունեին: Հալեպում օրական մահանում էր 5-6 հայ, շրջաններում՝ ավելի շատ:

Ռաս-ուլ-Այնում գտնվում էին հազար աքսորյալներ, Կաթմայում՝ 500, Աշի-Կոյունլիում՝ 200: Այս մարդկանց խնամելու համար օրական անհրաժեշտ էր 260 ամերիկյան դոլար: Այդ գումարն անհրաժեշտ էր ապաստարանի, դեղորայքի, սնունդի, մահճակալների և ծածկոցների համար:⁴³⁶

Հետագայում իր հուշերում Մորգենթաուն գրում է, որ հազարավոր հայկական քաղաքներից և գյուղերից աքսորյալ հայերի քարավան-ներ էին շարժվում՝ զբաղեցնելով դեպի հարավ տանող բոլոր ճանա-պարհները: Քարավաններն առաջացնում էին հսկայական փոշու ամ-պեր և թողնում իրենց հետևից մեծ քանակությամբ աղբակույտեր ու լքված իրեր՝ աթոռներ, վերմակներ, անկողնային և տնային պարագա-ներ: Երբ քարավանները սկսեցին շարժվել, աքսորյալները դեռ նման էին մարդկային էակների, սակայն մի քանի օրից, երբ փոշին և ցեխը պատել էին նրանց դեմքերն ու մարմինները, երբ հոգնածությունը, ջրի պակասն ու սովը և նրանց «պահապանների» բռնությունն արել էին իրենց գործը, նրանք նմանվեցին «տարօրինակ անասունների տեսա-կի»: 1915 թ. ապրիլից մինչև հոկտեմբերը Փոքր Ասիայի բոլոր գլխա-վոր ճանապարհները լցված էին աքսորյալներով: Ըստ դեսպանի՝ այս վեց ամիսների ընթացքում տեղահանվել էր մոտ 1 միլիոն 200 հազար մարդ:⁴³⁷

Համաճայն 1918 թ. ԱՄՆ պետական քարտուղարությանը ներ-կայացված Ջեքսոնի տեղեկանքի՝ արտաքսվածների՝ Հալեպ մուտք գործելուց հետո՝ 1915 թ. աշնան ամիսներին, քաղաքում սկսվեց բժա-վոր տիֆի սարսափելի համաճարակ, որի պատճառով մահացան մի քանի հազար մարդ մահացավ, այդ թվում՝ Հալեպի հարյուրավոր

⁴³⁶ Տե՛ս նույն տեղը, էջ 314-315 (NA/RG 59/867.4016/219):

⁴³⁷ Տե՛ս **Morgenthau Henry, Ambassador Morgenthau's Story**, էջ 313-314:

քաղաքացիներ: Շուտով համաճարակը տարածվեց նաև նահանգի այլ քաղաքներում և գյուղերում: Հալեպի սանիտարական իշխանությունները չէին կարողանում հսկել իրավիճակը, իսկ զինվորական իշխանությունները ստիպված էին տրամադրել եզներով լծված սայլեր, որոնցից յուրաքանչյուրը ամերիկյան հյուպատոսության առջևի փողոցով ամիսներ շարունակ օրական 7-8 անգամ էր յուրաքանչյուրը 10-12 դիակ էր տեղափոխում դեպի քաղաքի գերեզմանատունը: Այստեղ մեծ փոսեր էին փորում, դիակները նետում այնտեղ և ծածկում հողով: Ջեքսոնը նշում էր, որ հյուպատոսության երեք պաշտոնյաներ էին մահացել բժավոր տիֆից, քանի որ շփվում էին հարյուրավոր հիվանդ մարդկանց հետ:⁴³⁸

Ջեքսոնը վկայում էր, որ հայ աքսորյալներին հիմնականում հավաքում էին քաղաքի հյուսիսում գտնվող Կարլուխ փոքր գյուղում կամ հարավ-արևմուտքում՝ երկաթգծի երկայնքով տեղակայված ճամբարում: Հյուպատոսն անձամբ շաբաթական մեկից երկու անգամ այցելում էր այդ վայրերը՝ դրամական միջոց կամ հաց տրամադրելով այդ մարդկանց: Իշխանությունները հետագայում վրաններ տրամադրեցին մարդկանց մի մասի համար, սակայն քանի որ ճամբարում լինում էր սովորաբար երկու-երեք հազար մարդ, իսկ վրանները կարող էին արևից պատսպարել միայն 500 հոգու, այդ պատճառով գտնվում էին այրող արևի, իսկ ձմռան ամիսներին՝ անձրևի և ձյան տակ: Կարլուխում ընդհանրապես որևէ թաքստոց գոյություն չուներ, մարդիկ հարյուրներով մահանում էին հիվանդություններից: Այս ճամբարներից գրեթե ամեն օր ոստիկանները մի քանի հարյուր հոգու քշում էին անապատ՝ դեպի Մեսքինե, Համա, Ռաքքա, Աբուհարար և վերջապես Գեյր-էզ-Չոր:

Ավելի ուշ՝ 1916 թ. վերջին, Ջեքսոնն այդ շրջաններ էր ուղարկել իր աշխատակցին՝ օգնություն ցուցաբերելու նպատակով: Վերջինս պատմում էր, որ Մեսքինեում տեսել էր շուրջ 150 թմբեր. յուրաքանչյուրում թաղված էին 100-300 հայերի դիակներ: Ռաքքայում նա տեսել էր հազարավոր մարդկանց ոսկորներ՝ ցրված հին քաղաքների փլատակների մեջ: Հալեպից Գեյր-էզ-Չոր և Ռուֆա տանող ճանապարհներին նա տեսել էր բազմահազար չթաղված մարդկանց կմախքներ:⁴³⁹

⁴³⁸ Տե՛ս նույն տեղը, էջ 588 (NA/RG 59/867.4016/373):

⁴³⁹ Տե՛ս NA Microfilm Publications, Microcopy No. 353, Records of the Department of State

1915 թ. հոկտեմբերի 4-ին պետքարտուղարին ուղղված խիստ գաղտնի հեռագրում դեսպան Մորզենթաուն գրում էր, որ «մի քանի հարյուր հազար հայեր արդեն իսկ ոչնչացված են կամ գտնվում են այնպիսի պայմաններում, որոնցում նրանց բնաջնջումն անխուսափելի է»: Քաղաքների և գյուղերի հայկական թաղամասերը լքված էին, հայերի ունեցվածքի մեծ մասը թալանվել էր պաշտոնյաների կամ հայերի թուրք հարևանների կողմից, իսկ մնացածը ազգայնացվում էր կառավարության կողմից: Ըստ դեսպանի՝ Կոստանդնուպոլսում Գերմանիայի և Ավստրո-Հունգարիայի դեսպանությունները «կարծես թե որևէ զսպող ուժ չունենին», քանի որ թուրքերը հայտարարում էին, որ ավելի շատ օգնություն էին ցուցաբերել դաշնակիցներին, քան ստացել նրանցից: Տվյալ շրջանում, ըստ դեսպանի, երբ Դարդանելի կողմից սպառնալիք չկար, և Թուրքիան փոխըմբռնման էր հասել Բուլղարիայի հետ, «թուրքերն իրենց ավելի անկախ ու հանդուգն էին պահում, քան երբևէ, և պակաս զիջող՝ արտաքին ազդեցությանը»: Դեսպանը նաև իր մտավախությունն էր հայտնում, որ քանի որ հայերի «մեծագույն հարստությունը» կենտրոնացված էր Կոստանդնուպոլսում, միայն ժամանակի խնդիր էր, երբ որոշ թուրք ղեկավարների «ազահությունն» և մնացածների ցանկությունն իր վերջնական ավարտին կհասցնեն Թուրքիայի հայերի բնաջնջման «ստոր ծրագիրը», և մայրաքաղաքի հայերը նույնպես կկիսեն մյուսների բախտը: Մորզենթաուն այդ կապակցությամբ նշում էր, որ չի թուլացնելու իր եռանդը՝ «ողբերգությունից խուսափելու» ուղղությամբ աշխատանք տանելու համար՝ միաժամանակ չվնասելով ամերիկյան շահերը, ինչպես որ դա տեղի էր ունեցել մինչ այդ: Դեսպանը կրկին բարձրացնում էր հայերին օգնելու նպատակով մեծ գումար հատկացնելու անհրաժեշտությունը, քանի որ ԱՄՆ-ն միակն էր, որը կարող էր դա անել:⁴⁴⁰

Նույն օրը պետքարտուղար Լանսինգը հեռագրում էր Մորզենթաունին, որ մասնավոր անձանց՝ Միացյալ Նահանգներ հասած և թերթերում հրատարակված հայկական ջարդերին առնչվող նամակները

Relating to Internal Affairs of Turkey, 1910-1929, Roll 46, NA/RG 59/867.4016/373, էջ 714-715:

⁴⁴⁰ St'u NA Microfilm Publications, Microcopy No. 353, Records of the Department of State Relating to Internal Affairs of Turkey, 1910-1929, Roll 44, No. 1121, NA/RG59/867.4016/159:

գայրույթի մեծ ալիք էին բարձրացրել ամերիկյան ժողովրդի շրջանում: Պետքարտուղարը հրահանգում էր դեսպանին շարունակել աշխատանքը թուրքական իշխանությունների հետ՝ հայերի իրավիճակը բարելավելու և նրանց հավաժանքների շարունակությունը կանխելու համար ուղղությամբ: Ըստ պետքարտուղարի՝ հարկավոր էր տեղեկացնել երիտթուրքական կառավարությանը, որ «այդ հավաժանքը քանդում է Միացյալ Նահանգների ժողովրդի բարի զգացմունքը Թուրքիայի հանդեպ»:⁴⁴¹

Պատասխանելով Պետքարտուղարության՝ դեպի ԱՄՆ հայերի արտագաղթ կազմակերպելու վերաբերյալ հարցումներին՝ հոկտեմբերի 9-ին Մորգենթաուն գրում էր, որ Բարձր Դուռն այդ կապակցությամբ ասել է, որ աքսորված հայերի մեծամասնությունը այդ ժամանակ գտնվում է ճանապարհին, և ժամանակ է հարկավոր, որպեսզի նրանք տեղ հասնեն: Միայն այդ ժամանակ Բարձր Դուռը կսկսի թույլտվություններ տրամադրել հայերին՝ Թուրքիայից մեկնելու համար:⁴⁴²

Օսմանյան կայսրության այն շրջաններում, որտեղ Միացյալ Նահանգները հյուպատոսություններ չուներ, ամերիկյան միսիոներներն ուղղում էին հայերի հետ կատարվող դեպքերի մասին իրենց վկայությունները Գերմանիայի հյուպատոսություններին՝ խնդրելով փոխանցել նամակները Կոստանդնուպոլսում ԱՄՆ-ի դեսպանությանը: Ինչպես և մյուս դեպքերում դեսպանությունը փոխանցում էր ամերիկյան քաղաքացիների նամակները Պետքարտուղարությանը: Այսպես՝ 1915 թ. հոկտեմբերի 4-ին տիկին Շեյնը գրում էր Բիթլիսում Գերմանիայի հյուպատոս ֆոն Շոբներ-Ռիխտերին քաղաքում հայ կանանց և երեխաների վիճակի մասին: Նա գրում էր, որ հունիսի 23-ին քաղաքի հայ տղամադկանց, այդ թվում՝ ամերիկյան առաքելությունում գտնվողներին, տանում էին բանտ: Մի քանի օր անց իշխանությունները սկսեցին աքսորել քաղաքի հայ կանանց: Շեյնը հանդիպել էր նահանգապետին և նշել, որ չի կարող հանձնել դպրոցի աղջիկներին և այն կանանց, ովքեր պաշտպանություն էին խնդրել: Նահանգապետը պատասխանել էր, որ կանանց հարցով դիմել է արտգործնախա-

⁴⁴¹ Տե՛ս US Department of State. *Papers Relating to the Foreign Relations of the United States. 1915, Supplement, The World War*, էջ 988:

⁴⁴² Տե՛ս նույն տեղը, էջ 989:

րար Հալիլ Մենթեշեհին⁴⁴³, սակայն վերջինս ուժ չունեի բեկանելու այդ որոշումը, բայց խոստացել էր, որ աղջիկները դեռևս կարող են ժամանակավորապես մնալ դպրոցում: Շեյնը նամակ էր գրել Հալիլին այդ կապակցությամբ, բայց այդպես էլ պատասխան չէր ստացել: Տվյալ շրջանում, ըստ Շեյնի, կանայք և աղջիկներն աշխատում էին հիվանդանոցներում, քաղաքի բողոքական համայնքից դպրոցում աշխատում և ուսանում էին 25 ուսուցիչներ ու աշակերտներ, 25 կանայք ու 12 երեխաներ:

Առաքելությունը խնամում էր նաև շուրջ 30 որբերի, որոնց մի մասին բերել էին թուրք պաշտոնյաները: Կարծելով, որ իշխանությունները դեմ չեն լինի, ամերիկացիները վերցնում էին նաև ուրիշ որբերի՝ ապահովելով նրանց սնունդով և ապաստարանով: Այնուհետև Շեյնը գրում էր, որ չի կարող դեմ լինել պատերազմական վիճակով պայմանավորված տղամարդկանց աքսորելու կառավարության որոշմանը, բայց չէր հասկանում կանանց տանելու անհրաժեշտությունը: Նա դիմում էր Գերմանիայի հյուպատոսին՝ միջոցներ ձեռնարկելու այդ ուղղությամբ: Նա գրում էր, որ Կոստանդնուպոլսում ԱՄՆ-ի դեսպանությունը հավաստիացում էր ստացել կառավարությունից, որ վիլայեթների բողոքական համայնքները բացառություն են կազմելու, սակայն Բիթլիսի պարագայում այդ խոստումը չէր իրագործվել:⁴⁴⁴

Հոկտեմբերի 8-ին Վաշինգտոնում Գերմանիայի դեսպան Բեռնարդորֆը պետքարտուղար Լանսինգին է ներկայացրել Կոստանդնուպոլսում Գերմանիայի դեսպանության կողմից օգոստոսի 9-ին Բարձր Դռանը ներկայացված հուշագիրը՝ հայերի արտաքսման մասին: Ըստ Բեռնարդորֆի՝ պատասխան նամակում օսմանյան կառավարությունը խոստացել էր «անհրաժեշտ միջոցներ ձեռնարկել էքսցեսների կրկնությունից խուսափելու համար»:⁴⁴⁵ Գերմանիայի դեսպանության հուշագրում նշվում էր, որ նախորդ՝ հուլիսի 4-ի հուշագրում Բարձր Դռան ուշադրությանն էր ներկայացվել այն հանգամանքը, որ

⁴⁴³ Հալիլ Մենթեշե (1874-1948)՝ թուրք քաղաքական գործիչ, «Միություն և առաջադիմություն» կուսակցության անդամ, 1908 թ.-ից՝ օսմանյան խորհրդարանի անդամ, 1915-1917 թթ.՝ արտաքին գործերի նախարար, Թուրքիայի Հանրապետության խորհրդարանի անդամ:

⁴⁴⁴ Տե՛ս *United States Official Records on the Armenian Genocide, 1915-1917* /Compiled with an introduction by Ara Sarafian/, էջ 416-417 (NA/RG59/867.4016/254):

⁴⁴⁵ Տե՛ս նույն տեղը, էջ 222 (NA/RG 59/867.4016/1730):

որոշ շրջաններում հայերի արքայի կազմակերպման ընթացքում տեղի էին ունեցել կոտորածներ և թալան, որոնք օսմանյան կառավարությունը չէր կարող որևէ կերպ արդարացնել: Հուշագրում նշվում էր, որ հավաստի աղբյուրներից ստացված տեղեկատվությունը վկայում էր այն մասին, որ հայերի արտաքսման ընթացքում մասն գործողությունները դարձել էին կանոնավոր, դեռ ավելին՝ տեղական իշխանությունները չէին կանխում մասն միջոցների կիրառումը, որի հետևանքով շատ հայեր նույնիսկ չէին հասնում արտարավայր: Այս տեղեկատվությունը ստացվել էր հիմնականում Տրապիզոնի, Գիարբեքիի և Էրզրումի նահանգներից: Իսկ որոշ վայրերում, օրինակ՝ Մարդինում, բոլոր քրիստոնյաները, առանց խտրականության, արժանացել էին նույն բախտին: Հուշագրում նաև նշվում էր, որ հայերի հանդեպ կիրառվող այս հրահանգը սկսել էր տարածվել նաև Փոքր Ասիայի մյուս նահանգների վրա, և վերջին ժամանակներում Իզմիթի շրջանի բոլոր հայկական գյուղերը դատարկվել էին: Գերմանիայի դեսպանության հուշագրում շեշտվում էր, որ այդ պայմաններում Գերմանիան խուսափում էր որևէ պատասխանատվությունից, մասնավորապես, երբ հասարակական կարծիքը սկսել էր մեղադրել Գերմանիային իր բարեկամ երկրի և դաշնակցի՝ Թուրքիայի կողմից կիրառված «բռնության միջոցներին հավանություն տալու և նույնիսկ հրահրելու մեջ»:⁴⁴⁶

Գեսպան Մորգենթաուն շարունակաբար փորձում էր Գերմանիայի դեսպանության միջոցով ճնշում գործադրել դաշնակցից Թուրքիայի վրա՝ կոտորածները դադարեցնելու նպատակով, սակայն այդպես էլ որևէ հաջողության չէր հասնում: Ինչպես Լյուիս Այնշթայնն էր գրում, «ենթարկելով իրենց հավերժ անպատվության, գերմանացիները նույնիսկ մատ չէին բարձրացնելու հայերին փրկելու համար»: Գերմանացիների պատասխանատվությունը ոչ թե այդ ամենը «ղրղելու և սաղրելու» մեջ էր, ինչպես մտածում էր Մորգենթաուն, այլ դեպքերի խափանման համար ոչինչ չանելու: Վանզենհայնը, լինելով ծանր հիվանդ, կտրականապես մերժում էր Մորգենթաունի հայերի համար միջամտելու հարցում և, 1915 թ. հոկտեմբերին «թեժ ընդհարում» ունենալով վերջինիս հետ, վերադարձավ Գերմանիա և մահացու կաթված ստացավ: Շուտով Մորգենթաուն ծանոթացավ գերմանական միսիո-

⁴⁴⁶ Տե՛ս US Department of State. *Papers Relating to the Foreign Relations of the United States. 1915, Supplement, The World War*, էջ 989-990:

ներության շահերի ներկայացուցիչ, ուժեղ և համակրելի մարդ, հայերի բարեկամ Յոհաննես Լեփսիուսի հետ: Մորգենթաուն նրան տրամադրեց կայսրությունում տեղի ունեցող իրադարձությունների մասին իր ունեցած տեղեկատվությունը, իսկ վերջինս Բեռլին վերադառնալուն պես արշավ սկսեց հայերի կոտորածների գործում գերմանական կառավարության մեղսակցության դեմ: Նա նշում էր, որ Գերմանիայի անգործության հետևանքով հայ ժողովրդի կեսը վերացել է, ու պետք է անել ամեն ինչ՝ ողջ մնացած հատվածին փրկելու համար: Սակայն նրա հրապարակային մեղադրանքները դժգոհություն են առաջացնում կառավարական շրջանակներում, և նա ստիպված մեկնում է Հոլանդիա:⁴⁴⁷

Հոկտեմբերի 13-ին Մորգենթաուն գրում էր պետքարտուղարին, որ կաթոլիկ և բողոքական հայերը, ինչպես նաև հաստատությունների աշխատանքներում ներգրավվածներից շատերն աքսորվել էին մյուս հայերի հետ: Բացառություններ էին արվել միայն մի քանի տեղերում շատ փոքր թվով մարդկանց համար: «Աքսորյալների իրավիճակն ուղղակի տուկալի է,- գրում էր դեսպանը,- ամեն օր շատերը մահանում են, իսկ սառը եղանակը մեծապես բարձրացնելու է մահացության թիվը»:⁴⁴⁸

Հոկտեմբերի 14-ին Տրապիզոնում հյուպատոս Հայզերը հաղորդում էր Մորգենթաունին ծագումով իտալուհի, կաթոլիկ Կարոլինա Լականդելլայի պատմության մասին, որի ամուսինն օսմանյան քաղաքացի էր և հայ: Նրան աքսորել էին, և նա հավանաբար մահացել էր: Տիկինը ցանկանում էր վերականգնել Իտալիայի իր քաղաքացիությունը և դիմել էր ամերիկյան հյուպատոսություն: Ներկայումս նա և բողոքական հայ տիկին Շաքարջյանը գտնվում էին քաղաքի Կարմիր խաչի հիվանդանոցում: Հյուպատոսը դիմել էր նահանգապետին՝ իտալուհի կնոջն ազատ արձակելու խնդրանքով, քանի որ նա կաթոլիկ էր և հայ չէր: Նահանգապետը մերժել էր հյուպատոսին՝ ասելով, որ նույնիսկ նման հարցով նա պետք է դիմի Բարձր Դռանը: Իսկ տիկին Շաքարջյանին տեղափոխեցին քաղաքի մաքսատան գլխավոր տնօրեն Բես-

⁴⁴⁷ Տե՛ս **Einstein Lewis**, *Inside Constantinople: A Diplomat's Diary during the Dardanelles Expedition*, էջ 176; **Morgenthau Henry**, *Ambassador Morgenthau's Story*, էջ 383:

⁴⁴⁸ Տե՛ս *United States Official Records on the Armenian Genocide, 1915-1917* /Compiled with an introduction by Ara Sarafian/, էջ 221 (NA/RG 59/867.4016/171):

սին էֆենդիի տուն, որը որբանոցից վերցրել էր այդ տիկնոջ երեխային: Ըստ հյուպատոսի՝ ինչպես նա, այնպես էլ քաղաքում մնացած մյուս կաթուղի ու բողոքական հայ կանայք և երեխաները ազատ չէին արձակվելու. նրանք ապրելու էին մահմեդականների տներում: Հյուպատոսը տեղեկացնում էր, որ ամերիկյան դպրոցի մոտակայքում ապրող մի մահմեդականի տանն ապրում էին չորս փոքր հայ բողոքական աղջիկներ, որոնց կրոնափոխ էին արել և փոխել անունները:⁴⁴⁹

Չորս տարի անց՝ 1919 թ. ապրիլի 11-ին, Բաղդադում նշանակված հյուպատոս Օսկար Հայզերը հաղորդում էր պետքարտուղարին, որ Տրապիզոնում իր պաշտոնավարության շրջանում տեղահանված հայ բնակչությունը գրեթե ամբողջությամբ կոտորվեց էլ Ջեզիրեի ճանապարհին: Հայերի տեղահանության և ջարդի գործընթացը «բարեխիղճ» կերպով կազմակերպելու նպատակով որպես «Միություն և առաջադիմություն» կուսակցության ներկայացուցիչ Էսքիշեհիրից Տրապիզոն էր գործուղվել Նայիլ բեյը: Մինչև նրա ժամանումը Տրապիզոնի նահանգապետ Ջեմալ Ազմի բեյը և հույն արքեպիսկոպոսը նախաձեռնել էին կազմակերպել 15 տարեկանից փոքր որբ աղջիկների և 10 տարեկանից փոքր որբ տղաների խնամքն ու կրթությունը: Նրանք շուրջ երեք հազար երեխա էին հավաքել քաղաքի դատարկ տներում, գտել էին նրանց համար հայ ուսուցիչներ և խնամողներ: Ուսուցիչներից երեքն աշխատում էին ամերիկյան առաքելության դպրոցում: Նայիլ բեյը, դժգոհություն հայտնելով այդ ծրագրից, կոչ էր արել մահմեդականներին ընտրելու և վերցնելու իրենց համար աղջիկներ ու տղաներ: Դրա հետևանքով մահմեդականները այդ տներից վերցրել էին շատ երեխաներ: Անձամբ Նայիլ բեյն ընտրել և վերցրել էր տասը գեղեցիկ աղջիկներ՝ իր և ընկերների հաճույքների համար: Երեխաներից շատերին դուրս էին բերել քաղաքից նավակներով և խեղդել ծովում: Անձամբ հյուպատոսը 16 երեխայի դիակ էր տեսել ծովափին. նրանց թաղել էր մի հույն կին իտալական վանքի մոտ: Մի քանի շաբաթ անց Նայիլ բեյը վերադարձել էր Էսքիշեհիր՝ իր հետ տանելով թալանված ոսկի և զարդեղեն: Ըստ Հայզերի, եթե երբևիցե հայերի տեղահանության և կոտորածների մեղավորները կանգնելու լինեն դատարանի առջև, Նայիլ բեյը պետք է նրանցից մեկը լինի. Տրապի-

⁴⁴⁹ Տե՛ս նույն տեղը, էջ 327-328 (NA/RG 59/867.4016/224):

գոնում իտալական վանքի վանականներն ու հույն արքեպիսկոպոսը պատրաստ կլինեն արժեքավոր վկայություններ տրամադրելու նրա գործողությունների մասին:⁴⁵⁰ Հոկտեմբերի 16-ին հյուպատոս Ջեքսոնը պետքարտուղարին և Կոստանդնուպոլսում դեսպանությանն է փոխանցել ամերիկյան միսիոներ Մերի Ռիզզի՝ «Խարբերոյից հայկական համատարած մեկնումի» մասին զեկուցագիրը: Նա գրում էր, որ հունիսի 1-ին երեք հազար հայեր՝ հիմնականում կանայք, աղջիկներ և երեխաներ, մեկնեցին Խարբերոյից 70 ոստիկանների և թուրք աղղեցիկ գործիչ Ֆահի բեյի ուղեկցությամբ: Մյուս օրը նրանք անվտանգ հասնում են Հանքոյ: Այստեղ Ֆահի բեյը 400 լիրա է հավաքում ժողովրդից՝ նրանց անվտանգությունն ապահովելու ու մինչև Մալաթիա և Ուրֆա ուղեկցելու նպատակով: Սակայն նույն օրը նա անհետանում է այդ գումարով: Երրորդ օրը քարավանը հասնում է Տուտլիքոյ, որտեղ արաբներն ու քրդերը սկսեցին գողանալ կանանց և աղջիկներին: Ոստիկաններն իրենք էին խրախուսում «կիսավայրենի» ցեղերին, որ վերջիններս հարձակվեին ու թալանեին հայերին և բռնաբարեին կանանց: Շատ դեպքերում նրանք նույնպես բացահայտ կերպով մասնակցում էին բռնաբարություններին: Չորրորդ օրը նրանք հասան Կաունիլիսան, որտեղ ոստիկանները սպանեցին երեք նշանավոր հայերի: Իններորդ օրը նրանք ժամանեցին Իզոլի, որտեղ նրանց ստիպեցին գնել ձիեր և սայլեր՝ Մալաթիա տեղափոխելու համար: Սակայն Մալաթիայից նրանց հետ վերադարձրին՝ կրկին ստիպելով գնել ավանակներ և ջորիներ, որոնք ի վերջո գողացան: Իզոլի Հաջիում ոստիկանը փախցրեց տիկին Արաբսի Գյուլգիլյանին և նրա երկու դուստրերին: Տասներեքերորդ օրը քարավանն անցավ Մալաթիայի միջով և հասավ Չութլուզ գյուղը: Այստեղ ոստիկանները, կրկին աքսորյալներից հավաքելով 200 լիրա՝ իբր նրանց պաշտպանությունն ապահովելու համար, լքեցին նրանց՝ թողնելով Աղջա-Դաղի քրդերի ցեղապետի հույսին: Ճանապարհի տասնհինգերորդ օրը քրդերն առանձնացրին 15-90 տարեկան 150 տղամարդու և «մորթեցին» քարավանից որոշակի հեռավորության վրա: Նույն օրը 300 հոգի Սվազից, Ակնից և Թոքատից միացան Խարբերոյից դուրս եկած քարավանին՝ հասցնելով քարավանի թիվը 18 հազարի: Քարավանը շարունակեց ճանապար-

⁴⁵⁰ Տե՛ս նույն տեղը, էջ 687-688 (NA/RG 59/867.4016/411):

հը տասնյոթերորդ օրը՝ գտնվելով մեկ այլ քուրդ բեյի «հսկողության» ներքո: Քրդերը հերթական անգամ թալանեցին հայերին, փախցրին գեղեցիկ աղջիկներին Սվազից, գիշերը գրանցվեցին բռնաբարության դեպքեր: 25-րդ օրը քարավանը հասնում էր Գյոլիկ, իսկ 30-րդ օրը՝ Քեհտեհ: Վերջին գյուղում քարավանը մնաց երկու օր: Այդ ընթացքում գրանցվեցին կանանց և աղջիկների գողության բազմաթիվ դեպքեր: 40-րդ օրը քարավանը հասավ Եփրատ գետը: Աքսորյալները շուրջ 200 տղամարդու դի տեսան ջրերում: Մոտակա գյուղի քուրդ ղեկավարը յուրաքանչյուր հայից մեկ լիրա հավաքեց նրանց գետում խեղդամահ չանելու դիմաց: 52-րդ օրը քարավանը հասավ մեկ այլ քրդական գյուղ, որտեղ նրանցից վերցրին վերջին հագուստը: Դրա հետևանքով նրանք հինգ օր քայլում էին կիսամերկ, հարյուրներով մահանում ճանապարհին: Երբ քարավանը հասավ ջրհորի, ոստիկանները թույլ չէին տալիս աքսորյալներին ջուր խմել, եթե նրանք չէին վճարում երեք լիրա: Հերթական գյուղ հասնելուն պես արաբ բնակիչները հին հագուստ տրամադրեցին հայերին: 60-րդ օրը 18 հազարանոց քարավանից միայն 300 աքսորյալներ հասան Վերանշեհիր: 64-րդ օրը հիվանդ տղամարդկանց, կանանց և երեխաներին հավաքում են մի տեղ ու ողջ-ողջ այրում: Ողջ մնացածները հասնում են Ռաս-ուլ-Այն, որտեղ նրանց առաջին անգամ հաց են բաժանում, սակայն հացն այնպիսի որակի էր, որ աքսորյալները չէին կարողանում ծամել: 70-րդ օրը նրանք հասնում են Հալեպ. Խարբերդից աքսորված երեք հազար հայերից մնացել էին 35 կին և երեխա, և ընդամենը 150 կին և երեխա՝ 18 հազարանոց քարավանից:⁴⁵¹

1915 թ. հոկտեմբերի 22-ին Վաշինգտոնում Օսմանյան կայսրության դեսպանությունը տեղեկատվություն է ներկայացրել Պետքարտուղարությանն այն մասին, որ, օսմանյան գլխավոր սպայակույտից ստացված հաղորդագրության համաձայն, հույն և հայ բնակչությունն օգնել էր ռուսական բանակին և «բարբարոս գործողություններ կիրառել» Կովկասի սահմանի երկայնքով բնակվող մահմեդական բնակչության նկատմամբ: Այդ «սոսկալի գործողությունները» իրականացվել էին ռուսական իշխանությունների ներկայացուցիչների աչքի առջև Օլթիի և Արդանուշի շրջաններում: Բերվում էին տասը դեպքերի

⁴⁵¹ Տե՛ս NA Microfilm Publications, Microcopy No. 353, Records of the Department of State Relating to Internal Affairs of Turkey, 1910-1929, Roll 43, No. 278, NA/RG 59/867.4016/225:

օրինակներ, երբ ռուսները, հույներն ու հայերն իբր հարձակվում էին մահմեդականների վրա, սպանում մարդկանց և երեխաներին, բռնաբարում կանանց և աղջիկներին: Տեղեկատվության մեջ նշվում էր, որ այդ դեպքերի թիվը կարելի էր բազմապատկել, սակայն դրանք վկայում էին այն «Բարբարոս ոգու» մասին, որն ուղեկցում էր ռուսներին և նրանց աջակցող հայերին ու հույներին Կովկասում պատերազմական գործողությունների ընթացքում:⁴⁵²

Ի պատասխան Հալեպում հյուպատոսի և Կոստանդնուպոլսում դեսպանի՝ հայերին օգնության հասնելու խնդրանքին՝ Գթության կոմիտեի գանձապետ Օգոստ Բելմոնտը տեղեկացրել էր Պետքարտուղարությանը Հալեպում գտնվող աքսորված 150 հազար հայերին 65 հազար դոլար գումար տրամադրելու մասին: Հոկտեմբերի 25-ին Պետքարտուղարությունը դեսպանի անունից շնորհակալություն է հայտնում կոմիտեին՝ հայերին օգնելու նպատակով գումար տրամադրելու համար:⁴⁵³

Հոկտեմբերի 27-ին ամերիկյան միսիոներ Փոստը նամակ էր գրել ԱՄՆ-ի դեսպանությանը Կոնիաում տիրող իրավիճակի մասին: Ըստ Փոստի՝ քաղաքում դեռևս շուրջ քսան հազար աքսորյալներ կային, որոնք մեծ խմբերով ճամբարներ էին կազմել քաղաքի տարբեր վայրերում: Ամերիկյան հիվանդանոցում աշխատող միսիոներներն օրական կարողանում էին կերակրել 500-600 հոգու: Փոստը նշում էր, որ մահացության դեպքերն իրենց մոտ սովորաբար կազմում էին 4%: 1915 թ. սկզբին, ընդգրկելով նաև բանակում վիրավորված թուրք զինվորներին, այն հասավ 6%-ի: Իսկ հայ աքսորյալների շրջանում մահացությունը կազմեց 30%: Ըստ Փոստի՝ այդ «ազգը համակարգված կերպով մահանում է դաժան և նենգ մեթոդների կիրառմամբ, և նրա ոչնչացումը միայն ժամանակի հարց է»:⁴⁵⁴

Հոկտեմբերի 28-ին Բաթումում ԱՄՆ-ի հյուպատոսը գեկուցում է պետքարտուղարին, որ, պաշտոնական տեղեկությունների համաձայն, Ռուսաստանի Երևանի նահանգում կուտակվել են 110 հազար, Ելիզավետպոլի նահանգում՝ 20 հազար, Կարսի նահանգում՝ 20 հա-

⁴⁵² Տե՛ս *United States Official Records on the Armenian Genocide, 1915-1917* /Compiled with an introduction by Ara Sarafian/, էջ 229-230 (NA/RG59/867.4016/178):

⁴⁵³ Տե՛ս նույն տեղը, էջ 231-232 (NA/RG 59/867.4016/179):

⁴⁵⁴ Տե՛ս նույն տեղը, էջ 338-340 (NA/RG 59/867.4016/192):

զար և Թիֆլիսում՝ 30 հազար հայ փախստականներ, որոնց վիճակը շատ դեպքերում «խղճալի է»:⁴⁵⁵

Հոկտեմբերի 30-ին Մերսինում հյուպատոս Նաթանը զեկուցում է դեսպան Մորգենթաուին, որ արքայազն հայերի հոսքը հյուսիսից դեռևս չի դադարել: Վերջին շրջանի վիճակը «սարսափելի էր», իսկ տանջանքները՝ «աննկարագրելի»: Ոստիկանությունն ու պաշտոնյաները թույլ չէին տալիս, որ նրանց օգնություն ցուցաբերվի, ինչը «վկայում էր այն մասին, որ մեծամասնության վերջնական ճակատագիրը դանդաղ մահն էր»: Հյուպատոսը զեկուցում էր, որ Ադանայի «Միություն և առաջադիմություն» կոմիտեի երեք «մուլի» անդամներ հեռացվել էին քաղաքից հայերին քաղաքից արքայազն իրենց մեթոդների պատճառով: Ըստ հաստատված լուրերի՝ նրանք ծրագրում էին հրդեհել հայերի տներն ու շինությունները, այդ թվում՝ ամերիկյան առաքելությունը: Արքայազն մարդկանց անշարժ գույքի և անձնական ունեցվածքի նոր օրենքի կիրառումն այնպես էր կազմակերպված, որ հայերին ընդհանրապես որևէ բան չէր հասնելու: Նրանց տներում այդ ժամանակ ապրում էին մահմեդական փախստականներ և պաշտոնյաներ, արքայազն առևտրականների ունեցվածքը գտնվում էր հատուկ ստեղծված հանձնաժողովի հսկողության ներքո, որի գործունեությունը որևէ հավատ չէր ներշնչում:⁴⁵⁶

Նոյեմբերի 4-ին պետքարտուղար Լանսինգին հասցեագրված խիստ զաղոմի նամակում դեսպան Մորգենթաուն գրում էր, որ այդ պահին վիճակը Թուրքիայում «չափազանց վտանգավոր էր»: Սուլթանը բացարձակապես զրկված էր իշխանությունից. նա ուղղակի ստորագրում էր իրեն ներկայացվող հրամանագրերը: Մեծ վեզիրը երբեք իրական իշխանություն չէր ունեցել, իսկ երբ արտաքին գործերի նախարարի պաշտոնը հանձնեց Հալիլին, նրա դերը դարձավ «պարզապես դեկորատիվ»: Իշխանության իրական ուժն այս երկրում գտնվում էր «Միություն և առաջադիմություն» կուսակցության կոմիտեի ձեռքում, որը բաղկացած էր քառասուն անդամներից: Նրանցից ինը կոմիտեի ղեկավարներն էին: Վերջիններս էին կոմիտեի նախա-

⁴⁵⁵ Տե՛ս NA Microfilm Publications, Microcopy No. 353, Records of the Department of State Relating to Internal Affairs of Turkey, 1910-1929, Roll 51, NA/RG 59/867.48/201:

⁴⁵⁶ Տե՛ս նույն տեղը, No. 634, NA/RG 59/867.4016/238:

գահ Նազիմը⁴⁵⁷, գլխավոր քարտուղար Միդիաք Շյուքրին, ներքին գործերի նախարար Թալեաթը, պատերազմի նախարար Էնվերը, ծովային նախարար և 4-րդ բանակի հրամանատար Ջեմալը, Այուբ Սաբրին (որպես ռազմագերի գտնվում էր Մալթայում), արտաքին գործերի նախարար Հալիլ Մենթեշեն, Պատգամավորների պալատի նախագահ Հաջի Ադիլ բեյը և Բեհետդին Շաքիրը⁴⁵⁸: Իրական իշխանությունը գտնվում էր կոմիտեի անդամների կամ նրա մեծամասնության ձեռքում: Այս պայմաններում կոմիտեի որևէ անդամ չէր կարող դառնալ պետության «գերագույն ղեկավար»: Կոմիտեն բացարձակ հսկողություն էր սահմանել բանակի, նավատորմի և քաղաքացիական իշխանության նկատմամբ: Նրանք հեռացրել էին պաշտոններից շատ նահանգապետերի, որոնք հրաժարվել էին իրենց հրահանգները կատարելուց:

Երիտթուրքերի բացարձակ հսկողության ներքո էր գտնվում Պատգամավորների պալատը, որի ներկայացուցիչներին ընտրում էր կոմիտեն, այլ ոչ թե ժողովուրդը: Միաժամանակ Սենատի մեծամասնությունը անկախ էր, քանի որ սենատորների պաշտոնը ցմահ էր, և նրանցից շատերն ընտրված էին Մեհմեդ Քյամիլ փաշայի⁴⁵⁹ կողմից և նշանակված սուլթան Աբդուլ Համիդի կողմից դեռևս 1908 թ.: Գեսապանը գրում էր, որ երբ սենատոր Ահմեդ Ռ-զա բեյը⁴⁶⁰ փորձել էր հարցում

⁴⁵⁷ **Նազիմ բեյ Սելանիքի** (1870-1926)՝ թուրք քաղաքական գործիչ, բժիշկ, «Միություն և առաջադիմություն» կուսակցության գլխավոր քարտուղար և գաղափարախոս, Հայոց ցեղասպանության գլխավոր կազմակերպիչներից: Առաջին համաշխարհային պատերազմից հետո փախել է Գերմանիա, ռազմական դատարանի որոշմամբ հեռակա կարգով դատապարտվել մահապատժի: Քենալ Աթաթուրքի դեմ մահափորձ կատարելու մեղադրանքով 1926 թ. ենթարկվել է մահապատժի:

⁴⁵⁸ **Բեհետդին Շաքիր** (1874-1922)՝ թուրք քաղաքական գործիչ, «Միություն և առաջադիմություն» կուսակցության հիմնադիրներից, Հայոց ցեղասպանության գլխավոր կազմակերպիչներից, «Երեքի գործադիր կոմիտեի» անդամ: Հեռացրել է պաշտոններից այն պաշտոնյաներին, որոնք հրաժարվել են հայերին բնաջնջելու հրամանները կատարելուց: Պատերազմի ավարտից հետո ոչնչացրել է հայերի բնաջնջմանը վերաբերող փաստաթղթերի մեծ մասը: Ապրել է Բեռլինում, մահապատժի ենթարկվել Արամ Երկանյանի և Արշավիր Շիրակյանի կողմից:

⁴⁵⁹ **Մեհմեդ Քյամիլ փաշա** (1838-1912)՝ թուրք պետական և քաղաքական գործիչ, 1884-1912 թթ. չորս անգամ եղել է մեծ վեզիր, «Օսմանյան պետության քաղաքական պատմությունը» եռահատոր գրքի հեղինակն է:

⁴⁶⁰ **Ահմեդ Ռ-զա բեյ** (1858-1930)՝ թուրք քաղաքական և պետական գործիչ, գիտնական, 1908 թ.-ից՝ օսմանյան խորհրդարանի Ներկայացուցիչների պալատի, իսկ 1912

ուղղել կառավարությանը՝ հայերի նկատմամբ գործադրվող քաղաքականության և նրանց սնունդով ապահովելու գործընթացը նկատմամբ հսկողություն սահմանելու խնդրով, Թալեաթը զգուշացրել էր, որ եթե Ռ-զա բեյը շարունակի հայերի օգտին իրականացվող իր գործունեությունը, ինքը կիրապարակի մամուլում հայերին պախարակող հայտարարություններ, որոնք ավելի կիրահրեն բուրքական բնակչությանը նրանց դեմ: Մեկ այլ աղբյուրից հայտնի էր դարձել, որ կառավարությունը խոստացել է փոխել իր քաղաքականությունը հայերի նկատմամբ, եթե Ահմեդ Ռ-զան և նրա ընկերները համաձայնեն կառավարությանն այդ հարցի շուրջ հարցապնդումներ չուղղել: Ըստ դեսպանի՝ Ռ-զան և նրա ընկերները ստիպված էին ընդունել այդ առաջարկը:

Ըստ Մորզենթաուի՝ իրականում կոմիտեն շատ քիչ հետևորդներ ուներ ժողովրդի շրջանում: Նրանք կողմնակիցներ ունեին հիմնականում Կոստանդնուպոլսում, Չմյուռնիայում և մի քանի այլ կենտրոններում: Նրանց իշխանությունը հենվում էր հիմնականում բանակի և երկրում ստեղծված վախի մթնոլորտի վրա: Նրանք վերականգնել էին երկրում Աբդուլ Համիդի կողմից ստեղծված «լրտեսական համակարգը»: Հայերի հանդեպ իրականացվող քաղաքականության միջոցով նրանք այնպես էին ահաբեկել ժողովրդին, որ երկրում այլևս որևէ ընդդիմություն այդ հարցում գոյություն ունենալ չէր կարող: Կառավարության և կոմիտեի միակ անդամները, որոնք տարբերվում էին մյուսներից, մեծ վեզիրը և, հավանաբար, Հալիլ Մենթեշեն էին: Երբ նշվածից երկու տարի առաջ Մորզենթաուն ժամանել էր Թուրքիա, ներկա կազմից միայն Թալեաթն էր կառավարության կազմում: Այն ժամանակ կառավարության կազմում էին դյոնմեն Չավիդ բեյը, հայ Օսկան Մարդիկյան էֆենդին, չերեզ Մահմուդ փաշան, արաբ քրիստոնյա Բուստանի էֆենդին: Սակայն Թուրքիայի՝ պատերազմի մեջ մտնելուց անմիջապես հետո բոլոր այս մարդիկ հրաժարական տվեցին, քանի որ համաձայն չէին պատերազմի մեջ մտնելու գաղափարին: Երկրի մամուլը գրաքննվում էր և կատարում միմիայն «Միություն և առաջադիմություն» կուսակցության ցանկությունները: Ըստ դեսպանի՝ հնարավոր էր, որ շուտով Էնվերը կամ Թալեաթը դառնար մեծ վեզիր, թեև ներկա կառավարության բոլոր անդամներն իշխանություն էին ուզում, սա-

թ.-ից՝ Սենատի նախագահ, «Ազատություն և համաձայնություն» ընդդիմադիր կուսակցության անդամ, կրթության նախարար:

կայն որևէ մեկը բացարձակ իշխանություն չուներ: Ի վերջո, երկրում ստեղծվել էին «բացարձակ խառնաշփոթ վիճակ և անիշխանություն»: Դրա վառ օրինակն էր, ըստ Մորգենթաուի, Ջեմալ փաշան, որը ծովային նախարար էր, իսկ տվյալ պահին 4-րդ բանակի հրամանատարը, որը հռչակել էր իրեն Պաղեստինի և Սիրիայի «բացարձակ դիկտատոր»: Եվ երբ ԱՄՆ-ի դեսպանը շարունակաբար խնդրում էր Էնվերին ինչ-որ հարցեր լուծել այդ շրջանում, նա պատասխանում էր, որ կփոխանցի խնդրանքը Ջեմալին:

Իշխանության դեկին գտնվող այդ ավազակախումբը, որը դեռևս յոթ տարի առաջ «անպատասխանատու հեղափոխականների և արկածախնդիրների» խումբ էր, գտնում էր, որ վերջապես կարողացել է ձերբագատվել տերությունների հսկողությունից, կարողացել է իր սեփական ռեսուրսներով (չհաշված, իհարկե, Գերմանիայից ստացված հինգ միլիոն ֆունտ վարկը) ոտքի կանգնեցնել մեկ միլիոնի հասնող բանակ, որը հաջողությամբ դիմակայել էր Բրիտանիայի նավատորմին և ռուսական բանակին: Եվ նրանք, ըստ դեսպանի, իրապես «շատ հպարտ են իրենց հաջողությամբ»: Մորգենթաուն նաև նշում էր, որ այս մարդկանց մտածելու արևելյան ոճը լիովին տարբերվում էր, և նրանց հասկանալու համար պետք էր ապրել երկրում: Այդ առումով Մորգենթաուն գրում էր. «Նրանց բացարձակ անկեղծությունը (որը ժամանակ առ ժամանակ ընդունում է անպատկառության ձև) իրենց բոլոր գործողությունների մասին, ինչքան էլ դաժան կամ հանցագործ դրանք կարող են լինել, ուղղակի ապշեցուցիչ է: Նրանք խոսում են հայկական ցեղը ոչնչացնելու իրենց որոշման մասին, ինչպես ամբողջապես արդարացված մի գործողության»: Երիտթուրքերը ոչնչացրել կամ տեղահանել էին երկրի հայ բնակչության երկու երրորդին՝ «զրկվելով շատ խելացի և օգտակար ազգից»:⁴⁶¹

Շարունակելով զեկուցել Ադանայի շրջանում աքսորված հայերի վիճակի մասին՝ նոյեմբերի 4-ին Մերսիմում հյուպատոս Նաթանը գրում էր, որ Տարսուսի և Օսմանիեի շրջանում գտնվող ճամբարները «սարսափելի հակասանիտարական վիճակում» էին, ինչը ստեղծվել էր սովից և հիվանդություններից մահացած մարդկանց դիակների ոչ պատշաճ թաղման հետևանքով: Աքսորյալների շրջանում մահացու-

⁴⁶¹ Տե՛ս նույն տեղը, Roll 6, NA/RG 59/867.00/797.5, էջ 1-8:

յան տոկոսն աճում էր, քանի որ իշխանություններն ընդհանրապես չէին ապահովում նրանց սնունդով:

Հյուպատոսն առաջարկում էր դեսպանին դիմել օսմանյան կառավարությանը՝ արտոլված հայերի վիճակը բարելավելու խնդրով՝ միաժամանակ հիշատակելով ԱՄՆ-ում Մեծ Բրիտանիայի նախկին դեսպան Ջեյմս Բրայսի առաջարկությունն այն մասին, որ «Միացյալ Նահանգները պետք է միջոցներ ձեռնարկի հայերի բնաջնջումը կանխելու նպատակով»: Նա հիշեցնում էր դեսպանին, թե ինչպես 1909 թ. եվրոպական տերությունների անգործության հետևանքով տեղի ունեցան հայկական կոտորածներ: Հյուպատոսը նշում էր, որ քանի որ ստեղծված իրավիճակը Հայկական հարցում եվրոպական տերությունների անհաջող քաղաքականության արդյունքն էր, այն պետք էր փոխարինել Միացյալ Նահանգների գործուն միջամտությամբ: Նա հույս էր հայտնում, որ դեսպանի՝ այդ ուղղությամբ նախաձեռնած գործողություններն կտան դրական արդյունք:⁴⁶²

Երկու օր անց Նաթանը գրում էր, որ տեղական իշխանությունները հրահանգ էին ստացել Կոստանդնուպոլսից կանգնեցնելու հայերի հետագա տեղահանությունը: Ըստ հյուպատոսի՝ դա վերաբերում էր միայն Մերսին, Տարսուս և Ադանա քաղաքների մի քանի հազար հայ բնակիչներին: Մյուս կողմից հրահանգ էր ստացվել կազմակերպելու ճամբարներում գտնվող արտոլյալների հետագա ուղևորությունը դեպի հարավ՝ տեղ պատրաստելով արտոլյալների նոր հոսքի համար: Ըստ հյուպատոսի՝ «կարևոր» կայսերական տեսուչ էր ժամանել նահանգ՝ հայերի ունեցվածքի հանդեպ տեղական պաշտոնյաների չարաշահումների հարցը քննելու նպատակով:⁴⁶³

Նոյեմբերի 8-ին Չմյուռնիայում հյուպատոս Ջորջ Հորտոնը ԱՄՆ-ի պետական քարտուղարությանն ու դեսպանությանն է ներկայացրել ամերիկացի Ռուբեր Գեդդեսի և անանուն մի ականատեսի վկայությունները՝ Փոքր Ասիայում հայ բնակչության դեմ թուրքական իշխանությունների կողմից իրականացվող քաղաքականության մասին: Հորտոնի զննատմամբ՝ «այն, ինչ այսօր կատարվում է Հայկական Թուրքիայում, իր կանխամտածված ու երկարատև սարսափներով և

⁴⁶² Տե՛ս *United States Official Records on the Armenian Genocide, 1915-1917* /Compiled with an introduction by Ara Sarafian/, էջ 357-358 (NA/RG 59/867.4016/239):

⁴⁶³ Տե՛ս NA Microfilm Publications, Roll 43, NA/RG 59/867.4016/240:

չափերով գերազանցում է ամեն ինչ, ինչ առայժմ տեղի է ունեցել աշխարհի պատմության ընթացքում»։ Ըստ հյուպատոսի՝ որևէ հատուկ տեղ չկար, ուր աքսորում էին հայերին. 800 հազարից մինչև մեկ միլիոն «մարդկային էակներ» անցնում էին «դանդաղ և սուկալի տանջանքների գործընթաց», որից ընդհանուր առմամբ կարող էր տուժել երկու միլիոն մարդ։⁴⁶⁴

Գեղդեսը գրում էր, որ սեպտեմբերի 16-ին դուրս էր եկել Հալեայից և տեսել Աֆիոն Գարահիսարում մի մեծ ճամբար, որտեղ «ողբալի վիճակում» տեղավորված էին շուրջ 10 հազար հայեր՝ ժամանած Սև ծովի շրջաններից։ Հաջորդ մեծ ճամբարը Կոնիայում էր, որտեղ Գեղդեսն ականատես էր դարձել հայերի հանդեպ կիրառվող բռնությունների։ Ըստ Գեղդեսի՝ Օսմանիե կայսրանի երկու կողմում՝ կես մղոն տարածության վրա, տեղակայվել էր մեծ ճամբար, որտեղ «սարսափելի», «թշվառ» և հակասանիտարական պայմաններում պահում էին շուրջ 50 հազար հայերի։ Այստեղ հայերի տարբեր քարավաններ էին փոխարինում մեկը մյուսին, սակայն իշխանությունները որևէ միջոց չէին ձեռնարկում ճամբարը մաքրելու և համապատասխան սանիտարական պայմաններ ապահովելու ուղղությամբ։ Աքսորյալները սնունդով չէին ապահովվում, նրանք վաճառում էին ունեցած-չունեցածը՝ հաց հայթայթելու համար։ Մեկնելով Օսմանիեից՝ նա ճանապարհին հանդիպել էր հազարավոր հայերի, որոնք քայլում էին դեպի Հալեայ։ Ջրուցելով ամերիկյան առաքելության դպրոցներում ուսանած մի քանի հայերի հետ՝ Գեղդեսը պարզել էր, որ նրանք ճանապարհին էին գտնվում արդեն երկու ամիս։ Դաժան այդ ճամփորդության ընթացքում նրանք ծախսել էին, կամ էլ նրանցից գողացել էին եղած դրամական միջոցները, հագուստն ու ունեցվածքը։ Ինթիլիում նա հանդիպել էր շուրջ 100 հազարանոց, իսկ Կաթմայում՝ 150 հազարանոց ճամբարների։ Թուրք զինվորները թույլ էին տալիս դեպի Հալեայ տանող ճանապարհ դուրս գալ միայն այն հայերին, ովքեր դրամ էին նրանց վճարում։ Միջոց չունեցող հայեր կային, որոնք մինչև երկու ամիս գտնվում էին ճամբարում։ Դճամբարների սանիտարական վիճակը «գարշելի» էր։

Հալեայում նրանց տեղավորում էին դատարկ շինություններում,

⁴⁶⁴ Տե՛ս նույն տեղը, Roll 43, No. 337, NA/RG 59/867.4016/243:

բակերում, հայկական եկեղեցիներում, բրիտանական հյուպատոսության շենքում: Նրանց իրավիճակը «աննկարագրելի» էր: Ամեն օր նրանք հարյուրներով մահանում էին քաղցից և հիվանդություններից: Գրամական միջոցներ ունեցող հայերին զնացքով ուղարկում էին Դամասկոս, իսկ չունևորներին՝ Դեյր-էզ-Չոյր:

Դամասկոսում իրավիճակը գրեթե չէր տարբերվում Հալեպից: Այստեղից աքսորյալներին ուղարկում էին դեպի հարավ, և նրանց ճակատագիրը բոլորի համար մնում էր անհայտ: Մասնավոր գրույցներում թուրքերն ասում էին, որ այդ աքսորի նպատակը ազգի բնաջնջումն էր, և իրենց նույնիսկ արգելված էր օգնություն ցուցաբերել կամ ողորմություն տալ հայերին:

Հոկտեմբերի վերջին Գեդդեսը Հալեպից մեկնել էր դեպի Չմյուռնիա՝ հանդիպելով ճանապարհներին հայ աքսորյալների նորանոր քարավանների և բազմաթիվ դիակների՝ սփռված ճանապարհի եզրերին: Ընտանիքները հիմնականում բաժանված էին, կանայք և երեխաները քայլում էին առանձին, ճանապարհին ծնված երեխաները մահանում էին, քանի որ մայրերը չէին կարողանում նրանց կերակրել: Այս մարդկանցից որևէ մեկը տեղյակ չէր, թե ինչ պատճառով էին իրենց աքսորել, և որտեղ էր լինելու իրենց վերջնական կայանատեղին:⁴⁶⁵ Մորզենթաուն գրում էր, որ Ուլթեր Գեդդեսը մահացել էր Չմյուռնիա հասնելուն պես:⁴⁶⁶

«Հայկական հարցի մասին» երկրորդ հուշագրում ամերիկացի ակնաատեսը նշում էր, որ հայերին աքսորում էին Հյուսիսային Հայաստանի և Անատոլիայի Խարբերդ, Դիարբեքիր, Բիթլիս, Մարաշ, Չեյթուն, Սվազ, Էրզրում ու ուրիշ քաղաքներից և շրջաններից դեպի սիրիական անապատի սահմանը: Նրանք հասել էին արաբական Միադին գյուղը, որը գտնվում էր Դեյր-էզ-Չոյրից մեկ օրվա հեռավորության վրա՝ դեպի հարավ: Այդ ժամանակ, Սիրիայի բոլոր քաղաքներում, մասնավորապես՝ Դամասկոսում և Հալեպում, հազարավոր հայեր կային, որոնց վիճակը «խղճալի» էր: Նրանցից շատերը ճանապարհին էին չորսից վեց ամիս: Հայերին թույլ էին տալիս մնալ այս քաղաքներում այնքան, մինչև նոր քարավաններ կժամանեին:

⁴⁶⁵ Տե՛ս *United States Official Records on the Armenian Genocide, 1915-1917* /Compiled with an introduction by Ara Sarafian/, էջ 380-383 (NA/RG 59/867.4016/243):

⁴⁶⁶ Տե՛ս նույն տեղը, էջ 378 (NA/RG 59/867.4016/243):

Հայերի վիճակը Հալեպում, որոնք ժամանակավորապես տեղավորված էին հին շինություններում, բակերում և ուղղակի փողոցներում, «աննկարագրելի» էր: Նրանց սնունդով չէին ապահովում, նրանք մահանում էին քաղցից և հիվանդություններից: Փողոցներով բազմաթիվ սայլեր էին անցնում. ամեն մեկը բարձրված էր 10-12 հայերի դիակներով: Հայկական գերեզմանոցում մեծ փոսեր էին փորում՝ բազմաթիվ հայ աքսորյալների դիակները թաղելու համար: Հայ եկեղեցականները, փաստորեն, գերեզմանատնից դուրս չէին գալիս: Ըստ ականատեսի տվյալների՝ Խարբերդի շրջակա գյուղերից մեկի 2.500 հայ բնակիչներից Դեյր-էզ-Չոր էին հասել ընդամենը 600 հոգի: Եփրատի ափին գտնվող Միադինից մինչև Կոնիա ընկած ճանապարհին բազմաթիվ ճամբարներ կային, որտեղ երկուսից մինչև քսան հազար աքսորյալներ էին կուտակված: Այս մարդկանց աքսորել էին այնպիսի շրջաններ, որոնց բնակչությունն ինքը դժվարություններ ուներ սնունդ հայթաթելու հարցում:

Աքսորյալներին օգնություն ցուցաբերելն արգելված էր: Իշխանություններն ու նրանց լրտեսները շարունակաբար հետևում էին ամերիկյան հյուպատոսության քայլերին: Մի քանի հայեր, որոնք փորձել էին մտնել հյուպատոսության շենք, բանտարկվել էին: Ոստիկանությունը ծեծում էր այն մարդկանց, նույնիսկ կանանց, որոնք դուրս էին գալիս հյուպատոսությունից:

Ականատեսը գրում էր նաև Ուրֆայի հայերի ինքնապաշտպանության մասին (1915 թ. սեպտեմբերի վերջ - հոկտեմբերի սկիզբ), որոնք կարողացել էին դիմակայել թնդանոթներով զինված վեց հազար զինվորների բազմաթիվ հարձակումներին: Հոկտեմբերի կեսերին թուրքերը կորցրել էին Ուրֆայում 7 սպա և 400 զինվոր: Ինչ-որ պատճառով հայերի մոտ որպես պատանդ էին մնացել Ուրֆայում նախկին ամերիկյան հյուպատոսական գործակալ պարոն Լեալին և հակառակորդ պետությունների յոթ քաղաքացիներ: Հոկտեմբերի 20-ի տվյալներով՝ Լեալին դուրս էր եկել Ուրֆայի հայկական թաղամասից, սակայն մյուս պատանդների մասին որևէ տեղեկություն դեռևս չկար:⁴⁶⁷

Նոյեմբերի 9-ին Մորգենթաուն պետքարտուղարին է փոխանցում տասներեք տարի Մուշի գերմանական միսիոներական առաքելութ-

⁴⁶⁷ Տե՛ս նույն տեղը, էջ 384-386 (NA/RG 59/867.4016/243):

յունում աշխատող և իրադարձությունների ականատես, շվեդուհի Ալմա Յոհանսոնի⁴⁶⁸ զեկույցը՝ հայ բնակչության տեղահանության մասին,⁴⁶⁹ ինչպես նաև Բուխարեստի Գաշնակցության գրասենյակից ստացված «Հայ ժողովրդի բնաջնջումը Թուրքիայում» տեղեկանքը:⁴⁷⁰

Նոյեմբերի 12-ին արտաքին գործերի նախարար Հայկ Մենթեշեն այցելում է ԱՄՆ-ի դեսպանություն՝ դեսպան Մորգենթաուի հետ գրուցելու նպատակով: Ջրույցի ընթացքում դեսպանը նշում է, որ «Հայկական հարցում օսմանյան կառավարությունը թույլ է տվել շատ լուրջ սխալներ», և նախարարը համաձայնել էր այդ կարծիքին: Ըստ դեսպանի՝ «չարիքն արդեն իսկ կատարված է, սակայն կառավարությունը պետք է օգտագործի բոլոր միջոցները՝ վերքը դարմանելու և սխալներն ուղղելու համար»: Դեսպանը նաև նշում է, որ այս ամենն ասում է նախարարին ոչ թե ներքին գործերին միջամտելու կամ կառավարությանը քննադատելու նպատակով, այլ որպես բարեկամ, որը ցանկանում է տեսնել այդ «լուրջ սխալները կարգավորված»: Նախարարը պատասխանում է, որ, «ցավելով ողբերգական արդյունքների համար, ինչպես նաև ընդունելով այս հարցում կատարված ծայրահեղություններն ու բռնությունները», այդուհանդերձ ցանկանում է ներկայացնել Բարձր Դռան տեսակետը ոչ թե որպես կատարվածի արդարացում, այլ որպես օսմանյան կառավարության գործողությունների պատճառների բացատրություն: Նա նշում է, որ պատերազմի հայտարարությունից անմիջապես հետո Վանի հայ պատգամավոր Վռանյանը ներկայացրել է Վանի նահանգապետին մի հուշագիր՝ «տեղական վարչակարգի» մասին: Նահանգապետն ուղարկել էր հուշագիրը ներքին գործերի նախարարին, որից, ըստ արտգործնախարարի, երևում էր, որ այն Գաշնակցության կոմիտեի կողմից նախապատրաստվող անկախության գործընթացի սկիզբն էր, որն աջակցություն էր վայելում հայերի շրջանում: Ըստ նախարարի՝ դրա սկիզբն արդեն դրվել էր Պողոս Նուբար փաշայի կողմից եվրոպական կառավարությունների առջև «արևելյան նահանգների համար, այսպես կոչված, բա-

⁴⁶⁸ Ալմա Յոհանսոն (1880-1974)՝ շվեդ միսիոներուհի, Հայոց ցեղասպանության ականատես և վկա: Նպաստամատույց մեծ աշխատանք է կատարել հայ փախստականների և որբերի համար:

⁴⁶⁹ Տե՛ս նույն տեղը, էջ 333-337 (NA/RG 59/867.4016/226):

⁴⁷⁰ Տե՛ս նույն տեղը, էջ 341-344 (NA/RG 59/867.4016/226):

րենդորդումների» քարոզչության ընթացքում: Հայկական կոմիտեների գործողությունները սատարում էր հայկական մամուլը, անգամ՝ նույնիսկ Կոստանդնուպոլսում հրատարակվող թերթերը: Ըստ թուրք պաշտոնյայի՝ պարզ էր, որ «հայերն ունեին ազգային ձգտումներ, որոնք, կառավարության կարծիքով, համատեղելի չէին օսմանյան շահերի հետ»: Հալիլը, որն այդ ժամանակ Ներկայացուցիչների պալատի խոսնակն էր, որոշել էր, քանի որ Վռամյանը դաշնակ է, խոսել այդ մասին Գրիգոր Չոհրապի⁴⁷¹ կամ Վարդգես Մերենկյուլյանի⁴⁷² հետ: Նա իր գրասենյակ էր հրավիրել Վարդգեսին և ասել նրան. «Եթե հայերն ուզում են օսմանյան շահերին հակառակ անկախ գործողությունների դիմել, նրանք պետք է սպասեն նպաստավոր պահի: Եթե մեր գորքերը պարտվեն ռուսներից, և ռուսները գրավեն մեր արևելյան նահանգները, ու մեր դաշնակիցները պարտություն կրեն, ես կարող եմ հասկանալ, որ հայերը ցանկանում են մի բան անել իրենց համար, սակայն երբ մենք մարտնչում ենք, մենք չենք կարող թույլ տալ հայերին թռչել մեր մեջքին»: Այնուհետև Հալիլը նշել էր, որ եթե պատերազմական գոտում հայերը գործեն իրենց բանակի դեմ, ապա օսմանյան հրամանատարը, ինքնապաշտպանության նպատակներից ելնելով, ստիպված պետք է լինի զբաղվել այդ հարցով ոչ միայն պատերազմական գոտում, քանի որ հայկական կոմիտեները ճյուղավորումներ ունեն ողջ երկրով մեկ: Բանակի թիկունքում գտնվող հայերին դեպի հարավ՝ «սպահով հեռավորության» վրա տեղափոխումը կլինի հրամանատարի պարտականությունը: Հալիլն այսպիսով զգուշացրել էր, որ

⁴⁷¹ **Գրիգոր Չոհրապի** (1861-1915)՝ հայ գրող, հրապարակախոս, փաստաբան-իրավագետ, Օսմանյան կայսրության հասարակական և քաղաքական գործիչ: 1895-1896 թթ. ստանձնել է հայ քաղաքական ամբաստանյալների պաշտպանությունը, 1905 թ. նրան արգելվել է զբաղվել փաստաբանական գործունեությամբ: Ապրել է Ֆրանսիայում: 1908 թ. ընտրվել է օսմանյան խորհրդարանի պատգամավոր: 1912-1914 թթ. Հայկական հարցի շուրջ բանակցություններ է վարել մեծ տերությունների դեսպանությունների հետ: 1915 թ. ապրիլին ձերբակալվել է և սպանվել արտոյի ճանապարհին:

⁴⁷² **Վարդգես Մերենկյուլյան** (1871-1915)՝ հայ ազգային-ազատագրական շարժման գործիչ, 1890 թ. Կարինի ցույցերի կազմակերպիչներից, 1896 թ. Օտոմանյան բանկի զրավման նախապատրաստական աշխատանքների մասնակից: Գործել է Բուլղարիայում, Թիֆլիսում, Ալեքսանդրապոլում, Կարսում, Վանում: 1908 թ. ընտրվել է օսմանյան խորհրդարանի անդամ: 1915 թ. ձերբակալվել է և սպանվել արտոյի ճանապարհին:

կառավարությունն օգտագործելու է յուրաքանչյուր միջոց՝ հայկական շարժում թույլ չտալու համար: Նույն գզուշացումը, ըստ Հալիլի, արվել էր Էնվեր փաշայի կողմից հայ պատրիարքին: Սակայն, չնայած այդ «բարեկամական գզուշացումներին, հայերի կողմից Վանում տեղի ունեցավ հեղափոխություն, և զինված գործողություններ՝ ամենուրեք»:

Հանդիպման ընթացքում դեսպան Մորզենթաուն իր պատրաստակամությունն է հայտնում հայ արքայալուսինին օգնություն ցուցաբերելու հարցում, սակայն Հալիլը պատասխանում է, որ, Էնվեր փաշայի կարծիքով, օտարները չպետք է օգնեն հայերին, քանի որ «հայերն իդեալիստներ են և այն պահին, երբ նրանք տեսնեն, որ օտարները մոտենում և օգնում են իրենց, կմտածեն, որ իրենց ազգային իդեալները քաջալերվում են»: Ըստ Հալիլի՝ Էնվեր փաշան ցանկանում էր ընդհանրապես խզել հայերի առնչություններն օտարերկրացիների հետ: Դեսպանը հարց է ուղղում Հալիլին. «Արդյոք դա նշանակո՞ւմ է, որ Էնվեր փաշան ցանկանում է, որ հայերն ընդհանրապես չպետք է քաջալերվեն իրենց ազգային իդեալներն իրականացնելու և հետագա գործողություններ կազմակերպելու գործում»: Հալիլը ժպիտը դնալով պատասխանում է. «Նրանք այլևս որևէ միջոց չունեն որևէ գործողություն իրականացնելու համար»:

Մորզենթաուն հարցնում է Հալիլին, թե այդ պահին որքան հայ կար հարավային նահանգներում, սակայն նախարարը պատասխանում է, որ որևէ տեղեկության չունի այդ մասին: Ապա Հալիլը տեղեկացնում է դեսպանին, որ փախստականների բյուրոյի տնօրեն Իսմայիլ Ջամփուլադը գործուղվել է Միրիա՝ արքայալուսինին տեղավորելու հարցում Ջեմալ փաշայի հետ խորհրդակցելու նպատակով: Արքայալուսինը տեղավորվելու էին փոքր խմբերով տարբեր գյուղերում: Սակայն դեսպանը նշում է, որ այդ շրջանների գյուղերն աղքատ են, որի պատճառով արքայալուսինը չեն կարող ունենալ ո՛չ ապաստարան, ո՛չ էլ սնունդ: Հալիլը պատասխանում է, որ «ապագայում նրանք սովամահ չեն լինելու»:

Հալիլը նաև տեղեկացնում էր, որ կառավարությունը որոշել էր, որ հայերն այլևս չեն տեղահանվելու: Մասնավորապես Կոստանդնուպոլսի և Ջմյուռնիայի հայերին այլևս ձեռք չեն տալու: Զննադատելով իշխանությունների կողմից տեղահանության ընթացքում թույլ տրված «ծայրահեղությունները»՝ նախարարը միաժամանակ նշում էր, որ, ելնելով պատերազմական պայմաններից և դժվարություններից, Էն-

վերը կարողացել էր զինվորների միայն մեկ գումարտակ տրամադրել հայերի քարավանները պաշտպանելու համար: Ըստ Հալիլի՝ հայերին քրդերից պաշտպանելու ընթացքում զոհվել էր քառասուն զինվոր: Երբ դեսպանը նշեց, որ թուրքերի մեծամասնությունը համաձայն չէ հայերի հանդեպ իրագործված միջոցներին, նախարարը չժխտեց այդ կարծիքը:

Ամփոփելով հանդիպումը՝ Մորգենթաուն նշում էր, որ, անձնապես դեմ լինելով հայերի հանդեպ իրականացված միջոցառումներին, արտգործնախարարը բնականորեն փորձում էր պաշտպանել կառավարության քայլերը: Դեսպանն ինքը եզրակացնում էր, որ Հալիլը նման էր իսելացի մի փաստաբանի, որը վատ գործ էր պաշտպանում:⁴⁷³

Իր հուշերում Մորգենթաուն նշում էր, որ, հնարավոր է, հայերի դեմ իրագործվող միջոցներն օգտակար էին ռազմական տեսանկյունից, բայց նրանք նաև ոչնչացնում էին երկրի տնտեսությունը: Չրույցներից մեկի ժամանակ Էնվերն ասում էր, որ երիտթուրքերը մտածում էին միայն պատերազմում հաղթելու մասին, իսկ տնտեսությունը տվյալ պահին կարևոր չէր, և եթե նրանք հաղթեին պատերազմում, ամեն ինչ լավ կլիներ նաև տնտեսության համար: Էնվերն ընդունում էր, որ կառավարության կողմից տրված հրահանգները «մեծ վնաս են» հասցրել: Նա համաձայն չէր, որ դրա պատասխանատուները ցածր կարգի պաշտոնյաներն էին, և պատրաստ էր ընդունել Կոստանդնուպոլսի ողջ պատասխանատվությունը կատարվածի համար, որն արդարացված էր հայերի թշնամական վերաբերմունքով: Նա նշում էր, որ իրենք չէին վախենում հեղափոխությունից, սակայն հայերը «սխալ ժամանակ էին ընտրել՝ դրսևորելու իրենց բարեկամությունը ռուսների և թշնամությունը թուրքերի հետ»: Մորգենթաուն տեղեկացնում էր Էնվերին, որ շուտով հետ է կանչվելու իր պաշտոնից: Էնվերն իր դժգոհությունն էր հայտնում այդ կապակցությամբ՝ նշելով, որ նոր դեսպանին ժամանակ պետք կլինի իր հանդեպ վստահության մթնոլորտ ձևավորելու համար: Փոխելով խոսակցության թեման՝ Էնվերն անդրադառնում է երկրի տնտեսության համար արտաքին ներդրումների կարևորությանը: Միաժամանակ նա ընդգծում էր, որ օտարերկրյա ընկերությունները Թուրքիայում պետք է աշխատատեղեր ստեղծեն մի-

⁴⁷³ Տե՛ս նույն տեղը, էջ 345-347 (LC/HM(Sr.)/Reel 22/560-561):

միայն մահմեդական բնակչության համար: Նա խնդրում էր դեսպանին, որ վերջինս համոզի ամերիկյան ընկերությունների ներկայացուցիչներին չդիմադրել և ընդունել կառավարության այդ մոտեցումը:⁴⁷⁴

Նոյեմբերի 13-ին Մորգենթաուն պետքարտուղարին էր փոխանցել Կոստանդնուպոլսում Ռուսաստանի դեսպանության տնտեսական մասի աշխատակից Ստեփան Մեմուխինի մասին տեղեկատվությունը՝ խնդրելով փոխանցել այն Ռուսաստանի կառավարությանը: Խոսքն այն մասին էր, որ 1915 թ. սեպտեմբերի 9-10-ին վերջինս 129 ռուսահպատակ հայերի հետ ձերբակալվել էր Կոստանդնուպոլսում և բանտարկվել առանց նախնական զգուշացման ու մեղադրանքի ներկայացման: Մի քանի օր մայրաքաղաքի կենտրոնական բանտում մնալուց հետո նրանց աքսորել էին Անգորա: Տասնվեց օր սարսափելի պայմաններում պահելուց հետո նրանց ազատ էին արձակել՝ այդպես էլ չտալով որևէ բացատրություն: Միաժամանակ Մեմուխինն ականատես էր դարձել Անգորայում հայերի նկատմամբ կիրառվող վայրագություններին և կոտորածներին: Ըստ Մեմուխինի՝ տվյալ պահին Անգորան, որի բնակչության 4/5-ը կազմում էին հայեր, մեռյալ քաղաք էր, բոլոր շուկաներն ու խանութները փակ էին, հայերի ողջ ունեցվածքը վաճառվել էր աճուրդով:⁴⁷⁵

Նոյեմբերի 16-ին ամերիկյան միսիոներ Հենրի Ուինգեյթը գրում էր դեսպան Մորգենթաունին Կեսարիայից, որ ամերիկյան դպրոցի բոլոր հայ ուսուցիչներին աքսորել էին գնացքով դեպի հարավ: Ըստ Ուինգեյթի՝ տեղական մյուդիթը հավաստիացնում էր, որ ամերիկյան դպրոցներին և աշակերտներին որևէ բան չէր սպառնում: Միսիոները նշում էր, որ իրենք շարունակելու էին գործունեությունը՝ հիմնվելով ամերիկացիների և հույն ուսուցիչների անձնվեր աշխատանքի վրա: Դպրոցում սովորող այն աշակերտները, որոնց ծնողները ղափանափոխ էին եղել, լքելու էին դպրոցը, իսկ մյուս հայ երեխաները մնալու էին:⁴⁷⁶

⁴⁷⁴ St' u Library of Congress, Division of Manuscripts, Papers of Henry Morgenthau, Sr., Diary, 1915, October 18, 30, November 15; **Payaslian Simon**, նշվ. աշխ., էջ 92-93:

⁴⁷⁵ St' u *Unites States Official Records on the Armenian Genocide, 1915-1917* /Compiled with an introduction by Ara Sarafian/, էջ 375-377 (NA/RG 59/867.4016/242); *Геноцид армян в Османской империи* /Сборник документов и материалов под ред. М.Г. Нерсисяна, Ер., Издательство «Айастан», 1982, էջ 336-337:

⁴⁷⁶ St' u *Unites States Official Records on the Armenian Genocide, 1915-1917* /Compiled

Ամերիկոսի Աննա Բիրջը, որը ճամփորդում էր Չմյուտնիայից Կոստադոնուպոլիս, 1915 թ. նոյեմբերին գրում էր, որ երբ իր գնացքը կանգնում էր ամեն մի կանգառում, ինքն ականատես էր լինում, թե ինչպես էին անասունների համար հարմարեցված վագոններում տեղափոխում արքայազնի հայ կանանց, երեխաներին և ծեր մարդկանց: Ըստ Բիրջի՝ այդ «մարդկային էակներին» վերաբերվում էին ավելի վատ, քան անասուններին: Ամերիկոսիին դիմում է գերմանացի մի սպայի և ասում նրան, որ ականատես է դարձել ամենադաժան մի երևույթի: Եվ երբ նա հարցնում է, թե արդյոք գերմանացիներն առնչություն ունե՞ն տեղահանության կազմակերպման հետ, գերմանացին պատասխանում է, որ անհիմաստ է միջամտել այդ հարցին, թեև թուրքերն իրականացնում են այն «շատ վատ»: Գերմանացի սպան խոստովանում էր, որ երկրի ներքին շրջանների սարերում հանդիպել էր հայերի քարավանների և ականատես դարձել սարսափելի տեսարանների, մասնավորապես՝ ճանապարհներից նետված երեխաների բազմաթիվ դիակների: Բիրջի վկայությամբ՝ գնացքները շարունակում էին օր ու գիշեր շարժվել հարավ՝ «ղեպի կործանում տեղափոխելով մարդկային կյանքեր»:⁴⁷⁷

Գեսպան Մորգենթաուն Պետքարտուղարություն էր փոխանցում ամերիկյան միսիոներների կողմից մշտապես ստացվող զեկույցները՝ հայ բնակչության տեղահանությունների և կոտորածների մանրամասների մասին:⁴⁷⁸ 1915 թ. նոյեմբերի 16-ին միսիոներուհի Փոլա Շեֆերը գրում էր Օսմանիե կատարած իր ճամփորդության մասին: Բաղչե-Օսմանիե դաշտավայրում նա հանդիպել էր դաշտում և ճանապարհներից պառկած հազարավոր արքայազների, որոնք անբողոքությամբ թողնված էին ավազակների քմահաճույթին: Նրանցից 50-60 հոգանոց մի խումբ գիշերը ենթարկվել էր հարձակման. շատերը ծանր վիրավորված էին: Շեֆերը նրանց հագուստ էր տրամադրել: Մի

with an introduction by Ara Sarafian/, էջ 349 (LC/HM(Sr.)/Reel 7/770):

⁴⁷⁷ Տե՛ս **Bryce James Viscount**, նշվ. աշխ., էջ 419-420:

⁴⁷⁸ Ըստ Մարտին Ջիլբերտի՝ 1915 թ. ապրիլից մինչև նոյեմբեր ընկած ժամանակահատվածում Վանա լճի շրջանում, Բիթլիս, Էրզրում և Դիարբեքի քաղաքներում, Տիգրիս և Եփրատ գետերի վերին ափերի հատվածներում սպանվել էին 600 հազարից ավելի հայ տղամարդ, կին և երեխա (**Gilbert Martin**, *Twentieth-Century Genocides*. // In: *America and the Armenian Genocide of 1915* / Edited by Jay Winter, Cambridge, Cambridge University Press, 2003, էջ 16):

այլ ճամբարում նա հանդիպել էր 30-40 հազար արքայազների, որոնք գտնվում էին «հուսալքված և կիսաքաղցած» վիճակում: Ամենուրեք մահացած մարդկանց դիակներ կային, սակայն միայն դրան վճարելու դեպքում էին ոստիկանները թույլ տալիս նրանց թաղել: Դամբարանում տիֆի համաճարակ էր տարածվել. հիվանդներ կային գրեթե ամեն երրորդ վրանում: Շատ երեխաներ կորցրել էին իրենց ծնողների: Շեֆերն ապահովում էր արքայազներին հացով, հագուստով, փորձում օգնել վիրավորներին և հիվանդներին, վճարում դիակները տեղափոխող սայլերի վարձը:⁴⁷⁹

Նոյեմբերի 18-ին Հայկական և սիրիական օգնության ամերիկյան կոմիտեի անունից Ջեյմս Բարտոնը գրում էր պետքարտուղարին, որ, ամերիկացի միսիոներների և դիվանագետների հավաստի վկայությունների համաձայն, հայ ազգին հասցվել էր «սարսափելի հարված», և նա դեռ շարունակում էր տառապել ու գտնվում էր «ամբողջությամբ ոչնչացվելու վտանգի առջև»: Հյուպատոսական զեկուցագրերի համաձայն՝ մեծ թվով փախստականներ էին կուտակվել Հալեպում և շրջանում, ինչպես նաև Ուրֆայում և Արաբիայի այլ վայրերում: Բարտոնն առաջարկում էր հանձնաժողով ուղարկել Թուրքիա՝ հայ փախստականների իրական կարիքները պարզելու և արդյունավետ օգնություն կազմակերպելու համար: Բարտոնը խնդրում էր պետքարտուղարին դիմել թուրքական կառավարությանը՝ «ոչ քաղաքական» մնան հանձնաժողովի մուտքի արտոնություն ստանալու համար:⁴⁸⁰

Նոյեմբերի 18-ին ԱՄՆ-ի պետքարտուղար Լանսինգին ուղղված գաղտնի նամակում Մորգենթաուն գրում էր, որ, համոզվելով Դարդանելի «անառիկության» մեջ, թուրքական իշխանությունները սկսեցին «զարգացնել հայերին բնաջնջելու ծրագիրը՝ 1914 թ. նոյեմբերին և դեկտեմբերին թուրքերին «անհիմն դավաճանության» համար պատժելու նպատակով: Եվ քանի որ նրանք հնարավորություն չունեին պատժելու իրենց պարտության պատասխանատուներին, պատժեցին երկրում ապրողներին՝ անկախ տարիքից և սեռից: Եվ ինչպես Էնվերն էր ասել, պատերազմական իրավիճակից ելնելով, «իրենք ժա-

⁴⁷⁹ Տե՛ս *United States Official Records on the Armenian Genocide, 1915-1917* /Compiled with an introduction by Ara Sarafian/, էջ 434-435 (NA/RG 59/867.4016/260):

⁴⁸⁰ Տե՛ս NA Microfilm Publications, Microcopy No. 353, Records of the Department of State Relating to Internal Affairs of Turkey, 1910-1929, Roll 51, NA/RG 59/867.48/194, 202:

մանակ չունեին տարբերակում կիրառելու» և հարցին լուծում տալու «պլատոնիկ» միջոցներով, ուստի պետք էր կիրառել «կտրուկ միջոցներ»՝ անկախ այն բանից, թե ով է դրանից տուժելու: Մորգենթաուի կարծիքով՝ կասկած չկար, որ որոշ հայեր հեղափոխականներ էին և «ծրագրում էին ազատվել թուրքական կառավարման լծից», սակայն, անկախ նրանց գործողություններից, որևէ արդարացում չէր կարող լինել հարկադիր տեղահանությունների կազմակերպման մեթոդների և այն իրավիճակի համար, երբ այդ խեղճ մարդիկ անպաշտպան էին թողնված՝ դատապարտվելով մահվան քաղցից և ծարավից:

Գեսպանն այնուհետև գրում էր, որ «մեծ թվով հայեր են մասնակցել Աբդուլ Համիդի դեմ կազմակերպված հեղափոխությանը»: Այդ առնչությամբ Թալեաթն ասել էր դեսպանին, որ միակ աղբյուրը, որից իրենք վստահում էին, հայերի կողմից կազմակերպվող իրենց դեմ էր: Իսկ Էմվերն իր հերթին ասում էր դեսպանին, որ հեղափոխություն կազմակերպելու համար մեծ թվով մասնակիցներ հարկավոր չեն, նույնիսկ «շատ փոքր թվով վճռական և գործուն մարդիկ կարող են հաջողության հասնել կառավարության փոփոխության գործում»:

Գեսպան Մորգենթաուի հետ ունեցած հանդիպումներից մեկի ժամանակ արտաքին գործերի նախարար Հալիլ Մենթեշեն խոստովանել էր, որ հայերի դեմ կատարված ամենասարսափելի հանցագործություններն իրագործել էին ոստիկանները:

«Ես վճռական կերպով համոզված եմ, - շարունակում էր Մորգենթաուն, - որ սա դարաշրջանի մեծագույն հանցագործությունն է»: «Որոշ դեսպանների՝ թուրքական իշխանություններին ուղղված շարունակական խորհուրդները՝ կոտորածների կազմակերպումից խուսափելու մասին, հանգեցրին նրան, որ թուրքերն ընդունեցին տեղահանությունների այս զարհուրելի ծրագիրը, որը վերածվեց դիվային ջարդերի, որոնք ուղեկցվում էին բռնաբարություններով, թալանով և ստիպողական կրոնափոխությամբ», - նշում էր դեսպանը և շարունակում, որ դժբախտաբար հայերի նախորդ կոտորածների համար քրիստոնյա տերությունները որևէ պատիժ չկիրառեցին, որի հետևանքով ներկայիս կազմակերպիչները համոզված էին, որ այս անգամ էլ, հավանաբար, դրանք կմոռացվեին: Գեռնս 1914 թ. մայիսին և հունիսին իշխանությունները հաջողությամբ իրագործեցին 100-150 հազար հույների տեղահանությունը, որն այդպես էլ չդատապարտվեց մեծ տերություն-

ների կողմից: Թուրքական իշխանությունները եկան այն եզրահանգման, որ քանի որ մեծ տերություններից չորսը կռվում էին իրենց դեմ և անհաջողության էին հանդիպել Դարդանելում, իսկ տերություններից մյուս երկուսը իրենց դաշնակիցներն էին, «մեծագույն հնարավորություն է ստեղծվել իրենց համար՝ հայ ազգին բնաջնջելու՝ երկար ժամանակ փայփայվող ծրագիրն ի կատար ածելու և այդպիսով մեկընդմիջտ լուծելու հայկական բարենորոգումների հարցը, որը հաճախակի պատճառ էր հանդիսանում թուրքական գործերին միջամտության համար»:

Դեսպանը համոզված չէր, որ Կոստանդնուպոլսում, Ջմյուռնիայում և Հալեպում մնացած հայերն ապահովված են լինելու հետագա նոր հարձակումներից, թեև միաժամանակ նշում էր, որ ԱՄՆ-ի, Անգլիայի և Գերմանիայի հասարակայնության վրդովմունքը թուրքական իշխանությունների գործողությունների նկատմամբ և տեղի ունեցող հետապնդումների վերաբերյալ շատ թուրքերի բացասական կարծիքը իրենց մեծ ազդեցությունը կարող էին ունենալ իշխանությունների հետագա գործողությունների վրա:

Ըստ դեսպանի՝ Կոստանդնուպոլսում Գերմանիայի, Ավստրո-Հունգարիայի և Բուլղարիայի դեսպանությունները «շատ մտահոգ էին» և ցանկանում էին օժանդակել հայկական կոտորածները դադարեցնելու փորձերին: Մորգենթաուն նշում էր, որ Բուլղարիան միշտ էլ մնան տեսակետ էր արտահայտել: Գերմանացիներն ու ավստրիացիները սկզբնական շրջանում չէին մտածել այդ հարցում Թուրքիայի ներքին գործերին միջամտելու մասին: Դեսպանը հավատացած էր, որ նրանք նույնիսկ չէին պատկերացնում, որ թուրքերը կարող էին կիրառել նման «բարբարոսական և անոթայի մեթոդներ»: Այժմ նրանք եկել էին այն կարծիքին, որ իրենց բանկային հաստատություններն ու առևտրականները կարող էին լուրջ կորուստներ ունենալ հայերի աքսորի հետևանքով: Արդեն իսկ համապատասխան հաշվարկ էր կատարվել, որի համաձայն՝ գերմանական բանկերը դրա հետևանքով կորցնելու էին հինգ միլիոն դոլար: Մասնագիտական հաշվարկ կար մաս, որ երկրի պետական եկամուտները պակասելու էին տարեկան հինգ միլիոն ֆունտով:⁴⁸¹ 1916 թ. հունվարի 13-ին պետքարտուղար

⁴⁸¹ Տե՛ս նույն տեղը, Roll 6, NA/RG 59/867.00/798.2, էջ 1-16:

Լանսինգը, բնութագրելով Մորզենթաուի գաղտնի զեկույցը որպես «համապարփակ» փաստաթուղթ, ուղարկում է այն ԱՄՆ-ի նախագահին՝ առաջարկելով անպայման կարդալ այն:⁴⁸²

1915 թ. նոյեմբերի 19-ին Բոստոնում լույս տեսնող «Հայրենիք» երկօրյա թերթի խմբագրությունը գրում էր ԱՄՆ-ի պետքարտուղարին, որ երկրի տարբեր վայրերից բազմաթիվ ցամաքներ են ստացվում ամերիկահայերից, որոնք հարցնում են, թե ինչ հնարավորություններ կան Թուրքիայում «տառապյալ ողջ մնացած հայերին» օգնություն ուղարկելու համար: Խմբագրությունը հարցնում էր, թե արդյոք հնարավո՞ր է ամերիկյան հյուպատոսությունների միջոցով օգնություն ուղարկել հայ փախստականներին:⁴⁸³

Համապատասխան հանձնարարություն ստանալով Ռուսաստանի արտաքին գործերի նախարար Սերգեյ Սազոնովից՝ Վաշինգտոնում դեսպան Բախմետևը նոյեմբերի 22-ին գրում էր ԱՄՆ-ի պետքարտուղարին, որ ռուսական կայսերական կառավարությունը շնորհակալ կլիներ, եթե Կոստանդնուպոլսում ամերիկյան դեսպանը հանձնարարություն ստանար աջակցություն ցուցաբերելու ռուսական կողմին Բաղդադի երկաթուղու շրջան ու Միջագետք արտաքսված հայերին օգնելու գործընթացի կազմակերպման հարցում: Ըստ դեսպանի՝ Մորզենթաուին այդ նպատակով կտրամադրվեն անհրաժեշտ գումարներ, իսկ հայ պատրիարքը համապատասխան տեղեկատվություն կներկայացնի միջոցների օգտագործման նպատակի համար: Այդ կապակցությամբ անհրաժեշտ է ճանապարհ գտնել, որպեսզի թուրքերը չկարողանան յուրացնել այդ միջոցները: Դեսպանը նշում էր, որ ցանկալի կլիներ նաև, որ օսմանյան կառավարությունը չիմանար, որ միջոցները գալիս էին Ռուսաստանից, քանի որ այդ հանգամանքը կարող էր հրահրել հայ բնակչության նոր հալածանքներ:⁴⁸⁴

Նոյեմբերի 25-ին ամերիկյան միսիոներ Ռիլֆրիդ Փոստը Կոնիա-յից գրում էր Փիթին՝ հայկական տեղահանությունների մասին: Մեկ-

⁴⁸² Տե՛ս *United States Official Records on the Armenian Genocide, 1915-1917* /Compiled with an introduction by Ara Sarafian/, էջ 374 (NA/RG59/867.00/798.5):

⁴⁸³ Տե՛ս NA Microfilm Publications, Microcopy No. 353, Records of the Department of State Relating to Internal Affairs of Turkey, 1910-1929, Roll 51, NA/RG 59/867.48/197:

⁴⁸⁴ Տե՛ս նույն տեղը, Roll 43, NA/RG 59/867.4016/208; *Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828-1923)* / Պրոֆ. Ջ. Ս. Կիրակոսյանի խմբագրությամբ, էջ 377-378:

նելով Կոնիայից նոյեմբերի 21-ին՝ նա հաջորդ օրն անցկացրել էր Էրեզլիում: Ըստ Փոստի՝ այդ ժամանակ այդտեղ կուտակվել էին երկու հազար արտոյալ հայեր, որոնց վերաբերյալ հրահանգ էր տրվել կառավարությունից, որ Էրեզլիում կարող էին մնալ միայն արհեստավորներ կամ ծառայող զինվորների կանայք և երեխաները: Մյուս արտոյալները գտնվում էին ոստիկանության հսկողության ներքո, և նրանց հետագա ճակատագիրը մնում էր անհայտ: Նշված արհեստավորները կառավարությունից ստանում էին մեկ բոքոն հաց և ստիպված էին աշխատել առանց վճարման: Գրեթե նույնը ստանում էին զինվորների ընտանիքի անդամները: Ըստ Փոստի տվյալների՝ իշխանությունները շատ դեպքերում թույլ չէին տալիս հայերին ճամփորդել գնացքով և ստիպում էին նրանց վարձել սայլեր՝ տասը լիրայով Էրեզլիից Տարսոն հասնելու համար: Իսկ ով չէր կարողանում դա անել, գնում էր ոտքով: Փոստն անձամբ տեսել էր կայարանում հայերի կողմից լքված 500-600 կապոցներ, որոնք հետագայում առգրավվում էին իշխանությունների կողմից որպես լքված իրեր, բաժանվում պաշտոնյաների միջև կամ վաճառվում: Շուրջ հարյուր երեխաներ էին լքվել ծնողների կողմից, քանի որ նրանք կա՛ն հիվանդ էին, կա՛ն էլ փոքր էին տարիքով՝ ոտքով երկար ճանապարհ անցնելու համար: Նրանցից քսանին ընտրել և որպես մահմեդական որդեգրել էին թուրքերը, իսկ մյուս երեխաները գտնվում էին մի աղքատ հայ կնոջ խնամքի տակ, որը փորձում էր խնամել նրանց՝ միջոցներ հավաքելով քաղաքում մնացած հայերից: Ըստ Փոստի՝ կառավարությունը որևէ բան չէր անում երեխաների համար, որոնք հիմնականում հիվանդ էին և գտնվում էին շատ ծանր պայմաններում: Կայարանի մոտ Փոստը հանդիպել էր շուրջ 200 արտոյալ հայերի, որոնց դուրս էին բերել քաղաքից և տեղավորել մի քանի լքված շինություններում: Նրանց վիճակը, ըստ Փոստի, «աննկարագրելի ծանր էր»: Շրջելով նրանց մեջ՝ Փոստը պարզել էր, որ հիմնականում նրանք բոլորն արդեն իսկ ծանր հիվանդ էին և դեղամիջոցների կարիք ունեին: Երբ Փոստը գնացք էր նստում, նկատել էր, թե ինչպես էին հայերը փորձում մտնել ներս և վճարել տոմսի համար, սակայն նրանց թույլ չէին տալիս և ներս էին թողնում միայն թուրքերի: Ըստ Փոստի՝ Էրեզլիում ապրող հայերին թույլ էր տրված անորոշ ժամկետով մնալ քաղաքում հիմնականում կայմակամի որոշման շնորհիվ: Սակայն նրանց մշտապես առաջարկում էին ընդունել իսլամ

կամ, օրինակ, բողոքական Մանուկ Էֆենդիի պարագայում ստիպում էին նրան ամուսնացնել իր աղջկան թուրք պաշտոնյայի հետ: Պոզանքիում Փոստը հանդիպել էր 250 աքսորյալների, որոնք ցրված էին Տարսոն տանող ճանապարհի շուրջ գտնվող ճամբարներում: Նրանք որևէ հնարավորություն չունեին վարձելու որևէ տրանսպորտային միջոց, իսկ կանայք և երեխաներն այլևս չէին կարող քայլել: Նրանք վաճառել էին իրենց հագուստն ու եղած ունեցվածքը. հիմնականում բոլորը կիսամերկ էին: Կառավարությունը նրանց հաց էր ուղարկում, սակայն ոչ կանոնավոր կերպով: Ողջ դաշտավայրը վերածվել էր գերեզմանոցի. շատ գերեզմաններ քանդվել էին շների կողմից: Ըստ Փոստի տվյալների՝ շուրջ հազար հայեր էին մահացել Պոզանքիում, և այդքան էլ՝ Էրեզլիում, սակայն որևէ մեկը պատկերացում չուներ, թե քանի հազար մարդ էր մահացել Կոստանդնուպոլսից մինչև Միջագետք ընկած ճանապարհին: Հարավից եկած մարդիկ պատմում էին Փոստին, որ Դեյր-էզ-Չոր չէր հասել տասից նույնիսկ մեկը, միաժամանակ Պոզանքիով դեպի հարավ անցել էր 500 հազարից ոչ պակաս մարդ:⁴⁸⁵

Ամերիկյան առաքելության քույր Բեստորիս Ռոնները զեկուցում էր Մամուրեթ-ուլ-Ազիզի աքսորյալների ճամբար նոյեմբերի 26-ին կատարած իր այցելության մասին: Ըստ Ռոնների՝ ճամբարը հազարավոր վրաններից կազմված հսկայական մի վայր էր, որտեղ կարելի էր հանդիպել տարբեր տարիքի և սոցիալական դասակարգի պատկանող անհամար մարդկանց, որոնք քաղցած էին և միայն հաց էին խնդրում: 1.300 հացի բոքոն բաժանվեց մարդկանց, ինչը, անշուշտ, բոլորին չէր կարող բավարարել: Հացը բաժանող կրոնականների համար ստեղծվել էր իրենց անվտանգությանը սպառնացող իրավիճակ: Այդ պահին աքսորյալներին հրահանգ տրվեց ճանապարհ ընկնելու մասին: Նրանք, ովքեր չէին կարող քայլել, սվիններով էին քշվում վրաններից: Մի քանի հարուստ մարդիկ անմիջապես վճարեցին սայլերի համար, իսկ մյուսները շարժվեցին ոտքով: Շուրջ 200 ծեր մարդ մնաց ճամբարում. նրանք ընդհանրապես չէին կարողանում քայլել:⁴⁸⁶

Նոյեմբերի 28-ին դեսպան Մորգենթաուն հանդիպել էր Թուրքիայի փոխարտգործնախարար Ռաշիդ Հիքմեթի հետ: Վերջինս հաղորդում

⁴⁸⁵ Տե՛ս *United States Official Records on the Armenian Genocide, 1915-1917* /Compiled with an introduction by Ara Sarafian/, էջ 394-397 (NA/RG 59/867.4016/251):

⁴⁸⁶ Տե՛ս նույն տեղում, էջ 435-436 (NA/RG 59/867.4016/260):

էր դեսպանին, որ 4-րդ բանակի հրամանատարը տեղեկացրել էր պատերազմի նախարարությանը, որ Միրիայում ամերիկյան հյուպատոսությունները «զբաղված են հայկական հարցերով»: Արտաքին գործերի նախարարն իր տեղակալի միջոցով խնդրում էր դեսպանին հրահանգ տալ հյուպատոսներին՝ հրաժարվելու նման գործունեությունից, ինչը դիտարկվում էր որպես միջամտություն երկրի ներքին գործերին:

Ըստ դեսպանի՝ պատերազմի և արտաքին գործերի նախարարները շարունակ ասում էին Մորզենթաուին, որ իրենք դեմ են հայերին ամերիկացիների կողմից օգնության ցուցաբերմանը, քանի որ օտարերկրացիների կողմից տրվող օժանդակությունը աստարում է «հայ իդեալիստներին՝ շարունակելու դիմադրությունը կառավարության դեմ, թեև կառավարությունը շատ անգամ նշել է, որ հայերն այն վիճակում չեն, որ կարողանան գործունե կերպով դիմագրավել կառավարությանը»: Բարձր Դուռն առաջարկում էր դեսպանության կողմից ստացված միջոցները տրամադրել թուրքական իշխանություններին՝ օգնությունն իրենց կողմից կազմակերպելու համար: Մորզենթաուն մերժում է այդ առաջարկը այն պատճառաբանությամբ, որ դոնորները ցանկանում են կազմակերպել օգնությունը դեսպանի հսկողության ներքո: Դեսպանը գրում էր պետքարտուղարին, որ արդեն իսկ հրահանգել էր հյուպատոսներին շարունակել օգնության տրամադրումը հայերին ամերիկյան միախոններների կամ այլ վստահելի մարդկանց միջոցով, ինչպես նաև տեղեկացնել հայերին հյուպատոսություններ այցելելուց խուսափելու մասին, ինչը կարող էր դիտարկվել որպես միջամտություն երկրի ներքին գործերին:⁴⁸⁷ Միաժամանակ Մորզենթաուն զգուշացնում էր Բեյրութում և Հալեպում հյուպատոսներին չանցնել հունամիտար աշխատանքի շրջանակներն ու խուսափելու ներքին գործերին միջամտությունից և չզրգռել թուրք պաշտոնյաներին, որոնք ունակ էին վնաս հասցնելու այն մարդկանց, որոնց Միացյալ Նահանգները ցանկանում էր օգնել:⁴⁸⁸

Երիտթուրքերը դժգոհ էին աշխարհով մեկ տեղեկատվության տարածումից: 1915 թ. նոյեմբերին Թալեաթն իր դժգոհությունն է հայտնում Հալեպի իշխանություններին, որ Մորզենթաուն չափից ավելի շատ

⁴⁸⁷ St'u NA Microfilm Publications, Microcopy No. 353, Records of the Department of State Relating to Internal Affairs of Turkey, 1910-1929, Roll 51, NA/RG 59/867.48/199:

⁴⁸⁸ St'u նույն տեղում, Roll 51, NA/RG 59/867.48/227:

բան է իմանում: Նա գրում էր. «Կարևոր է, որ այդ մասերում գտնվող օտարերկրացիները համոզված լինեն, որ հայերի արտաքսումն իրականում միայն տեղահանություն է»: Թալեաթն ավելացնում էր, որ կարևոր են «արտաքին տեսքի» ապահովումն ու, երբ անհրաժեշտ է, «լավ վերաբերմունքի» ցուցաբերումը, իսկ «սովորական միջոցառումները պետք է իրականացվեն համապատասխան վայրերում»: Մեկ ամիս անց նրան բարկացրեց այն, որ արտասահմանցիները ճանապարհներին դիակներ էին լուսանկարում: Թալեաթը հանձնարարում է, որ բոլոր դիակները «անմիջապես թաղվեն» կամ «թաքցվեն» օտարների աչքերից:⁴⁸⁹

1915 թ. նոյեմբերի վերջին Ամերիկյան կարմիր խաչի փոխնախագահ Արթուր Մյուրրեյը և Ամերիկյան խորհրդի քարտուղար Ջեյմս Բարտոնը դիմել էին ԱՄՆ-ի պետքարտուղարությանը հետևյալ առաջարկով՝ Թուրքիա գործուղել հայերի կարիքներն ուսումնասիրող հանձնաժողով: Սակայն դեկտեմբերի 3-ին դեսպան Մորգենթաուն պատասխանում է պետքարտուղարին, որ թուրքական իշխանությունները թույլ չեն տալու մեծ ծրագիր իրագործել: Նա նշում էր, որ դեսպանությունն ամերիկյան միսիոներների միջոցով կարողանում էր տրամադրել այդ օգնությունը հայ աքսորյալներին՝ հույս հայտնելով, որ կստանա լրացուցիչ միջոցներ՝ հետագա օգնությունը կազմակերպելու նպատակով: Դեկտեմբերի 13-14-ին պետքարտուղարի տեղակալ Էլվի Էյդին տեղեկացնում է դեսպանի պատասխանի մասին վերոնշյալ կազմակերպություններին:⁴⁹⁰

Դեկտեմբերի 1-ին Փոլա Շեֆերը զեկուցում էր Իսլահիե ճամբար կատարած իր այցելության մասին: Նա նշում էր, որ իր տեսած ճամբարներից սա ամենից սարսափելիին էր. ամենուրեք տասնյակ դիակներ էին, դիզենտերիայով հիվանդ մարդկանց վրաններ, օրական թաղում էին շուրջ 500 դի, մարդիկ կռվում էին հացի համար գայլերի պես: Շեֆերը հատուկ մի սայլ էր վարձել՝ հացի հազարավոր բոքոնների համար, որոնք բաժանում էին վաղուց ի վեր օգնություն չստացած

⁴⁸⁹ Տե՛ս **Montgomery George R.**, *Why Talaat Pasha's Assassin was Acquitted // Current History*, 1921, July, էջ 554:

⁴⁹⁰ Տե՛ս *United States Official Records on the Armenian Genocide, 1915-1917 /Compiled with an introduction by Ara Sarafian/,* էջ 389-391 (NA/RG 59/867.48/205).

մարդկանց:⁴⁹¹

Նույն օրը դեսպան Մորգենթաուն գրում էր պետքարտուղար Լան-սինգին, որ «հայերի տեղահանությունը տնտեսական մեծագույն վնաս է» հասցրել Թուրքիային: Տնտեսության այն ոլորտները, որոնք կախում ունեին հայերի «հմուտ աշխատանքից», հայտնվել էին սարսափելի վիճակում: Հայերին առանց որևէ դրամական միջոցների արտաքսել էին այնպիսի աղքատ վայրեր, որտեղ նրանք առանց օգնության չէին կարող որևէ բան անել: Միաժամանակ թուրքական իշխանությունները փորձում էին ամեն ինչ «թուրքացնել» երկրում: Խոսքը պատերազմում հակառակորդ տերությունների քաղաքացիներին և ընկերություններին ժամանակյին տրված կոմունալ ծառայությունների սպասարկման ոլորտի մասին էր՝ ջրային տնտեսությունն, նավամատույցներ, հեռախոս, երկաթգծեր, փարոսներ սպասարկում: Բոլոր օտար աշխատողներին հեռացրել էին աշխատանքից: Կոստանդնուպոլսում իշխանություններն արգելել էին օտար լեզուներով բոլոր տեսակի ցուցանակները, ստիպում էին օտար ընկերություններին ունենալ թուրքերեն գրանցամատյաններ:⁴⁹²

Գեկտեմբերի 4-ին Սամսոնում ամերիկյան հյուպատոսական գործակալ Փիթերը տեղեկացնում էր դեսպան Մորգենթաունին, որ քաղաքի մյութեսարիֆ Նեջմի բեյը տեղափոխվել էր Անգորա՝ որպես նահանգապետի տեղակալ: Ըստ Փիթերի՝ վերջինս գործում էր իր դեմ Մարզվան կատարած ուղևորությունների, ինչպես նաև «Հայկական հարցի նկատմամբ հետաքրքրության» համար: Փիթերը հայտնում էր նաև, որ արքայազնուհի առաջ որոշ հայեր որպես ավանդ իր մոտ դրամ և զարդեղեն էին թողել: Նա նշում էր, որ շատ հեռու էր մնում Թուրքիայի ներքին գործերին միջամտելուց, սակայն երկրում ստեղծված «թալանի և սպանությունների» մթնոլորտը պարտադրում էր օգնության հասնել տուժած մարդկանց: Փիթերը համոզված էր, որ բողոքականներին և կաթոլիկներին արքայի չենթարկելու հրահանգները ձևական բնույթ էին կրում, քանի որ «որոշում կա հայերին ամբողջությամբ վերացնելու վերաբերյալ»: Ըստ Փիթերի՝ Թուրքիան սովորաբար աչքի չէր ըն-

⁴⁹¹ Տե՛ս նույն տեղը, էջ 436-437 (NA/RG 59/867.4016/260):

⁴⁹² Տե՛ս NA Microfilm Publications, Microcopy No. 353, Records of the Department of State Relating to Internal Affairs of Turkey, 1910-1929, Roll 6, No. 269, NA/RG 59/867.00/799.1/2, էջ 6-8:

կել իր «կազմակերպվածությամբ և տաղանդով», «սակայն այս անգամ, երբ հարցը վերաբերում է կոտորածներին և կողոպուտներին, նա իրականացնում է լավ կազմակերպված և շատ արագ գործողություններ»: «Միայն թուրքը կարող էր կարճ ժամկետում այլ աշխարհ տեղափոխել հարյուր հազարավոր մարդկանց», - գրում էր Փիթերը:⁴⁹³

Գեկտեմբերի 10-ին Թիֆլիսում ԱՄՆ-ի հյուպատոս Ուիլյուոբի Սմիթը գրում էր պետքարտուղարին, որ հայ փախստականների ընդհանուր թիվը Կովկասում կազմում էր 170 հազար: Նա նշում էր, որ կարիքը շատ մեծ էր, և փոխարքան կառավարության ու տեղական համայնքների հետ ծրագիր էր մշակում հայերին օգնելու համար: Սմիթը հարցնում էր, թե ինչ տեսակի օգնություն կարող էր տրամադրել Ամերիկյան կոմիտեն շուրջ քսան հազար փախստականներին՝ յուրաքանչյուրին ամսական հինգ դոլար հաշվարկով:⁴⁹⁴

Գեկտեմբերի 13-ին Փոլա Շեֆերը գեկուցում էր Փիթին դեպի Հալեպ տանող ճանապարհին տեղավորված քսորյալների ճամբարներում ցուցաբերած օգնության մասին: Նա նշում էր, որ ինքն ու տիկին Բեստրիս Ռոհները միասին օգնության տրամադրման աշխատանքներ էին կատարում չորս ճամբարներում, որոնք գտնվում էին իրարից 12 ժամ հեռավորության վրա: Ըստ Շեֆերի՝ տեղի պաշտոնյաները «շնորհակալ էին» իրենց՝ քսորյալներին օգնության ձեռք մեկնելու համար: Նրանք օրական քսորյալներին հասցնում էին 10-20 լիրայի արժողությամբ հաց, ինչպես նաև ալյուր, հագուստ և դեղամիջոց՝ նախատեսված հիվանդների համար: Երբ հացը վերջանում էր, նրանք դրան էին թողնում քսորյալներին՝ հետագա ճամփորդության ընթացքում հաց գնելու նպատակով: Շեֆերը գրում էր, որ, ելնելով իրենց փորձից, իրենք ամսական 300-400 լիրայի կարիք ունեին. կեսն անհրաժեշտ էր Մամուրեթ-ուլ-Ազիզի, կեսը՝ Իսլահիե-Հասանբեկլիի համար:⁴⁹⁵

Գեկտեմբերի 20-ին պետքարտուղարին հասցեագրված մամակում Ամերիկյան խորհրդի քարտուղար Ջեյմս Բարտոնն իր փստասանքն

⁴⁹³ St' u *Unites States Official Records on the Armenian Genocide, 1915-1917* /Compiled with an introduction by Ara Sarafian/, էջ 431-432 (NA/RG 59/867.4016/259):

⁴⁹⁴ St' u NA Microfilm Publications, Microcopy No. 353, Records of the Department of State Relating to Internal Affairs of Turkey, 1910-1929, Roll 43, NA/RG 59/867.4016/230bis:

⁴⁹⁵ St' u *Unites States Official Records on the Armenian Genocide, 1915-1917* /Compiled with an introduction by Ara Sarafian/, էջ 437-438 (NA/RG 59/867.4016/260):

էր հայտնում, որ թուրքական կառավարությունը չէր ցանկանում ելքի արտոնություն տալ՝ հայ փախստականների իրավիճակի պարզաբանման նպատակով Թուրքիա հանձնաժողով գործուղելու համար: Բարտոնը նշում էր, որ կոմիտեն շարունակելու էր եղած ֆինանսական միջոցները փոխանցել դեսպան Մորգենթաուին՝ հայ փախստականների շրջանում օգնությունը կազմակերպելու համար:⁴⁹⁶

Գեկտեմբերի 22-ին դեսպան Մորգենթաուն պետքարտուղարին էր ներկայացնում Երիտասարդ կանանց քրիստոնյա ընկերակցության (Young Women's Christian Association) Թուրքիայի պատասխանատու քարտուղար, օրիորդ Ֆրենսիս Գեյջի զեկուցագրերը՝ Փոքր Ասիայում հայերի վիճակի վերաբերյալ: Դեսպանը գնահատում էր տվյալ զեկուցագրերը որպես հայերի տեղահանությունների մասին «առաջին ձեռքից» ստացված տեղեկատվություն:

«Հայաստանի դժվարությունները» զեկուցագրում Գեյջը գրում էր, որ հայերի և թուրքերի միջև թշնամությունն ունի երկար պատմություն: Հայ ազգը, ըստ Գեյջի, այն ժողովուրդներից է, որը հրաժարվել էր թուրքական կառավարության՝ կրոնափոխ լինելու և իսլամ ընդունելու վերաբերյալ պահանջը ընդունելուց, հետագայում հայերին տրվել էին կրոնական ազատություններ, սակայն, դրան զուգահեռ, նրանց հանդեպ «ճնշումների» քաղաքականությունը շարունակվել էր: Միաժամանակ դարեր շարունակ հայերն ազատված էին զինվորական ծառայությունից: Դրա դիմաց հայկական ընտանիքի յուրաքաչյուր տղամարդ վճարել էր գլխահարկ: Զինվորական ծառայությունից ազատ լինելու հանգամանքը երիտասարդ հայերի համար հնարավորություն էր ստեղծել զբաղվելու առևտրով: Դրա շնորհիվ հայերը դարձել էին «մեծ առևտրականների ազգ»: Վերադառնալով բանակից՝ երիտասարդ թուրքերն ակամատես էին դառնում այն բանին, որ հայերը գրավել էին առևտրական բոլոր դիրքերը: Դարերի ընթացքում թուրք զինվորների շրջանում այն կարծիքն էր ձևավորվել, որ իրենց իրավունք էր վերապահված պարբերաբար թալանելու հայերին:

Սակայն երիտթուրքերի՝ իշխանության գալուց հետո իրավիճակը փոխվեց: Պաշտոնապես հայտարարվում էր, որ հայերի և թուրքերի միջև «եղբայրություն» էր հաստատվել: Միաժամանակ հայերի շրջա-

⁴⁹⁶ St'u NA Microfilm Publications, Microcopy No. 353, Records of the Department of State Relating to Internal Affairs of Turkey, 1910-1929, Roll 51, NA/RG 59/867.48/211:

նում կային «ազգային կազմակերպություններ», որոնք թեև հեղափոխական և նիհիլիստական էին իրենց էությունը, սակայն շատ օգտակար էին իրենց ազգի համար «առաջադիմություն և կրթություն» բերելու հարցում: Սակայն պատերազմի սկսվելուն պես թուրք իշխանությունները հայտարարեցին, որ հայկական կազմակերպությունները տարբեր քաղաքներում թաքցված ռումբեր և զենք ունեն, որոնք կարող են օգտագործվել կառավարության դեմ: Շատ դժվար էր, ըստ Գեյջի, հաստատել իշխանությունների քաղաքական հայտարարությունների ճշմարտացիությունը, սակայն այդ հեղափոխական կազմակերպությունները միանշանակ զենք ունեին «ժողովրդի պաշտպանության համար»: Արդյոք նրանց ծրագրերը պարունակո՞ւմ էին ապստամբության կազմակերպում՝ Գեյջը դժվարանում էր հաստատել: Սակայն հայերի պատմությունը Թուրքիայում վկայում էր այն մասին, որ շուրջ քսան տարին մեկ անգամ թուրքերը կազմակերպում էին հայերի «մեծ կամ փոքր կոտորածներ», հեռավոր քաղաքներում և գյուղերում մշտապես զողանում էին երիտասարդ աղջիկներին, անասունների հոտերը գտնվում էին քրդերի հսկողության տակ, ցանկության դեպքում շեյխերը յուրացնում էին հայերի տները. դատարաններում հայերի համար որևէ արդարություն լինել չէր կարող: Բնական է, որ նման պատմության պարագայում երիտթուրքերի կուսակցության՝ հայերի հետ «եղբայրության» մասին հայտարարությունների նկատմամբ որևէ վստահություն լինել չէր կարող:

Պատերազմի սկսվելուն պես հայերը թուրքերի նման գորակոչվեցին բանակ: Մարզվանի հինգ հազար զինակոչիկներից հազարը հայեր էին: Քաղաքի հայ բնակչության թիվը գրեթե նույն համաչափության մեջ էր, և դա նշանակում էր, որ ավելի շատ հայեր էին մեկնել քաղաքից բանակ, քան թե թուրքեր: Միաժամանակ բանակի կարիքների համար հայերից առգրավվեցին մեծ քանակությամբ հագուստ, ձիեր, ավանակներ և սայլեր: Հայերի խանութները գրեթե դատարկվել էին: Պատերազմի սկսվելուց ութ ամիս անց հրահանգ ստացվեց այն մասին, որ հայերը պետք է հանձնեն իրենց զենքը: Գեյջը նշում էր, որ պատճառը կարող էր լինել այն, որ զինակոչից հետո ավելի շատ հայեր էին մնացել քաղաքում, քան թուրքեր, և քանի որ հայ ազգը համարվում էր հեղափոխական, հայերին պետք էր զինաթափել: Մյուս պատճառը կարող էր լինել այն, որն ավելի մոտ էր իրականությանը,

որ սովորաբար կոտորածներից առաջ իշխանությունները հավաքում էին եղած զենքը՝ որևէ ինքնապաշտպանություն թույլ չտալու համար:

Մի գիշեր անսպասելի կերպով իշխանությունները ձերբակալեցին քսան հայ տղամարդու, երկու օր պահեցին տեղի բանտում, այնուհետև ուղարկեցին Սվազ: Մրան հետևեց քաղաքի ղեկավար տղամարդկանց բանտարկումը: Ըստ Գեյջի՝ նրանք բոլորը ենթարկվել էին սարսափելի կոտանքների: Իշխանությունները հայտարարեցին, որ հայտնաբերել են հայերի կողմից թաքցված ռումբեր: Միսիոներները դիմում են իշխանություններին՝ առաջարկելով, որ հայ կաթոլիկ, առաքելական և բողոքական համայնքները ստեղծեն խառը հանձնաժողով՝ բնակչությունից զենքը հավաքելու նպատակով: Իշխանությունները համաձայնում են՝ հայտարարելով, որ եթե ողջ զենքը հանձնվի իշխանություններին, հայերին որևէ վտանգ չի սպառնա: Հանձնաժողովը դիմում է հայ բնակչությանը զենքը հանձնելու առաջարկով՝ միաժամանակ նշելով, որ զենք ունեցողների անուններն իշխանություններին չեն տրվելու: Շուտով հանձնաժողովը որոշակի քանակությամբ հրացաններ հանձնեց իշխանություններին, սակայն իշխանություններն անմիջապես հայտարարեցին հայերի տեղահանության մասին: Սկզբնական շրջանում հավաքեցին 400 տղամարդու. նրանց տեղավորել էին ժամանակավոր շինություններում, որից հետո ամեն գիշեր ճանապարհ էին ընկնում նրանցից 50-ը: Գեյջը հստակ տեղեկություն չուներ, թե ինչ է տեղի ունեցել այդ մարդկանց հետ, սակայն կային վկաներ, որ Մարզվանից վեց ժամ հեռավորության վրա նրանց թալանել էին, սպանել և դիակները նետել խոր ջրհորները: Կառավարական պաշտոնյաները հայտնեցին միսիոներներին, որ սպանվել էր Մարզվանից արստրված 1.300-ից ավելի տղամարդ, սակայն Գեյջը չէր հավատում այդ տվյալներին:

Հուլիսի 4-ին հրահանգ տրվեց կանանց արստրելու մասին: Միաժամանակ հայտարարվեց այն մասին, որ իսլամ ընդունողները չեն տեղահանվելու: Իշխանությունները տրամադրել էին եզան սայլեր և կարգեր, սակայն ով վճարունակ չէր, պետք է ճանապարհ ընկներ ոտքով: Կանանց և երեխաներին նախ տանում էին քաղաքից կես ժամ հեռավորության վրա գտնվող վանք, որտեղ թուրք տղամարդիկ և կանայք համոզում էին իրենց կողմից ընտրվածներին դառնալ մահմեդականներ, մնալ իրենց տներում կամ հարեմներում: Կային դեպքեր, երբ

հայ կանայք կառավարական պաշտոնյաների կանանց էին տալիս իրենց զարդեղենը՝ քաղաքից շնեկներու դիմաց, սակայն խոստումները հինականում խախտվում էին: Մարզվանի միսիոներները թույլտվություն էին ստացել իրենց մոտ տեղավորելու այն հայերին՝ շուրջ 350 հոգի, ովքեր առնչություն ունեին ամերիկյան հաստատությունների հետ, սակայն հետագայում՝ օգոստոսի 10-ին, ուսուցիչներին և օժանդակ աշխատակիցներին՝ թվով 173 հոգի, նույնպես արտրեցին իշխանությունների կողմից տրամադրված սայլերով: Օգոստոսի 12-ին արտրվում են նաև հիվանդանոցի բուժքույրերը, հիվանդներն ու օրիորդաց դպրոցի աշակերտուհիները:⁴⁹⁷

Գեյջը գրում էր, որ Կոստանդնուպոլսում գտնվող Ավստրո-Հունգարիայի և ԱՄՆ-ի դեսպանությունների խնդրանքով կաթոլիկների և բողոքականների տեղահանությունից խուսափելու իշխանությունների խոստումները ոչ բոլոր դեպքերում էին կատարվում: Նա վկայում էր, որ Մարզվանի դպրոցի աշակերտուհիների հետ էր, երբ հազար տուն ունեցող հարուստ Բրզնիկ գյուղի հայ կաթոլիկ բնակիչներն ամբողջությամբ ենթարկվեցին տեղահանության: Գեյջի կողմից պաշտոնյաներին ուղղված հարցումներին վերջիններս պատասխանում էին, որ հրահանգը եկել էր Կոստանդնուպոլսից, քանի որ Իտալիայի՝ պատերազմի մեջ մտնելուց հետո քաղաքականությունը փոխվել էր: Ըստ Գեյջի՝ Անգորայում բնակվող շատ կաթոլիկ կանայք և երեխաներ մնացել էին քաղաքում, քանի որ դարձել էին մահմեդականներ: Սակայն բոլոր կաթոլիկ տղամարդկանց արտրել էին: Բողոքականները շարունակում էին մնալ քաղաքում: Մարզվանից երեք օր հեռավորության վրա գտնվող Շունգուրլուում իշխանություններն արտրել էին բոլոր առաքելական հայերին, որոնք նույնիսկ Յոզղատ չէին կարողացել հասնել: Բողոքականների վերաբերյալ որևէ ցուցում չկար, սակայն ավելի ուշ նրանց ընտանիքներին նույնպես բաժանում են իրարից և ուղարկում թուրքական տարբեր գյուղեր: Ըստ Գեյջի՝ օգոստոսի 29-ին Կոստանդնուպոլսից բոլոր վիլայեթներին ցուցում էր տրվել տեղահանությունը դադարեցնելու մասին, սակայն այն նույն թափով շարունակվում էր Մարզվանում: Ավելին՝ տանում էին նաև այն

⁴⁹⁷ See *United States Official Records on the Armenian Genocide, 1915-1917* /Compiled with an introduction by Ara Sarafian/, էջ 400-403 (NA/RG 59/867.4016/252):

կանանց, որոնք իսլամ էին ընդունել:⁴⁹⁸

Գեյջը նշում էր, որ հայերի թվաքանակը, համաձայն տարբեր աղբյուրների, տատանվում էր մեկուկես միլիոնից մինչև երկուսուկես միլիոնի միջակայքում: Երկիրը լավ իմացող մարդիկ ասում էին, որ տվյալ պահին ողջ էին մնացել 500 հազարից ոչ ավելի հայեր: Հնարավոր է, որ տարբեր քաղաքներում մի քանի հազար հայեր մնացած լինեին, որոնք դարձել էին մահմեդականներ: Շատ էին մաս հունական գյուղերում և սարերում թաքնված հայերը: Հայերի ամենալավ տներն անմիջապես զբաղեցնում էին թուրք պաշտոնյաները: Կահույքն առգրավվում էր հիմնականում պաշտոնյաների տների և կառավարական շինությունների համար: Իր զեկուցագրի վերջում Գեյջը գրում էր, որ «ինչ էլ խոսվում է հայ ժողովրդի հեղափոխական մտադրությունների մասին, կառավարությունը ոչ թե պետք է մահապատժի ենթարկի ապստամբ ազգին, այլ պետք է վարի արդար պայքար»: Գեյջը հույս էր հայտնում, որ թուրքերն ի վերջո կկազմեն այնպիսի կառավարություն, որը կկարողանար իր «վշտակցությունը» հայտնել «իր դժբախտ ենթակաների տանջանքների» համար:⁴⁹⁹

Ֆրենսիս Գեյջի հաջորդ զեկուցագիրը վերաբերում էր 1915 թ. օգոստոսի 10-ից սեպտեմբերի 6-ը Սվազի մահանգ կատարած իր այցելությանը: Հեղինակը հանգել էր հետևյալ եզրակացություններին.

1. Հայերը գործնականորեն աքսորվել էին բոլոր վիլայեթներից: Նրանցից շատերը սպանվել են կառավարության հրահանգով, մահացել աքսորի ճանապարհին, ամիսներով քայլել և հասել են արաբական անապատի սահմանները, որտեղ օգնության կարիք ունեին: Օգնության մեծ ծրագիր էր անհրաժեշտ: Այն պետք էր սկսել մայրաքաղաքից և հասցնել տեղի իշխանություններին:

2. Կոստանդնուպոլսի ոչ բոլոր հրահանգներն էին կատարվում, ուստի իշխանությունների բոլոր խոստումները պետք է լինեն գրավոր և հաստատվեն պաշտոնական կնիքով:

3. Բողոքականներին վերաբերող հրահանգները մասամբ են ճանաչվել տեղական իշխանությունների կողմից: Շատ դեպքերում նրանք նույնպես աքսորվել են, կամ նրանց ստիպել են ընդունել իսլամ:

⁴⁹⁸ Տե՛ս նույն տեղը, էջ 405-406. NA/RG 59/867.4016/252:

⁴⁹⁹ Տե՛ս նույն տեղը, էջ 407 (NA/RG 59/867.4016/252):

4. Մահմեդական դարձած բողոքականների վերադարձի թույլ-ստուգություն ստանալը շատ կարևոր էր այդ մարդկանց համար:

5. Կաշառք վերցնելը մեծ չափերի էր հասնում, մասնավորապես՝ Մարզվանում, որտեղ մարդկանցից 2 հազար լիրա էին վերցրել քաղաքում մնալու համար, սակայն նրանց, միևնույն է, աքսորել էին:

6. Բռնի իսլամացումը մահվան կամ աքսորի փոխարեն համատարած երևույթ էր դարձել, թեև շատ թուրքերի համար կարևորը ոչ թե կրոնն էր, այլ ազգությունը:

7. Թուրքական տներում բավականին մեծ թվով քրիստոնյա երեխաներ, աղջիկներ և կանայք կային: Այդ տներ իմասներ էին այցելում՝ նրանց աղոթքներ սովորեցնելու համար:

8. Հազարավոր կանայք և երեխաներ էին թաքնվում հունական գյուղերում, որոնք նույնպես օգնության կարիք ունեին:

9. Թե ինչ էր տեղի ունեցել հայ տղամարդկանց հետ, շարունակում էր մնալ «բացարձակ առեղծված», թեև ակնհայտ էր, որ նրանց զգալի մասը սպանվել էր: Ջինվորների մեծամասնությունը դեռ ողջ էր, սակայն բոլորը հավատացած էին, որ նրանց սպանելու են:⁵⁰⁰

Դեկտեմբերի 30-ին դեսպան Մորզենթաուն պետքարտուղարին էր ներկայացրել Կոստանդնուպոլսի հայ պատրիարք, արքեպիսկոպոս Ջավեն Տեր-Եղիայանի նամակը, որում պատրիարքը նկարագրում էր Օսմանյան կայսրության հայ բնակչության հետ տեղի ունեցած ողբերգությունը: Նա նշում էր, որ բուն Հայաստանը գրկվել է իր բնիկ ժողովրդից, իր ազգի մեկ չորրորդը գտնվում է չափազանց ծանր վիճակում և կարիք ունի օգնության: Բարձր գնահատելով ԱՄՆ-ի առաջատար դերն ազատության, արդարության և բարեգործության գաղափարները տարածելու գործում՝ պատրիարքը շնորհակալություն էր հայտնում Միացյալ Նահանգների կառավարությանն ու ժողովրդին՝ ողբերգական իրավիճակում հայտնված հայերին օգնության ձեռք մեկնելու համար:⁵⁰¹

Դեկտեմբերի 30-ին Մամուրեթ-ուլ-Ազիզում հյուպատոս Լեալի Դեյվիսը գրում էր դեսպան Մորզենթաունին, որ վերջին չորս ամիսներն անցել էին «անորոշության և անհանգստության» մեջ: Հայերի՝ հուլիսին և օգոստոսին տեղի ունեցած արտաքսումից հետո քաղաքում մնացած

⁵⁰⁰ Տե՛ս նույն տեղը, էջ 413-414 (NA/RG 59/867.4016/252):

⁵⁰¹ Տե՛ս նույն տեղը, էջ 422-424 (NA/RG 59/867.4016/255):

մի քանի բողոքական, կաթոլիկ և ԱՄՆ-ի քաղաքացի հանդիսացող հայերի համար անվտանգության որևէ երաշխիք գոյություն չուներ, թեև քաղաքի մուսուլմանները մեկ կամ երկու անգամ հայտարարել էր, որ հայերն այլևս չեն աքսորվելու: Գեյվիսը գրում էր, որ մյուսների հետ քաղաքից աքսորվել էին նաև մեծ թվով բողոքական հայեր վերջիններիս չաքսորելու մասին հրահանգի ստացվելուց երկու օր առաջ: Նրանք հասել էին Մալաթիա, երբ հայտարարվել էր այդ հրահանգի մասին: Հյուսիսում ջանք չէր խնայել նրանց հետ բերելու համար, սակայն ապարդյուն: Միայն մի քանիսն էին կարողացել վերադառնալ, այն էլ՝ ոչ թե հրահանգի կատարման, այլ քրդերին 50-100 լիրայի չափով կաշառք տալու շնորհիվ: Նրանք հիմնականում կանայք էին: Այն բողոքական հայ տղամարդիկ, որոնք վերադարձել էին, ձերբակալվել էին և աքսորվել երկրորդ անգամ: Նրանց ճակատագրի մասին որևէ տեղեկություն չկար: Այս ընթացքում տեղի ունեցած ամենից նշանակալից երևույթն այն էր, որ ինչպես այստեղ, այնպես էլ վիլայեթի մյուս քաղաքներում կառավարությունը «հասարակական աճուրդի» միջոցով վաճառում էր ճանապարհներին սպանված հայերի վրայից հանված հագուստը: Գեյվիսը բնութագրում էր կատարվածը որպես «ստոր և զարհուրելի» երևույթ: «Բարբարոսության» մեկ այլ արտահայտություն էր ոստիկանների կողմից քրդերին աքսորված հայերի 50-100 հոգանոց խմբերի վաճառքը՝ նրանց սպանելու և թալանելու նպատակով: Գեյվիսը տեղեկացնում էր նաև, որ շրջակա գյուղերի քրիստոնյա եկեղեցիներն առգրավված էին թուրքերի կողմից և մասամբ ավերված:⁵⁰²

Գեյվիսը գրում էր, որ դեռևս սեպտեմբերի 26-ին վալին հայտարարել էր, որ այլևս որևէ հայ չի արտաքսվելու նահանգից: Մի քանի շաբաթ իրավիճակը խաղաղ էր, և բոլոր թաքնված հայերը դուրս էին գալիս իրենց թաքստոցներից: Որոշ հայեր խսկան էին ընդունել՝ մտածելով, որ ապագայում իրենց այլևս վտանգ չի սպառնալու: Սակայն նոյեմբերի 4-ին ոստիկանությունը հանկարծակի սկսեց հայերի և սիրիացիների նոր ձերբակալություններ: Նրանց բռնում էին փողոցներում և խանութներում: Նրանց մատնում էին տների տերերը: Ոստիկանությունը շրջապատել էր ամերիկյան հիվանդանոցի շենքը և ձեր-

⁵⁰² Տե՛ս նույն տեղը, էջ 469-470 (NA/RG 59/867.4016/269):

բակալել այնտեղ աշխատող հայերին, նույնիսկ ԱՄՆ-ի քաղաքացիներին: Մի քանի ժամվա ընթացքում միայն քաղաքում ոստիկանությունը ձերբակալել և բանտ էր նետել 500 հոգու: Երկու օր շարունակ հյուպատոսի գործադրած ջանքերի և ոստիկանության ղեկավարին ուղղված խնդրանքների շնորհիվ հնարավոր դարձավ ազատ արձակել շատերին: Սակայն նույնը չհաջողվեց անել գյուղերում ձերբակալված մի քանի հարյուրի հասնող հայերի և սիրիացիների համար, որոնց ոստիկանների ուղեկցությամբ անասունների պես, փոքր խմբերով արսորեցին տարբեր ուղղություններով:⁵⁰³

Գեյվիսի տեղեկությունների համաձայն՝ Վանի, Մուշի և Բիթլիսի շրջանից անմիջապես ժամանել էին ցածր խավի մահմեդական ներգաղթյալներ, որոնց բնակեցրել էին շրջակա գյուղերի հայերին պատկանող տներում:⁵⁰⁴

Գեյվիսը գրում էր, որ ողջ նահանգում մեկ տարի առաջ բնակվող 100 հազար հայերից, հնարավոր է, ինչպես նշում էին պաշտոնյաները, մնացել էին չորս հազարից ոչ ավելի հայեր: Իշխանությունների նպատակն էր չթողնել հինգ տոկոսից ավելի հայեր, սակայն հյուպատոսը կասկածում էր, որ այդքան հայ կարող էր մնացած լինել: Ըստ Գեյվիսի՝ շատ հայեր, մասնավորապես՝ կանայք, իսլամ էին ընդունել: Վստահելի աղբյուրների համաձայն՝ շատ հայեր էլ թաքնվել էին Գերսիմի քրդերի մոտ: Գեյվիսի տվյալներով՝ ընդհանուր առմամբ նահանգում մնացել էին հինգ հարյուրից մինչև հազար հայեր:⁵⁰⁵

Գեյվիսը գրում էր, որ հայերի արտաքսումը շարունակվեց մինչև 1915 թ. ավարտը: Մի քանի անգամ իշխանությունները հայտարարել էին այն մասին, որ թաքնված հայերը կարող էին ազատորեն դուրս գալ փողոց, քանի որ արտաքսում այլևս տեղի չէր ունենալու: Հյուպատոսը նշում էր, որ, նրանցից շատերն այնքան «հիմար» գտնվեցին, որ հավատացին իշխանություններին և դուրս եկան իրենց թաքստոցներից: Երբ իշխանությունները տեղեկացվեցին այն մասին, որ բավական թվով հայեր շրջում են քաղաքի փողոցներով, ձերբակալեցին նրանց, բանտ նետեցին, որից հետո արտաքսեցին: Այն հայերին, ովքեր ինչ-որ կերպ, որոշ դեպքերում քրդերին կաշառելով, կարողացել

⁵⁰³ Տե՛ս նույն տեղը, էջ 470-472 (NA/RG 59/867.4016/269):

⁵⁰⁴ Տե՛ս նույն տեղը, էջ 472-473 (NA/RG 59/867.4016/269):

⁵⁰⁵ Տե՛ս նույն տեղը, էջ 473 (NA/RG 59/867.4016/269):

էին փրկվել մահից և վերադառնալ իրենց ծննդդավայրերը, իշխանությունները համարում էին «դասալիքներ»: Վերջին լայնածավալ ձերբակալությունները, ըստ հյուպատոսի, տեղի ունեցան նոյեմբերի 4-ին և 5-ին: Հնարավոր է, որ նահանգապետն այդ օրերին հատուկ էր մեկնել Էրզրում: Նրա տեղը ժամանակավորապես զբաղեցրել էր 11-րդ բանակային կորպուսի հրամանատար Սուլեյման Ֆաիկ փաշան: Գեյվիսը փորձել էր ցանկերից հանել և ազատել որոշ ծանոթ հայերի, սակայն դա նրան չէր հաջողվել: Հյուպատոսություն վերադառնալուն պես նա հայտնաբերել էր, որ շենքը հսկում էին ոստիկանները՝ հայերին այստեղ թաքնվելու հնարավորություն չտալու համար: Գեյվիսը կրկին մեկնել էր ոստիկանություն և այնտեղ հանդիպել շուրջ 500 ձերբակալված հայերի: Նա ոստիկանապետին բողոքական հայերի ցուցակ էր ներկայացրել և պահանջել ազատել նրանց: Ի վերջո, ոստիկանապետն ազատեց տասներկու հոգու, որոնց Գեյվիսը տեղավորեց հյուպատոսությունում:

Հաջորդ օրը ոստիկանությունը բանտարկեց Խարբերդում ձերբակալված հայերին: Գեյվիսը միսիոներ Ռիզզի հետ այցելեց Ֆաիկ փաշային ու խնդրեց չարտաքսել դպրոցի ուսուցիչներին և շուրջ 150 ուսանող աղջիկներին: Վերջինս համաձայնել էր՝ ասելով, որ արտաքսվելու էին միայն «դասալիքները»: Նա խնդրեց հյուպատոսին դիմել Խարբերդում աշխատող միսիոներներին, որոնք, ըստ տեղեկությունների, իրենց մոտ «դասալիքներ» էին թաքցնում: Ոստիկանությունը «դասալիքներին» մեծ որս էր սկսել նաև շրջակա գյուղերում:⁵⁰⁶

Գեյվիսն այնուհետև հաղորդում էր, որ 1915 թ. վերջին ողջ մնացած հայերից սկսեցին հեռագրեր ստացվել տարբեր քաղաքներից, հատկապես՝ Գեյր-էզ-Չորից: Նրանք խնդրում էին իրենց փոխանցել միսիոներների, մնացած հայերի և թուրքերի մոտ ի պահ թողած դրամական միջոցները: Խնդրանքները հիմնականում գալիս էին Հալեպում հավատարմագրված ԱՄՆ-ի հյուպատոսությունից: Գեյվիսն ու միսիոները մեծ աշխատանք տարան արտաքսված հայերի խնդրանքները կատարելու ուղղությամբ: Միաժամանակ Գեյվիսը նշում էր, որ թուրքերը հիմնականում հրաժարվում էին իրենց մոտ ի պահ թողնված գումարները վերադարձնելուց: Սկզբնական շրջանում իշխանություն-

⁵⁰⁶ Տե՛ս նույն տեղը, էջ 656-659 (NA/RG 59/867.4016/392):

ները թույլ էին տալիս կատարել այդ փոխանցումները, սակայն որոշ ժամանակ անց այն արգելվեց:⁵⁰⁷ 1915-1916 թթ. ձմռան ընթացքում Մամուրեթ-ուլ-Ազիզ վերադարձան հայ զինվորներ, որոնք Էրզրումում, Մուշում և Բիթլիսում զբաղվում էին բանակի համար ցորեն տեղափոխելու հարցերով: Վերջիններս նույնիսկ չզիտեին, որ հայ բնակչությունը, այդ թվում՝ իրենց ընտանիքները, ենթարկվել էր տեղահանության: Նրանց բոլորին էլ ձերբակալեցին, մեկ կամ երկու օր պահեցին բանտում և արտաքսեցին: Մի քանիսը դիմադրեցին, մի քանիսն էլ կարողացան փախչել, սակայն նրանց մեծ մասին սպանեցին: Դեյվիսը զարմանալի էր համարում այն, թե ինչու էին սպանելու համար այդ մարդկանց բերում իրենց մահանգ, եթե դա կարելի էր անել մինչ այդ:⁵⁰⁸

1915 թ. հայերի տեղահանություններից հետո Դեյվիսն այն կարծիքին էր, որ նահանգում շատ քիչ թվով հայեր էին մնացել: Նրանց թվում էին հյուպատոսության տարածքում և ԱՄՆ-ի հյուպատոսի պաշտպանության ներքո գտնվող ու շրջակա տներում ապրող հայերը, «Եփրատ» քոլեջում սովորող աղջիկները, ամերիկյան հիվանդանոցի բուժքույրերն ու սպասարկող անձնակազմը, գերմանական և դանիական որբանոցների երեխաներն ու ուսուցիչները, մի քանի արհեստավորներ, որոնք կարող էին պետք գալ իշխանություններին: Դեյվիսն այն կարծիքին էին, որ շուտով միսիոներներն անելիք չէին ունենալու, քանի որ նրանց ողջ կրոնական, տնտեսական և կրթական գործունեությունը կապված էր հայերի հետ: Ամերիկյան դպրոցներում աշխատող գրեթե բոլոր դասախոսներն ու ուսուցիչներն աքսորվել էին: Ըստ Դեյվիսի՝ մինչև 1915 թ. վիլայեթում ապրում էին 150 հազար հայեր, իսկ տարվա վերջին մնացել էին ընդամենը ութ կամ տասը հազար հայեր և մինչև երկու հազար աքսորյալներ:⁵⁰⁹

Հետաքրքիր է, որ 1896 թ.-ից Խարբերդի գերմանական առաքելությունում աշխատող, վերապրած պատվելի Պետրոս Հակոբյանն իր վկայություններում նշում էր, որ կոտորածների ընթացքում արտասահմանյան առաքելություններն օժանդակություն չցուցաբերեցին հայ բնակչությանը: ԱՄՆ-ի հյուպատոս ազգությամբ հրեա Լեսլի Դեյվիսն իրեն դիմող հայերին պատասխանում էր, որ կարող էր պաշտ-

⁵⁰⁷ Տե՛ս նույն տեղը, էջ 660 (NA/RG 59/867.4016/392):

⁵⁰⁸ Տե՛ս նույն տեղը:

⁵⁰⁹ Տե՛ս նույն տեղը, էջ 661-662 (NA/RG 59/867.4016/392):

պանել միայն ծնունդով ամերիկացի քաղաքացիներին, սակայն իր բացասական վերաբերմունքի հետևանքով ԱՄՆ-ի շատ քաղաքացիներ կոտորվեցին մյուսների պես: Այսպես, երբ Միացյալ Նահանգներում երկար տարիներ ապրած և քաղաքացիություն ստացած Սիմոն Սարկավազյանն աքսորվող հայերի քարավանում անցնում էր ԱՄՆ-ի հյուպատոսության մոտով, տեսել էր դռան մոտ կանգնած հյուպատոսին: Մոտենալով հյուպատոսին՝ նա ցույց էր տվել քաղաքացիության փաստաթուղթն ու պաշտպանություն խնդրել: Սակայն վերջինս արհամարհանքով մի կողմ էր հրել փաստաթուղթն ու մերժել նրան: Սիմոն Սարկավազյանը պատռել էր փաստաթուղթն ու նետել հյուպատոսի դեմքին:

Միաժամանակ աքսորված հայերն իրենց դրամական միջոցներն էին հանձնել ամերիկյան հյուպատոսության աշխատակից Միքսին, սակայն երբ վերապրածները դիմում էին հյուպատոսություն՝ իրենց դրամական միջոցները ստանալու համար, նրանց տալիս էին օսմանյան քթադրամներ, որոնք կազմում էին գումարի միայն երրորդ մասը:⁵¹⁰

Հալեպում ԱՄՆ-ի հյուպատոս Ջեքսոնը 1918 թ. մայիսի 27-ին պետքարտուղարին ուղղված իր նամակում գրում էր, որ 1915 թ. դեկտեմբերին մի հայ իրեն գրավոր տեղեկություններ էր ներկայացրել այն մասին, որ շուրջ 5 հազար հայեր՝ տղամարդիկ, կանայք և երեխաներ, հայտնվել են 1.500 թուրք զինվորների կողմից պաշարման մեջ Մուսա լեռան վրա, որը գտնվում էր Անտիոքից մի քանի մղոն դեպի հարավ՝ Անտիոքի և Լաթաքիայի միջև: Հյուպատոսություն հասնելու համար այդ հայր կարողացել էր շրջանցել թուրքական բանակի դիրքերն ու ոտքով անցնել 100 մղոն ճանապարհ: Ըստ նրա՝ շրջապատման մեջ գտնվողներից շատերը մահացել են, մնացածները՝ հայտնվել անհույս վիճակում սննդի և զինամթերքի պակասի պատճառով: Ջեքսոնը որոշում է կայացնում դիմելու «անհապաղ միջոցների»՝ պաշարվածներին փրկելու համար: Գիտակցելով, որ իշխանություններին դիմելը «անօգուտ է», քանի որ նրանք միայն կկրկնապատկեն իրենց ջանքերը՝ պաշարված հայերին ոչնչացնելու նպատակով, Ջեքսոնը

⁵¹⁰ Տե՛ս Հայոց ցեղասպանությունը Օսմանյան Թուրքիայում. Վերապրածների վկայություններ. Փաստաթղթերի ժողովածու, Հատոր III. Էրզրումի, Խարբերդի, Գիարբեքիի, Սեբաստիայի, Տրապիզոնի նահանգներ, Պարսկահայք, էջ 307-308:

որոշեց փոխանցել այդ տեղեկատվությունը Միջերկրականի արևելյան հատվածում մշտապես շրջող ֆրանսիական նավատորմին: Նա ընտրեց մի հեղինակավոր գործարարի, որն ուներ հայկական ծագում ու արաբական ազգանուն և ուղարկեց նրան Բեյրութ՝ ֆրանսիական նավատորմի հրամանատարության հետ կապ հաստատելու համար: Հյուպատոսության կողմից ընտրված մարդը կարողացավ համոզել իշխանություններին, որ գործի բերումով պետք է այցելի Բեյրութ: Մի քանի շաբաթ անց ֆրանսիական նավերը հայտնվեցին Մուսա լեռան մոտ, կապ հաստատեցին հայերի հետ և կարողացան չորս հազար հայ տեղափոխել Եգիպտոս: Ջեքսոնի ստացած տեղեկությունների համաձայն՝ Հալեպում լուրեր էին շրջում այն մասին, որ թուրքական բանակի՝ հինգ շաբաթ տևած հարձակումների ընթացքում սպանվել էր 500 թուրք զինվոր, և ավելի շատ զինվորներ վիրավորվել էին: Նրանցից շատերին տեղափոխել էին Հալեպ՝ բուժման նպատակով:⁵¹¹

1916 թ. հունվարի 2-ին Բեստրիս Ռոհները Հալեպից գրում էր Պիթին, որ Ջեմալ փաշան թույլ չի տվել իրենց ճամփորդել և փոխարենը «հանճնարարել է» կառավարության ծախսերով խնամել 320 որբ երեխաների: Ամերիկացի միսիոներները համաձայնել էին խնամել երեխաներին, որոնց մեծ մասը հիվանդ էր, և գրեթե ամեն օր նրանցից մի քանիսը մահանում էին: Ըստ Ռոհների՝ ԱՄՆ-ի հյուպատոսությունն այս ընթացքում կարողացել էր կապ հաստատել հայերի հիմնական արքայազարկների հետ, որոնց միսիոներների միջոցով դրամ էր ուղարկվում: Բացի նշված երեխաների խնամակալությունից՝ միսիոներները կարող էին հազարավոր ուրիշ երեխաներ հավաքել տարբեր շրջաններից, սակայն այս ծրագիրն իրականացնելու համար միջոցներ էին հարկավոր: Ռոհները մաս տեղեկացնում էր, որ Փոլա Շեֆերը մեկնել էր Մարաշ՝ մյութեսարիֆի կնոջը հանդիպելու նպատակով: Միաժամանակ նա խնդրում էր հյուպատոս Ջեքսոնին «Deutsche Orient Bank»-ի միջոցով դրամ փոխանցել միսիոներների գործունեության համար:⁵¹²

Հունվարի 21-ին Մորգենթաուն գրում էր պետքարտուղարին, որ

⁵¹¹ St'u NA Microfilm Publications, Microcopy No. 353, Records of the Department of State Relating to Internal Affairs of Turkey, 1910-1929, Roll 46, NA/RG 59/867.4016/386:

⁵¹² St'u *Unites States Official Records on the Armenian Genocide, 1915-1917* /Compiled with an introduction by Ara Sarafian/, էջ 433 (LC/HM(Sr.)/Reel 8/005):

«իրենց տեղական հանձնաժողովը» եզրակացրել է, որ տվյալ պահի դրությամբ աքսորյալներին շաբաթական տրվում է 9 հազար դոլարի չափով օգնություն, և մյուս ամսվա համար դեռևս առկա են համապատասխան միջոցներ: Ըստ դեսպանի՝ շատ պահպանողական հաշվարկները ցույց էին տալիս, որ կոտորածներից փրկվել էին շուրջ 500 հազար հայեր, որոնց ճնշող մասը կազմում էին կանայք ու երեխաները: Քանի որ թուրքական կառավարությունն արգելում էր նրանց աշխատանքի ընդունվել, նրանք բոլորն էլ օգնության կարիք ունեին: Չմռան ընթացքում նրանց փրկության համար, ըստ դեսպանի, անհրաժեշտ էր առնվազն հարյուր հազար դոլար: Նա առաջարկում էր փոխանցել այս խնդրանքը Նյու Յորք՝ Բլիվլենդ Դոդջին, Ֆիլադելֆիա՝ Ռուդոլֆ Բլանկենբերգին, և Բոստոն՝ Ջեյմս Բարտոնին:⁵¹³

1916 թ. հունվարի 24-ին գանձապահ Փիթի և քարտուղար Ռամսեյի՝ դեսպան Մորգենթաուիին ուղղված նամակում Կոնիայում գործող միսիոներ Ուիլյամ Դոդջի նամակներից քաղվածքներ էին բերվում շրջանում հայերի աքսորման հետևանքով ստեղծված իրավիճակի մասին: Դոդջը գրում էր, որ Կոնիայի հայերին աքսորելու քաղաքականության հիմնական գաղափարներից մեկն այն էր, որ նրանց պետք էր փոքր խմբերով ցրել թուրքական գյուղերում: Թեև նահանգապետը դրական էր արտահայտվում այդ գաղափարի մասին, սակայն «իրականում այն ամենից նողկալի էր»: Ըստ Դոդջի՝ թուրքերի «միտքը պարբերաբար պատրաստվել էր» հայերին վերաբերվելու որպես «անպատիժ մնացած թշնամիների»: Նահանգապետի բոլոր խոստումները՝ բողոքականներին, հիվանդ և ծեր մարդկանց չարտաքսելու մասին, այդպես էլ մնացին անտեսված: Իր նամակներում միսիոներ Դոդջը զեկուցում էր տարբեր գյուղերում գտնվող աքսորյալներին, հիմնականում՝ բողոքականներին, օգնություն ցուցաբերելու մասին: Նա նշում էր նաև, որ որոշ մարդիկ օգնություն էին ստանում նաև ԱՄՆ-ում բնակվող իրենց ազգականներից: Միսիոներներն օգնում էին նաև կաթոլիկներին, թեև զարմանում էին, որ վերջիններս որևէ օգնություն կաթոլիկ աշխարհի աղբյուրներից չէին ստանում կամ չէին պատմում այդ մասին բողոքական միսիոներներին:⁵¹⁴

Արևմտահայությանը տեղահանելուն և կոտորելուն զուգահեռ՝

⁵¹³ Տե՛ս նույն տեղը, էջ 392 (NA/RG 59/756.48/205):

⁵¹⁴ Տե՛ս նույն տեղը, էջ 446-448 (NA/RG 59/867.4016/267):

երիտքուրբական իշխանությունն իր քաղաքականությունը նպատակաուղեց հայ եկեղեցին քայքայելու ուղղությամբ, որն Օսմանյան կայսրությունում հաստատված կրոնական համայնքը (միլեթը) ներկայացնող հիմնական հաստատությունն էր: 1916 թ. հունվարին Հայոց պատրիարքարանը տեղեկացվեց 1863 թ. հայ ազգային սահմանադրությունը չեղյալ հայտարարելու որոշման մասին: Արձագանքելով պատրիարքարանի բանկային հաշիվների՝ կառավարության կողմից առգրավվելու մասին տարածվող նորություններին՝ պատրիարքարանը որոշում կայացրեց փոխանցելու եղած գումարը մասնավոր հաշվի վրա, ինչպես նաև ԱՄՆ-ի դեսպանությանն ի պահ տալու փաստաթղթերն ու Հովհաննես Այվազովսկու երկու նկարները:⁵¹⁵

Հունվարի 24-ին Լոնդոնում Միացյալ Նահանգների դեսպան Փեյջը գրում է Պետքարտուղարությանը, որ լորդ Ջեյմս Բրայսը, հիմնվելով Հայ առաքելական եկեղեցու կաթողիկոսի տեղեկատվության վրա, հարցնում է դեսպանից, թե արդյոք Պետքարտուղարությունը կարո՞ղ է ավելին անել հայերին օգնելու կամ «թուրքական դաժանությունները դադարեցնելու հարցերում»: Հունվարի 27-ին Պետական քարտուղարությունը պատասխանում է Փեյջին, որ «Պետքարտուղարությունը հնարավոր ամեն բան արել է հայերի համար և շարունակում է գործադրել իր ջանքերը»:⁵¹⁶

Փետրվարի 4-ին դեսպանությանն ուղղված գաղտնի հեռագրում պետքարտուղար Լանսինգը գրում էր, որ «Միացյալ Նահանգներ հասնող նոր հաղորդագրությունները մշտապես նոր վկայություններ են տրամադրում Թուրքիայում հայերի նկատմամբ կիրառվող հալածանքների սուսկալի բնույթի մասին...»: Պետքարտուղարը նշում էր, որ հալածանքները դեռևս շարունակվում էին ողջ մնացածների նկատմամբ, ինչն առաջացնում էր ԱՄՆ-ի ժողովրդի «վրդովմունքը»: Նույնիսկ կաթոլիկ և բողոքական հայերին տեղահանության ցանկերում չընդգրկելու, ինչպես նաև Միացյալ Նահանգներ գաղթել ցանկացող հայերին թույլտվություն տալու մասին օսմանյան կառավարության խոստումները լիարժեք կերպով կամ ընդհանրապես չէին կատարվում: Պետքարտուղարը հանձնարարում է դեսպան Մորգենթաուին մեկ անգամ ևս հայտնել թուրքական կառավարությանը ԱՄՆ-ի ժո-

⁵¹⁵ Տե՛ս *Der Yeghiya Zaven*, նշվ. աշխ., էջ 116-117:

⁵¹⁶ Տե՛ս NA/RG 59/867.4016/248:

ղովրդի վերաբերմունքը կատարվող դեպքերի նկատմամբ:⁵¹⁷

Փետրվարի 8-ին հյուպատոս Ջեքսոնը զեկուցում էր դեսպան Մորգենթաուին, որ, վստահելի աղբյուրների համաձայն, Հալեպից Գամասկոս և մինչև Գեյր-էզ-Չոբ ընկած շրջաններում շուրջ 500 հազար հայ փախստականներ էին կուտակվել: Այս մարդկանց օգնելու համար հարկավոր էր օրական ծախսել 10 հազար թուրքական լիրա: Ըստ Ջեքսոնի՝ բողոքական կազմակերպություններն այստեղ ունեին բոլոր հնարավորությունները՝ օգնությունը կազմակերպելու համար:⁵¹⁸

Իր գրությանը կից Ջեքսոնը ներկայացնում էր շրջանում գտնվող հայ աքաղաղների թվային տվյալները փետրվարի 3-ի դրությամբ. Գամասկոս և Մասան՝ 100 հազարից ավելի, Համա և շրջակա գյուղեր՝ 12 հազար, Հոմս՝ 20 հազար, Հալեպ՝ 7 հազար, Մասրա՝ 4 հազար, Բաբ՝ 8 հազար, Մամբաջ՝ 5 հազար, Ռաս-ուլ-Այն՝ 20 հազար, Ռաքքա՝ 10 հազար, Գեյր-էզ-Չոբ՝ ավելի քան 300 հազար: Ընդամենը՝ 486 հազար:⁵¹⁹

Փետրվարի 12-ին պետքարտուղար Լանսինգը հանձնարարում է դեսպան Մորգենթաուին տեղեկացնել թուրքական կառավարությանը, որ Պետքարտուղարությունը շարունակում է «անկախ, սակայն վստահելի աղբյուրներից» մանրամասն տեղեկատվություն ստանալ հայերի «համակարգված տեղահանությունների և տանջանքների» մասին: Միացյալ Նահանգների կառավարությունը կրկին կոչ է անում թուրքական կառավարությանը, ելնելով «մարդկայնության և արդարության զգացմունքներից», «անհապաղ քայլեր ձեռնարկելու» հայերի իրավիճակը բարելավելու ուղղությամբ: Լանսինգը նշում էր, որ Պետքարտուղարությունը քննարկում է, թե ինչքանով է արդարացված ժողովրդից այս տեղեկատվությունը թաքցնելը: Ըստ պետքարտուղարի՝ Պետքարտուղարության որոշումն այս հարցում կախված էր լինելու թուրքական կառավարության գործողություններից:⁵²⁰

1916 թ. փետրվարին դեսպան Մորգենթաուն մեկնեց Կոստանդնու-

⁵¹⁷ Տե՛ս US Department of State. *Papers relating to the Foreign Relations of the United States. 1916 Supplement. The World War*, Washington D. C., Government Printing Office, 1929, էջ 846-847:

⁵¹⁸ Տե՛ս *Unites States Official Records on the Armenian Genocide, 1915-1917* /Compiled with an introduction by Ara Sarafian/, էջ 489 (NA/RG59/867.48/271):

⁵¹⁹ Տե՛ս նույն տեղը, էջ 490 (NA/RG 59/867.48/271):

⁵²⁰ Տե՛ս US Department of State. *Papers relating to the Foreign Relations of the United States. 1916 Supplement. The World War*, էջ 847:

պոլսից: Նա որոշել էր այլևս Թուրքիա չվերադառնալ և զբաղվել Վիստոնի նախընտրական քարոզարշավով: Ճանապարհին գնացքում նա հանդիպել էր գերմանացի ծովակալին, որը բացատրում էր «հայերի արտաքսումը» ռազմական անհրաժեշտությամբ՝ նույնիսկ չփորձելով արդարացնել կանանց և երեխաների կոտորածները:⁵²¹

Օսմանյան կայսրությունում ստեղծված իրավիճակն ու «հայերի ապագա կարգավիճակի» վերաբերյալ երիտթուրքերի, մասնավորապես՝ Թալեաթի «ամբողջական բացահայտումները» վերջնականապես «սարսափեցրել էին» Մորգենթաուին և կարևոր ազդեցություն ունեցել նրա որոշման վրա՝ մեկնելու Կոստանդնուպոլսից և հրաժարվելու դեսպանի պաշտոնից: Չնայած «ամերիկյան ռասայական և կրոնական հավասարության մասին իր իդեալիստական տեսակետներին»՝ Մորգենթաուն սկսել էր իրեն թույլ տալ «ռասիստական արտահայտություններ»:⁵²² Նրա կարծիքով՝ «քաղաքական ազատությունների գաղափարները հասկանալու անկարողության առումով թուրքերը նման էին երեխաների», որոնք երբեք չէին աճում և այդպիսով հետ էին մնացել իրենց զարգացման մեջ: Եվրոպական քաղաքակրթության հետ 500 տարվա շփումից հետո էլ թուրքը մնացել էր նույն մակարդակի վրա, որն ունեցել էր միջին դարերում՝ Ասիայի տափաստաններից հայտնվելու ժամանակ:⁵²³

Ըստ Սամանթա Փաուերի՝ Հենրի Մորգենթաուն այլևս չէր կարող հաշտվել իր անգործության հետ:⁵²⁴ «Հայերի կործանումը կանգնեցնելու իմ ջանքերը ձախողվեցին,- գրում էր նա,- Թուրքիան դարձել է ինձ համար սարսափելի մի տեղ, և ես հասել եմ իմ հնարավորությունների սպառման եզրին»:⁵²⁵

⁵²¹ Տե՛ս Library of Congress, Division of Manuscripts, Papers of Henry Morgenthau, Sr., Diary, 1916, February 1; **Payaslian Simon**, նշվ. աշխ., էջ 104:

⁵²² Տե՛ս **Walther Karine V.**, *Sacred Interests. The United States and the Islamic World, 1821-1921*, Chapel Hill, The University of North Carolina Press, 2015, էջ 288-289:

⁵²³ Տե՛ս **Morgenthau Henry**, *Ambassador Morgenthau's Story*, էջ 196:

⁵²⁴ Տե՛ս **Power Samantha**, նշվ. աշխ., էջ 13:

⁵²⁵ Տե՛ս **Morgenthau Henry**, *Ambassador Morgenthau's Story*, Reading, England, Taderon Press, 2000, էջ 385:

ԳԼՈՒԽ 5

Ամերիկյան արձագանքը և նպաստամատույց աշխատանքի կազմակերպումը ցեղասպանությունից տուժած արևմտահայությանը

Ամերիկյան հասարակայնության արձագանքն Առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում տեղի ունեցող հակաժողովրդական և ողբերգական իրադարձությունների նկատմամբ արտահայտվում էր մասնաշաղկապ տեսանող բազմաթիվ քննադատական ու մեղադրական բնույթի հրապարակումներով և տուժած մարդկանց օգնություն ցուցաբերելու նպատակով դրամահավաքի կազմակերպմամբ: Հայերի և սիրիացիների տեղահանության և սպանդի հանդեպ ամերիկյան արձագանքը հիմնված էր հասարակական բարեգործական օգնության ավանդույթի վրա, որն իրականացվում էր նպաստամատույց կազմակերպությունների միջոցով: Այսպես, երբ պատերազմի սկսվելուն պես երիտթուրքական իշխանություններն արաբներից առգրավեցին եղած սննդամթերքն ու անասուններին, Կոլումբիայի համալսարանի ժուռնալիստիկայի դպրոցի ղեկավար Թալկոտ Ուիլյամսն ու Պրեսբիտերական խորհրդի՝ Սիրիայում քարտուղար Սթենլի Ուայթը 1915 թ. սկզբին հիմնեցին Սիրիական-պաղեստինյան օգնության հիմնադրամը, որն արդեն հուլիսին կարողացավ 155 հազար դոլար ուղարկել Բեյրութում հավատամագրված ԱՄՆ-ի հյուպատոսին՝ արաբներին օգնություն ցուցաբերելու նպատակով: Միաժամանակ Պրեսբիտերական խորհրդի գլխավոր քարտուղար Ռոբերտ Սպիլլը ծրագիր նախաձեռնեց Ուրմիայի շրջանի պրեսբիտերական առաքելության՝ թուրք-ռուսական պատերազմական գործողություններից տուժած հետևողների համար: Նա հիմնեց Պարսկաստանի պատերազմի օգնության հիմնադրամը, դիմեց Ամերիկյան կարմիր խաչին և «Ռոքֆելլեր» հիմնադրամին՝ գումար հավաքելու նպատակով:⁵²⁶

Միացյալ Նահանգներում ցեղասպանությունից տուժած արևմտահայերին օգնություն ցուցաբերելու աշխատանքները հիմնականում սկսվեցին ձևավորվել դեսպան Մորգենթաուից ստացված առաջարկ-

⁵²⁶ Տե՛ս **Grabill Joseph L.**, նշվ. աշխ., էջ 69:

ների հիման վրա: Ամերիկյան խորհրդի քարտուղար Ջեյմս Բարտոնն այդ գործունեության հիմնական կազմակերպիչներից էր: 1915 թ. օգոստոսի վերջին նա հանդիպում կազմակերպեց Քլիվլենդ Դոդջի գրասենյակում՝ հրավիրելով Մերձավոր Արևելքում շահեր ունեցող Պրեսբիտերական խորհրդի և քոլեջների խորհուրդների անդամներին՝ քննարկելու Թուրքիայում ստեղծված իրավիճակը: Հանդիպման ընթացքում Պետքարտուղարությունից ստացվեց Մորգենթաուի հեռագիրը, որում ասվում էր, որ տեղահանության ու կոտորածների հետևանքով տուժած հայերին հարկավոր էր շուտափույթ կերպով օգնություն կազմակերպել:⁵²⁷

Ի պատասխան դեսպանի հեռագրին՝ Քլիվլենդ Դոդջին էր դիմել նաև Պետքարտուղարությունը՝ խնդրելով նրան ընդունել Մորգենթաուի՝ հայերի համար օգնության կոմիտե ստեղծելու առաջարկը: Վերջինս նաև Թուրքիայում կրթության ոլորտում աշխատող երկու միսիոներների հայր էր: Միաժամանակ Փիթը Կոստանդնուպոլսից դիմել էր Ջեյմս Բարտոնին, որպեսզի վերջինս խնդրանք ներկայացնի «Ռոքֆելլեր» հիմնադրամին՝ հայերին օգնելու նպատակով միջոցներ տրամադրելու համար:

Մեպտեմբերի 16-ին Դոդջը մի խումբ աջակիցներ հավաքեց Նյու Յորքի իր գրասենյակում: Նրանք սատարեցին Հայկական օգնության կոմիտեի (Armenian Relief Committee) հիմնադրումը⁵²⁸ Նյու Յորքում, որը պետք է զբաղվեր դրամահավաքի կազմակերպմամբ: Առաջին քայլը 100 հազար դոլար գումարի հավաքումն էր, որը պետք է ուղարկվեր դեսպան Մորգենթաուին: Հանդիպման ժամանակ հավաքվեց գումարի կեսը, իսկ Դոդջն իր վրա վերցրեց գրասենյակի և աշխատողների ծախսերը:

Դոդջն առաջարկեց Ջեյմս Բարտոնին նախագահել կոմիտեն: Կազմակերպության քարտուղար ընտրվեց Մեմուել Դատտոնը, որը Կոստանդնուպոլսի կանանց քոլեջի խորհրդի գանձապահն էր, ամերիկյան խաղաղության շարժման ղեկավարներից և Կոլումբիայի հա-

⁵²⁷ St'eu Houghton Library, Harvard University. Papers of James L. Barton, Papers and Correspondence, American Board of Commissioners for Foreign Missions, Manuscript Collection, էջ 250 (box 12, 12:2):

⁵²⁸ Տե՛ս Սկզբնական շրջանում այն «Phelps Dodge Corporation» ընկերության նախագահ Քլիվլենդ Դոդջի անունով կոչվեց «Dodge Relief Committee» (**Daniel Robert L., America Philanthropy in the Near East, 1820-1960**, Athens, Ohio State University, 1970, էջ 150):

մալսարանի «Թիչերգ» քոլեջի նախկին գործադիր տնօրենը: Դոդջն անճնապես խոստացել էր տրամադրել 60 հազար դոլար և միաժամանակ առաջարկել Բարտոնին ու կոմիտեի զանձապահ ընտրված արդյունաբերող և բարերար Չարլզ Քրեյնին այցելել Պետքարտուղարություն՝ հավելյալ տեղեկատվություն ստանալու նպատակով:

Սեպտեմբերի 21-ին Բարտոնն ու Քրեյնն այցելեցին Պետքարտուղարություն և թույլտվություն ստացան ծանոթանալու Օսմանյան կայսրությունից ստացվող նյութերին: Նրանք հանդիպում ունեցան պետքարտուղարի տեղակալ Էլվի Էյդիի հետ, որը պատասխանատու էր նման տեղեկատվություն տրամադրելու համար: Վերադառնալով Նյու Յորք՝ Բարտոնն անմիջապես միջոցներ ձեռնարկեց հասարակայնությանը մամուլի միջոցով տեղեկություններ տրամադրելու և դրամահավաք կազմակերպելու ուղղությամբ: Դոդջի օգնության կոմիտեն խոստացավ փոխանցել ԱՄՆ-ի դեսպանին 50-100 հազար դոլար: Կոմիտեն միաժամանակ խորհուրդ էր տալիս Մորգենթաունին հրաժարվելու հայերին Միացյալ Նահանգներ տեղափոխելու գաղափարից, քանի որ երկրում «անհատթահարելի» ընդդիմություն գոյություն ուներ այդ նախաձեռնության նկատմամբ:⁵²⁹

Այսպիսով, 1915 թ. սեպտեմբերին Նյու Յորքում հիմնադրվեց Հայկական օգնության կոմիտեն՝ «տառապյալ հայերի» համար դրամահավաք կազմակերպելու նպատակով: Մեկ ամսվա ընթացքում այն հավաքեց 100 հազար դոլար, իսկ մինչև պատերազմի ավարտն օգնության նպատակներով Մերձավոր Արևելքում ծախսեց շուրջ 11 մլն դոլար:⁵³⁰ Դեսպան Մորգենթաունն ողջունեց կազմակերպության հիմնադրումը, սակայն միաժամանակ նշեց, որ թեև 100 հազար դոլարը շատ լավ սկիզբ է, սակայն բավարար չէ, քանի որ, օրինակ, Հալեպի հյուպատոսի տեղեկությունների համաձայն, շրջանում կուտակվել են 150 հազար փախստականներ, որոնք ամսական 150 հազար դոլարի օգնության կարիք ունեն:⁵³¹

Կազմակերպության հաջողության կարևոր պատճառներից մեկն այն էր, որ Քլիվլենդ Դոդջն ու Չարլզ Քրեյնը ԱՄՆ-ի նախագահ Վիլսոնի մոտ ընկերներն էին: Կազմակերպությունը շատ արագ դարձավ

⁵²⁹ Տե՛ս **Grabill Joseph L.**, նշվ. աշխ., էջ 70-71; **Payasian Simon**, նշվ. աշխ., էջ 89-90:

⁵³⁰ Տե՛ս **Trask Roger R.**, նշվ. աշխ., էջ 20-21:

⁵³¹ Տե՛ս **Grabill Joseph L.**, նշվ. աշխ., էջ 70-71:

մարդկանց և խմբերի համացանց՝ տառապյալ հայերին ու սիրիացիներին օգնություն ցուցաբերելու նպատակով: Կազմակերպության «*New Near East*» պարբերականը տառապյալ հայերի վիճակի մասին հարուստ տեղեկատվություն էր հրատարակում և լուսաբանում օգնության կազմակերպման մանրամասները: Տեղում օգնության կազմակերպումն իրականացնում էին ամերիկյան միսիոներները, որոնք ունեին Թուրքիայում աշխատանքի շուրջ մեկ դարի փորձ: Ըստ Բարտոնի՝ կազմակերպության հիմնական գործընկերներն էին ամերիկյան եկեղեցիներն ու տարբեր հարանվանություններին պատկանող կոմիտեները:⁵³² Ամենակառուցող կրոնական կազմակերպություններից էին Միջազգային քրիստոնյա ձգտումների ընկերակցությունը (International Christian Endeavor Society), Էպվորթ լիգան (Epworth League) և Եպիսկոպոսական երիտասարդական շարժումը (Episcopal Young People's Movement):⁵³³

Դրանք հավաքվում էր մեծ միջոցառումների, այդ թվում՝ ամերիկյան ֆուտբոլի խաղերի ժամանակ: Կիրակնօրյա դպրոցների երեխաներից դրան էին հավաքում բիրիակյան վալրերում ապրող երեխաների համար. առաջին տարվա ընթացքում հավաքվել էր մեկ միլիոն դոլարի չափ գումար:⁵³⁴ Ընդհանուր առմամբ, ներառյալ հետպատերազմական տարիները, կազմակերպությունը փախստականներին օգնություն տրամադրելու համար հավաքել էր 116 միլիոն դոլար՝ չհաշված նյութական այլ կարգի օգնությունը: Կազմակերպության հիմնական աջակիցն ու դաշնակիցը շուրջ 300 կրոնական պարբերականներն էին:⁵³⁵ Դեսպան Մորգենթաուն և միսիոներներ Գեյթսն ու Փիթն աշխատում էին որպես «հայամետ եռյակ»: Միացյալ Նահանգներում իրականացված աշխատանքի շնորհիվ ֆինանսական միջոցները կարող էին փոխանցվել Թուրքիա, սակայն Բարձր Դուռը թույլ չէր տալիս բաշխել այդ գումարները: Թե՛ Էնվերը, թե՛ Թալեթն այն համոզմանն էին, որ դրսից ստացված օգնությունը կարող էր խթան հանդիսանալ ապստամբության համար: Երիտթուրքերը «զայրույթով

⁵³² Տե՛ս **Barton James L.**, *Story of Near East Relief, 1915-1930*, New York, Macmillan, 1930, էջ 385:

⁵³³ Տե՛ս նույն տեղը, էջ 386-387:

⁵³⁴ Տե՛ս նույն տեղը, էջ 386:

⁵³⁵ Տե՛ս **Heath Gordon L.**, նշվ. աշխ., էջ 189-191:

արհամարհում էին ամերիկացիների փորձերը՝ դադարեցնելու մահվան երթերը, և բողոքական հայերին [աքսորից] ազատելու խնդրանքները»: Թալեսթն ասում էր, որ կառավարությունն այլևս թույլ չի տա փոքրամասնությանը որևէ բան վերցնել «օտարերկրյա ձեռքերից»: Քանի որ «հայերի սպանությունները չէին դադարում», իսկ օգնության ծրագրերը կարող էին երկարատև բնույթ ստանալ, Սիրիական-պաղեստինյան օգնության հիմնադրամը, Պարսկական պատերազմի օգնության հիմնադրամն ու Դողջի օգնության կոմիտեն որոշեցին միավորվել: Նոր գործակալությունը՝ Հայկական և սիրիական օգնության ամերիկյան կոմիտեն (American Committee for Armenian and Syrian Relief, ACASR), հիմնադրվեց 1915 թ. նոյեմբերի 20-ին: Հետագայում՝ 1918 և 1919 թթ., կազմակերպության անվանումը փոխվեց երկու անգամ. նախ կոչվեց «Մերձավոր Արևելքում օգնության ամերիկյան կոմիտե» (American Committee for Relief in the Near East, ACRNE), և այնուհետև՝ «Մերձավոր Արևելքի օգնություն» (Near East Relief): 1919 թ. ԱՄՆ-ի Կոնգրեսի որոշմամբ «Մերձավոր Արևելքի օգնություն» կազմակերպությանը շնորհվեց կանոնադրություն՝ դրանով իսկ քաղաքական նշանակություն տալով այդ կառույցին:

Հայկական և սիրիական օգնության ամերիկյան կոմիտեի խորհրդի կազմում ընդգրկված էին 40 հոգի, որոնք ներկայացնում էին գրեթե բոլոր ամերիկյան բողոքական կազմակերպությունները, ինչպես, օրինակ, Սթյուարտ Դողջը (Քլիվլենդ Դողջի հորեղբայրն ու սիրիական բողոքական քոլեջի նախագահը), Պրեսբիտերական խորհրդի քարտուղար Սթենլի Ուայթը, Քլիվլենդ Դողջի գործընկեր ու սիրիական բողոքական քոլեջի խորհրդի անդամ Արթուր Ջեյմսը, Ջոն Մոթը, Թալկոտ Ուիլյամսը և ուրիշներ: Խորհրդի անդամներից միայն չորսն էին հրեա կամ կաթոլիկ: Հրեա անդամների թվում էին նաև Օսմանյան կայսրությունում նախկին դեսպան Օսկար Շարաուսը և ռաբբի Մտեֆեն Վայզը: Միսիոներների շրջանում մեծ հեղինակություն վայելող Բարտոնն ընտրվեց նախագահ: Գանձապահներն էին Դողջն ու Քրեյնը:⁵³⁶

Բարտոնը ծնվել է Վերմոնտում և ավարտել Միդդլբերիի քոլեջը: Սովորել է Հարթֆորդի աստվածաբանական ճեմարանում և կար-

⁵³⁶ Տե՛ս **Grabill Joseph L.**, նշվ. աշխ., էջ 72; **Walther Karine V.**, նշվ. աշխ., էջ 289-290:

գաղղվել միաբանության քահանա 1885 թ.: Նույն թվականին որպես միսիոներ մեկնել է Խարբերդ, հետագայում՝ ընտրվել «Եփրատ» քուլեջի նախագահ, որից հետո Ամերիկյան խորհրդի արտասահմանյան քարտուղարն էր Կոստանդնուպոլսում:

Դոդջերի ընտանիքի երեք սերունդներ աշխատում էին միսիոներական «գաշտում»: Պրինսթոնի համալսարանում սովորող Քլիվլենդ Դոդջը հանդիպել էր Վուդրո Վիլսոնին 1875 թ., որից հետո նրանք դարձել էին մոտ բարեկամներ: Դոդջն ընտրել էր արդյունաբերող գործարարի ճանապարհը, դարձել պղնձի արդյունաբերող և բարերար: Այսպիսով, Բարտոնն ու Դոդջը դարձան Հայկական և սիրիական օգնության ամերիկյան կոմիտեի «սիրտն ու հոգին»:⁵³⁷

Ցեղասպանությունից տուժած հայերին օգնություն ցուցաբերելու նպատակով Ամերիկյան խորհրդին միացան առաջատար ամերիկացի առաջատար, ինչպես նաև կրոնական և բարեգործական կազմակերպություններ: Եթե սկզբնական շրջանում կազմակերպիչները հույս ունեին հավաքելու 100 հազար դոլար, ապա 1915 թ. հավաքվեց 177 հազար, 1916 թ.՝ 2 միլիոն 404 հազար դոլար, 1917 թ. այն կրկնապատկվեց, 1918 թ. հասավ 7, իսկ 1919 թ.՝ 19 միլիոն 500 հազար դոլարի: Այս հաջողությունը կապում էին կազմակերպության քարոզչության պատասխանատու Չարլզ Վիկրիի գործունեության հետ: Այդ ժամանակվա համար գումարը բավականին մեծ էր՝ նկատի առնելով այն հանգամանքը, որ ամերիկացիները նաև օգնության միջոցներ էին հավաքում այլ կազմակերպությունների համար՝ Դաշնակիցների օգնության կամ Ազատության բոնդերի (Billion Dollar Liberty Loans), Բելգիական և ֆրանսիական օգնության, Կարմիր խաչի, Միացյալ պատերազմական աշխատանքի (United War Work) և այլն: Ամենամեծ հովանավորներից էին «Ռոքֆելլեր» հիմնադրամն ու Ամերիկյան կարմիր խաչը: Մինչև 1918 թ. վերջինս հատկացրել էր 1 միլիոն 800 հազար դոլար, իսկ ընդհանուր գումարը կազմել էր 6 միլիոն դոլար: Ամերիկահայ համայնքը նույնպես իր նպաստն էր բերել հայրենակիցների համար միջոցներ հավաքելու գործին: Օրինակ՝ Հայկական ընդհանուր բարեգործական միությունն այդ նպատակով հավաքել էր մեկուկես միլիոն դոլար:

⁵³⁷ Տե՛ս Peterson Merrill D., նշվ. աշխ., էջ 51-52:

Տարիների ընթացքում ԱՄՆ-ի կառավարությունը 25 միլիոն դոլար էր նվիրաբերել «Մերձավոր Արևելքի օգնություն» կազմակերպությանը: ԱՄՆ-ի նախագահներ Հերբերտ Հուվերը, Ֆրանկլին Ռուզվելտը և Ռիչյան Թաֆտը ծառայել էին որպես կազմակերպության հոգաբարձուներ: 15 տարիների ընթացքում կազմակերպությունը ծախսել էր 116 միլիոն դոլար՝ շուրջ երկու միլիոն փախստականներին օգնություն ցուցաբերելու, 132 հազար որբ երեխա խնամելու, 200 բուժքույր պատրաստելու, շինարարական, գյուղատնտեսական և ոռոգման աշխատանքներ կատարելու, աշխատատեղեր ստեղծելու նպատակով: Նույն ժամանակահատվածում կազմակերպությունը ծախսել էր 28 միլիոն դոլար Կովկասում, 30 միլիոն՝ Թուրքիայում, 12 միլիոնից ավելի՝ Սիրիայում և Պաղեստինում, շուրջ 8 միլիոն՝ Պարսկաստանում և Միջագետքում, շուրջ 6 միլիոն՝ Հունաստանում և 667 հազար դոլար՝ այլ երկրներում:⁵³⁸

Տեղասպանության հետևանքով տուժած հայերին օգնություն ցուցաբերելու համար նվիրատվություններ անող բազմաթիվ բարեգործական կազմակերպությունների շարքում առանձնանում էր «Ռոքֆելլեր» հիմնադրամը, որն Ամերիկյան օգնության կոմիտեին իր կատարած 30 հազար դոլարի նվիրատվությամբ առաջատար դիրքերում էր գտնվում: Առաջին անգամ հայկական կոտորածների գոհերի համար Ջոն Գ. Ռոքֆելլերն օգնության գումար էր նվիրաբերել դեռևս 1896 թ. մարտին: Նա փոխանցել էր այն բրիտանացի հայտնի բարերար և կանանց իրավունքների պաշտպան Իզաբելլա Մոմերստեթին, որն այդ ժամանակ օգնում էր հայ փախստականներին Մարսելում: Պատերազմի ընթացքում «Ռոքֆելլեր» հիմնադրամը մեծապես ակտիվացրեց իր գործունեությունը՝ հայերին փրկելու նպատակով: Հիմնադրամը հիմնվել էր 1913 թ.՝ իր առջև դնելով «ողջ աշխարհում մարդկության բարեկեցությանը նպաստելու» խնդիր: Այդ ժամանակ հիմնադրամը ղեկավարում էր Ջոն Գ. Ռոքֆելլեր կրտսերը, որին հետաքրքրում էին միջկրոնական շարժումն ու աշխարհի խաղաղությունը:

Ուսումնասիրելով Թուրքիայում տիրող իրավիճակը 1915-1916 թթ.՝ հիմնադրամի աշխատակիցներ Էլիոտ Ուոդվորթն ու Ջերեմիա

⁵³⁸ Տե՛ս **Moravian Suzanne E.**, նշվ. աշխ., էջ 194-196:

Սմիթը կրտսերը նշում էին, որ երիտթուրքական կառավարությունը թշնամանքով էր վերաբերվում այն օտարերկրացիներին, որոնք փորձում էին ուսումնասիրել երկրի քաղաքացիների վիճակը. ստեղծել էր գրաքննության խիստ համակարգ, որի պատճառով հաղորդակցությունը դարձել էր գրեթե անհնար: Ուոդսվորթն ու Սմիթը հանդիպումներ էին ունեցել մի քանի թուրք պաշտոնյաների հետ, որոնց ընթացքում վերջիններս փորձում էին համոզել օգնության գումարը տրամադրել ոչ թե «մահացող քրիստոնյաներին», այլ կառավարությանը: Ուոդսվորթի և Սմիթի՝ հայերի կործանման մասին զեկույցները լրացնում և հաստատում էին ԱՄՆ-ի դիվանագետների և հյուպատոսների, միսիոներների հաղորդագրությունները, ինչպես նաև ականատեսների վկայությունները: Նրանք նշում էին, որ հայերը ենթարկվել էին «կտտանքների», «ջարդի քաղաքականության», «համատարած արտաքսման», ինչպես նաև հարկադիր դավանափոխության: Հայկական օգնության՝ առաջին տարվա դրամահավաքի ընթացքում «Ռոքֆելլեր» հիմնադամը տրամադրել էր 290 հազար, իսկ մինչև 1917 թ. վերջը՝ 610 հազար դոլար: Ջոն Գ. Ռոքֆելլերի անձնական նվիրատվության գումարը կազմել էր 10 հազար դոլար:⁵³⁹

Հայերին օգնելու նպատակով նվիրատվություններ էին հավաքում կոնգրեզացիոնալիստական, բապտիստական և կաթոլիկ եկեղեցիները: Շատ նշանավոր ամերիկացիներ, որոնք հայկական ծագում չուներին, հիմնեցին Հայկական դաժանությունների կոմիտեն (Committee of Armenian Atrocities), որը կարողացավ հավաքել 100 հազար դոլար և կազմակերպել «թուրքական հանցանքները» դատապարտող բարձր մակարդակի հանրահավաքներ Նյու Յորքում, որոնց ներկա գտնվեցին հազարից ավելի եկեղեցիների և կրոնական կազմակերպությունների ներկայացուցիչներ:⁵⁴⁰

1916 թ. մարտին Ջեյմս Բարտոնը հաղորդում էր Միդգենթաուին Ամերիկյան օգնության կոմիտեի՝ դրամահավաքի հետ կապված գործունեությունն արագացնելու մասին ցանկությունը՝ «Ռոքֆելլեր» հիմնադրամի քարտուղար Ջերոմ Գրինի առաջարկով: 1902 թ.-ից սկսած՝ վերջինս սերտ կապեր էր պահպանում ամերիկյան միսիոներների,

⁵³⁹ Տե՛ս **Balikian Peter**, *From Ezra Pound to Theodore Roosevelt: American intellectual and cultural responses to the Armenian Genocide*, էջ 249-251:

⁵⁴⁰ Տե՛ս **Power Samantha**, նշվ. աշխ., էջ 11:

մասնավորապես՝ Ամերիկյան խորհրդի հետ: Բարտոնն առաջարկում էր հանդիպել Մորգենթաուի տանը՝ քննարկելու ողջ մնացած հայերի հայրենադարձությունը հնարավորության դեպքում կազմակերպելու գործողությունների ծրագիրը: Մորգենթաուն հռեռես էր այդ պահին մնան ծրագրի այն է՝ Օսմանյան կայսրության տարբեր անկյուններում, Պարսկաստանում, Կովկասում, Սիրիայում և Պաղեստինում հայտնված և ողջ մնացած հայերին իրենց տները վերադարձնելու հավակնոտ ծրագրի իրականացման նկատմամբ՝ նկատի առնելով հսկայական միջոցների և երիտթուրքական իշխանությունների թույլտվության անհրաժեշտությունը: Ըստ Բարտոնի՝ ամերիկյան օգնության կարիքն ունեին ոչ միայն հայերը, այլև սիրիացիները, ասորիները, նեստորականները, հույները, ինչպես նաև քրդերը, թուրքերը, թաթարները, արաբներն ու պարսիկները:⁵⁴¹

1916 թ. հոկտեմբերին ԱՄՆ-ի նախագահ Վուդրո Վիլսոնը հայերի տառապանքների հիշատակի օր հայտարարեց: Այդ հայտարարության նախաձեռնողն էր Չարլզ Վիկրին, որը համոզեց միսիոներների առաջնորդներ Ջեյմս Բարտոնին և Սեմուել Դատտոնին մեկնել Վաշինգտոն և ներկայացնել Սպիտակ տանը հայտարարության նախագիծը:⁵⁴²

1896 թ.-ից մինչև Առաջին համաշխարհային պատերազմը Հայկական հարցը չէր քննարկվել Կոնգրեսում: Միացյալ Նահանգները խուսափում էր պատերազմի մեջ ներքաշվելուց, սակայն ամերիկյան հասարակական կարծիքն իր կարեկցանքն էր հայտնում պատերազմից տուժած բազմաթիվ փախստականների հանդեպ: 1916 թ. Մասաչուսեթսի հանրապետական սենատոր Հենրի Լոջը համատեղ բանաձևի նախագիծ ներկայացրեց Թուրքիայում հայերի «աղետալի վիճակի» մասին: Այդ բանաձևն ուղղված էր ԱՄՆ-ում հայերի օգնության համար մասնավոր մվիրատվություններ ապահովելուն: Միաժամանակ Լոջը նշում էր, որ հայերին մվիրված բանաձևը չի տարբերվում լեհերին կամ հրեաներին վերաբերող բանաձևերից, և վստահ էր, որ այն կընդունվի առանց քննարկումների: Լոջի բանաձևը սատարեց Միսսուրի նահանգը ներկայացնող սենատոր, դեմոկրատ Ուիլյամ Սթոնը, որը բնութագրում էր այն որպես պատերազմի հետևանքով տուժած

⁵⁴¹ Տե՛ս **Barton James L.**, նշվ. աշխ., էջ 54; **Grabill Joseph L.**, նշվ. աշխ., էջ 75:

⁵⁴² Տե՛ս **Moravian Suzanne E.**, նշվ. աշխ., էջ 206:

մեծ թվով տառապյալ տղամարդկանց, կանանց և երեխաներին օգնություն ցուցաբերելու հարցում ամերիկյան ժողովրդի առատաձեռնության, համակրանքի և ազատականության արտահայտություն:

Մենատն ընդունեց բանաձևն առանց լսումների և քննարկումների, իսկ Ներկայացուցիչների պալատի պարագայում այն սկզբում դարձավ Արտաքին հարաբերությունների կոմիտեի քննարկման առարկա, որը ղեկավարում էր Վիրջինիա նահանգից դեմոկրատ ներկայացուցիչ Հենրի Ֆլուդը: Կոմիտեն հսկայածավալ վկայություններ հավաքեց հասարակական օժանդակությունն ապահովելու նպատակով: Փաստաթղթերի շարքում էին նաև Միացյալ Նահանգների հայերի գլխավոր խորհրդի և Ամերիկայում հայկական եկեղեցու առաջնորդի վկայությունները, որոնք կոչ էին անում անհապաղ օգնություն ցուցաբերելու համատարած արտաքսումների հետևանքով տուժած հայերին, որոնց թիվը կազմում էր 750-800 հազար: Նշվում էր «Ռոքֆելլեր» հիմնադրամի և ամերիկյան տարբեր եկեղեցիների արդյունավետ համագործակցությունն օգնության կազմակերպման գործում: Տեղի ունեցած քննարկումների ընթացքում, Վիսկոնսին նահանգի հանրապետական կուսակցության ներկայացուցիչ Ուիլյամ Ստեֆֆորդի համոզմամբ, բանաձևի ընդունումը բազմաթիվ այլ ազգերի համար նույնպես նման քայլերի դիմելու նման առիթ կստեղծի: Ֆլուդը պատասխանեց, որ նման ծավալի դժբախտություն երբեք տեղի չէր ունեցել, 700-800 հազար հայեր արտաքսվել էին դեպի անապատ և հայտնվել սարսափելի պայմաններում: Ի վերջո, 1916 թ. հուլիսի 10-ին հայկական բանաձևն ընդունվեց:⁵⁴³

Կոնգրեսը դիմել էր նախագահ Վիլսոնին՝ ընտրելու օր, երբ երկրի քաղաքացիները, արտահայտելով իրենց համակրանքը, միջոցներ կտրամադրեն ստեղծված հիմնադրամներին՝ հայերին օգնություն ցուցաբերելու նպատակով: Պատասխանելով այդ նախաձեռնությանը՝ օգոստոսի 31-ին Վիլսոնն ընտրեց երկու օր՝ 1916 թ. հոկտեմբերի 21-ը և 22-ը՝ շաբաթ և կիրակի, երբ, ըստ նախագահի, Միացյալ Նահանգ-

⁵⁴³ St'u House of Representatives, Committee on Foreign Affairs. *Hearings on Relief of Armenians*, 64th Congress, 1st Session, Washington, D. C., Government Printing Office, 1916, էջ 4-6; Congressional Record, 64th Congress, 1st Session, pp. 11235-11236; **Ritchie, Donald A.**, *Congress confronts the Armenian Genocide // In: America and the Armenian Genocide of 1915* /Edited by Jay Winter., Cambridge, Cambridge University Press, 2003, էջ 280-281.

ների ժողովուրդն իր նպաստը կբերի «տուժած սիրիացի և հայ ժողովուրդներին»:⁵⁴⁴

Այս քայլով Վիլսոնը փորձում էր լռեցնել իր քաղաքականությունը քննադատողներին, հատկապես՝ մեքսիկական ճգնաժամի առնչությամբ, և վստահեցնել իր «առաջադեմ աջակիցներին», որ, չնայած իր ռազմական ներգրավվածությանը Մեքսիկայում, չէր հեռացել իր համամարդկային իդեալներից: Վիլսոնը նաև փորձում էր համոզել հասարակայնությանը չեզոքության և ժողովրդին պատերազմից հեռու պահելու իր քաղաքականության անփոփոխության մասին: Նա համոզված էր դեմոկրատական կուսակցության ընդհանուր աջակցության մեջ, սակայն ցանկանում էր ստանալ ղեկավարության, մասնավորապես՝ նախկին պետքարտուղար Բրայանի լիարժեք պաշտպանությունը:⁵⁴⁵ Ըստ Սիմոն Պայասլյանի՝ նոյեմբերին կայանալիք նախագահական ընտրություններից անմիջապես առաջ սիրիական և հայկական օգնության օրեր հայտարարելու փաստը պետք է հաստատեր նախագահ Վիլսոնի՝ համամարդկային արժեքներին հավատարիմ մնալու հանգամանքը:⁵⁴⁶

Բարտոնի և նրա կազմակերպության աշխատանքը սկսվեց Միացյալ Նահանգներում և արտասահմանում աշխատակազմ հավաքագրելու գործից: Պատերազմից հետո աշխատակիցների թիվը կազմում էր 2-3 հազար, որոնցից շատերը, ինչպես նաև բարձրաստիճան պաշտոնյաները աշխատում էին հասարակական հիմունքներով: Ինչպես նշում էր Բարտոնը, կազմակերպությունը քաղաքական չէր: Նա օրինակ էր բերում այն փաստը, որ նույնիսկ 1917 թ. Թուրքիային պատերազմ հայտարարելու հարցում, երբ գոյություն ուներ տարակարծություն, կազմակերպությունն իր դիրքորոշումը հրապարակայնորեն չէր արտահայտել: Իր գործունեության հումանիտար բնույթն ապահովելու նպատակով կազմակերպությունը քաղաքական չեզոքություն էր պահպանում:⁵⁴⁷

⁵⁴⁴ Տե՛ս US Department of State. *Papers Relating to the Foreign Relations of the United States, 1918, Supplement 1, The World War*, Washington, D. C., Government Printing Office, 1933, էջ 892:

⁵⁴⁵ Տե՛ս **Clements Kendrick A.**, *The Presidency of Woodrow Wilson*, Lawrence, KS: University Press of Kansas, 1992, էջ 101:

⁵⁴⁶ Տե՛ս **Payaslian Simon.**, նշվ. աշխ., էջ 114-115:

⁵⁴⁷ Տե՛ս **Barton James L.**, նշվ. աշխ., էջ 55:

Երկրի մամուլը նույնպես համակրում և օժանդակում էր կազմակերպությանը: Ամենից շատ կազմակերպությանն օգնում էր «*Associated Press*» գործակալության գլխավոր տնօրեն Մելվիլ Սթոնն ու «*New York Times*»-ի խմբագիր Ջոն Ֆինլին: Վերջինս որոշ ժամանակ նույնիսկ կազմակերպության հոգաբարձուների խորհրդի անդամ էր: Մեծ օժանդակություն ցուցաբերած մյուս պարբերականներից էր «*Literary Digest*»-ը:⁵⁴⁸

Սկզբնական շրջանում օգնությունը ցուցաբերվում էր Մորգենթաուի միջոցով, սակայն հետագայում, երբ օսմանյան կառավարությունն ակնարկեց, որ թույլ է տալու օգնության տրամադրումը, այն սկսեց կազմակերպվել կազմակերպության Կոստանդնուպոլսի կոմիտեի միջոցով: Կոմիտեի նախագահն էր Քալեբ Գեյթսը, իսկ գանձապահը՝ Ամերիկյան խորհրդի գանձապահ Ուիլյամ Փիթը: Վերջինս 1916 թ. գրում էր, որ 500 հազարից ավելի փախստականներ (հիմնականում՝ հայ կանայք և երեխաներ) օգնություն էին ստանում կոմիտեից:⁵⁴⁹

Ինչպես նշում էր Ջեյմս Բարտոնը, առաջին շրջանում «գրեթե անհնար էր որևէ կերպ օգնել դժբախտ ժողովրդին, քանի որ նրանց հավաքել և դուրս էին բերել ավաններից ու քաղաքներից, կամ նրանք պահակախմբերի ուղեկցությամբ անցնում էին այն բնակավայրերով, որտեղ ապրում էին ամերիկացիները: Քարավանները մեկուսացված էին զինվորների կողմից և շարունակ գտնվում էին շարժման մեջ»:⁵⁵⁰ Սակայն 1916 թ. օգնության կազմակերպմանն ուղղված գործողությունները թափ հավաքեցին, և միջոցներն ուղղվեցին հիմնականում Սիրիա և Կովկաս: Միսիոներների կողմից իրականացվող օգնության աշխատանքը բաժանվում էր չորս հիմնական տեսակների՝ 1. ընդհանուր օգնություն, որը բաշխվում էր բոլոր կարիքավորներին օրական հացի բաժնի տեսքով. 2. հատուկ օգնություն, որը ցուցաբերվում էր «ժամանակավոր» կարիք ունեցողներին՝ տեղահանվող աքսորյալներին կամ վիրավոր հայ զինվորներին. 3. բժշկական աշխատանք, որը հասու էր ամսական հազարավոր հայերի համար. 4. աշխատանք որը

⁵⁴⁸ Տե՛ս **Walther Karine V.**, նշվ. աշխ., էջ 290:

⁵⁴⁹ Տե՛ս **Peterson Merrill D.**, նշվ. աշխ., էջ 52-54:

⁵⁵⁰ Տե՛ս **Barton James L.**, *Story of Near East Relief (1915-1930): An Interpretation*. Astoria, New York, J. C.&A. L. Fawcett, Inc., 1991, էջ 62:

երեխաների հետ:⁵⁵¹

Օգնության կազմակերպությունների հիմնադրումը Միացյալ Նահանգներում որևէ ազդեցություն չգործեց երիտթուրք դեկավարների վրա՝ հայերի դեմ կիրառվող դաժանությունները դադարեցնելու առումով: 1915 թ. վերջին երիտթուրքերը գրեթե ավարտել էին հայերին ոչնչացնելու ծրագիրը, որը նպատակադրվել էին վերջնականապես ավարտել մինչև պատերազմի վերջը: Այդ ծրագրի իրականացմանը նպաստում էին նաև օսմանյան բանակի հաջողությունները Դարդանելում և Միջագետքում: Երիտթուրքերի այդ վստահությունը հանգեցնում էր նրան, որ նրանք փորձում էին խուսափել օգնության կազմակերպումից, մասնավորապես՝ մերժում էին հայերին ուղիղ օգնության տրամադրումը: Էնվեր փաշան հայտարարում էր Մորզենթաուիին, որ օգնությունը պետք է իրականացվի միմիայն կենտրոնական կառավարության միջոցով: Նրա տրամաբանությունն այն էր, որ արտասահմանյան հումանիտար օգնությունը կոզևորի և կուժեղացնի հայերի դիմադրությունը:⁵⁵²

Չնայած նրան, որ երիտթուրքերը սկզբնական շրջանում ընդհանրապես մերժում էին Միացյալ Նահանգների ներգրավվածությունն օգնության ծրագրին, սակայն 1915 թ. վերջին նրանք որոշեցին տրամադրել անհրաժեշտ թույլտվությունը: Ուիլյամ Փիթը տարվա վերջին Միացյալ Նահանգներից ստացավ 100 հազար դոլար՝ օգնության կազմակերպումը սկսելու համար: Վերջինս շաբաթական 500 թուրքական ֆունտ էր փոխանցում Հալեպ, Կոնիա և այլ շրջաններ: Կոնիայի Աստվածաշնչի տան ներկայացուցիչ Ուիլյամ Դոդդը կազմակերպում էր շրջանում դրամի տրամադրումը:⁵⁵³

Դեսպան Մորզենթաուն ժամանեց Նյու Յորքի նավահանգիստ փետրվարի 22-ին և անմիջապես մեկնեց Վաշինգտոն՝ նախագահ Վիլսոնի, պետքարտուղար Լանսինգի և ռազմածովային քարտուղար Ջոզեֆուս Դենիելզի⁵⁵⁴ հետ հանդիպելու համար: Մորզենթաուն ցանկություն էր հայտնել ներգրավվելու նախագահի վերընտրական ընտ-

⁵⁵¹ Տե՛ս **Moravian Suzanne E.**, նշվ. աշխ., էջ 193:

⁵⁵² Տե՛ս **Payaslian Simon**, նշվ. աշխ., էջ 92-93:

⁵⁵³ Տե՛ս նույն տեղը, էջ 93:

⁵⁵⁴ **Ջոզեֆուս Դենիելզ** (1862-1948)՝ ԱՄՆ-ի քաղաքական և պետական գործիչ, դիվանագետ, ռազմածովային քարտուղար (1913-1921), դեսպան Մեքսիկայում (1933-1941):

րարչավում: Ըստ Մորգենթաուի՝ հայերի առումով ստեղծված իրավիճակը քննարկելու ժամանակ Վիլսոնն ասել էր, որ «եթե անհրաժեշտ է, ամերիկացիները հանուն մարդկության կզնան պատերազմի»: Այնուհետև խոսակցության թեման շատ արագ փոխվել էր. նախագահը ցանկացել էր քննարկել դեսպանի իրավահաջորդի թեկնածությունը: Մորգենթաուն առաջարկել էր քննարկել Նյու Յորքում աշխատող ֆինանսական հարցերի փաստաբան Աբրամ Անտերմեյերի կամ իր ընկեր, Նյու Յորքի նահանգի դատավոր Աբրամ Էլկուսի թեկնածությունը:⁵⁵⁵

Թուրքիան Մորգենթաուի համար դարձել էր «սարսափի տեղ», և նա այլևս չէր ցանկանում գործ ունենալ մարդկանց հետ, որոնցից «դեռ շուրջ միլիոն մարդկային էակների արյան հոտ էր գալիս»: Մեկնելուց առաջ Թալեաթի հետ տեղի ունեցած վերջին հանդիպման ժամանակ նա կրկին բարձրացրել էր հայերի հարցը: Թալեաթը պատասխանել էր. «Ի՞նչ կարիք կա խոսելու նրանց մասին: Մենք նրանց խնդիրը լուծել ենք: Ամեն ինչ վերջացել է»: Մորգենթաուն եկել էր այն համոզման, որ հայերի հույսը Միացյալ Նահանգների «բարոյական ուժն» (moral power) էր:⁵⁵⁶ Նույն կարծիքին էր նաև նախագահ Վիլսոնը՝ պետք է սատարել Բարտոնի և Դոդջի կողմից նախաձեռնված օգնության կազմակերպումը:⁵⁵⁷

Հետագայում ո՛չ Վիլսոնը, ո՛չ էլ Մորգենթաուն այլևս չէին քննարկել «հանուն մարդկության» ամերիկացիների՝ պատերազմի գնալու հարցը: Պատասխանելով իր հրաժարականը քննադատողներին՝ Մորգենթաուն ասում էր, որ համոզված է, որ որպես Թուրքիայում ճանաչված մարդ դեռ կարող է մեծապես օգտակար լինել հայերին նախագահի օգնականի պաշտոնում:⁵⁵⁸

Մորգենթաուն ներկայացրել էր իր հրաժարականը, որն ընդունվել էր Վիլսոնի կողմից 1916 թ. մայիսի 23-ին:⁵⁵⁹ Նրա փոխարեն հուլիսի

⁵⁵⁵ Տե՛ս Library of Congress, Division of Manuscripts, Papers of Henry Morgenthau, Sr., Diary, 1916, February 23:

⁵⁵⁶ Տե՛ս **Barton James**, նշվ. աշխ., էջ 385, 391-392, 328:

⁵⁵⁷ Տե՛ս **Peterson Merrill D.**, նշվ. աշխ., էջ 11:

⁵⁵⁸ Տե՛ս *The Papers of Woodrow Wilson*, 69 vols. / Ed. Arthur S. Link, vol. 37, էջ 96-97:

⁵⁵⁹ Գնդապետ Էդվարդ Հաուզը տեղեկացնում էր Մորգենթաուին, որ պետքարտուղարությունում կարծիք էր գերիշխում, որ անհրաժեշտություն չկա անմիջապես նոր դեսպան նշանակելու Օսմանյան կայսրությունում: Մորգենթաուն դեմ էր արտահայտվել

21-ին դեսպան նշանակվեց Աբրամ Էլկուսը:⁵⁶⁰ Մորզենթաուն Միացյալ Նահանգներում հայտնի էր դարձել հայերի տեղահանության և կոտորածների բացահայտման միջոցով, դարձել օգնության կազմակերպման գործի գլխավոր բանախոսը: 1916 թ. ապրիլի 7-ին Դոդջը, Գրինը, Բարտոնը և շատ ուրիշներ հանդիպում էին կազմակերպել Մորզենթաունի գրասենյակում և 50 հազար ԱՄՆ դոլար գումար հավաքել օգնության հիմնադրամի համար: Հայկական և սիրիական օգնության ամերիկյան կոմիտեն հետագայում կազմակերպել էր Մորզենթաունի այցելությունը ԱՄՆ-ի տարբեր քաղաքներ: 1916 թ. մայիսի 4-ին Մորզենթաուն տեղեկացնում էր Վիլսոնին, որ մայիս ամսվա ընթացքում պատրաստվում է այցելելու մի շարք նահանգներ՝ բավարարելու Հայկական օգնության կոմիտեի և որոշ հրեական կազմակերպությունների խնդրանքը, ինչպես նաև զբաղվելու քաղաքական քարոզչությամբ Վիլսոնի համար: Պետքարտուղարության և նախագահ Վիլսոնի թույլտվությունը ստանալուն պես նա երկու շաբաթով մեկնեց բանախոսելու Ֆիլադելֆիայից մինչև Սենթ Լյուիս ու Չիկագո և ավարտեց իր առաքելությունը Նյու Յորքում: Նա պատմում էր շատերի համար անհայտ Հայաստանի, հայերի ողբերգության և նրանց օգնության ձեռք մեկնելու անհրաժեշտության մասին: Այս հանդիպումների նպատակն էր տեղյակ պահել ամերիկյան հասարակայնությանը հայերի և հրեաների վիճակի, ինչպես նաև Օսմանյան կայսրությունում և Պարսկաստանում ամերիկյան օգնության կոմիտեի գործադրած ջանքերի մասին:⁵⁶¹

Ըստ Թոմաս դե Վաալի՝ Օսմանյան կայսրությունում սկսված «հումանիտար ճգնաժամը ծնունդ տվեց աշխարհում առաջին միջազգային բարեգործական օգնության քարոզարշավին՝ տառապյալ

և մայիսին գրել նախագահ Վիլսոնին, որ այդ հանգամանքը դժգոհություն է առաջացնելու «մեր լավ բարեկամներ» Դոդջի, Քրեյնի և շատ ուրիշների մոտ, որոնք հետաքրքրված էին ամերիկյան հաստատությունների գործունեությունն Օսմանյան կայսրությունում շարունակելու գործով: Մորզենթաուն ավելացրել էր, որ Պետքարտուղարությունը հաշվի չէր առնում նաև այն հանգամանքը, որ Թուրքիայում ԱՄՆ-ի դեսպանը ներկայացնում էր ութ երկրների շահերը (St' u Library of Congress, Division of Manuscripts, Papers of Henry Morgenthau, Sr., Diary, 1916, May 4):

⁵⁶⁰ St' u **Peterson Merrill D.**, նշվ. աշխ., էջ 52:

⁵⁶¹ St' u Library of Congress, Division of Manuscripts, Papers of Henry Morgenthau, Sr., Diary, 1916, May 4; **Payaslian Simon**, նշվ. աշխ., էջ 110-111; **Peterson Merrill D.**, նշվ. աշխ., էջ 52:

կանանց և երեխաների պատկերների պաստառներով», որն ամերիկացիներին հնարավորություն տվեց հայերին օգնելու նպատակով հավաքելու տասնյակ միլիոնավոր դոլարներ: Երբ ամերիկյան սննդի առաջին մատակարարումները հասնում են Հայաստան, ամերիկյան հանրությանը յուրեր են հասնում մարդակերության, խոտակերության և սովից 200 հազար մարդու մահանալու վերաբերյալ: Իրենց ճաշի պնակը չդատարկած ամերիկյան երեխաներին մի քանի սերունդ շարունակ հիշեցնում էին «սոված հայերի» մասին: Օգնությունը բաշխվում էր Ամերիկյան կոմիտեի միջոցով, որոնց ներկայացուցիչներն աշխատում էին Հայաստանում, Հունաստանում, Սիրիայում և Պարսկաստանում: Մյուս տուժածները նույնպես օգնություն էին ստանում, սակայն հայերը հիմնական ստացողներն էին:⁵⁶²

ԱՄՆ-ի ապագա նախագահ Հերբերտ Հուվերը, որը Միացյալ Նահանգների սննդի վարչակազմի (Food Administration) ղեկավարն էր, իր հուշերում գրում էր, որ ամերիկացի դպրոցականներն ավելի լավ էին ճանաչում Հայաստանը, քան Անգլիայում: Ըստ Հուվերի՝ շուրջ 50 տարի շարունակ հայերն ամերիկացիների մտքում ասոցացվում էին Արարատ լեռան և Նոյի, մահմեդական թուրքերի կողմից քրիստոնյաների ջարդերի հետ:⁵⁶³

Ամերիկյան կոմիտեի կողմից հավաքված միջոցների բաշխման կազմակերպման աշխատանքով զբաղվում էին ինչպես դիվանագետներն ու հյուպատոսները, այնպես էլ միսիոներները: Միսիոներական առաքելությունների շինությունները դարձել էին օգնության բաշխման կենտրոններ: Կոստանդնուպոլսի օգնության կոմիտեի աշխատանքներում ընդգրկված էին դիվանագետներ Էլկուսն ու Լյուիս Հեկը, միսիոներներ Գեյթսը, Փիթը, վերջինիս օգնական Լյուիսեր Ֆոուլը և Դոդջի դուստր, «Ռոբերտ» քոլեջի աշխատակազմի անդամ Էլիզաբեթ Հանտինգտոնը: Նման խմբեր էին հիմնվել նաև Բեյրութում և Թիֆլիսում: Պարսկաստանում կոմիտեն ղեկավարում էր ԱՄՆ-ի դեսպանորդ-նախարար Ջ. Քոլդվելը:

Ամերիկյան օգնությունը գրեթե ամբողջությամբ բաշխվում էր ոչ թուրքերի միջև: Մահմեդականները ստացել էին օգնության շուրջ եր-

⁵⁶² Տե՛ս **De Waal Thomas**, նշվ. աշխ., էջ 76:

⁵⁶³ Տե՛ս **Hoover Herbert**, *Memoirs: Years of Adventure, 1874-1920*, New York, Macmillan, 1952, էջ 385:

կու տոկոսը, իսկ հիմնական մասը ստացել էին հայերն ու քրիստոնյա արաբները: Կոստանդնուպոլիսը հատկացրել էր օգնության 35%-ը, Թիֆլիսը՝ 30%-ը, Բեյրութը՝ 13%-ը և Թեհրանը՝ 20%-ը:

Իր գործունեության ընթացքում Բարտոնը չէր մոռանում մաս Մերձավոր Արևելքում գործող միսիոներական առաքելությունների անվտանգության և ֆինանսական օժանդակությունն ապահով տեղ հասցնելու մասին: Նա մշտական մամակագրության մեջ էր Պետքարտուղարության հետ այդ հարցերի շուրջ:⁵⁶⁴

Ամերիկյան կոմիտեի գործունեությունն արդյունավետ դարձնելու համար Բարտոնը կարիք ուներ ԱՄՆ-ի կառավարության օժանդակության: Այդ նպատակով կառավարությունը թույլ էր տվել, որ Կոստանդնուպոլսում Փիթն օգտագործի դիվանագիտական փոստը՝ օսմանյան գրաքննությունից խուսափելու համար: Այս միջոցն օգտագործելով՝ Վաշինգտոնն ամբողջական տեղեկատվություն էր ստանում Օսմանյան կայսրությունում կատարվող իրադարձությունների մասին: Փիթը կարողանում էր մաս համապատասխան տեղեկատվություն ստանալ Թիֆլիսում, Թավրիզում և Հալեպում գտնվող ԱՄՆ-ի հյուպատոսներից: 1916 թ. կեսերին Ամերիկյան կոմիտեն կարողացավ իր մասնաճյուղերը բացել ԱՄՆ-ի 16 նահանգների 38 քաղաքներում:⁵⁶⁵

Ամերիկյան կոմիտեի կողմից իրականացված աշխատանքի շնորհիվ ամերիկյան ժողովուրդը մեծ առատաձեռնություն ցուցաբերեց՝ տրամադրելով ոչ միայն դրամական միջոցներ, այլև ոսկերչական իրեր, նվերներ և այլ տեսակի թանկարժեք իրեր: 1915-1916 թթ. «Ռոքֆելլեր» հիմնադրամը տրամադրել էր 300 հազար դոլար: 1916 թ. տեղի ունեցած Հարվարդ-Յեյլ ամերիկյան ֆուտբոլի խաղից ստացված հասույթը տրամադրվեց Ամերիկյան կոմիտեին: Օգնություն էին տրամադրել մաս Ամերիկյան կարմիր խաչը, «*Christian Herald*»-ի և «*Literary Digest*»-ի խմբագրությունները: Մինչև Միացյալ Նահանգների՝ պատերազմի մեջ մտնելու պահը Ամերիկյան կոմիտեն կարողացել էր հավաքել 2 մլն դոլար և իր հասույթի չափով դարձել ԱՄՆ-ի երկրորդ բարեգործական կազմակերպությունը: Մերձավոր Արևելքում պատերազմից տուժածների համար օգնության կազմակերպումը դարձել էր

⁵⁶⁴ Grabill Joseph L., նշվ. աշխ., էջ 78:

⁵⁶⁵ Նույն տեղում, էջ 75:

ազգային խաչակրաց արշավանքի նման մի շարժում:⁵⁶⁶

Մինչև պատերազմում Միացյալ Նահանգների չեզոքության ավարտը օգնության աշխատանքներն անխափան կերպով շարունակվում էին: Մորգենթաուն նույնիսկ համոզեց նախագահ Վիլսոնին «Collier» ռազմանավով օժանդակության միջոցներ ուղարկել Թուրքիա: Թուրք-ամերիկյան հարաբերությունների խզումից հետո թուրքական կառավարության մոտեցումն օգնության կազմակերպման աշխատանքների նկատմամբ առանձնակի փոփոխություններ չկրեց: Ամերիկյան օգնության աշխատակիցները մաս կազմեցին շվեդական ներկայացուցչության, որը ներկայացնում էր ԱՄՆ-ի շահերը Թուրքիայում:⁵⁶⁷

ԱՄՆ-ի և Օսմանյան կայսրության միջև հարաբերությունների խզումից հետո շատ ամերիկացիներ լքեցին Թուրքիան, իսկ Մերձավոր Արևելքում ամերիկյան օգնությունը, բացառությամբ «Մերձավոր Արևելքի օգնություն» կազմակերպության տրամադրած օգնության, բավականին կրճատվեց: Սակայն կրթական և բժշկական գործունեությունը շարունակվեց, թեև ամերիկյան հաստատությունները պատերազմի շրջանում կորցրին ոչ թուրք հաճախորդների զգալի մասը: Միաժամանակ Թուրքիայում մնացած ամերիկացիները նշում էին, որ լավ վերաբերմունքի էին արժանանանում օսմանյան իշխանությունների կողմից:⁵⁶⁸

Միացյալ Նահանգներ վերադարձող միսիոներներից շատերը շարունակում էին զբաղվել հայերին օգնություն ցուցաբերելու հարցով: Այսպես՝ Մարգվանի անատոլիական քոլեջի նախագահ Ջորջ Ուայթը վերադարձավ Միներտոա՝ աշխատելու «Մերձավոր Արևելքի օգնություն» կազմակերպության համար: Հաճնի քրիստոնեական դպրոցների ղեկավար Էդիթ Քոլլըր, որը Կիլիկիայի հայ բնակչության արքայի բոլոր փուլերին ականատես էր դարձել, վերադարձել էր Միչիգան նահանգի Էնն Արբոր քաղաքը և շարունակում էր գործակցել օգնության կազմակերպիչների հետ: 1917 թ. հունիսի 17-ին դեսպան Էլկուսի հետ քարտուղար Փիթը մեկնեց Շվեյցարիա, սկզբում՝ Բեռն, այնուհետև՝ Ժնև՝ այնտեղից ապահովելով ԱՄՆ-ի և Մերձավոր Արևելքի միջև գոր-

⁵⁶⁶ Տե՛ս նույն տեղը, էջ 77:

⁵⁶⁷ Տե՛ս **Barton James L.**, նշվ. աշխ., էջ 64; **Peterson Merrill D.**, նշվ. աշխ., էջ 54:

⁵⁶⁸ Տե՛ս **Trask Roger R.**, նշվ. աշխ., էջ 23:

ծող հունանիտար կապը: Այստեղ նա պատրաստեց և ԱՄՆ-ի պետ-
քարտուղարությանը ներկայացրեց «Թուրքական կայսրությունում
օգնության աշխատանքի վերաբերյալ հուշագիրը», որը կարևոր ուղե-
ցույց դարձավ օգնության հետագա կազմակերպման համար:⁵⁶⁹

Ամերիկյան խորհրդի միսիոներ Ֆրեդերիկ Մակկալլանը, որը
հավատարմագրված էր Մարաշում, սկսած 1917 թ. փետրվարից,
զբաղված էր օգնության բաշխմամբ Ռուսաստանի կողմից կրկին
գրավված տարածքներում: Իր երեք գործընկերների հետ նա սնունդ
և հագուստ էր բաշխում Վանում գտնվող 10 հազար հայերին: Օգնու-
թյունն այստեղ էր ժամանում Թիֆլիսից ԱՄՆ-ի հյուպատոսի կողմից
ղեկավարվող կոմիտեի միջոցով: Վերադառնալով Նյու Յորք «Մեր-
ձավոր Արևելքի օգնություն» կազմակերպության գրասենյակում աշ-
խատելու նպատակով՝ նա գրում էր Բարտոնին, որ ականատես է
դարձել այդ մարդկանց սարսափելի ծանր վիճակին, որոնք ենթարկ-
վել էին աննկարագրելի հալածանքի և բռնությունների թուրք իշխա-
նությունների կողմից:⁵⁷⁰

Դրամահավաք կազմակերպելուն զուգահեռ՝ Ջեյմս Բարտոնը մեծ
աշխատանք էր տանում՝ երկրի հասարակական կարծիքը համապա-
տասխանաբար ուղղորդելու նպատակով: Հայոց ցեղասպանության
փաստերի լուսաբանման միջոցով ամերիկյան մամուլը կարողացավ
հայանպաստ լայնածավալ շարժում սկսել Միացյալ Նահանգներում,
որի նպատակն էր հայերին օգնություն ցուցաբերելու համար դրամա-
հավաքի կազմակերպումը: Ըստ Թոմաս Լեոնարդի՝ ամերիկյան հա-
սարակական կարծիքը հայերի հարցում մեծապես ձևավորվում էր
մամուլի միջոցով:⁵⁷¹

1915 թ. Բարտոնը վարձել էր Նյու Յորքի աստվածաբանական
ճեմարանի եկեղեցու պատմության դասախոս Ուիլյամ Ռոքվելլին՝
Մերձավոր Արևելքի քրիստոնյաների մասին աշխատություններ գրե-
լու նպատակով: Համապատասխան ուսումնասիրություններ կատա-
րելուց հետո՝ 1916 թ., Ռոքվելլը պատրաստեց երեք գրքույկ՝ «Պարս-

⁵⁶⁹ Տե՛ս **Peterson Merrill D.**, նշվ. աշխ., 56-57:

⁵⁷⁰ Տե՛ս նույն տեղը, էջ 55:

⁵⁷¹ Տե՛ս **Leonard Thomas G.**, *When News is not enough: American Media and Armenian Deaths* // In: *America and the Armenian Genocide of 1915* / Edited by Jay Winter, Cambridge, Cambridge University Press, 2003, էջ 300:

կաստանի և Քուրդիստանի ասորի (նեստորական) քրիստոնյաների ցավալի իրավիճակը», «Հայերի տեղահանությունները (Ականատեսի վկայությունը)» և «Վիրավորված Հայաստանը. Ավրորա Մարդիգանյանի պատմությունը»: Վերջին աշխատանքը ներկայացնում էր 14 տարեկան հայ աղջկա պատմությունը, որը դարձել էր թուրք սպայի հարսը, անցել ազատագրկման, փախուստի, կրկին ազատագրկման և բռնաբարության միջով: Ի վերջո, նրան հաջողվել էր փրկվել Ամերիկյան կոմիտեի օգնությամբ:⁵⁷²

Սակայն Բարտոնը չէր բավարարվել դրանով և պատվիրել էր հողվածների շարք՝ «Վայրագություններ. Թալեսթ բեյը պարծենում էր, թե անելու է այնպես, որ հայերն աղաչեն կոտորածի համար, և դա նրան հաջողվեց» խորագրով: Ամերիկյան կոմիտեի նպատակն էր ներկայացնել թուրքերին որպես «դաժան և անմարդկային» էակներ, իսկ հայերին՝ որպես իսլամի կողմից զոհաբերված քրիստոնյաներ: Հրապարակված հողվածներում կրոնը ներկայացվում էր որպես հիմնական գործոն Մերձավոր Արևելքում՝ անտեսելով ազգամիջյան, տնտեսական և քաղաքական գործոնները:⁵⁷³ Նման բնույթի առաջին հրատարակություններից էր նաև պատվելի Ջեյմս Էմփրինգհեմի «Հայաստան, քրիստոնյա ազգ: Նրա սրտանմիլ ճիչը» գրքույկը: Քրիստոնյա Հայաստանի տանջանքներին բանաստեղծություն էր նվիրել նաև հայտնի բանաստեղծուհի Կեթրին Լի Բեյթսը:⁵⁷⁴

Բարտոնը համագործակցում էր նաև բրիտանացի հայտնի հայա-մետ գործիչ, Համայնքների պալատի անդամ, 1907-1913 թթ. Միացյալ Նահանգներում Բրիտանիայի դեսպան, իրավաբան և գրքերի հեղինակ Ջեյմս Բրայսի հետ: Նրանց համագործակցության շնորհիվ հրատարակվեց երիտասարդ պատմաբան Առնոլդ Թոյնբրիի⁵⁷⁵ կողմից

⁵⁷² Տե՛ս **Thomas Patrick**, նշվ. աշխ., էջ 105-106:

⁵⁷³ Տե՛ս **Grabill Joseph L.**, նշվ. աշխ., էջ 76:

⁵⁷⁴ Տե՛ս **Walther Karine V.**, նշվ. աշխ., էջ 290-291:

⁵⁷⁵ **Առնոլդ Թոյնբրի** (1889-1975)՝ բրիտանացի պատմաբան, փիլիսոփա, մշակութաբան և սոցիոլոգ, «Պատմության հետազոտություն» 12 հատորանոց աշխատության հեղինակ, քաղաքակրթության տեսության մշակողներից: Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին և դրանից հետո առանձին աշխատություններ, բազմաթիվ հողվածներ ու հրապարակային ելույթներ է նվիրել Հայոց ցեղասպանությանը, հանդես եկել Հայաստանի անկախության պաշտպանությամբ, գործուն մասնակցություն է ունեցել Ջեյմս Բրայսի կազմած «Կապույտ գրքի» (1916) հրատարակմանը:

կազմված փաստաթղթերի ժողովածուն, որի նպատակներից էր հայերին օգնություն ցուցաբերելու համար միջոցների հավաքագրումը: Ամերիկյան կոմիտեն այդ նպատակով գնել էր գրքի երեք հազար օրինակ:⁵⁷⁶

Վերջին տարիներին մի շարք թուրք և նրանց դիրքորոշումը սատարող օտարերկրյա հեղինակներ աշխատանք են տանում այդ փաստաթղթերի ժողովածուի դեմ: Նրանք համարում են ժողովածուն բրիտանական ապատեղեկատվական քարոզարշավի արդյունք, իսկ փաստաթղթերը՝ կեղծիք: Իրականում զեկույցների մեծ մասը փոխանցվել էր Բրայսին և Թոյնբրին Միացյալ Նահանգների միջոցով: Այդ փոխանցումների հիմնական կազմակերպիչը Ջեյմս Բարտոնն էր, որին թույլ էին տվել հրապարակել օսմանյան հայերի իրավիճակին վերաբերող նյութերը: Ամերիկյան դիվանագիտական, հյուպատոսական և միսիոներական զեկույցների առաջին հրապարակումը տեղի էր ունեցել մամլո հաղորդագրության տեսքով 1915 թ. հոկտեմբերի 4-ին Նյու Յորքում, որը պատրաստել էր Բարտոնը Միացյալ Նահանգների կառավարության աջակցությամբ: Ստանալով այդ նյութերը՝ Թոյնբրին, ցանկանալով վստահ լինել դրանց ճշգրտության մեջ, կապ էր հաստատում վկաների և ակնատեսների հետ, ինչպես նաև խնդրում Բարտոնից փաստաթղթերի ճշմարտացիությունը հավաստիացնող լրացուցիչ փաստարկներ:⁵⁷⁷

Հայոց ցեղասպանության մասին Միացյալ Նահանգներում գրված առաջին գրքերից էր Հերբերտ Ադամ Գիբբոնսի⁵⁷⁸ «Ժամանակակից պատմության սև էջը» 71 էջանոց բրոշյուրը: Քննադատելով Գերմանիային կատարվածի համար՝ հեղինակը գլխավորապես մեղադրում

⁵⁷⁶ Տե՛ս **Grabill Joseph L.**, նշվ. աշխ., էջ 74-75; **Bryce James and Great Britain Foreign Office.** *The Treatment of Armenians in the Ottoman Empire: Documented Presented to Viscount Grey of Fallodon, Secretary of State for Foreign Affairs, by Viscount Bryce.* Miscellaneous, No. 31, London, H.M. Stationary Office, and Sir J. Causton and Sons, 1916:

⁵⁷⁷ Տե՛ս **Sarafian Ara**, *The Archival Trail. Authentication of the Treatment of Armenians in the Ottoman Empire, 1915-16* // In: *Remembrance and Denial. The Case of the Armenian Genocide.* / Edited by Richard G. Hovannisian, Detroit, MI: Wayne State University Press, 1999, 15 54-55:

⁵⁷⁸ **Հերբերտ Ադամ Գիբբոնս** (1880-1934)՝ ամերիկացի լրագրող, միջազգայնագետ, իրավաբան, փիլիսոփայության դոկտոր, Օսմանյան կայսրությունում հայերի և հույների իրավիճակի մասին հոդվածների և գրքերի հեղինակ, հայտնի է «Ասիայի նոր քարտեզը», «Աֆրիկայի նոր քարտեզը» և «Եվրոպայի նոր քարտեզը» գրքերով:

էր «Միություն և առաջադիմություն» կուսակցության ղեկավարությանը: Նա գրում էր. «Թուրքիայի սուլթանի կողմից միլիոնուկես անմեղ, չափազանց հավատարիմ քրիստոնյա ենթակաների ոչնչացումը ծրագրված էր և հրահանգված էր Կոստանդնուպոլսից»:⁵⁷⁹

Օգնության կոմիտեի՝ 1915 թ. տեղի ունեցած առաջին հանդիպումից ի վեր բոլոր անդամները սկսեցին համագործակցել ֆեդերալ կառավարության հետ: Պետքարտուղարությունը պարբերաբար կարևոր հաղորդագրություններ և փաստաթղթեր էր տրամադրում միսիոներական ղեկավարներին: Այս տեղեկատվությունն անմիջապես դառնում էր Ամերիկյան օգնության կոմիտեի «հրապարակային գործիք»՝ շատ ավելի անձ միջոցներ հայթայթելու համար: Թարմ տեղեկատվության տարածելու այս համակարգն աշխատում էր արագ և արդյունավետ: Մի քանի օրվա ընթացքում նյութը հրատարակվում էր հանրաճանաչ օրաթերթերի առաջին էջերում:⁵⁸⁰

1915-1923 թթ. ընթացքում քսանից ավելի ամերիկյան պարբերականներ հրատարակել էին հայերի մասին հարյուրավոր հոդվածներ, որոնք ոչ միայն պարունակում էին տեղեկություններ ցեղասպանության մանրամասների մասին, այլև ուղղված էին դրամահավաքի կազմակերպմանը: Հեղինակներից շատերը միսիոներներ էին: Հայերի համար օգնության կազմակերպման թեմաներին էին նվիրված «*The New York Times Current History Magazine*»-ի 35, «*The Missionary Review of the World*»-ի 18, «*The Outlook*»-ի 19, «*The Survey*»-ի 12, «*National Geographic*»-ի 7, «*The Independent*»-ի 19, «*Contemporary Review*»-ի 15, «*The New Republic*»-ի 13, «*Literary Digest*»-ի 42 հոդվածները: Միայն 1915 թ. «*The New York Times*» օրաթերթը հրատարակել էր հայոց ցեղասպանությանը նվիրված 146 հոդված:⁵⁸¹

⁵⁷⁹ Տե՛ս **Gibbons Herbert Adams**, *The Blackest Page of Modern History*, New York, G. P. Putnam's Sons, 1916:

⁵⁸⁰ Տե՛ս **Moravian, Suzanne E.**, նշվ. աշխ., էջ 210:

⁵⁸¹ Մեծ եղեռնի 65-ամյակի առթիվ ամերիկահայ Ռիչարդ Դիրան Քոլյանը 1980 թ. Սան Ֆրանցիսկոյում լույս էր ընծայել 1913-1921 թթ. ամերիկյան մամուլում տպագրված հայերի ողբերգությանը նվիրված հոդվածների և նյութերի ժողովածու (Տե՛ս **Kloian Richard Diran**, *The Armenian Genocide: First 20th Century Holocaust: 65th Anniversary Memorial 1915-1980*, San-Francisco, San Francisco Bay Area Armenian Commemorative Committee, 1980, 304 էջ): Ժողովածուում գետեղված նյութերի մանրամասն վերլուծությունը տե՛ս **Կիրակոսյան Ջ. Ս., Երիտրուրքերը պարսկության դարասարսանի առաջ (1915-ից մինչև մեր օրերը)**, Գիրք երկրորդ, Եր., «Հայաստան»

Այդ հրապարակումներում, որոնք հիմնականում կրկնում էին 1895-1896 թթ. հայկական կոտորածների մասին արտահայտված գնահատականները, «հայերը ներկայացվում էին որպես անմեղ, մարտիրոս քրիստոնյաներ, որոնք դարձել էին բարբարոս մահմեդական թուրքերի գոհը: Ամերիկացիներին համեմատում էին քրիստոնյա հայերի հետ: Հայերը համարվում էին առաջադեմ ազգ, և սոցիալ դարվինիստներին կոչ էր արվում համակրելու նրանց: Ամերիկացիների համար թուրքերը հետամնաց էին և սադիստ»:⁵⁸²

Ամերիկյան մամուլի՝ հայերի հարցի նկատմամբ ունեցած հետաքրքրությունը մեծապես պայմանավորված էր նաև այն հանգամանքով, որ քրիստոնյա հայերը մահանում էին «քիբլիական հողերում»։ Արարատ լեռը, Հալեպը, Տարսոնն ու Կոստանդնուպոլիսը սրբավայրեր էին Միացյալ Նահանգների կաթոլիկների, բողոքականների և հրեաների համար:⁵⁸³

«*New York Times*»-ը մշտապես լուսաբանում էր «թուրքական վայրագությունները»: Դրան օգնեց նաև այն հանգամանքը, որ օրաթերթի հրատարակիչ Ադոլֆ Օխսն ու Հենրի Մորգենթաուն հին ընկերներ էին: Սկսած 1915 թ. մարտից՝ թերթը գրում էր թուրքերի կողմից հայերի դեմ իրագործված «կոտորածների», «սպանդի» և «վայրագությունների» մասին՝ հիմնվելով միսիոներների, Կարմիր խաչի պաշտոնյաների, տեղական եկեղեցական գործիչների և համատարած ջարդերից ողջ մնացածների վկայությունների վրա: 1915 թ. հուլիսին թղթակիցը նշում էր, որ «վստահորեն կարելի է ասել, որ մինչև Թուրքիային ծեծելով ծնկի չբերեն, շատ արագ շուտով Օսմանյան կայսրությունում քրիստոնյա չի մնալու»:⁵⁸⁴

«*New York Times*»-ի՝ 1915 թ. հոկտեմբերի 4-ի առաջնորդող հայե-

հրատարակչություն, 1983, էջ 70-75: Տե՛ս նաև *Յեղասպանության արվագությունը 1915 թ. մամուլի էջերում* (հայալեզու և օտարալեզու թերթերի նյութերի ժողովածու) /Կազմողներ՝ Գ. Մանուկյան, Ա. Մարության, Ժ. Պեօճեքեան, Ա. Ոսկանյան, Մ. Հովսեփյան, Հատոր առաջին, Եր., «Դարույթ» երիտասարդական հասարակական կազմակերպություն, 2018, 626 էջ:

⁵⁸² Տե՛ս **Moravian Suzanne E.**, նշվ. աշխ., էջ 210; **Balakian Peter**, *From Ezra Pound to Theodore Roosevelt: American intellectual and cultural responses to the Armenian Genocide*, էջ 249:

⁵⁸³ Տե՛ս **Leonard Thomas G.**, նշվ. աշխ., էջ 304:

⁵⁸⁴ Տե՛ս *Turks are Evicting Native Christians // New York Times*, 1915, July 12, էջ 4:

րի արքայի և կոտորածների մանրամասներով այնպիսի աղմուկ բարձրացրեց ԱՄՆ-ի հասարակայնության շրջանում, որ երկու շաբաթ անց Նյու Յորքի կենտրոնական այգում գտնվող «Century Theater»-ում այդ առիթով տեղի ունեցավ մեծ հավաք, որի ընթացքում շատերի շարքում ելույթ ունեցան Ջեյմս Բարտոնը, «Independent»-ի խմբագիր Համիլտոն Հոլթը, ռաբբի Վայզը, քաղաքական գործիչ Բուրկ Կոկրանը:⁵⁸⁵

Վաշինգտոնում Բրիտանիայի նախկին դեսպան Ջեյմս Բրայսը համոզված էր, որ հայերին կարող էր փրկել միայն Միացյալ Նահանգները, որը պետք է իր ազդեցությունն օգտագործեր Գերմանիայի վրա: 1915 թ. հոկտեմբերի 7-ին «New York Times»-ի առաջնորդողը գրում էր, որ կոտորված հայերի թիվը հասնում էր 800 հազարի: Այդ թիվը ներկայացնում էր Բրայսը Բրիտանիայի Լորդերի պալատում արված իր հայտարարության մեջ: Նա նշում էր, որ Միացյալ Նահանգները պետք է իր դերը ստանձնի պատերազմի ընթացքում տեղի ունեցող հանցագործությունները կանխելու գործում:⁵⁸⁶ Արդեն 1915 թ. դեկտեմբերին թերթի առաջնորդողը գրում էր, որ «սպանվել կամ արտաքսվել է մեկ միլիոն հայ»:⁵⁸⁷ Սամանթա Փաուերը գրում է, որ թեև հնարավոր չէր ճշտորեն հաշվարկել դիակների թիվը, այդուհանդերձ, կառավարական և ոչ կառավարական պաշտոնյաները վստահ էին, որ տեղի ունեցող վայրագությունները «ժամանակակից պատմության մեջ իրենց նախատիպը չեն ունեցել»․ թուրքերը նպատակադրվել էին «ոչնչացնել մի ողջ ժողովուրդ»:⁵⁸⁸

Թուրքիայում տեղի ունեցող «վայրագությունների» լուսաբանումը կարելի է բաժանել երեք հիմնական կատեգորիայի՝ մանրամասներ ցեղասպանության բնույթի և չափերի մասին, նկարագրություններ հայերի ու թուրքերի մասին և օգնության ուղղությամբ իրականացվող ջանքեր: Տարբեր հարանվանություններին պատկանող պարբերականները վառ մանրամասներ էին տրամադրում ընթերցողին հայերի, սիրիացի քրիստոնյաների և օսմանյան տիրակալության տակ գտնվող այլ փոքրամասնությունների դեմ կատարված «վայրագութե-

⁵⁸⁵ Տե՛ս **Peterson Merrill D.**, նշվ. աշխ., էջ 11:

⁵⁸⁶ Տե՛ս *Bryce Asks US to Aid Armenia. Says that all Christians in Trebizond, numbering 10,000, were Drowned // New York Times*, 1915, September 21, էջ 3:

⁵⁸⁷ Տե՛ս *Million Armenians Killed or in Exile // New York Times*, 1915, December 15, էջ 3:

⁵⁸⁸ Տե՛ս **Power Samantha**, նշվ. աշխ., էջ 9:

յունների» մասին: Սկզբնական շրջանում որոշակի անորոշություն կար տեղահանությունների և կոտորածների վերաբերյալ,⁵⁸⁹ սակայն 1915 թ. վերջին ամիսներին ամբողջությամբ պարզ դարձավ, թե ինչ աղետ էր տեղի ունենում քրիստոնյաների հետ:⁵⁹⁰ Որոշ հողվածների վերնագրերն արդեն իսկ վկայում էին այն մասին, թե ինչ էր կատարվում Փոքր Ասիայում՝ «Ազգի սպանությունը», «Հայաստանի սպանությունը», «Հայերի բնաջնջումը», «Խաչված Հայաստանը»:⁵⁹¹ Պարբերականները ներկայացնում էին հայերի տառապանքների մասին վառ նկարագրություններ, հեղինակները փորձում էին զգայուն, բայց պատշաճ կերպով ներկայացնել «քրիստոնյաների ամենադաժան, ամենաանխիղճ, ամենաաններելի և ամենալայնածավալ ջարդերը վերջին հազարամյակի ընթացքում», որոնք հեղեղեցին Հայաստանը տղամարդկանց, կանանց և երեխաների արյունով:⁵⁹² Հայկական կոտորածների լուսաբանումը կրոնական պարբերականների էջերում մեկ անգամ ևս հաստատեց և ուժեղացրեց «սարսափելի թուրքի» պատկերը, այն, որ թուրքերը «դիվային քաղաքականություն էին վարում փոքրամասնությունների նկատմամբ», նրանք իրենց ճանապար-

⁵⁸⁹ Տե՛ս *Massacres by Kurds // Christian Advocate*, 1915, 15 April; *Current Events // Christian Index*, 1915, 27 May; *Eastern Christians Being Persecuted // Christian Century*, 1915, 26 August; *A Cry for Help from Persia // Presbyterian Banner*, 1915, 1 April:

⁵⁹⁰ Տե՛ս *Armenian Massacres Confirmed // Christian Advocate*, 1915, 7 October; *The Armenian Atrocities // Baptist World*, 1915, 7 October; *American Missionaries in Turkey // Watchman-Examiner*, 1915, 9 September; *Armenians Massacred // Watchman-Examiner*, 1915, 23 September; *The Assassination of a Race // Watchman-Examiner*, 1915, 28 October; *Armenian Atrocities // Watchman-Examiner*, 1915, 11 November; *Turks Slaughter Armenians // The Continent*, 1915, 9 September; *Gruesome Word from Armenia // The Continent*, 1915, 23 September; *Greatest of All Martyrdoms // The Continent*, 1915, 14 October; *Is Extermination Incredible? // The Continent*, 1915, 21 October; *The Armenian Horrors // United Presbyterian*, 1915, 30 September; *The Woes of Armenia // United Presbyterian*, 1915, 14 October; *Armenian Massacres // Presbyterian Banner*, 1915, 30 September; *Turkish Extermination of Armenians // Presbyterian Banner*, 1915, 14 October; *An Orgy of Unbridled Hate // Missionary Herald*, 1915, November; *One Instance // Missionary Herald*, 1915, November; *The World's Bitterest Winter // Christian Herald*, 1915, 29 December:

⁵⁹¹ Տե՛ս *The Murder of a Race // Christian Advocate*, 1915, 7 October; *The Assassination of Armenia // Missionary Review of the World*, 1915, November; *One of History's Blackest Crimes // Missionary Voice*, 1916, February; *Blotting out the Armenians // Alabama Baptist*, 1915, 10 November; *Crucified Armenia // Spirit of Missions*, 1916, May:

⁵⁹² Տե՛ս *The Assassination of Armenia // Minority Review of the World*, 1915, November, էջ 837-848:

հին ավերում և կործանում էին ամեն ինչ:⁵⁹³

1915 թ. ապրիլին «Մեթոդիստ» եպիսկոպոսական եկեղեցու «*Christian Advocate*»-ը գրում էր, որ «մահմեդականների կողմից հայերի կոտորածը շարունակվում է շատ ավելի մեծ ծավալով»: Նույն թվականի մայիսին բապտիստական «*Christian Index*»-ը մտահոգություն էր հայտնում առ այն, որ «չհաստատված տեղեկություններ են ստացվում Հայաստանում թուրքական նոր վայրագությունների մասին»:⁵⁹⁴ Նույնիսկ մտավորականներն ու գիտնականներն էին հետազայում գրում նույն ոճով: Օրինակ՝ 1923 թ. Հարվարդի համալսարանի պրոֆեսոր, հայտնի պատմաբան Ալբերտ Բուշնելը Հարտը գրում էր գիտական պարբերականում, որ «թուրքը մերձավորարևելյան Կու-Կլուքս-Կլանն է»: Նա մեղադրում էր թուրքերին այն բանում, որ նրանք «ոչնչացրել են իրենց մշակույթով, կրոնով և պատմությամբ գերազանցող մի ցեղ, որն ազգ դառնալու բոլոր հատկանիշներն ուներ: Բոլորը, ովքեր կանգնել են թուրքերի ճանապարհին, ներկայումս կոտորված են»:⁵⁹⁵

Կրթության ոլորտի շատ գործիչներ, համոզված լինելով հայերին օգնելու և Հայկական հարցը քարոզելու անհրաժեշտության մեջ, հանդես էին գալիս մամուլում՝ պաշտոնական Վաշինգտոնի վրա ազդեցություն գործելու նպատակով: Դրանց թվում էին Մերիլենդի, Չիկագոյի, Պենսիլվանիայի, «Ռեզերվ» ու Ամերիկայի կաթոլիկ համալսարանների և «Վասար», «Լաֆայետ», «Սմիթ» քոլեջների նախագահները: Հայերի խնդիրը պաշտպանում էին այնպիսի գիտնականներ, ինչպիսիք էին Ջ. Հ. Ս. Մեյնը Կոնգրեսը Գրիննել քոլեջից, Միդնի Մեզեսը Նյու Յորքի Միթի քոլեջից, Ջոն Գրիեր Հիբբենը Պրինստոնի համալսարանից, Չարլզ Էլիտը Հարվարդի համալսարանից և Հեբբերտ Ադամս Գիբբոնսը:⁵⁹⁶

1915 թ. ավարտին Օսմանյան Թուրքիայում հայկական կոտորածների լուրերը վրդովմունքի մեծ ալիք բարձրացրին Միացյալ Նահանգ-

⁵⁹³ Տե՛ս *The Murder of a Race // Christian Advocate*, 1915, 7 October; *The Assassination of Armenia // Missionary Review of the World*, 1915, November; *One of History's Blackest Crimes // Missionary Voice*, 1916, February; *Blotting out the Armenians // Alabama Baptist*, 1915, 10 November; *Crucified Armenia // Spirit of Missions*, 1916, May:

⁵⁹⁴ Տե՛ս *The Assassination of Armenia // Minority Review of the World*, 1915, November, էջ 837-848:

⁵⁹⁵ **Trowbridge Stephen**, *Stories of Liberated Armenians // Minority Review of the World*, 1919, July, էջ 510-518:

ներում, որի հասարակայնությունն արդեն իսկ խառնաշփոթի մեջ էր Առաջին համաշխարհային պատերազմի առնչությամբ: Մեղադրական ուժեղ ձայներ էին հնչում մշակութային, քաղաքական և պետական գործիչների կողմից: Գրանց էին միացել նաև ավանգարդիստական բանաստեղծները, նախկին իմպերիալիստ-նախագահներն ու ժողովրդականություն վայելող լրագրողները: 1915 թ. հոկտեմբերին գրական մոդեռնիզմի նոր «հանճար» էզրա Փաունդը գրում էր «*New Age*»-ում, որ Միացյալ Նահանգներն այլևս չի կարող չեզոք լինել Առաջին համաշխարհային պատերազմում «մարդկության շահերի» ոտնահարման, «ժամանակակից աշխարհի բռնատիրության», «գերմանական միլիտարիզմի և հայկական կոտորածների» պատճառով:⁵⁹⁷

Հայտնի լրագրող և քննադատ Հենրի Մենկենը գրում էր, որ «նույն հայերը, որոնց ոչնչացնում էին 1896 թ., ոչնչացվում էին կրկին: Միակ տարբերությունն այն էր, որ տվյալ պարագայում «զիջող» պետքարտուղար Լանսինգը ջարդարարներին «կյանք էր շնորհում՝ բարոյական հայտագրեր ներկայացնելով թուրքական կառավարությանը»: Նման հայտագրերի շրջանառությունը դարձել էր Պետքարտուղարության հիմնական զբաղմունքը:⁵⁹⁸

«Թուրքական տարածքներում վերսկսված էթնիկ արյունահեղության» հետևանքով ամերիկյան մամուլը վերաբացեց «նախկին պատմությունների թեման»: Թեև պատերազմի ընթացքում տեղի ունեցող ճակամարտերի նորությունները սովորում էին թողնում հայերի հանդեպ կիրառվող դաժանությունները, այդուհանդերձ, ընթերցողին դժվար կլիներ չնկատել այդ լուրերի խորագրերը: 1915 թ. հոկտեմբերին հայերի հանդեպ թուրքերի քաղաքականության մասին «*National Geographic*»-ը գրում էր, որ «աշխարհը երբևիցե չէր տեսել ժողովրդին արտաքսելու ավելի կատաղի փորձ կամ նրան կոտորելու ավելի դաժան մեթոդներ»:⁵⁹⁹

Սովորաբար հրապարակումների հիմնական շարժիչ թեման մահացածների թվաքանակն էր: 1915 թ. գարնան հաղորդագրություններ-

⁵⁹⁷ Տե՛ս **Balakian Peter**, *From Ezra Pound to Theodore Roosevelt: American intellectual and cultural responses to the Armenian Genocide*, էջ 244-245:

⁵⁹⁸ Տե՛ս **Mencken H. L.**, *Who can save Armenia? // Literary Digest*, No. 51, 1915, 30 October:

⁵⁹⁹ Տե՛ս **Jenkins Hester Donaldson**, *Armenia and the Armenians // National Geographic Magazine*, No. 28, October, 1915, էջ 349:

րի տվյալներով՝ մահացել էին հարյուրավոր, որոշ տեղերում՝ մի քանի հազար հայեր: Օգոստոսի սկզբին «New York Times»-ը գրում էր, որ ընդհանուր առմամբ մահացել էր 40 հազար հայ, իսկ օգոստոսի 6-ին արդեն նշվում էր, որ «մոթթվել են տասնյակ և, հնարավոր է, հարյուր հազարավոր» հայեր: Սեպտեմբերի 24-ին Վաշինգտոնի աղբյուրները հաստատեցին Լոնդոնի «Times»-ի կողմից հրապարակված թիվը՝ 500 հազար: Շուտով ամերիկյան մամուլն անդրադարձավ լորդ Բրայսի կողմից սեպտեմբերին արված հայտարարությանն այն մասին, որ, 1915 թ. մայիսից սկսած, Փոքր Ասիայում կոտորվել էր 800 հազար հայ: Մեկ ամիս անց՝ հոկտեմբերի 17-ին, ամերիկահայերի առաջնորդները հայտարարեցին, որ ընդհանուր առմամբ կոտորվել են մեկ միլիոնից ավելի հայեր:⁶⁰⁰

Առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում ամերիկյան մամուլը ծանրակշիռ վավերագրական վկայություն էր հրապարակել հայկական կոտորածների վերաբերյալ: Եվ դա տեղի էր ունեցել այն դեպքում, երբ ամերիկյան լրագրողներ չկային դեպքերի վայրերում: 1915 թ. ընդամենը երկու ամերիկյան թղթակից կար Կոստանդնուպոլսում՝ Ռեյմոնդ Սվինգը և Ջորջ Շոայները: Շոայները ներկայացնում էր «Associated Press» գործակալությունը, և միայն նրան էր հաջողվել տեսնել հայ աքսորյալների: Ըստ Շոայների տեղեկության՝ հայերի տեղահանության առնչությամբ երկրում գրաքննություն էր տիրում. Ձեյթունի շրջանում մարդուն կարող էին ձերբակալել նույնիսկ օտար լեզուներով բացատրություն տալու համար: Հայերի կոտորածների և տեղահանությունների մասին լուրերը մամուլին էին տրվում հիմնականում հայկական կոտորածների կոմիտեի կողմից:⁶⁰¹

Հայոց ցեղասպանության մանրամասները ներկայացնող նյութերի և վկայությունների հետ ամերիկյան մամուլը հրապարակում էր նաև թուրքական տեսակետները ներկայացնող հոդվածներ և մամակներ: Այսպես՝ հրապարակումներում նշվում էր, որ հայերը «զենք էին բարձրացրել օրինավոր իշխանությունների դեմ և կռվում էին ներխուժած ռուսական բանակի հետ», լորդ Բրայսի եզրակացությունները «մեծապես չափազանցված» էին, «խիստ միջոցների» կիրառումը տեղի էր ունենում բոլոր պատերազմների ժամանակ, օսմանյան իշխանու-

⁶⁰⁰ Տե՛ս **Leonard Thomas G.**, նշվ. աշխ., էջ 295:

⁶⁰¹ Տե՛ս նույն տեղը, էջ 297:

յունների դեմ ապստամբած հայերի գործողությունները «դավաճանություն էին», ինչը չէր կարող հանդուրժել որևէ կառավարություն: «*New York Times*»-ը արտաստպել էր գերմանական թերթերում հրապարակված 800 հազար զոհերի փաստի մասին հերքումը՝ համարելով այն որպես «հմուտ բրիտանական քարոզչություն», իսկ թուրք պաշտոնյաների հրապարակումներն ընդհանրապես մերժում էին «վայրագությունները» հայերի նկատմամբ:⁶⁰²

Պատերազմի ընթացքում գերմանացիների կողմից իրագործված դաժանությունները հասարակական կարծիք ստեղծեցին Միացյալ Նահանգներում Գերմանիայի դեմ: Ի վերջո, Միացյալ Նահանգները պատերազմ հայտարարեց Գերմանիային: Ամերիկյան քրիստոնյաների բոլոր շերտերը ցնցված էին հայերի հանդեպ իրագործված դաժանությունների մասին լուրերով: Տարբեր հարանվանությունների պարբերականներն իրենց խմբագրականներով, հոդվածներով, խմբագրերին ուղղված նամակներով, պաշտոնական հայտարարություններով և տեղեկություններով ձևավորում էին պատերազմի շրջանի հայրենասիրական տրամադրությունները, ինչպես նաև դարձել էին ֆորում կարիքավոր հայերի համար օգնություն հայցելու համար: Սակայն Միացյալ Նահանգներն այդպես էլ պատերազմ չհայտարարեց Գերմանիայի դաշնակից Թուրքիային:⁶⁰³

Հայերի տեղահանությունների և կոտորածների ամբողջական պատմությունը ներկայացվել էր ամերիկյան ընթերցողին Կոստանդնուպոլսում նախկին դեսպան Հենրի Մորգենթաուի կողմից: Նրա պատմությունն առաջին անգամ լույս էր տեսել «*World's Work*» ամսագրում 1918 թ. նոյեմբերին, իսկ գիրքը՝ տարվա վերջին: Չուզահենաբար ամերիկյան հրատարակիչները հաստատեցին այլ աղբյուրներ՝ «սարսափի տեսարանները հաստատելու» համար՝ զոհերի հուշերը, գերմանացիների վկայությունները, ամերիկացի միսիոներների պատմությունները: «Ես հավատացած եմ,- գրում էր Մորգենթաուն,- որ մարդկության ողջ պատմության մեջ նման սարսափելի

⁶⁰² Տե՛ս A. S. *Guerrilla Warfare in Armenia* // *New York Times*, 1915, 18 June; Zia Mufty-Zade Bey. *The Kind of Armenians a Turk knows* // *New York Times*, 1915, 18 October; *Armenian Protests charged to Allies* // *New York Times*, 1915, 13 October; *Turkish Official Denies Atrocities* // *New York Times*, 1915, 15 October; *Turkish Foreign Minister's Defense of Armenian Massacres* // *Current History* 5, 1916, December:

⁶⁰³ Տե՛ս **Heath Gordon L.**, նշվ. աշխ., էջ 184:

դրվագ, ինչպիսին սա է, չի արձանագրվել»:⁶⁰⁴

Հետագայում թուրքական պատմագրության ժխտողականությունն արդարացնող պատմաբան Հիթ Լոուրին 1990 թ. Թուրքիայում տպագրված իր գրքում քննադատում է ամերիկացի հայտնի լրագրող, երեք անգամ Պուլիցերի մրցանակակիր, «*World's Work*»-ի խմբագիր Բարտոն Հենդրիկին: Լոուրին գրում է, որ Մորգենթաուի հուշերը տպագրության պատրաստելիս Հենդրիկը կեղծել է փաստերը, և հրապարակված գիրքը տարբերվում է Մորգենթաուի օրագրի գրառումներից:⁶⁰⁵ Միացյալ Նահանգներ վերադառնալուն պես Մորգենթաուն իրապես դարձավ Հայկական հարցի «կրքոտ փաստաբանը»: Սակայն նրա դիրքորոշումը հիմնված էր ոչ թե «կողմնակալության», այլ Կոստանդնուպոլսում իր ունեցած փորձառության վրա: Ճիշտ է նաև, որ նա պատրաստել էր իր հուշերը Պուլիցերի մրցանակ ստացած լրագրողի օգնությամբ, որոնք կարծես թե իր «լրագրողի զարդարանքների» պատճառով չէին կարող համապատասխանել իրականությանը:⁶⁰⁶ Սակայն, մի կողմ դնելով այդ հանգամանքը, կարելի է փաստել, որ հուշերի բովանդակությունը լիովին համապատասխանում է Մորգենթաուի պաշտոնական հեռագրերին և հյուպատոսների զեկույցներին: Հեղինակներ Ռոջեր Սմիթը, Էրիկ Մարկուսենը և Ռոբերտ Ջեյ Լիֆտոնը քննադատում են Լոուրիի աշխատանքը, որը պարունակում է շատ հարցական պնդումներ և եզրակացություններ: Այսպես՝ Լոուրին ոչ միայն հեքքում էր Հիտլերի հայտարարությունը՝ հայերի կոտորածների մասին, այլև պնդում, որ Մորգենթաուի հուշերը ոչ այլ ինչ են, քան «թերահաս կիսաճշմարտություններ և բացահայտ կեղծիք»: Լոուրիի եզրակացությունները, ըստ հեղինակների, լուրջ վերլուծության արդյունք չեն և անտեսում են բազմաթիվ վկայությունները:⁶⁰⁷

Ըստ Թոմաս Լեննարդի՝ 1915 թ. ամերիկյան մամուլը շատ ավել-

⁶⁰⁴ Տե՛ս *Ambassador Morgenthau's Story* // *World's Work*, No. 37, November, 1918, էջ 115:

⁶⁰⁵ Տե՛ս **Lowry Heath**. *The Story Behind Ambassador Morgenthau's Story*, Istanbul, Isis Press, 1990, էջ 60, 41, 44, 78-79:

⁶⁰⁶ Տե՛ս **De Waal Thomas**, նշվ. աշխ., էջ 44-45:

⁶⁰⁷ Տե՛ս **Smith Roger W.**, *Marcusen, Eric and Lifton, Robert Jay. Professional Ethics and the Denial of the Armenian Genocide* // In: *Remebrance and Denial. The Case of the Armenian Genocide* / Edited by Richard G. Hovannisian, Detroit, MI: Wayne State University Press, 1999, էջ 282-283:

լի արագ արձագանքեց Օսմանյան կայսրությունում տեղի ունեցող սպանություններին, քան Հիտլերի քաղաքականությանը հրեաների նկատմամբ կամ 1981 թ. Սալվադորի Էլ Մոզոտեի կոտորածներին: Ապա հեղինակը նշում էր, որ եթե համեմատենք Ռուանդայի ցեղասպանության լուսաբանման հետ, ապա 1915 թ. ամերիկյան լրագրողները թերահավատորեն էին մոտենում այն հարցին, թե իբր «համատարած սպանությունները» արդյունք էին երկար տարիների «ազգամիջյան լարվածության»: Գեսպան Մորգենթաուի օգնությամբ ամերիկյան մամուլը եկավ այն համոզման, որ «զլխավոր դահիճը» Հայոց ցեղասպանության պարագայում երկրի «քաղաքական ընտրախավն» էր: Այս տեսակետը չէր հնչում ամերիկյան մամուլում Ռուանդայում կես միլիոն մարդկանց սպանության դեպքում:⁶⁰⁸

Միաժամանակ ամերիկյան մամուլի ուշադրությունը Հայկական հարցի նկատմամբ Առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում պայմանավորված չէր ամերիկահայերի գործունեությամբ կամ նրանց ֆինանսական օժանդակությամբ: Մինչև 1890 թ. ԱՄՆ-ում ապրում էին ընդամենը 1.500 հայեր, իսկ հաջորդ քառորդ դարվա ընթացքում Միացյալ Նահանգներ էին ժամանում տարեկան 2.500-3.500 հայեր, սակայն նրանք նույնիսկ լավ անգլերեն չգիտեին ամերիկյան կյանքում լուրջ դերակատարություն ունենալու համար: Երբ 1915 թ. ամերիկյան շատ հարուստ դոնորներ կազմեցին Նյու Յորքում հայերի օգնության կոմիտեն, որևէ ամերիկահայ չէր գրանցվել այդ ցանկում:⁶⁰⁹ Պատերազմի տարիներին Միացյալ Նահանգներում ապրում էին մոտավորապես 100 հազար հայեր, որոնցից միայն 30%-ն էր ստացել ԱՄՆ-ի քաղաքացիություն: Նրանք հիմնականում ապրում էին փոքր համայնքներով հյուսիսարևելյան նահանգներում:⁶¹⁰

⁶⁰⁸ Տե՛ս **Leonard Thomas G.**, նշվ. աշխ., էջ 299-300:

⁶⁰⁹ Տե՛ս նույն տեղը, էջ 303-304:

⁶¹⁰ Տե՛ս **Peterson Merrill D.**, նշվ. աշխ., էջ 52:

ԳԼՈՒԽ 6

Ամերիկյան դիվանագիտության գործունեությունը գործերի ժամանակավոր հավատարմատար Հոֆման Ֆիլիպի և դեսպան Աբրամ Էլկուսի պաշտոնավարման ընթացքում

Դեսպան Մորգենթաուի բացակայության ընթացքում Օսմանյան կայսրությունում Միացյալ Նահանգների գործերի ժամանակավոր հավատարմատարն էր Հոֆման Ֆիլիպը: Մորգենթաուն նրան լավ մարդ էր համարում, որի հետ հաճելի էր աշխատել: Միաժամանակ իր հուշերում նշում էր, որ քաղաքական հարցերում նրա կարողությունները սահմանափակ էին:⁶¹¹ Ֆիլիպը շարունակում էր հայերի տեղահանությունների և կոտորածների մասին զեկույցներ ներկայացնել Պետքարտուղարությանը, սակայն դրանք այլևս մանրամասն տեղեկատվություն չէին պարունակում: Նրա հարաբերությունները թուրք ղեկավարների հետ բարձր մակարդակի վրա չէին: Դեսպանության գործունեությունն էլ ավելի դժվար դարձավ, երբ 1916 թ. փետրվարին իշխանությունները զրկեցին ամերիկացիներին ԱՄՆ-ի հյուպատոսությունների և դեսպանության միջև նամակագրական կապի հնարավորությունից:

1916 թ. փետրվարի 15-ին ԱՄՆ-ի պետքարտուղարին ուղղված գաղտնի հեռագրում Հոֆման Ֆիլիպը զեկուցում էր փետրվարի 12-ին Թուրքիայի արտաքին գործերի նախարարի հետ ունեցած իր հանդիպման մասին: Ջրույցի ժամանակ հավատարմատարը նշել էր, որ կառավարության կողմից իրագործվող «հակահայկական միջոցները վնասակար ազդեցություն են թողնում Թուրքիայի հանդեպ Միացյալ Նահանգների ժողովրդի ունեցած վերաբերմունքի վրա»: Ի պատասխան՝ նախարարը նշում էր, որ թուրքական կառավարությունը «ցանկանում է շահել Միացյալ Նահանգների բարյացակամությունը»: Նա հայտարարում էր «շատ արտահայտիչ կերպով, որ բոլոր արտաքսումները դադարեցված են և այլևս տեղի չեն ունենալու»: Պատասխանելով հավատարմատարի այն պնդմանը, որ թուրքական կառավարությունը «ճախողել է» կաթոլիկներին և բողոքականներին աքսորից ազատելու հարցը, նախարարը նշում էր, որ արտաքսումներ

⁶¹¹ Տե՛ս **Morgenthau Henry**, *Ambassador Morgenthau's Story*, էջ 249:

րի առաջին փուլում «իրահանգներ էին ուղարկվել տարբեր հայկական համայնքների միջև խտրականություն չդնելու մասին, սակայն հետագայում հրահանգներ էին ուղարկվել բողոքականներին և կաթողիկներին արտաքսումներից ազատելու մասին»: Նա ավելացնում էր, որ «աքսորված բողոքականներին և կաթողիկներին թույլ է տրվելու վերադառնալ»:

Ձեկուցագրի վերջում հավատարմատարը եզրակացնում էր, որ հայերի համար ստեծված իրավիճակը, որը մեծ հավանականությամբ հյուսիս-արևելքում ռուսական ռազմական հաջողությունների «արդյունքն էր», «դեռևս շարունակում է մնալ չկարգավորված»: «Որոշակի բարելավում այդուհանդերձ նկատվում է, և կառավարության գործողություններն այդ ուղղությամբ կարծես թե զգալիորեն դադարեցվել են», - նշում էր հավատարմատարը: Ֆիլիպը գրում էր նաև, որ «ամերիկյան օգնությունը, որն իրականացվում էր զգուշությամբ և ոչ պաշտոնական կերպով, շարունակում էր հասնել շատ ողջ մնացածների՝ առանց տեղական իշխանությունների միջամտության»:⁶¹²

Փետրվարի 16-ին պետքարտուղար Ռոբերտ Լանսինգը գրում էր Վաշինգտոնում Գերմանիայի դեսպան Բեռնարդոֆին, որ թեև օսմանյան կառավարությունը, ի պատասխան օգոստոսի 9-ի Կոստանդնուպոլսում Գերմանիայի դեսպանի կողմից ներկայացված բողոքի հայտագրի, խոստացել էր դադարեցնել հայերի դեմ իրագործվող ծրագրերը, սակայն Միացյալ Նահանգների կառավարությունը շարունակում էր մանրամասն տեղեկատվություն ստանալ հայերի՝ իրենց բնակավայրերից «համակարգված արտաքսման» ընթացքում կրած «շարունակական տանջանքների» մասին: Այդ տեղեկատվությունը, ըստ պետքարտուղարի, ստացվում էր «մեծապես անհատ, սակայն վստահելի աղբյուրներից», նույնիսկ տարբեր ազգությունների ներկայացուցիչներից և վկայում էր այն մասին, որ օսմանյան կառավարության խոստումները չեն կատարվում: Չնայած այն բանին, որ Պետքարտուղարությունը չէր ցանկանում ամերիկյան ժողովրդին ներկայացնել արձանագրված բոլոր «սարսափելի փաստերը», պետքարտուղարը հանձնարարել էր ԱՄՆ-ի գործերի ժամանակավոր հավատար-

⁶¹² St. u NA Microfilm Publications, Microcopy No. 353, Records of the Department of State Relating to Internal Affairs of Turkey, 1910-1929, Roll 43, No. 1576, NA/RG 59/867.4016/266:

մատարին մեկ անգամ ևս դիմել Բարձր Դռանը՝ «արդարության և մարդկայնության» զգացմունքներից ելնելով միջոցներ ձեռնարկելու «հայերին պատճառած վերքերը փոխհատուցելու» և «ապագայում ողջ մնացած հայերի վիճակը բարելավելու» ուղղությամբ: Պետքարտուղարը հորդորում էր Գերմանիայի կառավարությանն օգտագործել իր ողջ ազդեցությունը՝ «հայկական ողբերգությանը վերջ դնելու» նպատակով:⁶¹³

1916 թ. փետրվարին պատերազմի նախարար Էնվեր փաշան հրահանգ էր տվել, որ ԱՄՆ-ի հյուպատոսության պաշտոնական նամակները փոստային իշխանություններին ներկայացվեն չկնքված, որպեսզի թուրք զինվորական պաշտոնյաները դրանք ընթերցեին և գրաքննության ենթարկեին: Հալեպում հյուպատոս Ջեքսոնն այդ պայմաններում որոշել էր դեսպանությանը տեղյակ պահել յուրաքանչյուր զարգացման մասին պարզ և առևտրական բնույթի զեկուցագրերի միջոցով, որոնց բովանդակությունը կողավորված էր: Ջեքսոնը վստահ էր, որ թուրքերն այդպես էլ չէին կարողացել հայտնաբերել այդ փաստը: Նա գրում էր, որ անձնական լավ հարաբերություններ ուներ ինչպես Ջեմալ փաշայի, այնպես էլ հաճախակի Հալեպ այցելող Էնվեր փաշայի հետ, սակայն նրանց անհնար էր համոզել հրաժարվել հյուպատոսության փոստը ստուգելու քաղաքականությունից: Նույնիսկ Պետքարտուղարությունից ստացվող կնքված փոստը բացվում և ընթերցվում էր զինվորական պաշտոնյաների կողմից, թեև այն քաղաքական բնույթի որևէ ղեկավարության չէր պարունակում: Ջեքսոնի համոզմամբ՝ դա տեղի էր ունենում այն պատճառով, որ Թուրքիայի և Գերմանիայի իշխանությունները վստահ էին, որ Միացյալ Նահանգներն ուշ թե շուտ մտնելու էր պատերազմի մեջ, և չէին ցանկանում թույլ տալ, որ որևէ տեղեկատվություն հասներ դեսպանություն երկրի ներքին շրջաններից:⁶¹⁴

Նույն հարցի մասին Դեյվիսը գրում էր, որ Թուրքիայի՝ պատե-

⁶¹³ St' u *Unites States Official Records on the Armenian Genocide, 1915-1917* /Compiled with an introduction by Ara Sarafian/, էջ 453 (NA/RG 59/867.4016/268); NA Microfilm Publications, Microcopy No. 353, Records of the Department of State Relating to Internal Affairs of Turkey, 1910-1929, Roll 43, No. 794, NA/RG 59/867.4016/258b:

⁶¹⁴ St' u NA Microfilm Publications, Microcopy No. 353, Records of the Department of State Relating to Internal Affairs of Turkey, 1910-1929, Roll 46, NA/RG 59/867.4016/373, էջ 727-728:

րագմի մեջ մտնելուց անմիջապես հետո իշխանություններն արգելել էին հյուպատոսությանը ուղարկել կնքված նամակներ: Քանակցությու-
նների ընթացքում համաձայնություն ձեռք բերվեց, որ նամակները
կնքվեն Խարբերդում գրաքննություն անցնելուց հետո: Դեյվիսը նշում
էր, որ շատ նամակներ դեսպանություն աշղպես էլ չէին հասնում: Շատ
դեպքերում նամակների պատճեններն ուշացումով կրկին ուղարկ-
վում էին դեսպանություն: Կառավարության՝ փետրվարին տրված
հրահանգի համաձայն՝ Կոստանդնուպոլսում հավատարմագրված
ԱՄՆ-ի դեսպանության՝ կնքված նամակներ ուղարկելու արտոնու-
թյունը վերացվեց, և հյուպատոսությունը ստիպված էր բաց նամակներ
ուղարկել, որոնք այդուհետ գրաքննության էին ենթարկվելու մայրա-
քաղաքում: Գրաքննություն չանցած նամակները մնացին հյուպատո-
սությունում, մինչև, որդեսպանության ցուցումի համաձայն, այրվեցին
1917 թ. դիվանագիտական հարաբերությունների խզումից հետո:⁶¹⁵

Մարտի 4-ին հավատարմատար Ֆիլիպը Վաշինգտոն վերադար-
ձած դեսպան Մորգենթաուին ուղղված անձնական նամակում գրում
էր, որ դեսպանությունը կարող էր «հանգստանալ» տեղեկատվության
բացակայությունից, քանի որ թուրքական կառավարությունը որոշում
էր կայացրել արգելելու ԱՄՆ-ի հյուպատոսներին ուղարկել կնքված
փոստ: Միաժամանակ արտգործնախարար Հալի Սենթեշեն հավաս-
տիացրել էր Ֆիլիպին, որ դա ընդամենը «ժամանակավոր միջոց» էր
և հավասարապես վերաբերում էր Թուրքիայում հավատարմագրված
բոլոր չեզոք պետությունների ներկայացուցչություններին: Ֆիլիպը
գրում էր, որ Հալիի հետ լավ հարաբերություններ էին հաստատվել,
սակայն Պետքարտուղարությունից ստացվող «հայկական հանձնա-
րարականները» հեշտ չէր կատարել, քանի որ «շատ խոսելը» հայերի
մասին, որոնց «ցանկանում ես օգնել», անդրադառնում էր իրենց դեմ:
Հավատարմատարը նշում էր նաև, որ ԱՄՆ-ի քաղաքականության
իրագործումը Թուրքիայում դժվարացնում էր ամերիկյան միսիոնե-
րության գործունեությունը:

Թեև Հալիը մշտապես հավաստիացնում էր, որ հայկական ար-
տաքսումներին վերջ էր դրվել, սակայն Հալեպից և շրջակա շրջաննե-
րից տեղեկություններ էին ստացվում առ այն, որ հայերին շարունա-

⁶¹⁵ See *United States Official Records on the Armenian Genocide, 1915-1917* /Compiled with an introduction by Ara Sarafian/, էջ 618 (NA/RG 59/867.4016/392):

կում էին արտաքսել փոքր խմբերով: Հավատարմատարի կարծիքով հայերի հանդեպ իրականացվող քաղաքականությունը չէր դադարել: Ֆիլիպին նաև մտահոգում էր այն հանգամանքը, որ ներքին շրջաններում հայերի նկատմամբ համակրանք ունեցող միսիոներներին իշխանությունները լավ չէին վերաբերվում:⁶¹⁶

Մարտի 5-ին Ադրիանապոլսում ԱՄՆ-ի հյուպատոսական գործակալ Չարլզ Ալլենը զեկուցում էր Կոստանդնուպոլսում գլխավոր հյուպատոս Ռեվնոլդին շրջանի տեղական իշխանությունների ոչ մահմեդական բնակչության հանդեպ կիրառվող քաղաքականության մասին: Ըստ Ալլենի՝ այդ ժամանակ ոչ մահմեդական բնակչության հանդեպ հետապնդումները, թեև ավելի պակաս բարբարոսական մեթոդների կիրառմամբ, սակայն շարունակվում էին «Թրակիայի թուրքացման» ընդհանուր ծրագրի իրագործման և «չատ ավելի խելացի ու բարգավաճ հայրենակիցների» հաշվին մահմեդականների հարստացման շնորհիվ: Ալլենը համոզված էր, որ այս ծրագիրն իրականացվում էր Գերմանիայի «ղեկավարության» ներքո: Հայերի ընդհանուր արտաքսման հետևանքով տեղում մնացած սակավաթիվ հայերին վերջին մի քանի օրվա ընթացքում պարտադրում էին ընդունել իսլամ և ամուսնանալ թուրքերի հետ: Հակառակ պարագայում նրանց սպառնում էին աքսորել: Ըստ Ալլենի, քանի որ թուրքերն «ավելի կտրուկ և արդյունավետ միջոցների», այսինքն՝ ջարդի և տեղահանությունների կողմնակիցներ էին, հայ ազգի «անհետացման» այս մեթոդը, հնարավոր է, ծնունդ էր առել Գերմանիայում:⁶¹⁷

Իր հաջորդ զեկուցագրում (18 մարտի) Ալլենը գրում էր, որ տեղի իշխանությունների կրոնափոխության քաղաքականության գործադրման մեջ տեղի էին ունեցել փոփոխություններ. նրանք ոչ միայն այլևս չէին պարտադրում, այլև հայերին հնարավորություն էին տալիս պահպանելու իրենց կրոնն ու անունները: Ալլենը բացատրում էր այս փոփոխությունը որպես հնարավոր ավստրիական ճնշման արդյունք: Պարտադիր կրոնափոխության ընթացքում «Deutsch Orientbank»-ի գլխավոր հաշվապահ Վարդգես Վարդերեսյանը, թեև իր կյանքին սպառնացող մամակներ էր ստացել, սակայն հրաժարվել էր իսլամ

⁶¹⁶ Տե՛ս նույն տեղը, էջ 475-476 (LC/HM(Sr.)/Reel 8/74-75):

⁶¹⁷ Տե՛ս NA Microfilm Publications, Microcopy No. 353, Records of the Department of State Relating to Internal Affairs of Turkey, 1910-1929, Roll 6, էջ 1-3 (NA/RG59/867.00/786):

ընդունելուց: Ադրիանապոլսում Ավստրո-Հունգարիայի հյուպատոսը, ըստ Ալլենի տվյալների, զեկուցել էր այդ մասին դեսպանությանը, որի ճնշմամբ կառավարությունն իբր կտրուկ փոխել էր իր դիրքորոշումը: Ավստրիացի հյուպատոսի և մահանգապետի միջև տեղի ունեցած գրույցի ժամանակ վերջինս հայտարարել էր, որ իշխանությունները չեն պարտադրում հայերին. սովորաբար վերջիններս կամավոր են որոշում կայացնում: Ալլենը համոզված էր, որ տվյալ պահին Գերմանիան և Ավստրո-Հունգարիան այս հարցում հայտնվել էին դժվար իրավիճակում և փորձում էին «փրկել իրենց հեղինակությունը քրիստոնյաների աչքում»:⁶¹⁸

Մարտի 6-ին ԱՄՆ-ի գործերի ժամանակավոր հավատարմատարը գրում էր պետքարտուղարին, որ, համաձայն Հալեպում հյուպատոսից ստացված հաղորդագրության, «ներկայումս Հալեպի, Դամասկոսի և Դեյր-էզ-Չորի շրջաններում հայ փախստականների թիվը հասնում է 500 հազարի,⁶¹⁹ որոնք բոլորն էլ հասանելի են Հալեպի և Դամասկոսի առաքելությունների համար»:

Համաձայն Ամերիկյան խորհրդի գանձապահ Ուիլյամ Փիթի տեղեկատվության Թուրքիայի մյուս շրջաններում մնացել էին ոչ պակաս, քան 300 հազար հայեր, որոնք նույնպես օգնության կարիք ունեին, թեպետ չէին գտնվում «այդպիսի թշվառ վիճակում»: Փիթի կարծիքով՝ առկա ֆինանսական միջոցները բավարար չէին այդ մարդկանց ձմռան ընթացքում խնամելու համար. այդ ծրագիրն իրականացնելու համար անհրաժեշտ էր առնվազն մեկ միլիոն դոլար: Նա նշում էր, որ այդ ֆինանսական միջոցների ապահովման դեպքում միայն «հնարավոր կլինի քրիստոնյա ազգին փրկել բնաջնջումից»:⁶²⁰ Մարտի 21-ին ԱՄՆ-ի պետքարտուղարի տեղակալ Էլվի Էյդին Ջեյմս Բարտոնին է

⁶¹⁸ Տե՛ս նույն տեղը:

⁶¹⁹ Միաժամանակ կոտորածները շարունակվում էին: 1916 թ. մարտին Հալեպի փախստականների կառավարչի տեղակալ Արդուախադ Նուրի բեյը տեղեկացնում էր իր ղեկավարներին, որ շուրջ 35 հազար հայեր էին մահացել Բաբի և Մեսքենեի շրջանում, 10 հազար՝ Հալեպի մոտ գտնվող Կաթլիկում, 20 հազար՝ Թիբսիում, Աբու-հարիբում և Համամում, 35 հազար՝ Ռաս-ուլ-Այնում: Ապրիլին Ռաս-ուլ-Այնից արտաքսված հայերին կոտորեցին թուրքական և քրդական հրոսակախմբերը (Տե՛ս **Անտոնյան Արամ**, *Մեծ ոճիրը*, Եր., «Արևիկ», 1990, էջ 169):

⁶²⁰ Տե՛ս *United States Official Records on the Armenian Genocide, 1915-1917* /Compiled with an introduction by Ara Sarafian/, էջ 441 (NA/RG59/867.48/259):

ներկայացնում վերոնշյալ հեռագրի բովանդակությունը:⁶²¹

Մարտի 18-ին հավատարմատար Ֆիլիպը պետքարտուղարին էր փոխանցել Ուիլյամ Փիթի հաղորդագրությունը, որում վերջինս խնդրում էր այն փոխանցել նաև Մորգենթաուիին, Բրեյնին, Դոդջին և Բարտոնին: Փիթը գրում էր, որ «թարմ տեղահանությունների» հետևանքով «արմատախիլ» եղան փոքր առևտուրն ու գործարարությունը, ինչն այս «աշխատասեր» ժողովուրդը սկսել էր որոշ տեղերում զարգացնել ներկայիս «դժվարին պայմաններում»: Այս հանգամանքը պահանջում էր օգնության «բաշխման նոր կենտրոնների բացումը»: Գերմանիայի դեսպանության հավանությամբ գերմանացի միսիոներները նույնպես պատրաստ էին օժանդակելու բաշխման հարցում, թեև նրանք հնարավորություն չունեին ֆինանսական միջոցներ հայթայթելու Գերմանիայում: Թեև Կոստանդնուպոլսի հայ պատրիարքն անկարող էր օժանդակել օգնության բաշխման հարցում, այնուհանդերձ, զգալի միջոցներ էր կարողացել հավաքել հայկական աղբյուրներից: Ըստ Փիթի՝ աքսորյալների համար այդ ժամանակ ամենամեծ վտանգը քաղցն էր: Վերջին ժամանակներում ստացված 40 հազար դոլարն արդեն իսկ ծախսվել էր:⁶²²

Մարտի 28-ին հավատարմատարը զեկուցում էր պետքարտուղարին, որ, չալեպում հյուպատոսից ստացված տեղեկատվության համաձայն, մարտի 15-ին քաղաքից աքսորվել էին 800 հայեր: Այդ հարցը քննարկելու նպատակով Ֆիլիպը հանդիպել էր Թալեաթի հետ: Վերջինս նշել էր, որ չի կարող պաշտոնապես քննարկել Հայկական հարցը, սակայն պատրաստ է այն քննարկելու «անպաշտոն և բարեկամական մթնոլորտում»: Ֆիլիպը փոխանցել էր Թալեաթին Պետքարտուղարության հանձնարարականը՝ օգտագործելու իր ազդեցությունը հայերի արտաքսումը դադարեցնելու համար: Թալեաթը պատասխանել էր, որ անհատների կողմից Պետքարտուղարությանը փոխանցվող տեղեկատվությունը չափազանցված է, իսկ «հայերի շրջանում տարվող արտաքին միսիոներական գործունեությունը քաջալերում է նրանց հակակառավարական միտումները»: Նա նշել էր, որ կառավարության հրահանգների իրագործման ընթացքում «չստանան հայեր էին տուժել», բայց իրականում այդ հրահանգ-

⁶²¹ Տե՛ս նույն տեղը, էջ 442 (NA/RG59/867.48/259):

⁶²² Տե՛ս նույն տեղը, էջ 443 (NA/RG 59/867.48/266):

ները վերաբերում էին հայկական «գաղտնի կոմիտեների անդամներին և նրանց ընտանիքներին», սակայն քստրովել էին նաև «շատ ուրիշներ, որոնց պաշտպանությունը հնարավոր չէր եղել ապահովել»։ Թալեաթը հաստատել էր նաև, որ իր կողմից տրված հրահանգները՝ «հետագա արտաքսումներն ու հետապնդումները դադարեցնելու մասին, կարծես թե պատշաճ կերպով չեն իրագործվում կամ, հնարավոր է, դիտավորյալ կերպով սխալ են հասկացվում ներքին շրջանների որոշ պաշտոնյաների կողմից»։ Թալեաթը խոստանում էր արտաքսումը դադարեցնելու և քստրովածներին հնարավորինս վերադարձնելու մասին նոր հրահանգներ ուղարկել Հալեպ։ Նախարարը նշեց նաև, որ հստակ հրահանգներ էր տվել «հարկադիր կրոնափոխությունը» կանխելու վերաբերյալ, ինչպես նաև չընդունելու հայերի կողմից մահմեդական դառնալու մասին մեծ թվով դիմումները։ Ջրույցի ավարտին Թալեաթը նշել էր, որ կառավարության «հիմնական նպատակը հեղափոխականներին պատժելն էր, ինչն արդեն իսկ իրականացվել է», ապա ավելացրել, որ իշխանությունները կենդանի մնացածներին «վնասելու» որևէ ցանկություն չունեին և, որտեղ հնարավոր լինի, օգնություն կցուցաբերեն։ Նա նաև խոստանում էր շարտաքսել Կոստանդնուպոլսի հայ բնակչությանը։

Հոֆման Ֆիլիպի կարծիքով՝ թուրքական կառավարությունը գտնվում էր այնպիսի ֆինանսական դժվարությունների առջև, որ չէր կարող համապատասխան օգնություն ցուցաբերել իր իսկ կողմից կիրառված «դաժան մեթոդներից» ողջ մնացած հայերին։ Ըստ հավատարմատարի՝ թուրքական կառավարության դիրքորոշումն այս հարցում գնալով ավելի էր թուլանում։ Նա անկարող էր ու չէր էլ ցանկանում հետաքննել և պատժել քրիստոնյաների նկատմամբ «անօրինական գործողություններ» իրականացնողներին։ Հավատարմատարը եզրակացնում էր, որ ակնհայտ էր, որ ողջ մնացածներին փրկելու համար հարկավոր էր անմիջապես արտասահմանից ֆինանսական օժանդակություն կազմակերպել։⁶²³

Չնայած Միացյալ Նահանգները դժգոհ էր երիտթուրքական կառավարության արտոնությունների միակողմանի վերացումից, սա-

⁶²³ Տե՛ս նույն տեղը, էջ 484-485 (NA/RG 59/867.4016/271); US Department of State. *Papers relating to the Foreign Relations of the United States. 1916 Supplement. The World War*, էջ 849-850:

կայն չէր ցանկանում վատթարացնել երկկողմ հարաբերությունները: Միաժամանակ երիտթուրքական իշխանությունները պարտավորվել էին ապահովել ԱՄՆ-ի քաղաքացիների անվտանգությունը: 1916 թ. ապրիլի 24-ին Ֆիլիպը զեկուցում էր, որ Թուրքիայի արտաքին և ներքին գործերի նախարարները հրահանգել են նահանգային իշխանություններին, որ վերջիններս «բոլոր դեպքերում խուսափեն ամերիկացիների հետ ընդհարումներից»: Իր հերթին Ֆիլիպը հրահանգել էր Օսմանյան կայսրությունում գտնվող ԱՄՆ-ի բոլոր հյուպատոսություններին, որ պահպանեն բարեկամական հարաբերությունները տեղական իշխանությունների հետ: Դրանից հետո Բեյրութում, Խարբերդում և Չմյուռնիայում հյուպատոսությունները զեկուցում էին դեսպանությանը տեղական իշխանությունների հետ իրենց հաստատած բարեկամական հարաբերությունների մասին:⁶²⁴

Մայիսի 4-ին հավատարմատարը Կոստանդնուպոլսում ամերիկյան գանձապահ Փիթի՝ աքսորյալ հայ բնակչությանն օգնություն ցուցաբերելու մասին զեկույցը փոխանցում է Պետքարտոտարությանը: Փիթը նշում էր, որ Հալեպում օգնություն էր տրամադրվում 135 որբ երեխաների, ինչպես նաև հաց է մատակարարվում հայ ընտանիքներին ինը տարբեր կետերում, որոնք ներառում էին Դամասկոսը, Համան, Ռաքքան, Քիլիսը և Հալեպից դուրս գտնվող այլ վայրեր: Այս ուղղությամբ շրջանում գործում կերպով աշխատում էին Միացյալ Նահանգների և Գերմանիայի հյուպատոսները, սակայն միջոցները բավարար չէին բոլորին բաժանելու համար, այդ պատճառով շատ տեղերում մարդիկ միայն խոտով էին սնվում: Սննդի բացակայությունից մարդիկ մահանում էին հարյուրներով: Հալեպի օգնության կենտրոնն անսական հազար թուրքական ֆունտ ծախսելու կարիք ուներ: Նույնքան գումար էր հարկավոր Այնթապում գտնվող 450 հայերի համար: Ծանր վիճակում էին արտաքսման վտանգի տակ գտնվող Մարաշի տասը հազար հայերը: Փորձ էր կատարվել արդյունաբերական օգնություն տրամադրելու ինչպես մահմեդականներին, այնպես էլ քրիստոնյաներին, սակայն կառավարությունը թույլ չէր տվել իրագործել այդ ծրագիրը: Քրիստոնյաներին արգելված էր զբաղվել գործարարությամբ:

Ադանայում և Ազոնոյում վիճակը նման էր: Այստեղ գտնվող երե-

⁶²⁴ Տե՛ս NA/RG59/711.673/70:

խաներին օգնություն հասցնելու համար հարկավոր էր ամսական 500 թուրքական ֆունտ: Տարսոնի կայարանը հյուսիսից այստեղ աքսորված հայերի ճամբարն էր: Բոլոր ճանապարհների եզրերին մեծ թվով աքսորյալներ էին կուտակված: Ըստ կառավարության տվյալների՝ Տարսոնով անցել էին 92 հազար աքսորյալներ, թեև իրական տվյալները շատ ավելի մեծ էին: Շրջանում տիֆի համաճարակ էր նկատվել: Այստեղ հարկավոր էր 500 թուրքական ֆունտ:

Կոնիա քաղաքի շրջանի երկու հազար որբ երեխաների համար հարկավոր էր ամսական 150 թուրքական ֆունտ: Սվազում այդ ժամանակ 25 հազար չքավոր աքսորյալներ կային՝ հիմնականում կանայք և երեխաներ, որոնց կարիքները հոգալու համար 600 թուրքական ֆունտ էր հարկավոր: Մարզվանի և Կեսարիայի համար հարկավոր էր ամսական 500, Ջմյուռնիայի համար՝ 400, Խարբերդի համար՝ 400, Բուրսայի համար՝ 200 թուրքական ֆունտ: Փիթը նշում էր, որ տանջանքների մեջ հայտնված մարդկանց տոկոսությունը բարձր էր, ինչը բացատրվում էր քրիստոնյա հավատքի ուժով:⁶²⁵ Մայիսի 11-ին Էլվի Էյոյին փոխանցում է ներկայացված տեղեկատվությունը Ջեյմս Բարտոնին:⁶²⁶

Մայիսի 26-ին Թիֆլիսում ԱՄՆ-ի հյուպատոս Ռիլլուրբի Սմիթը պետքարտուղարին է ներկայացնում միսիոներ Մակկալլամի զեկույցը՝ 1916 թ. ապրիլի 15-ից մայիսի 15-ը Վանում կատարած օգնության աշխատանքների մասին: Վերջինս գրում էր, որ միսիոներ Գրեյսիի հետ Վան էր ժամանել ապրիլի 15-ին, իսկ միսիոներ Վիլսոնը մնացել էր Խոյուն (Պարսկաստան) եզներ, կովեր, զոմեշներ, սերմացու և այլ մթերք գնելու ու Վան տեղափոխելու նպատակով: Վան քաղաքի լավագույն տների մեծ մասը հրդեհվել էր, իսկ մնացած տների դռներն ու պատուհաններն օգտագործվել էին որպես վառելիքային: Քաղաքը փլատակների մեջ էր: Նույն իրավիճակը գյուղերում էր: Վանի ինչպես ռուսական քաղաքացիական, այնպես էլ զինվորական իշխանությունները «չափազանց բարեկամաբար» էին ընդունել ամերիկացի միսիոներներին և ստեղծել բոլոր պայմանները, որոնք անհրաժեշտ էին նրանց բարեգործական աշխատանքը կազմակերպելու համար:

⁶²⁵ St'u NA Microfilm Publications, Microcopy No. 353, Records of the Department of State Relating to Internal Affairs of Turkey, 1910-1929, Roll 51, NA/RG 59/867.48/284, էջ 1-3:

⁶²⁶ St'u *Unites States Official Records on the Armenian Genocide, 1915-1917* /Compiled with an introduction by Ara Sarafian/, էջ 499 (NA/RG 59/867.48/284):

1915 թ. ապրիլին տեղի ունեցած ինքնապաշտպանական մարտերի և ջարդի պատճառով հացահատիկը չէր հավաքվել: Գաշտերում եղած հացահատիկից կարելի էր հաց ստանալ, սակայն այն հնարավոր չէր օգտագործել որպես սերմացու:

Օգնության մյուս կոմիտեների հետ խորհրդակցության ընթացքում որոշվել էր աշխատանքներ իրականացնել Հայոց ձորում: Այն շատ գեղեցիկ և պտղաբեր դաշտավայր էր, որտեղ 40 գյուղեր կային: Չնայած այն բանին, որ դրանք բոլորն էլ փլատակների մեջ էին, մարդիկ սկսել էին վերադառնալ այդ գյուղեր: Երբ միսիոներները սկսեցին ստանալ Պարսկաստանում գնված անասունները, միսիոներ Գրեյսին և ԱՄՆ-ից ժամանած մի խումբ կամավորներ մեկնեցին գյուղեր և սկսեցին հաշվառում կատարել՝ ամեն երկու ընտանիքին մեկ գույգ եզներ տրամադրելու նպատակով: Որոշվել էր, որ կովերը տրվելու էին հիմնականում այրիներին, որբերին և փոքր երեխաներ ունեցող ընտանիքներին: Այն ընտանիքներին, որոնց տրվեցին եզներ, տրամադրվեցին նաև գութաններ, թիակներ և մանգաղներ:

Հաշվետու ամսվա ընթացքում 600 ընտանիք ստացել էր 400 եզ, այրիներ, որբեր, հաշմանդամներ և փոքր երեխաներ ունեցող 200 ընտանիք՝ 100 կով, 75 ընտանիք՝ 50 գոմեշ: Վանի նահանգապետը տրամադրել էր միսիոներներին 10 հազար ռուբլի, որպեսզի վերջիններս հանձնեն այդ գումարը գյուղացիներին՝ սերմացու զնելու համար:

Վանը նաև բերքատու այգիների և խաղողի շրջան էր: Շատ այգիներ մնացել էին անտեր, քանի որ թուրքերը չէին կարող վերադառնալ, իսկ հայերը, հնարավոր է, մահացել էին: Միսիոներները 2-5 ռուբլի էին վճարել յուրաքանչյուր այգու համար՝ ծառերը խնամելու և ջրելու նպատակով: Եթե այգու տերը վերադառնար, այն տրվելու էր նրան, իսկ մինչ այդ ստացված բերքն օգտագործվելու էր օգնության նպատակներով: Նահանգապետի թույլտվությամբ միսիոներները նաև վարձել էին մեծ թվով հայերի՝ ամերիկյան առաքելությունում աշխատելու, ինչպես նաև քաղաքի փողոցները մաքրելու համար: Ռուսական իշխանությունները վերականգնողական զգալի աշխատանքներ էին կատարում Վանում: Այստեղ գործող հայկական կոմիտեներն աշխատանք էին տանում փախստականներին վերադարձնելու ուղղությամբ, որին նպաստում էր նաև ռուսական կառավարության բա-

րենպաստ դիրքորոշումը:⁶²⁷

1916 թ. հունիսի 6-ին ամերիկացի միսիոներ Վիլսոնը Թավրիզից գեկուցում էր Թիֆլիսում ԱՄՆ-ի հյուպատոս Սմիթին Կովկասի օգնության կոմիտեի կողմից կատարված աշխատանքների մասին: Նա գրում էր, որ հաղթանակած ռուսական բանակի հսկողության տակ գտնվող Վանի և Ալաշկերտի բերքաբեր դաշտավայրերը կարող էին սնունդով ապահովել հազարավոր ընտանիքների: Սկսած զարման ամիսներից՝ նկատվում էր վերադարձող փախստականների հոսք Կովկասից և Պարսկաստանից դեպի այս շրջանները: Ռուսաստանի կառավարությունն անվճար գնացք էր տրամադրում վերադարձող փախստականների համար դեպի Ջուլֆա, որտեղից նրանք Խոյով գալիս էին դեպի Վան: Իր հերթին Կարմիր խաչը նրանց ճանապարհին ապահովում էր սնունդով և ապաստարանով: Վերադարձող այս քրիստոնյաները, ըստ միսիոներ Վիլսոնի, ամեն բանի կարիք ունեին, սակայն առաջին հերթին նրանց տրամադրվելու էին գյուղատնտեսական գործիքներ, սերմացու և անասուններ: Վիլսոնը մնացել էր Խոյում, որը մոտ էր գտնվում դրամական միջոցներ տրամադրող կենտրոններին՝ Թիֆլիսին և Թավրիզին, իսկ Մակկալամն ու Գրեյսին մեկնեցին Վան՝ օգնության բաշխումը կազմակերպելու համար: Բացի Վիլսոնի կողմից գնված եզներից, զոմեշներից, կովերից, գյուղատնտեսական գործիքներից և սերմացուից՝ Կովկասից Վան էին ուղարկվել 30 հազար անկողնային պարագաներ և հագուստ: Վիլսոնը գրում էր նաև Խոյի Ամերիկյան կարմիր խաչի հիվանդանոցի գործունեության մասին, որտեղ Պիտսբուրգից ժամանած բժիշկներ Հազլետը և Ֆլոյդ Սմիթը ամերիկացի և ռուս բուժքույրերի օժանդակությամբ բուժօգնություն էին ցուցաբերում Բիթլիսում վիրավորված ռուս և հայ զինվորներին:⁶²⁸

Հունիսի 16-ին պետքարտուղար Լանսինգը գրում էր ԱՄՆ-ի հավատարմատարին, որ, ստացվող տեղեկությունների համաձայն, Միջազգետքում հայ աքսորյալների վիճակն օրեցօր վատթարանում էր. մեծ թվով մարդիկ էին մահանում քաղցից և հիվանդություններից, իսկ երեխաներին վաճառում էին շուկաներում: Պետքարտուղարը հանձնարարում է պարզել իրավիճակը, և եթե այն համապատասխաներ

⁶²⁷ Տե՛ս Նույն տեղը, էջ 505-507 (NA/RG 59/867.48/340):

⁶²⁸ Տե՛ս NA Microfilm Publications, Microcopy No. 353, Records of the Department of State Relating to Internal Affairs of Turkey, 1910-1929, Roll 51, NA/RG 59/867.48/341, էջ 1-4:

իրականությամբ, պահանջել թուրքական կառավարությունից «մարդկության անունից թեթևացնել այդ ազգի ողջ մնացածների վիճակը»:⁶²⁹

Հունիսի 30-ին Գամասկոսում Գերմանիայի հյուպատոս Լոյովեդ Հարդեզը գրում էր Կոստանդնուպոլսում գերմանական դեսպանությանը, որ թուրքական իշխանությունները գրեթե բոլոր փախստական հայերից պահանջում էին կրոնափոխ լինել և դառնալ մահմեդական: Հյուպատոսը համոզված էր, որ հայերին «ապագայնացնելու» և դրանով քրիստոնյա տերությունների հետ հարաբերությունները խզելու փորձերն ավելի էին խորացնելու Թուրքիայի հանդեպ բացասական կարծիքը Եվրոպայում և Միացյալ Նահանգներում:⁶³⁰

Համաձայն 1916 թ. հուլիսի 3-ին Կոպենհագենում ԱՄՆ-ի դիվանագիտական ներկայացուցչության ղեկավար Մորիս Իգանի կողմից Պետքարտուղարությունում ստացված միսիոներ Մարդենի գեկույցի՝ 1915 թ. Մարզվանի դեպքերից մեկ տարի անց ամերիկյան հաստատություններն աշխատում էին հիմնականում հույների շրջանում: 1916 թ. մայիսի 10-ին Մարզվանի ամերիկյան հաստատությունների շինությունները շրջապատվեցին ոստիկանների կողմից, իսկ այստեղ ժամանած նահանգապետը հայտարարեց, որ ամերիկացիների ողջ ունեցվածքը առգրավվելու է կառավարության կողմից, ամերիկացիները լքելու են քաղաքը, իսկ մնացած հայերն աքսորվելու են: Ի վերջո, միսիոներներին դուրս են բերում քաղաքից զինվորների ուղեկցությամբ: Միաժամանակ ամերիկացիները կարողացել էին համոզել իշխանություններին դալոցում ուսանող հայ աղջիկներին թողնել քաղաքում՝ իրենց մտերիմ ընկերների ընտանիքներում: Հիվանդանոցն առգրավվեց զինվորների կողմից: Այդուհետ հիվանդանոցում պետք է աշխատեին զինվորական բժիշկները: Ութ օր ճամփորդելուց հետո ամերիկացիների խումբը հասել էր Կոստանդնուպոլիս: Այստեղ պարզվել էր, որ նույն բախտին էին արժանացել նաև Սվազի և Կեսասիայի ամերիկյան հաստատությունները:

Այդ օրերին դեսպանությունը զբաղված էր կայսրության ներքին շրջաններում մնացած ԱՄՆ-ի քաղաքացիների անվտանգության

⁶²⁹ Տե՛ս US Department of State. *Papers relating to the Foreign Relations of the United States. 1916 Supplement. The World War*, էջ 852 (NA/RG 59/867.4016/287a):

⁶³⁰ Տե՛ս *The Armenian Genocide. Evidence from the German Foreign Office Archives, 1915-1916* /Edited by Wolfgang Gust, էջ 600-601:

ապահովմամբ: Մարզվանի միսիոներները Կոստանդնուպոլսից շարունակում էին զբաղվել Մարզվանի քոլեջում մնացած հայ ուսուցիչների, ինչպես նաև ուսանող աղջիկների հարցերով: Այսպես՝ դպրոցի տնօրենը և տիկին Քեյջը հատուկ հանդիպում էին ունեցել Թալեսթի հետ՝ աղջիկներին Կոստանդնուպոլիս բերելու և հետագայում Միացյալ Նահանգներ փոխադրելու նպատակով:

Ըստ Մարդենի՝ հայերի արտաքսումը դեռևս շարունակվում էր, և եթե առաջ այն կրում էր համատարած բնույթ, ապա տվյալ պահին աքսորում էին անհատներին հիմնականում ծովափնյա քաղաքներից: Կոստանդնուպոլսում և Ջնուռնիայում մոտավորապես մնացել էին 300 հազար հայեր, 200 հազարը գաղթել էին Ռուսաստան և գտնվում էին Կովկասում: Կոստանդնուպոլսում տարածվող տեղեկությունների համաձայն՝ իրենց բնակավայրերից աքսորված 600-800 հազար հայերը սպանվել կամ մահացել էին արտաքսման ընթացքում: Հայերի ողջ ունեցվածքն առգրավվել էր կառավարության կողմից:

Ըստ Մարդենի՝ Մարզվանի նահանգապետն ու պարետը հայերից կաշառք էին ստացել իսլամ ընդունելու դիմաց նրանց արտաքսման չենթարկելու համար՝ յուրաքանչյուրը 8-ից 10 հազար թուրքական լիրայի չափով: Մարզվանի նահանգապետն այդ օրերին մի խումբ մահմեդականների ասում էր. «Դուք հավ սպանելուց չեք տարակուսում, իսկ արդյոք դուք կտարակուսե՞ք ձեր երկրի թշնամիներին սպանելուց: Հավն ավելի է արժանի հարգանքի, քան նրանք»:⁶³¹

Խարբերդում հյուպատոս Դեյվիսը գրում էր, որ հայերի տեղահանության շրջանում հյուպատոսության համար աշխատանքի նոր ոլորտներ բացվեցին՝ ԱՄՆ-ում բնակվող հայերին իրենց ազգականների մասին տեղեկատվության տրամադրում, ինչպես նաև նրանց կողմից Պետքարտուղարության և դեսպանության միջոցով որպես օգնություն ֆինանսական միջոցների ստացում և հանձնում:⁶³²

Խարբերդում հայերին օգնություն ցուցաբերելու ուղղությամբ հյուպատոսության և միսիոներների կատարած աշխատանքը շուտով հայտնի է դառնում ողջ նահանգում: Օգնություն ստանալու նպատակով շատ հայեր էին գալիս Խարբերդ Մամուրեթ-ուլ-Ազիզ նահանգի

⁶³¹ Տե՛ս *United States Official Records on the Armenian Genocide, 1915-1917* /Compiled with an introduction by Ara Sarafian/, էջ 525-526 (NA/RG 59/867.4016/292):

⁶³² Տե՛ս նույն տեղը, էջ 661-662 (NA/RG 59/867.4016/392):

այլ քաղաքներից և գյուղերից: Շատերը եկան նաև Բալուխ շրջանից, որտեղ 1916 թ. սկզբից հաստատվել էր թուրքական կովկասյան բանակի սպայակույտը: Բալուխ տեղահանվեց ինչպես հայ, այնպես էլ թուրք բնակչությունը: Այս հանգամանքով պայմանավորված՝ կարիքավոր հայերի թիվը զգալիորեն մեծացավ, սակայն միսիոներները կարողանում էին ապահովել նրանց հացով և անհրաժեշտ հագուստով: Օգնության աշխատանքը կազմակերպում էր հայ բողոքական քահանա պատվելի Տրդատ Թամզարյանը:⁶³³

1916 թ. ամռան ամիսներին Դերսիմի քրդերի մոտ թաքնված հայերին հաջողվեց փախչել Ռուսաստան, և նման հնարավորություն ստեղծվեց նաև Խարբերդի և Մամուրեթ-ուլ-Ազիզի հայերի համար: Այդ հարցում նրանց օգնեցին Դերսիմի քրդերը, որոնք որոշակի դրամական փոխհատուցման դիմաց, որը նրանց տրամադրվում էր նաև հյուպատոսության կողմից, մեծ թվով հայեր էին տարել Դերսիմ, որտեղից էլ նրանք անցնում էին Ռուսաստանի սահմանը:⁶³⁴ Ամերիկացի միսիոներները նույնպես իրենց նպաստն ունեցան նման ճանապարհով հայերին փրկելու գործում: Այսպես, երբ Հենրի և Թեյսի Ատկինստոնները լսել էին Դերսիմի՝ իրենց ծանոթ քուրդ ղեկավարից, որ նա պատրաստ էր 40 թուրքական ֆունտով տեղափոխելու ցանկացողներին Դերսիմ, որոշեցին նման ձևով օգնել հայերին: Նրանք ապահովում էին հայերին քրդական հագուստով և մեկուկես տարվա ընթացքում կարողացել էին Դերսիմ ուղարկել հարյուրավոր հայերի:⁶³⁵

Մինչև 1917 թ. փետրվարը պաշտոնավարած նահանգապետ Սաբիթ բեյը, որը ծնունդով Դերսիմից էր, արգելքներ չէր ստեղծում այդ ծրագրի իրագործման համար: Հնարավոր է, ըստ Դեյվիսի, նա քրդերից որոշակի տոկոս էր ստանում:⁶³⁶

1916 թ. հուլիսի 21-ին Հոֆման Ֆիլիպը պետքարտուղարին է ներկայացնում Փիթի գաղտնի զեկուցագիրը, որը հիմնված էր Հալեպում գտնվող գերմանացի միսիոներների վկայությունների վրա: Համաձայն այդ տեղեկատվության՝ Դեյր-էզ-Ջորում և Եփրատի ափին

⁶³³ Տե՛ս նույն տեղը, էջ 669 (NA/RG 59/867.4016/392):

⁶³⁴ Տե՛ս նույն տեղը, էջ 672 (NA/RG 59/867.4016/392):

⁶³⁵ Տե՛ս **Moranian Suzanne E.**, նշվ. աշխ., էջ 192:

⁶³⁶ Տե՛ս *United States Official Records on the Armenian Genocide, 1915-1917* /Compiled with an introduction by Ara Sarafian/, էջ 674-675 (NA/RG 59/867.4016/392):

գտնվող մյուս վայրերում ու անապատում հավաքված հազարավոր աքսորյալ հայերը գտնվում էին վրաններում, շարժվող քարավաններում, գետով իջնող նավակներում: Բոլորն էլ «թշվառ» վիճակում էին: Կռառվարությունը միայն մի քանի տեղ էր նրանց սնունդ տրամադրում, այն էլ՝ ոչ պարբերաբար և չնչին քանակությամբ: Մարդիկ խտաբույսեր, մորեխներ, սասկած կենդանիներ և նույնիսկ մահացած մարդկանց դիակներ էին ուտում: Մահացածության տոկոսը քաղցից և հիվանդություններից շատ բարձր էր: Այս իրավիճակի պատճառն իշխանությունների վերաբերմունքն էր, որոնք մարդկանց կիզիչ արևի տակ կամ այն կողմ էին քշում առանց սննդի և ջրի: Իրավիճակի ժամանակավոր բարելավում կարող էին ունենալ միայն նրանք, որոնք դեռևս հնարավորություն ունեին կաշառելու պաշտոնյաներին: «Թշվառ և անհույս իրավիճակը» ստիպում էր շատերին դիմել ինքնասպանության: Ձեկուցագրում ասվում էր, որ իշխանությունների քաղաքականության նպատակը այս մարդկանց «ոչնչացումն էր», սակայն որոշում էր կայացված այն ներկայացնելու որպես բնական պատճառների հետևանք: Փիթի կարծիքով՝ վատթարացող վիճակը փրկելու միակ հնարավորությունն արտասահմանցիներից կազմված օգնության կոմիտեների կազմակերպումն էր:⁶³⁷

Նույն օրը Ֆիլիպը զեկուցում էր, որ աքսորված հայերի վիճակը Միջագետքում «ողբալի է»: Այս չքավոր ժողովուրդը պաշտոնյաների կողմից անապատի մի վայրից մյուսն էր տեղափոխվում: Շատերը մահանում էին համաճարակներից և քաղցից: Վստահելի աղբյուրների համաձայն՝ մեկ ամիս առաջ ներքին գործերի նախարարությունը հրահանգել էր տեղական իշխանություններին ձերբակալել և կրկին Միջագետք վերադարձնել աքսորից Հալեպ կամ Ադանա փախած մեծ թվով տղամարդկանց, կանանց և երեխաների, որոնք աշխատանքի էին անցել Բաղդադի երկաթուղու շինարարության վրա գերմանացի տնօրենների օգնությամբ:

Թուրքիայի արտաքին գործերի նախարարը հաստատել էր հավատարմատարի տեղեկատվությունը՝ միաժամանակ նշելով, որ դա արվել էր որևէ վայրում հայերի «կուտակումը» բացառելու նպատակով: Նախարարն այնուհետև նշում էր, որ այդ մարդիկ թաքնվում էին՝ մտա-

⁶³⁷ Տե՛ս նույն տեղը, էջ 519-520 (NA/RG 59/867.48/356):

ծելով, որ գերմանացիների մոտ աշխատանքը իրենց կարող էր փրկել արքայից: Ըստ հավատարմատարի՝ խոսքը 9-11 հազար մարդկանց մասին էր, որոնց մեծ մասը, համաձայն ամերիկացի և գերմանացի միսիոներների տվյալների, ենթարկվել էր ջարդի: Այդ ժամանակ Ադանայի նահանգապետը պատերազմի նախարարի աներձագն էր, 1915 թ. դեպքերի ժամանակ Վանի նահանգապետն էր և հայտնի էր իր հակահայկական կեցվածքով:

Հայերի վիճակի առնչությամբ ԱՄՆ-ի հավատարմատարը հանդիպել էր Գերմանիայի դեսպանի հետ, որի կարծիքով թուրքական կառավարության վրա այս հարցում ճնշման գործադրումը կարող էր ավելի վատթարացնել հայերի վիճակը: Ըստ Ֆիլիպի՝ ստեղծված իրավիճակի բարդությունը պայմանավորված էր նաև նրանով, որ թուրքական կառավարության ազդեցիկ անդամները դեմ էին, որ օտարերկրացիներն օգնության աշխատանք իրականացնեին արքայալների շրջանում՝ փորձելով ամեն կերպ խափանել «այդ ազգի վերականգնումը»:⁶³⁸

1916 թ. հուլիսի 26-ին Ֆիլիպը գեկուցում էր, որ մինչև տվյալ պահը Թուրքիայի արտգործնախարարը չէր պատասխանել դեսպանության՝ Սիրիայի և Լիբանանի բնակիչներին օգնություն ցուցաբերելու առաջարկին: Նա նշում էր, որ Ջեմալ փաշան այդ հարցի վերաբերյալ դեռ պատասխան չէր տվել: Սակայն այսօր՝ երկար գրույցի ընթացքում, նա ասել էր, որ կառավարությունը չէր կարող թույլ տալ, որ «չեզոք հանձնաժողովն» օգնություն ցուցաբերեր այդ մարդկանց: Ըստ նախարարի՝ Ջեմալ փաշան հերքում էր դեսպանության կողմից Սիրիայում և Լիբանանում մարդկանց վիճակի մասին ստացվող տեղեկատվությունը՝ հայտարարելով, որ Բեյրութ և Լիբանան էր ուղարկել երեքուկես միլիոն բուշել ցորեն: Ջեմալը նաև կառավարությանն էր դիմել՝ շրջանի աղքատ մարդկանց բաժանելու նպատակով 10 հազար ֆունտ ստանալու համար:

Արտգործնախարարը նշում էր, որ ինչպես Սիրիայում և Լիբանանում, այնպես էլ Կոստանդնուպոլսում կամ Չմյուռնիայում մարդիկ «որոշ տառապանքներ են» կրում, բայց որ «որևէ մեկը մահանա քաղ-

⁶³⁸ Տե՛ս նույն տեղը, էջ 521-522 (NA/RG 59/867.4016/291); US Department of State. *Papers Relating to the Foreign Relations of the United States. 1916 Supplement. The World War*, էջ 852-853:

ցից», մման բան լինել անգամ չէր կարող: Նախարարը նշում էր, որ ինչպես ինքը, այնպես էլ կառավարության մյուս անդամները համոզված էին, որ Միացյալ Նահանգներում մման «տագնապալի տեղեկություններ» էին տարածում Անտանտի տերությունները երկու նպատակով: Առաջին՝ մման կեղծ տեղեկություններ տարածելով՝ նրանք ենթադրում էին, որ Թուրքիան կիրաժարվի օգնության ցուցաբերումից և դրանով իսկ կվատթարացնի իր հարաբերությունները Միացյալ Նահանգների հետ: Երկրորդ՝ եթե Թուրքիան համաձայնի ընդունել այդ օգնությունը, Անտանտի տերությունները կօգտագործեն այդ հանգամանքը իրենց օգտին, իսկ Սիրիայի և Լիբանանի բնակչությունը նրանց կհամարի «իրական բարերարներ»: Նախարարը համոզված էր, որ Անտանտի տերություններն ամեն ինչ անելու են Սիրիայում ապստամբություն կազմակերպելու նպատակով: Այնուհետև նա նշում էր, որ ինչպես Գերմանիայի, այնպես էլ Ավստրո-Հունգարիայի դեսպանությունները Սիրիայում և Լիբանանում ստեղծված իրավիճակը համարում էին «նորմալ»: Նախարարը հավելում էր նաև, որ վերջին շրջանում կառավարությունը կանխել էր Պաղեստինի հրեաների կողմից Միացյալ Նահանգներ հասցեագրված մեծ թվով «ահազանգող տեղեկություններ» պարունակող նամակների տարածումը: Հավատարմատարը պատասխանում է, որ ամերիկյան ժողովուրդը որևէ քաղաքական նպատակ չի հետապնդում այդ հարցում, և պահանջում է ամմիջպպես թույլ տալ օգնության տրամադրումը: Նա իր համոզմունքն էր նաև հայտնում, որ Անտանտի տերությունները հայերին օգնություն ցուցաբերելու հարցում նույնպես քաղաքական օրակարգ չունեին: Արտգործնախարարը կրկնում էր, որ կառավարությունը մերժում է «չեզոքների» կողմից օգնության ցուցաբերումը, քանի որ «որոշ ենթակա ազգերի հետ ունեցած իր վորձանքների» պատճառը «արտաքին քարոզչությունն էր և Թուրքիայի ներքին գործերին արտաքին միջամտությունը»:⁶³⁹

Օգոստոսի 12-ին ԱՄՆ-ի հավատարմատարը գեկուցում էր, որ օգոստոսի 7-ին Թուրքիայի արտգործնախարարը տեղեկացրել էր, որ կառավարության մյուս անդամների հետ կրկին քննարկել է Սիրիայում և Լիբանանում օգնության բաշխումը չեզոք հանձնաժողովի կող-

⁶³⁹ See *United States Official Records on the Armenian Genocide, 1915-1917* /Compiled with an introduction by Ara Sarafian/, էջ 529-530 (NA/RG 59/867.48/362):

մից իրագործելու խնդիրը, որի վերաբերյալ ընդունվել է բացասական որոշում: Նա նաև տեղեկացրել էր, որ այդ նպատակով Ջեմալ փաշային տրամադրվել էր 20 հազար ֆունտ, որը կարող էր ավելացվել անհրաժեշտության դեպքում: Հավատարմատարը հարցնում է նախարարին, թե արդյոք կառավարության «դյուրագագությունն» արտաքին օգնության կազմակերպման հարցում կարո՞ղ է հաղթահարվել, եթե ամերիկյան մատակարարումների բաշխումը համատեղ կերպով կատարեն Կարմիր մահիկի ընկերության ու Ամերիկյան կարմիր խաչի պատվիրակները: Նախարարը պատասխանում է, որ դա միգուցե հնարավոր լինի իրագործել, սակայն միայն այն պայմանով, որ ծրագրի «միակ միջնորդները» պետք է լինեն ոչ թե դրսից եկած ամերիկացիները, այլ ԱՄՆ-ի հյուպատոսական գործակալները: Հալիլը խոստանում է քննարկել այդ առաջարկն իր գործընկերների հետ և տեղյակ պահել հավատարմատարին ընդունված որոշման մասին: Ֆիլիպը գրում է պետքարտուղարին, որ ոչ մի դեպքում չի կարելի համաձայնել, որ ամերիկյան օգնությունը հսկվի կամ բաշխվի միայն Օսմանյան կարմիր մահիկի կամ թուրք պաշտոնյաների կողմից:⁶⁴⁰

1918 թ. Ջեքսոնի տեղեկանքի համաձայն՝ Դեյր-էզ-Չորում կուտակվել էին Օսմանյան կայսրության տարբեր շրջաններից արտաքսված շուրջ 60 հազար հայ փախստականներ: Հյուպատոսը բարձր էր գնահատում հայերին բերրի հող տրամադրելու, նրանց համար տներ կառուցելու, սնունդ, հագուստ և բժշկական օգնություն տրամադրելու հարցերում նահանգապետ Ալի Սուատ բեյի՝ մեկ տարվա ընթացքում իր հնարավորությունների սահմաններում իրականացրած գործունեությունը: Ըստ Ջեքսոնի՝ նահանգապետը մտավորական մարդ էր, 15 տարի ապրել էր Եգիպտոսում, խոսում էր անգլերեն և ֆրանսերեն: Սակայն 1916 թ. հունիսին նա նշանակվեց Բաղդադի նահանգապետ, իսկ Դեյր-էզ-Չորի նահանգապետ դարձավ Ջեքքի բեյը: Օգոստոսի սկզբին նրա՝ քաղաք ժամանելուց անմիջապես հետո հայերին տեղեկացրին, որ նրանք պետք է պատրաստվեն Խարբուր գետի ափերին գտնվող գյուղերը տեղափոխվելու համար: Որոշ հայերի հաջողվեց հասնել այդ գյուղերը, սակայն հայերի մեծ մասը, որոնց ուղեկցում էր զինված ոստիկանների մեծ խումբ, քաղաքից մի քանի ժամ հեռավո-

⁶⁴⁰ Տե՛ս նույն տեղը, էջ 531 (NA/RG 59/867.48/390):

րության վրա հայտնվեց թուրքական, չերքեզական և քրդական հրոսակախմբերի տրամադրության տակ: Ձեքսոնը հաղորդում էր, որ տեղի ունեցան «սարսափելի կոտորածներ», որոնց հետևանքով մեկ շաբաթվա ընթացքում Դեյր-էզ-Չորում գտնվող արտաքսված հայերից գրեթե ոչինչ չմնաց: Կարողացան փրկվել և քաղաք վերադառնալ մի քանի հարյուր հայեր, շուրջ 250 երեխա թափառում էին շների պես քաղաքի փողոցներով: Ձեքսոնը գտնում էր, որ կատարվածի հեղինակը նոր նահանգապետ Չեքքին էր:⁶⁴¹

1916 թ. սեպտեմբերի 1-ին Ֆիլիպը զեկուցում էր Հալեպի 30 հազարանոց հայ բնակչության նոր արտաքսումների մասին: Օգոստոսի 9-ին նա այդ մասին գրել էր Թալեաթին՝ հիշեցնելով նրան իր խոստումը՝ Հալեպից հայերի արտաքսումը կանխելու մասին: Հալեպում հյուպատոս Ձեքսոնի կարծիքով՝ հնարավոր էր, որ մնան որոշումները հիմնված էին ոչ թե Կոստանդնուպոլսից ստացված հրահանգների, այլ «Միություն և առաջադիմություն» կուսակցության տեղական կազմակերպությունների որոշումների վրա:

Օգոստոսի 11-ին Ֆիլիպը նամակ էր գրել նաև Կոստանդնուպոլսում Գերմանիայի դեսպան, կոմս Փաուլ Վոլֆ Մետերնիխին⁶⁴² խնդրելով նրան քայլեր ձեռնարկել Հալեպի հայ բնակչության արտաքսումը կանխելու ուղղությամբ: Համաձայն օգոստոսի 18-ին Ձեքսոնից ստացված նոր տեղեկատվության՝ օգոստոսի 12-ին Հալեպից արտաքսվել էին 200, օգոստոսի 14-ին՝ 150, օգոստոսի 16-ին՝ 150 հայեր:

Իր նամակում Թալեաթն առաջարկում էր այդ հարցով խոսել արտգործնախարար Հալիլի հետ: Վերջինս ասել էր ԱՄՆ-ի հավատարմատարին, որ Հալեպում տեղի էր ունեցել տարբեր շրջաններից արդեն իսկ տեղահանված հայերի «մասնակի արտաքսում»: Ըստ նախարարի՝ կառավարությունը հրահանգել էր Հալեպի իշխանություններին արքայալների ցանկում բողոքական և կաթոլիկ հայերին չընդգրկելու

⁶⁴¹ Տե՛ս NA Microfilm Publications, Microcopy No. 353, Records of the Department of State Relating to Internal Affairs of Turkey, 1910-1929, Roll 46, NA/RG 59/867.4016/373, էջ 717-718:

⁶⁴² Փաուլ Վոլֆ Մետերնիխ (1853-1934)՝ գերմանացի դիվանագետ, դեսպան Լոնդոնում (1901-1912) և Կոստանդնուպոլսում (1915-1916): Հանդես է եկել երիտթուրքերի հակահայկական քաղաքականության դեմ, փորձել է դադարեցնել ցեղասպանությունը, հետ է կանչվել Բեալին:

մասին.⁶⁴³

Օգոստոսի 24-ին Ֆիլիպը տեղեկացրել էր Գերմանիայի դեսպանին Հալիլի պատասխանի մասին՝ նշելով, որ, համաձայն Հալեպում ԱՄՆ-ի հյուպատոսի ճշգրիտ տեղեկությունների, ժամանակավորապես Հալեպում գտնվող հայերի թիվը կազմում էր շուրջ ութ հազար:⁶⁴⁴ Հավատարմատարը խնդրում էր նաև Գերմանիայի դեսպանին օգտագործել իր ազդեցությունը՝ Կոստանդնուպոլսի նախկին հայ պատրիարքին աքտորելու վերաբերյալ որոշումը բեկանելու համար:⁶⁴⁵

Պետքարտուղարին ուղղված իր զեկուցագրում Ֆիլիպը գրում էր, որ հայերի նկատմամբ թուրքական կառավարության քաղաքականությունը շարունակվում էր: Հայերի վիճակի մասին ամենից տագնապալի տեղեկությունները ստացվում էին Միջագետքից և Հյուսիսային Միրիայից: Ըստ հավատարմատարի՝ անհանգստացնող էին նաև Կոնիայից ստացված լուրերը: Վերջին շրջանում միակ դրական բանն այն էր, որ երկրի տարբեր շրջաններ էր գործողվել Հանրային անվտանգության տնօրենը: Այցի նպատակն էր զգուշացնել «Միություն և առաջադիմություն» կուսակցության տեղական կոմիտեներին, որ նրանք «սանձեն իրենց եռանդն» ու «խուսափեն» արտաքսումների իրագործումից՝ առանց Կոստանդնուպոլսից ստացված հրահանգների: Շատ դեպքերում տեղական իշխանությունները թաքցնում էին հայերի նկատմամբ ձեռնարկած իրենց գործողությունները կամ ներկայացնում դրանք ոչ թե որպես արտաքսում, այլ տեղական անհրաժեշտությունից բխող միջոցառումներ: Ինչ վերաբերում է օգնության

⁶⁴³ Տե՛ս *Unites States Official Records on the Armenian Genocide, 1915-1917* /Compiled with an introduction by Ara Sarafian/, էջ 534-535 (NA/RG 59/867.4016/296); US Department of State. *Papers relating to the Foreign Relations of the United States. 1916 Supplement. The World War*, էջ 853-856:

⁶⁴⁴ Հալեպի հայ համայնքը ստեղծել էր փախստականների կոմիտե, որը ղեկավարում էր պատվելի Հարություն Եսայանը: Կոմիտեի կազմում էին «Բարոն» հյուրանոցի սեփականատերեր Մաժումյան եղբայրները, Տ. Շեղիկյանը և ղեղազործ Ռուբեն Եզաջյանը: Կոմիտեն ֆինանսական միջոցներ էր ստացել հայ պատրիարքարանից, Կոստանդնուպոլսում ԱՄՆ-ի դեսպանությունից, Հայկական ընդհանուր բարեգործական միությունից և եվրոպական բարեգործական կազմակերպություններից (Տե՛ս **Չորմիսյան Լևոն**, *Համապարկեր մեկ դարու պատմության*, 3 հատորով, Քեյրոս, «Սևան», 1975, հ. 3, էջ 505):

⁶⁴⁵ Տե՛ս *Unites States Official Records on the Armenian Genocide, 1915-1917* /Compiled with an introduction by Ara Sarafian/, էջ 535-536 (NA/RG 59/867.4016/296):

կազմակերպման հարցում կառավարության բացասական դիրքորոշմանը, Ֆիլիպսն այն կարծիքին էր, որ այստեղ վճռորոշ դեր էր խաղում Ջենալ փաշայի դիրքորոշումը, որը մտադրված էր հսկողություն սահմանել այդ գործընթացի նկատմամբ:⁶⁴⁶

Մեպտեմբերի 7-ի իր հերթական զեկուցագրում Ֆիլիպը նշում էր, որ հատկապես Հալեպից և Դեյր-էզ-Չորից ընդհանուր տեղահանությունից հետո ողջ մնացածները կրկին տեղահանվում էին, ուժի սպառնալիքի տակ կրոնափոխությունը շարունակվում էր, տեղական իշխանություններն արգելում էին օգնության կազմակերպումն ու ցուցաբերումը, քաղցից մահացության տոկոսը շարունակում էր աճել: Ըստ Ֆիլիպի՝ հարկավոր էր «անմիջապես իրականացնել որևէ խիստ գործողություն»:⁶⁴⁷

Մեպտեմբերի 15-ին Հոֆման Ֆիլիպը պետքարտուղարի ուշադրությանն է ներկայացնում Հալեպում հյուպատոս Ջեքսոնի մամակը, որը դեսպանությանն էր փոխանցվել գերմանացի ճանապարհորդի միջոցով: Ջեքսոնը գրում էր, որ, վստահելի աղբյուրների համաձայն, Դեյր-էզ-Չորի մյութեսարիֆը կազմակերպել և իրագործել էր հայ փախստականների կոտորած, որոնց ընդհանուր թիվն այստեղ կազմում էր 12 հազար: Մինչ այդ մյութեսարիֆի թույլտվությամբ բոլոր «ներկայանալի» կանայք և աղջիկները բռնաբարվել էին արաբ ցեղապետների կողմից:

Օգոստոսի 24-ին հյուպատոսը Դեյր-էզ-Չոր էր ուղարկել իր աշխատակից, Հալեպում Նյու Յորքի «Vacuum Oil Company» ընկերության ներկայացուցիչ, Գերմանիայի հպատակ Օգոստ Բերնաուին, որը նախապես պետք է հանդիպեր մյութեսարիֆի հետ՝ հակառակորդ տերությունների 40 քաղաքացիներին առնչվող խնդիրները լուծելու նպատակով: Դանապարհին Բերնաուն օգնություն էր ցուցաբերել Մեսքենեի, Ռաքբայի, Մերհայի հայ փախստականներին: Այդ մասին տեղեկացված Ջենալ փաշան այնպես էր զայրացել, որ սպառնացել էր ձերբակալել Բերնաուին Դեյր-էզ-Չոր հասնելուն պես: Սակայն Ջեքսոնը կարողացել էր հանգստացնել Ջենալ փաշային և թույլտվություն ստանալ, որպեսզի Բերնաուն շարունակեր իր ուղևորությունը:

⁶⁴⁶ Տե՛ս *United States Official Records on the Armenian Genocide, 1915-1917* /Compiled with an introduction by Ara Sarafian/, էջ 536 (NA/RG 59/867.4016/296):

⁶⁴⁷ Տե՛ս նույն տեղը, էջ 541 (NA/RG 59/867.48/420):

Բերնաուի տվյալներով՝ Դեյր-էզ-Չորում ձերբակալել էին մի խումբ օսմանյան հպատակների, որոնք փորձել էին օգնել հայ փախստականներին:

Հյուպատոսը գնահատում էր երկրում ստեղծված իրավիճակը չափազանց վտանգավոր բոլոր քրիստոնյաների, այդ թվում՝ ամերիկացի դիվանագետների համար: Նա առաջարկում էր, որ կենտրոնական իշխանությունները հրահանգ տան տեղական մարմիններին՝ դիվանագետների անվտանգությունն ապահովելու նպատակով: Ջեքսոնը նաև առաջարկում էր նավատորմ ուղարկել Միջերկրական ծով, ինչը կապահովեր ինչպես ամերիկացիների, այնպես էլ տեղացի քրիստոնյաների անվտանգությունը:⁶⁴⁸

Մեկտեմբերի 10-ին հյուպատոս Ջեքսոնին ուղղված զեկուցագրում Բերնաուն գրում էր, որ «անհնարին է ներկայացնել սարսափի այն զգացումը», որն ունեցել էր Եփրատ գետի ափերին գտնվող հայկական ճամբարներ այցելության ընթացքում: Ըստ Բերնաուի, մասնավորապես, Եփրատի աջ ափին գտնվող ճամբարներն իրականում հեռու էին այդպես կոչվելուց, քանի որ այդ «դժբախտ» ժողովրդի մեծ մասին դաժանաբար վտարել էին իր հայրենի հողից և տներից, բաժանել ընտանիքներից, ճանապարհին թալանել ունեցած-չունեցածը, անասունների պես փակել փարսխում՝ առանց թաքստոցի, գրեթե առանց հագուստի և սնունդի: «Բախտավոր» կարելի էր համարել այն տեղահանվածներին, ովքեր կարողացել էին պահել հագուստ, կտորեղեն՝ վրանների համար, և դրամական միջոցներ՝ հաց, ձմերուկ կամ այժմ գնելու համար: Ամենուրեք կարելի էր տեսնել «գումատ և հյուծված դեմքեր», «թափառող կմախքներ»:

Բերնաուն նշում էր, որ հայերի տեղահանության կազմակերպիչները որևէ ցանկություն չունեին կերակրելու այդ մարդկանց: Նա համոզված էր, որ, կառավարության քաղաքականության համաձայն, հայերը պետք է մահանային քաղցից: Եփրատի ափերին սփռված հայ ժողովրդից մնացած հատվածը բաղկացած էր հասակավոր մարդկանցից, կանանցից և երեխաներից: Միջին տարիքի և երիտասարդ տղամարդիկ, եթե դեռ չէին ենթարկվել ջարդի, սփռված էին կայսրության ճանապարհներին, որտեղ շինարարական աշխատանքներ էին

⁶⁴⁸ Տե՛ս նույն տեղը, էջ 550-551 (NA/RG 59/867.4016/301):

կատարում բանակի կարիքների համար: Երիտասարդ աղջիկները և աղջիկ երեխաները դարձել էին մահմեդականների ավարը: Նրանց առևանգել էին տեղահանության ողջ ընթացքում, բռնաբարել և վաճառել էին, նետել հարեմները: Մեքսենեից Դեյր-էզ-Չոր ընկած ճանապարհին, ըստ Բերնատի, կարելի էր հանդիպել ճանապարհին դաժան կերպով մահացած հայերի բազմաթիվ ընդհանուր գերեզմաններ: Բերնատն գրում էր, որ այն, ինչը տեսել և լսել էր Դեյր-էզ-Չորի ճանապարհին, գերազանցում էր մարդկային երևակայությունը. խոսել «հազար ու մի սարսափների մասին» նշանակում էր շատ քիչ բան ասել, քանի որ «ես անցնում էի դժոխքի մի հատվածի միջով»: Բերնատն նկարագրում էր կատարվող որպես «կառավարական բարբարոսություն, որն ուղղված են Թուրքիայում հայ ազգի ողջ մնացած հատվածների համակարգված բնաջնջմանը՝ սովամահության միջոցով»:

Չեկույցի հեղինակը շարունակում էր, որ Սիրիայի և Միջագետքի սահմանին գտնվող Մեքսենե Անատոլիայի վիլայեթներից տեղահանված հայերի ժամանակավոր կուտակման բնական կենտրոն էր, որտեղից էլ նրանց ուղարկում էին դեպի Միջագետք: Հազարավոր հայեր էին ժամանել Մեքսենե, սակայն մեծ մասն այստեղ թողել էր իր ոսկորները: Ըստ Բերնատի տեղեկատվության՝ սովից և հիվանդություններից այստեղ մահացել էր շուրջ 60 հազար հայ: Տվյալ պահի դրությամբ՝ Մեքսենեի և Դեյր-էզ-Չորի միջև շուրջ 4.500 հայեր կային, որոնք «ապրող ֆանտոմներ» էին: Երեքից չորս օրը մեկ նրանց մի կտոր հաց էին տալիս: Մարդիկ սնվում էին բույսերով, հողով և նույնիսկ իրենց «արտազատումներով»: Մեքսենեից հյուսիս գտնվող Արուհարիի վայրում Բերնատն հանդիպել էր 240 հայերի, որոնց հսկում էին ընդամենը երկու ոստիկաններ՝ հաճախ թողնելով բախտի քմահաճույթի: Բերնատն այստեղ տեսել էր, թե ինչպես են կանայք անասունների աքարում ման գալիս գարու հատիկներ: Երբ Բերնատն սկսել էր հաց բաժանել, նրանք հարձակվել էին հացի վրա սոված գայլերի պես:⁶⁴⁹

Բերնատն գրում էր, որ Համամ անունով փոքր գյուղում 1.600 փախստական հայեր կային: Այստեղ նույնպես սովից և հիվանդությո-

⁶⁴⁹ Տե՛ս նույն տեղը, էջ 555-557 (NA/RG 59/867.4016/302):

յուններից մահացող մարդկանց կարելի էր հանդիպել: Մահացությունն այստեղ բարձր էր, մասնավորապես՝ երեխաների շրջանում: Միաժամանակ կարելի էր հանդիպել դրամական միջոցներ ունեցող մարդկանց, որոնք կարողանում էին որոշ չափով իրենց ապահովել սնունդով: Սակայն մեծ մասը գիշերները քնում էր գետնին և առանց որևէ ծածկոցի, սնվում ձմերուկով: Տղամարդկանց օգտագործում էին որպես սևագործ բանվորներ, որոնք աշխատանքի դիմաց ստանում էին մի կտոր հաց: Եփրատի ձախ ափին գտնվող Ռաքքա քաղաքում 5-6 հազար հայ փախստականներ (հիմնականում՝ կանայք և երեխաներ) կային, որոնք տեղավորված էին քաղաքի տարբեր շրջաններում. յուրաքանչյուր տան մեջ տեղավորվել էին 50-60 հայեր: Ըստ Բերնատի՝ դա հնարավոր էր դարձել նահանգապետի վերաբերմունքի շնորհիվ: Թեև նրանց վիճակն այստեղ ավելի լավ էր, քան մյուս տեղերում, սակայն նրանց տանջանքները նույնպես սարսափելի էին: Իշխանություններն անկանոն կերպով էին ապահովում նրանց ալյուրով, շատերը հաց և դրամ էին մուրում փողոցներում: Եփրատի դիմացի ափին Բերնատն հանդիպել էր վրաններում գտնվող սովի մատնված շուրջ հազար հայերի, որոնց պետք է տեղափոխեին այլ վայրեր: Ռաքքայից հյուսիս գտնվող Չիարեթում 1.800 հայեր կային, որոնց վիճակը սարսափելի էր. նրանք մատնված էին սովի, սնվում էին բույսերով: Նույն վիճակում էին Սեբհա փոքր գյուղում գտնվող 250-300 հայերը:

Մի քանի ամիս առաջ Դեյր-էզ-Չորի ճամբարներում տեղավորել էին 30 հազար հայերի, որոնք գտնվում էին նահանգապետ Ալի Սուատ բեյի հովանու ներքո: Նահանգապետը շատ լավ էր վերաբերվում հայերին: Որոշ մարդիկ նույնիսկ սկսել էին առևտրով զբաղվել: Ըստ Բերնատի՝ այս դեպքը վկայում էր այն մասին, որ որոշ վայրերում տեղական իշխանությունների ներկայացուցիչները փորձում էին մարդկային վերաբերմունք հանդես բերել հայ փախստականների նկատմամբ: Սակայն շուտով Ալի Սուատ բեյին տեղափոխեցին Բաղդադ, իսկ Դեյր-էզ-Չորում նահանգապետ նշանակեցին Չեքքի բեյին, որը հայտնի էր իր անմարդկային և բարբարոսական մեթոդներով: Դրա հետևանքով քաղաքի հայերի համար կյանքը կրկին դարձավ դժոխք, նրանց կրկին տեղահանեցին Եփրատի ափերին գտնվող տարբեր վայրեր, շատերը մահացան: Բերնատն հաղորդում էր, որ

նախկին նահանգապետը հազար որբ էր հավաքել և տեղավորել մեծ տան մեջ՝ իր հովանավորության ներքո: Մակայն նոր նահանգապետը նրանց դուրս շարտեց փողոց, որոնց մեծ մասը մահացավ սովից: Բերնատուն գրում էր հյուսպատոսին հայ փախստականներին օգնություն տրամադրելու անհրաժեշտության մասին:⁶⁵⁰

Ի պատասխան Ֆիլիպի գաղտնի զեկուցագրերի՝ սեպտեմբերի 22-ին պետքարտուղար Լանսինգը հանձնարարում է շարունակել արտորված հայերի մասին տեղեկատվության տրամադրումը և հարցնում հավատարմատարի կարծիքն այն մասին, թե արդյոք ինչ տեսակի գործողություն կարող է Պետքարտուղարությունը ձեռնարկել իրավիճակը բարելավելու ուղղությամբ:⁶⁵¹

Պատասխանելով Լանսինգին՝ հոկտեմբերի 1-ին Ֆիլիպը գրում էր, որ Պետքարտուղարությունը մանրամասն տեղեկատվություն էր ստանում, ինչը վկայում էր հակահայկական քաղաքականության «գաժանությունների» մասին: Անցած ամիսների ընթացքում Ֆիլիպը համոզված էր, որ միջազգային քաղաքականության տեսանկյունից ամենից ազդեցիկ գործողությունը կարող էր լինել ԱՄՆ-ի կողմից դիվանագիտական ներկայացուցչի հետևանքով մի երկրից, որտեղ կառավարության կողմից նման բարբարոսական միջոցներ էին կիրառվում: Մակայն հավատարմատարը հնարավոր էր համարում, որ ԱՄՆ-ի կողմից նման քայլի ժամանակն արդեն անցել էր: Միաժամանակ Ֆիլիպը գրում էր, որ նման քայլը կարող էր նաև վնաս հասցնել ամերիկյան շահերին, մասնավորապես՝ զրկել ամերիկացիներին հայ փախստականներին օգնելու հնարավորությունից: Հավատարմատարը նշում էր, որ ժամանակին դեսպան Մորգենթաունն ույնպես մտածում էր այդ քայլին դիմելու մասին, սակայն հրաժարվեց այդ գաղափարից նույն պատճառաբանությամբ: Ըստ Ֆիլիպի՝ անհրաժեշտ էր անմիջապես երկու խնդիր լուծել: Առաջին՝ պնդել հետագա արտաքստումների դադարեցումը, և երկրորդ՝ թուրքական կառավարությունը պետք է վերացնի «չեզոքների» կողմից տուժած մարդկանց անմիջական օգնություն ցուցաբերելու նկատմամբ զոյություն ունեցող անհիմն սահմանափակումը: Ֆիլիպը նշում էր, որ իր բոլոր փորձերն այս խնդիրները լուծելու ուղղությամբ ավարտվել էին անարդյունք: Իշխա-

⁶⁵⁰ Տե՛ս նույն տեղը, էջ 558-560 (NA/RG 59/867.4016/302):

⁶⁵¹ Տե՛ս նույն տեղը, էջ 542 (NA/RG 59/867.48/420):

նությունները դիտարկում էին երկրում կատարվող որպես «ներքին միջոցառումներ» և համարում օտարների կողմից որևէ գործողության իրականացումը որպես միջամտություն երկրի ներքին գործերին».⁶⁵²

Մեպտեմբերի 20-ին Հալեպում Գերմանիայի հյուպատոս Վալտեր Ռյոպերը գեկուցում էր կանցլեր Բեթման Հոլվեգին, որ Եփրատ գետի շրջակայքում գերմանական ծառայության մեջ գտնվող շվեյցարուհի միսիոներ Բեստրիս Ռոհների կողմից կազմակերպվող և արտաքսված հայերի համար նախատեսված ամերիկյան ֆինանսական օգնության մատակարարումը հանդիպել էր դժվարությունների: Իշխանությունները ձերբակալել և ծեծի էին ենթարկել հայ միջնորդներից մեկին: Օգնության կազմակերպումը չվտանգելու նպատակով Ռոհները ժամանակավորապես դադարեցրել էր աշխատանքն ու խնդրել ԱՄՆ-ի հյուպատոսին զբաղվել մատակարարման հարցերով: Ամերիկյան հյուպատոսը հանձնարարում է Բերնաուին, որը մինևույն ժամանակ Գերմանիայի քաղաքացի էր, ճամփորդել Հալեպից Դեյր-էզ-Չոր և բաժանել օգնությունը հայ փախստականներին: Կից ներկայացնելով Բերնաուի հաշվետվությունը, որտեղ մանրամասն և շատ դեպքերում ճշմարտացի կերպով նկարագրված էին իշխանությունների վայրագությունները հայերի հանդեպ և նրանց տառապանքները, Գերմանիայի հյուպատոսն իր մտահոգությունն էր հայտնում, որ եթե այդ փաստաթուղթը տպագրվեր Միացյալ Նահանգներում, այն կարող էր օգտագործվել Գերմանիայի դեմ, քանի որ թշնամի դաշնակից պետությունները հայերի կոտորածների կազմակերպման մեջ մեղադրում էին նաև գերմանական կառավարությանը:⁶⁵³

Մեպտեմբերի 23-ին ԱՄՆ-ի դեսպանությունը բողոքի հայտագիր էր ներկայացրել Օսմանյան կայսրության արտաքին գործերի նախարարությանը: Բանն այն էր, որ թուրք գրաքննիչները մեծ թվով հեռագրեր էին առգրավել, որոնք Հալեպում հյուպատոսությունն ուղարկում էր դեսպանությանը: Հայտագրում նշվում էր, որ նման գործողությունները մեծապես խոչընդոտում էին դեսպանության գործունեությունը: Դեսպանությունը պահանջում էր, որ իշխանությունները հրահանգ տան գրաքննիչներին՝ Հալեպում ԱՄՆ-ի հյուպատոսութ-

⁶⁵² Տե՛ս նույն տեղը, էջ 543-544 (NA/RG 59/867.4016/297):

⁶⁵³ Տե՛ս *The Armenian Genocide. Evidence from the German Foreign Office Archives, 1915-1916 / Edited by Wolfgang Gust*, էջ 650-651:

յան հեռագրերն անարգել դեսպանությանը փոխանցելու նպատակով:⁶⁵⁴ Նոյեմբերի 8-ի պատասխան հայտագրում Բարձր Դուռը տեղեկացնում էր ԱՄՆ-ի դեսպանությանը, որ, համաձայն կայսերական բանակի փոխհրամանատարի բացատրությունների, հյուպատոսության հեռագրերի ուղարկումը կանխվել էր այն պարզ պատճառով, որ դրանց բովանդակությունը վերաբերում էր օսմանյան որոշ քաղաքացիների անցուդարձին, ինչը միջամտություն է երկրի ներքին գործերին: Նշվում էր, որ, չնայած Բարձր Դռան խնդրանքին և ԱՄՆ-ի դեսպանության համապատասխան խոստումներին, ամերիկյան հյուպատոսները շարունակում էին զբաղվել օսմանյան քաղաքացիներին վերաբերող հարցերով: Հայտագրում պահանջվում էր, որ դեսպանությունը նոր հրահանգներ տա հյուպատոսություններին:⁶⁵⁵

Հյուպատոս Ջեքսոնի տեղեկությունների համաձայն՝ Հալեպից 200 մղոն հեռավորության վրա գտնվող Ռ-աս-ուլ-Այնում տեղի էր ունեցել երկրի տարբեր անկյուններից այստեղ ժամանած շուրջ 300 հազար հայերի, որոնց մեծ մասը կազմում էին կանայք և երեխաների, սարսափելի սպանդ:⁶⁵⁶

Վերադառնալով Հալեպում հայ արքայալների վիճակի նկարագրությանը՝ Ջեքսոնը գրում էր, որ ժամանակի ընթացքում նոր արքայալների՝ պարբերաբար քաղաք ժամանելու հետևանքով քաղցած, անօքևան և հիվանդ մարդկանց թիվը պարբերաբար աճում էր: Շատ հայեր դրամական միջոցներ և թանկարժեք իրեր էին գրավ տվել ամերիկյան միսիոներներին, Խարբերդում հյուպատոս Դեյվիսին, ինչպես նաև բարեկամ թուրքերին: Հարյուրավոր հայեր կարողացել էին Հալեպում ԱՄՆ-ի հյուպատոսության միջոցով ստանալ իրենց գումարները: Միաժամանակ շատերը դիմում էին հյուպատոսություն՝ ԱՄՆ-ում ապրող իրենց ազգականների հետ կապ հաստատելու և նրանց միջոցով օգնություն ստանալու համար: Թեև իշխանություններն արգելում էին ինչպես քաղաքի բնակչությանը, այնպես էլ ԱՄՆ-ի հյուպատոսությանը օգնություն ցուցաբերել հայ արքայալներին, Ջեքսոնը, անտեսելով իշխանության պահանջը, կարողացել էր միջոցներ ձեռք

⁶⁵⁴ St'u NA Microfilm Publications, Microcopy No. 353, Records of the Department of State Relating to Internal Affairs of Turkey, 1910-1929, Roll 46, NA/RG 59/867.4016/313:

⁶⁵⁵ St'u նույն տեղը:

⁶⁵⁶ St'u նույն տեղը, Roll 46, NA/RG 59/867.4016/373, էջ 719:

բերել հայերին օգնելու համար:

1916 թ. աշնանը Ջեքսոնը տեղեկություններ էր ստացել Ռուսաստանի կողմից գրավված տարածքներից Ուրֆայի շրջան ժամանած հազարավոր մահմեդական փախստականների մասին: Հյուպատոսի մոտ գաղափար էր ծնվել պատերազմից տուժած երկրի բոլոր քաղաքացիներին ամերիկացիների կողմից օգնություն ցուցաբերելու մասին՝ շրջանցելով հայերին օգնություն տրամադրելու արգելքը: Այդ նպատակով նա այցելել էր Հալեպի նահանգապետ Աբդուլհալակ բեյին և հայտարարել, որ Միացյալ Նահանգներում միլիոնավոր դոլարներ էին հավաքել՝ պատերազմից տուժած քաղաքացիներին հասցնելու համար, սակայն կայսրության զինվորական իշխանությունների արգելքը թույլ չէր տալիս օգնություն տրամադրել նաև Ուրֆայում գտնվող մահմեդական փախստականներին: Նահանգապետը խոստացել էր հեռագիր ուղարկել Թալեաթ փաշային, իսկ Ջեքսոնն իր հերթին խնդրում էր Կոստանդնուպոլսում ԱՄՆ-ի նոր դեսպան Աբրամ Էլկուսին խոսել այդ մասին կենտրոնական իշխանությունների հետ: Հաջորդ օրը դեսպանը ճաշի էր հրավիրել Թալեաթ փաշային, որի ընթացքում համոզել էր նրան հրահանգ տալ Հալեպի, Ուրֆայի և Մարաշի իշխանություններին, որ հյուպատոս Ջեքսոնին թույլատրվի օգնություն ցուցաբերել քրիստոնյաներին, հրեաներին և մահմեդականներին՝ առանց տեղական թուրքական իշխանությունների միջամտության: Դա հնարավորություն էր տվել Ջեքսոնին օգտագործելու ստեղծված հնարավորությունն ու սկսելու օգնության կազմակերպման աշխատանքները: Այդ նպատակով նա տեղական խորհուրդներ ստեղծեց Հալեպում, որոնք նաև պետք է ապահովեին օգնության կազմակերպումը շրջակա քաղաքներում և գյուղերում:

Միաժամանակ հյուպատոսն Ուրֆա էր ուղարկել Օգյուստ Բերնաուին: Ուրֆայում նա և շվեյցարացի միսիոներ Ջեյկոբ Կյունցլերը միասին այլուր և ցորեն էին գնել՝ մահմեդական փախստականների համար, որոնց կառավարությունը պետք է ապահովեր տներով երկրի կենտրոնական շրջաններում: Հաջորդ անգամ Ջեքսոնը օգնություն ցուցաբերեց Հալեպ ժամանած 1.200 մահմեդական փախստականներին, որոնք մույնպես գտնվում էին ծանր վիճակում: Այս երկու փաստերը համոզեցին իշխանություններին, որ, օգնություն ցուցաբերելով քրիստոնյաներին, հյուպատոսությունը քարոզչության կամ նրանց

կառավարության դեմ տրամադրելու որևէ նպատակ չունի: Այս հանգամանքը Ջեքսոնին հնարավորություն տվեց ազատորեն օգնություն ցուցաբերելու արտաքսված հայերին՝ նրանց կյանքը փրկելու նպատակով:⁶⁵⁷

Ջեքսոնը նշում էր, որ երբ 1915 թ. հուլիսից հազարավոր հայ աքսորյալներ էին ժամանել Հալեպ, հարց էր ծագել, թե ինչ պետք է անել, որպեսզի նրանք կրկին չենթարկվեն նոր արտաքսումների: Որոշում կայացվեց, որ մի խումբ հեղինակավոր քաղաքացիներ այցելեն արաբների տներն ու հանձնեն նրանց՝ աքսորյալներին որպես ծառաներ աշխատանքի վերցնելու համար: Ըստ Ջեքսոնի՝ մի քանի ամսվա ընթացքում 40 հազար հայի որպես ծառաներ աշխատանքի ընդունեցին տներում, հիմնականում՝ կանանց, 14 տարեկանից փոքր աղջիկների և տղաների: Կանայք հիմնականում ճաշ էին եփում, իսկ տղաները խանութ և շուկա էին գնում: Այսպիսով, հնարավոր դարձավ, որ քաղաքի շուրջ 300 հազարանոց արաբ բնակչությունն ընդունի փախստական հայերին: Ըստ Ջեքսոնի՝ արաբները դեմ էին կառավարության հակահայկական քաղաքականությանը:

Հայերին կրկնակի արտաքսումից փրկելու հնարավորություն ստեղծվեց նաև այն բանից հետո, երբ հնարավոր դարձավ հանդգել Դամասկոսում տեղակայված 4-րդ բանակի հրամանատար Ջեմալ փաշային տրամադրել շինություններ՝ բանակի կարիքների բավարարման նպատակով վեց կարի գործարան հիմնելու համար: Հայերին տրվում էին կառավարական հիմնարկում աշխատողի կարգավիճակ, փաստաթղթեր և տարբերանշաններ, օրը մեկ անգամ նրանց ապահովում էին մեկ բոքոն հացով և մեկ ափսե ապուրով: Ըստ Ջեքսոնի՝ երկու ամիս հետո 6.500 կանայք, 3.000 աղջիկներ և 650 տղամարդ ու երիտասարդ տղաներ աշխատում էին այդ գործարաններում և օգտվում համապատասխան արտոնություններից:

Մյուս խնդիրը, ըստ Ջեքսոնի, հազարավոր որբ հայ երեխաներն էին: Մարաշից հատուկ այդ նպատակով Հալեպ ժամանած Բեատրիս Ռոհների օժանդակությամբ հնարավոր դարձավ բացել երկու որբանոց, հավաքել հազար երեխա և աշխատանքի վերցնել 50 կնոջ և մի քանի տղամարդու: Օսմանյան քաղաքացի Նորա Աթունյանը, որի

⁶⁵⁷ Տե՛ս նույն տեղը, Roll 46, NA/RG 59/867.4016/373, էջ 719-722:

հայրը Հալեպում ճանաչված բժիշկ էր, իսկ մայրը՝ իռլանդուհի միսիոներ, երկու շինություններում բացեց ևս մեկ որբանոց, որտեղ հնարավոր եղավ հավաքել ևս շուրջ հազար որբերի՝ 40 խնամող աշխատողներով: ԱՄՆ-ի հյուպատոսությունն ապահովում էր այդ հաստատությունները ֆինանսական միջոցներով: Իրենց նվիրատվություններով օգտակար էին լինում նաև Հալեպի որոշ ունևոր մարդիկ և բարերարներ Շվեյցարիայից: Այդ հաստատությունները հիմնելու համար հնարավոր դարձավ ստանալ Ջենալ փաշայի հատուկ թույլտվությունը: Գերմանիայի հյուպատոսն այդ ընթացքում փորձում էր թուրքական իշխանությունների միջոցով այդ որբանոցներին տալ գերմանական հաստատությունների կարգավիճակ, սակայն ինչպես Ջեքսոնը, այնպես էլ շվեյցարացիները հրաժարվեցին, քանի որ, ըստ ԱՄՆ-ի հյուպատոսի, գերմանացիները փորձում էին նման միջոցներով կոծկել իրենց պատասխանատվությունը թուրքերի հետ հակահայկական ծրագրերի իրականացման գործում: Ջեքսոնը գրում էր նաև, որ ԱՄՆ-ի հյուպատոսությունը ֆինանսական օգնություն էր ցուցաբերում նաև Հալեպից հյուսիս գտնվող Քիլիսում բացված որբանոցին, որի խնամքի տակ էին գտնվում 400 երեխաներ:⁶⁵⁸

Մորգենթաուի՝ Միացյալ Նահանգներ վերադառնալուց ութ ամիս անց՝ 1916 թ. սեպտեմբերին, ԱՄՆ-ի նոր դեսպան Աբրամ Էլկուսը ժամանեց Կոստանդնուպոլիս, հանձնեց իր հավատարմագրերը հոկտեմբերի 2-ին և աշխատեց այդ պաշտոնում մինչև 1917 թ. ապրիլին թուրք-ամերիկյան հարաբերությունների խզումը:⁶⁵⁹ Նոր դեսպանի՝ Կոստանդնուպոլիս մեկնելուց առաջ Բարտոնն ընդունելություն էր կազմակերպել Էլկուսի պատվին, որին ներկա գտնվեցին Թուրքիայում գործող բոլոր կրոնական կազմակերպությունների ներկայացուցիչները:⁶⁶⁰

Չնայած այն մեծ հարգանքին, որն ուներ Մորգենթաուն Կոստանդնուպոլիսում, նրա «աճող ընդդիմությունը» երիտթուրքական իշխանություններին կարող էր վտանգել երկկողմ հարաբերություն-

⁶⁵⁸ Տե՛ս նույն տեղում, Roll 46, NA/RG 59/867.4016/373, էջ 722-724:

⁶⁵⁹ Տե՛ս US Department of State, Historical Office, Bureau of Public Affairs. *United States Chiefs of Mission, 1778-1982*, Washington D. C., Government Printing Office, 1982, էջ 238-239:

⁶⁶⁰ Տե՛ս **Grabill Joseph L.**, նշվ. աշխ., էջ 73-74:

ները: Էլկուսը փորձում էր խուսափել այդ խնդիրներից և ամեն կերպ բարելավել հարաբերությունները: Նրա ժամանման նախօրեին Կոստանդնուպոլսում լույս տեսնող «*Hilal*» օրաթերթն իր՝ սեպտեմբերի 1-ին «Հրաշք» խորագրով լույս տեսած խմբագրականում գրում էր, որ Նյու Յորքի առևտրի պալատում արտասանած իր ելույթում նախկին դեսպան Մորգենթաուն զովասանքի խոսքեր էր ասել թուրք ժողովրդի հասցեին՝ համարելով նրանց «ուժեղ, կարող և հայրենասեր», մասնավորապես՝ տեղի ունեցող պատերազմի ընթացքում: Կոստանդնուպոլսի ճանապարհին Բեռլին այցելած Էլկուսը նույն թերթին տված հարցազրույցում հայտարարել էր, որ Միացյալ Նահանգները բարեկամական զգացմունքներ է տածում Թուրքիայի հանդեպ, և երկու երկրների միջև որևէ քաղաքական խնդիր գոյություն չունի: Նա նշում էր, որ պատերազմից հետո ամերիկյան կապիտալը մեծ հետաքրքրություն է հանդես բերելու Թուրքիայի, մասնավորապես նրա ասիական նահանգների նկատմամբ:⁶⁶¹

Էլկուսի՝ Պետքարտուղարությանը ներկայացված զեկուցագրերը վկայում էին այն մասին, որ հայերի վիճակն Օսմանյան կայսրությունում շարունակում էր մնալ նույնը: ԱՄՆ-ում նախընտրական իրավիճակի հետևանքով հայերին առնչվող խնդիրները սկսեցին մոռացության մատնվել, իսկ Վիլսոնի վարչակազմը դիմում էր այդ հարցին միայն այն ժամանակ, երբ պետք էր պատասխանել ընդդիմախոսներին:⁶⁶²

1916 թ. հոկտեմբերի 17-ին Միացյալ Նահանգների նորանշանակ դեսպան Աբրամ Էլկուսը գրում էր պետքարտուղարին, որ, հյուպատոս Ջեքսոնի կողմից ներկայացված վստահելի աղբյուրների համաձայն, «արտաքսումները շարունակվում էին կանխամտածված դաժանությունների ուղեկցությամբ»։ Ընտանիքները բաժանված էին և ցրված մահմեդականների միջև, հոգևորականներին բաժանել էին ժողովրդից, շարունակվում էին սպառնալիքի տակ կրոնափոխության համատարած դեպքերը, փախստականներից մշտապես առևանգում էին նրանց երեխաներին և աղջիկներին: Ջարդերի շարունակվելու հետևանքով «քաղաքակիրթ աշխարհի անպատվությունից խուսափելու նպատակով թուրք պաշտոնյաները ներկայումս որդեգրել և

⁶⁶¹ Տե՛ս **Payaslian Simon**, նշվ. աշխ., էջ 111-112:

⁶⁶² Տե՛ս նույն տեղը, էջ 112-113:

իրականացնում են բնաջնջման դժվար բացահայտվող քաղաքականություն, որը դրսևորվում է քաղցի, հյուծվածության և զագանային վերաբերմունքի միջոցով»: Ըստ դեսպանի՝ ներկայիս իրավիճակը պահանջում էր ոչ թե ներկայացնել ձևական բնույթի բողոքներ, այլ ցուցաբերել անմիջական ֆինանսական օգնություն: Էլկուսը կրկնում էր դեսպանության կողմից ներկայացված նախորդ առաջարկները՝ Թուրքիայի դաշնակիցներ Գերմանիայի և Ավստրո-Հունգարիայի միջոցով արտաքսումները դադարեցնելու և օգնության կազմակերպումը թույլ տալու հարցում իշխանությունների վրա ճնշում գործադրելու մասին: Էլկուսն առաջարկում էր նաև, որ ԱՄՆ-ի նախագահը փաստերով հազեցած անձնական նամակներ ուղղի Գերմանիայի և Ավստրո-Հունգարիայի կայսրերին: Նա համոզված էր, որ նամակներին հրապարակայնություն տալը նույնպես կարող էր օգտակար ազդեցություն ունենալ:⁶⁶³

Նոյեմբերի 1-ին պետքարտուղար Լանսինգը, կրկնելով դեսպան Էլկուսի հեռագրում բերվող գնահատականներն ու փաստերը, հանձնարարում է Բեռլինում ԱՄՆ-ի դեսպան Ջեյմս Ջերարդին⁶⁶⁴ դիմել գերմանական կառավարությանը, որպեսզի վերջինս փորձի համոզել իր դաշնակցին հետագա արտաքսումները դադարեցնելու և օգնության կազմակերպումն ապահովելու հարցերում:⁶⁶⁵ Նա հանձնարարում է դեսպանին շեշտել, որ «օսմանյան կառավարության կողմից հաստատված մտադրություն գոյություն ունի քրիստոնյա ազգությունը բնաջնջելու համար: Եթե ճշմարիտ այդ փաստերը հայտնի դառնան հասարակայնությանը, կցնցեն ողջ քաղաքակիրթ աշխարհը»:⁶⁶⁶

Նոյեմբերի 4-ին Բեռլինում ԱՄՆ-ի դեսպանի օգնական Ջոզեֆ

⁶⁶³ Տե՛ս *Unites States Official Records on the Armenian Genocide, 1915-1917* /Compiled with an introduction by Ara Sarafian/, էջ 545-546 (NA/RG 59/867.4016/299); US Department of State. *Papers relating to the Foreign Relations of the United States. 1916 Supplement. The World War*, էջ 857:

⁶⁶⁴ **Ջեյմս Ջերարդ** (1867-1951)՝ ԱՄՆ-ի իրավաբան և դիվանագետ, 1913-1917 թթ.՝ դեսպան Գերմանիայում:

⁶⁶⁵ Տե՛ս *Unites States Official Records on the Armenian Genocide, 1915-1917* /Compiled with an introduction by Ara Sarafian/, էջ 547 (NA/RG 59/867.4016/299); US Department of State. *Papers relating to the Foreign Relations of the United States. 1916 Supplement. The World War*, էջ 858:

⁶⁶⁶ Տե՛ս **Gilbert Martin**, *Twentieth-Century Genocides*, էջ 16:

Գրյուն⁶⁶⁷ գրում էր Գերմանիայի պետական քարտուղար Գոտտլին ֆոն Յագովին, որ արդեն մի քանի ամիս էր, ինչ պաշտոնական և այլ հավաստի աղբյուրները վկայում էին Թուրքիայում հայ բնակչության շարունակվող համակարգված տեղահանության մասին: Թուրքական իշխանությունների և պաշտոնյաների մասնակցությունը դաժանություններից, կոտորածներից և սովից հազարավոր մարդկանց մահվան կազմակերպման գործում վկայում էր օսմանյան կառավարության՝ քրիստոնյա ազգի ոչնչացման մտադրության մասին: Գրյուն նշում էր, որ «ճշմարիտ փաստերի հրապարակումը կառաջացնի ողջ քաղաքակիրթ աշխարհի վրդովմունքը»: Նկատի առնելով այն հանգամանքը, որ Վաշինգտոնում Գերմանիայի դեսպանի՝ հոկտեմբերի 8-ին Պետքարտուղարությանը հասցեագրված նամակում տեղեկացվում էր հայերի նկատմամբ իրականացվող քաղաքականության դեմ գերմանական կառավարության կողմից օսմանյան կառավարությանը բողոք ներկայացնելու մասին, ԱՄՆ-ի կառավարությունը հայցում էր Գերմանիայի օժանդակությունը դաշնակից Թուրքիայում իրավիճակը բարելավելու նպատակով օգնություն կազմակերպելու գործում:⁶⁶⁸

Նոյեմբերի 15-ին Կոստանդնուպոլսում Գերմանիայի դեսպանությանն ուղղված հեռագրում պետական քարտուղար Յագովը տեղեկացնում էր, որ Միացյալ Նահանգների կառավարությունը կրկին բողոք էր ներկայացրել հայերի տեղահանությունների կապակցությամբ և անհապաղ խնդրում էր «իրականացնել վերականգնմանն ուղղված գործողություններ»:⁶⁶⁹

Նոյեմբերի 17-ին դեսպան Էլկուսը Պետքարտուղարությանն է ներկայացնում ԱՄՆ-ի քաղաքացի, հայ Բաղդասար Աղազարյանի կնոջ՝ Էթել Մարսթոնի՝ 1915 թ. իր ընտանիքի հետ կատարված դեպքերի մասին ցուցմունքները: Ըստ Էլկուսի՝ սա լավ հնարավորություն էր, քանի որ առաջին անգամ դեպքերի վկան ցուցմունք էր տալիս տեղի ունեցածի վերաբերյալ դեսպանությունում: Դեսպանությունը զբաղվում

⁶⁶⁷ **Ջոզեֆ Գրյուն** (1880-1965)՝ ԱՄՆ-ի դիվանագետ, պետքարտուղարի տեղակալ (1924-1927, 1944-1945), դեսպան Գանիայում (1920-1921), Շվեյցարիայում (1921-1924), Թուրքիայում (1927-1932), Ճապոնիայում (1932-1941):

⁶⁶⁸ Տե՛ս *The Armenian Genocide. Evidence from the German Foreign Office Archives, 1915-1916 / Edited by Wolfgang Gust*, էջ 671:

⁶⁶⁹ Տե՛ս նույն տեղը, էջ 685:

էր տիկին Աղազարյանի՝ Միացյալ Նահանգներ վերադառնալու հարցով: Գեսպանն առաջարկում էր խուսափել ցուցմունքները մամուլում հրապարակելուց, մինչև որ տիկին Աղազարյանը կվերադառնար ԱՄՆ:⁶⁷⁰

Իր ցուցմունքներում Էթել Մարսթոն Աղազարյանը նշում էր, որ ծնվել է 1884 թ. Մեյն նահանգում, 1909 թ. ամուսնացել է ԱՄՆ-ի քաղաքացի Բաղդասար Աղազարյանի հետ, որը ծնվել էր Խարբերդի մոտակայքում գտնվող բնակավայրում: 1913 թ. ամուսիններն ու նրանց որդին մեկնել էին Թուրքիա՝ այցելելու Բաղդասարի հորը: Սակայն այդ ընթացքում վերջինս մահացել էր: Բաղդասարը վճարել էր հոր պարտքերը, որից հետո նրա մոտ համապատասխան գումար չէր մնացել՝ Միացյալ Նահանգներ վերադառնալու համար: Նա շարունակել էր աշխատեցնել հոր գյուղատնտեսական ֆերման՝ դրան վաստակելու և ԱՄՆ վերադառնալու համար: Բաղդասարը չէր հավակնում հոր ունեցվածքին, նա պատրաստվում էր ամեն ինչ թողնելու եղբորն ու խորթ մորը: Սակայն երբ պատերազմը բռնկվեց, նրան թույլ չտվեցին մեկնել Թուրքիայից: Նա ստիպված եղավ վճարել նաև բանակում ծառայելուց ազատվելու տուրքը:

1915 թ. ձմռանը գյուղում սկսեցին խոսել հայերին սպասվող դժվարությունների մասին: Հայերի շրջանում տեղի ունեցող ժողովների ժամանակ նրանք քննարկում էին գյուղի բնակչության պաշտպանությունն ապահովելու նպատակով քրդերին կաշառելու կամ սարերը բարձրանալու տարբերակները: Գարնանը ոստիկանությունը մտել էր նրանց տներ՝ զենք փնտրելու նպատակով: Բաղդասարը հանձնել էր այն ամենը, ինչ ուներ իր մոտ: Հունիսի սկզբին երկու զինվոր նրան տանում են հարևան գյուղի ոստիկանապետի մոտ: Մի քանի օր նրանից որևէ լուր չկար, մինչև որ նա կանչում է կնոջն իր մոտ: Բաղդասարն ասել էր կնոջը, որ ինքը խնդիրներ ունի իշխանությունների հետ, սակայն կինն ու որդին որևէ խնդիր չունեն: Հետագայում Էթելին տեղեկացնում են, որ Բաղդասարին բանտարկել էին, այնուհետև՝ խեղդամահ արել: Էթելը գրում էր, որ գյուղի հայ բնակիչներին կարճ ժամանակ անց տարել էին հարևան գյուղը, որտեղ սղամարդկանց բաժանել էին իրենց ընտանիքներից և, կապելով միմյանց, խեղդամահ

⁶⁷⁰ See *United States Official Records on the Armenian Genocide, 1915-1917* /Compiled with an introduction by Ara Sarafian/, էջ 562 (NA/RG 59/867.4016/303):

արել գետում: Կանանց կրկին վերադարձրել էին, սակայն այնուհետև շատերին նույնպես խեղդել էին: Քանի որ Էթելը ամերիկոսի էր, նրան թողել էին գյուղում՝ ոմն թուրք Շուքրիի տանը: Վերջինս հայուհի էր վերցրել որպես կին, ինչպես շատ շատերը: Հայ կանանց և երեխաներին արգելված էր խոսել հայերեն, նրանց բոլորին ստիպողաբար թուրք էին դարձնում:

Երեք ամիս անց Էթելը կարողացել էր այցելել ԱՄՆ-ի հյուպատոսին Խարբերդում, երկար ժամանակ եղել էր հիվանդանոցում և մնացել այնտեղ մինչև 1916 թ. հուլիսը, որից հետո մեկնել էր Կոստանդնուպոլիս:⁶⁷¹

Չնայած Պետքարտուղարությունը հսկայածավալ տեղեկատվություն էր ստանում ինչպես դեսպանությունից և հյուպատոսությունից, այնպես էլ միսիոներներից, նա ոչ միայն շարունակում էր իր չմիջամտողականության քաղաքականությունը, այլև որոշ առումով փորձում էր արդարացնել երիտթուրքական իշխանությունների հայտայաց քաղաքականությունը: Այսպես՝ 1916 թ. նոյեմբերի 21-ին պետքարտուղար Լանսինգը գրում էր նախագահ Վիլսոնին, որ հայերի «հայտնի անհավատարմությունն օսմանյան կառավարությանը, ինչպես նաև այն փաստը, որ նրանց կողմից բնակեցված տարածքը գտնվում էր ռազմական գործողությունների շրջանում, շատ թե քիչ արդարացնող հիմքեր էին ստեղծում իրենց տներից նրանց ստիպողաբար արտաքսելու համար»:⁶⁷²

Լանսինգն իր համեմատական վերլուծությունն էր ներկայացնում մի կողմից Օսմանյան կայսրության հայերի և մյուս կողմից Լիլից բելգիացիների ու ֆրանսիացիների՝ գերմանացիների կողմից կազմակերպված տեղահանության մասին: Երկու դեպքում էլ, ըստ Լանսինգի, տեղահանությունն արդարացվում էր «ռազմական անհրաժեշտությամբ»: Հայերի պարագայում, սակայն, չանդրադառնալով այդ գործողության անհրաժեշտությանը, այն իրականում «սարսափելի դաժանություն էր» և «այս պատերազմի պատմության ամենասև Էջերից մեկը»: Լանսինգն այն կարծիքին էր, որ Միացյալ Նահանգների

⁶⁷¹ Տե՛ս նույն տեղը, էջ 563-564 (NA/RG 59/867.4016/303):

⁶⁷² Տե՛ս US Department of State. Papers Relating to the Foreign Relations of the United States, The Lansing Papers, 1914-1920, vol. 1, Washington D. C., Government Printing Office, 1939, էջ 42:

հնարավոր միջամտությունը «դժբախտ ժողովրդի» համար ամբողջությամբ արդարացված կարող էր լինել՝ չնայած նրան, որ նրանք Թուրքիայի քաղաքացիներ էին:⁶⁷³ Լանսինգը նշում էր, որ Լիլի ֆրանսիական բնակչության տեղահանությունը պայմանավորված էր ռազմական անհրաժեշտությամբ, սակայն իրականացվեց զերմանական զինվորականության կողմից «անխիղճ և անմարդկային» կերպով, երբ բաժանվում էին ընտանիքներ, նախօրոք չէր հայտարարվում տեղահանության օրը: Իսկ ինչ վերաբերում է հայերին, ապա Օսմանյան կառավարությունը, ըստ իր «բնության», «ղաժան էր և բարբարոս» և չէր կարող համեմատության մեջ մտնել քաղաքակիթ Գերմանիայի «մարդկայնության ավելի բարձր ստանդարտների» հետ:⁶⁷⁴

Նոյեմբերի 28-ին դեսպան Էլկուսը պետքարտուղարին է փոխանցել երկու փաստաթուղթ՝ Կոնիայի հայ փախստականների շրջանում ամերիկյան միսիոներներ, բժիշկ Ուիլֆրիդ Փոստի և տիկին Ի. Գ. Բուշմանի կատարած բարեգործական աշխատանքների մասին, ինչպես նաև հայկական տեղահանությունից ողջ մնացածի վկայությունը: Նա խնդրում է չհրապարակել փաստաթղթերը՝ Կոնիայում միսիոներների աշխատանքը չխոչընդոտելու նպատակով:⁶⁷⁵

Առաջին փաստաթղթում նշվում էր, որ 1916 թ. հուլիսին Կոնիայում բանտարկել էին 90 հեղինակավոր հայերի: Ոստիկանություն էին «հրավիրել» նաև ամերիկյան միսիոներներին և մեղադրել նրանց հայերին հրահրելու մեջ, սակայն, պարզելով, որ նրանք ԱՄՆ-ի քաղաքացիներ էին և որևէ առնչություն չունեին քաղաքականության հետ, բաց էին թողել: Ըստ փաստաթղթի հեղինակների՝ մի քանի օր նրանք խորհում էին հայերի հետագա բախտի մասին, քանի որ լսել էին Ամանուսի լեռներում հինգ հազար հայերի կոտորածի մասին: Միսիոներների համոզմամբ, եթե հայերին կրկին արտաքսեին և կոտորեին, իրենց կողմից կատարված բարեգործական աշխատանքը որևէ օգուտ այդ ժողովրդին այդպես էլ չէր բերի: Սակայն շուտով նրանք տեղեկացել էին, որ, բացի երեք բանտարկյալներից, մյուսներն ազատ

⁶⁷³ Տե՛ս նույն տեղը, էջ 42-43:

⁶⁷⁴ Տե՛ս *The Papers of Woodrow Wilson*, 69 vols. / Ed. Arthur S. Link, Princeton, Princeton University Press, 1966-1994, vol. 40, էջ 24-27:

⁶⁷⁵ Տե՛ս *Unites States Official Records on the Armenian Genocide, 1915-1917* /Compiled with an introduction by Ara Sarafian/, էջ 566 (NA/RG 59/867.4016/306):

էին արձակվել: Միսիոներները նշում էին, որ, սկսած այդ օրվանից, հայերի վիճակը քաղաքում բարելավվել էր, նրանք ստացել էին որոշակի ազատություն, իսկ տեղական իշխանությունները փաստորեն դադարեցրել էին իրենց հսկողությունը միսիոներների կողմից կատարված աշխատանքի նկատմամբ: Շատ տղամարդիկ արդեն աշխատանք էին գտնում քաղաքում, և շատ ընտանիքներ, որոնց ամերիկացիներն օգնում էին, այլևս կարողանում էին իրենց ապահովել: Միաժամանակ քաղաքում կային հազարավոր այրիներ, հայր չունեցող ու որբ երեխաներ, և բազմաթիվ հիվանդ հայ զինվորներ՝ հիվանդանոցներում: Այս մարդիկ չքավորության մեջ էին, իսկ մոտեցող ձմեռը կարող էր էլ ավելի վատթարացնել հայերի վիճակը: Հյուսիս-արևմուտքից Կոնիա էին ժամանում և դեպի մոտակա գյուղեր մեկնում մեծ թվով մահմեդական փախստականներ, սակայն նրանցից որևէ մեկը միսիոներներին դեռ չէր դիմել: Կոնիայում կային նաև մեծ թվով չքավոր հույն ընտանիքներ:⁶⁷⁶

Ըստ միսիոներների հաշվետվության՝ նրանց գործունեությունը բաղկացած էր չորս հիմնական ուղղություններից՝ ընդհանուր օգնություն, հատուկ օգնություն, բժշկական աշխատանք և որբերի խնամք: Տվյալ պահին ընդհանուր օգնության հիմնական նպատակը դրամական միջոցների կանոնավոր բաշխումն էր: Չորս շաբաթը մեկ անգամ շուրջ վեց հազար հոգի դրամ էին ստանում բողոքական դպրոցի շենքում՝ օրական մեկ հոգուն մեկ պիաստրի չափով: Միաժամանակ միսիոներները նշում էին, որ այդ գումարը փոքր էր և չէր կարող բոլորին բավարարել, թեև մշտապես ցուցակները ենթարկվում էին փոփոխության: Բացի այդ՝ դպրոցի առջև մշտապես չքավոր մարդիկ էին հավաքվում՝ պահանջելով հավելյալ գումար: Միսիոներները գրում էին նաև, որ կաթոլիկ քահանան ինքն էր վերցնում գումարն իր ծխականների համար, իսկ մոտակա գյուղերից հայերի ներկայացուցիչներ էին գալիս՝ հասանելիք գումարը տանելու համար: Ըստ հաշվետվության՝ թուրքական գյուղերում գտնվող հայերի վիճակը սովորաբար ծայրահեղ ծանր էր, ինչն այցելությունների և հետաքննության կարիք ուներ: Սակայն դրա համար ժամանակ էր հարկավոր, ինչպես նաև իշխանությունների թույլտվությունը:

⁶⁷⁶ Տե՛ս նույն տեղը, էջ 567-568 (NA/RG 59/867.4016/306):

Հատուկ օգնություն էր տրվում Կորիայում ժամանակավորապես գտնվող աքսորյալներին, հիվանդ հայ զինվորներին, ինչպես նաև բանտարկված մարդկանց: Վստահելի դեպքերում կարող էին տրամադրվել նաև վարկեր:

Քանի որ իշխանությունները փակել էին ամերիկյան հիվանդանոցը, բժիշկ Փոստն իր տան առաջին հարկը դարձրել էր բուժհիմնարկ, որն ամսական ընդունում էր 1.500 հոգու: Փոստին օգնում էին երեք ամերիկացի բուժքույրեր և դռնապանը: Բժշկական օգնությունը հիմնականում տրամադրվում էր անվճար:

Ըստ միսիոներների՝ ամենից կարևոր ուղղությունը որբերի հետ աշխատանքն էր: Բացի միսիոներների կողմից որդեգրած երեխաներից՝ նրանք նշված շրջանում խնամում էին նաև 4-14 տարեկան շուրջ հարյուր երեխաների: Երեխաների մեծամասնությունը կազմում էին թուրքական ընտանիքներից կամ հարեմներից փրկվածները: Բացի հագուստի և անկողնային պարագաների տրամադրումից՝ նրանց համար բացվել էին «մասնավոր» դպրոցներ, որտեղ երեխաներին սովորեցնում էին հայերեն, թուրքերեն, անգլերեն, ֆրանսերեն, թվաբանություն և Աստվածաշունչ:

Չեկույցի վերջում միսիոներները գրում էին, որ վերջին շրջանում լուրեր էին տարածվել այն մասին, որ հայ աքսորյալներին շուտով գորակոչելու էին, ինչը կարող էր իրական ողբերգություն դառնալ Կոնիայում գտնվող 12 հազար հայերի համար: Նրանք նշում էին նաև, որ եթե տվյալ պահին օգնում էին շուրջ վեց հազար հայերի, ապա առանց տղամարդ մնացած կանանց և երեխաներին շատ ավելի մեծ դրամական միջոցներ էին հարկավոր: Միսիոներները հավատացած էին, որ Կոնիան յուրահատուկ էր մնալու այն պատճառով, որ այստեղ կոտորած տեղի չէր ունեցել, և այն կարող էր դառնալ անվտանգ բնակավայր 12 հազար հայերի համար:⁶⁷⁷

Պետքարտուղարություն ներկայացված երկրորդ փաստաթուղթը ողջ մնացած մի երիտասարդ կնոջ վկայությունն էր: Նա գրում էր, որ 1915 թ. մայիսին, առանց նախազգուշացման, Սամսունի ողջ հայկական թաղամասը շրջապատվեց ոստիկանների կողմից: Հայ բնակչության թիվը շատ ավելի մեծ էր, քան հույներինը: Շուրջ մեկ շաբաթ իշ-

⁶⁷⁷ Տե՛ս նույն տեղը, էջ 568-570 (NA/RG 59/867.4016/306):

խանությունները թույլ չէին տալիս, որ հայերը դուրս գան իրենց սնե-
րից: Վերջապես նրանք թույլ տվեցին միայն տղամարդկանց դուրս
գալ գնումների, սակայն վերադառնալուն պես բոլորին բանտարկե-
ցին: Այնուհետև իշխանությունները սկսեցին արտաքսման գործըն-
թացը: Ավելի ուշ նրանք արտաքսեցին նաև բանտարկված տղա-
մարդկանց: Նրանց տարան մոտակա սարերը, գլխատեցին և մար-
մինները նետեցին գետը: Այնուհետև սկսվեց կանանց և երեխաների
քարավաններից յոթ տարեկանից բարձր աղջիկների ընտրությունը:
Այսպես՝ Մալաթիայի մոտ շատերին տանում էին մահմեդականների
տներ, և երբ շատերն այլևս պետք չէին գալիս, նրանց վերադարձնում
էին Ֆերուհջիլարի լեռներում տեղակայված ճամբար: Ըստ վկայի՝ շա-
տերին նետում էին անդունդը: Հին Մալաթիայի մոտակայքում վկան
ականատես էր դարձել, որ մեծ թվով հայերի դիակները նետում էին
մեծ հորի մեջ, այնուհետև՝ ծածկում հողի շերտով:

Վկայի ընտանիքը բաղկացած էր հինգ անդամներից: Նրա հորն ու
եղբորը սպանել էին ճանապարհին, իսկ քույրն ու մայրը մահացել էին
տանջանքներից Մալաթիայում: Դանապարհին վկան ծանոթացել էր
Թոքատից մի ընտանիքի հետ, որը նրան մեծ օգնություն էր ցուցաբե-
րել: Այդ կինը կարողացել էր ողջ մնալ «իրեն անցանկալի դարձնելու»
միջոցով և այն բանի շնորհիվ, որ նրան հաջողվել էր կաշառել ոստի-
կաններին: Նա հանդիպել էր ամերիկացի միսիոներների և կարողա-
ցել փրկվել.⁶⁷⁸

«Որպես վառ արտահայտություն այն բանի, որ թուրքը կատարյալ
կերպով անկարող է հոգալ իր իսկ մասին», Ջեքսոնը գրում էր այն մա-
սին, թե ինչպես 1916 թ. դեկտեմբերին Ուրֆայի մահմեդական բնակ-
չությունը հայերին տեղահանելուց հետո միայն սկսեց զիտակցել, որ
«մնացել է առանց դեղագործների, ջրաղացպանների, հացթուխների,
բանվորների, կոշկակարների, ներկարարների, ջուլիակների, դեր-
ձակների կամ այլ արհեստավորների ու առևտրականների» և հատուկ
խնդրագիր ներկայացրեց Ջեմալ փաշային Ռաքքայից Ուրֆա հայ
արհեստավորներ տեղափոխելու մասին: Ջեմալ փաշան որոշեց Ուր-
ֆա տեղափոխել 2.500 հայ արհեստավորների՝ իրենց ընտանիքներով
հանդերձ: Մինչև 1917 թ. մայիսը Ուրֆա էին տեղափոխվել շուրջ 6 հա-

⁶⁷⁸ Տե՛ս նույն տեղը, էջ 571-572 (NA/RG 59/867.4016/306):

գար հայեր: Ըստ Ջեքսոնի՝ այդ հայերը կարողացել էին համակերպվել և զբաղվել բիզնեսով այն «վայրագ կերպարների» հետ, որոնք ընդամենը մեկ տարի առաջ «մոլեռանդորեն ոչնչացրել էին նույն ազգին պատկանող 14 հազար քրիստոնյաների, որոնց տարիներ շարունակ լավ ճանաչում էին և անձամբ հարաբերություններ ունեին նրանց հետ»:⁶⁷⁹

1917 թ. հունվարի 20-ին Կոստանդնուպոլսում Գերմանիայի նոր դեսպան Ռիխարդ Բյուլմանը գրում էր կանցլեր Բեթման Հոլվեգին, որ ամերիկացիները մեծապես նպաստել էին հայերի «մտավորականությանը» կրթելու գործին և այս առումով անուղակի կերպով մեղավոր էին թուրքահայերի «ախուր ճակատագրի» հարցում: Թեև թուրքական ղեկավարները լիովին բացահայտել էին իրենց «հայկական քաղաքականությունը», սակայն, դեսպանի համոզմամբ, այն հնարավոր էր ենթարկել փոփոխության, քանի որ «բնակչության հայկական հատվածի թուլացման խնդիրը կարելի էր մեծապես լուծված համարել»:⁶⁸⁰

1917 թ. փետրվարի 5-ին դեսպան Էլկուսը զեկուցում էր պետքարտուղարին, որ 1916 թ. նոյեմբերի 20-ին օսմանյան արտաքին գործերի նախարարությունը բանավոր բողոք էր ներկայացրել դեսպանությանն առ այն, որ Մարսելում հայերենով լույս տեսնող «Արմենիա» թերթի՝ 1916 թ. հուլիսի 5-ի համարում հրապարակվել էր Խարբերդում ԱՄՆ-ի հյուպատոսի՝ հայերի արտաքսմանը վերաբերող զեկույցը: Բարձր Գուռը ներկայացրել էր դեսպանությանը «Արմենիա»-ում լույս տեսած նյութի թուրքերեն թարգմանությունը: «Արտաքսված հայերի սարսափելի տանջանքներն արտրավայրի ճանապարհին» նյութի առաջին մասի հեղինակն էր Փարիզի «Journal» պարբերականի՝ Էրզրումում թղթակից Անրի Բարբին: «Արմենիան» արտատպել էր նյութը «Journal»-ից: Երկրորդ մասն իբր 1915 թ. հունվարի 1-ին Խարբերդում հյուպատոսի ներկայացրած զեկույցն էր և հայերի արտաքսմանը վերաբերող այլ նյութեր: Սակայն, ի պատասխան դեսպանության հարցմանը, հյուպատոսը նշել էր, որ, բացի ԱՄՆ-ի դեսպանությանն

⁶⁷⁹ Տե՛ս NA Microfilm Publications, Microcopy No. 353, Records of the Department of State Relating to Internal Affairs of Turkey, 1910-1929, Roll 46, NA/RG 59/867.4016/373, էջ 726-727:

⁶⁸⁰ Տե՛ս *The Armenian Genocide. Evidence from the German Foreign Office Archives, 1915-1916 / Edited by Wolfgang Gust*, էջ 698:

ու Պետքարտուղարությանը ներկայացված իր զեկուցագրերից, երբեկիցե հրապարակման ենթակա որևէ տեղեկություն չի տրամադրել: Գեսպանության քննության միջոցով պարզվել էր նաև, որ Փարիզի «*Journal*»-ը նման նյութ չէր տպագրել: Հնարավոր է, որ «*Արմենիան*» այդ նյութը ստացել էր այլ աղբյուրից: Ըստ Էլկուսի՝ իրականում հյուպատոսի՝ «*Արմենիա*»-ում տպագրված զեկուցագրի լեզուն փոքր ինչ տարբեր էր, սակայն հիմնական պարբերությունների արտահայտված միտքը համընկնում էր:

Միաժամանակ Բարձր Գուռը պնդում էր, որ հետ կվերցնի հյուպատոս Գեյվիսի դեմ ուղղված բողոքը միայն այն դեպքում, եթե նա «*Journal*»-ին նամակ գրի այն մասին, որ երբեկիցե նման նյութ չի տրամադրել ո՛չ «*Journal*»-ին, ո՛չ էլ «*Արմենիա*»-ին: Թուրքական զինվորական հրամանատարությունը պահանջել էր արտաքին գործերի նախարարությունից հայտնել ԱՄՆ-ի դեսպանությանը, որ հյուպատոս Գեյվիսը Պետքարտուղարության միջոցով պատասխաններ էր ներկայացրել ԱՄՆ-ում ապրող հայերին, որոնք նրան բազմաթիվ հարցումներ էին ուղղել Խարբերդում գտնվող իրենց ազգականների դրության մասին: Արտաքին գործերի նախարարությունը զնահատում էր հյուպատոսի գործունեությունը որպես Թուրքիայի ներքին գործերին միջամտելու փաստ: Ըստ թուրք պաշտոնյաների՝ ազգականների մասին տեղեկություններ ստանալու համար ԱՄՆ-ում ապրող հայերը պետք է դիմեին Վաշինգտոնում օսմանյան դեսպանությանը կամ Նյու Յորքում հյուպատոսությանը: Հիմնական պատճառը նաև այն էր, որ օսմանյան կառավարությունը չէր ճանաչում Օսմանյան կայսրության քաղաքացիների՝ ԱՄՆ-ում ստացած քաղաքացիությունը:⁶⁸¹

Մարտի 2-ին դեսպան Էլկուսը զեկուցում էր պետքարտուղար Լանսինգին երկրում տեղի ունեցած կաղրային փոփոխությունների և նոր քաղաքական իրավիճակի մասին: Էլկուսը գրում էր, որ, փաստորեն լինելով երկրի ղեկավարը «վարագույրի» հետևից, Թալեթ փաշան հանկարծակի «առաջ է գալիս» և ստանձնում իշխանության «իրական»՝ մեծ վեզիրի պաշտոնը: Ըստ դեսպանի՝ ստեղծված նոր իրավիճակը տարբեր կերպ էր մեկնաբանվում երկրում: Առաջին վարկածի համաձայն՝ թուրքերն այդ քայլով փորձում էին «ընդլայնել

⁶⁸¹ See *United States Official Records on the Armenian Genocide, 1915-1917* /Compiled with an introduction by Ara Sarafian/, էջ 575-577 (NA/RG 59/867.4016/313):

անկախությունն» ու ձերբազատվել «չափից ավելի ուժեղ գերմանական հսկողությունից»: Երկրորդ վարկածի համաձայն՝ թուրք ղեկավարները «հասկացել էին, որ սխալ են գործել իրենց ուժեղ ազգայնական նպատակները կայսրության ոչ թուրքական ազգությունների դեմ առաջ տանելու գործում», և իբր այս նոր քայլը կարող էր մեղմել նրանց պատասխանատվությունը, որը պետք է կրեին հայերի, արաբների և այլ ազգերի հանդեպ իրենց դրսևորած «վերաբերմունքի» համար: Ըստ դեսպանի՝ այս գաղափարն արդեն իսկ արտահայտվել էր Թալեաթ փաշայի՝ սահմանադրության առջև բոլոր օսմանցիների իրավունքների և կայսրությունում օրենքի գերակայության մասին Պատգամավորների պալատում հնչեցրած հայտարարության մեջ: Ըստ Էլկուսի՝ Ջավիդն իրեն անձամբ ասել էր, որ համաձայնել էր ստանձնել ֆինանսների նախարարի պաշտոնը ոչ թուրքական ազգությունների հանդեպ քաղաքականության «փոփոխության» պայմանով:⁶⁸²

Համաձայն Էլկուսի տեղեկատվության՝ Թալեաթ փաշան «հայկական դաժանությունների հետաքննություն» էր սկսելու, մասնավորապես՝ որոշ «տխրահոշակ» նահանգապետերի գործողությունների առնչությամբ, և հնարավոր էր, որ Թուրքիայի կառավարությունը որդեգրեր հետևյալ դիրքորոշումը. կենտրոնական իշխանությունների կողմից տրված ընդհանուր հրամաններն արդարացվելու են, սակայն հայերի և նրանց ունեցվածքի դեմ տեղական մակարդակով կատարվածն արդարացվել չի կարող: Այսպիսով, «ընդհանուր հրահանգների խախտումները, որոնց հետևանքով տեղի են ունեցել կոտորածներ, և իրագործվել է դանդաղ մահվան ու բնաջնջման քաղաքականություն, պարտադիր կերպով դիտարկվելու են որպես տեղական նահանգապետերի կամայական գործողություններ, և հարկ լինելու դեպքում որոշ նահանգապետեր, որոնք մեղավոր են եղել հայերի հանդեպ տեղի ունեցած վայրագությունների մեջ, պատասխանատվություն են կրելու, մասնավորապես՝ նրանք, ովքեր շատ են հարստացել արտաքսումների ընթացքում»:⁶⁸³

1918 թ. մարտին Պետքարտուղարությանը ներկայացրած տեղեկանքում Ջեքսոնը գրում էր, որ աքսորյալներին օգնության տրա-

⁶⁸² Տե՛ս NA Microfilm Publications, Microcopy No. 353, Records of the Department of State Relating to Internal Affairs of Turkey, 1910-1929, Roll 6, NA/RG 59/867.00/804.1/2, էջ 1-3:

⁶⁸³ Տե՛ս նույն տեղը, NA/RG 59/867.00/804.1/2, էջ 3-4:

մաղրման ծրագիրը գործել էր մինչև 1917 թ. ապրիլին ԱՄՆ-Թուրքիա հարաբերությունների վատթարացումը: Ձեքսոնը որոշում էր կայացրել օգնության բոլոր միջոցները փոխանցելու Հալեպում ապրող հեղինակավոր շվեյցարացի Էմիլ Յոլլինգերին, որը հայտնի էր իր բարեգործական գործունեությամբ: Վերջինս շարունակեց ստանալ և օգնության հանձնաժողովներին տրամադրել անհրաժեշտ ամսական միջոցները: Ձեքսոնը հաղորդում էր, որ, Հալեպի 50 հազար օգնություն ստացողներից բացի, երկու անգամ ավելի շատ մարդ կար շրջակա քաղաքներում և գյուղերում, որոնք մինչև 1917 թ. մայիսին հյուպատոսի մեկնումը նույնպես օգնություն էին ստանում հանձնաժողովների միջոցով: Տեղահանված հայերն ու հույները տեղավորված էին հիմնականում Հալեպում, Այնթապում, Մոսուլում, Ուրֆայում, Բիրեջիկում, Մարդինում, Մարաշում, Զիլիսում, Մամբաջում, Սերուջում, Բաբում, Իդլիբում, Մեսքենեում, Համամում, Ռաքքայում, Արուհարիբում, Սեբհայում, Սելիմիում, Համայում, Հոմսում և Գամասկոսում: Ըստ Ձեքսոնի՝ Նյու Յորքում գտնվող Հայկական և սիրիական օգնության ամերիկյան կոմիտեն կապի մեջ էր ինչպես Հալեպում գործող հանձնաժողովների, այնպես էլ Յոլլինգերի հետ:

Միացյալ Նահանգներ մեկնող Ձեքսոնը ժամանակավորապես Միացյալ Նահանգների շահերը ներկայացնող Հոլանդիայի հյուպատոսին էր փոխանցել ԱՄՆ-ի հյուպատոսությունում ի պահ դրված դրամական միջոցներն ու արժեքավոր իրերը: Մեկնելուց առաջ Ձեքսոնը, ԱՄՆ-ի պետքարտուղարության և դեսպանության հանձնարարության համաձայն, այրել էր հյուպատոսության ողջ արխիվը, որը տեղեկություններ էր պարունակում հայ տեղահանվածների, ինչպես նաև մանրամասներ կոտորածների և տեղահանությունների մասին: Ձեքսոնը դա համարում էր շատ ճիշտ քայլ, քանի որ, օրինակ, երբ իշխանություններն առգրավեցին Բեյրութում փակված Ֆրանսիայի հյուպատոսության արխիվը, նրանք կախաղան հանեցին 60 և արտաքսեցին 5 հազար հոգու:⁶⁸⁴

Ամփոփելով իր զեկույցը՝ Ձեքսոնը գրում էր, որ ԱՄՆ-ի դեսպանության համագործակցությամբ հնարավոր դարձավ կանխել շուրջ 48 հազար հայերի տեղահանությունը Հալեպից, Այնթապից, Մարաշից ու

⁶⁸⁴ Տե՛ս նույն տեղը, NA/RG 59/867.4016/373, pp. 725-726:

շրջակա գյուղերից: Հյուպատոսությունը «փրկեց և հոգ տարավ» 100 հազարից ավելի հայերի (ներառյալ 2.400 որբ երեխաները) համար, որոնք արտաքսվել էին կայսրության տարբեր շրջաններից և գտնվում էին շրջանի քաղաքներում ու գյուղերում: Հյուպատոսությունը ժամանակավոր օգնություն ցուցաբերեց մահ 45 հազար փախստական մահմեդականներին և 3 հազար ուղղափառ հույներին: Վերջիններս տեղահանության էին ենթարկվել ծովափնյա քաղաքներից:⁶⁸⁵

1917 թ. մայիսի 9-16-ին Լոնդոնի դեսպանությունից, Ստոկհոլմի, Կահիրեի ներկայացուցչություններից, Ալեքսանդրիայի հյուպատոսությունից, Նյու Յորքի հրեական կազմակերպություններից Պետքարտուղարությունում ստացված տեղեկատվության համաձայն՝ 1917 թ. ապրիլի սկզբին երիտթուրքական իշխանությունները կազմակերպել էին հրեական բնակչության տեղահանություն Թեյ Ավիվից և Ջաֆֆայից, որի ընթացքում տեղի էին ունեցել սպանություններ և թալան: Իշխանությունները բացատրում էին տեղի ունեցածը որպես «նախազգուշական միջոց» անգլիացիների գործողությունների ակտիվացման պարագայում: Սիրիայի նահանգապետ Ջեմալ փաշան այդ օրերին հայտարարում էր, որ հայերի հանդեպ հետապնդումներին հետևելու են հրեաների դեմ ուղղված գործողությունները: Նա բացեիբաց հայտարարում էր, որ «հրեաների ուրախությունը կարճ է տևելու, քանի որ նրանք կիսելու են հայերի բախտը»:⁶⁸⁶

Մայիսի 17-ին պետքարտուղար Լանսինգը հանդիպում ունեցավ դեռևս ապրիլին Կոստանդնուպոլսից մեկնած դեսպան Էլկուսի քարտուղար Ալսբերգի հետ: Լանսինգը գրում էր նախազգահ Վիլսոնին, որ թուրքերը սկսել էին նյարդայնանալ Գերմանիայի ամբարտավանությունից և հույս ունեին, որ Միացյալ Նահանգների հետ բարեկամական հարաբերություններ հաստատելու պարագայում վերջինս կմասնակցի Թուրքիայի տնտեսության վերականգնմանը: Լանսինգը մահավատացած էր, որ եթե Էնվերին, Թալեսթին և Ջեմալին հնարավոր լինի համոզել կամ կաշառել, որպեսզի նրանք թույլ տան դաշնակիցների սուզանավերի մուտքը Դարդանեյ՝ գերմանական ռազմանավերը կործանելու նպատակով, թուրքերը կդադարեն Գերմանիայից վախեն-

⁶⁸⁵ Տե՛ս նույն տեղը, NA/RG 59/867.4016/373, էջ 731:

⁶⁸⁶ Տե՛ս նույն տեղը, NA/RG 59/867.4016/316, 316b, 316c, 317, 318, 320, 321, 322, 323, 340, 349, 351:

նալուց և կսկսեն բանակցել դաշնակիցների հետ՝ նպաստավոր պայմանների հիման վրա.⁶⁸⁷

1917 թ. հունիսի 4-ին Պետրոգրադում ԱՄՆ-ի դեսպան Դեյվիդ Ֆրենսիսը պետքարտուղարին է փոխանցում ապրիլի 15-ին Թիֆլիսում ԱՄՆ-ի հյուպատոս Ռիլյան Կրեստնի ներկայացրած զեկուցագիրը՝ Կովկասին հարակից թուրքական մահանձներում տիրող իրավիճակի մասին: Կրեստնը գրում էր, որ ԱՄՆ-ում և այլուր բնակվող ազգականներից դրամական միջոցները փոխանցվում էին հայ փախստականներին հյուպատոսության միջոցով: Հյուպատոսությունը մաս կարևոր դերակատարություն ուներ տեղահանություններից հետո ողջ մնացած կամ կորած հայերի մասին տեղեկատվության փոխանցման գործում: Օրական այդ տեսակի 20-ից ավելի հեռագրեր էին շրջանառվում Պետքարտուղարության հետ: Ֆրենսիսը համագործակցում էր մաս Հայկական և սիրիական օգնության ամերիկյան կոմիտեի տեղական տնօրեն, միսիոներ Մակկալլամի հետ, որի միջոցով Ռուսաստանի կողմից գրավված թուրքական մահանձներում պատսպարված փախստականներին էին փոխանցվում ազգականներից ստացված ֆինանսական միջոցները: Ֆինանսական միջոցները հիմնականում փոխանցվում էին ԱՄՆ-ի հայ համայնքներից, հատկապես՝ Ֆրեզնոյից (Կալիֆոռնիա), Լուրենսից (Մասաչուսեթս) և Վեստ Հաբոկանից (Նյու Ջերսի):⁶⁸⁸

Կրեստնը գրում էր, որ «ինչքան էլ բնական և ընդունելի կարող էր ներկայանալ որպես առանձին ազգ կամ կայսերական ռեժիմի տակ ինքնավարություն ստանալու հայկական ձգտումը, չի կարելի ժխտել, որ այս շարժումը նույնպես մեծապես պատասխանատու էր Թուրքիայի տարածքում նրանց կրոնակիցների տանջանքների համար»:⁶⁸⁹ Ըստ Կրեստնի՝ հայերի հետ կատարված դժբախտությունը ցույց էր տալիս, որ զերմանական ռազմական և քաղաքացիական պաշտոնյաներն Օսմանյան կայսրությունում «հետևողականորեն ընդունել էին լիարժեք հեռավորության, եթե չասել ցինիկ անտարբերության

⁶⁸⁷ Տե՛ս US Department of State. *Papers relating to the Foreign Relations of the United States. 1917 Supplement 2. The World War, vol. 1*, Washington, Government Printing Office, 1932, էջ 792-796:

⁶⁸⁸ Տե՛ս NA Microfilm Publications, Microcopy No. 353, Records of the Department of State Relating to Internal Affairs of Turkey, 1910-1929, Roll 6, NA/RG 59/867.00/797, էջ 1-2:

⁶⁸⁹ Տե՛ս նույն տեղը, NA/RG 59/867.00/797, էջ 7:

քաղաքականություն այդ իրադարձությունների հանդեպ»: Վկայությունները խոսում էին այն մասին, որ քանի դեռ գերմանական կապալառուների ենթակայության տակ հայ աշխատողներն ընդգրկված էին Բաղդադի երկաթուղու շինարարական աշխատանքներում, նրանք շատ դեպքերում պաշտպանված էին դժվարություններից, այսինքն՝ այս հարցում նրանց նկատմամբ հանդես էր բերվում գործնական մոտեցում: Կրեստոնը համարում էր գերմանացի պրոֆեսոր Պաուլ Ռոբրախսին հայ բնակչության տեղահանության ծրագրի հեղինակ, քանի որ նա մտածում էր Բաղդադի երկաթուղու երկայնքով մեկ ապրող արաբ բնակչությունը համալրել հայերով, որոնք այսպիսով կարող էին չեզոքացվել Ռուսաստանի ազդեցությունից: Ապա նշում էր, որ համեմայն դեպս ո՛չ Կոստանդնուպոլսում, ո՛չ էլ նահանգներում գերմանացիները չօգտագործեցին իրենց հեղինակությունը ոչ միայն դադարեցնելու, այլև նույնիսկ փափկացնելու Կոստանդնուպոլսից ստացվող «դիտումնավոր ջարդերի» մասին կարգադրությունը:⁶⁹⁰

Ըստ Կրեստոնի՝ տվյալ պահին Թիֆլիսում և Թավրիզում ԱՄՆ-ի հյուպատոսությունների հիմնական նպատակն էր ամերիկյան միսիոներական շահերի պաշտպանությունը, քանի որ Հայաստան կոչվող աշխարհագրական տարածքներում միսիոներները շուրջ մեկ դար է, ինչ անձնագրի գործունեություն էին իրականացրել Մերձավոր Արևելքում քրիստոնյա և մահմեդական բնակչության զարգացման ուղղությամբ: Մասնավորապես Թուրքիայում, որտեղ ամերիկյան ազդեցությունը ոչ քաղաքական բնույթ ուներ, միսիոներներն իրենց աշխատանքով «հատուկ բարենպաստ կարգավիճակ» ունեին:

Կրեստոնը հատուկ ընդգծում էր ռուսական քաղաքացիական և ռազմական իշխանությունների վերաբերմունքը և կապերը ամերիկյան միսիոներների հետ Պարսկաստանում, Հայաստանում և Թուրքիայում: Ըստ Կրեստոնի՝ տվյալ պահին և հետագայում, նկատի առնելով նաև ռուսական քաղաքականության մոտեցումները, միսիոներների աշխատանքը հայերի և սիրիացիների հետ որևէ կերպ չպետք է տարբերվեր քրդերի կամ այլ մահմեդականների հետ աշխատանքից, ինչը կարող էր քաղաքական խնդիրների պատճառ դառնալ: Այն կարող էր իր նպաստը բերել քրդերի և հայերի, ինչպես նաև քրդերի և ռու-

⁶⁹⁰ Տե՛ս նույն տեղը, NA/RG 59/867.00/797, էջ 11-12:

սական կառավարության միջև հարաբերությունների բարելավման գործին:⁶⁹¹

Հյուպատոսն այնուհետև գրում էր, որ 1916 թ. այցելել էր Երևան և ականատեսը դարձել այն բանին, թե ինչպես էր Ամերիկյան կոմիտեն աշխատում հայ փախստականների հետ, ինչպիսի օգնություն էր ցուցաբերում գյուղացիներին: Ամերիկայի ապագա հարաբերություններն այս տարածաշրջանի հետ մեծապես կախված էին այն օգնությունից, որը միսիոներներն իրականացնում էին հայերի շրջանում:⁶⁹²

1917 թ. հոկտեմբերի 19-ին Խարբերդում նախկին հյուպատոս Լեսլի Դեյվիսը «Թուրքիայում ընդհանուր վիճակը» վերնագրով տեղեկանք էր ներկայացրել պետքարտուղարին: Ըստ Դեյվիսի՝ դիվանագիտական հարաբերությունների խզումն ԱՄՆ-ի և Թուրքիայի միջև թուրք պաշտոնյաների կողմից դիտարկվում էր «գուտ որպես քաղաքական միջոց», որը «ցավալի էր և ավելորդ», քանի որ երկու պետությունների միջև խնդրահարույց հարց չկար: Հույս էր հայտնվում, որ հարաբերությունների խզմանը պատերազմի հայտարարություն չի հետևի: Այս մտքերը Դեյվիսին էին հաղորդել Կովկասյան բանակի հրամանատար Ահմեդ Իսսատ փաշան, Մամուրեթ-ուլ-Ազիզի նահանգապետ Միդիատ բեյը, 11-րդ բանակային կորպուսի հրամանատար Սեհմեդ Վեիբի բեյը: Երբ Պետքարտուղարությունը հանձնարարել էր Դեյվիսին լքել երկիրը, այդ նույն պաշտոնյաներն առաջարկել էին հյուպատոսին մնալ իրենց հյուրը մինչև մեկնումը՝ համարելով, որ քաղաքական հարաբերությունները որևէ ազդեցություն չեն ունենալու մարդկային հարաբերությունների վրա:⁶⁹³ Ինչ վերաբերում էր այն ամերիկացի միսիոներներին և քաղաքացիներին, որոնք ցանկանում էին մնալ Թուրքիայում, թուրքական իշխանություններն այդ կապակցությամբ որևէ առարկություն չունեին: Ըստ Դեյվիսը գրում էր, որ հուլիս ամսին երկրից իր մեկնելուց հետո նա որևէ տեղեկատվություն չի ստացել ոչ միայն ամերիկացիների, այլև հայերի նկատմամբ վատ վերաբերմունքի մասին:⁶⁹⁴

Դեյվիսի զեկուցման համաձայն՝ տնտեսական իրավիճակը Թուր-

⁶⁹¹ Տե՛ս նույն տեղը, NA/RG 59/867.00/797, էջ 17-20:

⁶⁹² Տե՛ս նույն տեղը, NA/RG 59/867.00/797, էջ 21-22:

⁶⁹³ Տե՛ս նույն տեղը, Roll 6, NA/RG 59/867.00/803, էջ 1:

⁶⁹⁴ Տե՛ս նույն տեղը, Roll 6, NA/RG 59/867.00/803, էջ 4:

քիայում, մասնավորապես՝ Փոքր Ասիայի նահանգներում, «միանշանակ վատ էր»: Տնտեսության հիմնական ոլորտը գյուղատնտեսությունն էր, որով հիմնականում զբաղվում էր հայ բնակչությունը: Սակայն, նկատի առնելով հայերի տեղահանությունն ու կոտորածները, ինչպես նաև մահմեդական տղամարդկանց՝ բանակում լինելու հանգամանքը, այդ ոլորտը գրեթե ամբողջությամբ կործանվել էր: Նույնը վերաբերում էր առևտրին և արհեստներին: Խարբերդի հյուպատոսական շրջանում գրեթե բոլոր առևտրականներն ու գործարարները հայեր էին, և քաղաքի դրամատներում գտնվող ավանդների 90 %-ը պատկանում էր հայերին:

Ըստ Դեյվիսի՝ երկրից իր մեկնելու պահին զինվորների, սպաների և քաղաքացիների տրամադրությունները շատ հոռետեսական էին: Նրանք մտածում էին, որ նույնիսկ եթե Թուրքիան հաղթի պատերազմում, շահողն այդ պարագայում լինելու է միայն Գերմանիան: Ըստ Դեյվիսի՝ գերմանացիներն այդ ժամանակ Թուրքիայում որևէ հեղինակություն չունեին: Թե՛ պաշտոնյաները, թե՛ ժողովուրդը գտնում էին, որ Գերմանիան պատասխանատու է իրենց բոլոր դժբախտությունների համար:⁶⁹⁵

Լեսլի Դեյվիսը մեկնեց Խարբերդից 1917 թ. մայիսի 16-ին՝ իր հետ Միացյալ Նահանգներ տանելով 60 հոգանոց մի խումբ, որի մեծամասնությունը կազմում էին ԱՄՆ-ի քաղաքացիություն ունեցող հայերը:⁶⁹⁶

1917 թ. հոկտեմբերի 27-ին Աթենքում ԱՄՆ-ի գլխավոր հյուպատոսը գեկուցում էր պետքարտուղարին Չմյուռնիայից ժամանած Բրիտանիայի քաղաքացի, երկար ժամանակ Թուրքիայում ապրող Չարլտոն Ջիրոյի հետ իր տեղակալ Ուոլլերի հանդիպման մասին: Վերջինս, ըստ գլխավոր հյուպատոսի, ի տարբերություն երկար ժամանակ Թուրքիայում ապրող այլ բրիտանացիների, թուրքասեր էր և հայկական ջարդերի հարցում արդարացնում էր թուրքական կառավարությանը՝ հիմնական մեղքը բարդելով Գերմանիայի վրա: Ջիրոն համարում էր, որ Գերմանիան բարոյապես պատասխանատու էր հայկական կոտորածների համար և «մեծ բավարարվածությամբ էր» հետևում դրանց իրականացմանը: Նա գտնում էր, որ որևէ կաս-

⁶⁹⁵ Տե՛ս նույն տեղը, Roll 6, NA/RG 59/867.00/803, էջ 4-6:

⁶⁹⁶ Տե՛ս նույն տեղը, Roll 6, NA/RG 59/867.4016/392, էջ 683-684:

կաժ չէր կարող լինել այդ հարցում, քանի որ ցանկության պարագայում Գերմանիան կարող էր անմիջապես դադարեցնել կոտորածները: Այդ ժամանակ Թուրքիայի մեծ թվով հեղինակավոր մարդկանց մոտ «ընդհանուր ափսոսանք» կար կատարվածի համար, բայց ոչ թե զոհերի հանդեպ իրենց համակրանքի առումով, այլ քաղաքականության նման սխալի հետևանքով: Նրանք հավատացած էին, որ գալու է ժամանակը, երբ Անգլիան, Միացյալ Նահանգները, Ֆրանսիան ամեն ինչ կանեն մեղավորներին պատժելու համար:⁶⁹⁷

Ըստ Ջիրոյի՝ թուրքերը հատուկ համակրանք ունեին Միացյալ Նահանգների նկատմամբ նրա չեզոք քաղաքականությամբ, գործարար մեծ կարողությունների և Թուրքիայում հաստատված քոլեջների, դպրոցների, հիվանդանոցների և այլ հաստատությունների համար: Նույնիսկ դիվանագիտական հարաբերությունների խզումից հետո ամերիկացիներն ազատորեն շարժվելու որևէ սահմանափակում չեն ունեցել, մասնավորապես, Ջնյոտնիայում ամերիկյան գործարար շահերն ընդհանրապես չեն տուժել:⁶⁹⁸

⁶⁹⁷ Տե՛ս նույն տեղը, Roll 6, NA/RG 59/867.00/807, էջ 1, 3:

⁶⁹⁸ Տե՛ս նույն տեղը, Roll 6, NA/RG 59/867.00/807, էջ 4-5:

ԳԼՈՒԽ 7

Միացյալ Նահանգների կողմից Թուրքիային պատերազմ հայտարարելու հարցի շուրջ

1916 թ. ընտրությունների հաղթանակից և «խաղաղության մանդատը» ստանալուց անմիջապես հետո Վիլսոնն ակտիվ կերպով ձեռնամուխ եղավ Եվրոպայում փոխզիջումների, ինչպես նաև ուժի կիրառման միջոցով խաղաղության հասնելու և Ազգերի լիգա ստեղծելու իր գաղափարների իրագործմանը⁶⁹⁹, ինչը նա անվանում էր «առաջադեմ ինտերնացիոնալիզմ»: Ըստ Պայասլյանի՝ Վիլսոնի վարչակազմի արձագանքը Հայկական հարցի նկատմամբ մինչև ընտրությունները բացատրվում էր դեմոկրատական կուսակցության համար միջազգային «խաղաղության հարթակ» ձևավորելու նպատակով:⁷⁰⁰

Միացյալ Նահանգների դիրքորոշումը հստակ կերպով արտահայտվեց 1915 և 1916 թթ. Էդվարդ Հաուզի՝ Եվրոպա կատարած այցելության ընթացքում, երբ վերջինս փորձում էր պարզել խաղաղության պայմանները, բանակցելու հնարավորությունները: 1915 թ. փետրվարին Բրիտանիայի արտաքին քարտուղար Էդվարդ Գրեյը հայտնում էր Հաուզին Ֆրանսիայի և Ռուսաստանի հետպատերազմական նկրտումների մասին: Ֆրանսիան ցանկանում էր ձեռք բերել Էլզաս-

⁶⁹⁹ Դեռևս 1916 թ. գարնանը Վիլսոնը ջերմեռանդորեն սկսեց ազգային օրակարգում բարձրացնել Ազգերի լիգայի ստեղծման հարցը, թեև իր ոչ բոլոր խորհրդակցանքներն էին համաձայն այդ գաղափարին: Վիլսոնին ուղղված մամակում Էդվարդ Հաուզը գործնական չէր համարում միջազգային իրավական դատարանի կամ խաղաղության պահպանման նպատակով միջազգային ուժի ստեղծումը: Հաուզի կարծիքով՝ մնան միջազգային ռեժիմը կարող էր ձևավորվել ժամանակի ընթացքում (Տե՛ս The Papers of Woodrow Wilson, 69 vols. / Ed. Arthur S. Link, Vol. 37, էջ 6-7): Պետքարտուղար Լանսինգն ավելի բաց էր արտահայտվում Ազգերի լիգա ստեղծելու գաղափարի դեմ: Նա ոչ միայն գործնական չէր համարում Ազգերի լիգայի կամ միջազգային արբիտրաժի ստեղծումը, այլև վստահ էր, որ այն հակասելու է պետությունների ինքնիշխանությանն ու ազգային շահերին (Տե՛ս The Papers of Woodrow Wilson, 69 vols. / Ed. Arthur S. Link, vol. 37, էջ 106-107): Իր հերթին Վիլսոնը որևէ հակասություն չէր տեսնում Միացյալ Նահանգների՝ որպես միջազգային խաղաղության պաշտպանի և ամերիկյան տնտեսական շահերի առաջխաղացման միջև: Միաժամանակ նա ցանկանում էր ԱՄՆ-ին հեռու պահել Հին աշխարհի խնդիրներից և ստանձնել Միացյալ Նահանգների միջազգային առաջատարի դերը (Տե՛ս **Ambrosius Lloyd E.,** *Wilsonian Statecraft*, Wilmington, Scholarly Resource Book, 1991, էջ 71):

⁷⁰⁰ Տե՛ս **Payaslian Simon,** նշվ. աշխ., էջ 115-116:

Լոթարինգիան, իսկ Ռուսաստանը՝ հսկողություն սահմանել Կոստանդնուպոլսի նկատմամբ: Թեև Հաուզը պատասխանել էր Գրեյին, որ Միացյալ Նահանգները չի կարող մասնակցել տարածքային հարցերին վերաբերող բանակցություններին, սակայն որևէ առարկություն չէր հայտնել Ռուսաստանի նպատակների վերաբերյալ: Հաուզը մեկ տարի անց, երբ քննարկում էր Գրեյի հետ Միացյալ Նահանգների՝ պատերազմի մեջ ներքաշվելու հարցը, առաջարկում է, որ ԱՄՆ-ն կարող է պատերազմի մեջ մտնել «սուզանավային խնդրի» պատրվակով, կամ նախագահը կարող է պահանջել խաղաղության համաժողով: Եվ եթե Գերմանիան հրաժարվի «ողջամիտ պայմաններից», Միացյալ Նահանգները կմտնի պատերազմի մեջ: «Ողջամիտ պայմաններից» մեկը կարող էր լինել Ռուսաստանի կողմից Կոստանդնուպոլսի գրավումը կամ նրա նկատմամբ հսկողության սահմանումը:⁷⁰¹

Պատրաստվելով 1917 թ. հունվարի 22-ին Սենատում տեղի ունենալիք իր «խաղաղություն առանց հաղթանակի» ելույթին՝ Վիլսոնը քննարկում էր հնարավոր խաղաղության պայմանները Հաուզի հետ: Նրանք եկան համաձայնության, որ պետք է վերականգնվի Բելգիայի և Սերբիայի անկախությունը, իսկ Թուրքիան պետք է հանձնի իր եվրոպական տարածքները: Հաուզը փորձում էր համոզել Վիլսոնին, որ Ռուսաստանին պետք է տրամադրվի «տաք ջրերի նավահանգիստ», այսինքն՝ Կոստանդնուպոլիսը, սակայն Վիլսոնը պարաստ չէր զնալ այդքան հեռու: Միաժամանակ նրանք անհանգստացած էին Թուրքիայում հիմնադրված ամերիկյան կրթական հաստատությունների ապագայով, ինչպես նաև միսիոներական և օգնության աշխատանքների հետևանքներով: Վիլսոնը որոշեց իր ելույթում չհիշատակել որևէ տարածքային պայմանի մասին: Միացյալ Նահանգները պատերազմ հայտարարեց Գերմանիային, սակայն որոշեց չփոխել իր քաղաքականությունը Թուրքիայի նկատմամբ:⁷⁰²

1917 թ. ապրիլի 6-ին Միացյալ Նահանգները պատերազմ հայտարարեց Գերմանիային, իսկ ապրիլի 10-ին Օսմանյան կայսրությունը խզեց իր հարաբերություններն ԱՄՆ-ի հետ: Իր հայտարարության մեջ Վիլսոնը չէր հիշատակել Թուրքիային: Իր հետագա հայտարարություններում Վիլսոնը ներկայացնում էր Թուրքիային որպես «Գեր-

⁷⁰¹ Տե՛ս **Evans Laurence**, նշվ. աշխ., էջ 30:

⁷⁰² Տե՛ս նույն տեղը, էջ 31:

մանիայի աշխարհագրական ծրագրի գոհը»՝ համարելով, որ «քաղաքական ցնցումները Թուրքիայում հրահրված են Գերմանիայի իմպերիալիստական նպատակների մեքենայություններով»:⁷⁰³

Մինչ այդ Կոստանդնուպոլսում երկկողմ մակարդակով բանակցություններ էին տեղի ունենում թուրք-ամերիկյան հարաբերությունների ապագայի, իսկ Վաշինգտոնում՝ բուռն քննարկումներ Միացյալ Նահանգների կողմից Օսմանյան կայսրությանը պատերազմ հայտարարելու հարցի շուրջ:

Դեռևս 1915 թ., մեղադրելով Գերմանիային ազրեսիայի, իսկ Օսմանյան կայսրությանը՝ «մարդկության սկզբունքների» խախտումների մեջ, Մեծ Բրիտանիան փորձում էր ամեն կերպ ներքաշել Միացյալ Նահանգներին պատերազմի մեջ: Մայիսի սկզբին Ջեյմս Բրայսը նամակ էր գրել Պողոս Նուբարին՝ խորհուրդ տալով նրան, որ հայերը դիմեն Վիլսոնին՝ որպես չեզոք պետության նախագահի՝ հայ ազգն արտաքսելու և կոտորելու համար Թուրքիային զգուշացնելու խնդրանքով: Իրականում Բրայսն օրոք Պետքարտուղարությունը շարունակում էր մտահոգություն արտահայտել Օսմանյան կայսրությունում ստեղծված իրավիճակի կապակցությամբ՝ որևէ հստակ միջոց չառաջարկելով կոտորածներին վերջ դնելու համար: Ինչպես նշել էինք, Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի և Ռուսաստանի՝ 1915 թ. մայիսի 24-ի հայտնի հայտարարությանը Միացյալ Նահանգների կառավարությունը չմիացավ: Պետքարտուղար Բրայսն ուղարկեց այն դեսպան Մորգենթաուին՝ նշելով, որ Թուրքիայի ղեկավարները պետք է հասկանան, որ պատասխանատվություն են կրելու տեղահանության և կոտորածների համար: Բրայսն փոխարինած Ռոբերտ Լանսինգն իր նամակներում ընդհանրապես չէր հիշատակում երիտթուրքական իշխանությունների պատասխանատվության հարցը: Թեև Մորգենթաուն չէր ճանաչում Լանսինգին, սակայն համարում էր նրան ճիշտ ընտրություն այդ պաշտոնի համար և քննադատում Բրայսնին՝ անվանելով նրան «մեծ խոչընդոտ»:⁷⁰⁴

Լոնդոնում ԱՄՆ-ի դեսպան Փեյջը համաձայն չէր իր երկրի չեզոքության քաղաքականությանը և 1916 թ. նոյեմբերի 24-ին գրում էր Վիլսոնին, որ դաշնակիցների հետ «ակտիվ և բաց» համագործակցությու-

⁷⁰³ Տե՛ս Payaslian Simon, նշվ. աշխ., էջ 117-119:

⁷⁰⁴ Տե՛ս նույն տեղը, էջ 74:

յան և ընդհանուր բողոքի միջոցով կարելի է հասնել հաջողության Հայաստանի, Բելգիայի, Լեհաստանի և Սերբիայի ժողովուրդների հանդեպ տարվող քաղաքականության դեմ: Ըստ դեսպանի՝ պետք էր ամեն ինչ անել՝ բաժանելու համար Գերմանիայի ժողովրդին իր ռազմատենչ ղեկավարներից: Դեսպանն առաջարկում էր որպես առաջին քայլ «ամբողջապես խստացնել» դիվանագիտական և տնտեսական հարաբերությունները Թուրքիայի և Գերմանիայի հետ: Համաձայն մեկ ամիս անց Վիլսոնին ներկայացված Փեյջի նոր նամակի՝ դաշնակիցները եկել էին համաձայնության, որ թուրքերը պետք է «մաքրվեն Եվրոպայից», իսկ Օսմանյան կայսրության քրիստոնյաները պետք է «ազատություն ստանան»: Նախագահ Վիլսոնն իրականում չէր հարգում Փեյջին և այդ պահին համամիտ չէր նրա տեսակետներին: Եվ երբ վերջինս ներկայացրել էր նախագահին իր հրաժարականը, այն անմիջապես ընդունվել էր Վիլսոնի կողմից.⁷⁰⁵

Երբ Անտանտի տերությունների համար պարզ է դառնում, որ իրենք շահում են Գերմանիայի դեմ պատերազմը, նրանք դիմում են Միացյալ Նահանգներին՝ Թուրքիայի դեմ պատերազմ հայտարարելու համար: Սակայն պաշտոնական Միացյալ Նահանգների համար պարզ էր, որ թուրք-ամերիկյան թշնամության պարագայում դադարեցվելու էր նաև Մերձավոր Արևելքում ամերիկյան օգնության կազմակերպումը, իսկ ամերիկյան ունեցվածքը կարող էր մեծապես վնասվել: Նախագահ Վիլսոնը մեծ համակրանք էր տաժում ամերիկյան միսիոներական առաքելությունների հանդեպ և բնականաբար անհանգստանում, թե ինչ կարող է պատահել նրանց հետ Թուրքիայի դեմ պատերազմի հետևանքով: Մորգենթաունն նույնպես դեմ էր պատերազմի հայտարարությանը:⁷⁰⁶

Թեև միսիոներները հայերի հետ տեղի ունեցած ցեղասպանության հիմնական վկաներն էին և դարձան կարևոր դերակատարներ Միացյալ Նահանգների և հայերի միջև հարաբերությունների ձևավորման գործում, սակայն Ամերիկյան խորհրդի պաշտոնյաները լուռ մնացին Թուրքիայի դեմ պատերազմ հայտարարելու հարցում: Պաշտոն-

⁷⁰⁵ Տե՛ս The Papers of Woodrow Wilson, 69 vols. / Ed. Arthur S. Link, vol. 40, էջ 65-66, 357; **Payaslian Simon**, նշվ. աշխ., էջ 116-117:

⁷⁰⁶ Տե՛ս **Yale William**, *Ambassador Henry Morgenthau's Special Mission of 1917* // In: *World Politics*, vol. I, 1949, April, էջ 308-320; **Trask Roger R.**, նշվ. աշխ., էջ 22-23:

նական եկեղեցին այդպես էլ չսատարեց Թուրքիային պատերազմ հայտարարելու գաղափարը, որի նպատակը պետք է լիներ պատժել Թուրքիային և պաշտպանել հայերին: Պաշտոնական կարծիքն այն էր, որ, պատերազմ հայտարարելով Գերմանիային, Ամերիկան արդեն իսկ պատերազմի մեջ էր մտել նրա դաշնակից Թուրքիայի դեմ:⁷⁰⁷

Միացյալ Նահանգների մամուլն ու հումանիտար կազմակերպություններն իրենց անհանգստությունն էին արտահայտում ոչ միայն ամերիկացիների անվտանգության, այլև հայերի համար ստեղծված իրավիճակի մասին: Պետքարտուղարությունը փորձում էր հանգստացնել հասարակական կարծիքը՝ Վաշինգտոնի և Կոստանդնուպոլսի միջև «լուրջ բախումները» կանխելու նպատակով: Թեև թուրքական իշխանությունները խզեցին հարաբերությունները Միացյալ Նահանգների հետ, սակայն նրանք նույնպես «զգուշորեն խուսափում էին» Վիլսոնի վարչակազմի հետ որևէ բախումից:⁷⁰⁸

Թուրքիայում տեղի ունեցող «վայրագությունների» առաջին ամիսների ընթացքում եկեղեցական ղեկավարները գործողությունների կոչ էին անում, սակայն այդ կեցվածքը հիմնականում դիվանագիտական ճնշման և քարոզի համար էր:⁷⁰⁹ Թեև ամիսներն անցնում էին, և տեղի ունեցած կոտորածների փաստերը՝ բազմապատկվում ու հաստատվում, սակայն եկեղեցիներն այդպես էլ Թուրքիայի դեմ ռազմական գործողություն իրականացնելու պահանջ չներկայացրին, մասնավորապես, երբ Միացյալ Նահանգները պատերազմ հայտարարեց Գերմանիային: Ըստ Գորդոն Հիթի՝ 1915 թ. կամ նույնիսկ 1916 թ. սպասել Թուրքիայի դեմ պատերազմի հայտարարություն ԱՄՆ-ի կողմից անիրատեսական էր երկրում տիրող «անորոշ իրավիճակի» պատճառով: Ամերիկայում դեռևս տիրում էին «մեկուսացվածության տրամադրություններ», և նույնիսկ Գերմանիայի հետ պատերազմելու հնարավորությունը որևէ հասարակական աջակցություն չուներ: Միայն երկու տարի անց ամերիկացիների մեծամասնությունը սատարեց Եվրոպա գորք ուղարկելու գաղափարը: Հնարավոր է, որ եթե ամերիկացի միսիոներների մի զգալի թիվ կոտորվեր Թուրքիայում, այդ երկիրը պատժելու կոչերն ավելի ուժեղ լինեին: Թուրքական իշ-

⁷⁰⁷ Տե՛ս **Heath Gordon L.**, նշվ. աշխ., էջ 185:

⁷⁰⁸ Տե՛ս **Payaslian Simon**, նշվ. աշխ., էջ 120:

⁷⁰⁹ Տե՛ս **Barton James**, նշվ. աշխ., էջ 383-384:

խանությունները փաստորեն թույլ տվեցին, որ միսիոներներն իրականացնեն իրենց աշխատանքը «կարիքավորների» շրջանում: Ըստ Հիթի՝ ինչպես Բարտոնը, այնպես էլ Ամերիկյան խորհրդի մյուս անդամները «թշնամական» վերաբերմունք ունեին թուրքերի հանդեպ, սակայն նրանց «պրագմատիկ մտահոգությունը» այն էր, որ Միացյալ Նահանգների կողմից պատերազմի հայտարարության դեպքում «օսմանյան բռնության» տակ գտնվող տառապյալների վիճակն ավելի կվատթարանար: Ավելին՝ թուրքական իշխանություններն այդ պարագայում կարող էին վտարել կամ բանտարկել ամերիկացիներին. վերջիններս նաև կկորցնեին Թուրքիայում ունեցած իրենց ողջ ունեցվածքը: Նշվում էր նաև, որ, պատերազմ հայտարարելով Գերմանիային, Միացյալ Նահանգները կարագացնե՞ր Թուրքիայի պարտությունը պատերազմում:⁷¹⁰ Նույն այդ փաստարկները տիրապետող էին նաև կրոնական մամուլի էջերում:⁷¹¹

Նախագահ Վիլսոնը պատերազմ հայտարարեց Գերմանիային պատերազմի սկսվելուց երեք տարի անց, երբ արդեն պարզ էր դարձել, որ հաղթող կողմը Անտանտն էր: Երեք տարվա չեզոքությունը նպաստեց արյունահեղության շարունակությանն ու պատերազմի մասնակիցների տնտեսության անկմանը: Չեզոքությունն ապահովեց Միացյալ Նահանգների ուժեղացումն ու տնտեսական զարգացումը: Ամերիկյան քաղաքականության հետևանքով Եվրոպայում առաջացավ քաղաքական վակուում, որն ապահովեց աշխարհում Միացյալ Նահանգների ուժի «կտրուկ և չգերազանցված» աճը: Միացյալ Նահանգների չեզոքության քաղաքականությունն օգնեց հաղթել Եվրոպայի ամենաազդեցիկ տերությանը, ապահովեց իր երկրի խաղաղությունն ու բարգավաճումը: Միաժամանակ այդ քաղաքականությունը հանգեցրեց նրան, որ Բրիտանիան, Ֆրանսիան, Ռուսաստանն ու Իտալիան մեծագույն կորուստներ ունեցան պատերազմի ընթացքում:⁷¹²

⁷¹⁰ Տե՛ս **Heath Gordon L.**, նշվ. աշխ., էջ 191-193:

⁷¹¹ Տե՛ս *Mission Fears about Turkey // The Continent*, 1917, 15 February; *Reasons against War with Turkey // Presbyterian Banner*, 1917, 27 December; **Brown Arlo A.**, *American Property in Jerusalem // Christian Advocate*, 1917, 29 March; *Signs of Life in Turkey // Missionary Review of the World*, 1916, October; *American Interests in Turkey Violated // Missionary Herald*, 1915, November; *Turkey and the United States // Missionary Herald*, 1917, March; *How About Relief Work in Turkey // Missionary Herald*, 1917, May:

⁷¹² Տե՛ս **Coogan John W.**, նշվ. աշխ., էջ 82, 85-86:

Միացյալ Նահանգների կողմից Գերմանիային պատերազմ հայտարարելու փաստն անմիջական ազդեցություն չունեցավ ամերիկյան մերձավորարևելյան քաղաքականության վրա: Միացյալ Նահանգների պատերազմ մուտք գործելու պատճառները հեռու էին ամերիկյան ազգային շահերից, նույնիսկ երբ Թուրքիան Գերմանիայի դաշնակիցն էր: Իրականում Թուրքիայի հետ հարաբերությունների խզումից հետո դրանք դարձան ավելի ջերմ:

Երբ 1917 թ. ԱՄՆ-ի և Օսմանյան կայսրության միջև հարաբերությունները խզվեցին Գերմանիայի ճնշման հետևանքով, դա տեղի ունեցավ համեմատաբար բարեկամական պայմաններում: Թուրքիային պատերազմ չհայտարարելու որոշումը պայմանավորված էր մի քանի գործոններով, որոնցից հիմնականը Օսմանյան կայսրությունում տասնամյակներ շարունակ տեղի ունեցած միսիոներական և կրթական ներդրումներն էին: Գոյություն ունեցող ինֆրակառույցի արժեքը մոտավորապես 28 միլիոն դոլար էր կազմում: Պետքարտուղարությունն այն կարծիքին էր, որ պատերազմի հայտարարությունը կարող էր այնպիսի փոփոխությունների հանգեցնել, որոնք խնդիր կստեղծեին հետագայում ԱՄՆ-ի և Օսմանյան կայսրության հետևորդ պետության հարաբերությունների բարելավման հարցում: Ամերիկյան դիվանագետների և միսիոներների կարծիքը միասնական էր այդ հարցում:⁷¹³ Չարմանալիորեն Թուրքիային պատերազմ չհայտարարելու հիմնական կողմնակիցներն էին Բարտոնն ու Դոդջը: Նրանց, ինչպես նաև պետքարտուղար Լանսինգի, դեսպան Էլկուսի և Մորգենթաուի տեսակետները որոշիչ դերակատարություն ունեցան նախագահ Վիլսոնի վերջնական որոշման ձևավորման գործում:⁷¹⁴

1917 թ. փետրվարի սկզբին պետքարտուղար Լանսինգը հանձնարարում է դեսպան Էլկուսին հիշեցնել երիտթուրքական կառավարությանը «Թուրքիայի նկատմամբ ԱՄՆ-ի սրտալից վերաբերմունքի և այն առավելությունների մասին, որոնք նա կարող է ձեռք բերել, եթե պատերազմ չհայտարարի ԱՄՆ-ին և շարունակի նրա հետ պահպանել բարեկամական հարաբերություններ»: Լանսինգը համոզված էր, որ պատերազմը Թուրքիայի հետ կբերի միայն կորուստներ:⁷¹⁵ Փետր-

⁷¹³ Տե՛ս **Bloxam Donald.**, նշվ. աշխ., էջ 187:

⁷¹⁴ Տե՛ս **Walther Karine V.**, նշվ. աշխ., էջ 294-295:

⁷¹⁵ Տե՛ս **Шпилькова В. И.**, *Империалистическая политика США в отношении Турции*

վարի 8-ին Կոստանդնուպոլսում ԱՄՆ-ի դեսպան Աբրամ Էլկուսը ԱՄՆ-ի և Գերմանիայի միջև հարաբերությունների խզման հարցը քննարկում է Թուրքիայի արտաքին գործերի նախարարի հետ: Նախարարը հայտարարում է դեսպանին, որ ԱՄՆ-ի և Թուրքիայի միջև հարաբերությունների հարցը վերջինս պետք է քննարկի իր դաշնակցի հետ: Էլկուսը զեկուցում է Պետքարտուղարությանը, որ Թուրքիան չի ցանկանում խզել հարաբերությունները, սակայն Գերմանիան կարող է դա պարտադրել: Մի քանի օր անց նա գրում է, որ Թուրքիայի կառավարական շրջանակներում գտնում են, որ ԱՄՆ-ի հետ հարաբերությունները շարունակում են մնալ բնականոն և բարեկամական, թեև Գերմանիան ստիպում է անել հակառակը: Էլկուսը համոզված էր, որ թուրքերի և զերմանացիների միջև հարաբերությունները լավ չեն, և եթե Գերմանիան ու ԱՄՆ-ն պատերազմում են միմյանց դեմ, Թուրքիան այդ բանը չի անի: Գերմանա-ամերիկյան հարաբերությունների խզումից հետո մեծ վեզիրն ասում էր ԱՄՆ-ի դեսպանին, որ սուլթանն արտահայտել էր իր ցանկությունը՝ պահպանելու բարեկամական հարաբերություններ ԱՄՆ-ի և Թուրքիայի միջև: Ըստ Լուրենս Էվանսի՝ թուրքերը վստահ էին, որ պատերազմից հետո Միացյալ Նահանգները ֆինանսական և բարոյական օժանդակություն է ցուցաբերելու Թուրքիային:⁷¹⁶

Գեսպան Էլկուսը գրում էր, որ, չնայած Գերմանիայի հետ ԱՄՆ-ի հարաբերությունների խզմանը, թուրք նախարարները շարունակում էին իրենց բարեկամաբար պահել դեսպանության հետ: Գեսպանն ամեն տեղից տեղեկություններ էր ստանում այն մասին, որ եթե նույնիսկ ԱՄՆ-ի և Գերմանիայի միջև պատերազմ սկսվի, թուրքերը Միացյալ Նահանգների հետ հարաբերությունները չեն խզելու: Այդ մասին դեսպանին անձամբ ասել էր նաև Թալեաթ փաշան: Այդ քաղաքականությանը, ըստ Թալեաթ փաշայի, կողմնակից էր նաև սուլթանը: Իսկ ֆինանսների նախարար Ջավիդը դեսպանությունում տեղի ունեցած ճաշի ժամանակ ասել էր դեսպանին, որ պատերազմի ավարտից հետո «Թուրքիայի միակ հույսը Միացյալ Նահանգներն է», քանի որ «եվրոպական երկրները անկարող են լինելու կամ չեն ցանկանալու

(1914-1920), М., *Ученые записки Московского государственного педагогического института*, 1960, էջ 42-43:

⁷¹⁶ Տե՛ս Evans Laurence, նշվ. աշխ., էջ 32-33:

օգնել մեզ ֆինանսապես»: «Մյուս կողմից,- շարունակում էր Ջավիդը,- ի՞նչ ենք մենք շահելու Սիացյալ Նահանգների հետ պատերազմից: Բացարձակապես ոչինչ: Այսպիսով, ես երաշխավորում եմ 90%-ով, որ Գերմանիայի և Սիացյալ Նահանգների միջև պատերազմի պարագայում Թուրքիան հեռու է մնալու»:⁷¹⁷

Միաժամանակ Էլկուսը գրում էր, որ «Միություն և առաջադիմություն» կուսակցությանը ոչ բարեկամաբար վերաբերվող թուրքերն այլ տեսակետներ էին արտահայտում: Նրանք նշում էին, որ երիտթուրքերի ղեկավարները գիտակցում էին, որ Թուրքիային պատերազմի մեջ ներքաշելու, ինչպես նաև հայկական կոտորածների և ոչ թուրքական այլ ազգությունների նկատմամբ հալածանքների համար պատասխանատվությունն ընկնելու էր իրենց վրա, ուստի Ամերիկայի պես բարեկամական երկիր ունենալն այդ պայմաններում շատ կարևոր կարող էր լինել իրենց համար:⁷¹⁸

Ըստ Էլկուսի՝ ԱՄՆ-ի և Գերմանիայի հարաբերությունների խզումից հետո Թալեթ փաշան առանձնահատուկ «բարեկամություն և մտերմություն» էր ցուցաբերում դեսպանի և դեսպանության հանդեպ: Նա նույնիսկ հատուկ հրահանգ էր տվել մամուլի գրասենյակին՝ Սիացյալ Նահանգների մասին թշնամական հոդվածներ թույլ չտալու նպատակով: Թուրք պաշտոնյաները նաև ասում էին Էլկուսին, որ Գերմանիան չէր ցանկանում տեսնել Կոստանդնուպոլսում Սիացյալ Նահանգների պես մեծ տերության դեսպանի ներկայությունը, քանի որ համարում էր, որ թուրքերի միակ բարեկամ պետությունն ու պաշտպանը ինքն է:⁷¹⁹ Պատասխանելով թուրք նախարարներից մեկին թուրք-ամերիկյան բարեկամական հարաբերությունների մասին՝ դեսպան Էլկուսն ասում էր, որ Թուրքիան շատ բարեկամներ ունի Սիացյալ Նահանգներում, սակայն վերջիններս որևէ կերպ չեն կարող օգնել այս երկրին, քանի դեռ վերջ չի դրվել հայկական կոտորածներին, ինչպես նաև արարների, սիրիացիների կամ ուրիշ ազգերի հալածանքներին: Իսկ նախարարը նշում էր, որ «այդ բաները չպիտի տեղի ունենա-

⁷¹⁷ Տե՛ս NA Microfilm Publications, Microcopy No. 353, Records of the Department of State Relating to Internal Affairs of Turkey, 1910-1929, Roll 6, NA/RG 59/867.00/804.1/2, էջ 6-7:

⁷¹⁸ Տե՛ս նույն տեղը, Roll 6, NA/RG 59/867.00/804.1/2, էջ 7-8:

⁷¹⁹ Տե՛ս նույն տեղը, Roll 6, NA/RG 59/867.00/804.1/2, էջ 9-11:

յին», և հույս հայտնում, որ շատ շուտով հայերի վիճակը բարելավվելու է, և իրենց թույլ է տրվելու ճանփորդել և առևտրով զբաղվել երկրի որոշ «գոտիներում»:⁷²⁰

Երբ Միացյալ Նահանգների հարաբերությունները Գերմանիայի հետ վատթարանում են, 1917 թ. մարտի 31-ին պետքարտուղար Լանսինգը գրում է Էլկուսին, որ ամերիկյան կառավարությունը «որևէ հակասություն չունի Թուրքիայի հետ» և ցանկանում է «պահպանել մշտապես գոյություն ունեցող բարեկամական հարաբերությունները»:⁷²¹

Նույնիսկ երբ ապրիլի 2-ին նախագահ Վիլսոնը դիմեց Գերմանիային պատերազմ հայտարարելու հարցով Կոնգրեսին, թուրք իշխանությունների վերաբերմունքը շարունակում էր մնալ նույնը: Օսմանյան կայսրության արտաքին գործերի նախարարի հետ հանդիպման ժամանակ դեսպան Էլկուսը հարցնում է, թե Բարձր Դուռը կհետևի՞ արդյոք Գերմանիային, եթե ԱՄՆ-ի և Գերմանիայի միջև պատերազմ սկսվի: Նախարարը պատասխանում է, որ ԱՄՆ-ի և Օսմանյան կայսրության միջև հարաբերությունները միշտ բարեկամական են եղել, և որևէ պատճառ չկա, որ դրանք նույն կերպ չշարունակվեն: Դեսպանը կարծիք է հայտնում պետքարտուղարին, որ գերմանացիները ցանկանում են, որ ամերիկյան դիվանագետները շարունակեն իրենց գործունեությունն Օսմանյան կայսրությունում՝ որպես քրիստոնյաների կոտորածների շարունակության կանխարգելման երաշխիք:⁷²²

Ապրիլի 5-ին Էլկուսը զեկուցում է պետքարտուղարին, որ մեծ վեզիրի հետ ունեցած հանդիպման ժամանակ շեշտել է, որ ամերիկյան կառավարությունը հակասություններ չունի Թուրքիայի հետ և ցանկանում է շարունակել բարեկամական հարաբերությունների ընթացքը երկու կառավարությունների միջև: Էլկուսն ավելացնում է, որ «իրականում հակասություններ եղել են միայն գերմանական կառավարության հետ»:⁷²³

Թեև թուրքերի մեծամասնությունը խաղաղության հասնելու ցան-

⁷²⁰ Տե՛ս նույն տեղը, Roll 6, NA/RG 59/867.00/804.1/2, էջ 13:

⁷²¹ Տե՛ս US Department of State. *Papers relating to the Foreign Relations of the United States. 1917 Supplement 1. The World War, էջ 191-192:*

⁷²² Տե՛ս նույն տեղը, էջ 206-207:

⁷²³ Տե՛ս նույն տեղը, Supplement 2, Vol. 1, p. 18:

կություն ուներ, գերմանական ազդեցությունը շարունակում էր ուժեղ մնալ, և որևէ երաշխիք չկար, որ Անտանի տերությունները ցանկանալու էին առանձին բանակցություններ սկսել Օսմանյան կայսրության հետ: Էլկուսը հաղորդում էր Պետքարտուղարությանը, որ օսմանյան ղեկավարներն իրենց հույսերը կապում էին կենտրոնական տերությունների և Ռուսաստանի միջև խաղաղության հաստատման հետ և պատրաստ էին բացելու նեղուցներն ու գնալու այլ զիջումների: Նույն օրը «*Tanin*» թերթին տված հարցազրույցում մեծ վեզիրն ասում էր, որ Օսմանյան կայսրության և Ռուսաստանի միջև թշնամության պատճառը Թուրքիայի տարածքի հանդեպ Ռուսաստանի նկրտումներն էին, և եթե ազատական Ռուսաստանը հրաժարվեր իր պահանջներից, կվերանար նաև ռուս-թուրքական բարեկամական հարաբերությունների հաստատման խոչընդոտը: Էլկուսն առաջարկում էր Պետքարտուղարությանն ամեն ինչ անել կենտրոնական տերությունների և Ռուսաստանի միջև խաղաղության հաստատումը թույլ չտալու, Թուրքիային Գերմանիայից կտրելու և Թուրքիայի ու Անտանտի միջև բանակցություններ սկսելու ուղղությամբ:⁷²⁴

Մինչև հարաբերությունների խզումը պետքարտուղարը տեղեկացնում է դեսպան Էլկուսին, որ Օսմանյան կայսրությունում Մորզենթաուն իր հետ ունեցած հանդիպման ընթացքում առաջարկել էր, որ դեսպանը հանդիպում ունենա Էնվերի հետ և հայտարարի, որ բարեկամական հարաբերությունների պահպանումը Միացյալ Նահանգների հետ բխում է Թուրքիայի շահերից, և նույնիսկ ԱՄՆ-ի ու Գերմանիայի միջև պատերազմի պարագայում Թուրքիան չպետք է խզի բարեկամական հարաբերությունները, քանի որ այդ հանգամանքը միայն կարագացնի խաղաղության հաստատումը:⁷²⁵

Միաժամանակ ամերիկյան դիվանագետները հավաստիացումներ էին ստանում թուրքական իշխանություններից, որ ԱՄՆ-ի քաղաքացիների ու ամերիկյան հաստատությունների նկատմամբ վերաբերմունքը մնալու է նույն մակարդակի վրա:⁷²⁶

Պատերազմում ամերիկյան չեզոքությունն ու 1917 թ. ապրիլին Գերմանիային պատերազմի հայտարարությունը խիստ քննադա-

⁷²⁴ Տե՛ս նույն տեղը, էջ 16-17:

⁷²⁵ Տե՛ս նույն տեղը, էջ 11:

⁷²⁶ Տե՛ս նույն տեղը, Supplement 1, էջ 598-606:

տուրքյան են ենթարկվում Միացյալ Նահանգների ընդդիմադիր քաղաքական գործիչների կողմից: Նրանցից ամենանշանավորը նախկին նախագահ Թեոդոր Ռուզվելտն էր, որը հայտարարում էր, որ Վիլսոնի վարչակազմը «չափազանց չեզոք էր» պատերազմում, ինչը մի կողմից մեծ կարևորություն էր տալիս միջազգային օրենքին, իսկ մյուս կողմից անտեսում էր ազգային շահը: Միաժամանակ Անտանտի հետ սերտ հարաբերություններ հաստատելու կողմնակիցները հայտարարում էին, որ Վիլսոնը խախտում էր չեզոքությունը կենտրոնական տերությունների օգտին, իսկ վերջիններիս կողմնակիցները պնդում էին հակառակ կարծիքը:⁷²⁷ Օսմանյան կայսրությանը պատերազմ հայտարարելու քարոզարշավը ղեկավարում էին սենատորներ Հենրի Լոջը և Ուիլյամ Բրինգը, սակայն նախագահ Վիլսոնը կարողանում էր հաղթահարել այդ ճնշումը:⁷²⁸

Հայկական իրադարձությունների հետևանքով Թեոդոր Ռուզվելտը հրաժարվեց Միացյալ Նահանգների պատերազմի մեջ մտնելու հարցում իր ունեցած կասկածներից և դարձավ դրա կրքոտ կողմնակիցն ու փաստաբանը: Հայկական ջարդը, որը նա անվանում էր «պատերազմի մեծագույն հանցագործություն», նրա համար դարձավ արտաքին քաղաքականության և միջազգային էթիկայի հիմնական խնդիրը: Հայկական դաժանությունների կոմիտեի քարտուղար Մամուել Դատտոնին դեռևս 1915 թ. նոյեմբերի 24-ին ուղղված իր նամակում Ռուզվելտը հրաժարվում էր կոմիտեի հանդիպմանը մասնակցելուց, քանի որ կազմակերպությունը բավականին պասիվ էր արձագանքել հայկական կոտորածների փաստերին, ինչպես նաև պատերազմում ԱՄՆ-ի չեզոքության հարցին: Նա նշում էր, որ «ամեն գնով խաղաղության» հասնելու սկզբունքը, «զգացմունքային և ոչ արդյունավետ» հանրահավաքները չեն կարող փրկել հայերին: «Գործողության» կոչեր անելով՝ Հայկական դաժանությունների կոմիտեն չէր պնդում ռազմական միջամտությունը: Կոմիտեի անդամները վախենում էին, որ Միացյալ Նահանգների կողմից պատերազմի հայտարարությունը իր բացասական ազդեցությունը կունենար Թուրքիայում ամերիկյան

⁷²⁷ Տե՛ս **Coogan John W.**, նշվ. աշխ., էջ 77:

⁷²⁸ Տե՛ս US Department of State. *Papers relating to the Foreign Relations of the United States. 1917 Supplement 1. The World War*, էջ 598-606:

դպրոցների և եկեղեցիների ապագայի վրա:⁷²⁹

Ըստ Պիտեր Բալաքյանի՝ Ռուզվելտի համար պատիվն ու պարտականությունը նշանակում էին հայերի համար արդարության հասնելու նպատակով պատերազմի գնալ: Նա խստորեն քննադատում էր Վիլսոնի խաղաղասիրական քաղաքականությունը, ատելությամբ էր արտահայտվում նրա մասին, անվանում էր նրան «խղճուկ վախկոտ» և «ամենավատ նախագահը Բյուկենենից հետո»:⁷³⁰

Ամերիկացի հայտնի միսիոներ Լայման Էբբոտին ուղղված նամակում Ռուզվելտը գրում էր. «Ես արդարությունը խաղաղությունից բարձր եմ դասում և լիովին բավարարված կլինեի, եթե խաչակրաց արշավանք ղեկավարեի հայերի համար, ...սակայն պարզ անհեթեթություն կլիներ սկսել նման խաչակրաց արշավանք, եթե երկիրը պատրաստ չէ այն սատարելու, և եթե երկիրը նույնիսկ հեռավոր մտադրություն չունի պայքարելու այդ հարցի համար»:⁷³¹

1918 թ. մայիսին Հայկական և սիրիական օգնության ամերիկյան կոմիտեի, իսկ հետագայում «Մերձավոր Արևելքի օգնության» կազմակերպության հիմնական բարերար Քլիվլենդ Դոդջին գրված նամակում Ռուզվելտը քննադատում էր Թուրքիայի հանդեպ ամերիկյան քաղաքականությունը հայկական ցեղասպանությունից հետո, հիասթափություն հայտնում առ այն, որ Դոդջը միսիոներների անձնական շահերը գերադասում էր հայկական կոտորածների հարցում Միացյալ Նահանգների ունեցած պատասխանատվությունից: Նա գտնում էր, որ ամերիկացիները մեղավոր էին «կեղծավորության գարշելի ձև» օգտագործելու մեջ, երբ բարեկամություն էին քարոզում Հայաստանի և Թուրքիայի ճնշված այլ ազգերի համար, սակայն այդպես էլ Թուրքիայի հետ պատերազմի չզնացին: «Թույլ տալ թուրքերին կոտորել հայերին, իսկ հետո հայցել թույլտվություն ողջ մնացածներին օգնելու համար...»՝ «հիմար» և միաժամանակ «գարշելի» քաղաքականություն էր: Միացյալ Նահանգները պատերազմի պետք է գնար ոչ թե դաշնակիցներին չնեղացնելու, այլ նրա համար, որ «հայկական կո-

⁷²⁹ Տե՛ս **Roosevelt Theodore**, *Fear God and take your own Part*, New York, George H. Doran, 1916, էջ 381-382; **Power Samantha**, նշվ. աշխ., էջ 11:

⁷³⁰ Տե՛ս **Balakian Peter**, *From Ezra Pound to Theodore Roosevelt: American intellectual and cultural responses to the Armenian Genocide*, էջ 245-246:

⁷³¹ Տե՛ս *The Letters of Theodore Roosevelt* / Ed. Elting Morison, Cambridge, MS: Harvard University Press, 1952, vol. V, էջ 536-538:

տորածը պատերազմի մեծագույն հանցագործությունն էր»:

«Թուրքական սարսափին արմատապես վերաբերվելու ձախտույնը,- շարունակում էր Ռուզվելտը,- նշանակում է, որ բոլոր խոսակցություններն աշխարհի ապագա խաղաղությունը երաշխավորելու առումով վնասակար անհեթեթություններ են, և այժմ, երբ մենք հրաժարվեցինք Թուրքիայի հետ պատերազմելուց, մենք ցույց տվեցինք, որ «աշխարհը անվտանգ պահելու ժողովրդավարության» մասին մեր հայտարարությունները կեղծավոր ցուցամոլություններ էին»:⁷³²

Թուրքիայի հետ հարաբերությունների խզումից հետո ամերիկյան շահերը Թուրքիայում ներկայացնելու էր Շվեդիայի դեսպանորդ-նախարարը: Թուրքիայի իշխանությունները չափազանց «քաղաքավարի» վերաբերմունք ցուցաբերեցին դեսպանության անձնակազմի հանդեպ, ինչպես նաև հատուկ հրահանգներ տվեցին տեղական իշխանություններին առ այն, որ երկու երկրների միջև հարաբերությունները շարունակելու են մնալ ջերմ, իսկ ամերիկյան հաստատությունների հանդեպ վերաբերմունքը փոփոխության չի ենթարկվելու:⁷³³

Քանի որ Կոստանդնուպոլսում ԱՄՆ-ի նախկին դեսպան Հենրի Մորգենթաուն հավատացած էր, որ Թուրքիայի հետ հնարավոր էր զնալ գործարքի և առանձին խաղաղության պայմանագիր ստորագրել, Պետքարտուղարությունն ու նախագահը 1917 թ. մայիսին հատուկ լիազորություն տվեցին նրան՝ Թուրքիա գաղտնի առաքելություն իրականացնելու համար: Սակայն Մորգենթաունի ծրագիրը հանդիպեց բրիտանական կառավարության և սիոնիստական ղեկավարների ընդդիմությանը, որոնք ծրագրում էին օգտագործել պատերազմական իրավիճակն ու հարձակում սկսել Պաղեստինում: Սիոնիստներն այն կարծիքին էին, որ Թուրքիայի հետ խաղաղության պայմանագիր կնքելու պարագայում վտանգվելու էր «ազգային հայրենիք» ստեղծելու գաղափարը: Բրիտանական «Foreign office»-ի օժանդակությամբ սիոնիստական ղեկավար Չեյմ Վայզմանը կարողացավ հանդիպել Մորգենթաունին և նրա պատվիրակության անդամներին՝ Հարվարդի համալսարանի իրավունքի դասախոս Ֆելիքս Ֆրանկֆուրտերին, Նյու Յորքի գործարար Էլիահու Լյուին-Էփշթայնին և Արչակ Շմա-

⁷³² Տե՛ս *The Letters of Theodore Roosevelt* / Ed. Elting Morison, Cambridge, MS: Harvard University Press, 1952, vol. VIII, էջ 1316-1318:

⁷³³ Տե՛ս **Evans Laurence**, նշվ. աշխ., էջ 32-33:

վոնյանին, Ջիբրալթարում և համոզել նրան հրաժարվել իր ծրագրից: Ջրույցի ժամանակ Վալզմանն ասում էր Մորզենթաուին, որ վերջինս չի հասնելու իր նպատակին, քանի որ սիոնիստական կազմակերպությունը դեմ է այդ ծրագրի իրագործմանը՝ համոզված լինելով, որ հրեաները կարող են ստանալ Պաղեստինը միմիայն Բրիտանիայի ռազմական հաղթանակի դեպքում: 1917 թ. հուլիսի 8-ին Մորզենթաուն Մադրիդում ներկայացրեց ԱՄՆ-ի դեսպանության առաքելության մասին բացասական եզրակացությունը: Այդ փաստը բավականին տխրեցրել էր ինչպես Մորզենթաուին, այնպես էլ նախագահ Վիլսոնին և զնդապետ Հաուզին:⁷³⁴ Վարկած կա նաև, որ Մորզենթաուի համար լրացուցիչ փաստարկ է հանդիսացել նաև Շմավոնյանի տեղեկատվությունն այն մասին, որ Թուրքիայում ԱՄՆ-ի նախկին դեսպանն այլևս չէր վաշելում երիտթուրք ղեկավարների վստահությունը:⁷³⁵

Միացյալ Նահանգների և Թուրքիայի միջև հարաբերությունների խզումը չանդարդարձավ օգնության ծրագրերի իրականացման վրա. Հայկական և սիրիական օգնության ամերիկյան կոմիտեի ներկայացուցիչները շարունակեցին իրենց աշխատանքը: Որոշ շրջաններում շվեյցարացի և գերմանացի միսիոներներն իրենց վրա վերցրին օգնության բաշխումը: Թեև Գերմանիայի դեմ պատերազմ հայտարարելուց հետո թուրք-ամերիկյան հարաբերությունները շարունակում էին մնալ բարեկամական, ինչը պահպանվեց նույնիսկ դրանց խզումից հետո, կային մտահոգություններ, որ թուրք ամբոխը կարող է թշնամանք հանդես բերել ամերիկացիների նկատմամբ: Կոստանդնուպոլսում ԱՄՆ-ի դեսպանությունը խորհուրդ էր տվել կանանց և երեխաներին մեկնելու երկրից ու հրահանգել էր հյուպատոսություններին նույնպես պատրաստվել հեռանալու Թուրքիայից: Գեսպանության հրահանգի համաձայն՝ Խարբերդում հյուպատոս Դեյվիսը այրել էր գաղտնագրերն ու փաստաթղթերը: Քաղաքապետի պաշտոնակատարը պահանջել էր իջեցնել ամերիկյան դրոշը, որից հետո՝ մի քանի օր անց, թուրքական իշխանություններն առգրավեցին ամերիկյան

⁷³⁴ Տե՛ս **Yale William**, նշվ. աշխ., էջ 308-320; **Trask Roger R.**, նշվ. աշխ., էջ 22-23; **Brecher F. W.**, *Revisiting Ambassador Morgenthau's Turkish Peace Mission of 1917 // Middle Eastern Studies*, 1988, July, vol. 24, No. 3, էջ 357-362:

⁷³⁵ Տե՛ս **Brecher F. W.**, նշվ. աշխ., էջ 360-361:

առաքելության ցորենի պահեստն ու սննդամթերքը:⁷³⁶

1917 թ. ապրիլի 17-ին Գեյվիսը դեսպանությունից հրահանգ ստացավ մեկնելու Կոստանդնուպոլիս՝ իր հետ տանելով բոլոր ցանկացող ամերիկացիներին: Մայիսի 17-ին հյուպատոս Գեյվիսը, Հենրի Ռիզզն ու Խարբերդի ողջ ամերիկյան համայնքի ներկայացուցիչները մեկնեցին Միացյալ Նահանգներ: Մինչև օգոստոս 100-ից ավելի ամերիկացիներ, այդ թվում՝ ԱՄՆ-ի հյուպատոսներն ու իրենց ընտանիքների անդամները, մեկնել էին Կոստանդնուպոլիս:⁷³⁷

⁷³⁶ Տե՛ս **Barton James**, նշվ. աշխ., էջ 64; **Davis Leslie A., Blair Susan**, նշվ. աշխ., էջ 119-120:

⁷³⁷ Տե՛ս **Davis Leslie A., Blair Susan**, նշվ. աշխ., էջ 120-121:

ԱՄՓՈՓՈՒՄ

Մինչև Առաջին համաշխարհային պատերազմի ավարտը ԱՄՆ-ի կառավարությունը հետևողականորեն շարունակեց Օսմանյան կայսրության ներքին գործերին չմիջամտելու քաղաքականությունը՝ ավանդական դիրքորոշում, որը շարունակաբար կիրառվել էր նաև 1894-1896 թթ. և 1909 թթ. հայկական կոտորածների ընթացքում: Միացյալ Նահանգների դիվանագիտության գործողություններն առաջին հերթին ուղղված էին ամերիկյան միսիոներական և տնտեսական շահերի պաշտպանությանը: Եթե եվրոպական տերությունները մրցում էին Օսմանյան կայսրությունում ազդեցության ոլորտների համար, ապա Միացյալ Նահանգները քաղաքական շահ չէր հետապնդում Հայկական հարցում՝ ճգնաժամերի ժամանակ արձագանքելով միայն մարդասիրական օգնությամբ: Միացյալ Նահանգները որևէ վտանգ չէր ներկայացնում օսմանյան պետության ինքնիշխանության և տարածքային ամբողջականության համար ինչպես աշխարհագրորեն հեռու գտնվելու, այնպես էլ եվրոպական «ուժի հավասարակշռության» մրցակցային քաղաքականության մեջ ներգրավված չլինելու պատճառով:

ԱՄՆ-ի չեզոքությունն Առաջին համաշխարհային պատերազմում երաշխավորեց ամերիկյան դիվանագիտական ներկայությունն Օսմանյան կայսրությունում մինչև 1917 թ. ապրիլը: Այս ներկայությունը նշանակում էր ԱՄՆ-ի պաշտոնյաների շփումների հնարավորություն օսմանյան իշխանությունների հետ, ինչպես նաև դիվանագիտական գործառնությունների իրականացում, մասնավորապես՝ արտաքին քաղաքականության և ներքին զարգացումների մասին տեղեկատվության փոխանցում: ԱՄՆ-ի պետքարտուղարությունը մշտապես մանրամասն հաղորդագրություններ էր ստանում տեղի ունեցող իրադարձությունների մասին կայսրությունում գործող դիվանագիտական և հյուպատոսական ներկայացուցչությունների լայն ցանցի միջոցով:

Առաջին համաշխարհային պատերազմի բռնկումից անմիջապես հետո ԱՄՆ-ի նախագահ Վուդրո Վիլսոնի վարչակազմը չեզոքություն հայտարարեց հիմնականում 1916 թ. նախագահական ընտրություններից առաջ ներքին քաղաքական դժվարություններից խուսափելու, ինչպես նաև արտասահմանում ամերիկյան շահերը պաշտպանելու

նպատակով:

Օսմանյան կայսրության հանդեպ ամերիկյան քաղաքականությունն էական փոփոխությունների չենթարկվեց: Մինչև կենտրոնական տերություններին միանալը Օսմանյան կայսրությունն արտաքնապես պահպանում էր իր չեզոքությունը: Թեև Միացյալ Նահանգները մտահոգ էր պատերազմի աշխարհագրությունը չընդլայնելու հարցում, սակայն Թուրքիային տարիամոզելու ուղղությամբ ամերիկյան դիվանագիտության կողմից որևէ էական փորձ չարվեց: Նախագահ Վիլսոնն ու պետքարտուղար Ուիլյամ Բրայանը հույս ունեին, որ Թուրքիան, «մարդկության շահերից ելնելով», չեզոք է մնալու պատերազմում և չի մասնակցելու Գերմանիայի կողմից մշակված պատերազմական ծրագրերին:

Պատերազմում ներքաշվելուց առաջ երիտթուրքական կառավարությունը որոշում կայացրեց վերացնելու օտարերկրյա պետությունների հետ հաստատված արտոնությունների ռեժիմը: Վիլսոնի վարչակազմն անմիջապես բողոքարկեց այդ կապակցությամբ՝ հայտարարելով, որ այն տրված էր արտասահմանյան պետություններին ստորագրված պայմանագրերի համաձայն: Թեև այդ որոշումը կարող էր բացասաբար անդրադառնալ թուրք-ամերիկյան երկկողմ հարաբերությունների վրա, սակայն երկու կառավարությունները շարունակեցին բնականոն կապերի պահպանումը: Երիտթուրք դեկավարները վստահեցնում էին ԱՄՆ-ի դեսպանին, որ թուրքական իշխանությունները որևէ մտադրություն չունեն վատ վերաբերմունք հանդես բերելու ամերիկյան կրթական ու կրոնական հաստատությունների և միսիոներների հանդեպ:

Միաժամանակ ԱՄՆ-ի կառավարությունը մտահոգված էր պատերազմի հետևանքով Օսմանյան կայսրության հետ առևտրական հաշվեկշռի հնարավոր անկումով: Վերջինս առևտրական կարևոր գործընկեր էր համարվում ԱՄՆ-ում, և խաղաղության հաստատումից հետո այդ երկրի հետ առևտրական հարաբերությունների վերականգնումը կարող էր մեծ նշանակություն ունենալ ամերիկյան շահերի համար:

Պատերազմի սկիզբը նոր մարտահրավերներ ստեղծեց ԱՄՆ-ի դեսպան Հենրի Մորգենթաուի և դեսպանության համար: Նկատի առնելով իր ռազմավարական դիրքը՝ Թուրքիան դարձավ Գերմանիայի արժեքավոր դաշնակիցը: Թուրքիայի բանակն ու հրամանատարու-

յունը վերակառուցվեցին գերմանականի օրինակով: Մորզենթաուն այն համոզմանն էր, որ կրոնական ատելության օգտագործման գաղափարը նույնպես պատկանում էր Գերմանիային: Ըստ դեսպանի՝ այն սկսվեց կրքերի բորբոքումից, որն այնուհետև ուղղվեց հայերի և կայսրության ոչ մահմեդական ենթակա ազգերի դեմ:

Թուրքիայում տեղի ունեցող զարգացումների կապակցությամբ Պետքարտուղարությունը փորձում էր հանգստացնել ամերիկյան հասարակական կարծիքը: Ի պատասխան ամերիկյան միսիոներական կազմակերպությունների հարցումներին՝ ԱՄՆ-ի վարչակազմը ասում էր, որ իրավիճակը երկրում կայուն է, իսկ ամերիկյան քաղաքացիների և շահերի պաշտպանությունն ապահովված է:

1914 թ. դեկտեմբերին նախագահ Վիլսոնն ու նրա խորհրդատու Էդվարդ Հաուզը քննարկեցին Մորզենթաուի կողմից ստացված տեղեկատվությունը՝ Օսմանյան կայսրությունում ստեղծված իրավիճակի մասին: Մորզենթաուն հրահանգ ստացավ տեղեկացնելու ամերիկացիներին, որ վտանգի դեպքում նրանք կարող էին վերադառնալ Միացյալ Նահանգներ՝ միաժամանակ խնդրելով նրանց փակ պահել այդ տեղեկատվությունն իրենց ազգականներից և ընկերներից՝ հասարակայնության շրջանում աղմուկ չբարձրացնելու նպատակով:

Այն ժամանակ, երբ եվրոպական տերությունները զբաղված էին պատերազմով, իսկ Վիլսոնի վարչակազմը՝ պատերազմում չեզոքության սկզբունքի խիստ կիրառմամբ, Օսմանյան կայսրության հայերը հայտնվեցին համընդհանուր ոչնչացման վտանգի առջև. ցեղասպանության զոհ դարձան միլիոնուկես հայեր:

Իր հուշերում դեսպան Մորզենթաուն գրում էր, որ Թալեաթի հետ ունեցած զրույցներից մեկի ժամանակ վերջինս բացատրություններ էր տալիս երկրի ազգային քաղաքականության իր պատկերացումների մասին: Նա գտնում էր, որ թուրքական կայսրության կազմում գոյություն ունեցող ազգային «տարբեր միավորները» մշտապես դավեր էին հյուսում Թուրքիայի դեմ. բնիկ ազգերի թշնամության հետևանքով Թուրքիան կորցրել էր Հունաստանը, Սերբիան, Ռումինիան, Բուլղարիան, Հերցեգովինան, Եգիպտոսն ու Տրիպոլին: Ըստ Թալեաթի՝ թուրքական կայսրության տարածքը կրճատվել էր և հասել «ամհետացման եզրին»: Եվ եթե ինչ մնացել էր Թուրքիայից, պետք է պահպանվեր, ապա «պետք էր ազատվել այդ օտար ժողովուրդներից»: «Թուր-

քիան թուրքերի համար»՝ սա էր Թալեաթի հիմնական կարգախոսը:

Միաժամանակ Միացյալ Նահանգներում պատերազմը որոշակի «քաղաքական իրապաշտություն» հաղորդեց հայկական կոտորածների խնդրին, քանի որ ոչ պատերազմական ժամանակաշրջանում այդպես էլ չհաջողվեց կանգնեցնել Աբդուլ Համիդի կողմից կազմակերպված ջարդը: Առաջին համաշխարհային պատերազմը փոխեց այդ իրավիճակն ու ուժեղացրեց հասարակայնության որոշ շրջանակների ճնշումն ԱՄՆ-ի կառավարության վրա, քանի որ Թուրքիան պատերազմում հանդես եկավ որպես Գերմանիայի դաշնակից: Իրավիճակը սրեցին Վիլսոնի չեզոքության քաղաքականությունն ու Միացյալ Նահանգների՝ պատերազմի մեջ մտնելու մասին բուռն քննարկումները, որոնց անբաժան մաս էին կազմում հայերի նկատմամբ իրագործված հանցագործությունները:

Որևէ ամերիկացի այնպիսի խորությամբ չէր առնչվել Հայոց ցեղասպանությանը, ինչպես Կոստանդնուպոլսում Միացյալ Նահանգների դեսպան Հենրի Մորգենթաուն: Ինչպես իր պաշտոնավարության ընթացքում, այնպես էլ Միացյալ Նահանգներ վերադառնալուց հետո Մորգենթաուն համարձակ կերպով և համառորեն փորձում էր ոչնչացումից փրկել Օսմանյան կայսրության հայ բնակչությանը: Նախագահ Վուդրո Վիլսոնի հետ մտերիմ լինելու հանգամանքը նրան հնարավորություն էր տալիս ազատորեն արտահայտելու իր տեսակետները քաղաքական և դիվանագիտական խնդիրների շուրջ: Մորգենթաուն խոստովանում էր, որ թեև իրեն մտահոգում էին Թուրքիայի տարբեր շրջաններում աշխատող ամերիկյան միսիոներների գործունեությանն առնչվող բոլոր խնդիրները, մասնավորապես՝ Պաղեստինում երիտթուրքական իշխանությունների կողմից իրականացվող հակասեմիտական քաղաքականությունը, սակայն ավելի խորությամբ զբաղվում էր Հայկական հարցով:

Հայերի տեղահանությունների և կոտորածների մասին առաջին էական վերլուծությունը հրապարակվել էր 1918 թ. 1913-1916 թթ. Օսմանյան կայսրությունում ԱՄՆ-ի դեսպան Հենրի Մորգենթաուի կողմից: Որպես պատերազմում չեզոք պետության դեսպանի, որը նույնիսկ ոչ թե քրիստոնյա էր, այլ հրեա, Մորգենթաուին չէր կարելի մեղադրել քաղաքական օրակարգ ունենալու մեջ: Նրա հուշերի ամենաբացահայտող հատվածները իր գրույցներն են երիտթուրքերի դեկավարնե-

րի հետ: Մորզենթաուն, ինչպես նաև իր շատ ժամանակակիցներն ու դեպքերի վկաները «հաստատուն կերպով» համոզված էին, որ «հայ ժողովրդի սպանությունը բոլոր ժամանակների մեծագույն հանցագործություններից էր»:

Մշտապես ցանկություն արտահայտելով լավ հարաբերություններ պահպանել Միացյալ Նահանգների և Վիլսոնի վարչակազմի հետ՝ երիտթուրքական ռեժիմը միաժամանակ չարաշահում էր ամերիկյան չեզոքությունը՝ սպառնալով փակել Օսմանյան կայսրությունում տեղակայված ամերիկյան հաստատությունները: Թուրքական իշխանություններին անհանգստացնում էին ամերիկացիների և հայերի միջև հաստատված մտերիմ հարաբերությունները: Թուրք ազգայնականների համոզմամբ՝ ամերիկյան կրթական և միսիոներական հաստատությունների աշխատանքը հայ համայնքների հետ վտանգ էր ներկայացնում ազգային ինքնիշխանության համար:

Ներկայացնելով չեզոք տերություն՝ Մորզենթաուն մնում էր միակ դեսպանը, որը հետաքրքրություն էր ցուցաբերում հայերի պաշտպանության հարցի նկատմամբ: 1915 թ. հունվարին և փետրվարին Մորզենթաուն սկսեց «պատկերավոր, սակայն հատվածական» տեղեկատվություն ստանալ հայերի հանդեպ իրագործվող քաղաքականության մասին Օսմանյան կայսրությունում աշխատող ԱՄՆ-ի հյուպատոսներից: Սկզբում նա մտածում էր, որ հայերի նկատմամբ տեղի ունեցած դաժանությունները բացատրվում են պատերազմական շրջանին բնորոշ վայրագությամբ: Այդ կարծիքն ամրապնդվում էր Թալեաթի հավաստիացումներով այն մասին, որ տեղի ունեցածը «անհսկելի տարրերի» կողմից կազմակերպված բռնություն էր:

Միաժամանակ երիտթուրքական իշխանությունները միջոցներ ձեռնարկեցին Մորզենթաունի փոստային կապն իր հյուպատոսների հետ խափանելու ուղղությամբ և գրաքննության ենթարկեցին նրանց նամակները: Դեսպանը չէր ցանկանում տեղեկատվություն տրամադրել Պետքարտուղարությանը, որը հիմնված չէր իրական փաստերի վրա, սակայն երբ նա սկսեց համեմատել հայերի և միսիոներների վկայությունները տարբեր եղանակներով դեսպանություն հասած հյուպատոսների զեկույցների հետ, եկավ այն եզրակացության, որ Թուրքիայում տեղի է ունենում «ազգասպանություն»:

Նկատելով երիտթուրքերի զգայունությունն արտաքին աշխարհի

կարծիքի հանդեպ՝ Մորզենթաուն «խնդրում էր» իր ղեկավարներին մի կողմ դնել դիվանագիտական ձևականություններն ու դիմել թուրքական կառավարությանը՝ «մարդկության անունից» սպանությունները դադարեցնելու նպատակով: Նա նույնպես հորդորում էր ԱՄՆ-ի կառավարությանը՝ համոզելու Գերմանիայի կայսրին կանխել «քրիստոնյա ազգի ոչնչացումը» երիտթուրքերի կողմից:

Միացյալ Նահանգների չեզոքության քաղաքականությունը սկսեց որոշակի փոփոխության ենթարկվել դեսպան Մորզենթաուի՝ Հայկական հարցում «դիվանագիտական միջամտություն քարոզելու» հետևանքով, չնայած Պետքարտուղարությունն իր հրահանգներով սահմանափակում էր վերջինիս դիվանագիտական ակտիվությունը: Նրա գործունեությունը սահմանափակվում էր երկու հիմնական պատճառներով: Առաջին՝ Վիլսոնի վարչակազմը որոշում էր կայացրել չներքաշվելու Առաջին համաշխարհային պատերազմի մեջ: Երկրորդ՝ որպես դեսպան՝ նա իրավունք չունեի միջամտելու ընդունող երկրի ներքին գործերին, եթե ԱՄՆ-ի շահերը վտանգված չէին: Թեև Մորզենթաուն տեղեկացնում էր պետքարտուղարին, որ Թուրքիայում գոյություն ունի «հայ ազգը ջախջախելու համակարգված ծրագիր», սակայն երիտթուրքական իշխանությունները մշտապես զգուշացնում էին, որ դեսպանն իրավունք չունի միջամտելու երկրի ներքին գործերին:

1915 թ. հունիսին պետքարտուղարի պաշտոնում նշանակված Ռոբերտ Լանսինգն արդարացնում էր ԱՄՆ-ի «չմիջամտողականության» քաղաքականությունը հայերի օգտին՝ հիմնվելով իրավական սկզբունքների վրա, այն է՝ Միացյալ Նահանգները չէր կարող միջամտել Թուրքիայի ներքին գործերին մինչև ԱՄՆ-ի քաղաքացիների կյանքն ու ունեցվածքը վտանգված չլինեին, իսկ հայերն օսմանյան հպատակներ էին, և Միացյալ Նահանգները կարող էր միայն բողոքել թուրքական իշխանությունների և բնակչության կողմից նրանց նկատմամբ դրսևորվող վերաբերմունքի դեմ: Ակնհայտ էր, որ Վիլսոնի վարչակազմի չեզոքության քաղաքականության սկզբունքները լիովին համընկնում էին երիտթուրքական իշխանությունների՝ Օսմանյան կայսրության հայ բնակչության ոչնչացման ծրագրերին:

Միաժամանակ Միացյալ Նահանգների հայ համայնքի ներկայացուցիչները դիմումներ էին ներկայացնում Վիլսոնի վարչակազմին և

Կոնգրեսին՝ «ավելի մեծ ուշադրություն դարձնելու իրենց հայրենիքում ընտանիքների և հայրենակիցների նկատմամբ իրագործված դաժանությունների վրա»: Պետքարտուղարությունը սովորաբար պատասխանում էր, որ դեսպան Մորգենթաուն առաջին իսկ օրերից համոզում է քուրբական կառավարությանը կանգնեցնել հայերի հանդեպ իրագործվող քաղաքականությունը, որի շնորհիվ հնարավոր եղավ որոշ չափով մեղմել կառավարության կողմից տրվող հրահանգների կատարումը: Նշվում էր, որ Մորգենթաուն հանձնարարություն է ստացել Պետքարտուղարությունից զուշացնելու Բարձր Դռանը, որ հայերի նկատմամբ իրականացվող քաղաքականությունն առաջացրել է դժգոհություն և քննադատություն ամերիկյան հասարակայնության շրջանում, ինչը բացասական ազդեցություն է ունենալու Թուրքիայի հանդեպ ամերիկյան ժողովրդի ունեցած վերաբերմունքի վրա: Ավելին՝ Պետքարտուղարությունը նույն բովանդակությամբ օրինակելի պատասխանի նախագիծ էր պատրաստել նաև նախագահ Վիլսոնի համար:

Ամերիկյան միսիոներները մեծ հույսեր էին կապում երիտթուրքական շարժման հետ, քանի որ վերջինս ուղղված էր համիդյան հետադիմական համակարգի և «մոլեռանդ իսլամի» դեմ, որը 1894-1896 թթ. աղետի հիմնական պատճառն էր: Սակայն, օգտվելով պատերազմական իրավիճակից, երիտթուրքական իշխանությունը «ոչնչացրեց քրիստոնեությունը», մասնավորապես՝ արևմտահայ բնակչությանը: Այս կործանումը սպանեց «1908 թ. ամերիկյան սոցիալական ուտոպիան», ոչնչացրեց 19-րդ դարի «վերածնված քրիստոնեության» գաղափարը, կոտրեց «բիրլիական հողերում հազարամյա խաղաղ կյանքի մեկդարյա ամերիկյան երազը»: Այսպիսով, միսիոներական Ամերիկյան լուրջ վնաս կրեց պատերազմի ընթացքում, կորցրեց իր «հիմնական ընկերներին և հաճախորդներին, ինչպես նաև իր գաղափարախոսությունը»:

Ամերիկյան միսիոներները դարձան ինչպես ցեղասպանության առաջին՝ տեղահանությունների և կոտորածների փուլի, այնպես էլ երկրորդ փուլի կարևոր վկաները, երբ ողջ մնացած հայերը հայտնվեցին Հյուսիսային Սիրիայի համակենտրոնացված ճամբարներում: Ամերիկյան խորհրդի համար սկսվեց գործունեության նոր՝ հայ փախստականներին օգնություն ցուցաբերելու փուլը: Միսիոներները

սերտորեն համագործակցում էին ԱՄՆ-ի հյուպատոսների հետ: Միասին նրանք փրկել էին 150 հազար հայեր Սիրիայում և մի քանի հարյուր հազարի՝ Կովկասում: Միայն Հալեպում նրանց կողմից կազմակերպվել էր 1.350 որբ երեխաների խնամքը: Նույնիսկ երբ Միացյալ Նահանգները մտավ պատերազմի մեջ, ամերիկացի միսիոներներից շատերը մնացին Թուրքիայում և, չնայած դժվարին պայմաններին, մեկուսացված վիճակին և հիվանդությունների վտանգին, շարունակեցին օգնության ցուցաբերման աշխատանքը:

Միաժամանակ Հայոց ցաղասպանությունը մեծ հարված հասցրեց ամերիկյան միսիոներական առաքելություններին: Եթե 1914 թ. Թուրքիայում աշխատում էին 150 միսիոներներ, 1.200 տեղացի աշխատողներ, և գործում էին 137 բողոքական եկեղեցիներ, ապա պատերազմի ավարտից հետո երկրում մնացել էին 36 միսիոներներ, իսկ տեղացիներից ողջ էին մնացել ընդամենը 200 աշխատողներ: Եկեղեցիները, դպրոցներն ու հիվանդանոցները, բացառությամբ Կոստանդնուպոլսի և Չմյուռնիայի դպրոցների ու հիվանդանոցների, փակվել էին կամ դադարել գոյություն ունենալուց:

Միացյալ Նահանգների ազգային արխիվում և Կոնգրեսի գրադարանում պահվում են Հայոց ցեղասպանությանը վերաբերող 4.500 վավերագրեր, որոնց ընդհանուր ծավալը կազմում է 37 հազար էջ: Հայոց ցեղասպանությանը վերաբերող այս վավերագրերի հավաքածուն համարվում է աշխարհում ամենածավալունը: Փաստաթղթերի զգալի մասը պատկանում է ԱՄՆ-ի պետական քարտուղարությանը և նրա դիվանագիտական ու հյուպատոսական կառույցներին: Ամերիկյան արխիվների փաստաթղթերը գալիս են ապացուցելու, որ Օսմանյան կայսրության հայ բնակչությունը դարձել է հակազգային քաղաքականության գոհը, որն ուղղված էր երկրում նրա գոյության բոլոր հետքերի ոչնչացմանը: Ամերիկյան փաստաթղթերում ամփոփված են ցեղասպանության բոլոր փուլերն ու բնորոշ գծերը՝ տեղահանության քաղաքականությունն ու մեթոդները, կանանց և երեխաների հանդեպ վերաբերմունքը, ստրկական աշխատանքի կիրառումը, նպատակային թերսնուցումը, հարկադիր կրոնափոխությունը, ունեցվածքի բռնագրավումը, դիմադրության դեպքերը, կոտորածները, որբանոցները, փախստականների ճամբարները, ողջ մնացածների վերաբնակեցումն ու մարդասիրական միջամտությունը:

Միացյալ Նահանգները հյուպատոսական լայն ցանց ուներ պատե-րազմական շրջանի Օսմանյան Թուրքիայում՝ Չնյուռնիայում, Խար-բերդում, Տրապիզոնում, Հալեպում, Բեյրութում, Մերսինում, Երուսա-ղեմում, և Օսմանյան կայսրության մայրաքաղաքում՝ Կոստանդնու-պոլսում: Տարբեր ժամանակամիջոցներում Ուրֆայում, Սամսունում և Էրզրումում աշխատում էին Միացյալ Նահանգների հյուպատոսա-կան գործակալներ: Այսպիսով, Միացյալ Նահանգները յուրահատուկ հնարավորություն ուներ իր դիվանագետների և պաշտոնյաների մի-ջոցով դիտարկելու և արձանագրելու երկրում կատարվող իրադար-ձությունները մինչև 1917 թ. ապրիլ ամիսը: Երեք տարվա ընթացքում կայսրության տարբեր անկյուններում աշխատող ԱՄՆ-ի ներկայա-ցուցիչներն անզնահատելի աղբյուր էին չեզոքության սկզբունքի հո-վանու ներքո երիտթուրքական իշխանությունների կողմից կազմա-կերպված համատարած սպանությունների դեպքերը փաստագրելու, ցեղասպանության պատճառներն ու միտումները վերլուծելու համար: Այդ իսկ պատճառով Հայոց ցեղասպանության փաստը և, հետևա-բար, ամերիկյան արխիվների փաստաթղթերի իսկությունը մերժողնե-րը մեղադրում են հիմնականում ամերիկյան դիվանագետներին և մի-սիոներներին պատերազմի տարիներին տեղի ունեցած իրադարձու-թյունների փաստերը գիտակցաբար կեղծելու և Վաշինգտոնի իրենց դեկավարներին մոլորության մեջ գցելու մեջ:

ԱՄՆ-ի հյուպատոսությունների տեղակայման վայրը կարևոր նշա-նակություն ուներ Հայոց ցեղասպանության մասին տեղեկատվության ծավալի և որակի վրա: Հյուպատոսությունները հիմնականում տեղա-կայված էին Օսմանյան կայսրության հիմնական առևտրական նա-վահանգիստներում, որոնք նաև հայկական համայնքների կենտրո-նացման վայրերն էին: Հայ բնակչության և ամերիկյան ներկայության՝ մեկ քաղաքում կամ վայրում գտնվելու հանգամանքը պարտադրում էր հյուպատոսներին շատ ավելի մոտիկից հետևելու տեղի ունեցող քա-ղաքական և տնտեսական զարգացումներին: Միաժամանակ ԱՄՆ-ի հյուպատոսությունները գտնվում էին միմյանցից բավականին մեծ հե-ռավորության վրա, և պատերազմի պայմաններում կապը նրանց միջև գրեթե բացակայում էր, որի հետևանքով հյուպատոսությունների՝ ցե-ղասպանության մանրամասների մասին զեկուցագրերը բավականին անկախ բնույթ էին կրում: Դա Կոստանդնուպոլսում ԱՄՆ-ի դեսպա-

նությանը հնարավորություն էր տալիս իր վերլուծությունը կատարելու երկրում տիրող ընդհանուր վիճակի մասին:

Խարբերոյն ու Հալեպը, որոնք գտնվում էին Հայաստանից դեպի Սիրիա արտարվող հայերի ճանապարհին, տեղի ունեցող իրադարձությունների կենտրոնական դիտարկման կենտրոններն էին: Խարբերոյը ոչ միայն հայ բնակչության տեղահանության, այլև արտաքսված հայերի տրանզիտի հիմնական կենտրոններից մեկն էր: Խարբերոյի հյուպատոսական տարածքում Ամերիկյան խորհուրդն ուներ ևս հինգ միսիոներական կայան՝ տեղակայված Սվազում, Բիթլիսում, Վանում, Մարդինում և Դիարբեքլիում:

ԱՄՆ-ի հյուպատոսների անհատական զեկույցները մանրամասն տեղեկություններ էին ներկայացնում Օսմանյան կայսրության ներքին իրավիճակի մասին: Ողջ հավաքածուի վերլուծությունն ուրվագծում է օսմանյան կառավարության որդեգրած քաղաքականությունը: Որպես վկա և հայերի հետ տեղի ունեցող իրադարձությունների արձանագրող՝ յուրաքանչյուր հյուպատոս անկախորեն հանգում էր այն եզրակացությանը, որ օսմանյան պետությունն օգտագործել է հայ բնակչության դեմ իր բոլոր հնարավորությունները, ինչն արտահայտվել է համատարած հալածանքների մեջ, որոնք չի կարելի համարել ո՛չ ճնշման միջոց, ո՛չ ամբոյխի գործողություն, ո՛չ սոցիալական պայքյուն, ո՛չ էլ վրեժխնդրություն: Կատարված գործողության ծավալն ու մեթոդները նպատակ ունեին կազմալուծելու օսմանյան հասարակությունը պատմականորեն համապատասխան բնակավայրերում հաստատված որոշակի էթնիկ խմբին արմատախիլ անելու և համատարած կերպով կյանքի պայմաններից զրկելու միջոցով:

Միացյալ Նահանգներում ցեղասպանությունից տուժած արևմտահայերին օգնության ցուցաբերման համակարգը հիմնականում սկսեց ձևավորվել դեսպան Մորգենթաուից ստացված առաջարկների հիման վրա: Ամերիկյան խորհրդի քարտուղար Ջեյմս Բարտոնն այդ գործունեության հիմնական կազմակերպիչներից էր: 1915 թ. սեպտեմբերին Նյու Յորքում հիմնադրվեց Հայկական օգնության կոմիտեն, որը պետք է զբաղվեր դրամահավաքի կազմակերպմամբ: Առաջին թիրախը 100 հազար դոլար գումարի հավաքումն էր, որը պետք է ուղարկվեր դեսպան Մորգենթաուին: Կոմիտեի ղեկավարներն այցելեցին Պետքարտուղարություն և քույրություն ստացան ծանոթանալու Օսմանյան

կայսրությունից ստացվող նյութերին: Կազմակերպությունը միջոցներ ձեռնարկեց հասարակայնությանը մամուլի միջոցով տեղեկություններ տրամադրելու և դրամահավաք կազմակերպելու ուղղությամբ:

Կազմակերպությունը շատ արագ դարձավ մարդկանց և խմբերի համացանց՝ տառապյալ հայերին և սիրիացիներին օգնություն ցուցաբերելու նպատակով: Տեղում օգնության կազմակերպումն իրականացնում էին ամերիկյան միսիոներները, որոնք ունեին Թուրքիայում աշխատանքի շուրջ մեկ դարի փորձ: Կազմակերպության հիմնական գործընկերներն էին ամերիկյան եկեղեցիներն ու տարբեր հարանվանություններին պատկանող կոմիտեները: Ընդհանուր առմամբ, ներառյալ հետպատերազմական տարիները, կազմակերպությունը հավաքեց 116 միլիոն դոլար՝ փախստականներին օգնություն տրամադրելու համար՝ չհաշված նյութական այլ օգնությունները:

1915 թ. նոյեմբերի 20-ին հիմնադրվեց Հայկական և սիրիական օգնության ամերիկյան կոմիտեն: Հետագայում՝ 1918 և 1919 թթ., կազմակերպության անվանումը փոխվեց երկու անգամ. նախ կոչվեց «Մերձավոր Արևելքում օգնության ամերիկյան կոմիտե», այնուհետև՝ «Մերձավոր Արևելքի օգնություն»:

Ցեղասպանությունից տուժած հայերին օգնություն ցուցաբերելու նպատակով Ամերիկյան խորհրդին միացան ամերիկացի առաջատար բարերարներ, ինչպես նաև կրոնական և բարեգործական կազմակերպություններ: Ցեղասպանությունից տուժած հայերին օգնություն ցուցաբերելու համար նվիրատվություն տրամադրող բազմաթիվ բարեգործական կազմակերպությունների շարքում առանձնանում էր «Ռոքֆելլեր» հիմնադրամը:

Տարիների ընթացքում ԱՄՆ-ի կառավարությունը 25 միլիոն դոլար էր նվիրաբերել «Մերձավոր Արևելքի օգնություն» կազմակերպությանը: ԱՄՆ-ի նախագահներ Հերբերտ Հուվերը, Ֆրանկլին Ռուզվելտը և Ուիլյամ Թաֆտը ծառայել էին որպես կազմակերպության հոգաբարձուներ:

1916 թ. Մասաչուսեթսի հանրապետական սենատոր Հենրի Լոջը համատեղ բանաձևի նախագիծ ներկայացրեց Թուրքիայում հայերի «աղետալի վիճակի» մասին: Այդ բանաձևն ուղղված էր ԱՄՆ-ում հայերի օգնության համար մասնավոր նվիրատվություններ ապահովելուն: Լոջի բանաձևը սատարեց Միսսուրի նահանգը ներկայացնող

սենատոր Ուիլյամ Սթոնը, որը բնութագրում էր այն որպես պատերազմի հետևանքով տուժած մեծ թվով տառապյալ տղամարդկանց, կանանց և երեխաներին օգնություն ցուցաբերելու հարցում ամերիկյան ժողովրդի առատաձեռնության, համակրանքի և ազատականության արտահայտություն: Բանաձևն ընդունվեց 1916 թ. հուլիսի 10-ին: Կոնգրեսը դիմել էր նախագահ Վիլսոնին՝ ընտրելու օր, երբ երկրի քաղաքացիները, արտահայտելով իրենց համակրանքը, միջոցներ կտրամադրեն ստեղծված հիմնադրամներին՝ հայերին օգնություն ցուցաբերելու նպատակով: Պատասխանելով այդ նախաձեռնությանը՝ օգոստոսի 31-ին Վիլսոնն ընտրեց երկու օր՝ 1916 թ. հոկտեմբերի 21-ը և 22-ը՝ շաբաթ և կիրակի, երբ, ըստ նախագահի, Միացյալ Նահանգների ժողովուրդն իր նպաստը կբերեր «տուժած սիրիացի և հայ ժողովուրդներին»:

Միտոներների կողմից իրականացվող օգնության աշխատանքը բաժանվում էր չորս հիմնական տեսակների՝ 1. ընդհանուր օգնություն, որը բաշխվում էր բոլոր կարիքավորներին օրական հացի բաժնի տեսքով. 2. հատուկ օգնություն, որը ցուցաբերվում էր «ժամանակավոր» կարիք ունեցողներին՝ տեղահանվող աքսորյալներին կամ վիրավոր հայ զինվորներին. 3. բժշկական աշխատանք, որը հաստ էր ամսական հազարավոր հայերի համար. 4. աշխատանք որը երեխաների հետ:

Օգնության կազմակերպությունների հիմնադրումը Միացյալ Նահանգներում որևէ ազդեցություն չգործեց երիտթուրք ղեկավարների վրա՝ հայերի դեմ դաժանությունները դադարեցնելու առումով: 1915 թ. վերջին երիտթուրքերը գրեթե ավարտել էին հայերին ոչնչացնելու ծրագիրը, որը նպատակադրվել էին վերջնականապես ավարտել մինչև պատերազմի վերջը: Այդ ծրագրի իրականացմանը նպաստում էին նաև օսմանյան բանակի հաջողությունները Դարդանելում և Միջագետքում: Երիտթուրքերի այդ վստահությունը հանգեցնում էր նրան, որ նրանք փորձում էին խուսափել օգնության կազմակերպումից, մասնավորապես, մերժում էին հայերին ուղիղ օգնության տրամադրումը և պահանջում այն իրականացնել միմիայն կառավարության միջոցով:

Թուրքիան դարձել էր «սարսափի վայր» դեսպան Մորգենթաուի համար, և նա այլևս չէր ցանկանում գործ ունենալ մարդկանց հետ,

որոնցից «դեռ շուրջ միլիոն մարդկային էակների արյան հոտ էր գալիս»: Կոստանդնուպոլսից մեկնելուց առաջ Թալեաթի հետ տեղի ունեցած վերջին հանդիպման ժամանակ նա կրկին բարձրացրել էր հայերի հարցը: Թալեաթը պատասխանել էր. «Ի՞նչ կարիք կա խոսելու նրանց մասին: Մենք նրանց խնդիրը լուծել ենք: Ամեն ինչ վերջացել է»: Մորզենթաուն ներկայացրել էր իր հրաժարականը, որն ընդունվել էր Վիլսոնի կողմից 1916 թ. մայիսի 23-ին: Նրա փոխարեն հուլիսի 21-ին դեսպան նշանակվեց Աբրամ Էլկուսը: Մորզենթաուն հայտնի էր դարձել Միացյալ Նահանգներում որպես հայերի տեղահանության և կոտորածների հիմնական բացահայտող, ինչպես նաև օգնության կազմակերպման գործի գլխավոր բանախոս:

Գրամահավաք կազմակերպելուն զուգահեռ՝ Ջեյմս Բարտոնը մեծ աշխատանք էր տանում՝ երկրի հասարակական կարծիքը համապատասխանաբար ուղղորդելու նպատակով: Հայոց ցեղասպանության փաստերի լուսաբանման միջոցով ամերիկյան մամուլը կարողացավ լայնածավալ հայանպաստ շարժում սկսել Միացյալ Նահանգներում, որի նպատակն էր հայերին օգնություն ցուցաբերելու համար դրամահավաքի կազմակերպումը: 1915-1923 թթ. ընթացքում քսանից ավելի ամերիկյան պարբերականներ հրատարակել էին հայերի մասին գրված հարյուրավոր հոդվածներ, որոնք ոչ միայն պարունակում էին տեղեկություններ ցեղասպանության մանրամասների մասին, այլև ուղղված էին դրամահավաքի կազմակերպմանը: Հայերի տեղահանությունների և կոտորածների ամբողջական պատմությունը ներկայացվել էր ամերիկյան ընթերցողին Կոստանդնուպոլսում նախկին դեսպան Հենրի Մորզենթաուի կողմից: Նրա պատմությունն առաջին անգամ լույս էր տեսել «*World's Work*» ամսագրում 1918 թ. նոյեմբերին, իսկ գիրքը՝ տարվա վերջին:

1916 թ. ընտրությունների հաղթանակից և «խաղաղության մանդատը» ստանալուց անմիջապես հետո Վիլսոնն ակտիվ կերպով ձեռնամուխ եղավ Եվրոպայում փոխզիջումների, ինչպես նաև ուժի կիրառման միջոցով խաղաղության հասնելու և Ազգերի լիգա ստեղծելու իր գաղափարների իրագործմանը, ինչը նա անվանում էր «առաջադեմ ինտերնացիոնալիզմ»:

Պատրաստվելով 1917 թ. հունվարի 22-ին Կոնգրեսում տեղի ունենալիք իր «խաղաղություն առանց հաղթանակի» ելույթին՝ Վիլսոնը որոշեց իր ելույթում չհիշատակել որևէ տարածքային պայմանի

մասին: Միացյալ Նահանգները պատերազմ հայտարարեց Գերմանիային, սակայն որոշեց չփոխել իր քաղաքականությունը Թուրքիայի նկատմամբ: Ապրիլի 10-ին Օսմանյան կայսրությունը խզեց իր հարաբերությունները ԱՄՆ-ի հետ: Իր հետագա հայտարարություններում Վիլսոնը ներկայացնում էր Թուրքիային որպես «Գերմանիայի աշխարհագրական ծրագրի գոհը»՝ համարելով, որ «քաղաքական ցնցումները Թուրքիայում հրահրված են Գերմանիայի իմպերիալիստական նպատակների մեքենայություններով»:

Երբ Անտանտի տերությունները համոզվեցին, որ շահում են Գերմանիայի հետ պատերազմը, դիմեցին Միացյալ Նահանգներին՝ Թուրքիայի դեմ պատերազմ հայտարարելու խնդրանքով: Սակայն պաշտոնական Միացյալ Նահանգների համար պարզ էր, որ թուրքամերիկյան թշնամության պարագայում դադարեցվելու էր նաև Սերձավոր Արևելքում ամերիկյան օգնության կազմակերպումը, իսկ ամերիկյան ունեցվածքը կարող էր մեծապես վնասվել: Նախագահ Վիլսոնը մեծ համակրանք էր տածում ամերիկյան միսիոներական առաքելությունների հանդեպ և բնականաբար անհանգստանում էր նրանց հետագա կարգավիճակով: Պետքարտուղարությունն այն կարծիքին էր, որ պատերազմի հայտարարությունը կարող էր այնպիսի փոփոխությունների հանգեցնել, որոնք խնդիր կստեղծեին հետագայում ԱՄՆ-ի և Օսմանյան կայսրության հետնորդ պետության հարաբերությունների բարելավման հարցում: Ամերիկյան դիվանագետների և միսիոներների կարծիքը միասնական էր այդ հարցում: Մորզենթաունույնպես դեմ էր պատերազմի հայտարարությանը:

Թեև միսիոներները հայերի հետ տեղի ունեցած ցեղասպանության հիմնական վկաներն էին և դարձան կարևոր դերակատարները Միացյալ Նահանգների ու հայերի միջև հարաբերությունների ձևավորման գործում, սակայն Ամերիկյան խորհրդի պաշտոնյաները լուռ մնացին Թուրքիայի դեմ պատերազմ հայտարարելու հարցում: Պաշտոնական եկեղեցին այդպես էլ չսատարեց Թուրքիային պատերազմ հայտարարելու գաղափարը, որի նպատակը պետք է լիներ պատժել Թուրքիային և պաշտպանել հայերին: Պաշտոնական կարծիքն այն էր, որ, պատերազմ հայտարարելով Գերմանիային, Ամերիկյան արդեն իսկ պատերազմի մեջ էր մտել նրա դաշնակից Թուրքիայի հետ:

ԱՄՆ-ի և Գերմանիայի հարաբերությունների խզումից հետո Թալեթ փաշան առանձնահատուկ «բարեկամություն և մտերմություն»

էր ցուցաբերում դեսպանի և դեսպանության հանդեպ: Նա նույնիսկ հատուկ հրահանգ էր տվել մամուլի գրասենյակին՝ Միացյալ Նահանգների մասին թշնամական հոդվածներ թույլ չտալու նպատակով:

Պատերազմում ամերիկյան չեզոքությունը և Գերմանիային պատերազմի հայտարարությունը խիստ քննադատության էին ենթարկվում Միացյալ Նահանգների ընդդիմադիր քաղաքական գործիչների կողմից: Նրանցից ամենամշանավորը նախկին նախագահ Թեոդոր Ռուզվելտն էր, որը հայտարարում էր, որ Վիլսոնի վարչակազմը «չափազանց չեզոք էր» պատերազմում, ինչը մի կողմից մեծ կարևորություն էր տալիս միջազգային օրենքին, իսկ մյուս կողմից անտեսում էր ազգային շահը: Հայկական ջարդը, որը Ռուզվելտն անվանում էր «պատերազմի մեծագույն հանցագործություն», նրա համար դարձավ արտաքին քաղաքականության և միջազգային էթիկայի հիմնական խնդիրը: Միաժամանակ Անտանտի հետ սերտ հարաբերություններ հաստատելու կողմնակիցները հայտարարում էին, որ Վիլսոնը խախտում էր չեզոքությունը կենտրոնական տերությունների օգտին, իսկ վերջիններիս կողմնակիցները պնդում էին հակառակ կարծիքը: Օսմանյան կայսրությանը պատերազմ հայտարարելու քարոզարշավը ղեկավարում էին սենատորներ Հենրի Լոջը և Ռիլյան Քինգը, սակայն նախագահ Վիլսոնը կարողանում էր հաղթահարել այդ ճնշումը:

Թուրքիայի հետ հարաբերությունների խզումից հետո ամերիկյան շահերը Թուրքիայում շարունակեց ներկայացնել Շվեդիայի դեսպանությունը: Թուրքիայի իշխանությունները չափազանց «քաղաքավարի» վերաբերմունք ցուցաբերեցին դեսպանության անձնակազմի հանդեպ, ինչպես նաև հատուկ հրահանգներ տվեցին տեղական իշխանություններին առ այն, որ երկու երկրների միջև հարաբերությունները շարունակելու են մնալ ջերմ, իսկ ամերիկյան հաստատությունների հանդեպ վերաբերմունքը փոփոխության չի ենթարկվելու:

Միացյալ Նահանգների և Թուրքիայի միջև հարաբերությունների խզումը չանդադարձավ նաև օգնության ծրագրերի իրականացման վրա. Հայկական և սիրիական օգնության ամերիկյան կոմիտեի ներկայացուցիչները շարունակեցին իրենց աշխատանքը: Որոշ շրջաններում շվեյցարացի և գերմանացի միսիոներներն իրենց վրա վերցրին օգնության բաշխումը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

I. ԱՐԽԻՎԱՅԻՆ ՆՅՈՒԹԵՐ

1. Houghton Library, Harvard University. Papers of James L. Barton, Papers and Correspondence, American Board of Commissioners for Foreign Missions, Manuscript Collection.

2. Library of Congress, Division of Manuscripts, Papers of Henry Morgenthau, Sr., Diary. 1914, August 25, September 9, 17, 20, 21, 23, October 22; 1915, January 18, 23, February 22, 23, 27, March 15, 26, April 26, May 5, 6, 14, 15, 16, 17, 27, June 7, 18, 19, July 10, 24, 29, August 2, 5, 8, 17, 30, September 17, October 7, 18, 30, November 15; 1916, February 1, 23, May 4.

3. Library of Congress, Division of Manuscripts, Papers of Woodrow Wilson, Presidential Papers, 1915, October 22, 26, 28.

4. US National Archives (NA) and Records Service. – RG (Record Group) 59/867.4016/64; RG 59/867.4016/78; RG 59/867.4016/81; RG 59/867.4016/93; RG 59/867.4016/119; RG 59/867.4016/141; RG 59/867.4016/144; RG 59/867.4016/151; RG 59/867.4016/158; RG 59/867.4016/248; RG 59/867.4016/287a; RG 59/86.00/723; RG 59/86.00/724; RG 59/867.00/762; RG 59/867.00/766; RG 59/367.116/205; RG 59/367.116/219; RG 59/367.116/261a; RG 59/367.116/341; RG 59/367.116/341; RG 59/367.11/569a; RG 59/367.11/570; RG 59/711.673/70.

5. US National Archives (NA). Microfilm Publications, Microcopy No. 353, Records of the Department of State Relating to Internal Affairs of Turkey, 1910-1929:

Roll 6, 867.00 Political Affairs. - RG 59/867.4016/76; RG 59/867.4016/103; RG 59/867.00/746; RG 59/867.00/760; RG 59/867.00/761; RG 59/867.00/762; RG 59/867.00/768; RG 59/867.00/783; RG 59/867.00/786; RG 59/867.00/797; RG 59/867.00/797.5; RG 59/867.00/798.2; RG 59/867.00/799.1/2; RG 59/867.00/803; RG 59/867.00/804.1/2; RG 59/867.00/807.

Roll 43, 867.40 Social Matters. - No. 608, 867.4016/58; 867.4016/58a; No. 633, 867.4016/58; No. 111, 867.4016/58; No. 614, 867.4016/59; 867.4016/61; No. 276, 867.4016/72; No. 310, 867.4016/71; No. 796, 867.4016/67; No. 289, 867.4016/77; No. 778, 867.4016/70; 867.4016/85; 867.4016/105; 867.4016/94; No. 1130, 867.4016/97; No. 841, 867.4016/74; No. 565, 867.4016/74; No. 893, 867.4016/83; No. 947, 867.4016/100; No. 467, 867.4016/124; No. 929, 867.4016/91; No. 940, 867.4016/99; No. 1005, 867.4016/117; No. 278, 867.4016/225; No. 634, 867.4016/238; 867.4016/240; No. 337, 867.4016/243; 867.4016/208;

867.4016/230bis; No. 1576, 867.4016/266; No. 794, 867.4016/258b.

Roll 44, 867.40 Social Matters, 867.4016 Race Problems. - No. 403, 867.4016/126; 867.4016/137; No. 267, 867.4016/155; No. 271, 867.4016/203; No. 1121, 867.4016/159.

Roll 46, 867.40 Social Matters, 867.4016 Race Problems. - RG 59/867.4016/313; RG 59/867.4016/316; RG 59/867.4016/316b; RG 59/867.4016/316c; RG 59/867.4016/317; RG 59/867.4016/318; RG 59/867.4016/320; RG 59/867.4016/321; RG 59/867.4016/322; RG 59/867.4016/323; RG 59/867.4016/340; RG 59/867.4016/349; RG 59/867.4016/351; RG 59/867.4016/373; RG 59/867.4016/386.

Roll 51, 867.40 Social Matters, 867.48 Calamities, Disasters - RG 59/867.48/71; RG 59/867.48/77; RG 59/867.48/129; RG 59/867.48/164; RG 59/867.48/201; RG 59/867.48/194, 202; RG 59/867.48/197; RG 59/867.48/199; RG 59/867.48/211; RG 59/867.48/227; RG 59/867.48/284; RG 59/867.48/341.

II. ՀՐԱՊԱՐԱԿՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ, ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՀՈՒՇԵՐ

6. Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828-1923) / Պրոֆ. Ջ. Ս. Կիրակոսյանի խմբագրությամբ, Եր., «Հայաստան» հրատարակչություն, 1972:

7. Հայոց ցեղասպանությունը Օսմանյան Թուրքիայում. Վերապրածների վկայություններ. Փաստաթղթերի ժողովածու, Հատոր III. Էրզրումի, Խարբերդի, Գիարբերդի, Սերասպիայի, Տրապիզոնի նահանգներ, Պարսկաստան, Եր., Հայաստանի ազգային արխիվ, 2012:

8. Հայոց ցեղասպանության արտացոլումը 1915 թ. մամուլի էջերում (հայալեզու և օտարալեզու թերթերի նյութերի ժողովածու) / Կազմողներ՝ Գ. Մանուկյան, Ա. Մարության, Ժ. Պեօճեքեան, Ա. Ոսկանյան, Մ. Հովսեփյան, Հատոր առաջին, Եր., «Գարույք» երիտասարդական հասարակական կազմակերպություն, 2018:

9. Սվազլյան Վերժինե, Հայոց ցեղասպանություն. Ականապես վերապրողների վկայություններ, Եր., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, 2011:

10. Геноцид армян в Османской империи / Сборник документов и материалов под ред. М. Г. Нерсисяна, Ер., Издательство «Айастан», 1982.

11. Atkinson Tacy, «The German, the Turk and the Devil made a Tripple Alliance»: Harpoat Diaries, 1908-1917, Princeton, NJ: Gomidas Institute, 2000.

12. Bryce James Viscount, *The Treatment of Armenians in the Ottoman*

Empire: Documented Presented to Viscount Grey of Falladen, Secretary of State for Foreign Affairs, by Viscount Bryce, Frankfurt, Textor Verlag, 2008; Bryce, James and Great Britain, Foreign Office. *The Treatment of Armenians in the Ottoman Empire: Documented Presented to Viscount Grey of Fallodon, Secretary of State for Foreign Affairs, by Viscount Bryce*. Miscellaneous, No. 31, London, H. M. Stationary Office, and Sir J. Causton and Sons, 1916.

13. Davis Leslie A., Blair Susan, *The Slaughterhouse Province: an American Diplomat's Report on the Armenian Genocide, 1915-1917*, New Rochelle, NY: Aristide D. Caratzas, Orpheus Pub., 1989.

14. Der Yeghiyan, Zaven. *My Patriarchal Memoirs*, Barrington, RI: Mayreni Publishing, 2002.

15. Einstein Lewis, *Inside Constantinople: A Diplomat's Diary during the Dardanelles Expedition*, London: Gomidas, 2014.

16. Glockler H. W., *Interned in Turkey, 1914-1918*, Beirut, Sevan Press, 1969.

17. Hartunian Abraam H., *Neither to Laugh nor to Weep. A Memoir of the Armenian Genocide*, Boston, Beacon Press, 1968.

18. Hoover Herbert, *Memoirs: Years of Adventure, 1874-1920*, New York, Macmillan, 1952.

19. House of Representatives, Committee on Foreign Affairs. *Hearings on Relief of Armenians*, 64th Congress, 1st Session, Washington D. C., Government Printing Office, 1916.

20. Kloian Richard Diran, *The Armenian Genocide: First 20th Century Holocaust: 65th Anniversary Memorial 1915-1980* /Ed. Richard D. Kloian, San-Francisco: San Francisco Bay Area Armenian Commemorative Committee, 1980; *The Armenian Genocide. News Accounts from the American Press: 1915-1922* / Ed. Richard D. Kloian, Berkeley, CA: Anto Printing, 1985.

21. Knapp Grace H., *The Tragedy of Bitlis*, New York, London, Chicago, F. H. Revell, 1919.

22. *Ambassador Morgenthau's Story* // *World's Work*, No. 37, November, 1918.

23. Morgenthau Henry, *Ambassador Morgenthau's Story*, Garden City, NY: Doubleday, Page, 1918; Morgenthau Henry, *Ambassador Morgenthau's Story*, Reading, England, Taderon Press, 2000.

24. Morgenthau Henry, *All in a Life-Time*, Garden City, NY: Doubleday, 1922.

25. Morgenthau Henry, *United States Diplomacy on the Bosphorus: The Diaries of Ambassador Morgenthau, 1913-16*, Princeton, NJ: Gomidas Institute,

2004.

26. Riggs Henry H., *Days of Tragedy in Armenia. Personal Experiences in Harpoot, 1915-1917*, Ann Arbor, MI: Gomidas Institute, 1997.

27. *The Armenian Genocide. Evidence from the German Foreign Office Archives, 1915-1916* /Edited by Wolfgang Gust, New York, Oxford, Berghahn, 2014.

28. *The Letters of Theodore Roosevelt* / Ed. Elting E. Morison, Cambridge, MS: Harvard University Press, 1952, Vol. V, VIII.

29. *The Papers of Woodrow Wilson*, 69 vols. / Ed. Arthur S. Link, Princeton, Princeton University Press, 1966-1994, Vol. 35, 37, 40.

30. «*Turkish Atrocities*»: *Statements of American Missionaries on the Destruction of Christian Communities in Ottoman Turkey, 1915-1917* / Comp. By James L. Barton, Ann Arbor, MI: Gomidas Institute, 1998.

31. *United States Official Records on the Armenian Genocide 1915-1917* / Compiled with an introduction by Ara Sarafian/, Princeton and London, Gomidas Institute, 2004.

32. US Department of Commerce, Bureau of Foreign and Domestic Commerce. *Foreign Commerce and Navigation of the United States*, Washington, D. C., Government Printing Office, 1917.

33. US Department of State, Historical Office, Bureau of Public Affairs. *United States Chiefs of Mission, 1778-1982*, Washington D. C., Government Printing Office, 1982.

34. US Department of State. *Papers Relating to the Foreign Relations of the United States, 1914, The World War*, Washington D. C., Government Printing Office, 1922.

35. US Department of State. *Papers Relating to the Foreign Relations of the United States, 1914, Supplement, The World War*, Washington D. C., Government Printing Office, 1928.

36. US Department of State. *Papers Relating to the Foreign Relations of the United States, 1915*, Washington D. C., Government Printing Office, 1924.

37. US Department of State. *Papers Relating to the Foreign Relations of the United States, 1915, Supplement, The World War*, Washington D. C., Government Printing Office, 1928.

38. US Department of State. *Papers Relating to the Foreign Relations of the United States, 1916, Supplement. The World War*, Washington D. C., Government Printing Office, 1929.

39. US Department of State. *Papers Relating to the Foreign Relations of the United States, 1917, Supplement 1, The World War*, Washington D. C.,

Government Printing Office, 1931.

40. US Department of State. *Papers Relating to the Foreign Relations of the United States, 1917, Supplement 2, The World War, Vol. 1*, Washington D. C., Government Printing Office, 1932.

41. US Department of State. *Papers Relating to the Foreign Relations of the United States, 1918, Supplement 1, The World War*, Washington, D. C., Government Printing Office, 1933.

42. US Department of State. *Papers Relating to the Foreign Relations of the United States, The Lansing Papers, 1914-1920, Vol. 1*, Washington D. C., Government Printing Office, 1939.

43. Ussher D., Clarence, *An American Physician in Turkey*, Boston, Houghton Mifflin & Co., 1917.

III. ԳՐՔԵՐ ԵՎ ՀՈՂՎԱԾՆԵՐ

44. Անտոնյան Արամ, *Մեծ ոճիրը*, Եր., «Արևիկ» հրատարակչություն, 1990:

45. Աստոյան Անահիտ, *Բուրսայի նահանգի հայության փոփոխական վիճակը և նյութական կորուստները Հայոց ցեղասպանության տարիներին*, Եր., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, 2017:

46. Ջաքարյան Տիգրան, *Ամերիկայի Միացյալ Նահանգների վավերագրերը 1915-1916 թթ. Հայոց ցեղասպանության մասին*, Եր., ՀՀ ԳԱԱ Հայոց ցեղասպանության քանգարան-ինստիտուտ, 2002:

47. Ջաքարյան Տիգրան, *Հայոց ցեղասպանությունը և Ամերիկայի Միացյալ Նահանգները (1915-1917 թթ.) / «Հայոց պատմություն» մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի զիտական աստիճանի հայցման ատենախոսության սեղմագիր*, Եր., 2011:

48. Կիրակոսյան Արման, *ԱՄՆ-ի արտաքին քաղաքականությունը և արևմտահայությունը (19-րդ դար – 1914 թ.)*, Եր., ԵՊՀ հրատարակչություն, 2014:

49. Կիրակոսյան Ջ. Ս., *Առաջին համաշխարհային պատերազմը և արևմտահայությունը, 1914-1916 թթ.*, Եր., «Հայաստան» հրատարակչություն, 1967:

50. Կիրակոսյան Ջ. Ս., *Երիտթուրքերը պատմության դարասյանի առաջ (1915-ից մինչև մեր օրերը). Գիրք երկրորդ*, Եր., «Հայաստան» հրատարակչություն, 1983:

51. Հովհաննիսյան Ռիչարդ, *Ամերիկայի Միացյալ Նահանգները և Հայկական հարցը // «Հայկական հարց» հանրագիտարան*, Եր., Հայկական

հանրագիտարանի գլխավոր խմբագրություն, 1996:

52. Ղազարեան Հայկազն Գ., *Ցեղասպան թուրքը*, Պէյրուք, «Համագ-
գային», 1968:

53. Գիզմեճեան Մանուկ Գ., *Պատմություն ամերիկահայ քաղաքական
կուսակցությանը, 1890-1925*, Ֆրեզնո, «Նոր Օր», 1930:

54. Չորմիսյան Լևոն, *Համապարկեր մեկ դարու պատմության, 3 հա-
տորով*, Բեյրութ, «Սևան» հրատարակչություն, 1975, Հ. 3:

55. Սվազյան Բնարիկ, *Ամերիկայի Միացյալ Նահանգների հայ գա-
ղութի պատմությունը (սկզբնավորումից մինչև 1924 թ.)*, Եր., ՀՀ ԳԱԱ «Գի-
տություն» հրատարակչություն, 2000:

56. Վահէ Հայկ, *Խարբերդ եւ անոր ոսկեղէն դաշտը: Հուշամատեն
ազգային-պատմական-մշակութային եւ ազգագրական*, Նյու Եորք, 1959:

57. Киракосян Арман, *Очерки дипломатической истории и историогра-
фии Арманского вопроса*, М., «Российский писатель», 2016.

58. Шпилькова В. И., *Империалистическая политика США в отношении
Турции (1914-1920)*, М., *Ученые записки Московского государственного
педагогического института*, 1960.

59. *A Cry for Help from Persia // Presbyterian Banner*, 1915, 1 April.

60. Adalian Rouben Paul, *American Diplomatic Correspondence in the Age
of Mass Murder: the Armenian Genocide in the US Archives // In: America and
the Armenian Genocide of 1915 / Edited by Jay Winter*, Cambridge, Cambridge
University Press, 2003.

61. Adalian Rouben Paul, *Documentation of Armenian Genocide in US
Archives // In: Encyclopedia of Genocide / Edited by Israel W. Charny*, Vol. 1,
Santa Barbara, CA: ABC-CLIO, 1999.

62. Adalian Rouben Paul, *Armenian Genocide, Missionaries and // In:
Encyclopedia of Genocide*, Vol. I / Editor in chief Israel W. Charney, Santa
Barbara, CA: ABC-CLIO, Inc., 1999.

63. Akçam Taner, *The Young Turks' Crime against Humanity. The Armenian
Genocide and Ethnic Cleansing in the Ottoman Empire*, Princeton and Oxford,
Princeton University Press, 2012.

64. Allen W. E. D., and Muratoff Paul, *Caucasian Battlefield: A History of
the Wars on the Turco-Caucasian Border, 1828-1921*, Cambridge, Cambridge
University Press, 1953.

65. Ambrosius Lloyd E., *Wilsonian Statecraft*, Wilmington, Scholarly
Resource Book, 1991.

66. *American Interests in Turkey Violated // Missionary Herald*, 1915,
November.

67. *A Missionary Poisoned* // *The New York Times*, 1915, 13 November.
68. *An Orgy of Unbridled Hate* // *Missionary Herald*, 1915, November.
69. *A People Killed Twice* // *Guardian Weekend*, 2001, 27 January.
70. *Armenian Atrocities* // *Watchman-Examiner*, 1915, 11 November.
71. *Armenian Massacres* // *Presbyterian Banner*, 1915, 30 September.
72. *American Missionaries in Turkey* // *Watchman-Examiner*, 1915, 9 September.
73. *Armenian Massacres Confirmed* // *Christian Advocate*, 1915, 7 October.
74. *Armenians Massacred* // *Watchman-Examiner*, 1915, 23 September.
75. *Armenian Protests charged to Allies* // *New York Times*, 1915, 13 October.
76. Arpee Leon, *A Century of Armenian Protestantism, 1846-1946*, New York: The Armenian Missionary Association of America, Inc., 1946.
77. A. S. *Guerrilla Warfare in Armenia* // *New York Times*, 1915, 18 June.
78. Auron Yair, *The Banality of Indifference: Zionism and the Armenian Genocide*, New Brunswick, Transaction, 2000.
79. Balakian Peter, *The Burning Tigris. The Armenian Genocide and America's Response*, New York, Harper Collins Publishers, 2003.
80. Balakian Peter, *From Ezra Pound to Theodore Roosevelt: American intellectual and cultural responses to the Armenian Genocide* // In: *America and the Armenian Genocide of 1915* / Edited by Jay Winter, Cambridge, Cambridge University Press, 2003.
81. Barby Henry, *Au pays de l'épouvante: L'Arménie martyre*, Beirut, Association Culturelle Arménienne, 1972.
82. Barton James L., *Story of Near East Relief, 1915-1930*, New York, Macmillan, 1930; Barton, James L. *Story of Near East Relief (1915-1930): An Interpretation*, Astoria, N.Y.: J.C.&A.L. Fawcett, Inc., 1991.
83. *Blotting out the Armenians* // *Alabama Baptist*, 1915, 10 November.
84. Brecher F. W., *Revisiting Ambassador Morgenthau's Turkish Peace Mission of 1917* // *Middle Eastern Studies*, 1988, July, Vol. 24, No. 3.
85. Brown Arlo A., *American Property in Jerusalem* // *Christian Advocate*, 1917, 29 March.
86. Bloxam Donald, *The Great Game of Genocide. Imperialism, Nationalism, and the Destruction of the Ottoman Armenians*, New York, Oxford University Press, 2005.
87. *Bryce Asks US to Aid Armenia. Says that all Christians in Trebizond, Numbering 10, 000, were Drowned* // *New York Times*, 1915, September 21.
88. Bryson Thomas A., *American Diplomatic Relations with the Middle East, 1784-1975*, Metuchen, NJ: Scarecrow Press, 1977.

89. *Chronology of the War*, *Current History*, 1915, April, No. 2.
90. Clements Kendrick A., *The Presidency of Woodrow Wilson*, Lawrence, KS: University Press of Kansas, 1992.
91. Coogan John W., *Wilsonian Diplomacy in War and Peace* // In: *American Foreign Relations Reconsidered, 1890-1993* / Edited by Gordon Martel, London and New York: Routledge, 1994.
92. *Crucified Armenia // Spirit of Missions*, 1916, May.
93. *Current Events // Christian Index*, 1915, 27 May.
94. *Current History*, 1915, May, No. 2.
95. Dadrian Vahakn N., *The Key Elements in the Turkish Denial of the Armenian Genocide: A Case Study of Distortion and Falsification*, Cambridge, MA, Toronto, The Zoryan Institute, 1999.
96. Dadrian Vahakn D., *The History of the Armenian Genocide. Ethnic Conflict from the Balkans to Anatolia to the Caucasus*, Providence, RI: Berghahn Books, 1995.
97. Daniel Robert L., *America Philanthropy in the Near East, 1820-1960*, Athens: Ohio State University, 1970.
98. De Waal Thomas, *Great Catastrophe. Armenians and Turks in the Shadow of Genocide*, Oxford, New York, Oxford University Press, 2015.
99. Einstein Lewis, *The Armenian Massacre // Contemporary Review*, 1917, January 1.
100. *Eastern Christians Being Persecuted // Christian Century*, 1915, 26 August.
101. Evans Laurence, *United States Policy and the Partition of Turkey, 1914-1924*, Baltimore, The Johns Hopkins Press, 1965.
102. *500.000 Armenians said to have perished. Washington asked to Stop Slaughter of Christians by Turks and Kurds // The New York Times*, 1915, September 24.
103. Frazee Charles A., *Catholics and Sultans. The Church and the Ottoman Empire. 1453-1923*, Cambridge, Cambridge University Press, 1983.
104. Frey Rebecca Joyce, *Genocide and International Justice*, New York, Facts on File, 2009.
105. Gibbons Herbert Adams, *The Blackest Page of Modern History*, New York, G. P. Putnam's Sons, 1916.
106. Gilbert Martin, *First World War: A Complete History*, New York, Henry Holt, 1994.
107. Gilbert Martin, *Twentieth-Century Genocides* // In: *America and the Armenian Genocide of 1915* / Edited by Jay Winter, Cambridge, Cambridge

University Press, 2003.

108. Grabill Joseph L., *Protestant Diplomacy and the Near East. Missionary Influence on American Policy, 1810-1927*, Minneapolis, University of Minnesota Press, 1971.

109. *Greatest Martyrdoms of All // The Continent*, 1915, 14 October.

110. *Gruesome Word from Armenia // The Continent*, 1915, 23 September.

111. Jenkins, Hester. *Donaldson Armenia and the Armenians // National Geographic Magazine* 28, October, 1915.

112. Jones Marian Moser, *The American Red Cross. From Clara Barton to the New Deal*, Baltimore, The John Hopkins University Press, 2013.

113. Harper Susan Billington, *Mary Louise Graffam: Witness to Genocide // In: America and the Armenian Genocide of 1915 / Edited by Jay Winter*, Cambridge, Cambridge University Press, 2003

114. Hart Albert Bushnell, *Reservations as to the Near Eastern Question // In: Annals of the Academy of Political and Social Science*, 1923, July, No. 108.

115. Heath Gordon L., «*The Accursed Partnership of Turk and Teuton*». *American Churches and the Armenian Genocide // In: American Churches and the First World War / Edited by Gordon L. Heath*, Eugene, Oregon, Pickwick Publications, 2016.

116. Hovannisian R., *Armenia on the Road of Independence, 1918*, Berkeley, University of California Press, 1967.

117. *How About Relief Work in Turkey // Missionary Herald*, 1917, May.

118. Howard Harry N., *Turkey, the Straits and U.S. Policy*, Baltimore and London, The Johns Hopkins University Press, 1974.

119. *Is Extermination Incredible? // The Continent*, 1915, 21 October.

120. Keegan John, *The First World War*, New York, Knopf Doubleday Publishing Group, 1998.

121. Kiezer Hans-Lukas, *Nearest East. American Millennialism and Mission to the Middle East*, Philadelphia, Temple University Press, 2010.

122. Kiezer Hans-Lukas, *Beatrice Rohner's Work in the Death Camps of Armenians in 1916 // In: Resisting Genocide: The Multiple Forms of Rescue / Ed. Jacques Semelin, Claire Andrieu, and Sarah Gensburger*, Published to Oxford Scholarship Online, December 2014.

123. Kiezer Hans-Lukas, *Talaat Pasha. Father of Modern Turkey, Architect of Genocide*, Princeton, Oxford, Princeton University Press, 2018.

124. Langer William L., *The Diplomacy of Imperialism, 1890-1902*, New York, Alfred A. Knopf, 1951.

125. Leonard Thomas G., *When News is not enough: American Media and*

Armenian Deaths // In: *America and the Armenian Genocide of 1915* / Edited by Jay Winter, Cambridge, Cambridge University Press, 2003.

126. Lewis Bernard, *The Emergence of Modern Turkey*, London, Oxford University Press, 1961.

127. Lowry Heath, *The Story Behind Ambassador Morgenthau's Story*, Istanbul, Isis Press, 1990.

128. *Massacre by Kurds* // *Christian Advocate*, 1915, 29 April.

129. McCale Donald M., *War by Revolution: Germany and Great Britain in the Middle East in the Era of World War I*, Kent, OH: Kent State University Press, 1998.

130. McMeekin Sean, *The Ottoman Endgame. War, Revolution, and the making of the Modern Middle East, 1908-1923*, New York, Penguin Press, 2015.

131. Mencken H. L., *Who can save Armenia?* // *Literary Digest*, No. 51, 1915, 30 October.

132. *Million Armenians Killed or in Exile* // *New York Times*, 1915, December 15.

133. *Mission Fears about Turkey* // *The Continent*, 1917, 15 February.

134. Montgomery George R., *Why Talaat Pasha's Assassin was Acquitted* // *Current History*, 1921, July.

135. Moranian Suzanne E., *The Armenian Genocide and American missionary relief efforts* // In: *America and the Armenian Genocide of 1915* / Edited by Jay Winter, Cambridge, Cambridge University Press, 2003.

136. Morgenthau III Henry, *Mostly Morgenthau*, New York, Ticknor & Fields, 1991.

137. Nowell Gregory P., *Mercantile States and the World Oil Cartel, 1900-1939*, Ithaca and London, Cornell University Press, 1994.

138. Ohandjanian Artem, *Armenia, 1915. Austro-Hungarian Diplomatic Reports Prove the Genocide*, Vienna: Society for Promotion of Armenian History and Culture, 2011.

139. *One Instance* // *Missionary Herald*, 1915, November.

140. *One of History's Blackest Crimes* // *Missionary Voice*, 1916, February.

141. Payaslian Simon, *United States Policy Toward the Armenian Question and the Armenian Genocide*, New York, Palgrave Macmillan, 2005.

142. Peterson Merrill D., «*Starving Armenians*». *America and the Armenian Genocide, 1915-1930 and After*, Charlottesville and London, University of Virginia Press, 2004.

143. Power Samantha, «*A Problem from Hell*». *America and the Age of Genocide*, New York, Basic Books, 2002.

144. *Reasons against War with Turkey* // *Presbyterian Banner*, 1917, 27 December.
145. *Remembrance and Denial. The Case of the Armenian Genocide* / Edited by Richard G. Hovannisian, Detroit, Wayne State University Press, 1999.
146. Ritchie Donald A., *Congress confronts the Armenian Genocide* // In: *America and the Armenian Genocide of 1915* / Edited by Jay Winter, Cambridge, Cambridge University Press, 2003.
147. Robertson Geoffrey, *An Inconvenient Genocide. Who now remembers the Armenians*, London, Biteback Publishing, 2014.
148. Roosevelt Theodore, *Fear God and take your own Part*, New York, George H. Doran, 1916.
149. Sarafian Ara, *The Archival Trail. Authentication of the Treatment of Armenians in the Ottoman Empire, 1915-16* // In: *Remembrance and Denial. The Case of the Armenian Genocide* / Edited by Richard G. Hovannisian, Detroit, MI: Wayne State University Press, 1999.
150. *Says Turks Advise Christians to Flee* // *New York Times*, 1915, January 11.
151. *Signs of Life in Turkey* // *Missionary Review of the World*, 1916, October.
152. Smith Roger W., Marcusen Eric and Lifton Robert Jay, *Professional Ethics and the Denial of the Armenian Genocide* // In: *Remembrance and Denial. The Case of the Armenian Genocide* / Edited by Richard G. Hovannisian, Detroit, MI: Wayne State University Press, 1999.
153. Stone Frank Andrews, *Academies for Anatolia. A Study of Rationale, Program and Impact of the Educational Institutions sponsored by the American Board in Turkey: 1830-1980*, Lanham, University Press of America, 1984.
154. Straw David, *Human Rights Violation in Turkey. Rethinking Sociological Perspectives*, London, Palgrave Macmillan, 2013.
155. *The Armenian Atrocities* // *Baptist World*, 1915, 7 October.
156. *The Armenian Horrors* // *United Presbyterian*, 1915, 30 September.
157. *The Assassination of Armenia* // *Missionary Review of the World*, 1915, November.
158. *The Assassination of Armenia* // *Minority Review of the World*, 1915, November.
159. *The Assassination of a Race* // *Watchman-Examiner*, 1915, 28 October.
160. *The Murder of a Race* // *Christian Advocate*, 1915, 7 October.
161. *The Woes of Armenia* // *United Presbyterian*, 1915, 14 October.
162. *The World's Bitterest Winter* // *Christian Herald*, 1915, 29 December.
163. Thomas Patrick, *Remembering the Armenian Genocide, 1915*, Orsaf,

Gwazg Carreg Gwalch, 2015.

164. Trask Roger R., *The United States Response to Turkish Nationalism and Reform, 1914-1939*, Minneapolis: The University of Minnesota Press, 1971.

165. Trowbridge Stephen, *Stories of Liberated Armenians // Minority Review of the World*, 1919, July.

166. Trumpener Ulrich, *Germany and the Ottoman Empire, 1914-1918*, Princeton, N.J.: Princeton University Press, 1968, Chapters 1-3.

167. *Turkey and the United States // Missionary Herald*, 1917, March.

168. *Turkish Extermination of Armenians // Presbyterian Banner*, 1915, 14 October.

169. *Turkish Foreign Minister's Defense of Armenian Massacres // Current History* 5, 1916, December.

170. *Turkish Official Denies Atrocities // New York Times*, 1915, 15 October.

171. *Turks are Evicting Native Christians // New York Times*, 1915, July 12.

172. *Turks Slaughter Armenians // The Continent*, 1915, 9 September.

173. Walther Karine V., *Sacred Interests. The United States and the Islamic World, 1821-1921*, Chapel Hill, The University of North Carolina Press, 2015.

174. Willis James F., *Prologue to Nuremberg: The Politics and Diplomacy of Punishing War Criminals of the First World War*, Westport, CT: Greenwood Press, 1982.

175. Winter Jay, Introduction. *Witness to Genocide // In: America and the Armenian Genocide of 1915 / Edited by Jay Winter*, Cambridge, Cambridge University Press, 2003.

176. Yale William, *Ambassador Henry Morgenthau's Special Mission of 1917 // In: World Politics*, Vol. I, 1949, April.

177. Zia Mufty-Zade Bey, *The Kind of Armenians a Turk knows // New York Times*, 1915, 18 October.

**ՊԱՏՄԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈԿՏՈՐ, ՊՐՈՖԵՍՈՐ ԱՐՄԱՆ
ՋՈՆԻ ԿԻՐԱԿՈՍՅԱՆԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՑԱՆԿ**

1. *Армянский вопрос на страницах журналов Великобритании (середина 90-х гг. XIX в.)*, Եր., ՀԽՍՀ ԳԱ հասարակական գիտությունների գիտական ինֆորմացիայի կենտրոն, 1980, 37 էջ:

2. *Политика Англии в Армянском вопросе по материалам еженедельника «Spectator» (90-е гг. XIX в.)*, Եր., ՀԽՍՀ ԳԱ հասարակական գիտությունների գիտական ինֆորմացիայի կենտրոն, 1982, 24 էջ:

3. *Հայկական հարցի [անգլերեն] գրականության մատենագիրություն (1890-1900)*, Եր., ՀԽՍՀ ԳԱ հասարակական գիտությունների գիտական ինֆորմացիայի կենտրոն, 1983, 31 էջ:

4. *Հայկական հարց, 1878-1983 (Ռուսաց լեզվով գրականության մատենագիրություն)*, Եր., ՀԽՍՀ ԳԱ հասարակական գիտությունների գիտական ինֆորմացիայի կենտրոն, 1984, 64 էջ:

5. *Геноцид армян 1915 г. в зарубежной литературе (1975-1985)*, М., Институт научной информации по общественным наукам АН СССР, 1985, 61 с.

6. *Великобритания и Армянский вопрос (90-е гг. 19-20 в.)*, Եր., «Айастан», 1990, 240 с.

7. *Ջոն Սահակի Կիրակոսյան: Մատենագիրություն*, Եր., ՀԽՍՀ ԳԱ հասարակական գիտությունների գիտական ինֆորմացիայի կենտրոն, 1994, 67 էջ:

8. *Բրիտանական դիվանագիրությունը և արևմտահայության խնդիրը (19-րդ դարի 30-ական թթ. – 1914)*, Եր., ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտ, 1999, 509 էջ:

9. *British Diplomacy and the Armenian Question, from the 1830's to 1914*, Princeton and London, Gomidas Institute Books, 2003, 365 p.

10. *The Armenian Massacres, 1894-1896. US Media Testimony / Edited and with an Introduction by Arman J. Kirakossian*, Detroit, Wayne State University Press, 2004, 317 p.

11. *Այնարկներ Հայկական հարցի և Եդեռնի միջազգային ճանաչման պատմության*, Եր., Տիգրան Մեծ, 2006, 262 էջ:

12. *Armenia-USA. Current Realities and Vision for Future*, Yerevan,

Yerevan State University Press, 2007, 290 p.

13. *Հայկական հարցը և հայերի ցեղասպանությունը (Պարմահրավական եռալեզու տեղեկանք)*, Եր., «Նորավանք» գիտակրթական հիմնադրամ, 2006, 2007, 101 էջ:

14. *The Armenian Massacres, 1894-1896. British Media Testimony* / Edited and with an Introduction by Arman J. Kirakossian, Dearborn, Armenian Research Center, University of Michigan, 2008, 614 p.

15. *Ջոն Կիրակոսյան, Անկախ պետականության և քաղաքական հայագիտության ակունքներում*/Վազմող, խմբագիր և առաջաբանի հեղինակ՝ Արման Կիրակոսյան, Եր., «Տիգրան Մեծ» հրատարակչություն, 2009, 679 էջ:

16. *Армения и советско-турецкие отношения в дипломатических документах 1945-1946 гг.* / Под редакцией Армана Киракосяна, Ер., Национальный архив Армении, 2010, 239 с.

17. Կիրակոսյան Ջոն, *Ընդրանի*/Վազմող, խմբագիր և առաջաբանի հեղինակ՝ Արման Կիրակոսյան, Եր., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, 2014, 728 էջ:

18. *ԱՄՆ-ի արդարքին քաղաքականությունը և արևմտահայությունը (19-րդ դար – 1914 թ.)*, Եր., ԵՊՀ հրատարակչություն, 1914, 399 էջ:

19. *The Armenian Genocide in Contemporary American Encyclopedias*, Yerevan, Armenian Genocide Museum-Institute, 2015, 175 p.

20. *Очерки дипломатической истории и историографии Армянского вопроса*, Москва, «Российский писатель», 2016, 432 с.

21. *Armenia and Soviet-Turkish Relations in Diplomatic Documents. 1945-1946* / Edited and with an Introduction by Arman J. Kirakossian, Antelias, Lebanon, Armenian Catholicosate of Cilicia, Khatchig Babikian Publication Fund, No. 11, 2018, 456 p.

ԲՈՎԱՆԳԱԿՈՒԹՅՈՒՆ

ԱՌԱՋԱԲԱՆ.....5

ԳԼՈՒԽ 1

Միացյալ Նահանգների հարաբերություններն Օսմանյան կայսրության հետ Առաջին համաշխարհային պատերազմի նախաշեմին և պատերազմի սկզբնական շրջանում.....9

ԳԼՈՒԽ 2

Միացյալ Նահանգները, դեսպան Հենրի Մորգենթաուն, միսիոներները և Հայոց ցեղասպանությունը37

1. ԱՄՆ-ի արտաքին քաղաքականությունը և Հայոց ցեղասպանությունը.....37
2. Ամերիկյան միսիոներության գործունեությունը և Հայոց ցեղասպանությունը.....62

ԳԼՈՒԽ 3

Ամերիկյան դիվանագիտական փաստաթղթերի նշանակությունն ու կարևորությունը Հայոց ցեղասպանության ուսումնասիրման և միջազգային ճանաչման համար.....71

ԳԼՈՒԽ 4

Արևմտահայության տեղահանություններն ու կոտորածները ամերիկյան աղբյուրների լուսաբանմամբ և ԱՄՆ-ի դիվանագիտության գործունեությունը դեսպան Հենրի Մորգենթաուի պաշտոնավարման ընթացքում.....80

1. Ամերիկյան դիվանագետների հաղորդագրությունները Եղեռնին նախորդող ամիսներին արևմտահայության վիճակի մասին80
2. 1915 թ. Վանի հերոսամարտը և հայ բնակչության կոտորածները ամերիկյան աղբյուրների լուսաբանմամբ92
3. Արևմտահայության ցեղասպանությունը և ամերիկյան դիվանագիտությունը (1915 թ. ապրիլ – 1916 թ. փետրվար)102

ԳԼՈՒԽ 5

Ամերիկյան արձագանքը և նպաստամատույց աշխատանքի կազմակերպումը ցեղասպանությունից տուժած արևմտահայությանը266

ԳԼՈՒԽ 6

Ամերիկյան դիվանագիտության գործունեությունը գործերի ժամանակավոր հավատարմատար Հոֆման Ֆիլիպի և դեսպան Արրամ Էլկուսի պաշտոնավարման ընթացքում297

ԳԼՈՒԽ 7

Միացյալ Նահանգների կողմից Թուրքիային պատերազմ հայտարարելու հարցի շուրջ.....347

ԱՄՓՈՓՈՒՄ.....363

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ.....378

ՊԱՏՄԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴՈԿՏՈՐ, ՊՐՈՖԵՍՈՐ
ԱՐՄԱՆ ՋՈՆԻ ԿԻՐԱԿՈՍՅԱՆԻ ՀԻՄՆԱԿԱՆ
ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ 390

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԱՐՄԱՆ ԿԻՐԱԿՈՍՅԱՆ

**ԱՄԵՐԻԿՅԱՆ ԳԻՎԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ
ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ
(1915-1917)**

Համակարգչային ձևավորումը՝ Կ. Չալաբյանի
Կազմի ձևավորումը՝ Ա. Պատվականյանի
Հրատ. սրբագրումը՝ Մ. Կետյանի

Տպագրված է «Time to Print» օպերատիվ տպագրությունների սրահում,
ք. Երևան, Խանջյան 15/55:

Ստորագրված է տպագրության՝ 30.07.2019:
Չափսը՝ 60x841/16: Տպ. մանուլը՝ 24.625:
Տպաքանակը՝ 200:

ԵՊՀ հրատարակչություն
ք. Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1
www.publishing.y-su.am



Արման Ջոնի Կիրակոսյան (1956-2019)՝ պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, արտակարգ և լիազոր դեսպան:

1977 թ. ավարտել է Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական ինստիտուտի պատմության և աշխարհագրության ֆակուլտետը, իսկ 1980 թ.՝ նույն ինստիտուտի ասպիրանտուրան:

1981-1990 թթ. աշխատել է ՀԽՍՀ ԳԱ հասարակական գիտությունների գիտական ինֆորմացիայի կենտրոնում, ՀԿԿ Կենտկոմի գիտության և ուսումնական հաստատությունների բաժնում, ՀԽՍՀ ԳԱ սփյուռքահայ համայնքների պատմության և մշակույթի բաժնում: Եղել է ՀՀ արտաքին գործերի նախարարի առաջին տեղակալ (1991-1994), նախարարի պաշտոնակատար (1992-1993), ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան Հունաստանում, համատեղության կարգով՝ Կիպրոսում, Սլովենիայում, Խորվաթիայում, Ալբանիայում և Հարավսլավիայի Դաշնային Հանրապետությունում (1994-1999), ԱՄՆ-ում (1999-2005), արտգործնախարարի տեղակալ (2005-2011), 2011 թ.-ից՝ ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան Ավստրիայում, մշտական ներկայացուցիչ ԵԱՀԿ-ում և Վիեննայում տեղակայված ՄԱԿ-ի կազմակերպություններում:

2018 թ. նշանակվել է Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Սիացյալ Թագավորությունում Հայաստանի Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան:

Դասավանդել է ԵՊՀ միջազգային հարաբերությունների ֆակուլտետում:

Պարգևատրվել է ՀԽՍՀ ԳԱ գովեստագրով (1983), «Ջոն Կիրակոսյան» (1999) և ՀՀ ԱԳՆ (2001) մեդալներով, ԵՊՀ ոսկե մեդալով (2006), «Թեքեյան» մշակութային միության «Հայկաշեն Ուզունյան» պատմա-բանասիրական մրցանակով (2005), «Մխիթար Գոշ» մեդալով (2011), հետմահու՝ Պատվո շքանշանով (2019):